

Գիրքը լուսապատճենվել և համացանցում է տեղադրվել [Գրքամոլ Նախաձեռնության](#) կողմից:

Բոլորին կողմից սիրված «[Գրքամոլ](#)»-ը ձեռնամուխ է եղել մի նախաձեռնության, որի նպատակն է համացանցում կենտրոնային տարբերակով տեղադրել բոլոր այն գրքերը, որոնք սիրված են հայ ընթերցասերների կողմից և ցանկանում են դրանք ընթերցել նաև կենտրոնային տարբերակով։ Ժամանակի ընթացքում մեր կողմից համացանցում կտեղադրվեն բոլոր այն գրքերը, որոնք մինչ այս ձեզ համար եղել են դժվար ձեռքբերելի։

«Գրքամոլ»-ը, ունենալով իր ուրույն տեղը համացանցում, իր առջև նպատակ է դրել հասարակության մեջ բարձրացնել սերը դեպի ընթերցանությունը, առաջացնել հետաքրքրություն դեպի դասական և արդի գրականությանը, և կոտրել բոլոր այն կարծրասիրվերը, թե այսօրվա հայ իրականության մեջ ընթերցողները չկան։



Սիրելի՝ ընթերցողներ, մենք շատ ուրախ կլինենք, եթե կլինեն մարդիկ, ովքեր կցանկանան օգնել մեզ այս համրօնությունը գործում։ Էլեկտրոնային գորքի պատրաստման և մեր կայքում դրանք տեղադրելու հարցում մենք չունենք որևէ շահ և չենք չիետապնդում որևէ ելամուտ, բայց հայ և արտասահմանյան գրականությունը հայ ընթերցասերներին հասնելի դարձնելուց, և մենք բաց ենք բոլոր նվիրյալ ու օգնել ցանկացող մարդկանց համար։ Եթե ուր ունեք լուսապատճենահանման սարքեր, և ուզում եք միանալ մեր կողմից ձեռնարկվող գործին, ապա գրեք մեզ [grqamol@gmail.com](mailto:grqamol@gmail.com) էլ. հասցեով։

Ծնորհակալություն, որ հետևում եք մեզ։ Ցանկանում ենք բոլորին հաձելի ընթերցանություն։

ՌՈՒԹՆ ՌՈԼԱՆ



ԱՌԵՒՄ ԱՌԵԼԿ

◀ ՄԱՅԱԿ

◀ ՈԳԻՒ

ԶՈՐՍ ՀԱՏՈՐՈՎ

**ԹԹՈՒԵԼ ԹԹՈԼՈՒԵԼ**

ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՅՐ ԵՎ ՈՌՈՒԻ

И (Фр)

№ 65

18 70304 (5036) 225 76 45  
70' (01) 76

Թուակերենից թարգմանելո ԳԵՎՈՐԳ ՎԻՐՅՈՂՅԱՆ

ԽՈՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆ

## Հմայված նոգին

РОМЕН РОЛЛАН

Очарованная душа

(На армянском языке)

Издательство «Советакан ցրօք», ул. Терьяна, 91

Խմբագիր՝ Դ. Պ. Ասրացյան, Ակարիչ՝ Վ. Ք. Մանդակունի, գեղ. խմբագիր՝  
Ա. Վ. Գասպարյան, տեխ. խմբագիր՝ Վ. Ս. Խաչատրյան, վերստուգող  
սրբագրիչ՝ Ա. Ս. Հօվանեֆյան

Հանձնված է շարվածքի 11/V 1976 թ., ստորագրված է տպագրության  
26/VIII 1977 թ., թուղթ՝ № 1 84×108<sup>1/32</sup>, հրատ. 18,7 մամ., տպ. 13,6  
մամ. = 21,84 գրամ. մամ., Գինը՝ 67 գ.

«Սովետական գրող» հրատարակություն, Երևան—Զ, Տերյան 91, ՀՍՍՀ  
Մինիստրների սովետի հրատարակությունների, պոլիգրաֆիայի և գրք  
առևտության գործերի պետական կոմիտեի № 1 տպարան, Երևան, Կենտրոնական  
փող. № 65:

Типография № 1 Госкомитета Совета Министров АРмя ССР зе  
делам издательств, полиграфии и книжной торговли.

© «Սովետական գրող» լրատարակություն թարգմանված է հայերեն, 1976

ԳԻՐՁ  
ԵՐԵՌՈՒԴ

# ՄԱՅՐ ԵՎ ՐՈՒԴ

Քանի որ խաղաղությունը ոչ թե պատեհազնի բացակայություն է, այս առաքինությունը ծնված հոգեկան հզորությունից:

Սպիտակա: «Տրակտատ քաղաքականության մասին» V. 4:

## Մասնագիտություն

Պատերազմով չէր կարելի ահաբեկել Աննետային։  
Նա մտածում էր.

«Ամեն ինչ պատերազմ է»։

Պատերազմ՝ դիմակի տակ...

«...Ես ամենին չեմ վախենում նայել ուղղակի քո եղե-  
սին»։

Աննետայի բոլոր մտերիմները, ինչպես և նա ինքը,  
ինչպես և շատերը, այդ իրադարձությունն ընդունեցին ա-  
ռանց որևէ բողոքի։ Աննետան՝ ճակատագրի հանդեպ ունե-  
ցած այն հնազանդությամբ, որը նրա մեջ առաջացել էր իր  
վերջին փորձությունից։

«Ես պատրաստ եմ ինչ լինելու է, թող լինի...»։

Նրա քույր Միլվիան՝ թաքուն սպասումով, հազիվ զըս-  
պելով անհամբերության ճիշը։

«Վերջապես...»։

Վերջապես։ Օրերի միապաղաղ գետը կհորդի ավելի  
լայն։ Ավելի կլայնանա սիրո և ատելության շրջանակը...»

Աննետայի որդի Մարկը՝ մոայլ խանդավառությամբ. նա  
ոչ մի խոսք չի ասում, բայց նրա փոխարեն խոսում են աշ-  
քերը, ձեռքերի տենդային շարժումները... Ահա նա, այդ  
ողբերգական իդեալը, որից Մարկը իր թուլության պատ-  
ճառով սարսափում էր, բայց որին ձգտում էր սովորաբար  
երիտասարդությամբ հերքվող իր բոլոր մուլթ բնազդներով...  
Կաշկանդված ուժերի արթնացման ազդանշանը, ուժեր,  
որոնք այդ ձանձրալի, կյանքի իմաստից զուրկ դաբաշրջա-  
նում նիրհում էին գրվանի տակ։ Մարկը տեսնում էր, թե

ինչպես են ճակատ մեկնում ավագները, արբեցած գործողության ծարավով և անձնազոհության բուռն ցանկությամբ,— Հեղեղ, որը շատ շուտով կկեղտուավի, բայց հիմա, սկզբում, նրա ակունքը դեռ մաքոր է, որքանով կարող է մաքոր լինել պատանիների հոգում, որտեղ շատ մրուր է նստել: Խոնարհվելով այդ հեղեղի վրա, Մարիը կարծիք է ծարավութարման բոցաշունչ մաքրությունը և հատակի կեղտուա մրուրը: Վազվա օրը, որն ըմբոշխնելու են ավագները, նրա մեջ նախանձ և սարսափ է առաջացնում... Բարձրացնելով աշքերը, նա հայացքով հանդիպում է մոր հետ: Նրանք հայացքները փախցնում են միմյանցից: Նրանք հասկացան իրար, բայց բույլ չեն տալիս իրենց մեջ նայել ավելի խորը: Եվ երկուսն էլ զիտեն, որ իրենք պարուրված են միննույն ամպով:

Միայն կեռպոլդն է, Սիլվիայի ամուսինը, որ համակված չէ ոգնորության այդ ալիքով. ամբողջ ընտանիքից միայն նա է մեկնում ճակատ: Այնինչ ինքը մտածում էր, որ իր տարին, զորակոչման գրեթե վերջին տարին, այնքան էլ շուտ չեն վերցնի,— չէ որ պահեստը զորակոչվելու է աստիճանաբար: Կեռպոլդը չէր շտապում: Բայց նախազգում էր, որ իր փոխարեն կշտապի պատերազմը, որ պատերազմը չի շրջանցի իրեն: Եվ պատերազմը նրան հիշեց ավելի շուտ, քան ինքը սպասում էր: Կեռպոլդը կամրքեցի էր: Նա հայտնվեց առաջավոր դիրքերում: Նրա աւարիքում դա մի պատիվ էր, առանց որի միանգամայն կարող էր ապրել: Սակայն մեկնելիս կեռպոլդն իրեն սիրու էր տալիս: Ի՞նչ արած: Սիլվիան տրամադրված է հերոսաբար, ասենք մյուս կանանցից էլ հագիվ թե կարելի է սպասել կարեկցական հայացք: Նրանցից ամեն մեկը ճանապարհ է դնում ճակատ տղամարդու—ամուսնուն: Իրած տղամարդուն, որդուն կամ եղբորը: Այն, որ նրանք մեկնում են բոլորը միասին, այդ հուկաբնական երեւլթին սրինաշափության երանդ է տալիս: Ինչպես իրար կանցնեին կանայք, եթե մեկնողներից չէլ ուժում կը հանկարծ բոլորը: Բայց ոչ լհամարձակ-

վեց։ Դա կեռպոլդի մտքո՞վ էլ շանցավ։ Մտերիմների տրամադրության մեջ ավելի քիչ վճռականություն չկար, քան զորակոշման հրամանում։ Իսկ փոքրիկ դայլ Մա՞րկը, որը թերահավատությամբ ու խանդու հետևում էր նրան, դարանակալո՞ւմ էր թուլության րոպեն... կեռպոլդը հոխորտում էր։ Հրաժեշտի ընթրիքի ժամանակ բարեհոգի հաստլիկը բաժակ բաժակի էր ղարկում ամբողջ արհեստանոցի հնտ։ Բայց և այնպես կեռպոլդի համար ծանր էր բաժանվել նրանցից։ Իր գործարարական շահերի համար նա հանգիստ է — Սիլվիան դրանք կկարողանա պաշտպանել։ Մնացածը... Ավելի լավ է, թերեւ, այդ մասին շմտածել... Հիմա Սիլվիան իսկական կուրեցիա է... Այս թե կի՞ն է... Բաժանման պահին կեռպոլդը արցունքով ողողեց նրա այտերը։ Սիլվիան ասաց։

— Դա զբոսանք է լինելու։ Ի՞նչ հրաշալի ամառ է։ Զգույշ եղիր շմրսե՞ս։

Աննետան համբուրեց կեռպոլդին։ (Դա էլ քիչ չէ)։ Հոգու խորքում նա խղճում էր փեսային, բայց ցուց շտվեց, որպեսզի նրա տրամադրությունը չգցի... «Ի՞նչ արած։ Եթե դա անխուսափելի է...»։ Եվ կեռպոլդի անվատահ հայցքը ավագ քրոջ բարեկամական հայացքում կարդաց միայն անդրդվելի։

«Այդպես պետք է»։

Պատ է, Եվ միայն մի ճանապարհ՝ առաջ։

Կեռպոլդը մեկնեց։

Տունը վերից վար, ինչպես փեթակ, դուրս էր նետում իր սյարսը։ Տուրք տվեցին բոլոր խորիսխները։ Յուրաքանչյուր ընտանիք ստիպված եղավ բաժանվել իր տղամարդկանցից։

Վերեռում, ձեղնահարկում, — երկու բանվոր, ընտանիքի հայրեր, Վեցերորդում՝ այրու որդին, երեսունհինգ տարեկան մի ամուրի։ Աննետայի բնակարանի դիմաց՝ երիտասարդ, վերջերս ամուսնացած, բանկի մի ծառայող։ Մի հարկ ներքե՝ դատավորի երկու տղաները։ Ավելի ցած՝ պրոֆեսոր իրավաբանի միակ որդին։ Ամենացածում՝ ածխա-

գործի տղան, նույն ինքը գինու մառանի տերը Ամբողջությամբ վերցրած ութ մարտիկներ, որոնք սաք դրին այդ ճանապարհին ոչ իրենց կամքով։ Բայց նրանց չէին հարցնում. մեր ժամանակ պետությունը ազատ քաղաքացիներին զերծ է պահում իրենց կամքով դորձելու հոգսից։ Իսկ քաղաքացիները նույնիսկ ուրախ են. նրանց ուսերից մի հոգս էլ է ընկնում։

Ամբողջ տունը վերից վար ընդունում է կատարվածը։ Միայն մի, ոչ սքի կողմից չնկատված, բացառությամբ. դա երիտասարդ տիկին Շարդոննեն է, Աննետայի հարեանուհին, շատ աննշան մի անձնավորություն, որ դեռ նոր էր ամուսնացել, — նրա համար սազական չէր վրդովմունք արտահայտել։ Մնացածներից շատ քչերն են պարզաբանում իրենց համար, թե ինչ պատճառով է իրենց ամբողջ ազատությունը, կյանքի նկատմամբ ունեցած իրենց իրավունքը տրված խորհրդավոր աիրակալին, որն իրենց մահվան է մատնում։ Բացառությամբ մեկ-երկու հոգուց, ոչ ոք չի էլ փորձում հասկանալ այդ. ենթարկվելու համար հասկանալու անհրաժեշտություն չկա։ Իրենց ամբողջ դաստիարակությամբ նրանք վարժեցված են նախապես ամեն ինչին համաձայնել։ Իսկ եթե հազարավոր մարդիկ համաձայն են Ենթարկվելու, ուրեմն դատողություններ անելը իմաստ չունի։ Մնում է միայն նայել մյուսներին և վարչել ինչպես մյուսները։ Հոգու և մարմնի ամբողջ մեխանիզմը ինքն իրեն է լարվում, առանց որևէ ջանքի... Աստված իմ, ինչքա՞ն հեշտ է անասունների նախիրը շուկա քշել։ Բավական է այդ նախրի գլխին որևէ աղքատամիտ հովիվ դնեք և մի երկու-երեք շուն։ Որքան ավելի շատ են անասունները նախրում, այնքան ավելի հեշտ է զեկավարելը. մեծամասնությունը նրանք են կազմում, և առանձին միավորները կողշում են ամբողջության մեջ։ Ժողովուրդը խմոր է, շաղախված մի արյունով, որը մակարդակում է Եվ այդպիսին էլ մնում է մինչև մեծ պայթյունի ճակատագրական ակնթարթները, պայթյուն, որ ժամանակ առ ժամանակ նորոգում է ժողովուրդներին ու դարաշրջանները։ Այդ ժամանակ սառած գետը

զարդում է իրեն կաշկանդող սառուցը և ավերում երկիրը, խուժելով նրա վրա իր ամրողջ հալված միս ու արյանով...

Տան բնտկիլները ամենեին նման չեն մեկը մյուսին, նրանց ամեն ինչը տաղբեր է. Հավատը, սովորութիները, բնավորությունը: Այդ հոգեոր բջիջները, այդ ընտանիքները, իրարից տարբերվում են իրենց քիմիական ֆորմուլայով: Բայց բոլորը միատեսակ լցված են հնագանդությամբ:

Նրանք սիրում են իրենց որդիներին, որոնց վրա հիմնված են նրանց բոլոր հույսերը, ինչպես ֆրանսիական ընտանիքների ինը տասներորդականում: Հազիվ մտնելով կյանք քուանհինդ կամ երեսուն տարեկան հասակում, նրանք, օրըստօրե աննկատելիորեն զոհաբերելով իրենց, երեխաներին են փոխանցում ուրախության սպասումը, որն իրենք չեն ճաշակել, փառասիրական ծրագրերը, որոնցից հրաժարվել են իրենք: Եվ հենց իրենք էլ առաջին իսկ պահանջով, առանց բողոքի որևէ խոսքի տալիս են այդ որդիներին...

Վեցերորդ հարկում՝ այրի կին է, տիկին Կայեն: Նա արդեն վաթսունին մոտ է: Երբ այրիացավ, երեսուներեք տարեկան էր, իսկ տղան տասի մեջ էր մտել: Այդ ժամանակից ի վեր մայր ու որդի իրարից չեին բաժանվել: Հազիվ թե տասը տարվա մեջ այնպես պատահած լիներ, որ նրանք թեկուզե մի օր առանձին հարկերի տակ անցկացրած լինեին: Նրանց կարելի է ընդունել ծեր ամուսնական զույգերի տեղու Կայե-որդին, Հեկտորը, որի քառասունը դեռ չի լրացել, արդեն նման է պաշտոնաթող շինովնիկի: Նրա կյանքը թոշնեց, չհասցնելով ծաղկել: Ծակատագրից նա չի գանգատվում: Ասենք, նա ուրիշ ճակատագիր չեր էլ ցանկանաւ:

Նրա հայրը փոստային պաշտոնյա էր: Որդին գնաց նրա հետքերով: Եերնդից սերունդ ոչ մի քայլ առաջ, միենալոյն վազքը տեղում: Քայց ձեզ հայտնի՞ է արդյոք, թե ինչքան ջանքեր պետք է գործադրել՝ ավելի ցած ընկնելու համար: Աղքատիկ միջոցների և թույլ ուժերի դեպքում շահում է նա, ով ոչինչ չի կորցնում: Առանց միջոցների մնացած

մայրը ստիպված եղավ զնալ օրավարձու աշխատանքի, որը պեսզի որդուն մեծացնի: Դա ծանր խաչ է կնոջ համար, որը սովոր է մանր բուրժուական հարմարավետությանը: Նա չեր արտնջում: Հիմա նրանք նորից ոտքի էին կանգնել, վերադարձել էին իրենց համեստ կորուսյալ դրախտը: Աշխատելով իր և որդու համար, այրին հանգստանում է, որդու տունը— դա մոր տունն է: Մոր բարեհոգի, բերրիյան տիպի դեմքին: որի վրա կովային ինչ-որ բան կա, ավելի շատ բրորածալով սպիտակ թասակ է սազում, քան կանացի գլխարկ, որ նա տոն օրերին քաշում էր իր ճերմակ, ցանցառ մազերով գլխին: Նա երբեք բարձրածայն չի խոսում: Նրա խոշոր անատամ բերանը ժպտում է որդուն և ծանոթներին քնքուշ ու հոգնած ժպիտով: Պառավը մի քիչ կորացած է, Առավոտյան նա առաջինն է տեղից վեր կենում և որդուն անկողնու մեջ կաթով սուրճ մատուցում: Մինչ որդին զրասենյակում աշխատում է, մայրը փութկոտությամբ հավաքում է բնակարանը: Հետո ճաշ է պատրաստում: Նա հմուտ խոհարարուհի է, իսկ որդին սիրում է լավ ուսել: Ելեկոները նա մորը պատմում է այն բոլորը, ինչ իմանում է օրվա ընթացքում: Պառավը առանձնապես խորամուխ չի լինում որդու խոսքերի մեջ, բայց նրա համար հաճելի է լուել որդու ձայնը: Կիրակի օրերը պառավը գնում է պատրագի: Որդին եկեղեցի չի հաճախում: Փոխադարձ համաձայնությամբ: Նա աստծուն չի ժխտում, բայց և չի պատկանում հավատացյալների թվին: Կրոնը կանանց համար է: Եվ պառավը չերմեռանդում է երկուսի փոխարեն: Ճաշից հետո նրանք միասին զբոսնում են, բայց շատ հազվադեպ են դուրս գալիս իրենց թաղի սահմաններից: Որդին ժամանակից շուտ ծերացավ: Նրանք բավարարվում են փոքրիկ ուրախություններով, որոնք հաջորդում են իրար սովորական կարգով և ծախսեր չեն պահանջում: Մայր ու որդի այնքան ամուր են կապված միմյանց հետ, որ որդին շամուսնացավ, և երբեք էլ չի ամուսնանա: Նա դրա մեջ անհրաժեշտություն չի զգում: Նա ոչ ընկեր ունի, ոչ սիրելի կին: Համարյա ոչինչ չի կարդում, երբեք տաղտուկ չի զգում: Նա բաժանորդագրվում է նույն այն թերթին, որին մի՛ ժամանակ

Հայրն էր բաժանորդագրվում։ Այդ թերթի ուղղությունը մի անգամ չէ, որ փոխվել էր։ Բայց նա ինքը չէր փոխվում։ Նո միշտ նույն հայացքներն ուներ, ինչ որ իր թերթը։ Հետաքրքրվող չէ։ Ապրում է ինքնաբերաբար։ Մոր և որդու ամբողջ սփոփանքը միակերպ զրուցներն էին կամ մինույն անհանակալից գործողություններն ու արարողությունները, որոնք ընդունված կարգով օրեցօր հաջորդում էին միմյանց։ Մոլություն նրանք չունեն, բացի իրենց մտերմությունից, որը սրտի համար հաճելի սովորույթ էր դարձել։ Թող ոչ մի բան չհախտի այդ։ Որքան կարելի է քիչ փոփոխություն։ Որքան կարելի է քիչ մտորմունք։ Ապրել միատեղ, հաշտ և խաղաղ…

Բայց այդ համեստ ցանկությունը շլովեց։ Պատերազմը, զորակոչը իրենց հետ անջատում են բերում։ Պառավը հառաջում է, նա շտապում է որդու իրերը կապել։ Ոչ մայրը, ոչ որդին վրդովմունք չեն արտահայտում։ Իրավունքը ուժեղեղ կողմն է։ Մեծ ուժը ասաց իր խոսքը։

Կայեներն ապրում են Աննետայից մի հարկ վերև, իսկ Ընենետայի ներքենում Բեռնարդենների ընտանիքն է։ Ծնողները, երկու տղան, երկու աղջիկը։ Նրանք կաթոլիկներ են և ույալիստներ։ Փարիզ են տեղափոխվել հարավից։ Ակվիտանիայից։

Հայրը դատավոր է։ Կարճահասակ, հաստ, պիրկ մարմբնով, վարազի նման ստեներով պատված, խիտ մորուքով, որը ծածկում է գրեթե ամբողջ երեսը։ Այդ տաքարյուն, տոռողջ մարդը մշտապես եռում է։ Զէ որ բնավորությամբ նա զվարճասեր է, ծնված գյուղական լայնարձակության համար։ Քաղաքում խեղզվում է, քաղաքը նրա համար նեղ է։ Նա խիստ որկրամոլ է և «գալլական» կատակներ է սիրում։ Ամենաշնչին հակածառությունը համբերությունից հանում է այդ «ծեր անճոռնուն»։ Վարազի նման գլուխը ներքեթեքած, դատավորը ոտքերով դոփում է մոլուցքի պահին, որն ինչքան ցասումնալից, այնքան էլ վաղանցիկ է։ Հանկարծ նա զգաստանում է, հիշելով իր կոչումը, խոստովանանքը, և, վերջ տալով հայհոյանքին, անմիջապես անցնում է անախորժ քաղցր տոնի։

Նրա երկու որդիներից կրտսերը, քսաներկու տարեկան մի պատանի, հենց նոր ընդունվել է Խարտիաների գպրոցը<sup>1</sup>. Նա սեպածե մորուք է կրում, իր համար սուր, խորամանկ ժպիտ է մշակել, թախծագորով և երկիմաստ հայացք՝ XVI դարավերջի ոճով։ Դա անշափ բարեհոգի երիտասարդ է, բայց նրան գուր է գալիս պարոն գ'էպերնոնի<sup>2</sup> կոմպանիային պատկանող մի տեսակ անբարոյական ֆավորիտի գեր կատարել։ Երկրորդ որդին, քսանութ տարեկան, լիադեմ, սափրված, թերիեի<sup>3</sup> նման գեղանկարչորեն ետ գցած խիտ ալիքավոր մազերով փաստաբան էր, որ առաջ էր բաշվել «թագավորական կամակատարների» դատավարությունների ժամանակ։ Բավական է միայն թագավորը վերադառնա Ֆրանսիայի գահին, և երիտասարդ փաստաբանը կստանա սրբարագատության մինիստրի պաշտոնը։

Երեք կանայք, մայրը և երկու դուստրերը, մնում են ստվերում։ (Հետագայում Աննետան կծանոթանա նրանց հետ)։ Նրանք իրենց գեմքը չունեն։ Նրանք քիչ են կարդում, հազվագեղ են այցելում ծանոթներին, երբեք թատրունում չեն լինում։ Բայց դրա փոխարեն հաճախ են գնում եկեղեցի, իրենց ամբողջ ժամանակը նվիրում են բարեգործության։

Տղամարդիկ երեքն էլ ստացել են հիմնավոր և հույժ դասական կրթություն։ «Հոռմ, միակ»... Լատիներեն խոսելը նրանց համար ավելի հեշտ է, քան արտասահման կատարած ուղևորության ժամանակ գերմաներեն կամ անգլերեն հարցնել ճանապարհը։ Դա նրանց արժանապատվությունից ցածր է։ Թող հյուսիսային բարբարոսները սովորեն մեր լեզուն։ Երեքն էլ ապրում են անցյալի իդեալներով։

1 Խարտիաների գպրոց— բարձրագույն ուսումնական հաստատություն, որտեղ ուսումնասիրում են հին ձեռագրեր և հին պատմության այլ հուշարձաններ։

2 գ'էպերնոն— ֆրանսիական թագավոր Հենրիխ 8-րդի (1551—1589) փավորիտը,

3 թերիե— Երկրորդ միապետության գարաշրջանի նշանավոր փաստաբան-ուղարկում։

Այդ բարի քրիստոնյաները առանց որևէ վերապահության հիանում են Մորբասի<sup>1</sup> կոռալաշտությամբ։ Այս դա իսկական հոռմեացի է։ Նրանք երեքն էլ ուրախ մարդիկ են, զիտեն իրենց հաճուքների համար ապրել և գեմ չեն տղամարդկանց կոմպանիայում զվարճանալ անպարկեցտ անեկդատներով։ Պատարաղին նրանք գնում են վեցով, ամբողջ ընտանիքով,— վերին աստիճանի գորովաշարժ մի տեսարան։ Նրանց մատահորիզոնը նեղ է, բայց ուրվագծված է պարզ, ինչպես հստակ ու ներդաշնակ գծերով ֆրանսիական այն պեյզաժները, որտեղ բլուրները օղակի նման շրջափակում են հին, բայց չփոշուսվող փոքրիկ քաղաքը։ Փարիզի ծխական համայնքը, ոչնչով չի տարրերվում այդ հետամնաց փոքրիկ քաղաքից։ Այն, ինչ նրա սահմանից դուրս է գտնվում, փարիզեցիների մեջ թշնամանք չի առաջացնում, այլ միայն թեթև ծաղր. դա մի կանխակալ կարծիք է, որ ոչ մի բանի վրա հիմնված չէ, բայց այդպես հաստատվել-մնացել է։ Ապրում են փոքրիկ, նեղ աշխարհով— դրանից դուրս ոչինչ չգիտեն և չեն էլ նկատում, իսկ վերևում՝ աստված է, երկնքի մի ծվեն և Սնն-Սյուլպիս եկեղեցու ճերմակ զանգակատները, որտեղ զանգերն են երդում։

Բայց երբ Հանրապետության կառավարությունը զորակոշեց երկու որդիներին, որպեսզի՝ նրանցով կերակրի թշնամու գնդացիրներին, ընտանիքից ոչ մեկը նույնիսկ ծպտուն չհանեց։ «Մրիկան»<sup>2</sup> դարձավ սրբազնության կամաց բոլորն էլ մորմոքվում են, բայց թաքցնում են իրենց ցավը։ Նրանք հիանալի յուրացրել էին, որ Կեսարինը պետք է տալ Կեսարին։ Իսկ աստված խստապահանջ չէ։ Հոգին բավական է նրան, Մարմինը նրան պետք չէ։ Աստված նույնիսկ Գրաժարվում է արարքները դատելու իրավունքից։ Նա դատում է միայն մտադրությունները, Կեսարին դա ձեռնտու է։ Նա տիրում է ամեն ինչին։

<sup>1</sup> Մորբաս Շառլ (1868—?)— ֆրանսիացի գրող-մոնարխիստ։

<sup>2</sup> Այդպես էր Հանրապետությանը անվանում ֆրանսիական ուսակցիոն մամուլը։

Երրորդ հարկում որդու հետ միասին ապրում է պրո-  
ֆեսոր-իրավագետ պարոն Ժիրյորը, որն արդեն մի քա-  
նի տարի է, ինչ այրիացել է: Ժիրյորը նույնպես Հարավից  
է, բայց բոլորովին ուրիշ Հարավից— նա սեվենյան բողո-  
քական է: Պրոֆեսորը իրեն երևակայում է ազատամիա  
(ինքնախաբեռություն, որով մեր համալսարանում մի նախի-  
գիտնական չէ, որ իրեն շոյում է): Բայց հոգու խորքում նա  
«պարպալյոտ»<sup>1</sup> է, ինչպես երիտասարդ թեռնարդեններն են  
արտահայտվում, իրենց շրջապատում ծաղրելով նրա փայ-  
տե կեցվածքը և Աղմիրալի<sup>2</sup> ժամանակների քարողիչի դեմ-  
քի արտահայտությունը: Նա շատ կարգին մարդ է: Պարտքի  
հարցերում ծայրահեղության շահի խիստ է և լցոնված է  
բարոյական նախապաշարմունքներով (ընդ որում ամենա-  
վատթարագույններով, քանի որ դրանք անողորմ են): Վե-  
րակի հարկի բնակիչների նկատմամբ ունեցած իր ամբողջ  
հարգանքով և որոշ շափով լարված, բայց երբեք իրեն շդա-  
վաճանող նրբին քաղաքավարությամբ հանդերձ, նա հա-  
տուցում է նրանց, ինչպես ասում են, նույն շափով: Պրո-  
ֆեսորը անկեղծորեն ջանում է աշառու վիճել, բայց նրա  
աշբում կաթոլիցիզմը՝ յուրատեսակ մի արատ է, օրգանական  
մի պակասություն, որն իր կնիքն է դնում նույնիսկ ամենա-  
ազնիվ մարդկանց վրա՝ ինչ էլ որ նրանք անելիս լինեն:   
Եվ նա ամեներն չի կասկածում, որ հենց կաթոլիցիզմն է  
լատինական ազգերի մայրամուտի պատճառը: Մինչդեռ  
Ժիրյորը բարեխիղճ պատմաբան է, նա ջանում է կրքի նշույլ  
անգամ շթողնել այն ամենում, ինչ ինքը ասում է և գրում,  
շվախենալով ձանձրալի և անհամ երեալուց: Եվ Ժիրյորը  
խկապես էլ ձանձրալի է իր դասախոսություններում, որոնք  
հիմնավորված են փաստաթղթերով, հագեցված են ցիտատ-  
ներով, երիգված են ծանոթագրություններով և դրա հետ  
սկիտեղ արտասանվում են միապաղաղ, քթային խնթխըն-  
թան ձայնով: Իր պատմական քննադատությունը նա իր

<sup>1</sup> Պարպալյոտներ— Հուգենոտների մականունը Ֆրանսիայում,

<sup>2</sup> Նկատի է առնված աղմիրալ Կոլինյին (1519—1572): Հուգենոտների առաջնորդը:

Համար անհկատելի կերպով արժեքազրկեց կանխակալ կարծիքներով, որոնց համար նա նույնիսկ իրեն հաշիվ չի տալիս, — այդ աստիճան դրանք իրեն անվիճելի են թվում, — ճկունության լիակատար բացակայությամբ և տարբեր հայցքների մեջ ճիշտ կողմնորոշվելու անկարողությամբ։ Այդ տիրացուն, որն ամեն ինչ տեսել էր գրքերում և շատ բան՝ կյանքում, իր ճերմակած մազերի տակ պահպանել էր կոմիկական, սրտաշարժ, սարսափազդու միամտություն, իսկ դա բարեհաջող հող է հանդիսանում ֆանատիզմի բոլոր տարատեսակների համար։ Բարոյական հոտառությունը նբա մեջ խիստ զարգացած է։ Բայց հոգեբանականը մեռած է։ Նրանց, ովքեր իր նման չեն, նա ի վիճակի չէ հասկանալու։

Նույնն էլ նրա որդին էր Պատմաբան, երիտասարդ գոկտորը՝ Սորբոնի դիպլոմով։ Ոչ շատ վաղուց, երեսուն տարեկանում, նա գերազանց պաշտպանեց իր դիսերտացիան և հիմա աշխարհին նայում է տեսությունների ակնոցի միջով։ Իր սեփական, իհարկե, Մինչդեռ չէր խանգարի ապակիները օպտիկի մոտ ստուգել։ Բայց նա այդ մտքից հեռու է։ Նա, ինչպես և իր հայրը, համաձայն չէ, որ «առաջինը բանն է»։ «Առաջինը սկզբունքն է»։ Հանրապետությունը դա սկզբունք է։ Առաջին Հեղափոխության նվաճումները անխախտ են, ինչպես թեորեմա։ Սկսված պատերազմը հետեանք է, որը անխուսափելիորեն բխում է հենց այդ թեորեմայից։ Պատերազմի նպատակն է դեմոկրատիա և խաղաղություն սահմանել ամբողջ աշխարհում։ Նբանց մտքով չի էլ անցնում, որ, թերևս, ավելի խելացի կլիներ սկսել հենց այդ խաղաղության պաշտպանությունից։ Բայց նրանք չեն տարակուսում, որ խաղաղության խանգարողները այն հետամնաց ժողովուրդներն են, որոնք չեն ցանկանում հասկանալ և ընդունել ճշմարտությունը։ Եվ, ուրեմն, համընդհանուր — և նրանց սեփական — բարօրության համար այդ ճշմարտությունը նրանց վզին պետք է փաթաթել ուժով։

Կարելի է կարծել, որ այդ երկու մարդք, հայրը և որդին եղբայրներ են, ավագ և կրտսեր։ Այն ինչում իրար

նման, միմյանց սիրող, բարձրահասակ և ուղիղ կեցվածք քով, նիհար և հպարտ՝ նրանք իրենց զնդանել են սեփական գաղափարախոսության մեջ. այդ գաղափարախոսությունը ոչ մի ճեղք չունի, որտեղից կարող էր թափանցել կասկածը: Գիտությունն ընդամենը նրանց դեմոկրատական համոզմունքների նվիրված աղախինն է: Նրանք այդ շեն գիտակցում: Նրանց գիտակցությունը իրենց հավատն է: Նրանք հավատում են: Նրանք հավատում են: Եվ կհավատային նույնիսկ խարույկի վրա: «Որդին լինելու է այդ խարույկի վրա՝ խրամատներում: Եվ հայրը նույնպես— իր արնաքամ լինող սրտով...»: Նրանք հավատում են... Եվ այդ մարդիկ իրենց աղատամիտ են անվանում:

Երիտասարդ ժիրյորը կիդիա Մյուրիլիեի, ժնկի մի հարուստ ընտանիքի հմայիչ և համարձակ աղջկա փեսացու է: Աղջկը սիրահարվեց նրան, ասենք, ժիրյորն ինքն էլ ն նրան սիրում կրոնական սիրով: Լիդիայի սերը չի կարելի կոչել կրոնական,— դա խորապես աշխարհիկ զգացում է, բայց, ձգտելով նմանվել սիրեցյալին, Լիդիան ընդօրինակում է նրան նաև սիրո մեջ. նա ճգնում է իր ժպտուն կապույտ աշքերին լուրջ արտահայտություն տալ: Իսկ խառնը-վածքով օտար է կրոնին և կյանքից ոչինչ չի պահանջում, բացի բնական հաճույքներից. Հողից, օդից, ջրից և տարվա բոլոր եղանակներին— առողջ լինելուց, արևից և իր սիրեցյալի սիրուց, եթե միայն այդ սիրեցյալն ինքը կյանքի երջանկությունը չփնտրեր կյանքից դուրս, գաղափարների մեջ: Եվ ահա կիդիան ջանում է նրա հետ միասին երջանկությունը գտնել նույն բանում: Հելվեցիայի<sup>1</sup> այդ համեստ դուստրը, որը պատճառ չունի մասնակցելու ժողովուրդների երկպառակություններին, հնազանդորեն բերանացի սերտում է ֆրանսիացիների հանրապետական կատնիսը (I տարվա Հեղափոխությունը և զինված մարդու իրավունքը)— իր փեսացուի հավատի սիմվոլը... Այս, եթե իր կամքով լիներ, ձեռքերի վրա նրան ինչքան կարելի է հեռու կտաներ այդ մարտերից: Ինչպես է նրան հուսահատեց-

<sup>1</sup> Հելվեցիա— Շվեյցարիայի հին անունը:

Նում պատերազմը ինչքա՞ն է հետո այդ պատերազմը նրա ստքերի ընթացքից։ Բայց կիդիան ամազում է դրանից— չէ որ նրա սիրեցյալը նայում և դատում է այլ կերպ։ Կիդիան փոքրոգի է, նա սիալվում է։ Պետք է աշքերը փակել և աշխարհին նայել նրա աշքերով, որպեսզի արժանի դառնալ նրան։ Օ սեր իմ, ես ուզում եմ հավատալ, որովհետեւ հավատում ես դու... Ես հավատում եմ...

Զի ուզում հավատալ ամբողջ տանը միայն Կլարիսսա Շարդոնն, Աննետայի հարեանուհին, որ նրա գեմ-դիմացն է բնակվում։ Ոչ, ո՛չ, նա սիրում է ոչ այն սիրով, երբ հանուն սիրած տղամարդու երեսակայական հավատի զոհաբերում ես և քեզ և սիրեցյալիդ... Ասենք, դա նույնիսկ անհեթեթություն է։ Ի՞նչ հավատ, ինչ բան։ Կա միայն երկշտություն մարդկանց առաջ, սարսափ՝ հասարակական կարծիքի հանդեպ։ Նրա ընտրյալը բանկի ծառայող է, մի բարի, հաճելի արտաքինով։ Բարալիկ շիկահեր բեղերով և անփայլ աշքերով, բավական անգույն սովորական երիտասարդ է։ Համաշխարհային իրադարձություններ, բանկ, քաղաքականություն և, անկեղծ ասած, հայրենիք— այդ բոլորի նկատմամբ նա միանգամայն և անսահմանորեն անտարբեր է։ Ամբողջ աշխարհում նրա համար գոյություն ունի միայն մի հաճելի փոքրիկ կին, որին նա տիրացել էր (թե՞ կինն էր տիրացել նրան) երեք ամիս առաջ։ Ի՞նչ ամիսներ էին դրանք... Բայց երկուսն էլ չեին հագեցել։ Նրանց մատները ցնցվում են, երբ, միմյանց սեղմվելով, նրանք հիշում են միասին անցկացրած գիշերները։ Ինչպես է նրա վրա իշխում Կլարիսսան, կրքով արբեցած այդ կինը... Փարիզի սովորական այդ աշխատավորուհին, որը պաշտում է իր ընտրյալին ինչպես տեր աստծուն, իր սեփական աստծուն, ինչպես իր ունեցած-շունեցածը, իր խաղալիքը, իր կատվին, իր ընտելացած փոքրիկ գազանին, իր հոգին, եթե նա հոգի ունի, իր փորոտիքը, իր ամեն ինչը։ Իր սեփականությունը... Նա նիհար, նուրբ, պոռթկուն, քնքշանվաղ աշքերով թխահեր կին է։ Նրա անարյուն գեմքին, որն ինքը խնամքով վարդագույն է դարձնում, կարմիք թելէ նման ընդգծվում են շրթունքները։ Կիրքը նրա

միջից ծծել է ամբողջ արյունը: Իսկ նրա ընտրյալը ողոր-  
սածաբար թույլ է տալիս, որ իրեն պաշտեն— և չի զար-  
մանում. այդ ընտրյալը տրվում է նրան, ով լափում է  
իրեն: Եվ նրանցից յուրաքանչյուրը իր հերթին մյուսի որսն  
է զառնում: Ոչ մեկը, ոչ մյուսը չեն մտածում, որ այդ խա-  
ղը վերջ պետք է ունենա: Ուրիշ իմաստ նրանք կյանքի մեջ  
չեն տեսնում...

Սակայն երբ պատերազմը բախում է դուռը, նա ելնում  
է առանց վիճելու: Անուրախ բան է գա— չէ որ խիզախու-  
թյամբ նա աշքի չի ընկնում: Գրեթե արցունքով է նա մտա-  
ծում, թե ինչ է թողնում և փոխարենք ինչ է գտնելու: Բայց  
վախենում է ծիծագելի երեալ, վախենում է արհամարհան-  
քի արժանանալ, եթե թուզություն ցուցաբերի: Տղամարդուն  
վայել չէ շափից ավելի ուժեղ սիրել: Կլարիսսան լավ է ճա-  
նաշում նրան: Նա գոռում է:

— Վախկո՞տ: Վախկո՞տ:

Եվ հեկեկում է:

Նրա ընտրյալը՝ վիրավորված, կատակի է տալիս.

— «Վախկոտ»... Լավ վախկոտ ես գտել: Վախկոտ կո-  
չի մի մարդու, որը հերոս է ուզում դառնալ: «Մեռնել հայ-  
ւենիքի համար»:

Կլարիսսան աղաշում է նրան լոել: Հենց միայն «Ճահ»  
բառից կլարիսսան սկսում է գողալի եվ նա ներում է խընդ-  
րում: Թող պարեհնա իր հայրենասիրությամբ— չէ որ դա  
քաջալերվելու համար է ասում: Եվ կլարիսսան չի համար-  
ծուկում վեճը շարունակել: Նա շափազանց միայնակ է և  
չի կարող բարձրաձայն արտահայտել իր մտքերը. ամբողջ  
աշխարհը (դա ոչի՞նչ է) և ընտրյալը ինքը (դա ամեն ինչ  
է) դրանք հերետիկոսություն կանվանեն: Բայց կլարիսսան  
գիտե, որ հածուկ: Չոգու խորքում, իր ընտրյալը, այդ դրժ-  
բախտը, ժտածում է նույնը, ինչ որ ինքը... «Մեռնել հայ-  
ւենիքի համար...»: Ոչ, ոչ, դա ասվում է գալյորկայի հա-  
մար... Մարդկի փոքրուգի են: Իրենց երջանկությունը պաշտ-  
պանելու արիություն նրանք չունեն: Ողորմելի են նրանք,  
թղորմելիք... Կլարիսսան աշքերը սիրում է: Չէ որ կյանքը  
բեմ է: Պետք է ժամանակ եթե նրա օւգածն այդ է: Կլարիս-

սան լաց կլինի կուլիսների հետևում... «Ասենք դու նույնպես ինձ չես կարող խաբել: Զէ որ քո հոգում էլ մահ է: 0, վախկոտ, վախկոտ, ինչո՞ւ ես մեկնում»:

Իսկ ընտրյալը կարդում է նրա մտքերը և բարձրաձայն մտածում.

— Ուրեմն, ի՞նչ անեմ:

Բայց Կլարիսսան կին է, և կրքոտ կին: Նա չի կարող շաշտվել: Հաշտվել այն բանի հետ, ինչը իրեն խանգարում է ապրել...

— Ի՞նչ անես: Մնա՞:

Ընտրյալը հոգնած թոթվում է ուսերը:

Այս Կլարիսսայի դեմ է ելնում ամբողջ աշխարհը, նրա ընտրյալի դեմ նույնպես: Բայց Կլարիսսան զայրանում է իր սիրեցյալի վրա: Միրեցյալը «ամրող աշխարհի» հետ է: Նա հնազանդվում է: Ինչո՞ւ

Երկու բանվորները, որ ձեղնահարկում են ապրում, նույնպես հնազանդվեցին. դա Պերրեն էք (թամբեր և սեկե ապրանքներ) և Պելտեն (էլեկտրամոնտյոր): Նրանք պատրաստ էին կովելու պատերազմի դեմ: Բայց քանի որ ոչ ոք նրա դեմ չի կովում, ստիպված են համաքայլ գնալ պատերազմի հետ: Ուրիշ ընտրություն չկա... Նրանք երկուսն էլ սոցիալիստ են, և նրանց ելման կետը միենույնն է: Բայց մարդիկ մեկնում են միասին, իսկ հետո, բաժանվելով գնում են տարբեր կողմեր: Եվ ահա նրանց ուղիները բաժանվեցին:

Դեռ մի շաբաթ առաջ Պերրեն հաստատ որոշեց, որ պատերազմ չի լինելու.

— Այդ բոլորը լրագրային փոշի է, փոկեր խաղացողների, մինիստրների և դիվանագետների, կանաչ սեղանի շուրջ նիստեր անողների պարապ հերյուրանք: Իսկ եթե նույնիսկ այդ միջազգային մակլերները մեզ վնասեին էլ, նրանց իրենց տեղը կղնեին: Մենք դեռ մեր խոսքը կասե՞նք, Մենք՝ ինտերնացիոնալը, ժորեսը. Վայլանը, Գեղը, Ռենովելը, Վիվիանին<sup>1</sup> և արհմիությունները: Երկաթյա դիվիզիան: Եվ

<sup>1</sup> Վայյան (1840—1915) — Փարիզի կոմունայի և 1-ին ննտերնացիոնալը նշանավոր գործիչ: Գեղը, Ժյուլ (1845—1922) — Փրանսիական սո-

արտասահմանում, հատկապես Գերմանիայում, գտնվող բոլոր ընկերները... ևի՞ր, Պելտին, Վերջերս մենք (մերոնք) հանդիպեցինք նրանց հետ,— ամեն ինչ արդեն կազմակերպված է, լողունգը տրված։ Ապա թող փորձեն սրիկաները զորահավաք հայտարարել... Մենք նրանց զորահավաք ցույց կտանք. ոչ ոք տեղից չի շարժվի...»

Բայց Պելտին քթի տակ ծիծաղում է և կամացուկ շըվշըվացնում։ Նա Պերրեին ասում է.

— Դեռ շահել ես, ընկերս։

Պերրեն կրքոտությամբ առարկում է։ Նրա երեսունյոթնանցել է, իսկ ծանր աշխատանքի երեսունյոթ տարին որևէ անրանի կյանքի հիսուն տարին արժե։ Բայց Պելտին հանդիստ պատասխանում է.

— Հենց այդպես էլ կա։ Դու ծանր աշխատանք էիր տանում, իսկ մտածելու ժամանակ չունեիր։

Պերրեն վեճի է բռնվում, «տաք-տաք» մատուցելով ընկերոջը թերթի վերջին համարում կարդացած հոդվածը, — այն միակ թերթի, որը ստում է նրա կարծիքներին համապատասխանաբար։ Պելտին ուսերը թոթվում է և հոգնած պատասխանում։

— Այո, ասելը հեշտ է... իսկ որ դա անելուն... բոլորը կանհետանան։

Եվ նրանք «անհետացան»։ Երբ սրիկա մատադորը, թաքնվելով փեղկերի հետևում, ժորեսին մի հարվածով տապալեց, ինչպես ցուլի, սարսափից քարացած Փարիզում մեծ թափոր էր, հուղարկավորության շարագուշակ հանդես— և ճառեր, ճառեր, ճառերի հեղեղ այն մարդու վրա, ով հավիտենապես լուել էր։ Այդտեղ էին բոլորը— և նրանք, ովքեր ողբում էին ընկածին, և՝ նրանք, ովքեր մտածում էին։

«Նրա համար դագաղում շատ ավելի լավ է»։

Ժողովուրդը վրեժի կոչի էր սպասում, ահազանգի, որը

Քիալիստ, Թանվորական կուսակցության հիմնադիրներից և Յ-րդ Խատերա Նացիոնալի ցենտրալիստական լիդերներից մեկը։ Ծննդակ (1871—1935)։ Փրանսիական սոցիալիստական կուսակցության ծարագների ազերի թերթի գերականի (1863—1925)։ Փրանսիական սոցիալիստ հետազոտական գործուական գործիչ, մինիստր։

կցրեք տագնապը, սպասում էր խովարում փայլառակող շանթի: Իսկ թաղման պերճախոսությունը, որ զեղում էին բոլոր այդ շուրթերը, շնչում էր լոկ մահվամբ և դավաճանությամբ: Հոետորներն ասում էին.

— Երդվե՞նք վրեժ լուծել Ժորեսի համար:

Բայց դեռ չէին լոել այդ երդումները, երբ նրանք հենց իրենք էլ խախտեցին այդ: Նրանք դարձան կապալառուները այն պատերազմի, որը սպանեց Ժորեսին: Նրանք ուսուցանում էին ժողովրդին.

— Գնացեք սպանելո՞ւ Միավորվե՞նք մեր եղբայրների մարմինների վրա սուրբ միասնությամբ:

Եվ այդ նույնը կրկնում էին նրանց համախոհները Գերամանիայում:

Ժողովուրդը շփոթահար լուսմ էր: Բայց հետո սկսեց աղմկել ու գնաց նույն ճանապարհով: Նա՛ չէ, որ պետք է մտածի: Եթե նրանք, ում ժողովուրդը կարգել է իր փոխարեն մտածելու, իր առաջնորդները, նրան պատերազմ են տանում, ուրեմն պետք է գնալ: Եվ Պերրեն արդեն հավատացրել է իրեն, որ հենց դա էլ ժողովրդի և ինտերնացիոնալի գործին ծառայել է նշանակում: Հենց որ պատերազմը վերջանա— վրա կհասնի ոսկեղարը: Անհրաժեշտ էր դեղահաբերը ոսկեզօ՞ծել:

Բայց Պելտիեն, որի պատրանքներն արդեն խորտակվել էին, ասաց.

— Ո՞նց չէ, պատերազմ կգնան նրանք: Ժողովրդի՝ գործը... Ինձ զզվեցրել են այդ բառերը: Ավելի լավ է ես հոգ տանեմ իմ սեփական գործերի մասին: Նրանցից օրինակ կվերցնեմ (նրանք՝ սոցիալիզմին դավաճանած շնաձկներ են). կյանքս կդասավորեմ...

Եվ Պելտիեն դասավորեց կյանքը... .

Ամբողջ տանը լւերեկց ներքեւ թշնամանք չի զգացվում: Զայրանում են կերմանացիների վրա— չէ ոք հարձակվող կողմը նրանք են (իհարկե, նրանք են: Այստեղ վիճելու բան չկա): Կովել չեն ուզում, բայց կովի են գնում: Որպեսզի գերմանացիներին դաս տան: Թաքնված, համր, կենտրո-

նացված տառապանքի խորքից, դոհերի անհրաժեշտության գիտակցությունից էնտուզիազմ է ծնվում։ Բայց ատելություն չծնվեց։

Դա գուցե զրակորում է միայն Ռավուսսա՞ն (Նյումա՞ն)՝ ռիայտի պահեստի և զինու մառանի» տերը, որը ներքեւի հարկում է ապրում։ Գեր, գզզված ծերուկը, որ հազիվ է քարշ տալիս իր հոդատապից տառապող, կեղաստ կոշիկներ հաղած ոտքերը, անվերջ խոսում է բոշերի մասին, նրանց վրա հայհոյանքների հեղեղ թափելով։ Նա նախանձում է իր որդուն՝ Կլովիսին, որը մեկնում է այդ երշիկագործների փորք թափելու հսկ որդին ցնծում է. դա հաճելի զրուանք է լինելու Բոշերի մոտ նա սրտի ուղածի շափ կզվարճանա գարեջրով ու նրանց Գրետիսենով... Քրքչում էն... գոռում-գոշում... Բայց քո դեմքին, գիրացած ծերուկ, ևս բարձրաձայն շաղակրատանքով խլացվող տագնապ է չկարդում, և ցասում՝ այն վտանգների մասին մտածելիս, ուր դու կամա թե ակամա ուղարկում ես որդուդ, քո միակ որդուն...

— Եթե նա... Եթե նրանք նրան... Ա՛, սատանան տանի... Եթե նրանք նրան խեղանդամ դարձնե՞ն, սպանե՞ն...

Ինչ որ է, ամբողջ տան վրա հանգիստ արժանապատվության կնիք է, առանց ցասումի, առանց փոքրոգության, — ակնածալից և անվեհեր հնագանդության կնիք։ Ցուրաքանչյուրը ցուցադրում է, ինչպես ձգված աղեղ, անհայտ աստծուն ուղղված իր վստահությունը։ Իսկ տագնապները թաքցրնում է որքան կարելի է խորք։

Բոլորի՞ մոտ արդյոք եղաւ։ Որևէ Ճեկին բաց չթողի՞ արդյոք։

Ախ, հա՞։ Կայիի դիմացը գտնվող վեցերորդ հարկի փոքրիկ բնակարանում ապրում է երիտասարդ գրող Փողեֆեն Կլապիեն։ Նա քսանինը տարեկան է, սիրտը հիվանդ է, և առատված է լինվորական ծառայությունից։ Նա թաքնվում է հր ընում։ Անազգօրեն սշխատում է ոչ ոքի աշքին շերեւլ։ Պայման իրան խցում ծն։ Բայց խղճահարությունը նվիշաւություն է, որի չարաշահումը անգուշտություն կլիներ։

Իսկ Կլապիեն զգուց է: Նրա սրտից արյուն է կաթում... Ներքեսմ անքուն աշք կա... Բրոշոն, սրի մասին ևս մոռացաց հիշատակել... Իսկ նրան անհարմար է շրջանցել. դա դոնապանութու ամուսինն է, ոստիկանական գործակալը: Նա չի գնում — նրա աշքը, բոռնշղները պետք կգան աշխատեղ: Նրա պարտքը այս ափում մնալն է: Բայց նա իսկական ուազմիկից պահաս ավյուն չուներ: Նա արթուն կնրով հետևում է կասկածելի անձնավորություններին, թիկունքում գտնվող թշնամիներին: Բրոշոնը հայրական հայցքով ընդգրկում է իր տունը: Դա հուսալի տուն է, դա նրան պատիվ է բերում: Այդ տան բնակիչներին Բրոշոնը շատ բարեհաճորեն է վերաբերվում: Բայց չէ որ պարտքը առաջին ռենդն է գրավում: Իսկ Կլապիեին նա աշքի տռագունի: Կլապիեն սլացիֆիստ է:

Այս անգամ այսքանը բավական է — այդ բակացա՞շնով ավարտում եմ իմ ստուգատեսը: Ես անցա բոլոր հուրերը, բացի երկրորդից: Երկրորդ հարկը փակ է: Երկրորդ հարկը անձեռնմխելի է: Դա զբաղեցնում է տան տերը: Պարոն և տիկին Պոնյոնները, հարուստ, հասակավոր, ձանձրացող մարդիկ, մեկնել են հանգստանալու: Բնակարանային վարձը նրանք կենվորներից հավաքել են հովիսին: Հոկտեմբերին նրանք կվերադառնան: Հավիտենականության մեջ կսուզվի մի ամբողջ տրիմեստր...<sup>1</sup>

Եվ միլիոն կյանքեր:

Նրանք մեկնեցին, բոլոր ութ ուազմիկները: Իսկ մնացածները շնչները պահում են, որպեսզի որսան նրանց հեռացող քայլերի ձայնը: Փողոցներում աղմուկ է: Բայց գիշերները մարդկային սրտերի և տան վրա իջնում է ողբերգական լոռություն:

Աննետան հանգիստ է: Ասենք, դա մեծ արժանիք չէ, չէ որ նրան ոչինչ չի սպառնում: Եվ դա թվում է ստորացուցիչ եթե Աննետան տղամարդ լիներ, նա, իհարկե, առանց մտա-

<sup>1</sup> Փարիզում ոնատերերը բնակարանային վարձը սահմում են մի տրիմեստր, այսինքն՝ երեք ամիս առաջ:

ծելու, ողատերազմ կմեկների Բայց ի՞նչ էլիներ նրա վճռաւ կանությունը, եթև որդին հինգ տարով մեծ լիներ: Ո՞վ գիտե, Աննետան կասեր, որ հենց միայն այդ միտքը իր համար վիրավորական է: Զէ որ Աննետային մանները ընդունակ են, զայրացած իրենց վրա, շառագունել ու խաղաթըդթի վրա դնել և իրենց և իրենց սիրելիների կյանքը... Ընդունա՞կ է.. Չուցեն այդպես... Բայց արդյո՞ք կդնի... Նա դրանում համոզված է.. . Զեացնենք, որ հավատում ենք նրան: Եթե մենք չամաձայնենք, նա նոթերը կկիտի, ինչպես ցասումնալից ծունոնաւ: Բայց երբ որդին մոտենում է Աննետային, նա հազիվ է իրեն զսրում, որ շխեղի նրան իր կրքու գրկում: Որդին Աննետային է պատկանում: Նա ամուր բռնել է որդուն...

Զնայած Աննետայի մնջ նիրհող գործունեության ծարավին, նա կամա թե ակամա անգործունեության է մատնը-ված: Աննետան (որդու հետ միասին) ժամանակավորապես պաշտպանված է վտանգներից: Ճակատագիրը նրան տարեկետում էր պարզեել, և նա դիտելու ժամանակ ունի: Աննետան օգտվում է դրանից: Նա աշխարհին նայում է ազատ, ոչ մի տեսությամբ չքողարկվող հայացքով: Պատերազմի և խաղաղության հարցերի վրա նա դեռ երբեք չի խորհրդածել: Ահա արդեն տասնհինգ տարի է: Ինչ Աննետային ամբողջովին զբաղեցնում է նրան ավելի ծանոթ մի կոնֆլիկտ— հացի պայքարը, և էլ ավելի այրող՝ իր պայքարը իր հետ: Հենց դա էլ խսկական պատերազմ է: Ամեն օր այդ պատերազմը նորից է սկսվում: Զինադադարն այդ ճակատում սոսկ թղթի մի ողորմելի կտոր է: Ինչ վերաբերում է արտաքին պատերազմին և առհասարակ միջազգային քաղաքականությանը, Աննետան դրանցից հեռու է: Ամբողջ քառասուն տարի (Աննետայի ապրած քառասուն տարիները) երրորդ հանրապետությանը հաջողվում էր պահպանել անամպ երկինք ավելի շուտ շնորհիվ այն բանի, որ Եվրոպայի բախտը բերում էր, թեև նա դրան արժանի էլ չէր, քան շնորհիվ հենց իր՝ հանրապետության շանքերի (քանի որ այդ թորշոմած ոեժիմը, ինչպես և նրա հակառակորդը— շաղակրատ կայսրը, երբեք «այո» չէր արտաքերում, առ

ուանց միենույն ժամանակ «ոչ» ասելու, և հերթականորեն փառաբանում էր մերթ շոր վառողը, մերթ ձիթենու շոր ճյուղը): Մի ամբողջ սերնդի համար պատերազմը հեռավոր և աղոտ ինչ-որ բան էր: դեկորացիա էր կամ վերացական գողափար, ոռմանտիկ տեսարան էր կամ բարոյականության ու մետաֆիզիկայի հարց:

Աննետան, որ հանգիստ ներծծել էր իր մեջ այն ժամանակների պաշտոնական աշխարհայացքը, երբ հարաբերականության տեսությունը դեռ չէր սասանել գիտության բոլոր հիմքերը, սովոր էր կեցությունն ընդունել որպես հավիտենապես տրված իրականություն, որին զեկավարողը բնության օրենքներն են: Եվ այդ նույն օրենքներին, նրան թվում էր, ենթակա է պատերազմը: Իսկ ժխտել բնության օրենքները կամ դուրս գալ նրանց դեմ Աննետայի մտքով չէր էլ անցնում: Նրանք ենթակա չեն ոչ սրտին և ոչ էլ նույնիսկ բանականությանը. Նրանք իրենք են իշխում թե՛ մեկի, թե՛ մյուսի վրա— պետք է ենթարկվել նրանց: Եվ Աննետան ընդունում է պատերազմը, ինչպես ընդունում է մահը և կյանքը: Բոլոր անհրաժեշտառություններից, որոնք բնությունը մեր վզին է փաթաթել կյանքի խորհրդավոր և դաժան պարզեցի հետ միասին, պատերազմը դեռ ամենաանմիտ և, թերեւ, ամենադաժան բանը չէ:

Աննետայի գեպի հայրենիքն ունեցած զգացմունքի մեջ արտակարգ ոչինչ լկա: Այստեղ լկա առանձնահատուկ խանդավառություն, բայց և այդ զգացմունքը կասկած չի առաջացնում: Սովորական ժամանակ Աննետան երբեք չի մտածել այդ զգացմունքի մասին, ցանկություն շունենալով պարծենալ դրանով կամ խորամուխ լինել դրա էության մեջ: Աննետան այդ զգացմունքը ևս ընդունում էր որպես փաստ:

Եվ հենց առաջին ժամին, որ պատերազմը խփեց, ինչպես աշտարակային ժամացույցի մուրճը, Աննետան զգում է, որ ցնցվեց իր մի մասը, մի ամբողջ լայնարձակ երկրամաս, որ սուզված էր քնի մեջ: Աննետայի մեջ հայտնվում է աճի զգացում: Նա խցկված էր իր անհատականության վանդակի մեջ: Եվ ահա նա դուրս պրծավ ազատություն և մերսում է թմրած անդամները: Արթնանում է քնից, որին

դատապարտել էր նրան միայնությունը։ Այժմ նա ամբողջ ժողովուրդն է...

Եվ ժողովրդի ամեն մի շարժում նրա մեջ արձագանք է գտնում։ Առաջին խոկ րոպեից նրան թվում է, թե կրնկր վաս բացվել է Հոգու լայն դուռը, որը սովորաբար փակ էր, ինչպես Յանոսի տաճարը... Բնություն առանց ծածկույթների, ֆերկ առանց գունազարդումների ուժեր... Ի՞նչ կտեսնի նա, ի՞նչ կհայտնվի նրան, ինչ էլ ուզում է լին։ Անհիմական պատրաստ է, նա սպասում է, նա իր տարերքի մեջ է։

Նրան շրջապատող մարդկանց մեծամասնությունը դրվագ է տանում այդ տոթքի նրանց մտքերում տեղի է ունենալում խմորում։ Դեռ չի անցել օգոստոսի առաջին շաբաթը, բայց տենդը նրանց արդեն ցնցում է, Քայլքալում է այդ չպաշտպանված օրդանիզմները։ Թունավոր և քայլքալիչ սաղմերի հանկարծական ներխուժումից թունավորված արյունալցումը բծերով է ծածկում մաշկը։ Հիվանդներն ամփոփվում են իրենց մեջ՝ լուս են, Յուրաքանչյուրն առանձնանում է իր սենյակում։ Յանը գեռ դուրս չի տվել։

Աննետան հանգիստ է։ Թոլոր շրջապատողներից նա միակն է, որ հավասարակշռությունը չի կորցրել— ընդհակառակն, մտել է «նորմալ» հունի մեջ։ Սարսափելի է արտասանել, նա շնչում է թեթևությամբ։ Նա նմանվում է մեծ արշավանքների ժամանակվա կանանց— իր նախամայրերին, երբ թշնամական հորդաների ուազմիկները դիպչում էին նրանց ժամանակավոր ընակավայրերի ցանկապատին, նրանք բարձրանում էին շայլերին, որպեսզի պաշտպանվեն բոլորի հետ միասին։ Հարթավայրերի ընդարձակության մեջ նրանց մերկ կրծքերը շնչում էին ավելի խորը։ Հանդարտ և ուժեղ բարսխող սրտերը իրենց մեջ էին առնում պատեալ բազմի օդն ու ներխուժով հրոսակների հորձանքի ցալտքերը։ Նրանք հայացքով ընդգրկում էին իրենց շայլերի անիվներով ակոսված ամալի դաշտերը, անտառք մթին

տվող կիսաշրջանակը, հորիզոնը, բլուրների օձագալար գիծը և գմբեթը ազատ երկնքի, որն ազատագրված հոգիների է սպասում։

Աննետան իր սայլի վրայից դիտում է հորիզոնը և ձանշացում։

«Այո, ահա նա...»։

Ինչպես Հնդկաստանում են ասում։

«Այն, ինչ զու տեսնում ես, դա հենց դու ինքդ ես, իմ մանեկիկ»։

Համաշխարհային բեմ դուրս եկավ նվաճողը — Հոգին նա այդ ամենում ճանաշում է իրեն։ Այդ տենդային հոգիները — ես եմ... Այդ թաքնված ուժերը, կապերը կտրած գևերը, զռհերը, դաֆանությունները, հիացմունքը, բռնությունը — ես եմ... Հատակից վեր բարձրացող նզովյալ և սրբազան հզոր պոռթկումները — ես եմ...»

Ինչ ուրիշների մեջ է, նույնը և իմ ես թաքնվում էի: Իսկ հիմա վրայիցս նետում եմ ծածկույթները։ Մինչև հիմա ես միայն իմ ստվերն էի: Մինչև հիմա իմ օրերը լցված էին երազանքով, և երազանքը, որը ես խլացնում էի: իմ իրականությունն էր: Իսկ իրականությունը — ահա նա: Աշխարհն է, որտեղ իշխում է պատերազմը... ես եմ...»

Ի՞նչ խոսքերով նկարագրել այն անորսալին, որը ուոճանում է, ինչպես խաղողի հյութը տակառի մեջ. լոռությունը և երազանքը բաքոսի քրմուհու այդ հոգում։ Այդ բարձրացող եռքը, որը նա դիտում է, զգում, և այդ մեղմ գլխապըտույտը։

Տեղի է ունենում սարսափելի մի դրամա, նա գործող անձերից մեկն է։ Սակայն դեռ բեմ դուրս գալու ժամանակը չէ. նա պատրաստ է, բայց իր հերթը դեռ չի եկել։ Սպասելով, նա կարող է զննել գործողության սրընթաց հոսանքը։ Նա ներծծում է իր մեջ այն ամենը. ինչ տեղի է ունենում այդ միակ ակնթարթին։ Խոնարհված հոսանքի վրա, Աննետան նայում է, և նրա աշքերը շաղվում են, բայց նա իրեն կպահի եղրին, մինչև լհնչի բացականշությունը։

— Հիմա արդեն ժամանակն է։ Նետվի՛ր։

Հոսանքը փոթորկվում է և փրփրում։ Ամբարտակը ճեղքված է։ Ճեղեղ... Փախուստ, կոտորած, բոցկլտացող քաղաքներ... Ընդամենը մի տասնհինգ օրում Արևմուտքի ժողովուրդը սուզեց պատմության հատակը— տասնհինգ հարյուրամյակներ կարծես չէին էլ եղել։ Եվ ահա, ինչպես խոր հնության շրջանում, ժողովուրդները մրրիկի նման գալարապույտ եղան, և, հարազատ հողից պոկված, նրանք նահանջում են արշավողների առաջ...

Փախստականների վերջ չունեցող հոսանքը հյուսիսից խռութեց Փարիզ, ինչպես լավա նախագուշակող մոխրի անձրեւ։ Հյուսիսային կայարանը ջրհոսքի նման օր օրի հետեւից ժայթքում էր այդ թշվառ ամբոխի հեղեղները։ Հսկայական փնթի խմբերով կեղտոտ, տանջված փախստականները կուտակվում էին Ստրասբուրգյան հրապարակի շուրջը։

Աննետան, որ այդ ժամանակ աշխատանք չուներ, և որին տանջում էր իր չվատնած ուժերը ծախսելու ծարավը, թափառում էր մարդկացին այդ նախրի, այդ իրար գլխի հավաքված, հոգնած մարդկանց միջև, որոնք հանկարծ կարծես մոլուցքի մեջ, փոթորկալից ճիշեր էին արձակում և կատարում մարմնական անկանոն շարժումներ։ Զայրույթից ու խղճահարությունից Աննետայի սիրտը կծկվում էր։ Նա աղետների այդ ծովում, որտեղ ինքը կորչում էր, ուզում էր գտնել մեկնումնեկին, ում վրա կարող էր պահել իր կարծատես աշքերի հայացքը, ում կարող էր իրեն հատուկ կըրքությամբ օգնության հասնել։

Մտնելով կայարանի շենքը, Աննետան իսկույն տեսավ, կամ ավելի ճիշտ, բնազդորեն երկու մարդ ընտրեց։ Որսնք տեղափորվել էին երկու սյուների միջև ընկած խորշում։ Հատակին փոված տղամարդու մոտ գետնին նստած էր մի կին, որն իր ծնկներին պահում էր նրա գլուխը։ Գալուն սկս նրանք կատարյալ ուժասպառ փովել էին մուտքի մոտ։ Ուղևորների հեղեղը թափալվում էր կնոջ վրա, որն իրենով ծածկում էր տղամարդուն։ Նա ուշադրություն չէր դարձնում, որ իրեն տրորում են, աշքը չէր կտրում տղամարդու փակ կոռպերով դիմքից։ Կանգ առնելով և իր մարմսնով ծածկելով այդ կնոջը, Աննետան կուացավ, որպեսզի

նոյի նրան։ Նա տեսավ կնոջ ծոծրակը, ուժեղ, կաթի նման սպիտակ վիզը, մազերի կոշտ, կարմրաշեկ բաշը, որը կարծես ամբողջապես պատված էր մրաջրի կեղտահետքերով, տեսավ նրա ձեռքերը, որ սեղմվել էին գետնին փոված ողամարդու մոմագույն այտերին։ Տղամարդո՞ւ Հաղիվ մի տասնութ-քսան տարեկան պատանու, որը գրեթե չէր շընշում։ Աննետային թվաց, թե նա արդեն մեռել է։ Նա լսեց կնոջ թույլ և կրքոտ ձայնը, որն իրեն կորցրած, կրկնում էր։

— Չմեռնե՞ս։ Նս չեմ ուզում։

Նրա ձեռքերը, ծածկված կեղտաբծերով ու կապտուկներով, շոշափում էին այդ քարացած դեմքի աշքերը, այտերը, բերանը։ Աննետան դիպավ նրա ուսին։ Կինը ոչնչով շարձագանքեց։ Աննետան շոքելով, կնոջ մատները հեռացրեց և ձեռքը դրեց պատանու դեմքին։ Թվում էր, թե կինը չի նկատում նրան։ Աննետան ասաց.

— Նա դեռ կենդանի է։ Փետք է փրկե՛լ նրան։  
Այդ ժամանակ կինը կպավ Աննետայից և ճշաց։

— Փրկե՛ր։

Այժմ Աննետան տեսավ պեպենոտ, խոշոր և խիստ դիմագծերով դեմքը։ Հատկապես զարմացնում էին հաստ շըրթունքներն ու կարճ քիթը, որի վիծը, դուրս ցցված շըրթունքներից շարունակվելով, գաղանային կերպարանք էր հիշեցնում։ Տգեղ դեմք, նեղ ճակատ, ցցուն այտոսկրեր և ծնոտ։ Այդ ագահ բերանը, այդ կարմրաշեկ մազերի դեզը, որ գանգին նեղ ճակատի վրա դրված աշտարակի նմանություն է տալիս... Ուշագրություն էին գրավում նաև աշքերը— մեծ, երկնագույն, իսկական ֆլամանդական աշքեր, որոնց մեջ ճշում էր մարմնականը։

Աննետան հարցրեց։

— Բայց նա վիրավո՞ր չէ։

Կինը հաղիվ լսելի ասաց։

— Մենք երկար-երկար ճանապարհ անցանք։ Նրա ուժերը սպառվեցին։

— Դուք որտեղացի՞՞ եք։

— Ս...ից ենք։ Դա ամենահյուսիսային մասում է։

Եկան, տմեն ինչ ուրեցին: Ես սպանեցի... Վերցրի պաշտից կախած հրացանը: Եվ ցանկապատի հետևից կրակնցք: առաջին պատահածի վրա... Մենք փախանք: Երբ կանգէինք առնում շունչ քաշելու, լսում էինք նրանց ոտնաձայները: Գալիս ու զալիս էին... Ամբողջ երկինքը սկը պատել էր... Ոնց որ կարկուտի պատ... Եվ մենք փախչում էինք, փախչում... Նա ընկալ... Ես գրկած բերի:

— Նա ո՞վ է:

— Եղբայրս:

— Հո շի կարելի այս փոշիների մեջ ընկած մնալ: Զեզ բաքի տակ կտան: Վե՛ր կացեք: Դուք Փարիզում ծանօթնեց ունե՞ք:

— Ոչ ոք չունենք: Եվ ընդհանրապես ոչինչ չունեմ: Ինչ կաշկա ավերված է: Մենք փախանք առանց կոպեկի, ոնց ոյ կայինք:

Աննետան վճռական ասաց.

— Գնա՞նք:

— Ո՞ւր:

— Իմ տունը:

Նրանք պառկածին բարձրացրին. քույրը՝ ուսերնց, Աննետան՝ ոտքերից: Երկուսն էլ ուժեղ էին, իսկ հյուծված մարմինը մեծ ծանրաւթյուն չուներ: Հրապարակում պատգարակ գտնվից. մի ծեր բանվոր և մի փոքրիկ տղա իրենք եղան օգնելու: Քույրը համառորեն կպել էր եղբոր ձեռքից, ընկնում էր պատգարակակիրների ոտքերի տակ, դիպչում անցորդներին: Աննետան թևանցուկ արեց նրան և ամուր իրեն սեղմեց նրա արմունկը: Երբ պատգարակը ցնցվում էր, կնոջ մատները ջղաձգորեն սեղմվում էին, իսկ երբ պատգարակակիրները մի պահ գետնին դրին իրենց բեռը, նա իսկույն չոքեց հենց այդտեղ, մայթի վրա: Կինը շոշափում էր եղբոր դեմքը, և նրա շուրթերից մերթ ֆրանսերեն, մերթ ֆլամանդերեն թափվում էր դառնացած ու քնքուշ խոսքերի հեղեղը:

Նրանք տուն հասան: Աննետան իր նոր կենվորներին տեղափորեց խոհանոցում: Բերնարդենները նրան ժամանակավոր օգտագործման տվին իրենց որդիներից մեկի մահ-

հակալը, Երկրորդ անկողինք գցեցին Հատակին, փռելով  
Աննետայի Ներքնակը: Հիվանդը ուշքի շէր գալիս Նրա  
շորերը հանեցին, մարդ ուղարկեցին բժիշկ կանչելու Դեռ  
մինչեւ թժէի գալը Հիվանդի քույրը, որ հանգստանալու մա-  
սին լսել անգամ շէր ուզում: Թուղացած ընկավ անկողնուն,  
և քունը կլանեց Նրան ամբողջ տասնհինգ ժամ:

Հիվանդի անկողնու մոտ Աննետան մնաց:

Նա հայացքը մի դեմքից մյուսն էր գցում: Մերթ նա-  
յում էր եղբօր մոմագույն, հյուծված երեսին, որից, կարծես  
կյանքը կամաց-կամաց հեռանում էր, մերթ՝ քրոջ կոպիտ,  
այտուցված դեմքին, որ բնել էր լայն բացած բերանով, որ-  
տեղից շնչառության հետ ասես ուժեղ քամու հոսանքով,  
դուրս էին մղվում ինչ-որ անհասկանալի բառեր: Աննետան  
գիշերային լոռության մեջ հսկելով այդ երկու էակների քու-  
նը — մահվան քունը և խելահեղության քունը: Ինքն էլ էր  
սկսում ննջել, եվ ցնցվելով, հարցնում էր իրեն, թե հա-  
նում ինչի՞ իր տուն բերեց այդ ցնորական տեսիլքը:

Մինչեւ պատերազմը բնակարանների միջեւ ոչ մի շփում  
չկար: Ամենամոտ հարեաններին լավագույն դեպքում զի-  
տեին ազգանուններով: Պատերազմի հենց առաջին շաբաթ-  
ներին այդ տարածությունը կրճատվեց: Մի կողմ շպրտելով  
մաքսատնային արգելքները, փոքրիկ պրովինցիաները միա-  
ցան ու դարձան մի ազգ: Նրանց հույսերը, նրանց սար-  
սափները խառնվեցին իրար: Սանդուղքի վրա հանդիպելիս  
բնակիչներն արդեն միմյանցից չէին շրջվում: Նրանք սովո-  
րող էին ուղիղ նայել մեկը մյուսի երեսին և բարեկ իրար:  
Մի երկու խոսք էին փոխանակում: Հրաժարվել էին իրենց  
երկշոտ անհատականությունից, իրենց ինքնասեր ինքնամ-  
փոփությունից, և չէին խուսափում կարեկցական հարցե-  
րին պատասխան տալուց: Նորություններ էին փոխանակում  
ճակատ մեկնած ազգականների և մեծ ազգականուհու՝  
հայրենիքի մասին, որի գլխին վտանգ էր կախվել: Սան-  
դուղքի մոտ, փոստին սպասելիս, մարդկանց մի խումբ էր  
հավաքվում: Միմյանց հետ կիսելով իրենց տագնապները,  
նրանք տաքանում էին փոխադարձ վստահության ջերմու-

թյամբ։ Սովորել էին ներողամիտ լինել — առիթի դեպքում մռանալով իրենց նախապաշարմունքը նույն թեթևությամբ, ինչ թեթևությամբ այդ նախապաշարմունքներն ստեղծվել էին, և լույսայն ժամանակավորապես մի կողմ էին շարժում դրանցից այնպիսիները, որոնք պատի նման բարձրանում էին և նրանց բաժանում հարեաններից։ Հիմա Ժիրյորը զրուցի էր բռնվում թեռնարդենի հետ։ Իսկ Թեռնարդենը բարեպաշտ տիկինները, բարեհամբույր ու երկշոտ, սիրալիր ժպտում էին Աննետային, երբ վերջինս խոսակցության էր բռնվում նրանց հետ։ Նրանք որոշել էին մռանալ — մինչև իրադարձությունների նոր շրջադարձը — իրենց կասկածները խորհրդավոր հարեանուհու, նրա, գուցեն ոչ օրինական... մայրության վերաբերյալ։ Բնակիչները չեն մտերմացել միմյանց հետ, ավելի տանելի չեն դարձել. այն, ինչ համարում էին անթույլատրելի երեկ, այսօր թույլատրելի չեր դարձել։ Բայց նրանք աշխատում էին շրտեսնել այն, ինչ ընդունելի չեր իրենց համար։

Միայն փոքրիկ տիկին Շարդոնեն էր, որ ամբողջովին խորասուզվել էր իր վշտի մեջ։ Նա համառորեն չէր նկատում փաղաքշական հայացքը կիդիա Մյուրիզիեի, որն գգում էր, թե նա ինչպես է տառապում, և անխոս առաջարկում էր նրան տառապել և հուսալ միասին։

Բոլոր բնակիչները վերից վար միևնույն նավի ուղևորներ էին։ Վրա էր հասնում տայֆունը։ Վտանգը բոլորին հավասարեցրել էր... ինչո՞ւ վտանգի մեջ չէ ամբողջ աշխարհը։ (Դեռ այդ էլ կլինի...) Այն ժամանակ բոլոր ժողովուրդները, հակառակ իրենց էությանը, կծուզվեին ու կդառնային միասնական մի մարդկություն։ Բայց միայն երկու պայմանի դեպքում։ առաջինը, — որպեսզի ոչ ոք հույս չդնի վշտանգից հեռանալ մենակ։ Երկրորդը, — որպեսզի փրկության հույսը մնա բոլորի մեջ։ Եթե այդ հույսը վերջնականապես վերանա, մարդը կդադարի մարդ լինելուց։ Այդ երկու պայմանը երբեք չեն զուգակցվում երկար ժամանակով։ Բայց այն ժամանակ այդ երկու պայմանը առկա էին։

Գերմանական հորդաների հզոր ալիքը զարնվեց համարյա Փարիզի պատերին։ Կառավարությունը ծլկեց։ Ամբողջ

արւնը զայրութով ու արհամարհանքով էր խոսում կառավարության Բորդո կատարած փախուստի մասին։ Սիլվիան կատաղովթյունից իրեն կորցրել էր։ Նրա միտքն եկան նախնիքների ժամանակները, երբ լյուդովիկոս թագավորը ծըլկեց։ Շատո-Մարգոյի հերոսների բանը բուրդ կլիներ, եթե նրանք հանկարծ իր մկրատի տակ ընկնեին։ Բայց նրանց հետ հաշիվները հետո կմաքրեն։ Հիմա ավելի կարևոր գործեր կան։ Մորաքույրն ու զարմիկը՝ Մարկն ու Սիլվիան, հողէին փորում, սալլակներով տեղափոխում էին, թումբ էին տալիս Գալիենիի՝ կարգադրությամբ, որը ջանում էր տեղագին գրգոված փարիզեցիներին որևէ բանով զբաղեցնելու հումապ շկար։ Աչք էին պահում, լավի հույսն էին փայփայում, պատրաստվում էին վատին։

Մարկը քնքությամբ գրպանում շոշափում էր իր նշանավոր ուսուլվերը։ Նա գրեթե ուզում էր, որ գերմանացիները ներխուժեն Փարիզ— միայն նրա համար, որ փորձի իր զենքը։ Աննետան, որի ձեռքերը հուզմունքից այրվում էին, արտաքուստ հանգիստ էր և իրեն շատ լավ էր զգում. վերջապես նրան ու որդուն էլ է վտանգ սպառնում։ Դա արդեն թեթևություն է... Ուրիշներն էլ նույն ապրումներն ունեին։ Տագնապից տանջվող ծնողները սփոփիվում էին այն մտքից, որ իրենք գոնե ինչ-որ շափով բաժանում են իրենց որդիների վրա կախված վտանգը։

Լիդիա Մյուրիզիեն լինում է Աննետայի տանը, նրա մոտ ընթերցում է իր փեսացուի նամակները։ Այդ երկու կինը ձգտեցին իրար՝ ծանոթանալուց շատ ավելի առաջ։ Աննետան լսում էր մարգագետնով վազող առվակի խորհրդավոր երգը։ Իսկ Լիդիան ավագ քրոջ քնքուշ ժպիտներում կարդաց, որ նա ունի այդ երաժշտության բանալին, — միայն նա՝ ամբողջ տանը։ Եվ Լիդիայի համար հաճելի է, որ իրեն հասկանում են։ Բայց նրանք միմյանց ոչ մի խոսք չեն ասում սրտի այդ երգի մասին։ Թնդանոթների որոտի տակ արգելված է ականջ դնել խաղաղ օրերի երաժշտությանը, անցած երջանկությունը ողբացող ֆլեյտայի մեղեղուն։ Լի-

1 Գալիենի (1849—1916) — ֆրանսիական գեներալ։

դիան կարգում է Քաղաքակրթության զինվորների բարձր  
 • պարտքը փառաբանող իր սիրեցյալի նամակները. Երիտա-  
 սարդ յառիկը նրա վրա թափում է իր գաղափարների պաղ-  
 լույսը: Սիրահարված կիդիան հուզումնալից բերկրությամբ  
 լողում է այդ լույսի մեջ նրա հոգու չերմությունից այդ  
 գաղափարների ձյունը հալվում է: Կիդիան դեռ երեխա է,  
 մռայլ զոհին նա պատրանքներով գեղեցկացնում է: Նրա  
 համար հերոսությունը կիսով շափ խաղ է: Նա գիտե, որ այդ  
 հերոսությունը հղի է վտանգներով, բայց հավատում է:  
 ուզում է հավատալ աստծո հովանավորությանը— իր աստ-  
 ծո, իր սերը պահպանող աստծո: (ԶԷՇ որ նրա աստվածը  
 և նրա սերը մի գեմք ունեն): Կիդիան թվում է կենսախինդ,  
 երջանիկ, նա ծիծաղում է հաճելի կոկորդային ծիծաղով,  
 ինչպես երեխաներն են ծիծաղում: Եվ անսպասելիորեն  
 սկսում է հեկեկալ. այդպիսի պահերին նրանից ոչ մի բառ  
 չես լսի: Աննետան խղճում է նրան, նա տեսնում է, որ  
 կիդիան իրեն արբեցնում է մտքերով, որոնք բերանից դուրս  
 են թռչում տաք, մի շնչով, մինչև շմոլորվի ու կանգ շառ-  
 նի... (Զլինի՞ նա ինչ-որ բան շփոթել է: Հաճելի և ամաշ-  
 կոտ ժպալալով, նա հայացքով ներում է խնդրում): Աննետան  
 հաճությամբ նրան կգրկեր ու կասեր:

«Այդ բոլորը, մանկիկ իմ: ուրիշի ասածներ են: Սեղմիր  
 Էտկատդ իմ շուրթերին: Երբ գու լուս ես, ես լսում եմ քո  
 սքափի տրոփյունը...»:

Բայց պետք չէ նրան այդ մասին ասել: Նա ճիշտ է  
 վարվում: Թող սերտած խոսքեր արտասանի, միայն թե  
 զրանց մեջ մոռացո՞ւմ գտնի: Մտքերը սիրտ են օրորում:  
 Ամբողջ տունը արբենում է դրանցով, Եվ այդ արբեցումը  
 արդեն բոլորովին սահման չի ճանաշում այն օրերին, այն  
 հինգ օրերին, երբ ծավալվում է ժողովուրդների ճակատա-  
 մարտը: Գերզգայուն են դառնում պաշտպանության բնա-  
 ծին բնաղները, փոխօգնության, փառքի, զոհի բնազդ-  
 ները... Գալիս է օրը, երբ նոտր-Դամի հրապարակում  
 ամբոխը հովանավորություն է աղերսում Կույսից: Բաղիլի-

կայի պատշգամբից կարդինալը մի բառ է նետում.  
— Հաղթանակ:

Եվ ամեն ինչ քարանում է: Թոփլքն ընդհատվեց: Հոգին նորից իջնում է երկիր:

Հոկտեմբերից պատերազմը դոփում է տեղում: Ամենասուկալի վտանգը անցել է: Փուշը մտել է մարմին երկար ժամանակով, և մարմնի մեջ թույն է թափանցում: Պետք է կյանքն այնպես դասավորել, որ մարդ տարիներ դիմանաւ: Բայց ո՞վ հաստատակամություն կունենա այդ տարիների երեսին նայել: Եվ մենք մեզ խարում ենք: Մեզ խարում են: Խանդավառությունը պահպանելու համար դիմում են արհեստական միջոցների. լրագրային «աղմկարարության»—նրա ստերին ու սարսափելի հեքիաթներին: (Դա արգեն մամուլի անկապտելի արտոնությունն է. նա հավաքում է այն, ինչ կա, և բացի դրանից էլ, մարդակերի պատրաստակամությամբ ինքն է մոգոնում): Եվ հասարակայնությունը սթափում է իր թմրությունից, ցնցվելով ինչպես հարրեցողը, կատաղի ատելության պոռթկումներից:

Տունը տապակվում է իր յուղով— վշտի, զայրույթի, անհամբերության. ձանձրութիւն մեջ: Զմեռը սողում է դանդաղ: Նրա աղջամուղջային լույսում, տենդագին հուզումներով բռնիված, մարդիկ այս ու այն կողմ են նետվում:

Հյուսիսից եկած փախստականները, Ապոլլինա և Ալեքսիս Կիերսիները, այդպէս էլ մնացին Աննետայի մոտ: Աննետան նրանց տեղ էր տվել մի քանի շաբաթով, մինչև Ապոլլինայի նղբոր ապաքինումը, մինչև բնակարան և աշխատանք գտնելը: Իսկ նրանք նույնիսկ միտք էլ չունեին բրոնումներով զբաղվելու նրանք միանգամայն բնական էին համարում, որ Աննետան տեղ է տվել իրենց: Ի՞նչ նըրբանկատության հարց կա: Նրանց գործը չէ, թե Աննետան ինչքան է ծախսում իրենց վրա: Նրանք իրենց զոհեր են համարում, որոնց առաջ պարտական է ամրող ֆրանսիան Ապոլլինան նույնիսկ տրտնջում է անհարմարություններից: Որ իբրև թե ճաշասենյակը նեղ է: Նա Աննետայի սենյակի

վերաբերյալ պահանջ չի ներկայացնում, բայց եթե նրան առաջարկեին զբաղեցնել այն, առանց այլեւալության կասեց. «Ճնորհակալություն», Մարկը կատաղել էր: Նա անտանելի զգվանք էր զգում այդ կող նկատմամբ:

Տարօրինակ հյուրեր էին գրանք Ալեքսիս ամբողջ օրերը անկողնու մեջ ընկած էր: Ապոլլինան ոտքը շեմից գուրս չէր դնում: Հեշտ բան չէր նրանց ստիպել, որ սենյակը օդափոխեին: Նրանք անշարժ նստած էին շորս պատերի մեջ: Ալեքսիսը բնածին ծույլ էր, իսկ հիմա նա իրեն դեռ ջարդված էր զգում օգոստոսյան փախուստից հետո: Նա նեղ, ուռուցիկ ճակատի վրա իջնող շեկ գանգուր մազեր ուներ, մանր, խամրած երկնագույն աշքեր, հաստ, մշտապես կիսաբաց շրթունքներ. Ալեքսիսը բերանով էր շնչում: Նա նման էր բրոջը, բայց տղամարդու դերը Ապոլլինան էր կատարում: Ալեքսիսը թիշ էր խոսում և միշտ սուզված էր ինչ-որ խառը երազանքների մեջ կամ, տերողորմյա քաշելով, աղոթքներ էր մրմնջում: Աղոթքը օրորոցի նման բան է, որի մեջ ննջում է քուն դրած հոգին: Եղբայրն ու քույրը յուրովի բարեպաշտ էին: Աստված նրանց սեփականությունն էր. նրանք տեղավորվել էին աստծո մեջ, ինչպես Աննետայի տանը. Թող ուրիշները բնակարանից բնակարան քոշենք թռւյլ, բայց համառ Ալեքսիսը, թվում էր, կտել է տեղից: Շարժվելու հոգսը նա թողել էր Ապոլլինային:

Այդ աղջկա մեջ գազանային եռանդ էր թաքնված, բայց նա այդ խեղում էր իր ներսում: Նա ժամեր շարունակ կծկված նստում էր կար անելու, որի ժամանակ ճարպկորեն շարժվում էին նրա անհամբեր մատները: Ապոլլինան հանկարծ աշխատանքը մի կողմ էր նետում, ցատկում էր տեղից և, դոփդփելով, սկսում էր այս ու այն կողմ գնալ. քայլում էր ու քայլում, շրջանակ կատարելով մահճակալի և լուսամուտի միջև գտնվող նեղ տարածությունում: Հետո կանգ էր առնում, որպեսզի բռունցք ցույց տա անտեսանելի թշնամուն: Սպառնում էր ճանկոել ու հանել նրա աշքերը—և խոսում էր, խոսում մերթ տնքալով, մերթ մոնշալով, մերթ սպառնալով, անվերջ ծամլմորելով միենույն բանը: Հետո անսպասելի կերպով ընկնում էր եղբոր անկողնու

վրա և սկսում էր նրան ինեղդեք իք պրատեմ նրա վրա բառ  
փում էր կրքոտ խոսքերի հեղեղ: Տրի ժեզ խլանում էին  
Ալեքսիսի լալկան ու միալար բացականշությունները: Եվ  
վերջապես, — վերջապես վրա էր հասնում լուսթյունը:  
Թվում էր, թե սենյակում մահ է եղել...

Բավական անհանգիստ հարեանություն էր: Բայց Աննետան չէր համարձակվում դժկամություն ցույց տալ: Նա  
խղճում էր իր կենվորներին. պետք է համբերատար լինել  
միմյանց նկատմամբ: Տառապում էին, ճիշտ է, բոլորը,  
բայց նրանց բաժին էր ընկել ավելի շատ տառապանքներ: Նրանց  
աշքի առաջ այրվել է նրանց տունը պառավ մոր հետ  
միասին, նրանց աշքի առաջ սպանել էին ծեր ծառային,  
զարմանալի չէ, որ նրանց միտքը գեռ ցնցված է: Աննետան,  
բանի որ ինքը հեռու էր մնացել նման աղետներից,  
իրեն պարտական էր համարում տանել իր կենվորների ծանր  
ներկայությունը: Ապոլլինան միայն նրա հետ պատրաստ  
էր շփվելու Սանենք, սերտ մտերմություն նրանց միջև լը-  
ստեղծվեց: Անգուսպ Ապոլլինան հանկարծ մռայլ շարու-  
թյունից անցնում էր համակրանքի նշույներին, իսկ հետո  
կրկին երես էր գարձնում Աննետայից: Շփման հազվագեղ  
բոպեներին թվում էր, թե նա տանտիրուհու բնավորության  
մեջ որոշ մոտիկ քծեր է նկատում: Եվ հենց ոչ այնպիսի,  
որոնք Աննետայի համար հաճելի էր տեսնել իր մեջ, — գա  
նրան զայրացնում էր: Երբ նրանց միջև նորից պատնեշ էր  
բարձրանում, Աննետան թեթևություն էր զգում: Բայց մաեր-  
մանալու փորձերը հազվագեղ էին լինում: Ավելի հաճախ  
եսասեր Ապոլլինան սուզվում էր իր հոգու պղտոր ու խոռ-  
վահույզ հաճիճը: Այդ հաճիճ տենդ առաջացնող գոլորշի-  
ներ էին բարձրանում: Մարկը, ինչպես հետեւ ոտքերին  
կանգնող երիտասարդ շուն, դրանք ներս էր քաշում ցան-  
կության և զգվանքի զգացումով: Անքուն գիշերներին Աննե-  
տային տանջում էր հեղձուցիչ կրքի այդ մթնոլորտը:

Կարելի էր կարծել, թե հաճային տենդի գարշաճուռու-  
թյունները, ամբողջ սանդուղքով մեկ տարածվելով, դրո-  
ների տակից ներս են թափանցում: Հենց այդ նույն հար-

թակի վրա, մննետայի չեմ-դիմաբը, աենդային սարսուփից  
թպրտում էր Կլարիսսան։ Փակվելով իր շորս պատերի մեջ,  
նա ոչ ոքի երես տեսնել չէր ուզում և գաղաղած էր ամբողջ  
աշխարհի դեմ։ Նրա հոգում ցուրտ էր, գիշեր էր։ Կլարիս-  
սային թվում էր, թէ ամբողջ արյունը իր մեջ կանգ է առել,  
որ աստիճանաբար նա քարանում է, ինչպէս ցրտահարկած  
ծառի կեղեց։ Միայն մեկնածի նամակներն էին, որ երբեմն-  
երբեմն նրան ողողում էին զերմության ալիքով։ Նա դրանք  
կարդում էր շոր աշքերով, սառցակալած սրտով։ բաժան-  
վելով Կլարիսսայից, տղան գողացավ նրա գիշերների արեց։  
Ճմրթելով կարդացած նամակը, Կլարիսսան սեղմում էր  
այն, ինչպես զնդակը բոռնցքի մեջ եվ, այնուամենայնիվ,  
Կլարիսսան պատասխանում էր կարծ ու դատարկ նամա-  
կով, որը չէր արտացոլում այն տառապանքները, ինչ ինքը  
կրել էր, ինչ ինքն ուզում էր, որ նա էլ կրի։ Կլարիսսան  
ուինչ չէր թաքցնում, նա այն մարդկանցից էր, որոնց հա-  
մար զրել՝ նշանակում է խոսել այն ամենի մասին, ինչ  
տեղի է ունենում շորս բոլորը, բայց ո՞չ նրանց ներսում։  
զործերի, բայց ոչ մտքերի մասին։ Իր թանկագին մարդու  
մասին Կլարիսսան չէր զրուցում նույնիսկ ինքն իր հետ։  
Որպեսզի մարդ ինքն իր սրտի հետ խոսի, պետք է զգա այդ  
սրտի բարախյունը։ Իսկ Կլարիսսայի սիրտը սառել է։ Նա  
շարությամբ, ինչպես պատով, անջրպետվել էր աշխարհից։  
Բայց գարունը հալեցրեց սառուցցը։ Մի անգամ Կլարիսսայի  
ծիծաղը Մարկի ականջին հասավ։ Կլարիսսան այս ու այն  
կողմ էր քայլում սենյակի մեջ և նայում էր հայելուն։  
Նրանք սկսել էին հանդիպել սանդուղքի վրա։ Տանից նա  
դուրս էր գալիս ուշ։ Կլարիսսան միշտ հազնվում էր ճա-  
շակով։ Փարիզի այդ գուստը բնազդով հասկանում էր, թէ  
ինչն է իրեն սագում, նրա նուրբ մարմնի գծերը, նրա բո-  
լոր շարժումները աշքի էին ընկնում կատվային ճկունությամբ։  
և Կլարիսսայի աշքերում առկայծում էր այն սառը մարմը-  
րող կրակը, ինչպիսին կատուների մոտ է լինում։ Կլարիսսան  
շարժում էր անաղմուկ, աշխատում էր կանգ շառնել,  
բարեում էր գլխի խոնարհումով, իսկ երբ դիմում էին իրեն,  
սահմանափակվում էր մի երկու-երեք հարգալից խոսքով և

Քիուանում: Կա ցանկություն չուներ ոչ իր մասին խոսելու և  
այ էլ ուրիշներին չսելու  
«Ես իմ ճանապարհով եմ գնում, դուք էլ գնացեք ձե-  
րով»:

Նա իրեն ստարի նման էր պահում: Իսկ մարդիկ ձեզ  
ամեն ինչ կներեն: բայց ինչն ների, եթե դուք հրաժարվեք  
նրանց հետ ուտել միանույն ափսեից: Երիտասարդ տիկնոց  
շուրջը անբարյացակամության ցանց էր հյուսվում: Նա  
դրա նկատմամբ անտարբեր էր: Ասենք բոլորը զբաղված  
էին և չէին հետեւում նրան: Միայն մի մարդ կար: որ գի-  
շերները սպասում էր նրա վերադարձին, և այդ մարդու  
երեսակայությունը եռում էր,— դա Մարկն էր: Նույն այն  
Մարկը... Խոսք չկա, հաճելի շրջապատ ունի: Նրա անկող-  
նու աջ և ձախ կողմերում խելահեղ կույսեր են: Նրանց  
այրվող մարմինները... Փարիզի վրա պտտվում է հեշտա-  
ռիրության հողմը: Իսկ հեշտասիրությունը ատելության  
քույրն է:

Ատելությունը նույնպես կարող է լինել առաքինի: Բեր-  
նարդենների ընտանիքում դա միահյուսվեց այն Մարդուն  
առնչվող մտքին, ով կրեց բոլոր տառապանքները: Երբ  
սրբազնագույն տիրակալը բոլոր՝ քրիստոնեական երկրներն  
առաքեց «Խաղաղության աղոթքը», պետությունը և հոգևո-  
րականությունը դա տնօրինեցին ըստ իրենց հայեցողու-  
թյան: Այդ երկու սանահերները լեզու գտան միմյանց հետ.  
ամենաբարձրյալի ձայնը նրանք որոշեցին անցկացնել  
Գիլտրի միջով: Հավատացյալները վրդովվեցին: Նրանց  
մեջ սկսեց եռ գալ գալիկանական արյունը<sup>1</sup>: Բեռնարդեն-  
հայրը, որ բարեպաշտ, բայց շուտ բռնկվող մարդ էր,  
շանթ ու կայծակ էր արձակում օտարերկրացի պապի դեմ:  
Բարեբախտաբար ֆրանսիայում սուրբ մարդիկ կան, որոնք  
գիտեն աստվածային խոսքը մատուցել ցանկացած ձեռք:

1 Գալիկանություն— ֆրանսիական կաթոլիկների շարժումը՝ հանուն  
ֆրանսիական եկեղեցու պապական իշխանությունից անջատման և ավտո-  
նոմիայի:

«Զերդ սրբություն, դուք մեզ կոչ եք անում աղոթել հանուն խաղաղության... Շատ լավ, Հիմա մենք այդ բոլորը կրացատրենք... Եղիցի քո կամքը, եթե միայն այդ կամքը համընկնում է մերի հետ... Խաղաղություն, խաղաղություն, եղբայրք իմ...»:

«Խաղաղությունը դա հաղթանակ է», — հնագանդորեն անդրադարձնում են կարդինալ-արքեպիսկոպոսին նոտր-Դամի կամարները:

Իսկ սուրբ Մագլենի եկեղեցու ոսկեզօծ ժամացուցը արձագանքում է.

«Եղիցի խաղաղություն, օ տեր, իսկական խաղաղություն, քո խաղաղությունը, այսինքն՝ մեր, բայց ոչ խաղաղությունը թշնամու, որին մենք ուզում ենք զախջախել...»:

Ամբողջ էությունը լոկ ձեակերպման մեջ է...

Եվ քրիստոնեական խիճճը արդեն մաքուր է: Բերնարդենները, խոսելիս պապի և նրա հովիվների մասին, լիակատար բավականություն են արտահայտում: Մեր դատավորի խրատական տոնը զվարճալիորեն նենգ ուրախության երանգ է ստանում, ուրախություն, որը նրան պատճառում է օրենքի տեքստի շրջումը: Երբ նա խոնարհվում է զոհասեղանի առաջ, նրա հայացքը և բարեպաշտություն է արտահայտում, և համառություն. նա իր կոշտ մորուքի տակ թաքում ժպտում է.

«Մաքուր աշխատանք է... Fiat voluntas tua...! Սըրբազնագույն տիրակալ, ձեզ հետ կատակ են արել...»:

Եվ հայր Սերտիլյանժը մոլեգին հիացմունքի արցունքներ է դուրս կորզում այն կանանցից, որոնց աշքին Քրիստոսն է երևում զինվորական շինել հաղած ու նրանց որդիների միջև կանգնած Գեթսեմանի խրամատում: Տեղի ունեցավ սարսափելի վերամարմնավորում, որտեղ արցունքից բորբոքված աշքերի և հուսարեկ հոգիների համար կոտորածի դաշտը հանդիսացավ զոհասեղան, որտեղ ցեխից ու ոսկուց, տառապանքից ու փառքից պատրաստված սկիհի մեջ զոհաբերվում է աստվածային արյունը:

1 Քո եղիցի կամքը— (լատ.)

Եվ առաջինը դա խմեցին — մինչև հուսահատությամբ տրբնալը — կիդիա Մյուրիզիեի երիտասարդ, համբույրի համար ստեղծված շուրթերը:

Նրա սիրեցյալն ընկապի Սեպտեմբերի հենց առաջին օրերին: Դա հայտնի դարձավ ոչ անմիջապես: Այդ խառնաշխիքության ժամանակ, իրար զարնվող այդ հորդաների միջև, որոնք հարձակվում էին, նահանջում և կրկին, գլուխուները կախելով ու Տեռածների մարմինները տրորելով, չարժվում կենդանի միս ու արյան պատճեշի վրա, ժամանակ չկար կորուստները հաշվելու կիդիան դեռ հույսերով լցված ընթերցում էր կենդանի մարդու նամակները, իսկ այդ ժարդն արդեն երկու շաբաթ էր, ինչ անհետ զերացել էր երկրի երեսից: Հայրենիքը փրկված էր: Անհնարին էր պատկերացնել, որ փրկիչները շփրկվեցին... Հոկտեմբերին տան վրա իջավ մահվան դատավճիռը: Դա առավել դաժան էր այն իջաստով, որ կասկած չէր թողնում: Մեռածի ընկերը նշեց օրը, ժամը, տեղը: Ի՞նչտավճիռը վրա հասավ: Իսկ տունը շարունակում էր մնալ, ինչպես առաջ Ժիրյորը փակվել էր իր բնակարանում: Եթե դռնապանը զիներ, որին ամեն ինչ հայտնի էր, ոչ ոք չէր իմանա կատարվածի մասին: Կիդիան ստվերի նման սահեց սանդուղքով: Նա եկավ իր սկեսրայրի մոտ. Կիդիան հիմա նրա մոտ էր ապրում: Բայց բնակարանը, թվում էր, թե մեռած է: Այդտեղից ոչ մի ձայն չէր գալիս: Աննետան սանդուղքով իջնելիս այդ բնակարանի մոտով էր անցնում: Լուրթյունը խեղդում էր նրան, բայց նա սիրտ չէր անում խզել այդ լուրթյունը...

Վերջապէս, Աննետան բախեց: Որոշ ժամանակ անց կիդիան դուռը բացեց: Կիսամութ միջանցքում հնարավոր չէր նրա դեմքը տեսնել: Կանայք անձայն գրկախառնվեցին: Կիդիան լուս լալիս էր: Աննետան իր այտին դգում էր բորբոքված կոպերի տակից հուսող արցունքի խոնավությունը: Կիդիան բռնեց նրա ձեռքը և ներս տարավ: Երեկոյան ժամը վեցն էր: Լույսն այստեղ ընկնում էր միայն հարեան սենյակից: Ժիրյորն, ըստ երեսութին, այնտեղ էր, բայց նրա ձայնը չէր գալիս: Աննետան ու կիդիան նստեցին.

նրանք իրար ձեռք բռնած կիսաձայն խոսում էին, կիդիմչաց.

— Այսօր երեկոյան ես մեկնում եմ:

— Ո՞ւր:

— Փնտրելու:

Աննետան շհամարձակվեց հարցուփորձ անել:

— Իսկ որտե՞ղ:

— Այնտեղ, որտեղ իմ սիրելին քնած է:

— Իսկ դա որտե՞ղ է:

— Զէ որ ճակատամարտի տեղը այսօր ետ են վերցրել:

— Բայց դուք ինչպե՞ս կարող եք այդքան հազարների մէջ...

— Նա ինձ ցույց կտա ճանապարհը, ես գիտեմ, որ կդունեմ նրան:

Աննետան ուզում էր ճշալ.

«Մի՛ գնացեք, Պետք չէ... Նա ապրում է ձեր մեջ, ինչո՞ւ նրան փնտրել սպանգանոցի գարշահոտություններում»:

Բայց Աննետան հասկանում էր, որ կիդիան այլևս ազատ չէ: Աննետան շոյում էր նրա ձեռքերը, բայց այդ ձեռքերը բռնել էր հանգույցալը:

— Խե՞ղճ իմ մանկիկ, ես ձեզ ճանապարհ դնե՞մ, — Հարցրեց Աննետան:

Կիդիան պատասխանեց.

— Ենորհակալ եմ:

Եվ ցույց տալով լուսավորված դուռը, ավելացրեց.

— Հայրիկը ինձ հետ է գալիս:

Նրանք հրաժեշտ տվին իրար:

Երեկոյան Աննետան սանդուղքի վրա լսեց մեկնողների թեթև, հոգնած քայլերը:

Տասը օրից հետո նրանք տուն վերադարձան նույնքան անազմուկ, ինչպես և մեկնել էին, Աննետան այդ շգիտերը կանգի ձայնը, նա գուռը բացեց և շեմին տեսավ սկազգեստ կիդիային, նրա վշտալի ժպիտը, Աննետային թվաց, թե դա առանց Օրփեոսի վերադառղ էվրիդիկան է: Նա գրկեց կիդիային և զրեթե ձեռքերի վրա տարավ իր սենյակը: Հետո փակեց դուռը: Փոքրիկ հարսնացուն արագ-

արագ նրան պատմեց մեռածների աշխարհը կատարած իր ճանապարհորդության ժամին: Նա լաց չէր լինում: Նրա աշքերում խանդավառ բերպրանք կար, բայց դա էլ ավելի էր տանջում մարդու հոգին: Նա կամացուկ ասաց.

— Ես գտա նրան... Նա ինձ առաջնորդում էր... Մենք թափառում էինք տակնուվրա եղած դաշտերով, գերեզմանեկրի միջև Հոգնել էինք, հուսահատվել... Երբ մենք մտանք մի փոքրիկ պուրակ, ինձ թվաց, թե ես լսեցի նրա ձայնը. «Գնա՞...» Կարճլիկ կաղնիների պուրակ... Ամենուրեք արյունոտ շորեր, նամակներ, ծլանքներ էին թափված... Մյուտեղ շրջապատված էր եղիլ ամբողջ մի գունդ... Ես ներս մտաւ Նա առաջնորդում էր ինձ: Հայրն ասաց ինձ. «Ինչի՞ համար: Բավական է, Ետ գնանք»: Մյուս ծառերից փոքրինչ կողմ ընկած կաղնու արմատի մոտ ես կոացա և մամուռի միջից մի թղթի կտոր վերցրի... Նայեցի... իմ նամա՞կն է: Վերջինը, որ նա բացել էր... Եվ նամակի վրա նրա արյունը... Ես համբուրեցի խոտը, պառկեցի այնտեղ, որտեղ նա ընկել էր փռված: Դա մեր անկողինն էր: Ես ինձ երջանիկ հզացի: — ինչքա՞ն լավ կլիներ այդպես քնել հավիտենապես: Ամեն ինչ, նույնիսկ օղը, այնտեղ հագեցած է հերոսությամբ...

Լիդիայի ժպիտի մեջ զմայլանք ու հուսահատություն կար: Աննետան չէր համարձակվում նայել նրան...

Իսկ Ժիրյորը կարծես բարացած լիներ: Այդ աննկուն մարդը աշխատանքի վերադարձավ: Նա ոչ ոքի հետ չէր խոսում: Բայց իր դասախոսություններում, ճառերում, կրակոտ հոգվածներում Ժիրյորը անողոք իւաշակրած արշավանքի կոչ էր անում, նա կատաղած հարձակվում էր, սպանում էր թշնամու հոգին, մտրակահարում նրան, անցատում մարդկությունից: Տանը բոլորը գլուխ էին տայիս նրան, բայց աշխատում էին աշքին շերեալ. Երբ նա անցնում էր սանդուղքով, նրա հայացքը, թվում էր, կշտամբում է նրանց: ովքեր կենդանի էին մնացել, եվ կենդանի մնացածները նրա առաջ ինչոր բանով մեղավոր էին դգում իրենց: Թողության նոխազ գտնելու համար նրանք բնակդորին ինչոր անորոշ մեղադրանքներ էին կուտա-

կում, — լուր պայմանավորվածությամբ նրանք պատրաստ՝ վում էին հարգած հասցնել վերևն ապրող մի մարդու նրան, ով ճակատ չի մեկնելու

Կլապիկ (Ժողեֆենին), սիրտը հիվանդ այդ մարդուն... Ջրակոշից գլուխն ազատելու համար դա շատ հարմար հիվանդություն է; Իսկական ֆրանսիացու սիրտը միշտ պետք է բավական ամուր լինի՝ մարտում մեռնելու համար... Բայց նա այն մարդկանցից է, ով մեր գլխին պատերազմ ու թշնամական ներխուժում է կոչել, — պացիֆիստ է...

Դա բարեկիրթ, ամաշկոտ պատանի էր, լավ գրող, որը մի բան էր ուզում, խաղաղ ապրել իր հին գրքերի և գրիշի հետ առանձնացած: Հենց որ Կլապիկն սանդուղքից ցած էր նայում, նրան իսկույն թվում էր, թե ներս է քաշում կասկածանքի ցածից բարձրացող գարշահոտությունները: Նրա ճանապարհին ընկած բոլոր դոները կիսաբացվում էին. նրան հետևում էին: Իսկ երբ գլուխը խոնարհելով ողջունում էր, մարդիկ ձեացնում էին, թե նրան չեն նկատում: Թրոշոնը, իր կրպակը խցկված, գլուխը շրջում էր նրանից: Բայց փողոցում Կլապիկն զգում էր, որ Թրոշոնը մի երեսուն քայլի վրա իր հետևն ընկած գնում է: Հարեանուհիների՝ բանվորների կանանց հետ, իր հարկի սանդղահարթակին հանդիպելիս Կլապիկն նրանց աշքերում վիրավորական մտքեր էր կարդում, ծաղրանք...

Այդ բոլորի կեսից ավելին Կլապիկն ինքն էր հորինում: Զէ որ հնարելը հենց իր արհեստն էր: Նա օժտված էր մի երեակայությամբ, որը դժում էր, ինչպես Առերի այրիշի ապակին: Եվ Կլապիկն հուսահատության մեջ էր ընկնում: Նա ապրում էր միայնակ, բայց չէ որ միայն էսթետիզմը բավական չէ, որպեսզի մարդ երկար կարողանա տանել մտքի միայնությունը: Պետք է նաև բնավորություն, բայց այդ ապրանքը թանաքամանի հատակին չես կարող գտնել: Ճիշտ է, գեղեցիկ խոսքերը պարտավորեցնում են տոկուն մնալ: Իսկ երբ տոկունոթյունը հերիք չի անում, գեղեցիկ խոսքերը պարտավորեցնում են ստել: Կլապիկի համար գըժվար չէր դրանց օգնությամբ իրեն և իր պացիֆիզմը հար-

Մարեցնել այն անվեհեր խնդրին, որը տան կատաղի ոգին էր պահանջում, նա աշխատանքի անցավ ցննդուրայում, որտեղ զբաղվում էր նամակների գաղտնի ընթերցանությամբ։ Կլապիեն սրիկա չէր։ Նա ոչ ոքի վատ բան չէր կամենում։ Բայց քանի որ թույլ մարդիկ, ճանապարհից դուրս գալով, միշտ ավելի հեռու են գնում, քան ուժեղները, նա շափից ավելի էր շանք թափում և ընկնում ծայրահեղության մեջ։ Կլապիեն սկսեց մերկացնել պացիֆիստների խարդավանքները։ Նա որոշեց ձեռքերը շծալել այնքան ժամանակ, քանի դեռ չի ստիպել իր նախկին զինակիցներին, իր օրինակով, գնալ Կանոսսա, Խենեգատը փափագում է խոստովանել մյուսների հետ միասին։ Վայ նրան, ոչ հակառակվում է ունեցատին։ Քնքուշ ձեռքերով այդ բարեհոգի մարդը զգում էր, թե ինչպես են իր մատների ծայրերին Պետության ճիրաններ դուրս գալիս։ Նրա ճլորուն սիրութը սկսում է այնպիսի ուժգնությամբ բարախել, որ նա իրեն Կոռնել է երեսակայում։ Նա դարձավ հոռմեացի։ Նա պատրաստ էր, քանի որ դա իրենից էր կախված, մահվան մատնել բոլոր յուրայիններին։

Այդ դեպք նա արժանացավ Բրոշոնի բարեհաճությանը։ Բայց ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչու Աննետայի նման բարի հայրենասերները հիմա իրեն տեսնելիս երեսները շուռ են տալիս։

Աննետան մի տեսակ շփոթված էր։ Նա կորցրել էր այն վստահությունը, որն զգում էր պատերազմի սկզբում։ Անցնում էին օրեր, ամիսներ— տագնապը գնալով մեծանում էր։ Աշխատանք նա քիչ ուներ— իսկ ազատ ժամանակ մտորումների համար՝ ինչքան ասես։ Եվնազաց այն հրեշտավոր Ռգին, որը զրավել էր իրեն շրջապատող բոլոր մարդկանց— ամենակուլիտներին և ամենահմայիշներին։ Ամեն ինչ անբնական էր. և արատները և առաքինությունները ենանդավառ սերը, հերոսությունը և սարսափը, հավատը և անձնասիրությունը, անձնուրաց զոհաբերությունը— ամեն ինչի վրա հիվանդության կնիքն էր։ Եվ հիվանդությունը դարդանում էր, նա ոչ ոքի չէր շրջանցում։

Դա Աննետային ընկճում էր ավելի շատ այն պատճառով, որ նա այդ հիվանդությունը չէր հանգեցնում որևէ պատճական պատճառի: Նրա մտքով չէր էլ անցնում գրանում մեղադրել ինչ-որ մեկի շար կամքը, ինչ-որ մեկի խարդավանքները, ոչ ոքի վրա պատասխանատվություն չէր գնում: Նա չգիտեր, թե ինչ է այդ պատերազմը: Նա չգիտեր պատերազմն ինչ է ընդհանրապես: Մարտերը, խորհրդակցությունները տեղի էին ունենում իրենից հեռու Նա չէր կարողանում տեսնել Գագանի մոռւթը, բայց իր գեմքին զգում էր նրա թունավորված շունչը: Պատերազմը ավելի, քան երբեք, նրա դեմ կանգնում էր որպես բնության երևույթ (քայլայումը ավելի պակաս բնական չէ, քան օրգանական միացությունը), բայց որպես հիվանդագին երևույթ, ինչպես, օրինակ, հոգեկան վարակը: Սովորաբար ոչ ոք ի ցուց չի դնում իր հիվանդությունը, իսկ սա ցուցադրում են, ինչպես սուրբ Հաղորդություն. զարդարում են իդեալի և աստծո մասին ասվող ֆրագներով, ինչպես մսագործն է ոսկեզօծ թղթից պատրաստած ծաղիկներով զարդարում տավարի մսեղիքը: Այդ գաղափարներից որն ուզում ես վերցրու (նույնիսկ ամենաանկեղծները) զերծ չէր կեղծությունից, ստորաբարշությունից այն հրեշի առաջ, որը նրանց վարակում է բորով: Աննետան այդ հիվանդության նշանները ճանաշում էր հենց իր մեջ: Նա այրվում էր սպանելու և զոհաբերության նույն կրքով,— այրվում էր այն ամենով, ինչ սիրտը և զգացումը շեն ընդունում, բայց ինչ կեղծավոր բանականությունը շրջապատում է լուսապատճենի փայլով: Նրա զիշերները լցված էին երազների ծանր և հանցավոր կյանքով:

Սակայն գուցե Աննետան, եթե բանը միայն նրան վերաբերվեր, նույնիսկ չկովեր այդ թույնի դեմ: Չէ որ այդ թույնը նրան թունավորում էր մյուս բոլորի հետ հավասար: Աննետային այդ թույնից ինչպես և վտանգներից ինչ-որ բաժին էր հասնում: Ուրեմն, ինչո՞ւ նա մի կողմ քաշվի: Նա այդ թույնը կտաներ մեծամտորեն, զգվանքով, իրեն արդելելով միայն մի բան՝ գունազարդություն: Աննետան

կղիցեր, եթե շտեսներ նրա սոսկում պատճառով ներդործությունը այն էակի վրա, ով իր համար աշքի լույսից էլ թանկ էր:

Այդ հիվանդությունը վարակեց նաև Մարկին: Շատ ավելի ուժեղ, քան շափահասներին, քանի որ նրա օրգանիզմը ավելի թույլ էր պաշտպանված: Ոչ մի բան, ինչ տեղի էր ունենում տանը և նրա պատերից դուրս, Մարկի աշքից շեր վրիպում: Նրա աշքերը և ականջները, նրա հոտառությունը, նրա ամբողջ մարմինը, ինչպես ոեզդնատոր, բռնում էր էլեկտրականությամբ հագեցված այդ հոգիներից ելնող ներվային հոսանքները: Նա օժտված էր անհանդիսա, իր խելքից ավելի հասուն բնագավով, որը օգնում էր նրան կոահել խղճի աղոտ դրամաները:

Մարկը մյուսներից ավելի շուտ սև թուխպերի միջով տեսավ իր հարևանների՝ եղբոր և քրոջ, ճակատագիրը,— տեսավ մինչև վերջ, թեև ոչ բոլորը հասկանալով: Նա Կլարիսսա Շարդոննի մեջ փոփոխություն զգաց շատ ավելի շուտ, քան մայրը: Աննետան դեռ մտածում էր, թե ով է ամուսնուց անջատված ապրելու հետևանքով հուսահատության մեջ ընկած Կլարիսսան, իսկ Մարկն արդեն նկատեց, որ թըռչնուկը փետրաթող է լինում և ծագկվում նոր փետուրներով: Մարկը հետեւում էր նրան պատի միջով: Հենց որ Կլարիսսան դուռը բացում ու դուրս էր գալիս, Մարկը նույնպես շտապում էր դեպի սանդուղք, որպեսզի շնչի նրանից տարածվող մուշկի բուրմունքը: Մարկը նկատում էր նրա հագուստի, նրա կարքաղծի ամենաշնչին փոփոխությունը, եթե նա Կլարիսսայի ամուսինը կամ սիրեկանը լիներ, ավելի շատ ուշադրություն շեր դարձնի նրան: Ոչ թե այն պատճառով, որ սիրում էր նրան: Այլ այն, որ Մարկին տանջում էր ամեննեին էլ ոչ անմեղ հետաքրքրությունը: Կանանց այդ հոգիները, այդ մարմինները... Մարդ թաքուն նայեր, թե ինչ է կոտարվում այնտեղ, ներսում... Նա Կլարիսսայի մեղապարտությունը կոահեց շատ ավելի առաջ, քան Կլարիսսան կմեղանշեր: Դրանից Մարկը ավելի ուժեղ սկսեց ձգտել դեպի Կլարիսսան: Մարկը ուզում էր ամենուրեք գնալ նրա հետեից:

ո՞ւ— թափանցել նրա հոգին... Ի՞նչ է կատարվում այդ կրծքի տակ... իմանալ նրա ցանկությունները, նրա սրտի դադունի դողը, նրա արգելված ժտքերը... Մարկի զգացմունքները դեռ նոր էին ձեավորվում: Պատանի՞ էր նա թե աղջիկ... նա գեռ չէր հասկանում դեպի աղջիկն ունեցած իր ձգտման իմաստը— ուզում է լինել այնպիսին, ինչպիսին այդ աղջիկն է, թե ուզում է տիրանա՞լ այդ աղջկան:

Մի անգամ երեկոյան— արդեն բավական ուշ էր— Մարկը մոր հետ տուն էր վերադառնում: Թույլ լուսավորված փողոցում նա նկատեց երկու շողզողուն բիբեր— թե՞ դրանք աշքին երևացին... Կլարիսսան անցավ տղամարդու ուղեկցությամբ: Մարկի բերնից գարմանքի բացականչությունը դուրս թռավ.

— Ա՞հ,

Եվ նա աշքերը կախ զցեց ամօթխածության իրեն իսկ անհասկանալի զգացումից— թող Կլարիսսան շիմանա, որ Մարկը տեսավ նրան: Աննետան լսելով որդու բացականշությունը, տեղեկացավ դրա պատճառի մասին: Մարկը շատապեց շեղել մոր ուշադրությունը: Այդ բոպեին նրան թվում էր: որ իր պարտքը Կլարիսսային պահպանելն է: Բայց հետո նա իրեն կշտամբում էր, որ ինչպես պետքն է չնայեց, արդյո՞ք դա իսկապես Կլարիսսան էր: Հիմա Մարկըն արդեն վստահ չէր: Նա աշքերով լափում էր Կլարիսսային... Կլարիսսային: Ոչ: Անհայտ մեկին:

Այդ տեսիլքը Մարկին հետապնդում էր գիշերները: Դւ ներս էր թափանցում տան բոլոր ծակոտիներից, այդ քաղաքի մթնոլորտից, որ թունավորված էր պատերազմով, աշրող երկրից, որը ծածկված էր ճերմակելու աստիճան շիկացած ամպրոպային երկնքով: Սպասումը, տագնապը, ձանձրույթը, սուզը, մահը բորբոքովմ էին հեշտամիրական ցանկություններ: Կլարիսսան կախուրդանքի իշխանության տակ ընկած այդ հոգիների միջև միակը չէր:

Պերը էի աղջիկը տանը լի լինում, հայրը չկա, որ պահպանի նրան որսագողերից, իսկ մայրը, աղջկան բռնացնելով, ճղճղալուց ու տանից դուրս անելուց հարմար ոշինչ շգտավ: Այդ բոլորը Մարկի ուշադրությունից նույնպես

լիրիպեց։ Պերրեի աղջկա անունը Մարսելինա է։ Համարյանունն է, ինչ որ իրենք... Այդ երես առած աղջիկը իր փոքր-ինչ ուռած կոպեր ունեցող ծիծաղկոտ աշքերով խեթիւնը իրեն է նայում։ Մարսելինան վեր ցցված քթիկ ունի, փոքրիկ, լիքը կզակ և այծոտն Պանի շրթունքներ, որոնք դուրս են ցցված, ինչպես փողավոր գործիքների ծվանը... Մարկը դեմ չէ մի քիչ նվազել դրանով, բայց հենց միայն այն մտքից, որ ինքը հպվելու է դրանց, ամրող մարմնով գող է անցնում — ծնկներից մինչև ուսերը։ Երբ նրանք սանդուղքի վրա հանդիպում են, նա Մարկին կոշում է անունով և առանց քաշվելու այնպես է զննում նրան, որ տղան կարմրի։ Իսկ Մարկը հոխորտում է և, ամոթը թաքցնելով, նրան կոշում Պերրետտա։ Մարսելինան ծիծաղում է։ Նրանք հայցքներ են փոխանակում, ինչպես գավաղիրներ։

Պելտիեն աղջիկ չունի։ Բայց նրա պատիվն էլ պակաս արատավորված չէ, — եթե ինքը դա արատավորվածություն է համարում։ Նրա կինը մի սիրունիկ շատախոսն է, ճարպիկ, աշքաբաց, մետաքսե գուլպաներ է հագնում և բարձրակրունկ, քսան օղակով կապվող կոշիկներ։ Դրանք նա գնել է իր վաստակած փողով։ Պելտիեի կինը աշխատում է գործարանում։ Բայց «այսօրվա վաստակածը վաղը քամուն է տալիս...» Ահա մի ասացվածք, որը կարծես պատերազմական ժամանակի համար է ստեղծված։ Պարոն Պելտիեն իսկական հայրենասեր է։ Տիկին Պելտիեն — նույնպես։ Նա ամուսնուն խարում է միայն դաշնակիցների հետ։ Մի՞թե պարոն Պելտիեն դրանից վնասվում է։ Դա նշանակում է կովել նրա հետ միասին։ Այդ ասելով, տիկին Պելտիեն հոհոում է։ Այդ կրակոտ գալլուհին իրեն խարում է միայն կիսով շափ։ Աստված իմ, չէ որ խեղճ ամուսինը կնոջ շահելուց ի՞նքը ոչինչ չի կորցնում... Եվ հո չի կարելի հավիտենապես մտածել բացակաների մասին։ Կամ անցյալի ու ապագայի մասին։ Ներկան մեծ երախ ունի։ Նա ամեն ինչ կլանում է, ամեն ինչի վրա աշք է տնկում։ Ներկան ամեն ինչ է։ Ներկան ոչինչ է։ Ներկան անգունդ է։

Մարկը գլորվում է անգունդը։ Խելագար է նա, ում կըրծում է ապագայի հոգսը։ Դեռ մի տես լինելո՞ւ է արդյոք

նա, այդ ապագան։ Ավ հույս դնի դրա վրա, թալանված դուրս կգա։ Ինքը վերցրու, մի ապասիր, որ քեզ հրամցնեն։ Քեզ ատամներ են արված, ձեռքեր, ուշեր, հրաշալի մարմին, ժարմին՝ աշքերով ծածկված, ինչպես սիրամարդի պոշը, ժարմին, որ բոլոր ծակոտիներով իր մեջ է առնում կյանքը։ Վերցրու, վերցրու... Սիրիր և ճանաշիր, ըմբոշինիր և ատիր...

Մարկը թրե է գալիս Փարիզում՝ դպրոցական պարապմունքները թողած, հուզված, հետաքրքրությամբ լի, հունից դուրս ընկած։ Պատերազմ կին, թշնամի, ցանկություն—հրե հազարադեմ Պրոտեռու— ինչքան ոգելից խմիչքներ կան, որ կարելի է լակել մինչև սրտիսառնություն։ Ինչքան հիացմունք պատճառող բաներ կան՝ մինչև այն ակնթարթը, երբ ուժասպառ, տանջված ընկնում ես ի վիառ կյանքի... Շատ դժվար էր կապը կտրած մտրուկին աչքի տակ պահել։ Բոլորը կլանված էին իրենց խոհերով։ Աննետան ուշ սկսեց կասկածել, որ ամեն ինչ բարեհաջող չէ։ Իրեն համակած տագնապներով, որ գնալով ուժեղանում էին, նա չէր կարող պարապ նստել։ Նրա ազատ ժամերը լցնող դասերը վերջացել էին։ Բուրժուական ընտանիքները ժլատացել էին, տնտեսում էին, ուսուցչուհիներին զրկելով մի կտոր հացից,— նրանցից ի՞նչ օգուտ։ Աննետան մի երկու ամսով գնաց Փարիզի հոսպիտալներից մեկում զիշերները հերթափոխ քույր աշխատելու։

Մարկը դրանից օգտվեց։ Նա սկսեց տանից կորչել և սրտի տրոփունով թափառում էր քաղաքում, ամեն ինչ հոտոտելով, ձգտելով ավելի շատ տեսնել, քան ճաշակել։ Նա շափազանց անփորձ էր հանգնելու և շափազանց ինքնասեր՝ իր անգիտությունը մատնելով ծաղրի առարկա գառնալու համար։ Նա գնում էր առանց կանգ առնելու, հոգնածությունից ոտքերի գոյությունը չզգալով, շոր շրթունքներով և այրվող ձեռնափերով, գնում էր բախտապավեն, վերադառնալով ու պտտվելով միւնույն տեղում... Եվ շատ շուտով որևէ թակարդի մեջ կընկներ, եթե, բարեբախտաբար, այդ թափառումների հենց երկրորդ երեկոյան, երբ նա նշտած էր ինչ-որ կասկածելի բարում, ամենաանվայելուշ

Հասարակության մեջ, նրա ուսից շբռներ մի փոքրիկ, ուժեղ ձեռք: Ինչոր մեկի ձայնը, ոչ այն է զայրացած, ոչ այն է ծիծաղելով, ասաց նրան:

— Դու ի՞նչ ես անում այստեղ:

Սիլվիան էր, նրա մորաքույրը... իսկ նա ինքը այստեղ ի՞նչ է անում:

Եվ քանի որ Մարկը խոսքի տակ չէր մնում, հարցրեց.

— Իսկ դո՞ւ

Սիլվիան քրքչաց, Մարկին դատարկապորտ կոչեց և, նրա արմունկը իր թեատակին սեղմելով, ասաց.

— Քո ողորմածության պատճառով իմ երեկոն կորչում է: Բայց պարտքը ամեն ինչից վեր է: Դու բռնված ես, ես քեզ տուն կտանեմ:

Մարկը առարկում էր, բայց անօգուտ: Սիլվիան, այս նուամենայնիվ, համաձայնեց մինչև տուն գնալը զբոսնել նրա հետ: Մորաքույր ու քրոջորդի, մենակ մնալով իրար հետ, սկսեցին միմյանց կծու խոսքեր ասել: Սիլվիան լավ էր հասկանում, որ փոքրիկ գագանը դես ու դեն ընկնելու ցանկություն ունի, բայց նա զուրկ չէր առողջ դատողությունից և զիտեր, թե որքան է կտանգներով հղի վաղաժամ ազատությունը:

— Դու ի՞նչ ես կարծում, հորթուկ: Մտածում ես. ինքս իմ գլխի տերն եմ, ինչ ուզում, այն էլ անո՞ւմ եմ: Զէ՞՝ սպասիր: Դու մերն ես: Դու պատկանում ես մորդ: Թանգարանային գանձ ես: Իսկ դա կողպեքի տակ է պահպանվում:

Սիլվիան կատակում էր և կշտամբում: Իսկ Մարկը դայրացած ընդդիմադրում էր: Նա ազա՞տ չէ: Իսկ Սիլվիան ինչո՞ւ է ազատ:

— Զէ որ ես ամուսնացած կին եմ, սրտագին բարեկամս:

Սիլվիայի անպատկառությունը նրան փակուղի դրեց: Նա խորամանկորեն նայեց Մարկին: Մարկն ուզում էր զայրանալ, բայց ծիծաղեց:

— Լավ, ես բռնված եմ: Բայց քեզ էլ եմ բռնել:

Սիլվիան քրքչաց: Նրանք ստիպված պետք է լինեն մեղքը կիսել: Մարկն ու Սիլվիան մատով սոլառնացին իրար,

սպառնացին աշքով. Միլվիան Մարկին տարավ տուն։ Բայց Աննետային ոչինչ շասաց Միլվիային վախեցնում էր ավագ քրոջ խստությունը, դեպի կյանքն ունեցած նրա լուրջ վերաբերմունքը։ Նա մտածում էր.

«Առվագին հո չես արգելի հոսել, Փակիր քարով չը առաջը — ավելի ուրախ կքրքշա»։

Եվ հանկարծ Աննետայի աշքերը բացվեցին։ Նա հասկացավ, որ փոքրիկ թոշնակին մենակ թողնելը բնում անխելամտություն է։ Աննետան աշխատանքը թողեցւ Բացի այդ էլ նա սկսել էր նույնիսկ զզվել կանանց դեպի վիրավոր ողամարդն ունեցած այդ հակումից, սիրուց, որը խառնվում էր կարեկցանքին, արյան վրա հիմնված սիրուց, սիրուց դեպի արյունը...

«Մի գոռողանաւ, Դու ինքդ էլ ես այդ զգացումն ունեցել...»։

Կեղծավորության բոլոր տեսակներից ամենավայրենին Քաղաքակրթված մարդ-գազանը իր վայրի բնազդները համեմում է կեղծիքի հոտով, եվ այդ հոտը նա զգաց իր որդու մեջ։ Այդ հոտը գալիս էր Մարկի նույնիսկ շորերից, մաղերից, նրա մարմնի նուրբ աղվամազից... Միայն թե մահվան այդ հոտը չկարողանա հասնել նրա սրտին։

Աննետան սարսափում էր ոչ միայն այդ տղամարդկային հասունության անորոշ արթնացումից, զգացումների բուռն գրոհից, փոքրիկ Փավնի արբեցումից, որ Մարկը թաքցնել շգիտեր, Կյանքը ճանաշող մայրը սպասում է այդ ժամին։ Եվ եթե ոչ առանց սարսուի է հսկում նրա դաշտութը, ապա նաև չի զարմանում, նա լուր հետևում է և սպասում — տիսրությամբ, հպարտությամբ, կարեկցությամբ — սպասում է, թե երբ պատանի տղամարդը կանցնի անխուսափելի փորձության միջով, երբ կոպացվեն նրան պարուբող ծածկույթները և նա վերջնականապես կանցատվի մայրական օրգանիզմից։ Բայց այդ ժամը, որ խաղաղ օրերին կարող էր զողանցել, ինչպես զանգերն են զողանցում դաշտերի լուսության մեջ ապրիլյան մեղմ միջօրեին, այժմ

խոպոտորեն հնչում էր մոլեգնած ժողովուրդներին պտույտ տվող մրրիկի ոռնոցի տակ:

Մի անգամ երեկոյան Աննետան, հոգնած օրվա աշխատանքից ու վազվզուքից, նստել էր Լյուբսեմբուրգյան այգում։ Այդ տեղով լիցեի ընկերների հետ անցնում էր նրա որդին։ Վեճով տարված, նրանք կանգ առան ծառուղու մեջտեղը։ Ծառերի պատնեշը նրանց բաժանում էր այն նստարանից, որտեղ նստած էր անտեսանելի Աննետան։ Նա լսեց իր որդու կրքոտ ու ծաղրական ձայնը, որը խանդավառված խոսում էր այն մոտիկ ապագայի մասին, երբ «բողջերից» մի աշքի դիմաց կպահանջեն երկուսը, մի ատամի դիմաց ամբողջ երախսը։ Տղաներն արդեն հիմա ներս էին քաշում զոհի հոտը, խոշտանգված գագանի քրտինքի և արյան հոտը։ Նրանք իրենց երևակայում էին ավելորդ նըրբանկատություն շունեցող, թուլություն շցուցաբերող ուժեղ մարդիկ։ Մարկը, պարծենալով իր արյունաբությամբ, ասում էր,

— Բոշերը բռնություն էին գործադրում, խեղզում էին, այրում և ճիշտ է։ Իսկ մենք կվարվենք ավելի վայրագարը։ Պատերազմը պատերազմ է։ Դա խրախճանք է լինելու։ Թերթերում, ակամա, մենք գրելու հնք, ի սկզբանք հիմարների, քաղաքակրթության մասին։ Մենք գերմանացիների համար կտանենք մեր քաղաքակրթությունը։

Նրա հետ համաձայնում էին։ Նա հպարտանում էր իր հաջողությամբ։ Տղաների բերանի զուրն անվերջ գնում էր, երբ նախաճաշակելով իրենց ապագա գործունեությունը, խռում էին կանաց, աղջիկների մասին, որոնց իրենք «բեղմնավորելու են (այդա ի միջի այլոց ափսո՞ս) ազնիվ ֆրանսիական սերմով...» Այդ թեթեսոլիկները իրենք էլ զգիտեին, թե ինչ են դուրս տալիս։ Դրանք տղամարդիկ էին։ Իսկ տղամարդիկ շգիտեն ինչ շարիք են իրենք գործում։ Բայց գործում են։

Աննետային թվում էր, թե իրեն ապահով խլացրին։ Նրա տղայի ժպացող շուրթերից դուրս թուած վիրավորանքը հարվածեց ուղղակի նրա սրտին, նրա փորին...

Feri ventrem. 1 Աշա թե ո՞ւմ է նա աշխարհ քերել: Գայլին: «Մարկը դեռ չի ճանահում...», Բայց ավելի վատը չի<sup>2</sup> դառնա արդյոք, եռա ճանականա, ինչպես փրկել նրան քունգլիների նողկալի կանչից:

Մի ուրիշ անգամ Աճնտան լսեց, թե Մարկն ինչպես է և նամոթաբար ձեռ առնում, արդեն իր ներկայությամբ: Աստերագմի և խաղաղության գունազարդողներին, աստծո և իրավունքի քրմերին: Իր սուր աշքերով նա լավ էր զննել ժիրյուների և թեռնարդենների հերոսական կեղծավորությունը, որոնք խարդախում էին Խաչով և Գաղափարով, միայն թե շահեին սկսած խաղը: Մարկն ինքը երբեք դրանց չեր հավատում: Նա ոչ մի բանի չէր հավատում (ա'յդ բուսէին): Այդ երեխաները զզվել էին այն բառերից, որոնք իրենց մեծ բերաններով և անմաքուր լեզուներով անվերջ աղում էին ավագները: «Արդարություն, Հանրապետություն, Տեր Աստված...», Բառեր, բառեր, հոգեոր, աշխարհիկ, հունցած միենույն դիմորով...

— Զ՝ գրանք կեղծ մուրհակներ են... Դրանցով ինձ չե՞ս խարիս...

Վրդովվելու փոխարեն Մարկը բարձրածայն քրքչում էր: Նա այդ դիմակահանդեսը սրամիտ էր համարում, նա մասնակցում էր խաղին: Իգեալիզմն ու կրոնը աշքերը փոշով սրատելու կամ հեղձուցիչ գազով թունավորելու համար միանգամայն պիտանի են: Ամենառուժեղը — ամենանենդն է...

— Կեցցե՞նք մենք: Մենք ամեն ինչ ունենք, քարոզիլներ և պրոֆեսորներ: Կրոնական, լրագրային, պառլամենտական շառատաններ... Շատ օգտակար է ստել «Հանուն աստծո, թագավորի և հայրենիքի»: («Միխայիլ Ստրոգով»<sup>2</sup>): Մարդկային բոլոր գյուտերից ամենասրամիտը դա տեր աստվածն է՝ իր բոլոր տարատեսակներով...»

Այդ գեղնակտուց Մաքիավելին պարծենում էր իր ուրախ

1 Իգիր փորին (լատ.):

2 Միխայիլ Ստրոգով» — մելոդրամա ռուսական կյանքից, գրված ըստ Ժյուլ Վենի վեպի:

յինիկմով։ Աննետան համբերությունը կորցրեց։ Իսկ ավելի խելամիտ կլիներ պահպանել ինքնատիրապետումը։ Բայց Մարկը կպել էր նրա ամենազգայուն տեղին։ Աննետան, բռնկվելով, ճշաց։

— Բավական է։

Մարկը զարմացավ։

— Ինչո՞ւ

— Այդպիսի բաներով կատակ չեն անում։

Մարկը ծաղրանքով նետեց։

— Հենց միայն դա է, որ անում են։

— Դրանց համար մեռնո՞ւմ են։

— Ահ, ես մոռացել էի, որ քո ժամանակ դրանք մոռա էին։ Խնդրում եմ ներել։

— Ոչ, ես քեզ չեմ ներում, — ասաց Աննետան, ավելի խիստ զայրանալով։ — Բավական է ծաղրիս։

— Դա իմ լուրջ լինելու ձեն է։ — ասաց Մարկը։ Նրա հայցքը շար էր, կիսաժպիտը բռնազբոսիկ։ Նա շարունակում էր։

— Եվ խնդրում եմ նկատի ունենաս, որ ես հարգանքով եմ վերաբերվում այդ բաներին։

(Մարկը վերջին բառը շեշտեց)։

— Ահա հենց այդ էլ ես քեզ չեմ ներում, — ասաց Աննետան։ — Բոլոր այդ բաները, աստված, կրոն — ես դրանց չեմ հավատում։ Դա իմ դժբախտությունն է։ Բայց ես հարցում եմ նրանց, ովքեր հավատում են, եվ խորամանկ մարդկանց տեսնելիս, որոնք խաբեբայությամբ են զբաղված իրենց հավատի հետ, — հավատ, որը ես չունեմ, — ես պատրաստ եմ համարյա պաշտպանելու այդ հավատը, ես այդ հավատի համար տառապում եմ։

— Դա գործ չունենալուց է, — նկատեց Մարկը։ — Իսկ ավելի լավ չէ՞ր լինի այդ հավատին կիրառություն գտնել։ Դա ուժ է, նույնպիսի, ինչպես և մարդկային հիմարությունը։ Եկեք օգտագործե՞նք այդ ուժը։ Օգտագործե՞նք այդ երկու ուժերը։ Թող ամեն ինչ ծառայի հաղթանակին։ Ես իրավունք ունեմ օգուտ քաղել հավատից, եթե ինքս չեմ հավատում։

Աննետան, գլուխը կռացնելով, նալեց Մարկի աշքեղին  
և ասաց.

— Ինձ մի ստիպիր, որ քեզ ատեմ:

Մարկը մի քայլ ետ գնաց:

Աննետան շարունակում էր նայել նրան զայրույթից փայտ-  
լատակող աշքերով, գլուխը կռացրած. նա դեռ մնում էր  
Յոհաննա Հորթ, պատրաստ մարտի նետվելու, մնում էր նախ-  
կին օրերի Աննետան. Նրա ոռւնզները թրթոռում էին:

Աննետան կտրուկ ասաց.

— Ես կարող եմ շատ բան տանել. յոթ մահացու մեղ-  
քեր, ամեն տեսակի արատներ, նույնիսկ դաժանություն:  
Բայց միակ բանը, որ ես չեմ ներում, դա կեղծավորու-  
թյունն է: Խաղալ հավատի հետ, առանց հավատալու, խար-  
դախել սեփական անձի և իր գաղափարների հետ, լինել  
Տարտուֆ— ոչ, ավելի լավ է աշխարհ չգալ: Այն օրը, երբ  
ես տեսնեմ, որ դու այդպես բարոյալքվել ես, ես կթոթա-  
փեմ քեզ, ինչպես փոշին իմ կոշիկներից: Նույնիսկ եթե  
դու այլանդակ ես, ստոր— եղիր ճշմարտախոհ: Ավելի լավ  
է քեզ ատեն, քան արհամարհեն քեզ:

Մարկը լուր էր, նա շնչահեղձ էր լինում: Երկուսն էլ  
զայրույթից դողում էին: Դաժան խոսքերը ապտակեցին  
նրան, նա ուզեց նույն ձեռվ պատասխանել, իր հերթին  
ցավ պատճառել մորը, բայց շունչը կտրվեց: Այդ փոթո-  
քիկը նրան հանկարծակիի բերեց: Մայր և որդի հայացք-  
ները հառեցին միմյանց վրա, ինչպես երկու թշնամի  
Բայց որդին իր կամքից անկախ, առաջինը հանձնվեց. նա  
աշքերը խոնարհեց, թաքցնելով զսպված կատաղության  
արցունքները: Նա իրեն հարկադրեց քմծիծաղել: Նա հա-  
վաքեց իր բոլոր ուժերը, որպեսզի մորը թույլ շտա նկատել  
իր թուլությունը... Աննետան շրջվեց ու գնաց: Մարկը  
ատամները կրծտացրեց: Նա պատրաստ էր սպանել մորը...

Խոսքերը շիկացած երկաթի նման այրվածք թողին: Ան-  
նետան դռան հետեւ հայտնվելուն պես զղաց իր կոպիտ  
արարքի համար: Մինչդեռ ինքը կարծում էր, թե հաղթա-  
հարել է իր տաքարյունությունը: Բայց փոթորիկը արդեն  
մի քանի ամիս էր, ինչ կուտակվում էր: Աննետան զգում

Էր, որ այդ բռնկումը վերջինը չէ։ Այժմ իր խոսքերը սարսափելի թվացին նրան։ Դրանց կոպտությունից ինքը գրեթե նույնպիսի ամոթ զգաց, ինչպիսին և նրա որդին։ Նա փորձեց ներում ստանալ և հաջորդ հանդիպման ժամանակ որդու հետ սկսեց խոսել սիրալիր և քնքուշ, կարծես ամեն ինչ արդեն մոռացված էր։

Բայց Մարկը չէր մոռացել։ Նա մորը պահում էր տարածության վրա։ Նա իրեն վիրավորված էր համարում։ Որպես վրեժ Մարկը աշխատում էր — եթե մորը այդքան հրապրւում էր անկեղծությունը — ասել և անել այն ամենը, ինչը կարող էր նրան խոցել…

(«Ա՛, Դու նախապատվությունը դաժանությա՞նն ես տալիս...»)։

Նա դիտավորությամբ սեղանին էր թողնում իր թերթի համար գրած նամակներն ու հոդվածները, որտեղ պատեհագմի և թշնամու մասին սարսափելի բաներ էր ասում, երբեմն նույնիսկ անպարկեշտություններ։ Մարկը աշխատում էր նկատել թե դա ինչ տպավորություն կթողնի մոր վրա։ Աննետան տանցվում էր, նա հասկանում էր որդու խաղը և իրեն զսպում էր, բայց հանկարծ կորցնում էր հավասարակշռությունը։ Մարկը հրճվանքով հայտարարում էր.

— Ես ճշմարտությունն եմ ասում։

Մի անգամ երեկոյան, երբ մայրը քնեց, Մարկը տնից գնաց։ Նա վերադարձավ առավոտյան, ուղիղ տասներկուսին, նախաճաշի ժամանակ։ Աննետան այդ ընթացքում սննցավ տագնապի, ցաման, ցավի բոլոր փուլերով։ Երբ Մարկը հայտնվեց, Աննետան ոչ մի խոսք չասաց նրան։ Նրանք նախաճաշեցին։ Մարկը զարմանքով ու թեթևությամբ մտածեց։

«Նա հաշտվել է»։

Լուսությունը խզեց Աննետան։

— Այս գիշեր դու գողի նման փախարու ես քեզ վստահում էի։ Հիմա ես այդ վստահությունը կորցրեցի։ Դու առաջին անգամ չեք, որ չես արդարացնում իմ վստահությունը, ես դիտեմ, Ստորանալ, ստորացնել քեզ, գիշեր ու ցերեկ

Հսկողություն սահմանել քեզ վրա—ես դա չեմ անի: Դու ի՞նը բաժանկությունների կղիմես և ի վերջո կվարժվես ստախոսության: Ես քեզ այստեղից կտանեմ: Այստեղ քեզ պահպանել ես չեմ կարող: Այստեղ օդը վարակված է: Դու բավականաշափ ամուր չես, դիմադրողականություն չունես: Ըստ բոլոր խոսքերն ու արարքները վերջին ամիսներին ցույց են տալիս, որ դու ենթակա ես ամեն տեսակի միկրոբներով վարակվելու: Դու կմեկնես ինձ հետ:

— Ո՞ւր:

— Գավառ: Ես ուզում եմ կոլեջում ուսուցչուհի աշխատել:

Մարկը ճշաց.

— Ո՞չ:

Ինքնավստահությունը միանգամից լքեց նրան: Նա Փարհպից բաժանվելու ցանկություն չուներ: Ստիպված եղավ անցնել խնդրողական տոնի: Իր ձեռքը դնելով մոր ձեռքի վրա, Մարկը քնքղորեն ու համառությամբ ասաց.

— Մի՛ գնա:

— Ես արդեն նշանակումն ստացել եմ:

Նա ձեռքը թափով ետ քաշեց, կատաղած այն բանից, որ զուր տեղը ստորացավ: Մինչդեռ Աննետան արդեն սկսեց տեղի տալ: Փաղաքանքով նրանից կարելի էր պարան գործել:

Աննետան ասաց .

— Եթե դու ինձ խոստանայիր...

Մարկը շորությամբ նրան ընդհատեց.

— Ոչ մի խոստում, Ամենից առաջ, դու ինձ չես հավատում: Դու ինք ասացիր, որ ես ստելու եմ... ինձ շատ պետք է սուտ խոսելիք: Ես քեզ ուղղակի ասում եմ. դա հետագայում էլ է կրկնվելու: Դու իրավունք չունես բռնանալու իմ կամքի վրա:

— Ահա՝ թե ինչ, — ասաց Աննետան: — Ես իրավունք չունեմ իմանալու, գիշերը դու որտե՞ղ ես անցկացնում:

— Դու՝ ավելի քիչ քան որկե մեկը... իմ գիշերները, իմ կանքը — դա իմն է:

Լեզվից սոսկալի խոսք թռավ: Հասկացա՞վ արդյոք Մար-

կը ալդի Աննետան գունատվեց։ Մարկը նույնպես Երկուսի խոսքերն էլ ավելի անողորմ էին, բան մտքերը, բայց, գուցե, ոչ այնքան անողորմ, որքան մոայի ու վայրի զայրույթը բնազդի, ուր գիտէ ինչ հարվածներ է հասցնում, և խփում է վստահ ու աներեր ՚Իրանք կայծակնային, համբ բախումներ են Զեռքը մահացու հարվածը հասցնում է ավելի շուտ, բան ուղեղը կհասցնի հաշիվ տալ և լուռ փոխադրծ համաձայնությամբ ոչ ոք չի ասում։

«Ես վիրավո՞ր եմ».

Բայց հարվածը հասցված է, և հոգին՝ թունավորված։

Հիմա նրանց իրար նետած յուրաքանչյուր բառից տարածությունը անընդհատ մեծանում էր։ Աննետան շափազանց պարզ էր տեսնում տղայի թերությունները և, մատնացուց անելով դրանք, ստորացնում էր նրան։ Այդ ժամանակ Մարկը սկսում էր պարծենալ դրանցով։ Նրա համար մայրը ոչ մի հեղինակություն չուներ։ Այդ ամբարտավան տոնը, այդ ցավալի խստությունը Մարկին միայն կարող էին մղել ամենաանհեթեթ խոսքերի ու գործողությունների։ Ոչ, նա չի հպատակվի... Աննետան նրան առաջարկեց երկուսից մեկը։ Կամ Մարկը իր հետ կմեկնի գավառ, կամ Աննետան նրան կտա Փարիզի փակ լիցեյներից մեկնումեկը։ Մարկի շուրջերից գուրս թուավ զայրույթի մի նիշ։ Անսահմանափակ իշխանությունը, որը մայրն օգտագործում էր որդու գեմ կովելու համար, Մարկին ուղղակի զզվելի էր թվում։ Եվ կատաղած Մարկը հակառակ մոր համբին, ընտրեց մենակեցությունը։

— Ի՞նչն եւ գու գերադասում։

— Ամե՞ն ինչը միայն թե քեզ հետ շապրեմ։

Հրաժեշտ տվին սառը։ Նրանց միջն կանգնած էր ատելությունը... Ինչոր տեղ, խորքում թաքնվել էր սերը։ Սերը, որ արբեցած էր ոխով։ Վիրավոր սերը։ Նա տառապում է, արյունաքամ է լինում և երազում է վրեժ լուծել...

## Մասն երկրորդ

Ժողովրդական կրթության գերատեսչությունը, կորցնելով տղամարդ-ուսուցիչներին, դիմեց կանանց օգնությանը Աննետային, իր երկու դիպլոմով, ուղարկեցին Կենտրոնական Ֆրանսիայի քաղաքներից մեկի արական կոլեջը:

Նա մեկնեց 1915 թվի հոկտեմբերի սկզբին:

Ինչքա՞ն էր լավ աշունը: Գնացքը ժամերով կանգնում էր դաշտերի միջև, և այդ ժամանակ լսվում էր, ինչպես են խաղողի այգիներում գեղգեղում կեռնեխները: Մարմանդ գետերը սահուն թափալվում էին մարգագետիններով և իրենց հետեւ կարծես քարշ էին տալիս ոսկյա տերեներով զարդարուն երկար քղանցքատուտերը: Աննետային ծանոթ էին այդ վայրերն ու բնակիչները, նրանց դանդաղ-կոտ, փոքր-ինչ ծաղրական լեզուն: Նրան թվում էր, թե թունավորված Հոգին, որից ինքը փախչում էր, արդեն չի կարող իշխել իր վրա: Աննետան իրեն կշտամբում էր, որ չպոկեց նրանից իր որդուն:

Բայց Աննետան շատ շուտով նորից հանդիպեց այդ Հոգուն: Ամպրոպաքեր թուխապերը հասնում էին նաև մինչև այդ բերքառատ քնկոտ գավառները: Արտուայում և Շամպայնում այդ ժամանակ կատաղի մարտեր էին տեղի ունենում: Թիկունք էին տանում գերիների խմբերին:

Կանգառներից մեկում Աննետան կայարանի կողքին մի բազմություն տեսավ, որը, կուտակված շինարարական հրապարակը պատճեղող ցանկապատի շուրջը, աղմկում էր: Այդտեղ էին քշել, ինչպես անասունների, մի քանի ժամով կամ օրով գերմանացիների մի ամբողջ նախիր, որին ար-

դեն մոտ մի շաբաթ տեղից տեղ էին փոխում, ստույգ շիմանալով երբ և ուր տանել, բոլորն էլ ավելի կարևոր գործեր ունեին: Փոքրիկ քաղաքի ամբողջ բնակչությունը — մեծից մինչև փոքրը — սլանում էր կայարան՝ վանդակի մեջ գյած գաղաններին նայելու: Դա յուրատեսակ թափառաշրջիկ կրկես էր: Զրի տեսարան: Գերիները բոլորովին ուժապառ փովել էին ավագի վրա: Համր, ամեն ինչի նկատմամբ անտարբեր, նրանք անկենդան հայացքները հածում էին ցանկապատի արանքներից ծաղրանքով իրենց նայողների շրջանակի վրա: Սեպերը ուրախ բացած բերանները թուք էին կրակում նրանց վրա: Գերիներից ոմանք տաքության մեջ էին: Ամոթից, զայրույթից, սարսափից տանջանար նրանք գողում էին, ինչպես ծեծված շները: Յուրտ, անձրեվոտ գիշերները նրանց մեջ դիզենտերիայի համաճարակ էին առաջացրել: Գերիները թեթևանում էին աղբակույտի վրա, ցանկապատված վայրի մի անկյունում, բոլորի աշխերի առաջ: Եվ ամեն անգամ պոռթկում էր նայողների խլացուցիչ քրքիջը: Պարզորոշ լսվում էին կտնանց ճշգրտություններն ու երեխաների հնչեղ ձայները: Շրխկացնելով իրենց ազդերին, կողները խաղացնելով ու կծկվելով, կանայք, ծիծաղի նոպայով բռնված լայն-լայն բացում էին բերանները: Դա զայրույթ չէր: Մարդկայնության լիակատար բացակայություն: Կենդանին էր հրճվում... Հրճվող ամբոխի քըրքիջը միշտ գաղանի մոնշյուն է հիշեցնում: Այս անգամ նմանությունը սահմոկելու շափ լիակատար էր: Ցանկապատի երկու կողմում էլ մնացել էր միայն գորիլլան: Մարդը լերացել էր:

Վերադառնալով վագոն, Աննետան կարծես, հալլուցինացիալի ազգեցության տակ, սկսեց զզվանքով զննել հարեանների մորուքավոր դեմքերը և իր ձեռքերի ոսկեգույն աղվամազը:

Այդ պատկերը սկզբնական շրջանում հետապնդում էր նրան նաև հին կոլիջում, որտեղ նա պետք է դասավանդեր: Կոլիջը գտնվում էր ցածրավայրում: Նախկինում այդտեղ տեղավորված էր Բուսաբանական այգին... Բուսաբանական այգի: Ի՞նչ հեղնանք: Խորդուքորդ և դեղին, ինչպես Տո-

Եղի անապատը, հողից արժատախիլ էր արված ամբողջ բուսականությունը՝ մինչև վերջին ծիլը Երկար բակի մեջտեղը, ուր տանում էր գիլյոտինի անցքի նման ներ դռնակը, բակի, որին բոլոր շորս կողմերից ճնշում էին բանտի պատերը, որոնցից նայում էին լուսամուտների թարախուաշը երրը, աճում էր միայնակ, համառորեն կյանքից կառշած մի ծառ— ծեր պլատան, որը նվազել էր, հզորությունը կորցրել ու ծովելի Փոքրիկ գազանները եղունզներով պլոկել էին նրա վրայից ամբողջ կեղերը. որտեղ որ հասել էին նրանց թաթերը, այնտեղ տերեւ էլ չէր բուսնում, իսկ ծառի բունը ոտքերի հարվածներից ամբողջովին սպիներով էր պատված: Կարծես թե բոլորը— մեծ ու փոքր— ոսքները մեկ էին արել կարճացնել նրա կյանքը: Պետությունը կարճացնում է մարդկային ձագուհների կյանքը, իսկ նրանք վրեժ են հանում բնությունից: Թանդել: Թանդել: Այն ինդիրը, որ իրենց վրա են վերցնում և խաղաղությունը և պատերազմը: Դա դաստիարակության կիսն է կազմում:

Զորս պատերից մեկի հետնում հոսում էր մի առվազ, որի ջրերը կեղառում էին կաշվի գործարանները: Սիրտ խառնեցնող հոտը նախանցում էր խոնավ գասարանները, որտեղ իր հերթին դարձահոտություն էր տարածում այդտեղ քշած փոքրերի նախիրը: Նրանց քթանցքները, կարծես, խցանված էին: Նրանք ընդամենը մոտ տասներկու հոգի էին, ամենաշատը՝ քսանու կուշ ու ձիգ էին անում կոշտ նոտարանների վրա, մրից դեւնած օգում, որը լուսամուտների կանաչավուն ապակինների արանքով սենյակ էր թափանցում բակից, որտեղ ծխում էր ուշ աշնան մառախուզը: Խոխոսում էր ճերմակելու աստիճան շիկացած շուգունե փոքրիկ վառարանը (այս վալրերում փայտի առաւտոթյուն էր): Երբ տոթը անտանելի էր դառնում, բացում էին դուռը (լուսամուտները երբեք չէին բացում): Սենյակ էր խոժում մառախուզը՝ կաշվի հոտի հետ— կաշվի, որ դաբաղում էին: Կենդանի կաշվի հոտից հետո դրւ համարում էին թարմացուցիչ:

Բայց կինը, ինչքան էլ որ նա ընտելացած լինի նբբաճաշակ պայմանների, մտքրության առողջ բուրմունքի,

աղամարդուց ավելի հեշտ է վարժվում ամենասուկալի պայմաններին։ Դա հատկապես նկատելի է հիվանդի անկողնու մոտ։ Նրա աչքերը, նրա մատները զգվանք չփառեն։ Աննետայի հոտառությունը՝ հնազանդվեց անհրաժեշտությանը։ Նա, ինչպես մյուսները, շնչում էր, առանց կնճռումկելու, այդ որզի հոտերը։ Հոգիների հոտին վարժվելը շատ ավելի գեվար էր։ Նրա բանականությունն այնքան զիջող չէր, որքան զգացմունքները։

Բայց դրա փոխարեն այդտեղ Հոգի չկար, որ բռնված լիներ կրքերի տենդով, — պայքարի, ատելության, վշտի տենդով։ Աննետան թաքնվեց այդ Հոգուց... էլ ի՞նչ էր ուզում։ Թվում էր, թե մնում է միայն ուրախանալ, նա անխռովության անդորր գտավ։

Փափուկ հողն այստեղ վշտին անտեղյակ էր։ Պարարտ, արգավանդ, նա ննջում է հովտում փետուրե անկողնու մեջ թաղված և զլուխը դրած բլուրների բարձին, որ ավելի քաղցըր խռոացնի։ Նա չի երազում խաղաղության մասին, որը տարածվել է իր սնարից այն կողմ։ Անդորրավետ հող, զուսպ ժողովուրդ, սթափ, հավասարակշռված միտք, Այդ հողում չէ աստված մահացել հանուն բոլոր մարդկանց։ Այդ հողի համար չէ տառապում խաղված մարդկությունը։

Աննետային այդ հողը ծանոթ է մանկությունից։ Նրա հայրը ծննդով այդտեղից է։ Մի ժամանակ Աննետան վաշելում էր այդ խաղաղության, այդ անշարժության հաճույքը։ Իսկ հիմա...։ Նա նախանձում էր այդ առողջությանը։ Իսկ հիմա...։

Աննետան մտաքերում է Տոլստոյի խոսքերը, բայց դրանք վերաբերվում են ոչ միայն կանանց։ «Մի էակ, որը տառապանքներ ու հիվանդություններ չի տեսել, մի ժողովուրդ, որ առողջ է, շափազանց առողջ, մշտապես առողջ—դա պարզապես հրեշ է...»<sup>1</sup>։ Ապրել— նշանակում է մեռնի ամեն օր և ամեն օր մարտնչել։ Գավառը մահանում է,

1 Էլ. Տոլստոյի զրուցները Պոլ Բուայեի հետ», հրապարակված ֆրան-սերեն լեզվով «Տան» լրագրում։

բայց նա չի մարտնչում։ Նա սթափ է, նսամոլ, Յաղրասերը և նրա օրերը երջանիկ ու սահուն հոսում են, դուրս չգա՞լով իրենց ափիրից, ինչպես նրա հանդարտ գետերը։

Բայց կար մի ժամանակ, երբ այդ հողը բռնկված էր բոցերով։ Հին բուրգունդական քաղաք... Երեք վեհապանծ եկեղեցի՝ սպիտակ քարից կերտած սրածայր գոթական աշտարակներով, որ բրոնզազօծված են և ժամանակից քայլաված, ինչպես ժանգապատ զրահը, — երեք եկեղեցի, պրոնց Քրիստոսի մարտիկների սիլուետները բարձրանում են օձագալար գետի վրա։ Նրանց անգլուխ, իրար հետեւից շարված, կարծես լերդացած արյունով պատած լուսամուտները, տաճարի գանձերը, Հարունի գորգերը և կայսր Կառլի, Կառլի որդու, Կառլի Հայրերի և պապերի ծանր, թանկարժեք իրերը, անգլիական տիրապետության ժամանակների սլաքածե աշտարակների և բերդապետերի ավերակները, — այդ ամենը խոսում է անցած-գնացած հզոր կյանքի մասին, ալ արյան մասին, նշանավոր եպիսկոպոսների ոսկե գավազանի մասին, էպիկական մարտերի մասին, Դքսի, Թագավորի մասին — թագավորների մասին (նրանցից ո՞րն է իսկական), այն մասին, որ այստեղ եղել են Օռեանի կույսի զորքերը։

Հիմա փողոցներն ամայի են։ Քաղաքային տների պատերի միջև, որոնց նեղ որմնախորշերում գտնվող գոները մի օանդաստիճանով վեր էին բարձրացած և ամուր փակերով կողպած, հեռվից կարելի է լսել հին սալարկով անշտապ քայլող անցորդի թնդուն ոտնաձայնը, իսկ երկնքում՝ ճիշերը սերմնագուազների, որոնք իրենց ծանր թոփշքով շըրշագծում են եկեղեցական աշտարակները սև փառապսակով։

Թասան բնաշնչվում է։ Եվ երանություն է վայելում։ Նա աեղի պակասություն չի զգում։ Հողը հարուստ է հյութերով, սահանջները բավարարված են, ձգտումները սահմանափակ են։ Անհանգիստ երջանկություն որոնողները սերնդից սերունդ մեկնում են Փարիզը նվաճելու։ Մնացածները գըտնում են, որ իրենց տեղը լայնացնել է։ Անկողինն ազատ է։

շուռումուն արի ինչքան ուզում ես: Պատերազմից հետո ազատ տարածությունն ավելի շատ կլինի: Պատերազմը որդիներին տանում է: Բայց ոչ բոլորին: Իսկ վաղօրոք անհանգստանալու համար երևակայությունը չի բավականացնում: Մինչդեռ սթափի բանականությունը արդեն ծանր ու թեթև է անում՝ օգուտը շա՞տ է թե՞ քիչ: Թեթև կյանք, համեղ կերակուրներ, կինեմատոգրաֆ և կաֆե. որպես իդեալ—գորանոցային եղջրափող, իսկ առօրյա գործածության համար— ձիերի բազար: Մարդիկ ուրախ են, ոչ ոքի չի հուզում նորությունների, հարձակումների, նահանջների փոփխական շփոթը. այստեղ դրա գինը լավ գիտեն: Գերմանացիների առաջ նահանջող ուսւների մասին ասում են.

«Եհ, եթե այդ տղաները շարունակեն նույն ոգով, նրանք մեզ կմիանան շրջանց ճանապարհով, Սիրիրով և Ամերիկայով...»:

Բարեկեցությունը հարթել է սուր անկյունները, փափկացրել է կոշտությունը, դաժանությունը... (Կանգ առ Զգո՞ւշ եղիր, եղբայր: Շատ մի վստահիր...):

Հանդարտություն... Քնաբեր խոնջանք... Աննետա, դուք՞՞ւ չես: Չէ՞ որ դու խաղաղություն էիր փնտրում:

«Խաղաղությո՞ւն... Զգիտեմ: Խաղաղությո՞ւն... Թերեստ Բայց դա իմ խաղաղությունը չէ: Եվ դրանում չէ խաղաղությունը...»:

«Քանի որ խաղաղությունը պատերազմի բացակայություն չէ: Դա առաքինություն է՝ ծնված հոգեկան ուժից»:

Հին գավառի քնի թագավորությունից, գավառ, որ շըրշափակվում էր խաղողի այգիներով ու վարած դաշտերով բլուրների օղակով, որ հարմարավետ տեղավորվել էր Ֆրանսիայի ուղիղ կենտրոնում, ուր ուազմական թնդանոթների դղրդոցը հասնում է խլացած, ուր չի հասել գորքերի հեղեղը, օղակ կազմելով, ինչպես գետը, որը պտույտ է տալիս անսասան լեռնային զանգվածի շուրջը (Երկու տարի հետո այստեղ ամերիկացիները ճամբար կշինեն և աշխատություն կմտցնեն քնկոտ քաղաքը, բայց շուտով կձանձրացնեն

նրան), — ահա այդ քնի թագավորությունից նույն հոտն է փշում, ինչ հոտ փշում էր դպրոցական դասարաններից, որտեղ ամուս փակված դռների ու լուսամուտների հետեւ վում, վառարանի բվզոցի տակ, փոքրիկ մարդկանց հոգիներն ու մարմինները կամաց-կամաց տապակվում են իրենց յուղով:

Գրանց երեք քառորդը՝ արվարձանային դաստակերտ ունեցող մանր բուրժուաների կամ հարուստ գյուղացիների որդիներն էին: Ոմանք էլ (դասարանում երկու-երեք հոգի) որդիներ էին նշանավոր քաղաքացիների, որոնք պատկանում էին տեղի հասարակության և երուցքին». Հին դատավորական բուրժուազիային կամ շինովնիկությանը նրանց գժվար չէ զանազանել, թեև բոլորի վրա էլ ինքնամփոփության կնիք կա, որ մանուկների երեսին է դնում դպրոցական դաստիարակությունը և ուսուցիչների դեմ կազմակերպված լուս դավադրությունը, չնայած այդ գնշիկները ամբողջ տարատեսակությամբ հանդերձ իրենց վրա կրում են այն քանդակագործի մատների հետքերը, որը տեղական կավից ստեղծել է մարդկանց սույն տեսակը: Նույն այն քանդակագործի, որը քարե արձաններ է կերտել նրանց և կեղեցիներում: Նմանությունն աշքի է զարնում: Այդ վարագային գլուխները կարելի է առանց որևէ վնասի դնել սրբերի անգլուխ արձանների վրա (համա թե սրբե՞ր են), որոնք պատսպարվել էին որմնախորշերում: Այդ մանուկներն իրենց տաճարի ամենախսկական ծոռներն են: Դառնութալի է. «Դեռ կրակը ծխում է»: Բայց այնքան էլ հանգըստացուցիչ չէ: Քանի որ, խղճով ասած, տաճարի մեր սրբերը երբեմն բավական մեծ խարդախներ են լինում: Կամ չուտ բարեպաշտներ: Աննետայի մոտ, նրա «փարախում» երկու տեսակն էլ կարելի էր գտնել, բայց լրիկացած ձևով: Երբ հին գինին շշերի մեջ են լցնում, փունջն արդեն այն չէ:

Ամենաանշնորհակալ հասակի այդ տղաների դեմքերին, — անկախ նրանից, նիհար ձն թե թմբլիկ, անկանոն գծերով հն, անհամաշափ թե ծոմոված: Աննետային հատկա-

պես ապշեցնում էին երկու գիծ. կոպտովթյունը և խորա-  
մանկությունը. Արտաքինը շատ տիպիկ էր տեղացիների  
համար. երկար, կորածև քիթ— Վալուաների<sup>1</sup> բնորոշ քիթը,  
կողքը շողշողուն, զգուշավոր հայացքով աշքեր, ծիծաղե-  
լիս— վաղաժամ կնճիռներ քունքերին, դեղին ժանիքներով  
փոքրիկ աղվեսի դնչիկ, մի կողմի վրա թեքված ու դուրս  
ցցված, որպեսզի ծիծաղի կամ ծամի— ոետին, եղունգներ,  
թղթի գնդիկ... Աննետան, իր ամբիոնում ուղղակի գաղանի  
որջի առաջ կանգնած որսորդ է զգում իրեն։ Որսորդ՝ թե՛ որս։  
Ո՞վ կդառնա որս— ի՞նքը թե նրանք։ Եվ ինքը և նրանք  
գարանակալում են միմյանց։

Պետք է մատը հրահանի վրա սլահել։ Թող նա զգուշա-  
նա՛, ով առաջինը իշեցնի աշքերը։

Ստիպված եղան հանձնվել նրանք... Առաջին ստուգու-  
մից, առանց քաշվելու զննումից, քմծիծաղից, փսփսալուց և  
հարեւանի կողքը անխնայորեն բգելուց հետո— կոպերը  
իշան։ Բայց նրանց տակից նայում էր թաքնված, նենգա-  
վոր հայացքը բռնել, իսկ ինքներդ բռնված եք։ Զեր ամե-  
նաաննշան շարժումը նկատվելու է և ընդգծվելու դեմքի  
ծամառությամբ, որը վայրկենապես մի մարդու նման  
կկրկնեն բոլորը։ Իսկական անլար հեռագիր։ Բոլորը թվում  
են անշարժ, անմեղ (բառի տառացի և փոխաբերական  
իմաստով), բայց նստարանի տակ ոտքերն այս ու այն  
կողմ են շարժվում, կոշիկները քերծում են հատակը, ձեռ-  
ները պրպտում են գրանի խորքերում կամ ճմկթում են։  
Հարեւանի ոտքը, աշքերն աշքով են անում, իսկ լեզուն ներ-  
սից սեղմվում է այտին ու նրա վրա փոքրիկ բլրակ կազ-  
մում, նրանք ոչինչ չեն տեսնում— և ամեն ինչ տեսնում են։  
Ռւսուցչի բոպեական ցրվածություն, և ծփանքն անցնում է  
ամբողջ դասարանով մեկ։

Այդ բոլորը շատ լավ ծանոթ է ուսուցիչներին, ու թեև  
Աննետան առաջին անգամ է աշխատում այդ անդաստա-

<sup>1</sup> Վալուա— ֆրանսիական թագավորների դինաստիան (XIV—XVI դա-  
րեր)։

նում (մինչև հիմա նա միայն մասնավոր դասեր էր տալիս), առաջին իսկ քայլերից նա իրեն վստա՞ծ է զգում։ Աննետայի մեջ բնաժին մանկավարժական հոտառություն կա։ Նույնիսկ անուրջներով տարվելիս նա վտանգի առաջին իսկ ազդանշանով ձեռքը զենքին է գցում, և այդ գայլի ճուտերը, այդ աղվեսի ճուտերը, որոնք պատրաստ են օգտվել ցրվածությունից և ծոված ու բաց երախով գաղտագողի մոտենալ որսին, կանգ են առնում նրա տիրական հայացքի կրակի առաջ... Մինչդեռ նրանք հույս ունեին սրտներն ուզածի շափ ձեռ առնել այդ կնոջը, որին իրենց վրա հովիվ էին նշանակել...

Այդ փոքրիկ տղամարդկանց կարծիքով, կնոջ տեղը տունն է կամ վաճառասեղանի հետևը։ Այնտեղ նրա թագավորությունն է։ Այնտեղ նրանք նկատում են և կնոջ գլուխը (Աննետայի գլուխը վատը չէ) և երբեմն նրա ձեռնափերը (Աննետայի ձեռքերը արագաշարժ են), Բայց երբ կինը դուրս է գալիս փողոց, նրանց հետաքրքրում են կնոջ մյուս հանգամանքները։ Ինչպես են զննում նրան... Մեծամասնությունը ոչինչ չգիտե— կամ գրեթե ոչինչ։ Միայն մի քանիսն են, որ արգեն մարտական մկրտություն են ստացել։ Բայց ոչ ոք չի ուզում խոստովանել իր անտեղյակությունը։ Իսկ ինչպես են նրանք խոսում այդ ժաման, ինչքան կոպիտ են նրանք, այդ տղաները։ Եթե կանայք կուսեին, թե ինչեր կարելի է իրենց մասին լսել գեռահասների այդ երամակում— իրենց մասին, բոլոր նրանց մասին, ում՝ սրող է բռնել ու զոշափել ամենօրյա կյանքի նեղ շրջանակում գեռահաս տղաների գրգռված երեակայությունը— քույրերի մասին, ամուսնացած և շամուսնացած կանանց մասին, տիկինների և սպասավորուհիների մասին, բոլոր նրանց մասին, ովքեր շրջազգեստ են հագնում, ուզում է դա տեր աստծո շրջազգեստը լինի։ Լուս, փոխադարձ համաձայնությամբ խնայում են միայն մայրերին, և այն էկ ոչ միշտ։ Եվ եթե ներկայանում է մի կին, որը ոչ ոքի հետ կապված չէ, որին ոչ ոք չի պահպանում (որին ոչ ոք չի տիրացել չէ որ ոչինչ ձրի չի արվել), որը ոչ ամուսին ունի, ոչ որդի, ոչ եղբայր։ ապա այդ կինը՝ բոլորի համար օտար—

որս է: Այստեղ արդեն լիակատար ազատություն է տրվում և մտքերին և խոսքերին:

Եյո, բայց այդպիսի որսին, ինչպիսին Աննետան է, մերկ ձեռքերով շես վերցնի: Ո՞վ կսկսի եվ ինչի՞ց սկսել:

Տարօրինակ կին է: Ահա նրանք թաքուն հռհռում են, աշքերով տնտղում են նրան, իսկ Աննետան նրանց է նայում վատահ, խիստ կամ ծաղրական հայացքով, որից թթու խոսքը կոկորդում կանգ է առնում: Աննետան իր սատանայական կռահումով նրանց փակուղու առաջ է կանգնեցնում:

— Ապա, Պիլուա, — ասում է նա, — բերանդ գոնե սըրբից Հոտն այնքան էլ հաճելի չէ:

Պիլուան հարցնում է, ինչի հոտը:

— Նրա, ինչ դու ասացիր:

Պիլուան հավատացնում է, որ ինքը ոչինչ չի ասել, իսկ եթե որեէ բան ասել է, ապա ասել է շատ կամաց, — Աննետան չէր կարող լսել:

— Չլսեցի, բայց զլխի ընկա... Դուրս գնացեք դասարանից, երբ թեթևանալու կարիք եք զգում: Ես ձեր ուղեղը մաքրել չեմ կարող: Բայց գոնե թող ձեր բերանը մաքուր մնա:

Տղաները շփոթվում են: Մի րոպե միայն: Որտեղի՞ց Աննետային տոնի և հայացքի այդքան համարձակություն, որտեղի՞ց այդ նկատողությունները, որոնք շրպացների նման նրանց վրա են թափվում: Աննետան դրանք բաժանում է առանց տաքանալու, աներեր ձեռքով, որով նա հիմա այնքան հանդարտորեն շոյում է իր ոսկեթույր հոնքերը... Օղակը նորից է փակվում նրա շուրջը — դա նրանց թաքուն, խեթ-խեթ նայող աշքերն են: Աննետան զգում է, որ իրեն հետազոտում են ամբողջությամբ, զլխից մինչև կրունկները: Նա հայացքը չի իշեցնում և, երեխաներին դադար շտալով, աչ ու ձախ անսպասելի հարցեր է թափում, նրանց միտքը պահելով անընդմեջ լարված վիճակում: Աննետան լավ գիտե: Թե ինչ է դզզում այդ փոքրիկ, ոչնչով շզբաղված ուղեղների ներսում, դզզում ճանճերի պարսի նման, որոնք դուրս են թոշում գարնան փթթած զլիցինիանե-

րի միջից: Աննետան գիտի... Իսկ եթե չգիտի, ապա տղա-ներն իրենք կաշխատեն բացել նրա աշքերը:

Ահա ձիավաճառի որդին, տասնհինգամյա գիրուկ Շա-նուան,— թեև նրան լիովին՝ կարելի է տասնյոթ էլ տալ,— կարճիկ, պնդակազմ, լիքը-լիքը, պեպենոտ, քառակուսի գանգով, խոզի նման շիկավուն և կարծ մազերով, վիթխա-րի թաթերով և մինչև միսը կրծոտած եղունգներով, կո-պիտ ու խարդախ, հոհուան ու կովարար մի տղաւ Երբ նա շշնջում է, նրա մեջ ինչ-որ բան դզզում է, ինչպես կճու-ճի մեջ ընկած մեծ ճանճը: Նա հայացքը հառում է Աննե-տային, գնահատում է նրա կազմվածքը, մարմնական գե-ղեցկությունները, լեզվով ժտտացնում է, ինչպես գիտակ: Նա գրագ է գալիս (կտեսնե՞ս, ծերուկ), որ ինքը նրան սի-րո մեջ կբացատրվի: Երբ Աննետան դիմում է Շանուային, վիրջինս նրան է նայում իր ձկնային աշքերը շուած: Աննե-տան ձեռ է առնում նրան: Այդ ժամանակ զայրացած Շա-նուան երդվում է, որ դեռ ծաղր ու ծանակի կենթարկի այդ գեղեցկունուն: Նա այնպես է գործը սարքում, որ Աննետան նրան բռնացնում է *graffiti*<sup>1</sup> նկարելիս, եվ սպասում է. ի՞նչ է լինելու Շանուան դեմքին անտարբեր արտահայտություն է տալիս, բայց նրա ժիշետը ցնցվում է փորը գցած ծիծա-ղից: Իսկ մյուս շան լակոտները նրա հետ դավադրության մեջ են և հաճույքից նախապես գոմոում են, հայացքները սկեռելով զոհին, նրա ճակատին, նրա աշքերին, նրա եր-կար մատներին, որոնք թղթի մի թերթ են սեղմում: Աննե-տան, սակայն, աշքն էլ չթարթեց: Նա թուղթը ցած դրեց և սկսեց թելադրել: Շանուան հոհուալով, բոլորի հետ միա-սին գրում է:

Վերջացնելով, Աննետան ասում է.

— Շանուա, դուք մի քանի շարաթով կվերադառնաք ֆերմա, ձեր հոր մոտ: Այստեղի օղը ձեզ վնաս է: Ձեր տե-ղը դաշտն է, ձիերի կողքին:

Շանուան արդեն չի ծիծաղում: Նրա հետույքը չի ուզում

1 Անտիկ շենքերի պատերին արված նկարներ, այստեղ՝ անպարկելա նկարներ:

զերականգնել ծանոթությունը։ Հոր սապոգի հետո Տղան բռ-դոքում է, վիճում։ Բայց Աննետան անդրդվելի է։

— Դե, պատրաստվեք, և շուտո, երիտասարդ։ Այստեղ մսուրքը ձեզ համար շափազանց նեղ է։ Իսկ այնտեղ— ընդարձակություն է։ Բացի դրանից, մի լավ էլ քերիչով կթի-մարեն։ Ահա ձեզ անցաթուղթ՝ տեսուշի համար։

Աննետան թղթի մի թերթի վրա գրում է.

«Ժամանակավորապես հեռացվում է։ Ուղարկել տուն»։

Աշակերտներին, որոնք բերանները բաց լսում են, Ան-նետան ասում է.

— Երնխաներ իմ, զուր տեղը ջանքեր մի թափեք։ Դուք ուզում եք ինձ վախեցնել, որովհետեւ ես կի՞ եմ։ Դուք մի ամբողջ դար ետ եք մնացել, Մեր ժամանակ կի՞նը կատա-րում է նույն աշխատանքը, ինչ որ տղամարդը։ Նա փոխա-րինում է տղամարդուն ծանր աշխատանքում։ Կի՞նը ապրում է միենույն կյանքով։ Նա աշքերը չի կախում, երբ... Դուք ձեզ տղամա՞րդ եք երկակայում։ Մի՛ շտապեք։ Դրան կհաս-նեն բալորը, նույնիսկ ամենասահմանափակները։ Ամբողջ հարցը նրանում է, թե կլինեք դուք, արդյոք, խելացի մար-դիկ, կդառնա՞ք արդյոք ձեր ընտրած արհեստների վար-պետները։ Մեր խնդիրը ձեզ օգնելն է։ Բայց ուժով մենք մեր կամքը շենք փաթաթում ձեր վզին։ Եկեք բացեիրաց խոսենք։ Մենք աշխատում ենք ձեզ համար։ Ուզո՞ւմ եք, թե՞ չեք ուզում դա հասկանալ։ Այո՛, թե՞ ոչ եթե այո, ուրեմն այդպես էլ ձեզ պահեք։

Մի քանի անհաջող փորձերից հետո նրանք համոզվում են, որ գերակշռությունը իրենց կողմը չէ։ Եվ ահա լուս պայմանագիրը կնքված է։ Սահմանները, իհարկե, պետք է զգոն պահպանել։ Հակառակ դեպքում պայմանագիրը կդառնա թղթի մի կտոր։ Եվ դրանք պահպանվում են։ Բայց ընդումին ստեղծվում են նորմալ հարաբերություններ։ Տղաները վերջ են տալիս վիճելուն նրանց գլխին նշանակված ուժի հետ։ Եվ քանի որ նրանց միությունը աննպատակ է դառնում, նրանք բնականաբար կազմալուծվում են և բաժանվում առանձին միավորների։ Ցեղի մեջ Աննետան սկսում է զանազանել ան-հատականություններ։ Նրանցից մի քանիսը— երեք թե չորս

Հոգի՝ բոլոր վեց դասարաններից — առաջացնում են նրա համակրանքը, բայց դա ցուց տալ չի կարելի: Դրանք ավելի նուրբ խառնվածքի և ավելի զարգացած մտքով տղաներ են: Զգացվում է, որ նրանց մեջ ինչ-որ տեղ խորքում, սկսում են հասունանալ ավելի բարդ մտքեր: Նրանք արձագանքում են խոսքին, ուշադրության առկայժումին, հայացքին: Մյուսները գրեթե միշտ նրանց վերաբերվում են կասկածամտուրեն կամ հետապնդում են նրանց: Այդ հայտնի արիստոկրատականությունը, բնական է, հարուցում է նրանց դեմ ամբողջ ցեղի թշնամանքը. քանի որ նրանք զգայուն են, ուրեմն, պետք է ստիպել նրանց տառապելու իմաստ չունի նրանց հանդեպ նախապատվություն դրսեորել — նրանք դրա համար կվճարեն: Եզ, որ ավելի վատ է, նրանք կզանան օգուտ գուրս կորզել նրանից: Այդ փոքրիկ դերասանները, հենց որ իրենց անձի նկատմամբ հետաքրքրություն զգացին, սկսում են իրենք էլ իրենց համարել հետաքրքիր, ուզում են տպավորություն թողնել, և նրանց հոգու մեջ կեղծություն է սողոսկում. չէ որ նրանք բոլորն էլ միենույն ցեղից են — միամիտ և անամոթ ցինիկներից: Եզ Աննետան իրեն հարկադրում է անտարբեր երեալ... Ինչքան նա կուզեր դրանցից մեկնումեկին գրկել — շունենալով իր կողքին նրան: ում կարիքն ինքն այնպես զգում չ... Հեռավոր Մարկը միշտ իր հետ է: Աննետան նրան փնտրում է իր աշակերտներից յուրաքանչյուրի մեջ: Նա Մարկին համեմատում է նրանց հետ: Ու թե՛ Աննետան — դրա համար էլ նա մայր է — ոչ ոքի լի գտնում, որը կարող լինի համեմատվել Մարկի հետ, նա ճգնում է իրեն նարել, անմիշապես Մարկին պատկերացնում է նրանց տեղը, իր առաջ, սեսնում է նրան: Ուզում է ճանաչել նրանց արպեսզի հանաշի Մարկին: Ավելի լավը լունենալու պատճառվ — դրանք հայելիներ էին, որոնք առանձնապես շատ էին աղավազում կորած որդու կերպարը, կերպարը անառակ որդու, որը վերադառնալու է: Իսկ ի՞նչ են նրանք արտացոլում...

Ավաղ, նրանք արտացոլում են մեծահասակներին: Նրանց իդեալը սահմանափակ է: լինել նույնը, ինչ եղել են նրանց նախորդները, նախորդ սերնդի մարդիկ (և անթյալք

այդ ուժը, որը հետ-հետ է գնում, բնորոշում են «նախորդ-գել» բառով): Եթե նրանք ծնվում են յուրաքանչյուրն իր անձնական գծերով, ապա դեռ մինչև դպրոց գնալը այդ առանձնահատուկ գծերը դառնում են հաղիկ որսալի. երեխաները կրում են այն կնիքը, որը նրանց վրա դրել են սեփականատեր-հայրերը: Այդ հայրերը իրենց հերթին նույնպէս կրում են նախորդների ազգակցական դրոշմը, տեսակի ընդհանրության դրոշմը: Նրանք արդեն չեն պատկանում իրենց: Նրանք պատկանում են այն անփոփոխ Ուժին, որը գարեր շարունակ քաղաքներում հավաքել է այդ անապատային շներին, որոնք կրկնում են միենույն շարժումները, հայում են միանման, որոնք նորից են կառուցում մտքի միենույն շնաբները: Կոլեջը դա արհեստանոց է, որտեղ սովորեցնում են մտքի մեքենայի հետ վարվելու տեխնիկային: Ի՞նչ կարող են անել այն անհատները, որոնք ձգտում են ազատել այդ երեխաներին: Ամենից առաջ պետք է նրանց ետ վարժեցնեն մեծահասակների մտքերը զուռվ հագնելու սովորույթից: Մինչդեռ նրանց ամբողջ հպարտությունը հենց այն է, որ իրենց «մեծի» տեղ գտնեն: Որքան նրանք ավելի քիչ սեփական մտքեր ունեն, այնքան ավելի հպարտ են և գոհ... Ա՛խ, աստված իմ! Չէ որ այդ նույն ձեռվ էլ վարվում են մեծերը: Նրանք զմայլանքի մեջ են ընկնում, եթե կարողանում են ազատվել անձնական կարծիքից (ի՞նչ բեռ), խեղղել այն մեծաքանակ մտածողության մեջ, մասսայի կարծիքում, անկախ նրանից, այդ մասսան ինչ է կոչվում — Դպրոց, Ակադեմիա, Եկեղեցի, Պետություն, Հայրենիք թե՝ ոչ մի բան չի կոչվում, այլ հանդիսանում է Տեսակ, կիսակույր հրեշ, որին աստվածային իմաստություն են վերագրում... Իսկ այդ հրեշը սոզում է բախտաբերի, ագաճ կնճիթով որոնումներ կատարելով տիղմոտ ճահճում, որտեղից ինքը մի ժամանակ դուրս է եկել և որտեղ մի օր կիսեղդվի... (Քանի՛ հագարտեսակներ են արդեն անհետ սուզվել նրա մեջ: Բայց մի՞թե մենք նույնպես ի վիճակի չենք լինելու պաշտպանել մեր տեսակը):

Ճահճի վրա լույս են արձակում թափառական կրակներ:

Եկ մի ակնթարթ թվում է, թե նրանց ցոլքը առկայօնում է այդ երեխաներից ոմանց աշքերում... Աննետան աշխատում է բռնել այն... Ի՞նչ են նրանք մտածում կյանքի մասին: Ի՞նչ են մտածում մահվան մասին: Այդ պատերազմը, այդ փոթորիկը, որն ալեկոծվում է բլուրների ստորոտում, այնտեղ, հեռվում, հորիզոնի գծի վրա,— Ի՞նչ արձագանք են դրանք առաջացնում այդ փոքրիկ անթափանցելի ճակատների տակ:

Նրանց մեջ արձագանք է գտնում միայն տրա-տառան, թմբուկների ձայնը, պայթյունների դղրդյունը, «հլյուստրասիոնի» նկարները— հեռավոր մի տեսարան, որը ձանձրալի է դառնում, եթե սկսում է երկարել, այդ ամենը անշափ շատ է տաղտկացնում... Դպրոցականներին ամենից շատ գրավում է բիլիարդը և գրազը: Կամ նրանց դասարանական ինտրիգները: Իսկ երբ մեծանում են— տնային գործերը: շահույթները, վնասները:

Սակայն այնտեղ, խրամատներում, նրանք ազգականներ են են: Շատերն արդեն վնասվել են: Մի՞թե երեխաները չեն հիշում նրանց:

Եթե անգամ հիշում են, ապա առանց հուզմունքի: Բայց դուա փոխարեն տղաները գեմ չեն նրանցով պարծենալի Այդ ժամանակ նրանք իրենք էլ իրենց հերոսներ են զգում— այսպես ասած, երաշխավորագրով: Ճակատից եկած տեղեկությունները նախապես զտվում են: Պատերազմի սարսափները քննարկվում են կոմիկական տեսակետից: Բուդենը ասում է, բարձր ծիծաղելով.

— Այո, բարեկամս: Եղբայրս գրում է, որ իրենք այնտեղ նստած են մինչև վզները աղքի մեջ թաղված:

Կորվոն ասում է, որ բոշերին դանակով են մորթում: Նա ցույց էր տալիս, դա ինչպես է արվում, նա տեսել էր ինչպես են մորթում խոզերին:

Երբ նրանք միմյանց նկարագրում են, թե արկերն ինչպես են պայթում, նրանց աշքերն ուրախ շողշողում են: Զանգակատները, ծառերը, աղիներն ու գլուխները նրանց երեակայության մեջ թոշում են, ինչպես բարբարոսական ինչոր խաղալիքներ: Նրանց զբաղեցնում է իրադարձու-

թյունների միայն դեկորատիվ կողմը։ Այս, վիրավոր միսը, արյունը — նրանք այդ ամենը պատկերացնում են իրենց, և նույնիսկ այնպիսի հաջուկով, ինչպիսին երբեմն զգում են տղաները՝ ցեխերի մեջ չլմփացնելով քայլելիս։ Բայց հոգու ճիշը, որ լսվում է դրա մեջ, չի հասնում նրանց ականջներին։

Ճակատից վերադարձածները ոչինչ չեն անում, որպեսզի այդ ճիշը նրանք լսեն։ Կորվոյի ավագ եղբայրը կարծատեա արձակուրդ է եկել։ Նա տղաներին պատմում է։

— Ես մի ընկեր ունեի, նա շատ փող էր աշխատում— չպայթած արկերի զարկափողակ էր վաճառում։ Նա հըմառորեն իր տասը մատներով դրանք պատում հանում էր, — կապկի ճարպկություն ուներ, — և հավաքում դեռ լրիվ չսառած։ Ես նրան ասում եմ. «Զգո՞ւշ եղիր»։ Իսկ նա ինձ. «Բան չկա։ Սովորական գործ է», Մի անգամ ես նրանից մի քանի քայլի վրա էի, ծառի հետեր։ «Զե՞ռ քաշիր, — գոռում եմ։ — Դա լավ չի վերջանա...»։ Իսկ նա թե՝ «Աննեն ինչից չո չի՞ կարելի վախենալ... Բո՛ւմ։ Արկը պայթում է ուղղակի նրա դեմքին... Խեղճը կորավ-գնաց... Նայում եմ — կոշումն էլ չէր մնացել...»

Նա ծիծաղից թուլանում էր։ Երեխաներն էլ նրա հետ Աննետան, շշմած, լսում էր։ Ի՞նչ էր թաքնված այդ ծիծաղի տակ։ Հիշողությո՞ւն՝ խիստ ծիծաղելի կատակի մասին։ Զգային գրգռվածությո՞ւն։ Թե՞ բոլորովին ոչինչ։

Աննետան մի կողմ կանչեց ծիծաղկոտ պատմողին և հարցրեց։

— Ասացեք, Կորվո։ Ինչ է, այնտեղ իսկապե՞ս այդքան ուրախ է։

Կորվոն նայեց Աննետային և նորից սկսեց ծաղրածուություն անել։ Բայց Աննետան չէր ծիծաղում։ Այդ ժամանակ Կորվոն ասաց։

— Ճիշտն ասած, լավ բան այնտեղ քիչ կա։

Եվ Կորվոն դառը խոստովանությունների հեղեղ պոռթկաց։ Աննետան հարցրեց։

— Բայց ինչո՞ւ չեք նրանց ասում այդ բոխորը, ինչպես որ կա։

Կորվոն ձեռքը թափ տվեց։

— Զի կարելիս Զեն հասկանա... Ասենք, լսել էլ չեն ուզի... Եվ հետո— ինչի՞ համար Զէ որ ոչ մի բան մենք անել չենք կարող...

— Որովհետև չենք ուզում:

— Ուզելը մեր գործը չէ:

— Եթե ձերը չէ, ապա ո՞ւմն է:

Մոլորված Կորվոն պատասխանեց.

— Նրանցը... Պետերինը...

Միտք չուներ այդ խոսակցությունը շարունակել, միտք չուներ հիշեցնել Կորվոյին.

«Պետերը գոյություն ունեն ձեր շնորհիվ: Հենց դուք էլ նրանց ստեղծում եք»:

Կորվոն շարունակում էր ստել ու պարծենալ, ինչպես հենց այդ նույն երեկո համոզվեց Աննետան: Դա նրա համար պահանջ էր: Նա ջանում էր հիմարացնել ոչ թե ուրիշ ներին, այլ իրեն:

Եթե ճակատում եղած մարդիկ ընդունակ չեն ճշմսրտությունը տեսնելու, ցանկանալու այդ ճշմարտությունը, ուրեմն էլ ի՞նչ սպասել նրանցից, ում այդ փորձությունը շրջանցել է,— երեխաներից:

Նրանք կյանքը չեն ճանաշում: Նրանք կախարդված են խոսքերով: Հնչեղ բառի մեջ նրանք իմաստ չեն փնտրում: Աննետան նրանց շարադրություն տվեց այս թեմայով. ով ինչ ուզում լինել: Բրանը երազում է սպա դառնալ— նրա ապակերից մեկը զինվորական էր: Տղան հպարտությամբ գրում է.

«Մի՞թե գետը միշտ չի վերագառնում իր ակունքին»:

Պատերազմը նրանց համար ծաղրանքի առիթ է հանդիսանում: Ավագները— նրանք, ովքեր զորակոշվելու են, եթե պատերազմը շարունակվի ևս մեկ կամ երկու տարի,— դատարկ խոսքեր են կրկնում, որ լսել են ինչ-որ հին խեղ-կատակներից:

— Եթե ձեզ գնդակը խոցի, դուք ցավը չեք էլ զգաւ ելքը, մեռյալներ...

Ապագա հերոսությունը նրանց ազատում է ներկայի

ամեն աւեսակի ճիգերից։ Նրանք չեն ցանկանում «մատը մատին խլիել»։ Նրանք ասում են.

Պատերազմից հետո ստիլված չենք լինի շարշարվել։ Ամեն ինչի դիմաց կվճարեն բոշերը... Օ, նրանց արդեն կլծեն... Դեղի, ձիուկ... Իմ հայրն ասաց, որ մի կես դյուժին այդ զգվելի արարածներից կգնի և կպայտի նրանց... դեղի, շուտ արա...»

Ով ավելի գրագետ է— դատարանի նախագահի տղան, իիաստաբանի տղան— վայելում է թերթերի ճոռոմ պերճախոսությունը։ Լավեղանը նրանց կոռնելն է, իսկ կապյուսը— Հյուգոն։ Մնացածները բավարարվում են պատկերազարդ թերթիկների կեղծ նկարներով։

Աննետան փորձ է անում։ Նա կարթ է նետում։ Իր աշակերտների համար ընթերցում է «Պատերազմ և խաղաղություն» վեպից մի գլուխ— երիտասարդ Պետյայի մահվան մասին— հրաշալի էջեր, որոնք հագեցած են հոկտեմբերյան մառախուղով և փոքրիկ ծառի երազանքով, որը չի ժաղկելու...»

«Աշնան տաք, անձրեսու օր էր։ Երկինքը և հորիզոնը պղտոր ջրի միկնույն գույնն ունեին։ Մերթ իջնում էր մառախուղի նման, մերթ հորդում էր թեք և խոշոր կաթիլներով անձրել»։

Սկզբում նրանք վատ են լսում։ Ռուսական անունների վրա նրանց ծիծաղը գալիս է, իսկ երիտասարդ հերոսի անունը ուրախության մի ամբողջ պայթյուն է առաջացնում։ Վերջապես նրանք հանդարտվում են, ինչպես բաժակի եղրին իջած ճանճերի պարսը։ Լուս են և շշուկով սաստում շաղակրատներին, միայն մեկն է, որի թշերն ուշում են ամեն անգամ։ Երբ Աննետան արտաքերում է պատանու անունը— այդպես էլ մինչև վերջը չի հաջողվում ծակել նրա բթամտության վրա՞ց։ Մյուսները աշքերը չեն հեռացնում Աննետայից... Երբ նա վերջացրեց, հորանջոցներ լսվեցին։ Ամանք տևական անշարժության համար իրենց փոխհատուցում են աղմկոտ իրարանցումով։ Կան նաև այնպիսիները,

որոնք իրենց լավ չեն զգում, նրանք ինչոր բանից դժգո՞հ են. նրանք խորիմաստ փնթփնթում են.

— Ռուսների տախտակը պակաս է...

Իսկ ոմանք էլ, չկարողանալով իրենց զգացմունքներն արտահայտել, ասում են.

— Այս ջեղ զարմանք...

Մյուսները ոչինչ չեն ասում: Այդ նրանք են, որոնց վռա կարգացածն ազգել էր: Բայց ի՞նչ շափով և ինչո՞վ: Դժվար է ասել: Չէ որ նրանց բերնից չի կարելի դուրս քաշել մի խոսք, որ սրտի խորքից գա:

Աննետան ուշադիր ուսումնասիրում է իր աշակերտներից մեկին— վախտ, խարտիշահեր մի տղայի, որ երկար քիթ ունի, նուրբ դիմագծեր և խնամքով սղալած մագեր:

Նրա կուրծքը ներս է ընկած, հազում է և աշքի պոշով նայում: Դա մի խելացի, երկշոտ տղա է: բավական ինքնամփոփ, ինչպես բոլոր այն երեխաները, որոնք զգում են իրենց թուլությունը և վախենում են սրտները բացել: Աննետային թվաց, թե ընթերցանությունը դիպել է նրա զգայուն թելերին: Աշքերը կտրելով գրքից, նա նկատում էր հուզված տղայի հայացքը, որն շտապում էր քիթը նորից խրել տեսրակների մեջ: Այդ տղան ընդունակ է մտածել տառապանքի մասին, որովհետև նա ինքն էլ վախտ, զղային էակ է— չէ որ հաճախ խղճահարության բանալին էգոիզմն է: Ով տառապում է, նա ավելի շուտ կարձագանքի ուրիշների տառապանքին:

Պարապմունքների վերջում Աննետան նրան կանչում է իր մոտ: Նա տղային հարցնում է, թե արդյոք Պետյան, նրա պատանի եղբայրը դո՞ւր եկավ նրան: Տղան կարմրում է, շփոթվում: Աննետան հիշեցնում է նրան այն երազի մասին, որը վերջին գիշերը տեսել էր պոեզիայի նկատմամբ զգայուն երեխան: Ի՞նչ զեղեցիկ էր այդ կյանքը: Հզոր և նուրբ կյանքը, կյանքը, որը կարող էր լինել կյանքը, որը չի լինելու... Հասկացա՞վ արդյոք տղան... Երեխան պատասխանում է գլխի շարժումով, աշքերը կախում է: Բայց Աննետան նրանց մեջ որսաց մի փայլատակող շող...

— Իսկ քո մտքով չի՞ անցել, որ դու էլ կարող էիր լինել Պետյայի տեղը:

Տղան առարկում է:

— Օ, ես չեմ կովելու պատերազմում, Ես այդքան ամուր առողջություն չունեմ: Խնձ ասել են, որ ես թիկունքում կմընամ:

Նա մխիթարվում է և կարծիս պարծենում է իր թույլ առողջությամբ:

— Իսկ մյուսները, Քո ընկերները:

Դա նրա համար միևնույն է: Նա փութեառորեն իր հիշողության մէջ այնպիսի խոսքեր է փնտրում, որ այդպիսի դեպքերում ասում են. «Մեռնել հայրենիքի համար...»: Մյուսները կարող են գնալ մահվան: Նա նորից ինքնավըստահություն ձեռք բերեց: Թշում էր, թե ինչ-որ մելիք լուսը փշեց...

Ասենք, ո՞վ գիտի:

Աննետան անարդարացի է: Նա հույսի համար հիմքեր չի տեսնում: Իսկ հիմքեր քիչ չկան:

Փառավոր մարդկանց այդ սերունդը, այդ էգոիստները, որոնք հանգիստ իրենց ծամոնն են ծամում, իրավունք ունեն քնելու նրանք երկար ճանապարհ են անցել: Նրանք ունեցել են խաչակրաց արշավանքներ և Հարյուրամյա պատերազմ: Դա նրանց չի երիտասարդացնում, բայց խոսում է ցեղի գիմացկունության մասին: Նրանք այնքան շատ բան են տեսել, այնքան շատ են գործել, տարել, տառապել... Եվ ծիծաղում են: Մի՞թե դա հրաշք չէ: Ով ծիծաղում է, նա ապրում է և ամենկին կյանքից հրաժարվելու հակում չունի...

Գոյություն ունեցածից դժգոհ այս աշխարհում այդ սերունդն ընդունում է ինչ գոյություն ունի: Նա ատելություն ու նախանձ չունի դեպի հարկանք. նրա համար սեփական տնից լավ ոչինչ չկա, ոչինչ այնքան հրապուրի չէ. որքան արդ տանը մնալը, խաղաղ և հանգիստ կյանքի քառասուն հինգ տարիների ընթացքում. սովորելով հարմարավետ կյանքի, այդ սերունդը զգվանք է զգում դեպի պատերազմը... Բայց եթե պետք է նա առանց հապաղելու, և առանց

տրտնջալու դինվորական զենք ու զրահ է հագնում... Ինչ-քա՞ն հնագանդ են նրանք, այդ կովարարները։ Նրանք պատրաստ են զոհաբերել ամեն ինչ— ճիշտ է, առանց որևէ խանդավառության,— որովհետև «այդպես պետք է»։ «այդպես ընդունված է դարերից ի վեր...»։ Նայած տեսակետին, նրանք մերթ անմիտ են թվում, մերթ սրտառուց իրականության այդ բարեհոգի և անտարբեր ընդունումը մի դիմ է, որ բնորոշ է մանր մարդկանց, բայց դրա մեջ կա նաև որոշ վեհություն։

Իսկ երեխաները— մենք ի՞նչ գիտենք նրանց մասին։ Այն, ինչ երեսում է արտաքինից, դա սոսկ խաղ է։ Իսկական աշխատանքը տեղի է ունենում ներսում։ Ուսուցիչների ու ծնողների համար տեսանելի է միայն երիտասարդ կեղեր։ Երեխայի մասին ձեզ հայտնի է լոկ այն, ինչը նրան երեխա է դարձնում։ Դուք չեք տեսնում հավիտենական էությունը, որը տարիք չունի և որի կրակը մարմրում է հոգու նվիրական խորքերում, լինի դա մեծահասակի թե երեխայի հոգի։ Դուք չեք կարող իմանալ, դուքս լի՞ ժայթքի արդյոք այնտեղից այդ կրակը... Ավելի շատ հավատ... Ավելի շատ համբերություն...

Բայց Աննետայի մեջ դրանք չկային։

Նա հիշեցնում էր ուժեղ լողորդի, որն ուզում է գետն անցնել և լողալով նետվում է հոսանքին հակառակ։ Կամ չվող թռչունների, որոնք քամուն հակառակ են թռչում։

Փարիզում նա իր շուրջն զգում էր տենդի գարշահոտությունները և թարմ օդ էր որոնում, իսկ մինչ այդ կանգնեցնում էր արգելապատճեղ։ Կամքը և հանդարտությունը... իսկ այստեղ, կպչելով անտարբերության պատին, նա լսեց տառապանքի կանչը։

Տագնապը կրծում էր Աննետային։ Նա դժգոհ է ուրիշներից, բայց սոսկ այն պատճառով։ Որ իրենից գոհ չէ։ Նրանք հենց այն են, ընչ պետք է լինեն, նրանք համերաշխ են իրենց էության հետ։ Իսկ Աննետա՞ն։ Համերաշխ է արդյոք նա իր էռթյան հետ։ Նա ի՞նչ է անում այստեղի Ահա արդեն մի տարի է, ինչ եաւ հնարանդորեն տրվում է հակատագորի կամցին, չըզ իշ ժաշովողին ինչոք տեղ

Դ քաշում։ Սկզբում Աննետան դրանից մեծ բավականություն էր ստանում։ Հետո այդ դարձավ սովորություն։ Հիմա հոգնածություն էր հայտնվելու նրա մեջ ինչ-որ ներքին ուժ — թաքնված, հեռավոր — վրդովվում է։ Աննետան այնքան էլ պարզ չի հասկանում այդ ուժը և անգիտակցորեն տանջվում է նրա առաջ ունեցած իր մեղքով։ Եվ մեղքի այդ անորոշ զգացումը երանգավորում է այն ամենը, ինչ Աննետան տեսնում է, — նրա հորիզոնը շրջափակող փոքրիկ աշխարհը, մարդկությունը՝ փոքրացրած վիճակում։ Երեխաների դեմքերին Աննետան որսում է այն արատների կնիքը, որոնցով օժտված են մեծերը։ Տեսնում է նրանց ճակատագիրը, նրանց անգույն ապագան, խոլ տեղերը, ուր նրանց քշելու է կյանքը։ Տեսնում է իր սեփական որդուն, որը կորել է անծանոթ մարդկանց ամբոխում, այդ մրցնանցում, այդ հեղեղի մեջ, որ հայտնի չէ, թե ուր է շարժվում։ Տեսնում է ինքն իրեն, աներեխա մրցյունաշխատավորին, որը վհատորեն կատարում է իր մեխանիկական աշխատանքը։ Նրան թվում է, թե այդ բոլոր երեխաները — նույնիսկ իր որդին — ծնվել են հրեշտավոր ու ապաշնորհ մայր-Բնությունից... Աննետայի հոգին ցամաքած է, նրա բերանում դառնություն կա...»

Ամեն ինչ Աննետայի ձեռքից գնում է։ Ոչ միայն որդին, որի բացակայությունը նրան դաժան ցավ է պատճառում... Յյլկ ձեռքից գնում է ինքն Աննետան։

Որդին նույնպես տառապում է մոր բացակայությունից... Թայց նա երբեք դա չի խոստովանում։

Մարկը բաժանվեց մորից, կատաղած այն բանի համար, որ Աննետան հրաժարվեց նրանից, նրան բանտ նետեց, զրկեց ազատությունից... Զրկեց... Թայց դեռ կտեսնենք...»

Մի ամբողջ ամիս Մարկը նրան չէր գրում։ Աննետան նրան գրեց մեկ, երկու, երրորդ նամակը, սկզբում մայրականքնքուշ, բայց խիստ տոնով, ակնարկելով, որ եթե եա ուղղովի, ինքը կների նրան (ներելու ներել Մարկին... Այդ բանը Մարկը երբեք չի ների), հետո զայրացած հանդիմանելով նրան տեսական լոռության համար, և վերջապես, սար-

սափից տանջված՝ պագնապահար... Մարկը սեղմում էր ատամները։ Նա պատրաստվեց մորը պատասխանել այն բանից հետո, երբ Սիլվիան, որին Աննետան խնդրել էր գորել, թե երեխային ինչ է պատահել, հայտնվեց լիցեյի քննունարանում և կշտամբեց Մարկին։ Բայց Մարկն այստեղ շանք շխնայեց այնպիսի մի ստեղծագործություն սարքել, որը կարող էր շորության օրինակ ծառայել։ Հանդիմանության կամ բողոքի և ոչ մի ակնարկ։ Ոչ մի դառը խոսք։ (Դա կնշանակեր գոնե ինչ-որ չափով սիրող դատարկել)։ Մարկը քաղաքավարություն։ Մի խոսքով, տրված թեմայով շարադրություն։ Նա ձևացնում էր, որ միայն կամքին հակառակ է իրեն հարկադրում այսուհետև գրել։ կանոնավոր ամիսը երկու անգամ, պատմելով միայն կյանքի արտաքին կողմի մասին և դուրս մղելով իր նամակներից ամեն տեսակի անձնական երանգ, համ, գույն։ Աննետան զուր էր կրկնում խնդրանքը՝ գրել մանրամասն։ Նա հիանալի գիտակցում էր, որ Մարկն ուզում է ցույց տալ իր թշնամանքը։ Աննետան մերթ փորձում էր նրան մեղմացնել, մերթ ճիգ էր թափում դրսեորել նույնպիսի անդրդվելի անգիտություն։ Բայց հետո գալիս էր մի պահ, երբ խլացած սերը բուռն կերպով դուրս էր ժայթքում։ Մարկը սպասում էր այդ ակնթարթներին և հրճվում։ Աննետան հետագայում ափսոսում էր, որ իրեն զսպել չկարողացավ։ Չէ որ դրանից հետո Մարկի նամակների տոնը դառնում էր էլ ավելի անտարբեր ու չոր։ Հիմա Աննետան այդ նամակները բացում էր տանջալից զգացումով։ տեսնես ի՞նչ կկարդա դրանցում։ Եվ այնուամենայնիվ հույսը շէր լքում նրան։ Եվ միշտ հիասթափություն էր լինում։ Աննետան հոգնել էր տառապանքից ու սպասումից։ Երբ գալիս էր որդուն նամակ գրելու ժամանակը (Մարկն ինքը մոր նամակներին միայն պատասխան էր գրում), Աննետան սպասում էր մեկ, երկու, երեք օր... Եվ հանկարծ— պայթյուն, մեկը այն պայթյուններից, որոնց տիրապետել ինքը շէր կարող։ և կշտամբանք և սիրո խոսքեր... Հետո նա կրկին մի ամբողջ ամիս լուսմ էր։ Եթե դա Մարկին չի հուզում...  
Իսկ Մարկը քիչ էր մնում հիվանդանու այդ մի ամսվա

լությունից: Իզուր էր նա իրեն անդրդվելի տղամարդ իրեակայում և ձևացնում, թե մոր նամակներն իր համար եղածքեղած մեկ է: Ինչպես էր նա սպասում այդ նամակներին. Հիմա Մարկի մեջ խոսողը ոչ միայն հպարտությունն էր, ոչ միայն շարախնդությունը. «Մայրս շի կարող առանց ինձ յուլա գնալ...»

Հիմա Մարկն ինքը արդեն չէր կարող յուլա գնալ առանց սիրո այդ ճառագայթումների, որ քամին բերում էր հեռավոր վայրից: Քանի դեռ նրանք կանոնավոր գալիս էին որոշուկի օրերի, Մարկը ձևացնում էր, թե դրանք ընդունում է անտարբեր, կարծես դա այդպիս էլ պետք է լինի: Երբ նամակներն սկսեցին ուշանալ, Մարկն զգաց, որ ինքն ունի նամակների կարիքը: Նա արդեն սպասել չէր կարողանում, բաղձում էր դրանք... Իսկ երբ վերջապես վաղուց սպասվող նամակը գալիս էր, Մարկը ագահորեն վայելում էր դրա հաճույքը... Իհարկե, Մարկը դա չէր խոստովանում իրեն... (Խաբերաշ...): Նա աշխատում էր այդ հաճույքը բացատրել հպարտությամբ, որը հանդգնորեն հայտարարում էր.

«Այս անգամ էլ ես հաղթեցի...»:

Բայց երբ Աննետան բոլորովին լոեց, Մարկը կամա թե Դակամա հասկացավ ցավալի ճշմարտությունը. Նա դրա կարիքն զգում էր... Խոստովանել այդ իրեն: Ոչ: Ոչ... «Ես ոչինչ չգիտեմ, և խոստովանելու բան չունեմ...»:

Գիշերները Մարկը երազում տեսնում էր մորը: Այդ երազներում Աննետան կրկին ու կրկին գալիս էր որդու մոտ,— ոչ թե սիրով, ոչ թե փաղաքշանքով, այլ զոռոզ, խիստ, ծաղրող: Նա վիրավորում էր, ստորացնում էր Մարկին... Մարկը արթնանում էր ատելությամբ համակված, բռնված շաբ ցանկությունների դողով... Ինչ էր նա ուզում: Ուզում էր մորը դաժան խոսքեր ասել, բռնել նրան, ցավ պատճառել, վրեժ լուծել... Բայց մոր ձեռքի հպումից Մարկը գողում էր: Վանում էր իրենից նրա կերպարը... Մարկը այդ կերպարը նորից էր հայտնվում... Այդ հրաշալի, արհամարհանքով սեղմված բերանը... Իր հիշողություններում Մարկն աշխատում էր վիրավորել նրան, նա պատկերում էր ազատ ու արձակ մի կյանք, որով մայրը ինքը,

գուցեն, ապրում է, իսկ իրեն՝ Մարկին արգելում է... Այդ երազներում Մարկը տեսնում էր նաև ուրիշ կանանց, որոնք ամենեին նման չէին Աննետային ոչ դեմքով, ոչ բնավորությամբ, ոչ հասակով,— և այնուամենայնիվ, Մարկը կուրորեն նույնացնում էր նրանց մոր հետ. Դա նրան հնարավորություն էր տալիս սև անդունդում հաշեցնել իր ճընշված զգացումները— հարյուր գլխանի հիդրային...

Ինչպիսի՞ ամիսներ: Տեսդով բռնված, կապված, անսունների համար սարքված այդ փարախում... Շղթան վզի՞դ...

Նրանք շղթայակապ են— այդ մտքերը և այդ երիտասարդ շիկացած մարմինները: Բանտ-պանսիոնը նրանց համար փողոցից ավելի վտանգավոր է: Չանձրույթը փշացնում է բանականությունը: Այդ փոքրիկ դաշտաններին տանջում են անհանգստությունը, սպասումը, տոփանքը, սարսափը, դաժանությունը: Ծծմբային թուիպը, որ ծանրորեն կախվել է պաշարված քաղաքի վրա, կաշկանդում է նրանց միտքը, թունավորում մարմինները: Այդ թուխապը ծանրացէլ է դորտուարների և քրտինքով ողողված երեխանների վրա: Հսկողությունն այստեղ թուլացած է: Այդ օրինակը ցույց է տվել դաստիարակներից մեկը: Նա ամեն երեք օրը վեկ, գիշերը, պահակի դիտությամբ, գնում է: Հարեան սենյակում խոմիացնում է ավագ հսկիչը: Մինչև վաղորդյան արշալույսը գալերայի շղթաներն հանված են: Միայն թե աղմուկ լինի: Մարկը, շունչը կտրելով, լսում է և զզվանքի պոռթկումով փախչում: Լուսամուտով դուրս է թոշում բանտ-պանսիոնի պարտեզը:

Սև գիշեր: Չորս պատ: Վերեկում պղտոր երկինքն է: Լուսարձակի լույսը սահում, որոնումներ է կատարում խավարում... Մի բանտից մյուսը:

Մարկը վագում է դեպի պատը, որը ձգվում է ամայի փողոցի երկարությամբ: Խավարի մեջ սուզված տներ: Կենտրոնից, աղմուկից հեռու այդ բուրժուական թաղամասում ամեն ինչ քնած է: Բնակիչների մի մասը հեռացել է Փարիզից: Մարկը կուանում է, որ թոշի... Զափազանց

բարձր է։ Հանկարծ ոտքնը չկոտրի։ Բայց ցասումը քշում  
է նրան... Հակառակ ամեն ինչի վազել... Եվ ահա նա ար-  
դեն հեծել է պատի կատարին։ Հետո ձեռքերով կախ է ընկ-  
նում ու աշխատում ոտքերով ճեղք գտնել՝ հենվելու հա-  
մար... Փողոցի կողմից մոտեցող քայլերի ձայն է լսվում։  
Մարկը փորձում է նորից վեր բարձրանալ... Արդեն ուշ է։  
Նրան տեսան։ Ներքնում, խավարի մեջ, մի ձայն է լսվում։

— Ուզում ես ցա՞ծ թոշել։

Մարկը հարցնում է։

— Դուք ո՞վ եք։

Բայց երկու վեր բարձրացած ձեռքերը բռնում են նրա  
ոտքից, և ձայնը ասում է։

— Թոփի՛ր։ Ես բռնել եմ...

Եվ ահա Մարկը փողոցում է, մայթի վրա։ Չորս կողմը  
տների մոայլ պատեր են։ Իսկ նրանց վրա՝ գիշեր... Երրորդ  
բանտը։ Կարծես մղձավանշ լինի։ Բաժանմունքներով տուփի։  
Ներս ես մտնում, դուրս ես գալիս, շարժվում ես մեկից  
մյուսը, բայց բոլորը միասին սեղմված է մի մեծ տանիքի  
տակ...

Անծանոթը կանգնեց Մարկի կողքին, սկսեց շոշափել  
նրան։ Նրանք համարյա մի բոյի են։ Լուցկու հատիկ ճտտաց,  
և մի ակնթարթ բոցը երկուսին էլ լուսավորեց։ Դա երի-  
տասարդ մի բանվոր է, հազիվ թե Մարկից մեծ։ Անմո-  
բուք դեմքը հողագույն է, նուրբ ուրվագծված, խելացի,  
հոգնած կոպերի տակից նայում են աշխույժ բիբերը։ Հե-  
տաքրքիր հայացքը սահում է, որոնում, բայց կանգ չի առ-  
հում։ Անարյուն շուրթերի անկյուններում ժպիտի նման մի  
քան կա... Նորից նրանց միջև կախվեց վարագույրը։ Բայց  
նրանք լավ էին նայել միմյանց։ Անծանոթը թեանցուկ  
անելով Մարկին, հարցնում է։

— Ո՞ւր ես գնում։

Մարկն ասում է։

— Չգիտեմ։

— Որ այդպես է, միասին գնանք։

Մարկը պատասխանում է ոլ անմիջապես նա քնազդո-  
քեն զգացանում է։ Նրան հայտնի է, որ շունգիները լի են

վտանգներով։ Անծանոթի մասին նա ոշինչ չգիտի, բայց հոտառությամբ կուահում է, որ նա զունգիներից է։ Մարկի սիրող բարախում է։ Սակայն հետաքրքրությունը հաղթում է սարսափին։ Բացի դրանից, նրա մեջ խոսում է եթե ոչ քաջությունը, ապա կտրիճությունը։ (Քաջությունը գալիս է ավելի ուշ, երբ մարդն արդեն ծանր ու թեթև է արել իր ուժերն ու թուլությունը, իսկ Մարկը առայժմ դեռ դրանք չեր փորձել)։ Վտանգը նրան հրապուրում է... Նա արմունկն ազատում է անծանոթի ամուր սեղմող մատների միջից և, իր հերթին երկու ձեռքով բռնելով անծանոթի ձեռքը, բայց կահնելով նրան տարածության վրա, ասում է։

— Գնա՞նք։

Թե ուր — նա չի հարցնում։

Նրանք վազում էին ամբողջ գիշերը։ Միմյանց շոշափում էին մտքով, ինչպես առաջ՝ ձեռքով։ Քաշվելով, անձարպիկ։ Նրանք վախենում են մեկը մյուսից, բայց նրանցից ոչ մեկը չգիտի, որ մյուսը նույն վախն է զգում... Դա ֆիզիկական սարսափ չէ։ Այդ սարսափը առաջին իսկ շփումից Մարկի մոտ համարյա փարատվեց։ Դա վերադառնում է մեկ-մեկ, երբ նրանք ուս ուսի տված քայլում են միասին։ Շարկը գրպանում շոշափում է դանակը՝ այդ անվնաս զենքը, որը չէր կարողանա օգտագործել։ Նրանք ուզում են որքան կարելի է շուտ խոսակցության բռնվել։ Երբ զրուցում են, սարսափն անցնում է։

Ցերեկ օրով նրանք հեշտությամբ չէին մտերմանա։ Բայց գիշերը, այդ տիսուր փողոցներում, որտեղ լապտերները քողարկված են, ինչպես դիակառքինը, տարբերությունները վերանում են։ Նրանք երկուսն էլ միենույն նախրից են։ Նրանց քշում են միենույն ցանկությունները։ Նրանց սպառնում են միենույն վտանգները։ Հոգնածությունից արդյոք, թե՞ գուցե նրանից, որ ճանապարհը շարունակելուց առաջ ցանկություն ունեցան միմյանց ուսումնասիրել, նրանք մութ հրապարակներից մեկում նստեցին մի նըստարանի։

Անծանոթի անունը Կազիմիր է։ Մի ծխախոտ փաթաթե-

լով, նա մեկնում է Մարկին, Մարկը, որ ծխել չի սիրում, որին ծխախոտը զզվանք է պատճառում, վերցնում է Կազիմիրի ձեռքից և ծխում... Օ՛ ամոթ, նրա գրպանում դատարկություն է— ոչ ծխախոտ, ոչ փող, ի՞նչ անել.. Նա մտահոգված է և վատ է լսում, Բայց այնուամենայնիվ լսում է, և հետաքրքրությունը նորից է արթնանում։ Վստահության ցիմաց վստահություն, նրանք միմյանց պատմում են իրենց ձաւին...

Կազիմիրը էլեկտրատեխնիկ է, Աշխատում է ուազմական գործարանում։ Փոքրիկ բուրժուան, որը ոչինչ չունի, որը ոչինչ չի վաստակում և ընդունակ է միայն ծախսելու, շըշմած է նրա օրական վաստակի գումարով։ Կազիմիրը առանձնապես չի պարծենում իր առավելությամբ։ Նա վաղուց է արդեն այդ գիտակցում։ Նա, թերեւ, դեմ չի լինի փոխել իր առավելությունը բուրժուայի այդ ոչ լիարժեքության հետ, որը իր ծննդյան օրից նրա արհամարհանքի և նախանձի առարկան էր։ Բայց այդ երեկո նա ոչ արհամարհում է և ոչ նախանձում։ Ավելի ուժեղ նրա մեջ խոսում է դեպի Մարկն ունեցած հակումը։ Այդ դեմքը որը հենց նոր ցոլաց նրա առջե.. Այդ անհայտ մարդկային աշխարհը... Եվ նույն այդ զգացումները հուզում են Մարկին։ Նրանք ուզում են ճանաշել միմյանց, Պատնեշները վերացված են։ Մի՞թե Մարկը չի փախել իր դասակարգից (ասենք, ո՞ր դասակարգին է նա պատկանում, այդ անհայր երեխան)։ Նրանք հավասար են։

Բայց Կազիմիրը Մարկից մեծ է։ Ոչ թե տարիներով։ Մի երկու-երեք ամսով— աննշան բան, որի մասին չարժե խոսել, նա մեծ է Փարիզի գերբնակված արվարձաններում կուտակած կյանքի փորձով։

Վեհերոտած Մարկը լսում է լուռ և ագահությամբ։ Եվ այդ լուռությունից միայն շահում է։ Նա կարծես մի բան գիտե, որ անհայտ է իր ուղեկցին։ Վերջապես խոսակցություն սկսելով, Մարկը նետում է մի քանի սեղմ, կցկուր, հեղնանքով լի նախադասություն, որոնք Կազիմիրի մոտ խարուսիկ տպավորություն են ստեղծում։

Բայց այդ տպավորությունը երկար չի պահպանվում։

Բավական էր սրճարանում, ուր նրան բերել էր Կազիմիրը, լուսի տակ ուշադիր նայել Մարկի աղջկական գեմքին։ Այստեղ նա իր աշխույժ և սուր, ինչպես խաղողի մատի բեղիկը, հայացքով անմիջապես որսում է Մարկի երկշուռաթյունը ու միամտությունը։ Այդ հայացքը զաղտագողի մոտենում է կողքից, հետեւում է, գաղտնիքներ է դուրս կորցում, ու դա զայրացնում է Մարկին, և ամաչեցնելով և ձգելով նրան... Մարկը ուզում է փախչել այդ հայացքից կամ պատասխանել նրան մարտահրավերով, բայց տատանվում է, — Մարկի մոտ ոչ այս է ստացվում, ոչ այն։ Նա մատնում է իրեն։ Նա գլխովին մատնված է։

Այդ գիշերվանից Մարկը ջունգլիներում թափառում է Կազիմիրի հետ։ Եթե Աննետայի մտքով այդպիսի կասկած անցներ... Ինչի՞ ասես, որ չհպվեցին նրա երեխայի ձեռքերը, աշքերը, մարմինը։ Բայց բախտը ողորմած է այդ պատանի ամուր հոգիների նկատմամբ, և նրանց խորքում թաքնված միշուկը մնում է անարատ։ Նրանց փրկում է այն, ինչը, թվում է, պետք է կործանարար ազդեցություն ունենար նրանց վրա։ Հետաքրքրությունը։ Նրանք տեսնելու և իմանալու ծարավի են, նրանք ձեռք կպցնելու ծարավի են։ Այու։ Բայց ոոլի ու լանգերե...<sup>1</sup> Նրանք թույլ չեն տալիս, որ իրենց կպշեն...

«Ես հպվեցի քեզ։ Եվ անցնում-գնում եմ։ Ես օտար եմ մնում քեզ։ Ես քեզ օտար էի մինչեւ քեզ ճանաչելու։ Իսկ ճանաչելով, ավելի օտար դարձաւ ինչպիսի՝ զգվանք։ Թոնկատմամբ։ Իմ նկատմամբ։ Հատկապես իմ։ Ես կեղտուտեցի մարմինս, ձեռքերս, աշքերս։ Եվ մոլեգնած լվանում եմ նրանց վրայից կեղտը։ Բայց իմ սիրտը մնաց անարատ։ Կեղտ չկպավ նրան...»։

«...Եվ թանկարժեք մետաղի ինչպիսի՝ փշրանքներ ես հավաքեցի Փարիզի ցեխերի միջից...»։

<sup>1</sup> Ճե՛ռք մի տա ինձ (լատ.)։

Փողոցի և ֆաբրիկայի այդ որդու մոտ, նրա ընկերների մոտ, աչդ հոգիների միահյուսվածության մեջ, որից կազմը-վում է քաղաքների բնակչությունը, առաքինություններն ու արատները միաձուլվել են։ Գարշահոտությունը և աղի օդը։

Սեռական բնազդը՝ սրված նախրի տենդագին գրգռվածությունից, վաղաժամ լարված, մաշված, հագեցած զգացմունքները, կատաղի հետաքրքրությունը, որ ցանկություններից առաջ է անցնում, գրգռում և մարում է դրանք, մոլորին կիրքը, որը շասցնելով բեղմնավորել, հանգում է,— այդ ամենը համտեսված է, այդ ամենը ապրված է։ Իր ամենածաղկուն շրջանում՝ թառամած մարմին, հոգու կոպատրեն տրորված աղվամազ, ոտքերի տակ ոչնչացած խոտեվկ ամբողջ մարմնի վրա պղծված ու անուրախ վայելքի կնիք։ Մի պատկեր, որը մերձբաղաքային անտառ է հիշացնում՝ կիրակնօրյա զրոսանքներից հետո... Ավերածության պատկեր... Կրքի գե, որը շորացնում, կթելով քամում է ազգի կուրծք, Խոց, որը ախտահարում է նրա ընդերքը, նրա գործուն ուժը և պտղաբերությունը...»

Բայց հոգնած հողը բոլոր կողմերից փշում-սրբոամ են քամիները, այրողներից հետո— այն քամիները, որ վերակենդանացնում են։ Բավական է մի հորդ առատ անձրեւ որպեսզի թառամած խոտը ալիք-ալիք բարձրանա, որպեսզի նորից կանաչեն հասկերն ու տատասկափշերը։ Ազաւությունը Աքիլլեսի նիստակն է։ Ազատությունը և սպանում է և կենդանացնում։

Ժամանակից շուտ թրծված լինելով սոցիալական գարբնոցի այրող շնչով, ուր նա նետված է իր ծննդյան օրից, վայելքների և տառապանքների այդ քառսային ձուլվածքի գարշահոտության մեջ, որ միանման կոպիտ է, միանման՝ քայքայիչ, կյանքի կործանարար ապրելակերպի պայմաններում՝ մաքրության մասին ունեցած վայրենի պատկերացումներով, կեղտոտ կացարաններով, ֆիզիկական ու բարոյական սանձարձակությամբ, անառողջ սննդով, հարբեցողությամբ, ուժերից վեր աշխատանքով ու մոլորություններով, Կազմիրն այրվում էր երկու կողմից։

Մտքի հիվանդագին գրգռվածությունը պակաս վտանգավոր չէր, քան մարմնականը։ Բայց ավելի կենարար էր։

Դրանք միասին ստեղծում էին հրեշտավոր հավասարակշռություն, որը մարդու ուժասպառում էր դեռ մինչ հասունությունը և նրան անզոր գարձնում այն ժամին, երբ մարդ դործելու համար զգում էր իր ուժի կարիքը: Բայց դրա փոխարեն նա մարդու թույլ չէր տալիս սուզվել ստոր կըրքերի ճահիճը: Բոլոր ցանկությունների այդ կատաղի շիկացումը, առանց բարոյական սանձի, բայց և առանց նախապաշտումների այդ անհոգ ազատությունը, որոնցով մարդ ստիպված է լինում վճարել քաղքենիական բարոյականության դիմաց, ստիպում էին, որ կենդանի միտքն աշխատի, ստիպում էին հանկարծակի թոփշներով հասնել մինչև լույսի տակ կանաչող թփերին, որտեղ ուռճանում էին հասունացող մտքի բողբոջները: Այծը երկար շարածեց այստեղ: Նա ներքեւ էր իշնում թոփշով, բայց նրա լեզվին մնում էր առողջ կերակրի գրգռող դառնահամը:

Կազիմիրը անարխիստ էր: Ինքնուսի հպարտությունը, լցոնված անհաջող ընտրված և ավելի վատ յուրացված գիտելիքներով, տեսության աստիճան բարձրացված էգոփամբ, կեցվածքամոլությունը, զատարկախոսությունը, սեռական այլանդակությունները, բոլոր հաստատուն արժեքների մոլական ոչնչացումը, անբարոյականությամբ սեթենթելը, մրցակցող խմբերի և առանձին անհատների միջև տեղի ունեցող գգվռտոցը,— այդ բոլորը կործանում էր այն սեգ կառուցը, որի կերտման համար պետք են մաքուր ձեռքերով և մաքուր սրտով մարդիկ, նման Ռեկլյուին և Կրոպոտկինին: Բնակվել այնտեղ կարող են միայն ընտրյալները, միայն սիրագործները: Ամբոխը, այստեղ՝ խուժելով, թքով կծածկի շենքը, ինչպես նա թքով ծածկեց Քրիստոսի տաճարները, բնակեցնելով այնտեղ զգվելի կուռքերի, աստծո միջնորդներին:

Բայց «Ազատություն» բառն իսկ կախարդական ազդեցություն է թողնում նույնիսկ այն հոգիների վրա, որոնց ներս է քաշում տոփանքի հորձանուտը: Այդ բառը նման է հերոսության շնչի: (Պատրա՞նք է... Մի՞թէ մինույն չէ): Այդ բառի մեջ ստրկության ժխտումն է, բոլոր ձևերի ստըրկության, որը շղթայում է այդ հոգիներին... Տիտանի խեղճ

պատճենները՝ Տիտանի, որը զայրացավ բռնակալական «Sic volo, sic jubeo...»<sup>1</sup>-ի գեմ, Ելք այնուամենայնիվ այդ բեկորների մեջ մարդ նորից է գտնում Պրոմեթեսի սրբազն կրակը:

Մարկը տեսավ իր ոտքերի տակից գուրս թռած այդ կրակի կայծը:

Դա այն ոչ երկարատև ու անսովոր ժամանակն էր, երբ թշնամի-եղբայրները՝ անարխիստները, սոցիալիստները, սինդիկալիստները, ոտքի ելան պատերազմի գեմ և, մոռանալով իրենց երկպառակությունները, համախմբվեցին իրար հետ։ Նրանք այնքա՞ն քիչ էին, Ընդամենը մի բուռ մարդիկ, Մյուսները հասարակական կարծիքից վախենալու պատճառով և ռեպրեսիաների հանդեպ ունեցած սարսափից, անցան թշնամու բանակը, ենթարկվելով հին, ազգային հպարտության կամ արյունուղտության կրկին բորբոքված բնագդներին, իսկ գլխավորապես խառնաշփոթության, գաղափարների և խոսքերի խառնաշփոթության ազդեցության տակ, որոնցով, հնդկահավի նման, լցոնված են «գեմոկրատիաները»։ Երբեք ճիզվիտները կազուիստիկայի ծաղկման ժամանակներում իրենց թույլ չէին տալիս այդքան հրեշտավոր կերպով շարաշահել «distinguo»<sup>2</sup> հասկացությամբ, իսկ չէ որ երբ այդ հասկացությունը ամեն ինչի նկատմամբ կիրառում են, նա խճճում է ամեն ինչ. խաղաղությունը և պատերազմը, իրավունքը և անարդարությունը, ազատությունը և հրաժարումը բոլոր տեսակի ազատություններից, թնական է, որ փոքրամասնությունը, բուռն կերպով ձգտելով դուրս պրծնել ազատություն, նորից էր տեղեր գրավում իր գալերայի նստարաններին և, մէջքը ծոելով, թիավարում մտրակի տակ։ 1914 թվի վերջին Փարիզում հաղիվ կարելի էր հաշվել մի տասը անհաշտների՝ այնպիսիների, որոնք հրաժարվում էին լծի տակ մտնել։ Այդ ժամանակվանից նրանց թիվը զնալով մեծանում էր։ Նրանք ստեղծեցին մի երկու-երեք խումբ։ Դրանցից ամե-

<sup>1</sup> Այդպես եմ ուզում, այդպես եմ հրամայում (լատ.)։

<sup>2</sup> Ես տարրերում եմ (լատ.)։

նահեռատեսը դուրս եկալ այն խումբը, որը կապված էր «Վի ուվրիեր» ամսագրի հետ:

Մարկը կիրակի օրերը երբեմն լինում էր նրանց ժողովներին: Լսածը շշմեցրել էր նրան:

Մինչև հիմա նա ոչ մի կասկած չէր տարել պատերազմի անհրաժեշտության վերաբերյալ: Մարկի միտքը շափազանց սուր էր, չհասկանալու համար պատերազմի դաժանությունը, անարդարությունը և, թերեւ, նույնիսկ անմտությունը: Այդ պատճառով էլ նրա համար առավել ևս խիզախություն էր թվում պատերազմն ընդունելու վճիռը: Նրա հասակում մարդ ամենաբարձր առաքինությունը տեսնում է մի բարի մեջ: «արիություն», և անարդար ուժը գաղտնի դեպի իրեն է քաշում ավելի, քան արդարացի ուժը,— դաժան, մերկ, նա ամբողջապես ուժ է և կապված է ավելի մեծ վտանգի հետ: Մարկը հենց միայն հպարտությունից հրճվում էր գոյության պայքարի դաժան օրենքով, որը մարդկանց, ինչպես փակ զամբյուղում գտնվող խեցգետիններին, հավիտյան բախումների է դատապարտում: Միայն չնվնված Պետք է լինել ամենաուժեղը... Հենց այն պատճառով, որ Մարկը թույլ էր, նա սեթենթում էր Աննետայի զայրույթն հարուցող ծաղրական ցինիզմով.

— Գուցե քաղցր մի լինի իմ և ուրիշների համար, Քաղցր չի լինի ընկածների համար: Ինչ աբած, ես պետք է այնպես գասավորեմ ամեն ինչ, որ ուժով կամ խորամանկությամբ հայտնվեմ վերեռում...

Նրան բավականություն էր պատճառում արհամարհական ժպիտով պատասխանել Աննետայի վրդովմունքին ու բողոքին այդ անմարդկայնությամբ պարծենալու դեմ: Նա հպարտությունից զգայնության վրա դնում էր «սենտիմենտալություն» խարանը, իսկ դրանով ասված է ամեն ինչ:

— Անձաշակություն և տափակություն: Ապրանք՝ կանանց համար: Ներկիր մոռւթդու իսկ ես ատամներս կարեմ...

Ճիշտ է, որ Աննետան նույնպես այն ժամանակ ամբողջովին խճճվել էր: Նա գեռ պատերազմն ընդունում էր: Բայց հրաժարվում էր ընդունել նրա գարշելի դաժանությունները, սպանդանոցային նեխած հոտը: Իր խոհերի մեջ

նա մնում էր կես ճանապարհին, խսկ խորքը նայել շէր հաշմարձակվում։ Ասենք, նա չէր էլ կարող իր զայրույթը տրամաբանական փաստարկներով հիմնավորել։ Նրան զեկավարում էր միայն իր ներքին հոտառությունը։ Մարկի համար դա բավական չէր։ Տղամարդուն պետք են ստույգ գաղափարներ,— ճիշտ կամ ոչ-ճիշտ,— որպեսզի նա իր կրքերին սահմանում տա։

Այդ ստույգ գաղափարները Մարկը կարող էր բռերով վերցնել բանվոր դասակարգի տեսաբաններից։ Նրանց զայրույթը խսորեն բխում էր բազմաթիվ փաստերից ու թվերից, որոնց վրա էլ կառուցվում էր այդ զայրույթը։ Մերժայմի անքոնազբոսիկ, գանդաղ, միակերպ, խարիսխումով քարշ եկող ճառը, որտեղ նա փնտրում է ստույգ արտահայտություններ, այդ հպարտ ֆոկիոնյան<sup>1</sup> ազնվությունը, որ պերճախոսության սուր սակր է։ Մոնատի հանգիստ բարեհոգությունը, որի համար կարենոր են ոչ թե նա ինքը, ոչ թե դուք, այլ ուսումնասիրվող փաստերը՝ նրանց հետևողական զարգացման մեջ, Ռոսմերի երկաթյա ստույգությունը, ընկճված կրքոտությունը, Ռոսմերի, որն աշխատում է շհափշտակվել՝ գաղափարին հավատարիմ մնալու համար,— ահա այդ սառցե բոցը սարսափեցնում էր, ցնցում կասկածամիտ, խանդավառ, տենդագին գրգռված բլատանուն։ Ընդհատակի իրադրությունը, որտեղ տեղի էին ունենում ժողովները, վտանգը, որն անընդհատ սպառնում էր այդ փոքրիկ կատակոմբաներին, մշտական զգացումն այն բանի, որ ժողովուրդների վիթխարի մասսաները ճընշում են իրենց ամբողջ ժանրությամբ այդ ճշմարտություն որոնողներին, արդարության այդ մունետիկներին, որոնք իրենց ձեռքին ստվերապատված լույսով լապտեր ունեն,— այդ ամենը նրանց «ընդվզումին», հակառակ պարագլուխների սառնությանը, կրոնական պաշտամունքի ոգի էր տալիս։ Դա փարոսի դողդոջուն լույսի նման կերպարանափոխում էր այդ գորշ դեմքերն ու հոգնած աշքերը։

1 Ֆոկիոն— հին հռեական հոետոր։

Եվ հպարտ փոքրիկ բուրժուան հնազանդություն էր զգում այն բանվորների առաջ, որոնք նրան գերազանցում էին իրենց համարձակությամբ:

Պիտանը — հայրիկ Պիտանը, ինչպես նրան կոչում էին, թէև նա գեռ քառասուն տարեկան էլ. չկար, — նիհար, արագաշարժ մարդ էր, մեծ, մարմնին շհամապատասխանող գլխով։ Աշքի էր զարնում նրա սև մորուքը, որ ծածկում էր համարյա ամբողջ դճմքը և երեսի խիտ մազերի տակ թաքնը ված հաստ շրթունքները։ Նրա գեմքը գեղնավուն գույն ունիր, քիթը տափակ էր, իսկ աշքերը, որոնց մեջ բիթը միաձուվում էր ծիածանաթաղանթին, պուդելի աշքի պետքանակագույն էին, թալշյաւ։

Երբ Մարկը, ժողովում նստած, ուշադիր նայում էր գեղի դահլիճը, նա հայացքով հանդիպում էր լուրջ ժպիտով լուսավորված այդ աշքերին։ Պիտանն այդ միջավայրում քչեղից մեկն էր, որ մարդկանցով հետաքրքրվում էր, ոչ միայն այն պատճառով, որ նրանք բաժանում էին իր գաղղափարները (կամ հետաքրքրում էին նրան անձամբ) այլ այն, որ դրանք մարդիկ էին, հետաքրքրվում էր դեպի մարդն ունեցած սիրո պատճառով — ինչպես մարդուն փարվող շուն։ Նա երիտասարդ բուրժուայի հետ մտերմանալու ցանկություն զգաց։ Նա կուահեց, թե ինչ խումապի մեջ է գտնվում Մարկը։ Իսկ Մարկը բնազդորեն զգաց, որ այդ նյութառնդենդը հեղեղի միջով լողում է իրեն օգնության։ Եվ նրանք հանդիպեցին։

Պիտանն իր տանը հախճապակե և ճենապակե ամանեղեն էր նորոգում։ Փարիզի արվարձաններից մեկում նա մի փոքրիկ կրպակ էր վարձում, որտեղ կատարում էր ավելի նուրբ աշխատանքներ։ Նրա ձեռքից ամեն ինչ գալիս էր և, բացի իր հիմնական արհեստից, զբաղվում էր ամեն տեսակի առարկաների վերանորոգմամբ, լինեին դրանք փայտից, թե քարից, վերանորոգում էր նույնիսկ մանր-մունք զարդեղեն։ Որպես ինքնուրույն արհեստավոր, նա իր ժամանակը տնօրինում էր ավելի ազատ, քան գործարաններում ու արհեստանոցներում աշխատող նրա ընկերները, և

այդ ժամանակը շուայլորեն հատկացնում էր «գործինու» Պիտանը հանձն էր առնում Փարիզի բոլոր ծայրերը հասցնել կոչեր և բրոշյուրներ, ցնցել մոռացկուներին, արթնացնել քնածներին, շեփորել հավաք: Մարկը գնում էր նրա հետ, օգտվելով այն թույլատրումներից, որ երբեմն կարելի էր պարապմունքներից հետո լիցեյում ստանալ, Բայց դա շուտ հոգնեցրեց նրան: Պիտանը հաշվի շէր առնում ոչ տարածությունը, ոչ եղանակը: Նա քայլում ու քայլում էր փոքրինը կաղալով, — հին զինվորի պինդ, հնչեղ քայլովի նա կանգ շէր առնում այնքան ժամանակ, քանի գեռ առաջապրանքը շէր կատարել, և ոչինչ շէր խմում: Նրա վրա ծիծաղում էին. Այնի՞ թե նա չխմելու և ողջախոհության երդում է տվել: Ոչ ոք ոչինչ չի լսել կանանց հետ նրա սրեկ կապի մասին, ամուսնացած էլ չի: Պիտանն ապրում էր պառավ մոր հետ, որին նա ջանում էր թաքցնել ընկերներից և որը Պիտանի վրա բռնակալություն էր անում: Լինելով ալկոհոլիկի որդի, նա մանկությունից գիտեր, թե ինչ ավերածություններ է բերում այդ ախտը: Նա ինքն իր վրա զգացել էր դրա հետեանքները — նրա օրգանիզմը քայլայված էր: Դա Պիտանին ազատել էր զինվորական ծառայությունից: Եվ նույն այդ բանը նրան ստիպել էր հրաժարվել ամուսնությունից: Այնքան էլ ուրախ շէր նրա կյանքը: բայց Պիտանը երջանիկ էր թվում: Ասենք երբեմն նրա հայացքը մշուշվում էր թախիծովի լինում էին շրջաններ, երբ նա իրեն անսահման հոգնած էր զգում, թաքնվում էր ժարդկանցից և, ընկնելով մի տեսակ թմրության մեջ, ուժ շունենալով ոչ խոսելու և ոչ էլ մտածելու, թաղվում էր իր սրչում: Անցնում էր մի քանի շաբաթ, և նա նորից էր հայտնվում — ժպտերես, նվիրված, անխոնչ: Եվ այդ ժամանակ նույն այն ընկերները, որոնք ամենկին շէին անհանգստանում նրա բացակայության ժամանակ, առանց ժտածելու, ծանրաբեռնում էին նրան ամեն տեսակի հանձնարարություններով, որոնցից իրենք գլուխներն ազատում էին: Եվ Պիտանը նորից էր սկսում իր թափառումները և տուն վերադառնում մութն ընկնելիս, խոկ երբեմն էլ ուշ

զիշերին, բաժանելով բոլորը՝ մինչև վերջին թերթիկը, — հոգնածությունից շարդված, թրչված, բայց գոհ:

Մարկը բավականաշափ ուժեղ չէր նման աշխատանքի համար: Պիտանը խղճում էր նրան. նա կարծես ոչինչ էր նկատում, բայց առիթներ էր գտնում կանգ առնելու և շունչ քաշելու համար:

Պիտանի խոսքը գանդապկոտ էր, հանդարտ, սահուն Այդ խոսքը հոսում էր, ինչպես երկու շլյուզների միջև գտնվող շրանցքի մարմանդ ջուրը — լոռության շրջաններով: Անհամբեր Մարկը զուր էր փորձում ընդհատել նրան: Իհատանը, ժպտալով, թույլ էր տալիս, որ Մարկը մինչև վերջն արտահայտվի, որից հետո այնուամենայնիվ իր միտքը հասցընում էր մինչև վերջը: Հեգնանքի հկատմամբ նա զգայուն չէր: Նա իր խոսքերին առանձնահատուկ իմաստ չէր վերագրում: Այդ խոսքերը բխում էին ունիական միտքը պարզ դարձնելու պահանջից: Դրա համար պետք էր այդ միտքը դուրս հանել լոռության կավի միջից, որտեղ այն թաղվում էր: Պետք էր օդի թարմ հոսանք բաց թողնել լճացած հոգեկան կյանքի մեջ, որը մի տեսակ ծածկվում էր տիղմով հոգեկան բթացման ժամանակ, որ ամեն երկու տարին մի անգամ կրկնվում էր: Պիտանի համար մտածելը նշանակում էր մուածել բարձրածայն: Եվ որպեսզի ինքն իշեն արտահայտի, նրան պետք էր լսող: Այդ ճգնավորը ծնվել էր գետի եղբայրությունն ունեցած ձգտումով:

Երբ Պիտանը խոսում էր, դա չէր խանգարում նրա զիւելուն և լսելուն: Մարկը երկար ժամանակից հետո համոզվեց, որ Պիտանը միտն է պահել նրա շոլոր ասածները և այդ բոլորի մասին խորհրդածել է ամեն զերպ, կարծես բահով շուռումուռ տալով յուրաքանչյուր բառը:

Մարկը կարծում էր, որ Պիտանի վրա լավ տպավորություն կթողնի, եթե նրա և ուրիշների առաջ պարծենա մանր բուրժուայի իր դառնություններով, դպրոցականի ընդվզումով, որն ազատվում է իր դասակարգի նախապաշարումներից ու պարտավորություններից: Կազիմիրը և նրա շնուկը նրա դա արժանիքն էին համարում, պահպանելով բնդ որում, տոնի գերազանցությունը: Նրանք կարծես Մար-

կին լավ թվանշան էին դնում. դա շոյում էր նրան և միեւնույն ժամանակ խոցում ինքնասիրությունը: Պիտանը ոչ հավանություն էր տալիս և ոչ էլ արհամարհում էր: Նա գլուխ տմբացնում էր, լսելով Մարկի զեղումները, իսկ հետո վերադառնում էր իր մենախոսությանը: Բայց մի քանի օր անց, մի գործարանից ոչ հեռու, որ գտնվում էր երկար ու բարձր պատերի միջև, որտեղից գուրս էին ցցվում ծխի ծանր օղակներ արձակող վիթխարի ծխնելույզների կարմիր վգերը, սպասելով հերթափոխության վերջին, Պիտանը հանկարծ, առանց որևէ նախաբանի ասաց.

— Բայց և այնպես շատ ավելի լավ կլիներ, եթե դուք ձեր տեղում մնաչիք, պարոն Ռիվիեր:

(Նա միակն էր, որ Մարկի հետ «դու»-ով չէր խոսում):

Այդ խոսքերը Մարկին շփոթեցրին:

— Իմ տեղո՞ւմ: Այդ ոքտե՞ղ:

— Զեր դպրոցում:

Մարկը առարկեց.

— Ի՞նչ եք ասում, Պիտան: Դուրս է գալիս, որ ես իզո՞ւր եմ ձեզ մոտ գալիս, որ ես պարապ տե՞ղն եմ ուզում իմանալ ձեր կյանքը, ձեր մտքերը:

— Ո՞-ոչ, ամենեին: Իհարկե ձեզ չի խանգարի իմանալ մեր մարդկանց տրամադրությունները... Միայն թե, պարոն Ռիվիեր, բանն ախր այն է, որ դուք երբեք չեք կարող իմանալ:

— Ինչո՞ւ

— Ոքովհետեւ դուք մերոնցից չեք:

— Եվ այդ դո՞ւք եք ասում, Պիտան: Ես գալիս եմ ձեզ մոտ, իսկ դուք ինձ ե՞տ եք հրում:

— Ոչ, ոչ, պարոն Ռիվիեր, դուք եկաք, և ես ուրախ եմ, որ ձեզ տեսնում եմ: Մենք երախտապարտ ենք ձեզ՝ կարեկցության համար... Բայց դա չի փոխում այն, որ մեր միջավայրում դուք օտար եք և օտար էլ կմնաք:

— Իսկ դուք ինձ համար օտար չեք:

— Մի՞թե: Ահա այս պատերի հետևում բանվորներ են: Ձեզ ի՞նչ է հայտնի նրանց կյանքի մասին: Կարելի է ձեզ պատմել, թե ինչ են անում նրանք, նկարագրել նրանց

մտքերը, նույնիսկ նրանց տառապանքները։ Բայց յի՞շէ դուք գրանք կզգաք, նրբ չնչ տանըուժ է տառամնացավը, դուք ինձ խղճում եք, բայց եթե ձեր ատամները լին ցավում, դուք իմ ցավը լիք զգաւ։

— Բայց չէ սր ես չի իմ ցավն ունեմ...

— Իհարկե, ես ուրիշների նման գրա վրա լեմ ծիծաղում, — Նրանց նման, ովքեր ասում են, թե իսկական տառապանքը աղքատության տառապանքն է, իսկ բուրժուան հղիացածությունից տիայն մոլեգնում է, երա տառապանքը շոայլություն է ։ Դուք դա հենց շոայլություն է, բացառությամբ հիվանդությունից ու մահից, իհարկե, — թեև նույնիսկ հիվանդությունն ու մահն էլ բոլորի մոտ միատեսակ չեն...

— Միատեսակ չե՞ն,

— Ոչ, բարեկամս, Հիվանդանալ և հանգիստ մեռնել, իր անկողնու մեջ, առանց անհանգստանալու մերձավորների ճակատագրի մասին, — դա նույնպես շոայլություն է։ Բայց ով շոայլության մեջ է ապրում, նա շի նկատում այդ, Կինը պատճառով էլ ուզում է տառապի, իսկական թե ժտացածին, քաղցր բան չէ դաւ օվ ես բոլորին էլ խղճում եմ — և ձերոնց և մերոնց։ Ամեն մարդ իր ցավն ունի, որ ձեած է իր շափով... Բայց մեկը մյուսին նման չէ։

— Մարդիկ միանման են, Պիտան։

— Բայց կյանքը միանման չէ... Այ, օրինակ, վերցնենք աշխատանքը — ի՞նչ է դա ձեզ համար։ Դուք հավատացնում եք (դուք և ձերոնք, ձեզանից և ամենալավերը, այս, նույնիսկ տղրուկները, որ ուրիշի աշխատանքով են ապրում) — դուք հավատացնում եք, որ աշխատանքը գեղեցիկ բան է, աշխատանքը սուրբ բան է և ոչ շի աշխատում, նա գոյության իրավունք չունի... Գեղեցիկ։ Բայց մի՞թե դուք կարող եք պատկերացնել, թե ի՞նչ բան է կարիքից ստիպված աշխատանքը, հույսի նշույլ շունեցող, առանց մտքի, առանց հավատի, որ երբեք կարող ես գրանից ազատվել, աշխատանք, որ սեղմում է մարդու կոկորդը, որ կուրացնում է, թունավորում, երբ մարդ անառունի նման կապված է ցաղացքարին և պտույտ է տալիս

նրա շուրջը: մինչեւ որ աղատվի, այսինքն՝ մինչեւ ոտքերը  
փոփի: Եվ այդ աշխատանքը գեղեցիկ բան է: Սո՞ւբբ է: Եւ կ  
նրանք, ովքեր ապրում են այդ աշխատանքի սլառողներուն:  
ովքեր այդ աշխատանքը խայտառակել են: — Մի՞թե նրանք  
մեկընդմիշտ օտար չեն մնա մեզ համար:

— Բայց չէ՞ որ ես այդ աշխատանքի պառազներով չեմ  
ապրում:

— Ապրում եք: Չեր երիտասարդությունը, որ ոչ հոգս է  
տեսել ոչ քաղց, ձեր դպրոցը, ազատ ժամանակը... Սովորիր  
քնի համար հանգիստ, տարիներով առանց հոգ տա-  
նելու հանապարզօրյա հացի մասին...

Հանկարծ Մարկը, որ փնտրում էր, թե ինչով կարող է  
պաշտպանվել, մի միտք հղացավ, որի մասին առաջ եր-  
բեք չէր էլ մտածել.

— Այդ բոլորը ձեռք է բերված ոչ թե ձեր աշխատան-  
քով, այլ իմ մոր աշխատանքով:

Պիտանն սկսեց հետաքրքրվել, և Մարկը նրան պատմեց  
մոր կյանքի, նրա արիության մասին: Այդ կյանքի պատ-  
մությունն անելով, Մարկն առաջին անգամ դա հայտնա-  
գործեց իր համար. նա և հպարտություն էր զգում, և մի տե-  
սակ քաշվում էր, որի սկատճառը հասկացավ Պիտանի թույլ  
տված մի նկատողությունից հետո:

— Ինչ կա որ, բարեկամս, — հանգիստ ասաց Պիտանը,  
և բայց Մարկը վերջացրեց իր սկատմությունը: — նշանակում է  
շահագործվողը նա է:

Բայց Մարկին դուր չեկավ, որ մատնացույց արին իր  
պարտքը:

— Դա իմ գործն է, Պիտան: Դա ձեզ չի վերաբերում:

Պիտանը չէր առարկում: Նա քմծիծաղեց:

Բանվորները գուրս թափվեցին գործարանից: Նա վեր  
կացավ և մոտեցավ նրանց: Պիտանը նրանց մեջ ծանոթ-  
ներ ուներ: Թույցիկները բաժանելով, նա այդ ծանոթների  
հետ որոշ դիտողություններ էր փոխանակում: Բայց նրանք  
արագ-արագ հեծանիվ էին նստում: ընթրիքի ժամանակն  
էր: Նրանք անփութորեն բացում էին թոռցիկները: Մի քա-

Նիսը ձեռքները խրում էին գրպանները, հրաժարվում վերցնել դրանք:

— Շատ հարկավո՞ր է,— ասում էին նրանք:

Երեք թե չորս հոգի կանգ առան Պիտանի հետ խոսք փոխանակելու Մարկը մնաց հեռվում կանգնած— հիմա նա պարզորոշ գիտակցում էր.

«Ես օտար եմ»:

Երբ Պիտանը վերադարձավ, Առեկը, քայլելով նրա կողքով, կարճ լուսիթյունից հետո ասաց.

— Դուք ինձ համար ոչինչ նոր շհայտնագործեցիք, Պիտան։ Այդ բոլորը ես ինքս էլ էի տեսնում։ Կազիմիրը և մյուսները երբեք ինձ հետ չեն վարվում, ինչպես ընկերոջ հետ։ Նրանք կամ շողոքորթում են, կամ ստորացնում։ Նրանք կարծես պարտանում են և ինձանով և իմ առաջև Հպարտանում են։ Որ կարող են ինձ արհամարհել որպես բուրժուազիայի պատանդ։

— Հի-հի,— Պիտանը կամացուկ ծիծաղեց— հիմա դուք չափն անցկացրիք— մյուս ծայրից Բայց այդտեղ ճշմարտության նշույլ կա։ Ես հենց դրա համար էլ ձեզ ասացի, որովհետև ինքս զգում էի այդ։

Մարկը կանգ առավ, ոտքը խփեց գետնին և գոռաց.

— Դա արդարացի չէ,

Նա շրջվեց, որպեսզի իր թուլությունը ցույց շտա. արցունքները քիչ էր մնացել աշքերից թափվեին։ Պիտանը նրան թևանցուկ արեց։ Նրանք շարունակում էին քայլել։

— Այո,— մտախոհ ասաց Պիտանը,— աշխարհում անարդարացի շատ բան կա։ Մեր հասարակության մեջ գրեթե ամեն ինչ անարդարացի է։ Ահա թե ինչու է պետք վերակառուցել այդ հասարակությունը։

— Մի՞թե չեմ կարող ես էլ իմ լուման դնել դրա մեջ։

— Կարող եք և պետք է դնեք, ինչպես և մենք։ Յուրաքանչյուրն իր ուժերի համապատասխան, յուրաքանչյուրն իր տեղում։ Բայց նոր հասարակությունը, պրոլետարական հասարակարգը (ներեցեք, պարոն Ռիվիեր) ձեզ չի ընդունի։ Ես շատ ցավում եմ ձեզ համար, բայց դա այդպես է...

**Ասենք:** ինձ նույնպես չի ընդունի, քանի որ ես կենդանի շիմ լինի:

— Իսկ ձերո՞նց, ձեր դասակարգի մարդկանց...

— Իմ դասակարգի մարդկանց — այու Նրանց կը նդունին:

**Մարկը** ազատեց իր ձեռքը և ասաց.

— Դուք և ձերոնք — նույն նացիոնալիստներն եք: Դուք կովում եք հայրենիքի հետ: Բայց կովում եք հանուն ուրիշ հայրենիքի: Իսկ այդ հայրենիքը նույնպես անհանդուրժելի է, ինչպես հինը:

**Պիտանը** բարեհոգորեն պատասխանեց.

— Ես անհանդուրժողականություն չունեմ, տղաս: Մարդ կա շիկահեր է, մարդ կա թուխ է, մեկը բարձրահասակ է, մյուսը՝ կարճահասակ, մեկի գույնն սպիտակ է, մյուսինը՝ դեղին — ինձ համար բոլորը մեկ է, նրանք բոլորն էլ միանման սիրում են, միանման արնաքամ են լինում, մահանում: Ես կողմ՝ եմ բոլոր հայրենիքներին: Նրանցից ոչ մեկը ինձ չի իանգարում... Միայն մեր պրոլետարական հայրենիքի կյանքի իրավունքն է, որ շեն ընդունում: Նա պետք է ոժով վերցնի այդ իրավունքը ձերոնցից:

— Եվ միաժամանակ կյա՞նքը:

— Մենք ոխ չունենք ձեր նկատմամբ: Բայց ձեր դասակարգը մեզ զրկում է արկից:

— Ես քիչ արե եմ տեսնում, — տիտուր ասաց **Մարկը**:

— Դուք արև կարող եք փնտրել: Զեր գրքերում, պարապմունքների մեջ, մտքի ազատ և հանգիստ աշխատանքում, ինչ կա որ, փնտրեք հետո մեղ տվեք այդ արեց, մեզ, որ շենք կարող այդքան թանկ արժեցող էքսկուրսիաներ թույլ տալ մեզ: Դա ամենալավ բանն է, ինչ դուք կարող եք անել: Վերադարձեք այնտեղ, որտեղից եկել եք, և աշխատեք մեզ համար:

— Դա ուրախ բան չէ, — ասաց **Մարկը**: — Ապրել առանց ընկերների:

— Բոլորի ընկերը եղեք, և ոչ թե մեկի ընկերը:

— Ուրեմն, նորից միայնություն, — բացականչեց **Մարկը**:

Պիտանը կանց առաջ է, կարևոցելով ժպտաց մատուհնուն, Բայց Մարկն աշքերը մի կողմ շրջեց: Այդ ժամանակ Պիտանը ժեզքը շտկեց, թոքերի մեջ ող հավաքեց, որ փշացած էր գործարաների հոտերով, և ասաց.

— Այս գա լավ է: Դա կոփում է:

Մարկը նոթերը կիտեց: Պիտանը խփեց նրա ուսին — նայիր...

(Պիտանն առաջին անգամ նրան դիմեց ռդուառով):

Ամրությունների բարձունքից նրանք տեսան լայնարձակ, մերկ հարթությունը, գործարանային ծխի սյուները — ձմեռային սառցաշունչ նրեկոն նրկնքի կեղտոտ տաշտի մեջ ծանրորեն ոլորում էր դրանք, ինչպես սպիտակեղեն, — իսկ հետեւում մրջնանոց, տներ, տներ, միլիոնավոր կյանքեր, քաղաք — այդ ժոայլ ողբերգությունը: Պիտանը հրցանիկ և լուրջ, շնչում էր ամբողջ կրծքով: Նա ասաց.

— Միայնություն՝ բոլորի հետ միասին — Կրք բուրը եղբայր են բոլորին:

— Եվ բոլորը ողջ-ողջ իրար ուսում են, — գառնորեն ասաց Մարկը:

— Նրանք պետք է ուտեն, — հեշտությամբ ասաց Պիտանը: — Դա օրենք է... Եվ, կնշանակի, նրանց պետք է սնելու Դրա համար ենք մենք ծնվել — որպեսզի մեզնով կերակրենք ուրիշներին: Եվ բոլոր լավ բաներից դա լավագույնն է:

Մարկը նայում էր թուլակազմ արհեստավորի երեսին, որը կարծես ներսից լուսավորված էր, և նրան հաղորդվեց լուս բերկությունը այն մարդու, որը երազում էր կեր դառնալ ուրիշների համար: Նա մտածեց, որ ինքը՝ քրիստոնեական աստվածն էլ եկավ հենց նրա համար, որպեսզի կեր դառնա... Օ՛, ինչ բարբարոսական մարդկայնություն... Մարկը լավ էր հասկանում այդ մարդկայնության վեհությունը, բայց գեռ շատ երիտասարդ էր՝ դրան ձգտելու համար...

«Ո՞չ! Կեր շղառնա՛լ... Այդ դեպքում ավելի լավ է, մարդ ինքն ուտի»:

Մարկին հուզեցին, բայց և հիասթափեցրին ուրիշ ափի այդ մարդիկ, ափ, որտեղ նա չկարողացավ վայրէջք կատարել, և հիմա Մարկը նման էր մի թռչունի, որը կախված է երկնքի և երկրի միջև, չիմանալով որտեղ ապաստան դրտնի: Հարազատ բնից նա պոկվել է, վերագառնալ այնտեղ նա չի ցանկանում, բայց նա դեռ չափազանց երիտասարդ է՝ իր սեփական բույնը կառուցելու համար, և որտե՞ղ կառուցի: Որտե՞ղ ապաստան գտնի մինչեւ այն օրը, երբ կզա սեփական օջախը հիմնագրելու ժամանակը: Ի՞նչ ճյուղի վրա հենվի: Կասկածը կերել էր դեռ նախօրեին նրան համակած նախապաշարմունքները: Շարունակելով կառչած մնայ նրանցից և չիմանալով ինչով փոխարինել գրանք, նա զգուժ է, որ այդ նախապաշարմունքներն արդեն փոշեցրիվ են լինում: Գաղափարների աշխարհում, որն այնքան շատ բան է նշանակում քաղաքի պատանու բորբոքված ուղեղի համար, այդ տասնհինգամյա տղան միայնակ է և կորած, նա ձեռքը գցելու տեղը չունի:

Մարկը նորից հանդիպեց Պերքետտա-Մարսելինայի հետ, իր նման փախստական, այծոտն Պանի շրթունքներով աղջկա հետ: Այս անգամ Մարկը այդ շրթունքները ճաշակեց: Նրանց վաղեմի հանդիպումները սանդուղքի վրա վերականգնվեցին, բայց ավելի ժամ և արածության վրա: Մարկը փնտրում էր նրա գիրկը, որպեսզի թաքնվի այնտեղ: Որքան էլ այդ աղջիկը հեռու էր գնացել այն ամենից, ինչ լքել էր, Մարկը նրա համար հարազատ կողմերից եկած բաններ էր: Չէ որ նրանք նույն հարկի տակ են եղել: Նրանք նվազում էին միենաւն փողրակի եզրին: Մոռացության մատնված քաղաքի անսահմանության մեջ, փախստականները փարզում էին միմյանց, որպեսզի տաքացնեն իրենց փետուրները: Մարսելինան կտցում է իր պատանի սիրեցյալի ցնցվող շրթունքները: Այ թե ջերմություն կա այդ տղայի մեջ: Մարկը կարող է բռնկվել ինչպես լուցկին, նա մի տեսակ մոլեգնորեն է տրվում վայելքների աշխարհին—տառապանքների աշխարհին, որը հենց նոր է ինքը հայտնագործել: Մարսելինային դա զվարձացնում է, բայց այդ ամեններն էլ ոչ ամաչկոտ աղջիկը դեպի այդ ամոթխած և

անամոթ Կերուրինոն,<sup>1</sup> որը լափում է աղջկան. տածում է անհասկանալի, գրեթե ձայրական մի զգացում. Մարսալինայի համար դա և տարօրինակ է և տագնապալի: Ինչքան էլ քիչ է գնահատում ընտանեկան կապվածությունը, բայց այդ տղայի համար նա իրեն պատասխանատու է զգում: Մարսելինան Մարկին սեղմում է իր կրծքին, նա հետաքրքրությամբ զննում է տղայի գունատ այտերը, բորբոքված աշքերը: Աղջկան սկզբում ծիծաղեցնում են, իսկ հետո վախեցնում տղայի գիշերային անհետացումները: Մարկը վերադառնում է լուսադեմի ցուրտ ժամերին, թրջված, կուցումած: Նա հագնված է թեթև, անզգույշ է: Նրա մոտ չոր հազ է հայտնվել: Մարկը կրակոտ է, նա ամբողջովին այրվում է: Առաջին իսկ քամին նրան կարող է տանել: Մարսելինան անհանգստանում է և միննույն ժամանակ բորբոքում է կրակը: Նա խաղում է այդ կրակի հետ: Մարկը խանդու է: Մարսելինան նրա հոգին հանում է, նա ոչ մի ամոթ չի ճանաչում: Նրա խիղճը տանջում է, բայց նա սկսածը հասցնում է մինչև վերջ— Մարսելինան պարզապես սպանում է նրան:

Այդ ժամանակ բեմում հայտնվում է Պիտանը, և հենց նիշտ ժամանակին: Նա բոլորին ճանաշում է, բոլորը ճանաշում են նրան: Պիտանի բարությունն ու շիտակությունը, որի վրա ծիծաղում են, ծեր խենթին իրավունք են տալիս տհաճ ճշմարտություններ արտահայտել: Այդ ճշմարտությունները լսում են, հաշվի են առնում դրանք թե չեն, բայց ոչ ոքի մտքով չի անցնում դրանցից նեղանալ: Պիտանը աղջկան ասաց.

— Մարսելինա, եթե դուք ձեր փոքրիկ եղբորը թողնեք ձեղ մոտ, նա ձեզ հետ երկար չի մնա: Նրա վերջն արդեն գալիս է:

— Ես այդ գիտեմ, և նրան շատ եմ ափսոսում, Պիտան հայրիկ,— սկստասխանում է Մարսելինան:— Ես տեսնում եմ, որ նա իրեն կկործանի: Բայց ի՞նչ անեմ: Այդ տղան

1 Մարսելինան և Կերուրինոն— Բոմարշեի «Ֆիգարոյի ամռանության» պերսոնաժներն են:

ոչինչ չի լսում: Նա կույր է և համր Նա քաղցած, ագահ քերան ունի, այդ ծծկեր երեխան: Եվ մի՞թե հնարավոր է նրան հագեցնել: Նա դժբախտ է: Խելագարի նման այս ու այն կողմ է նետվում: Տառապում է, իոկ ինչպե՞ս սփոփել նրան— մարդ շգիտի:

— Այստեղ նա իր տեղում չէ: Նա պետք է իր տանը լինի:

- Չի ուզում:
- Գիտեմ, զիտեմ, չէ որ բունտարական հասակ է:
- Մենք բոլորս էլ այդ հասակում ենք:
- Մի խարեք ձեզ, Մարսելինա: Ձեր հոգու խորքում դուք երազում եք այն հասակի մասին, երբ ինքներդ շրպացներ կբաժանեք այդ վիզրիկ խոռվարարներին:
- Մարսելինան ծիծաղեց և ասաց.
- Ինչ աշած, ես միայն պարտքս եմ վերադարձնելու:

- Վերադառնանք տղային:
- Օ, նա չի սիրում, երբ իրեն հակառակվում են: Ամենաւորքը նկատողության դեպքում նա ձիռ նման քացի է տալիս:
- Չէ որ դուք նրա հետ վազուց եք ծանոթ,— արդյո՞ք մեկնումեկը չկա, որ նրան վերցնի իր հովանավորության տակ:

- Նրա մայրը հետու է:
- Գիտեմ, նա քաջ կին է, իր աշխատանքով է կերակրում որդուն: Չէ որ ոչ մի բանի մասին նա չի կասկածում: Ես ուզում էի նրան գրել Բայց, որքան հասկանում եմ, նրանց հարաբերությունները վատ են, նրանք գժտված են: Դա ինձ ծանոթ է. ըստ երեսութին նրանք շափազանց մտերիմ են միմյանց հասկանալու համար: Նրա աշխատանքը ծանր է, տհաճություններ ունի: Զարժի վախեցնել նրան, եթե կարելի լիներ մի ուրիշ ելք գտնել: Արդյոք մեր տղան այստեղ, աեղում, որեէ ազգականուհի չունի, որը կարող էր նրան վերցնել իր մոտ և հսկել:

- Ունի, ճիշտ է... Սպասիր, Պիտան: Նա մորաքույր ունի, ես նրան հանաչում եմ, սուրբ չի ձեանում, կարող է հասկանու...:

— Ինչ կա որ, — սսաց Պիտանը, — զգացի է Կրա հետիւրսել:

Մարսելինակ լեռցը Խոմուց: Եա չէր ուզում քաժանվել իր աղավնյակից, Բայց նա հիանալի աղջիկ էր, ինքն իրոն ասաց.

«Չէ որ Մարկի մայրն այստեղ չէ, և ես մի տեսակ փոխարինում եմ նրան, ի՞նչ կանեի ես մոր տեղակ, Ոչ, ես չե՞մ կարող նրան թողնել այստեղ: Իմ սիրելի՝ մանշուկ... Միայն մի միջոց կա նրան փրկելու, և պետք է այդ միջոցին գիմել...»:

Եվս մի գիշեր Մարսելինան Մարկին թողեց իր մոտ, իր գրկում: Հետո նա գնաց Սիլվիայի մոտ և Մարկին հանձնեց նրան: .

Սիլվիան տագնապի էր ապրում, ամենատանջալից տագնուպը իր կյանքում՝ դստեր ողբերգական մահից հետո: Այդ կնոջ զլիսին, որը հուսահատ ճիգեր էր գործադրում իրեն մոռացության տալու համար և որի մեջ պատերազմը զզարձանքների և վայելքների ծարավ արթնացրեց, նրան իրականությանը վերադարձնող մի հարված իշավէ Սիլվիան, թերևս, կանխատեսում էր այդ— և առանց որևէ տագնապի, բայց նա երբեք չէր կարծում, թե այդ հարվածը իր մեջ այդպիսի ուժին արձագանք կգտնի... Նրա ամուսինը՝ Լեռպոլդը մեռավ գերության մեջ, գերմանացիների հոռապիտակում: Խեղճը նախապես այդ մասին նամակով հաղորդել էր Սիլվիային.

«Սիրելիս, ներիր ինձ, եթե ես քեզ ցավ պատճառեմ: Ես ինձ այնքան էլ լավ չեմ զգում: Ինձ պառկեցրել են հիվանդանոց, և ես քեզ հավատացնում եմ, որ գերմանացիները լավ են խնամում ինձ: Դժգոհելը մեղք է: Հիվանդասինյակը տաքացնում են, Չէ որ գեռ եղանակները ցուրտ են: Ասում են, որ այդտեղ վառելիքը վատ են մատակարարում, ածուկը չի բավականացնում: Ինչքա՞ն կուզեի ձեզ օգնել: Այստեղից տեսնում եմ, թե գուք ինչպես եք նստել աբհեստանոցում: Ապակիները ծածկվել են եղյամով: Սե-

լիստինալի ձեռքերը մրսում են, նա մատները քսում է կատվի ժեղքին։ Դու երբեք չես մրսում, և քայլում ես արհեստանոցում, տկտկացնում ես կրունկներով և քաշըում վարպետուհիներին, որպեսզի արագանա նրանց արյան շրջանառությունը Բայց գալիս է քնելու ժամանակը. մեր մեջ մահճակալի սավանները խոնավացել են։ Ի՞նչ արած։ Բայց դրա փոխարեն դուք ցերեկը կարող եք զբոսնել, շարժվել, իսկ երբ կարելի է շարժվել— դա արդեն մեծ բան է։ Եթե ես կարողանայի գոնե շարժվել։ Ես ստիպված եմ քեզ ասելու, որ բժիշկները ստքս կտրելն անհրաժեշտ են համարում։ Էհ, ի՞նչ կարող եմ անել— չէ որ ես դրանից ոչինչ չեմ հասկանում, ստիպված հաշտվեցի։ Բայց քանի որ ես շատ թույլ եմ և վախենում եմ դա շկարողանում տանել, որոշեցի նամակ գրել, որ մահվանից առաջ համբուրում եմ ձնու։ Ասինք, երբեք փրկության հույսը շոլետք է կորցնել, Դուցե ես գեռ վերադառնամ ձեզ մոտ իսկ զուցե և չվերադառնամ։ Խնդրում եմ քեզ, սիրելիս, մի զայրանա— չէ որ ես մեղավոր չեմ— և իմացիր, որ իմ բոլոր ուժերով կաշխատեմ հաղթահարել։ Բայց եթե զըժմախտությունը պատահի,— ինչ արած, դու գեռ երիտասարդ ես, կարող ես նորից ամուսնանալ, ես այնքան էլ բացառիկ մարդ չեմ— ինձ նման մարդկանց փոխարինող դժնելը հեշտ է։ Միայն թե աղնիվ լինի, լինի աշխատասեր և հարդի քեզ։ Ինձ այնքան էլ չի ուրախացնում այն միտքը, որ դու ուրիշի հետ ես լինելու, բայց ես ուզում եմ, որ դու երջանիկ լինես։ Թե ինչպես— այդ արդեն միենույն է, ես նախապես ուրախանում եմ դրա համար։ Իմ սիրելի Սիլվիա, մենք իրար հետ շատ վատ բաներ ենք ունեցել և ունեցել ենք լավ բաներ, մենք անխոնջ աշխատել ենք, պատահել է, որ նաև զժովել ենք, բայց մենք միշտ եղել ենք բարի լրնկերներ։ Ես քեզ հաճախ եմ զրոյել։ Ես չեմ եղել— դա լավ եմ հասկանում— այն ամուսինը, որք քեզ պետք էր, եղել եմ այն, ինչ կարսդացել եմ։ Եվ ուժերիս ներածի շրափաշտել եմ չվրդովել քեզ։ Մի զայրանա ինձ վրա, եթե դա միշտ չէ, որ ինձ հաջողվել է։ Համբուրիր Աննետային ու Մարկին։ Մենք միշտ չենք նրանց համար եղել այն, ինչ

պետք է լինեինք: Ես կուզեի, որ դու ավելի շատ զբաղվեիք երեխայով— չէ որ մենք երեխա չունենք: Լավ կլինեք հետագայում նրան մեր գործի մեջ քաշել... Գրեւ այլևս չեմ կարողանում: Այնքան էլ շատ ուժ չունեմ: Ասենք, ի՞նչ կարելի է ասել թղթի վրա... Համբուրում հմ քեզ: Ախտ Սիլվիա, ինչքա՞ն կուզենայի բռնել քո ձեռքը! Մնաս բարով— կամ ցտեսովթյուն: Քո հավատարիմ ամուսինը, որ մտածում է քո մասին, ձեր մասին և իր խոհերում ձգտելու է դեպի ձեզ ամենահեռավոր հեռվից —հողի տակից: Քեզ մոտ թե քեզանից հեռու, եռ ինձ ասում եմ, որ դա այն հողն է, որի վրայով քայլում են քո ոտքերը! Մնաս բարով, իմ կին, իմ սիրելի պառավ, իմ փոքրիկ գեղեցկուհի, իմ սեր: Ամեն ինչի համար շնորհակալություն: Արիացիր: Դժվար է ինձ համար հեռանալ: Ախ, տե՛ր իմ աստված:

### ԱՅՆՊՈՂ

Ինձ մոտ է Գրիբենի 14 թվի հունիսի 11-ի հարյուր տասնհինգ ֆրանկի ստացականը, որը մարված չէ»:

Վերջին տողերը ջնջվել էին: Այդ տողերի վրա արցունքի կաթիլ էր ընկել, որը մասով սրբված էր:

Նամակի հետ եկավ կեռպողի մահվան ծանուցագիրը:

Հիմա՝ միայն Սիլվիան հայտնաբերեց, որ ինքը սիրուժ էր նրան, ուժ հետ քսան տարի ապրել էր: Մինչև հիմա նա կեռպողի մեջ տեսնում էր հիանալի մարդուն, հուսալի գործընկերոջը, և ուրիշ ոչինչ: Մահը ցույց տվեց նրան, որ իրենց միությունը ամենաին էլ զուտ գործնական չէր: Համատեղ կյանքը նրանց միմյանց հետ էր կապել այնպիսի ամուր հանգույցով, որ հմուտ դերձակուհու մատները չէին կարող արձակել այն: Երբ թելը կտրվեց, Սիլվիան արդեն չէր կարողանում զանազանել, թե դա ումն է— կեռպողինը թե իրենը: Ամբողջ կծիկը քանդվեց:

Եվ հիմա Սիլվիան հանկարծ հասկացավ, որ անարդարացի է եղել նրա նկատմամբ, ով հանդիսացել է հենց իր՝ Սիլվիայի մի մասնիկը... ինչքա՞ն էր ինքը ժլատանում,

Տրբ սեր էր շափում այդ նվիրված սրտին տալու համար... Գավաճանությունները, որոնց մասին նա գուցեն չգիտեր, թեև գլխի էր ընկնում... Բայց նթե անգամ դրանք կեռպոլդից թաքնված մնային, միևնույն է, դա չէր ազատի Սիլվիային խղճի խայթերից՝ չէ՞ որ ինքը Սիլվիան գիտեր այդ գավաճանությունների մասին, իսկ հիմա Սիլվիան կեռպոլդին էր. Նրան տանջում էր սնահավատ այն զգացումը, որ, մեռնելիս, կեռպոլդը պտտել է բանալին և, թափանցելով Սիլվիայի հոգու մեջ, այնտեղ ամեն ինչ կարդացել է: Բայց երբ, թվերը համադրելով, Սիլվիան հիշեց ինչով էր լցված իր այն գիշերը, երբ կեռպոլդը մահացու թախիծով համակված փնտրում էր իր ձեռքը, դա մահու շափ ծանր եղավ Սիլվիայի համար: Իզուր էր Սիլվիան իրեն ասում.

«Ես ի՞նչ կարող էի իմանալ...»:

Իզուր էր Սիլվիան իրեն ասում.

«Կեռպոլդը դրանից չէր տառապում...»:

Իզուր էր Սիլվիան իրեն ասում.

«Ի՞նչ օգուտ այդ մասին մտածելուց: Չէ որ անցյալն արգեն չես փոխի...»:

Այ հենց դժբախտությունն էլ դրանում է: Կենդանի մարդուն պատճառած շարությունը կարելի է ուղղել...

«Խեղճ իմ բարեկամ, եթե դու վերադառնայիր, ես ինձ չէի կշտամբի: Ինձ տանջում է ոչ թե այն, ինչ արել եմ: Գա այնքան էլ կարենոր չէ: Եթե դու վերադառնայիր, ես իմ մեղքը կքավեի սիրով: Բայց դու մահացել ես, և իմ պարտքը չի վճարված, ես չեմ կարող այդ պարտքը վերադարձնել քնզ: Իհշ էլ ուզում է անեմ, իմ մեղքը կմնա ինձ հետ: Ինձ թվում է ես գող եմ...»:

Սիլվիան, ինչպես դա յուրահատուկ է Փարիզի հասարակ մարդկանց, շատ զգայուն էր դեպի անարդարությունը: Հատկապես, իհարկե, դեպի այն, որն իրեն էին պատճառում: Բայց նույն ձևով անկեղծ էր դեպի այն անարդարությունը, որն ինքն էր պատճառում ուրիշներին: Տանջալից բան էր դիտակցել, որ այդպես էլ իր վրա է մնալու լավագույն բարեկամի հանդեպ ունեցած իր մեղքը:

Եթե Սիլվիան ավելի երիտասարդ լիներ, ավելի հեշտ ու

շուտ դա կհաղթահարեր և կհաշտվեր այն բանի հետ. ինչն արդեն քախել էք կարող թրբ մարդու առաջ գեռ երկար կյանք չա, ապա սխալ քայլ անելիս իրեն մխիթարում է. նրանով, որ ամեն ինչի գեռ կարող է հասնել. գիտակցելով իր մեզքը մեկք հանդեպ, մարդ ավելի արդարամիտ է լինում մի ուրիշի նկատմամբ: Բայց հիմա, երբ ճանապարհի մեժ մասը արդեն հետեւմ է, ոչ մի տեղ չես փախչի գործած սխալներից: Դու ոտք ես գրել սխալ ճանապարհի վրա, բայց ուրիշ ճանապարհ փնտրելը շափազանց ուշ է, քեզ արդեն չի հաջողվի այն անցնել...

Սիլվիան մռայլ մտորումներով մի հայացք գցեց իր անցած կյանքի վրա: Նրա առջևով անցավ այն ամենը, ինչ եղել է, սկսած ամուսնության առաջին օրից. երեխայի ժնունդը, Աննետայի հետ տեղի ունեցած գժտությունը, Օդետտան, աղետը, վերադարձը գեպի կյանք, Լեռպոլդի բարությունը, այնքան պարզ ու բնական, որ նույնիսկ մարդու մտքով չեր էլ անցնում նկատել այն, պատերազմը, սիրեկանները,— և խեղճը, որը մեռնում էր այնտեղ, հեռվում, միայնակ, զավաճանված իր կողմից... Դա ուրախ բան չէր: Որպեսզի տաքանա, Սիլվիան բնազդորեն մտավոր հայացքը կանգնեցրեց իր համար մնացած երկուսի՝ Աննետայի և Մարկի վրա...

Սիլվիան չեր հասցրել իր խոհերում մոտենալ նրանց, երբ հայտնվեց Մարտելինան և նրան բոլորը անկեղծ պատմեց առանց որևէ բան թաքցնելու և շափազանցելու:

Իսկ այն օրը երեկոյան, երբ Սիլվիան, վախեցած Մարտելինայի պատմածից, պատրաստվում էր գնալ շեցել Մարտելին բերելու տղան ինքը հայտնվեց. նրան հեռացրել էին:

Իրադարձություններն ընթանում էին իրենց կաղգով: Եթե անգամ դիշերը, երբ Մարկը գաղտագողի սողոսկում էր պահսիռն, նա քիթ քիթ դեմ առավ կարգը խանգարող հսկիչին, որը նույնպես ինչ-որ տեղից վերադառնում էր: Նրա խիստ կշտամբանքին Մարկը պատասխանեց, ինչպես հավասարը հավասարին, սառը և գրգռիլ տոնով: Հսկիչը տատանվում էր մեղավորին պատժելու պարտքի և վախը:

միջն, մտածելով, թէ չլինի տղան. որք պատրաստ էր ամեն ինչի և սպառնալիքով նրան էր նայում, մատնության դեպքում հանկարծ իրեն էլ քաշի հետեւից: Հսկիչի խիզճը մաքուր չէր: Բայց պարտքի զգացումը և ինքնասիրությունը հաղթեցին: Մարկին կանչեցին դիրեկտորի մոտ և հեռացրին: Նա բերանը նույնիսկ շրացեց: Զբարեհաճեց գոնե որևէ խոսք ասել— ոչ արդարանում էր և ոչ էլ մեղադրում: Հոռու խորքում Մարկը սկսեց ավելի հարգել հսկիչին, որ նա շվախեցավ:

Մարկի հայտնվելը խիստ գարմացրեց Սիլվիային: Չէ որ ինքը նրա համար նույնպես պատասխանառու էր: Աննետան տղային նրան էր վստահել: Նա քրոջը խնդրել էր Մարկին հետեւել, տեղեկացնել նրա առողջության, լիցեյում նրա վարքի մասին, հանգստի օրերը նրան տուն տանել, սանձած սլահել Սիլվիան, որ քրոջը կշտամբում էր նրա ողուրիտանական խստության համար և լույսայն կանդնել էր երեխայի կողմը՝ մոր դեմ, սանձերը արձակեց: Նա ասում էր, որ երիտասարդությունը ինքը պետք է փորձ կուտակի, որ խելացի դառնալու լավագույն միջոցը հիմարություններ անելն է, որ դա միայն օգտակար է—իր բրդի ծվենները թողնել փշոտ թփուտներում, և որ երիտասարդությունը այնքան էլ հիմար չէ— գլուխկոնծի կտա և ոտքերի վրա կկանգնի: Սիլվիան նույնիսկ անզգություն էր ունեցել այդ բանն ասել Մարկին.

— Ես ճանապարհ եմ դուրս եկել առանց կողմնակի օդնության: Դու նույնպես կտուց ու մագիլներ ունես, և ինձանից հիմար չես: Կարող ես բեղ պաշտպանել: Դու աշքեր ունես՝ տեսնելու համար, իսկ քո գաղանանցում դու զննում ես միայն կապիկներին, որոնք նստում են ամբիոններին և հայացքները հառում սկ գրատախտակին: Դու ոտքեր ունես՝ վազելու համար, բայց յոթից վեց օրը դժանք կապված են նստարանին. նստիր և կուլ տուր հունարենի և լատիներենի քո բաժինը: Բայց գոնե յոթերորդ օրը ազատություն տուր քո աշքերին, քո ոտքերին: Վազվեգիր, բարեկամս, և նայիր այն ամենին, ինչ քեզ դուր է գալիս: Ծանոթացիր կյանքի հետ: Իսկ եթե թեթեակի այր-

վածք ստանաս, փշիր գատներիդ — և զեբց Զոնի կիմառնաս ինչ բան է կրակը, Եկ Հրդեհից կապահովագրվես:

Սիլվիան աշքաթող էր անում, որ ապահովագրել ունեցավածքը, երբ տունն արդին այրվում է — բավական տարօրինակ միջոց է: Նա կրկնում էր այն, ինչ ժողովրդական միջավայրում ասում էին նրա շուրջը. «Մի վիճիր բնության հետ»:

Եկ նա ոչ առանց բավականության իր ուսերից գցեց քրոջ տղայի հոգսը, որպեսզի տրվի իր սեփական գործերին: Իսկ գործերի պակասություն նա չուներ, և Մարկը գիտեր դրանք ինչ բնույթի են, Սիլվիան ոչինչ այդ մասին չէր ասում, բայց և ամենաին չէր թաքցնում ոչինչ: Պատահում էր, որ Մարկը, կիրակի օրը առավոտյան գալով մորաքրոջ մոտ, նրան տանը չէր գտնում. — Սիլվիան տանը չէր քնում: Եթե նրանք իրար տեսած չէին լինում, Սիլվիան նրան մի նամակ էր թողնում և համարում, որ դա բավական է: Նա Մարկին փող էր մատակարարում. թող զվարճանաւ: Այնպես էր լինում, որ նրանք երեք շաբաթով իրար չէին տեսնում:

Սիլվիան երբեք իրեն սուրբ չէր ձեացնում, նա ընդհանրապես կեղծավորությամբ աշքի չէր ընկնում — դրանում նրան ամենից քիչ կարելի էր հանդիմանել: Այսօր, մտածելով այն մասին, թե նա ինչպես էր կատարում քրոջ պատվիրը, Սիլվիան իրեն չէր շոյում հենց նոր հիշատակված այն փաստարկներով, որոնք առաջ մատուցում էր քրոջ տղային: Նա իրեն ասում էր, որ վերջին կես տարվա ընթացքում պարզապես զլուխը կորցրել է, որ նա զբաղված է եղել միայն իրենով և զվարճությունների ջրապատույտում մոռացել է նրա մասին, ով վստահված է եղել իրեն:

Տեսնելով Մարկին, նրա մեռելի սկս գունատ դեմքը, նրա ջղային շարժումները, լսելով շինժու ծիծաղը, որով նա պատում էր մորաքրոջը, թե ինչով վերջացան իր արկածները, Սիլվիան իրեն ասաց. «Մեա սւրա»<sup>1</sup>, Մարկը

1 Իմ մեղքն է (լատ.)

պատում էր կշտամբանք, ոտղը՝ մեկը և մյուսը միաժամանակ։ Մորաքը լուսթյունը զալմացրեց նրան։

— Իսկ դու ի՞նչ կասես։

Սիլվիան պատօսման անձու։

— Հիմա նո քեզ ոչինչ ասել չեմ կարող։ Ծառ ու շատ բաներ պետք է ինքն ինձ ասեմ։

Մարկը սովոր չէր, որ Սիլվիան մտորումների վրա ժամանակ վատնի։

— Այդ ի՞նչ է պատահել քեզ։

— Ինձ հետ պատահել է այն, որ նո աղավաղեցի իմ կյանքը։ Աղավաղեցի իմ ամուսնու կյանքը։ Եվ վախենում եմ փշացնեմ քոնը։

— Բայց դու այդտեղ ի՞նչ գործ ունես։ Իմ կյանքը ինձ է պատկանում։ Ես ինչպես ուզեմ, այնպես էլ կվարվեմ... Եվ հետո, գիտես, այդ կյանքը մեծ բան չարժի։

— Քո կյանքը արժի այն, ինչ դու ինքդ արժես... Ա՞հի, իմ ասածն այն չէ... Նույնիսկ ամենանարժանի համար դա վիթխարի արժեք է։

— Իսկ դու նայիր, թե ինչպես են վարվում կյանքի հետ ճակատում։ Ապա մի խրամատներում լինեիր, կյանքն այնտեղ մեծ արժեք չունի։

— Գիտեմ, Ոչինչ չարժե։ Ահա հենց նրանք էլ ինձնից վերցրին լեռպոլդի կյանքը։

— Լեռպոլդի...։

Մարկը դեռ ոչինչ չգիտեր։ Այդ լուրը շշմեցրեց նրան։ Աւրեմն, ահա թե ինչո՞ւ է Սիլվիան այդքան լրջացած։ Բայց Մարկին թվում էր, որ Հանգուցյալը երբեք մորաքը լուսառ շատ սեղ չի զբաղեցրել։ Նրան զարմացրին Սիլվիայի խոսքերը։

— Այդ պատճառով էլ ասում եմ, որ նո հիմա գիտեմ այդ կյանքի գինը, գիտեմ, որ նրանք սպանություն են կատարել, — և նույնպես։

— Դո՞ւ

— Այու, նո ի՞նչ արի, ինչպես գնահատեցի այդ կյանքը, այդ կապվածությունը... ի՞նչ խայտառակություն... էս, բավական է։ Հիմա արդեն չարժե խոսել այն մասին, ին-

Ար շես կարօղ իոխել Բայց Ի՞նչ կարիք է ուղղել պետք է ուղղել Թու դեռ այստեղ ես Եզ յան պարտը մեղքեց քառ վելն է:

— Ի՞նչ մեղք:

— Զարիթը որը ես պատճառեցի քեզ — որը դու ինքդ քեզ պատճառեցիր՝ իմ թողտվությամբ (դա միանույն բանն է. մի ընդհատիր ինձ): Եզ հետո գիտես, տղաս, բավական է իմ առաջ կոտրատվես: Չէ որ ես Աննետան չեմ: Բոլոր այդ հիմարությունները, որոնցով դու այդպես պարծենում ես — ես գիտեմ ինչ արժեն: Գլուխ գովելու բան չկա:

— Կարմրելու պատճառ էլ չկա:

— Գուցես: Ես չեմ ուզում քեզ նեղացնել: Ասենք իրավունք էլ չունեմ: Չէ որ ես քեզանից ավելի վատ եմ վարդվել: Ես գիտեմ, միշտ չէ, որ կարելի է դիմանալ գայթակըզությանը. Հենց դրանով էլ մենք մարդ ենք: Բայց ես աշքերս չեմ փակում վտանգի առաջ և միշտ կարողացել եմ ճիշտ ժամանակին կանգ առնել: Իսկ այ դու չես կարող: Դու ուրիշ նյութից ես, ինչպես մայրդ, դու ամեն ինչ լուրջ ես ընդունում:

— Ե՞ս: Ես ոչ մի բանի չեմ հավատում, — ասաց Մարկը, կուրծքը դուրս ցցելով:

— Հենց դա էլ լուրջ վերաբերմունք է կյանքի նկատմամբ, վերին աստիճանի լուրջ: Ես, օրինակ, վճռականապես ոչ մի բանի շուրջ խոր միտք չեմ անում: Ես ամբողջովին ներկայով եմ ապրում, դա ինձ լրիվ բավական է: և այդ պատճառով էլ միշտ նայում եմ ոտքերիս առաջ: Եզ եթե պատահում է, ընկնում եմ, ապա ընկնում եմ ոչ շատ բարձրից: Իսկ դու՝ ոչ, դու ոչինչ կիսով շափ չես անում: Եզ եթե կործանես քեզ, ապա կկործանես վերջնականապես:

— Եթե ես այդպիսին եմ, ուրեմն, դրան խանգարել չեմ կարող: Եվ ինձ համար, գիտես, դա միանույն է:

— Բայց ինձ համար դա միանույն չէ: Եվ ես դրան կխանգարեմ:

— Ի՞նչ իրավունքով:

— Եյն իրավունքով, որ դու իմն ես: Այս, իմն ես: Քա

Մորն նա և իմը: Նա քեզ դա չի ասի, նա, որ իրեն դռնաբերում է քեզ Համար, իսկ ես կասեմ: Դրա համար չենք մենք քնզ լինա ինչ, դաստիարակել, դրա համար չենք տասնվեց տարի աշխատանք թափել քեզ վրա, որ դու հիմարի նման մի: Երում մեղ ստեղծածը քարուքանդ անես: Երբ տղամարդ չաւնաս. երբ լիովին վճարես քո պարտքը, այ այն ժամանակ դու ազատ ես քեզ հետ անելու այն, ինչ ուզում ես: Իսկ մինչև այդ, բարեկամս, հիշիր, որ դու պարտք ունես: Գիտես ինչպես է սուլում լորը: «Պարտքդ վճարի՞ր»:

Մարկը համբերությունից դուրս եկավ: Նա բղավում էր, որ ինքը մի խնդրել իրեն պարտք տալ, չի խնդրել իրեն կյանք տալ...

— Դու ապրում ես, բարեկամս: Կատաղի՞ր: Բայց քայլիր ուղիղ: Ես այստեղ եմ, որպեսզի քեզ հետեմ:

Եվ, հանրագումարի բերելով, Սիլվիան կտրուկ ասաց.

— Բավական է այդ մասին: Վերջ...

Եվ սկսեց գործարարորեն անզոր կատաղությունից ցընցվող պատանու ներկայությամբ քննարկել, թե ինչպես վարվի նրա հետ:

— Ամենից լավն այն կլինի, իհարկե, որ գնաս մորդ մոտ:

Մարկը բղավեց.

— Ոչ! Ո՛չ մի դեպքում: Ես նրան ատո՞ւմ եմ:

Սիլվիան հետաքրքրությամբ նայեց նրան, ուսերը թոթվեց և նույնիսկ շպատասխանեց: Նա մտածում էր.

«Խելագա՞ր է... իրենք բոլորն էլ խելագարնե՞ր են... ի՞նչ է արել ինքը նրա համար, ինչո՞ւ է Մարկը այդպես սիրում նրան»:

Սիլվիան սառը ասաց.

— Կնշանակի, մի բան է մնում. կապրես ինձ մոտ կը նդունվես ուրիշ լիցեյ, բայց կգաս-կզնաս, շես գիշերի այնտեղ... իսկ ինչ անցյալին է վերաբերում — դու, կարծում եմ, շես փափագում, որ ես ամեն ինչ մորդ գրեմ: Լավ, ես մի բան կմտածեմ... իսկ ապագայում, լավ իմացիր, որ հիմա քո իշխանությունը ես իմ: Ես հինգ մատիս պես

քո բոլոր խորամանկությունները գիտեմ: Զփորձես ինձ խարել: Դու ազատ ժամեր կունենաս, այսինքն՝ ժամեր, որոնք ինքս հնարավոր կհամարեմ քեզ տալ ես մասդրություն շունեմ քեզ ճնշելու: Ես գիտեմ քո կարիքները, քո իրավունքները: Ավելի շատ, քան դու կարող ես տալ, քեզանից չի էլ պահանջվի: Բայց այն, ինչ կարող ես— այն ամենը, ինչ կարող ես, դու տալու ես ինձ, բարեկամու: Դրա համար ես երաշխավորում եմ: Ես քո պարտատերն եմ:

Աննետային նա գրեց, որ լիցեյականներին համաձարտկի կապակցությամբ արձակել են, և ինքը Մարկին վերցրել է իր մոտ: Այն, որ Մարկը գտնվում է մորաքրոջ հարկի տակ: միայն կիսով շափ հանգստացրեց Աննետային, և նա կիրակի օրը դուրս պրծավ իր հետամնաց ծայրամասից, որպեսզի գնա իր աշբով տեսնի նրանց կյանքն ու կենցաղը: Սիլվիան լավ էր հասկանում քրոջ գալու պատճառը: Նա միանգամայն հնարավոր էր համարում, որ Աննետան կարող է կասկածել քրոջ մանկավարժական տաղանդին, պատառուն ղեկավարելու նրա կարողությանը: Բայց Սիլվիան այնքան անկեղծորեն իր սխալները խոստովանեց, պատասխանատվության այնպիսի այրող զգացում հանդես բերեց, որ Աննետան հանգստացավ: Նրանք երկար խոսում էին լեռպոլդի մասին: Եվ քրքրելով տիսու հիշողությունները, քույրերը զդացին, որ իրենք ավելի մատեն միմյանց, քան երբեք այդքան տարիների ընթացքում:

Որդու մեջ Աննետան շհայտնաբերեց նույնպիսի պատճառներ իր հանգստության համար: Տղայի հիվանդագին տեսքը սարսափեցրեց նրան: Բայց Սիլվիան հանձն առաջ մի երեք ամսվա ընթացքում կազդուրել նրան: Տղայից քնքության գոնե որեւէ նշույլ կորպելու մասին մտածելն անգամ իզուր էր: Նրա տոնի մեջ լսվում էր միենալուն սառը հակահարվածը: Սիլվիան կամացուկ խորհուրդ տվեց Աննետային հարցուփորձ շանել Մարկին: Նրանից քիչ ջանքեր չպահանջվեցին Մարկին համոզելու, որ կիրակի օրը տանը մնա, ուզում էր զնալ, որպեսզի հաղկադրված ըննի:

Ֆոր հետ խոսել։ Նա համարյա ուժով ստիպեց Մարկին խոսք տալ, որ գոնե արտաքին քաղաքավարությունները պահպանվեն։ Իսկ մնացածը... հետո կտեսնենք։ Բնազդը նրան հուշում էր, որ մանկական որոշ համառությունների դրսեորման դեպքում զգուշ մոտեցում պետք է ունենալ։ Չէ որ Մարկի մոտ դա յուրահատուկ հիվանդություն էր։ Սիլվիան հույս ուներ հաղթահարել այդ, բայց այդպիսի դեպքերում հաջողության առաջին պայմանը այն է, որ դրա նկատմամբ ոչ մի հետաքրքրություն չպետք է ցուցաբերել։ Աննետան, լինելով անշափ տաքարյուն, չէր կարող հասկանալ քրոջ խելամիտ քաղաքականությունը։ Սիլվիան չէր էլ բաժանում նրա հետ իր եզրակացությունները։ Նա Աննետային համարում էր նույնպես վիրավոր, որը խնամքի կարիք ավելի քիչ չէր զգում, քան Մարկը, բայց բուժել նրան Սիլվիան չէր կարող։ Աննետան ինքը պետք է բուժեր իրեն։ Եվ բոլորը, ինչ Սիլվիան կարող էր անել այդ բոպեին, դա այն բանին հասնելն էր, որ մոր և որդու միջև թշնամանքը ավելի ուժեղ շրորբոքվի։

Աննետան ենթարկվեց անհրաժեշտությանը — նա որոշ դուրս չկորցել որդուց նրա թշնամության գաղտնիքը։ Կիրակի երեկոյան նա Փարիզից մեկնեց։ Որքան էլ նրա համար դառը լիներ, նա, այնուամենայնիվ, հանգստացավ, տեսնելով, որ տղան, որի համար ինքն այնպես վախենում էր, հուսալի ձեռքերում է գտնվում։

Սիլվիան ստիպված եղավ զինվել իր ամբողջ փորձով, հոտառությամբ, դավադրական դիվանագիտությամբ, եռանդուն և շատ բաներ տեսած փարիզունու ճարպիկ գործնակերով, որպեսզի հետագա երեք ամիսներին կապված պահի փոքրիկ վագրի ձագին, որին ինքը երդվել էր ընտելացնել։

Սիլվիան բնակարանի խորքում Մարկի համար իր սենյակի կողքին սենյակ առանձնացրեց, որի դռներից մեկը քացվում էր դուրս տանող միջանցքի վրա, բայց բանալին դժոնվում էր Սիլվիայի մոտ, որը այդ դուրը բացում էր այն օրերին և ժամերին, երբ քրոջ տղային թույլատրվում էր

իր սենյակում ընդունել բնկերներին, նվազ այդ ժամանակ Մարկը կարող էր համոզված լինել, որ ոչ մեկի անհամեստ աշքը չի կարող թաքուն հետևել, նրա հյուրերին. դա չաստվածալին զինադադար»<sup>1</sup> էր, կամ, գուցե, սատանայի զինադադար.— Սիլվիան երբեք չէր խախտում գաւ, նվազ ճիշտ այդպես էլ նա երբեք հարցուփորձ չէր անում, թե Մարկն ինչ է անում, կարդում է թե՞ գրում իր սենյակում. այստեղ Մարկը գտնվում էր իր տերիտորիայում, և Սիլվիան հարգում էր այդ անձեռնմխելիությունը: Բայց, բացառությամբ «զինադադարի» ժամերի, Մարկը կարող էր իր սենյակից դուրս գալ միայն Սիլվիայի ննջարանի միջով: Մնացած բոլոր ելքերը փակ էին... ճիշտ է, մի անգամ դուրս պրծնելուց հետո նա կարող էր չվերադառնալ: Մարկը նույնիսկ մի անգամ կես-կատակ, կես-լուրջ դրանով սպառնաց իր ցերբերին, որպեսզի հող շոշափի: Սիլվիան, ձգելով վերին շուրթը, նրան պատասխանեց նույն ծաղրական տոնով.

— Իմ սիրելի բարեկամ, դու պատիժ կստանայիր դրա համար:

— Էս, ի՞նչ կանեხիր:

— Հայտարարություն կտայի քո մասին, մոտավորապես այն հայտարարություններից, որ տալիս են կորած շների վերաբերյալ: Եվ կարող ես հանգիստ լինել, որտեղ էլ դու լինես, ես ամեն տեղ իմ մարդիկն ունեմ, կգտնեմ քեզ և բռնել կտամ:

— Ուրեմն, դու ոստիկանության հետ կա՞պ ունես

— Եթե դրա կարիքը լիներ, ոստիկանություն էլ կդիմեի: Ոչնչից չէի խորշի... Բայց ոստիկանությունն ինձ պէտք չէ: Ես իմ սեփական ոստիկանությունն ունեմ: Քո ընկերութիները, սիրելիս, ոչինչ ինձ չեն մերժի:

Մարկը զայրույթով տեղից վեր թռավ:

— Ո՞վ: Ո՞վ: Դա ճիշտ չէ... Ուրեմն, ինձ դավաճանո՞ւմ են: Ուրեմն, ես չեմ կարող բարեկամ ունենալ, նա ինձ

<sup>1</sup> XI—XIII դարերում սովորությունը դադարեցնել ուղմական գործողությունները շաբաթվա վերջին, հինգշաբթի օրից մինչև կիրակի:

կդավաճանիւ ԴՀ ոք, ու մի Տարդ լկա, որին կարելի է վստահել...

- Կա, բարեկամսւ Կողքիդ է:
- Ո՞վ է:
- Եսւ:

Մարկը ցասումնալից մի շարժում արեց, կարծես ինչ-որ մեկին հրում էր իրենից:

— Քի՞չ... Հասկանում եմ, փոքրիկ փաշա... Ինչ արած: Պետք է մի քիչ պաս պահել... Գիտե՞ս ինչ կա, ես ձեռքիցդ շեմ խլում քո սիրելու իրավունքը: Դա հանապազ-օրյա հաց է ամեն մի կենդանի հոգու համար: Բայց այդ հացը դեռ պետք է վաստակել: Աշխատիր: Մարդ եղիր...

Հո դու չե՞ս ուզում երեք Ռիվիերներից միակ անպետք արարածը, ձրիակերը լինել: Տեսնո՞ւմ ես իմ մատները: Ասեղներից ծակծկված են: Ինչքան էլ սիրում եմ իմ ձեռքերը, ինչքան էլ ուզում եմ, որ այդ ձեռքերը սիրեն, բայց ես շափոսացի ձեռքերիս: Ես կեղծ սրբերից շեմ: Կյանքից ես օգտվել եմ, բայց ոչ ոք այդ կյանքը ինձ ձրի շիտվել: Ես դա գնել եմ օր առ օր: Ես շատ եմ աշխատել: Թու էլ աշխատիր... ինձ պե՞տք չեն այդ փքված կերպարանքները: Իմ նախատինքները քեզ համար պատի՞վ են: Ես քող հետ վարվում եմ ինչպես հավասարը հավասարի հետ: Շնորհակալ եղիր... Եվ բավական է: Դատարկապորտ...

Մարկը ամբողջապես եռում էր այս լկտի վերաբեր-մունքից: Նա հաճույքով կկծեր այն ձեռքը, որն այդպես առանց քաշվելու ձգում էր սանձերը, հիշեցնելով Մարկին, որ նա պարտական է այդ երկու կանանց, ուսում է նրանց հացը և ոչ մի իրավունք չունի դեռ նետել ստորա-ցուցիչ յուծը, քանի դեռ չի փոխհատուցել: Բայց ամենից շատ Մարկին կատաղեցնում էր այն, որ նրա մեջ նույն-պես զարգացած էր արդարության զգացումը — այդ անմիտ զգացումը, որը ամուր նստած էր Ռիվիերների մեջ. Մարկը համարում էր, որ Սիլվիան արդարացի է: Ի՞նչ պատասխան տալ նրա այդ հանդգնությանը: Նա պետք է փրկի իր տղամարդկային պատիվը...

Կառ նաև ուրիշ պատճառ: որը նա այնքան էլ հստակ

շեր գիտակցում, այդ ձեռքը, որ նա ուզում էր կծել, իր հմայքն ուներ: Սիլվիան զայրացնում էր Մարկին, բայց միևնույն ժամանակ նաև կախարդում էր:

Մորաքույրն այդ գիտերը Դա նրա զենքի տեսակներից մեկն էր: Եվ Սիլվիան դրանից չէր խորշում,

Փարիզուհիները երկու կամ երեք երիտասարդություն են ունենում: Եվ կունենային ավելի շատ, եթե այդ իսկական ֆունսուհիները չգիտենային իրենց սահմանափակել: Սիլվիան ապրում էր իր երկրորդ երիտասարդությունը: Դա պակաս գրավիչ չէր, բան առաջինը: Սիլվիան կարող էր ուզածդ մարդուն գլխահան անել: Նրան հարկավոր էր Մարկին գերել ճիշտ այնքան, որքան դա անհրաժեշտ էր՝ իր իշխանությունը նրա վրա հաստատելու համար: Այդ շափն աղնիվ էր: Եվս մի կաթիլ— և դա ազնիվ լինել արդեն չէր կարող: Պետք էր Սիլվիա լինել՝ իրեն այդ եզրին սլահելու համար:

Սիլվիան գիտեր, թե ինչպիսի անհանգստություն կա պատանու հոգում, որը շիկացած էր տարփանքից, հպարտությունից և մտավոր այն բոլոր թափթփուկներից, որոնցով լցնում են նրա հոգին դպրոցում: Գիտեր ինչպես է փափագում այդ հոգին փաղաքշանք, ստվեր, աղբյուր, որը ջղայնացնում է և սփոփում: Գիտեր ինչպես է պատանին ուզում թեկուզե եղագանքներում այրվող ճակատով հպվել քնքուշ ու բոլորակ կրծքին, որից և զերմություն է ենում և զովություն, և գարնանային այգու բուրժունք, և ծաղիկների թագուհուկնոց գեղեցիկ մարմնի բուրժունք: Նրան հայտնի էր, թե դեպի կյանքն ունեցած ինչպիսի անհագուրդ հետաքրքրություն է տանջում այդ գայլի ճուտերին: Հաճույք վայելելը նրանց համար երեք քառորդով նշանակում է ճանաչել Եվ հաճախ գիտենալը փոխարինում է հաճույք վայելելուն: Գիտենալ... Բրսալ... Արսը նույնպես կյանք է...

«Թող այդպես լինի, վաղվզիր, բարեկամս: Ես քեզ քշշում եմ: Դես ու դեն ընկիր, մինչև որ մոռանաս որսի մասին...»:

Նրանք նստած են Սիլվիայի սենյակում, սեղանի մոտ: Երեկո է: Դասերն արդեն արված են: Դեռ քնելու ցանկու-

Վյուն չկա: Սիլվիան իր անխոնց մատներով ձև է տալիս մարտական ու պշտակի սաղավարտի կլոր մակերեսին: Նա Մարկին չի նայում, բայց գիտե, որ Մարկը իրեն է նայում...

«Եհ, մի կուշտ նայիր: Ինձ նայելը հաճելի է... իսկ ավելի լավ է ինձ լսել...»:

Տղան հայացքով լափում էր նրան կոշիկի ծայրից մինչև ականջի ծայրը (Սիլվիայի ականջը մի փոքր երկարավուն չը ու սուր, ուղիկի ականջի պես): Բայց Սիլվիան նրա մըտքերին ժամանակ չէր տալիս լռության մեջ հասունացնել արգելված պտուղները: Նրա լեզուն չէր լուսում: Նա Մարկին բռնել էր և ասկէ շղթայով տանում: Սիլվիան որոշել էր պատանուն շհարցաքննել, դուրս չկորզել նրա գաղտնիքները: Հարց ու փորձով Մարկին շձանձուացնելը լավագույն միջոցն էր նրա անկեղծությունը նվաճելու համար: Սիլվիան ինքն էր սկսում վերհիշել իր անցյալի հավըշտակությունները, զավեշտական տոնով պատմում էր Մարկին իր որևէ խելացնոր և միենույն ժամանակ զգուշավոր շարաձճիությունների մասին, որոնց ժամանակ նա երբեմն կորցնում էր իր առաքինությունը: Բայց երբեք չէր կորցնում կողմնացույցը: Թելը թրջելով իր նենգավոր լեզվով և կտրելով ատամների տակ, Սիլվիան վայրկենապես բռնում էր մարդկանց սիլուետները, նրանց ժեստերը, նրանց ծիծակերը, ծիծակերն օրինակ առաջելով նաև իրեն: Սիլվիան ձեացնում էր, թե Մարկին վստահում է իր գաղտնիքները: Նա Մարկի առաջ նկարում էր բավական վտանգավոր պատկերներ: Բայց դրանք փրկում էին նրա կենսախնդությունը և ուրախ միտքը, որը բարձր էր գնահատում այդ խենթությունները, հուզզերի այդ փոթորկումները: Սիլվիայի տոնը անկրկնելիորեն բնական էր, և լսողը մոռանում էր նրա պատմածների նկատմամբ կիրառել բարոյականության շափանիշը: Լսողի առաջ ծավալվում էր հետաքրքրաշարժ տեսարան: Ճիտակցությունը դուրս էր գալիս ավելի ուժեղ, քան սիրտը և զգացմունքները: Մարկը: Կլանված Սիլվիայի պատմությունով, զայրացած, ծիծակելով, բաշվելով, տեղի տալով, գայթակղվելով, հետեւում էր կյանքի կոմի-

կական վեղին, որն ուրվագծվում էր այդ անգուղական դիտորդի կողմից: Թվում էր, թև հավասարապես անտարբեր է թե իր արկածների և թե իր անհաջողությունների նկատմամբ— նրա համար բոլորն էլ սյատմելու առարկա էին... Ինչ հիանալի ընկեր հայտնվեց Մարկի համար: Այդպիսի երեկոներին երբեմն Մարկը անդիմադրելիորեն ուզում էր Սիլվիային համբուրել: Բայց այդ ֆանտազիան շքանում էր ավելի շուտ, քան Մարկը հասցնում էր գիտակցել դա: Այդ բուռն ցանկությունը սառում էր այն ակնթարթային և ծաղրական հայացքից, որով Սիլվիան ժակում էր Մարկին, սպանելով նրա մեջ ամեն տեսակի պատրանք: Տղան կատաղում էր, որ այդ հայացքի տակ չէր կարողանում լրջորեն վերաբերվել ինքն իրեն: Եվ, կատաղելով, նա ծիծաղում էր: Միասին ծիծաղել և հասկանալ իրար— ի՞նչ երանություն է... Ծիծաղը պատանիների հիվանդագին հպարտության, հիվանդագին ընկճվածության միջոց է, պատանիներ, որոնք մերթ օժտում են իրենց «եսը» ամեն կարգի իրավունքներով, մերթ ժխտում են նրա գոյությունը... Մարկի շափազանցված կրքերը, անշափ շուտ հասունացած նրա մարմնի հետ միասին, որտեղ գոյակցում էին երեխան և տղամարդը, խախտելով սահմանված համաշափությունները, մեկը մյուսին գուրս էին մղում. ողբերգական ծալքը, որ գծադրված էր նրա դեմքին բնության կողմից և զարգացած հայելու առաջ կատարած վարժություններով,— անընդհատ հարթվում էր, ինչպես թագչյա շլյապայի ծըռվածքը հմուտ մողելագործունու մատների տակ, որը սեփական փորձով գիտեր, թե ինչպես է թարմացնում խելացի ծիծաղը... Հանձնարարել Սիլվիայի նեթողը ուրիշներին մենք շենք համարձակվում: Ամեն մի մեթոդ լավ է կամ վատ, նայած այն բանին, թե ով է այն կիրառում: Իսկ ընդորինակել Սիլվիայի գործելաձերը, նրա ճարտկությունը չունենալով՝ մեկ էլ տհասար տակից գուրս չեկար: Դա փարիզյան ապրանք է... «Առանց երաշխավորության»,

Եվ մորաքույրը և քրոջ որդին փարիզեցիներ էին, նրանք լավ էին լեզու գտել միմյանց հետ: Խաղաղ անկաշկանդվածությունը և առողջ ծաղրը, որոնք նրա ոչնչով շմբագըն-

վող անկեղծության հիմքն էին կազմում, — իսկ շե որ լուբ-  
ոք միշտ էլ ավելի առողջ է, քան խավարը, — կամաց-կա-  
մաց անկեղծության էին կոչում նաև պատանուն։ Մարկի  
քեզում բացվում էր, և նա սկսում էր պատմել իր սեփական  
արկածների մասին և նույնիսկ պատկերում էր դրանք իր  
համար առանձնապես ոչ շահավետ լույսի տակ, եվ նըր-  
քանկատ պատանին չէր վիրավորվում, երբ Սիլվիան ծի-  
ժաղում էր իր վրա։ Շուտով Մարկն սկսեց մորաքրոջը  
պատմել ոչ միայն իր անցյալը, այլև ներկան, նա խոր-  
հուրդ էր հարցնում, երբ ուզում էր հիմարություն անել,  
Պա լի նշանակում թե նա իրեն զսպում էր այդ հիմարու-  
թյուններից Բայց գոնե արդեն չէր կասկածոքմ, որ հիմա-  
րություն է անում։ Տեսնելով, որ Մարկին այդ մտքից ետ  
շես կանգնեցնի, Սիլվիան նրան խրատներ էր տալիս.

— Ինչ արած, թող այդպես լինի, Բայց աշքերդ լավ  
բաց արա, զգույշ եղիր, հիմար տղաւ։

Եվ հետագայում, երբ ամեն ինչ արդեն անցած էր լի-  
նում, հարցնում էր.

— Հը, հիմարին տեսա՞ր։

Մարկը պատասխանում էր.

— Տեսա, այդ հիմարը ես էի։ Դու ճիշտ էիր։

Նրանք երկուսով շատ էին զրունում Փարիզում։ Սիլ-  
վիան այսպես ամեն ինչ գիտեր և ոչինչ Մարկից չէր  
թաքցնում։

Ես կատվին կոշում եմ կատու...<sup>1</sup>

Սիլվիան կեղծ ամոթխածություն շուներ։ Նրա համար-  
ձակ լեզուն, համառ աշխատանքը և անպայման ազնվու-  
թյունը կարգ ու կանոնի և ազատության միջև հավասա-  
րակշռություն էին ստեղծում, որը առողջարար ներգործու-  
թյուն էր ունենում տղայի անկանոն մտքի վրա, օգնում էր  
նրան ամրապնդել իր իշխանությունը իր վրա։ Այդպես այդ  
մշտական մտերմությունից, որի մեջ երկու հայացքը կա-  
րող էր վտանգ տեսնել, ծնունդ առավ անկեղծ մի բարե-

<sup>1</sup> Տողը Բուալոյի «Թոետական արվեստ» պոեմից։

կամություն, զերծ ամեն տեսակի երկիմաստությունից, մի բարեկամություն՝ մեծի և փոքրի, նորեկի միջնու

Պետք է ասել, որ այդ կապվածությունը չէր լցնում տղայի կյանքը Բայց դա շեղում էր նրան ուրիշ մտքերից:

Սիլվիան Մարկի հետ Աննետայի մասին չէր խոսում Քույրերը նամակներ էին փոխանակում իրար հետ: Կասկածամիտ Մարկին թվում էր, թե Սիլվիան ամեն օր Աննետային մանրամասն տեղեկություններ է հաղորդում իր մասին: Բայց խորամանկ Սիլվիան, գիտենալով, թե որքան հետաքրքրվող է Մարկը, նրա հետ խաղ խաղաց, նազիտավորյալ սեղանին թողեց Աննետային հասցեագրանքաց նամակը, ամեններ շկասկածելով: որ տղան դա կկարդա: Եվ Մարկը համոզվեց, որ նամակում իր ժամկին ոչ մի խոսք չկար: Նա պետք է որ ուրախանար, բայց վշտացավ: Բոլորովին հաշվի շառնել— դա ավելին էր, քան ինքը պահանջում էր: Նա սրտնեղած հարցրեց Սիլվիային.

— Դուք այդ ի՞նչ եք անընդհատ գրում իրար:

— Մենք իրար սիրում ենք,— պատասխանեց Սիլվիան:

— Այ թե ճաշակ է:

Սիլվիան քրքշաց:

— Ո՞ւմը:

— Երկուսինդ էլ:

Սիլվիան նրա ականջը քաշեց.

— Դու խանդո՞ւմ ես:

Մարկը պոռթկումով առարկեց:

— Զէ՞: Դա հիանալի է: Թե չէ քո վշտին օգնելն անգամ դժվար կլիներ:

Մարկը ուսերը թոթվեց: Նա միայն կիսով շափ հավատաց Սիլվիայի խոսքերին, բայց այդ խոսքերը նրա հետաքրքրությունը շարժեցին: Ինչպես կարող են երկու բոլորովին տարբեր կանայք քույրեր լինել և սիրել միմյանց: Այս, մայրը նրա համար առեղծված էր, և այդ առեղծվածը նորից սկսեց զբաղեցնել նրա միտքը:

Աննետան հնագանդորեն որոշեց Մարկին շձանձրացնել իր անհանգիստ սիրով, Սիլվիայի խորհրդով նա տղային ամբողջովին վստահեց քրոջը, իսկ երբ մայրը դադարեց որդուն «ձանձրացնել», Մարկն աղոտ կերպով զգաց, որ ինքն այդ ձանձրացումների կարիքն ունի: Բարեհաճորեն զիշելով Սիլվիայի թախանձանքներին, Մարկը ամառային արձակուրդներին մեկնեց Աննետայի մոտ:

Բայց այդ փորձարկումը երկուաի համար էլ վաղաժամ դուրս եկավ: Աննետան հեռվից դեռ կարող էր իր սերը սանձել Բայց իրեն զսպել չէր կարողանում, երբ Մարկն իր կողքին էր: Աննետան շատ անուրախ կյանք էր վարում: Ամբողջ ամիսներ ծարավից մեռնում էր: Նրա հոգին ձգտում էր սիրո միակ կաթիլի— ոչ— մի ամբողջ հեղեղի: Իզուր էր նա հիշում Սիլվիայի իմաստուն խրատները:

«Եթե ուզում ես, որ քեզ սիրեն, շափից ավելի ցույց մի տուր քո սերը»:

Թաքցնել սերը: Չէ որ դա նշանակում է կիսով շափ սիրել: Ոչ, միայն թե ո՛չ կիսով շափ: Երկուաին էլ, և մորը, և որդուն, պետք էր բոլորը կամ ոշինչ:

Իսկ քանի որ Աննետան տալիս էր բոլորը, Մարկը ոչինչ չէր տալիս:

Ինչ էլ ուզում է լինի, Մարկը եկավ՝ լեցուն հակասական զդացումներով, վանող և ձգող, միանման այրող և պարպումի սպասող, ինչպես էլեկտրականությամբ հագեցված ամպը: Բայց հենց որ նա հանդիպեց այդ կնոջը, զգաց նրա հոգին, անհանգիստ, ինչպես փոթորկի հզոր շունչը,— բոցը նորից գնաց ամպերի մեջ, երկինքը մաքըրվեց: Բավական էր նրանք շփվեին ձեռքերով, խոսքերով, հայացքներով— և այդ պահանջկոտ սերը, նրան գերի վերցնելու այդ ձգտումը Մարկին ստիպեցին միանգամից ընկըրկել... Ոչ, ո՛չ: Կարծես մի անգամ էլ հնչեցին ավետարանի խոսքերը.

«Մի՞ կպշիր ինձ»:

— Ինչպես: Եվ դու այդ ասում ես նույնիսկ նրանց, ովքեր քեզ սիրում են:

— Նրանց հայտկապնու...

Մարկը չէր կարող այդ բացատրել։ Թայց նրա փոխարք էն զործում էր բնությունը։ Նա դեռ չպետք է տրվի։ Դեռ ժամանակը չէ։

Աննետան խմում էր ազահորեն...

«Փատրիր։ Զուրը գնաց։ Քո մատները, քո շրթունքները ճեղքում են միայն ավազը...»։

Աննետան անշափի ուշադիր զննում էր որդուն։ Մարկն իր վրա զգում էր այդ անհանգիստ հայացքը, որն ուսումնասիրում էր իր դեմքի ամեն մի գիծը։ Ինչպես բոլոր մայրերը։ Աննետան ամենից առաջ երկյուղում էր որդու առողջության համար։ Անվերջանալի հարցերը Մարկին համբերությունից հանում էին։ Նա լրում էր արհամարհական ժաղալուլ, —և իսկապես էլ, իր ամբողջ արտաքին փիրունությամբ հանգերձ, Մարկի առողջությունը կայուն էր դարձել։ Նա բոյ էր քաշել, նիշարել էր, գունատ, քաղցած, տանջված դեմք ուներ Վերին, անհանգիստ շարժվող շրթունքի վրա արդեն սկսել էին ծլել բեղերը, հիշեցնելով քարաքոսի խոռոչիկներ։ Նրա հիվանդագին տեսքը բացատրվում էր ոգու խռովահույղ վիճակով։ Մայրը ետ էր վարժվել նրա հսկին կարդալուց։ Նբանց միջև կապը կտրվել էր։ Նա այդ շրթունքների, պատանու այդ դեմքի վրա տեսնում էր վաղաժամ մաշվածության, վաղաժամ խոնջության հետքերը, շորության, ժաղդի հետքերը։ Աննետայի սիրուց կծկվում էր, և նա հարցնում էր իրեն։

«Ի՞նչ է արել նա, ի՞նչ է տեսել»։

Աննետան ամբողջ մարմնով գողում էր, երբ ժտածում էր, որ իր համար սրբազան այդ պատանի մարմինը պըղծված է։ Աննետան իրեն մեղավոր էր զգում, Նա ինչպես կտրող էր բաժանվել որդուց։ Թայց որդին չէր ուզում ապրել նրա հետո, Կարելի՞ է արդյոք սլահպանել նրան, ում հոգու վրա փակ է դրված, Ներխուժել բռնությամբ։ Նա արգն փորձել էր զոռով խցկվել, բայց անհաջողություն էր ունեցել։ Կողպերը դիմացավ, Մետաղն ամուր էր, այն մետաղը, որից ինքն է պատրաստված... իսկ եթե ներս մըտ-

ներ—ի՞նչ տեսարան կբացվեր նրա առաջ: Աննետան վա-  
խենում էր այդ մասին նույնիսկ մտածել:

Իսկ Մարկը, զգալով, որ իրեն հետևում են, նորից  
անջրպետվեց նրանից: Այո, այն ինչ նկատեցին մոր աշքերը,  
ֆջմաբություն էր: Կեղտի բծեր: Կուսականորեն մաքուր  
մաշկի վրա ստվեր, ստվեր իմացության ծառից: Այո, Մար-  
կը շափազանց շուտ տեսավ, ճաշակեց... Բայց Աննետան  
չկիտեր, թե ինչպես էր դիմադրում իր որդու հոգին ընկած  
սերմերին, չէր նկատում առողջ զզվանքը, ազնիվ թախի-  
ծը,— ընդգումը, որ միաձուլված էր ամոթխած սրտում  
թաքնված բուռն կրքի հետ, չէր նկատում առնական բնագ-  
պը, որ հրամայում է մարդու ձագուկին մարտնչել սեփա-  
կան ուժերով, առանց կողմնակի օգնության:

Եվ այդպես, քանի որ Մարկը հրաժարվում էր մորը ներս  
թողնել իր կյանքի մեջ, հարկ էր լինում ենթարկվել ան-  
հրաժեշտությանը և ապրել կողքին, գուռ գուան դիմաց,  
առանց մտերմության ձգտելու: Եվ դա ուրախ բան չէր:  
Աննետան արդեն չէր նկատում, թե ինքն ինչ դաժան կյանք  
է վարում, բայց Մարկի մաշկն այդ կյանքից քերծվում էր,  
ինչպես կոպիտ սպիտակեղենից: Մոր ողբերգական լրջու-  
թյունը, որն ինքն Աննետան չէր զգում, տանջում էր Մար-  
կին: Նա չէր գիտակցում, որ ինքը խլում է Աննետայից  
այն միակ շողը, որը կարող էր լուս սփռել այդ կյանքի  
վրա, որ ինքը ցրտահարեց մայրական սիրո բացվող ծա-  
զիկը: Ետ շպրտված դեպի այն ներքին դրաման, որից նա  
փորձում էր հեռանալ, Աննետան իր կամքից անկախ  
մատնեց իր խոռվքն ալեկոծող մտքերը, և Մարկը, այդ  
խոռվքում, գուցեր իր տրամադրության հետ ընդհանուր  
շատ բան զգալով, փախչում էր դրանից:

Գաղց մթնոլորտում, փոքրիկ քաղաքի գորշ կյանքի պայ-  
մաններում Մարկը չէր կարողանում մի այնպիսի բան գրտ-  
ել, որ մոռացության տար տնային մուայլ իրադրությունը:  
Փարթամ ու գունեղ դաշտերը ննջում էին օգոստոսյան արևի  
տակ իրենց ամբողջ ոսկեղեն հասունությամբ: Ի՞նչ լավ  
կլիներ, եթե մարդ իր կրակոտ պատանեկան թներով գըր-  
էիլ մայր-բնությունը! Բայց պատանի փարիզեցին զգայուն

Հեր դեպի բնությունը: Ուրիշ շատ բաներ կային, որոնք ոտնձգություն էին անում նրա մտքի և զգացմունքների գեմ: Դեռ չեղ խվել այն ժամը, երբ աշքերը բացվում են դաշտերի գրքում գրած համը երաժշտությունը կարդալու համար: Միայն ավելի հասուն շրջանում է մարդ սկսում հասկանալ մանիշակների բուրմունքով օծված բնական պէլզամի հմայքը: Այդ բուրմունքը մարդ չի նկատում նույնիսկ այն ժամանակ, երբ ինքը ծայրեծայր ներծծված է դրանով: Նրա կտիսարդանքը արտահայտվում է ավելի ուշ...:

Աննետան որդուն իր հետ քարշ էր տալիս զբոսանքի: Բայց ուրիշ մարդու մտերմությունից շփումը բնության հետ խզվում էր: Աննետան մտածում էր բարձրածայն: Նա վայելում էր հողի և օդի հաճույքը: Կանգնում էր դրանց և որդու միջև:

«Ի՞նչ ես արել ծածկել...»:

Աննետան սիրում էր ոտով քայլել: Մարկը տեսնում էր, թե ինչպես է քայլերի արագ ոիթմից և զարկահոսող արյունից մոր մեջ ուժ և երիտասարդություն արթնանում: Նա տեսնում էր, թե ինչպես է Աննետան վագում, գոռում, ուրախանում ծաղիկ, միշտ տեսնելիս... Երբ Մարկը վերադառնա Փարիզ, բոլոր այդ պատկերները նրա հետեւից ընկած կզնան: այդ խնդությունը, կյանքի այդ հեղեղը, այդ բերանը, այդ աշքերը, այդ խոնավ պարանոցը (մի անգամ Աննետան ուրախ տրամադրության ժամանակ ամուր գըղկեց Մարկին: Տղան թափով ետ քաշվեց, ցույց տալով, որ իրեն՝ տղամարդուն, նման մտերմավարությունը տհաճ է)... Հիմա ոչ մի բան նրա ճաշակով չէ: Այդ կինը նրան հոգնեցնում է: Մարկը շատ շուտ շնչակառոր է լինում: Եվ իրեն ստորացած է զգում: Իսկ եթե Աննետան քայլերը դանդաղեցնում է, որպեսզի Մարկը իրեն հասնի, դա արդեն բոլորովին անտանելի է... Մարկը վերջ տվեց այդ զբոսանքներին: Նա վճռականորեն դրանցից հրաժարվեց:

Հիմա նրան միայն մնում էր ձանձրանալ: Եվ նա չեր ամաշում դա ցույց տալ մորը: Ոչ թե բողոքներով, ոչ Մարկը ոչ մի խոսք չէր ասում: Նա իրեն զոհաբերում էր...  
130

Թոլոր հնարավոր վիճակներից Աննետան ամենից քիչ կարող էր զբա հետ հաշտվել...

«Զոհաբերություն, բարեկամսու Զոհաբերությունն ինձ պետք չէ։ Մի կերպ յոլա կգնամ առանց քեզ...»։

Աննետան վերջին փորձն արեց...

«Մարկը Փարիզի կարիքն է զգում։ Ուրեմն, գնում ենք Փարիզ։»։

Որքան էլ զզվելի լիներ Աննետայի համար Փարիզի կյանքը, այնուամենայնիվ, նա արձակուրդների վերջին երեք շաբաթը Մարկի հետ ապրեց տանը։

Արդեն մոտ մի տարի էր, ինչ Աննետան փարիզյան իր բոլոր ծանոթներից, եթե չհաշվենք Սիլվիային, միայն ալրիացած հարսնացու Լիդիա Մյուրիզիեի հետ էր կապ պահպանում, բայց Լիդիայի նամակները գնալով դառնում էին ավելի հազվագեց ու ժլատ։ Երկուան էլ սիրեցին իրար և այնուամենայնիվ, մտքեր փոխանակելիս, նրանք մի տեսակ դեմ էին առնում բառերին— սրտի արգելապատերին։ Նրանք շէին ուզում ավելի խորացնել իրենց հարաբերությունների մեջ հայտնված կաշկանդվածությունը։ Երկուսն էլ միմյանց մասին քնքուշ հիշողություն էին պահպանում։ Հաճույքով կգրկեին մեկը մյուսին։ Բայց և այնպես հանդիպման ցանկություն չունեին, ալդ հանդիպումը կամա թե ակամա նրանց կստիպեր բացատրվել։ Երբ Աննետան Փարիզ գալով, իմացավ, որ Լիդիան երկու շաբաթով քաղաքից բացակայում է, նա և տիրեց և ուրախացավ։

Ինչեիցե, դա հոգսերից փոքրագույնն էր, որ պատեց Աննետային Փարիզ վերադառնալու մասին միտք ծագելիս։ Այնքա՞ն ուրիշ բաներ կային։ Նա գերադասում էր նախապես դրանց մասին շմտածել... Բայց այն, ինչ նա Փարիզում գտավ, ավելի վատ դուրս եկավ, քան ինքը ենթադրում էր...»

Ի՞նչ վիճակի մեջ նա գտավ սեփական բնակարանը... Իր ժամանակավոր բացակայության ընթացքում Աննետան այն տվել էր երկու փախստականներին, Ալեքսիսին և Ապոլլինարին, իր համար թողնելով միայն ննջարանն ու

որդու սենյակը։ Բայց այդ կենվորները գրավել էին բռ-  
լորը։ Բնակարանի տերերը՝ նրանք հիմա իրենց էին հա-  
մարում։ Աննետան նրանց թվում էր ինքնակոչ։ Նրանք  
կարծեն թե շնորհ էին անում, թույլ տալով Աննետային  
իրենց հարկի տակ պատսպարվել... Ասենք, «շնորհ» բառը  
ոչ մի կերպ չէր համապատասխանում Ապոլինայի մռայլ  
դիմքին, որը պայծառացավ միայն այն ժամանակ, երբ  
նա իմացավ, որ Աննետան այստեղ մնալու է ընդամենը մի  
երեք շաբաթ, ոչ ավելի։ Եվ այնուամենայնիվ նա հանդրգ-  
նություն ունեցավ հայտարարելու, որ տանտիրություն կարող  
է զիջել միայն մի սենյակ։ Նա համարում էր, որ երեք  
շաբաթ մայր ու որդի հիանալի կարող են միասին յուլա  
գնալ։ Զայրացած Մարկը իր իրավունքները պաշտպանեց  
տաս մilitari,<sup>1</sup> դուրս շպրտելով իր սենյակից Ալեքսիսի  
քրչերը։ Բայց ամենից շատ Աննետան վշտացած էր այն  
բանի համար, որ բնակարանը սարսափելի վիճակում էր։  
Անկարգություն, կեղտ, գողացված ամանեղեն, կիսայրված,  
սեացած խոհանոցային սպասք, պատերին բծեր և հոսած  
ջրի հետքեր, տեղ-տեղ գոյացած լճակներ, որից պարկե-  
տը փտել էր։ Կեղտոտված և ճղճղված վարագույրներ, կա-  
հսւյքի փշացրած պաստառներ... Կենվորները ոչինչ չէին  
խնայել։ Լավագույն վերմակները, անկողնային սպիտակե-  
ղենը առանց անհարմար զգալու Աննետայի սենյակ-  
ներից վերցրել էին և օգտագործել զավթիչները։ Պորտե-  
ները, փորագրանկարները, որոնք Աննետայի համար դար-  
ձել էին մի տեսակ տնային աշխարհի հորիզոնը, պատե-  
րից վերցվել և փոխարինվել էին ուրիշներով։ Մի քանիսը  
դրված էին հատակին, դեմքով դեպի պատը, մյուսներն,  
ինչպես պատահի, գցած էին խորդանոցը։ Ապոլինան  
դրանց տեղը կախել էր ինչ-որ անհավատալի այլանդակ-  
ների լուսանկարներ և սրբերի պատկերներ։ Նույնիսկ գըր-  
քերն ու թղթերը, բացի մի քանի փակ արկղերում թաքցը-  
րածներից, կենվորները տակն ու վրա էին արել ոչ այնքան  
հետաքրքրությունից (Ապոլինան կարդալ շգիտեր), որ-

<sup>1</sup> Պինված ձեռքով (լատ.)։

քան բան ու գործ շունենալուց, ձեռքերը քոր գալուց։ Թաց մատների հետքերը մնացել էին նամակների թերթերին, գրքերի ծալած էջերին։ Ամենուրեք գաղանի որջի հոտ էր գալիս։ Մարկը, զայրույթից ու զզվանքից շնչակտուր, ասում էր, որ այդ ավազակներին պետք է տնից գուրս քշել։ Աննետան աշխատում էր որդուն հանգստացնելու նա շղայնացած կշտամբում էր Ապոլլինային, բայց այդ նկատողությունները վատ էին տեղ հասնում, ասենք, հենց ինքը Աննետան էլ առաջին իսկ խոսքերից կմկմաց, ընկըճված այն մտքից, ող հարձակվում է իր կենվորների վրա այն պահին, երբ նրանք շատ ուժեղ հոգեկան խոռվք էին ապրում, ողբերգական ճգնաժամ։

Եղբայր ու քույր խուսափում էին միմյանցից։ Նրանց միջև, կարծես, թշնամանքի, զզվանքի, զայրույթի, սարսափի պատ էր բարձրացել։ Աննետայի անսպասելի ժամանումից հետո նրանք նորից հարկադրված եղան տեղավորվել մի սենյակում։ Գիշերները նրանք կոպտորեն կովում էին միմյանց հետ, խլացնելով իրենց ձայները։ Լսվում էր միապաղաղ, բայց բանկուն փնթփնթացներ— և հանկարծ տարածվում էր Ապոլլինայի ճիշը, պարզորոշ լսվում էր նրա ընդհատուն շնչառությունը։ Հետո— ծանր լուսություն։ Այդպես անցավ մի շաբաթ... Մի անգամ գիշերը Ապոլլինան աղաղակով դուրս վազեց սենյակից։ Աննետան վեր կացավ, որ հանգստացնի կենվորներին։ Միշանցքում նա հանդիպեց համարյա մերկ Ապոլլինային, որը եղունգներով ծվատում էր իր մաշկը և տնքում, ինչպես խելագար։ Աննետան նրան կանչեց իր մոտ և փորձեց հանգստացնել։ Հետո նորից պառկեց։ Խելագար Ապոլլինան, նրա անկողնու մոտ կանգնած, վայրի հայհոյանքների հեղեղ էր թափում։ Աննետան նրա բերանը ձեռքով փակում էր, որպեսզի հարեան սենյակում քնած Մարկը շարթնանա (Մարկը վաղուց արդեն արթնացել և լսում էր...), և այդ անկապ խոսքերից սառույց կտրած Աննետան ճշմարտությունն իմացավ...»

Գիշերն անցնում էր։ Ապոլլինան, մահճակալի գլխատենի մոտ գորգի վրա նստած, անեծքներ էր թափում, լուս,

Մի տեսակ կատաղած աղոթում։ Վերջապես քնեց։ բերանը բացած և խոռացնելով։ Աննետան այդպես էլ աշք չփակեց։

Երբ լույսը բացվեց, նա մահմակալից կախվեց և սկսեց զննել Ապոլլինային, որը հենց այդտեղ էլ տեղավորվել ու քնել էր— զննեց նրա ետ ընկած գլուխը, նրա վախվորածու հետապնդվող գազանի մոռութը, Խոշոր, սարսափելի և կոմիկական դիմագծերով անտիկ դիմակ, Գորգոնի անաչք դիմակ, որի բերանը կարծես քարացել էր համր ճիշ արձակելիս։ Աննետայի հայացքի տակ Գորգոնը արթնացավ։ Տևանելով վերկից իրեն նայող և ուսումնասիրող աշքերը, նա ձուայլորեն տեղից վեր կացավ և ուզեց գնալ։ Աննետան բռնեց նրա ձեռքից։ Ապոլլինան մոթմոթաց։

— Ի՞նչ եք ուզում ինձանից... Բաց թողեք... Դուք իմ բերանից խլեցիք իմ գարշահուտ հացը, իմ խայտառակությունը, իմ ունեցվածքը... Է՛լ ինչ է ձեզ պետք։ Դուք ինձ ատում եք, արհամարհում եք։ Իսկ ե՛ս էլ ձեզ ես սրիկահմ։ Բայց և այնպես ձեզանից լավն եմ։

— Ատելություն, արհամարհանք— իմ մեջ գրանք չկան...— ասաց Աննետան։— Ես խղճում եմ ձեզ։

— Թքե՞ք ինձ վրա։

— Ձեզ դատելն իմ գործը չէ։ Դա ձեր աստծո գործն է։ Դուք խելագարվել եք, և ես ձեզ խղճում եմ։ Խելագարությամբ հիմա օդը լցված է։ Գուցեեկ դա վաղը խոցի նաև ինձ։ Բայց դուք այլևս չեք կարող մնալ այս տանը։

— Դուք ինձ դո՞ւրս եք անում։

— Իմ պարտքը որդուս պահպանելն է։

— Իսկ ես ո՞ւր գնամ։

— Աշխատեք։ Տեղ փնտրեք ձեզ համար։ Դուք ինչպես կարող եք ձեռքերը ծալած նստել, առանց գործի, երբ երկիրը գժրախտության մեջ է։

— Իսկ Ֆի՞թե մեր գժրախտությունը չիշ է։ Թող մյուսն երը նույնպես վճարեն։

— Ո՞վ կարող է ձեզ ռգնել, եթե դուք ինքներդ ձեզ չեք օգնում։ Ձեր գժրախտությունը մի առուցք է, որը հյուծում է ձեզ, — այդ բոլորը անդործությունից է։ Միայն աշխատանքը ձեզ կարող է փրկել։

— Ես չեմ կարող աշխատել:

— Ինչպե՞ս, դուք, որ առողջ եք, որ սովոր եք գյուղական ծանր աշխատանքի, դուք, որ չգիտեք ինչ անել ձեր ուժը, դուք այն բանտ եք գցում, ինչպես գայլին են գցում վանդակ, և տանջվո՞ւմ եք անգործությունից... Եվ այդ վանդակի ձողերի հետեւ ունո՞ւմ եք աստծո վրա... Աստվածն աշխատանքն է:

— Ես արդեն չեմ կարող աշխատել: Ինձ իմ ունեցվածքն է պետք: Ինձ պետք է ի՞ւ հողը նրանք այդ բոլորը վերցրել են ինձանից: Ամեն ինչ կորավ գնաց, իմ եղած լեղածը, հողը, հարազատներս: Ոչ մի բան ինձ շմնաց: Թշինչ, բացի նրանից (Ապոլլինան ցույց տվեց Ալեքսիսի սենյակը): Իսկ ես ատո՞ւմ եմ նրան: Եվ ի՞նձ եմ ատում, և աստծուն եմ ատում այն բանի համար, որ այդ ամենը նրա կամքով է լինում:

— Իսկ ես խղճում եմ աստծուն,— ես հավատացյալ չեմ: Այո, խղճում եմ նրան: Դուք նրան դավաճանում եք: Ատել, ատել— հենց միայն այդ բառն է, որ մնացել է ձեզ: Աւրիշ ոչինչ դուք չգիտեք: Եթե կա աստված, նա ձեզ կամք է տվել: Իսկ դուք ի՞նչ եք անում դա:

— Ես խեղդում եմ այդ կամքը այս որջում, այս մարմնի մեջ, որը նա տվել է ինձ: Ես վրեժ եմ լուծում նրանից: Նա իմ մե՞ջ է: Դե, ուրեմն, ես նրան կոշնչացնեմ:

— Ձեր աստվածն ինչոր կարիճ է: Եթե նա ուրիշներին ոշնչացնել չի կարողանում, ոշնչացնում է իրեն:

— Դա Վերդենի աստվածն է— այսօրվա աստվածը:

— Ես ձեր խոսքերից ցավ եմ զգում: Թողեք ինձ: Դուք ուզում եք ի՞նձ էլ ոշնչացնել:

— Ես ձեզ երկար տհաճություն չեմ պատճառի:

Եվ նա փախավ:

Այդ նույն օրը նրանք հեռացան Աննետայի բնակարանից: Ամբողջ տունը թեթեացած շունչ քաշեց: Բնակիչները անվերջ բողոքում էին այդ ընտանիքից: Աննետային, որը երազում էր նրանցից ազատվելու մասին, այդ հեռացումը տագնապեց: Նա փորձեց իմանալ նրանց հասցեն: Ապոլոնինան կտրականապես հրաժարվեց հասցեն հայտնել, իսկ

Երբ Աննետան նրան փող առաջարկեց, Ապոլլինան նրան շպրտեց նույն կոպիտ «ոչը»:

Հենց այդ նույն շաբաթ սանդղահարթակի նրանց հարևանը, երիտասարդ Շարդոննեն, երկու օրով արձակուրդ եկավ:

Բայց Մարկի ականջին էին հատնում պատի հետևից եկող ոտնաձայները, և նա սուր աշքով հետեւում էր վերադարձի համր դրամային:

Կլարիսսան արդեն այն Կլարիսսան շէր, ինչ անցած տարին էր: Նրան պտտող խենթության մրրիկը թուավ գնաց... Հանգիստ ու լուռ, նա վերադարձավ իր փարախը և իրեն զնդանեց բնակարանի շորս պատերի և մտքի ավելի անթափանցելի պատերի միջև: Կլարիսսան այնքան անաղմուկ էր ետ ու առաջ անում, քայլում սենյակից սենյակ, որ շէր լսվում ոչ կահույքի թխկոց, ոչ հատակի տախտակների ճռճողոց... Ինչպես կատուն... Ոչ նրա աշքերում, որ առանց բիբերի էին, մի տեսակ համատարած թավշյա, շողողողուն, բայց առանց ներքին լույսի, ոչ գունատ այտերին քսած կարմիր ներկի շերտի տակ, ոչ ոք շէր կարող կարդալ նրա հիշողությունները, երազանքները: Բայց տենչացող ամուսինը, որը վերադարձել էր իր այգու պտուղը ճաշակելու համար, շէր ճանաշում այդ պտղի համը, շէր ճանաշում իր կնոջ հոգին: Առհասարակ օժտված շլինելով զիտողականությամբ, նա, այնուամենայնիվ, առաջին իսկ րոպեից նկատեց, որ ֆասադի հետեւում տունն այն շէ: Ինչ-որ բան էր պատահել... Բայց ի՞նչ ծվ ինչպե՞ս իմանալ: Փատացող ֆասադը չէ մատնում իր գաղտնիքները իզուր է ամուսինը գրկում սեղմում իր կնոջը նա բռնել և ոչ թե միտքը նա բռնել է միայն մարմինը: Բայց ի՞նչ է արել նա, այդ մարմինը: Իսկ միտքը, համր վկան— ի՞նչ է տեսել, ի՞նչ է ուզում: Այդ միտքն ի՞նչ գիտել է ի՞նչ է թաքցնում բոլորից... Նա երբեք ոչինչ չի ասի: Այսուհենց երբեք ոչինչ չի իմանաւ:

Նրանք հանգիստ խոսում են ամենասովորական բաների մասին: Եվ հանկարծ տղամարդու ձայնը սկսում է հնչել լուսական մասին:

դայրույթի երանգով, Առանց տեսանելի առիթի, Նա ինքն է այդ գիտակցում, Եվ ձայնը նորից է իշնում: Նրանք լուս են: Տղամարդն ամաշում է, որ իրեն մատնեց: Այն մըտքից, որ նա ոչ մի կերպ չի կարողանում կնոջից դուրս կորպել նրա գաղտնիքը, ամուսնու մեջ փոթորկում է զայրույթը, Նրանք կարծեն իրար կպցրած լինեն, նրանք գնդանգած են միասին: Տղամարդը լուս տեղից վեր է կենում և դուրս է գալիս, շրիկացնելով դուռը: Կլարիսսան անշարժ նստած է: բայց Մարկը քիչ հետո լսում է, թե ինչպես է նա քիթը մաքրում. կնշանակի լաց էր լինում:

Երբ ամուսինը արձակուրդը վերջացնելուց հետո մեկնում է, նրանք միմյանց ասելու ոչինչ չունեն: Այն, ինչ նրանք կարող էին ասել, կպայթեցներ կյանքի ֆասադը, որը նրանք այնքան վախենում են երերել: Ինչպես ապրել ավերակների մեջ, արկերով տակն ու վրա արված հարթավայրում, ինչի որ հիմա նմանվում էր նրանց կյանքը, եթե նրանց մոտ շմնաց նույնիսկ անցյալի ֆասադը, որին նրանք կարող էին հենվել և ծեփել իրենց բույնը,— այդ խաբուսիկ հիշողությունն այն մասին, ինչ իրենք եղել են... Նրանք հրաժեշտ են տալիս իրար: Չոր շուրջերով համբուրում են միմյանց: Նրանք սիրում են մեկը մյուսին: Նրանք օտար են:

Եվ հենց այդ շաբաթ, Աննետայի արձակուրդի վերջին շաբաթը, կիդիա Մյուրիզիեն վերադարձավ:

Երկու կանայք, իրար հանդիպելով, նորից հուզմունք ու քնքություն զգացին: Նրանք շրթունքներով հպվեցին միմյանց ավելի շուտ, քան հասցրին գոնե որեւէ խոսք փոխանակել: Բայց երբ խոսքը հնչեց, նրանց թվաց, թե այդ գալիս է պատի հետեւից: Եվ երկուսն էլ հասկացան, որ, եթե նրանք նույնիսկ իրենց բաժանող միակ դուն բանալին ունենային, չին բացի այդ դուռը: Դա ամենածանր բանն էր. Նրանց միջև պատճեց կա, նրանք ձգտում են միմյանց, բայց ոչինչ չեն ուզում անել այդ պատճեցը շարդելու համար:

Կիդիան կորցրել էր անկեղծության, բնականության քույ-

ըր, որը նրա շարժումներին պոետական նրբագեղություն էր տալիս: Նա դաժանորեն խլացնում էր այդ բույրը: Մածկելով այն սգո շղարշով, իր բնավորությունը նա զոհաբերեց հանգուցյալ բարեկամին: Առաջին օրերի տրտմալի միստիցիզմի հարբածությունը անկայուն էր: Նրա թախծալի և հիվանդագին կախարդանքը ցնդեց: Այդպիսի տառապանքները կարելի է չերմացնել միայն արհեստականորեն: Սիրտը գթություն է խնդրում, սիրտն ուզում է մոռանալ: Սրտին հարկադրելու համար պետք է նրան շղթայով կապել ու տանջել: Հիմա դա զաղացաքարին կապված ստրոկ է, որին կամքը առաջ է մղում: Լիդիան զղաձգորեն զանում էր մտածել մեռյալի մասին.

«Մտածիր նրա մասին, Մտածիր նրա մասին...»:

Բայց դա նույնպես բավական չէր.

«Մտածիր, ինչպես նա...»:

Եվ նա հրաժարվեց իր սեփական մտքից, որպեսզի մինչև վերջ յուրացնի միտքը այն էակի. որին նա ուզում էր փրկել մոռացությունից — իր մոռացությունից... (Հոգու ողբերգական պայքարը գիշերային լոռության մեջ — դա պայքար է մահվան հետ, որը տանում է Մյուրիզիեի սիրո գանձը...): Նա իրեն պատել էր այն իդեալիզմի, այն չոր և այրող գաղափարների զրահով, որոնց հետ սերտաճել էր Ժիրյորների հոգին. Հիմա նրանք խոսում էին Մյուրիզիեի շուրթերով, նրա երիտասարդ շուրթերով, որոնք գողում էին տանջալից քնքշությունից:

Դա այնքան տարօրինակ, այնքան ծանր էր լսել... Բայց Աննետան լսում էր, ցրտից կուզ եկած և պատասխանի համար խոսք չգտնելով: Նա լարված կեղծություն էր զգում, զգում էր հաճելի աղջկա հերոսական ու կեղծ հիգերը, որը շանում էր հավատալ այն բանին, ինչին նա չէր հավատում: Մտածել այնքիս, ինչպես չէր մտածվում: Ոչ, Աննետան չէր կարող պատասխանել նրան: Նա դիտեր, որ Մյուրիզիեի կարծիքը փոխելը անշափ դաժան բան կլիներ, Քընքուշ, կոտրված ծաղիկ... Չէ որ այդ զրահն էր, որ նրան թույլ չէր տալիս ընկնել... Բայց թե՛ Աննետան ոչ ոք խոսք շասաց, թե ինչ է մտածում, լիդիան վակ վրթամբ:

ների վրա կարդում էր նրա մտքերը Եվ նա իրենց միջև բարձրացած պատի արդեն կողպած գուռը փակեց ևս մի նիգով։

Իր երջանկությունն ու կյանքը վերցրած պատերազմի մասին Լիդիան հիացմունքով էր խոսում։ Նա զղաձգորեն փառաբանում էր կասկածելի ապագան, որին նախապատրաստում էին այդ ճակատամարտերը. քառույթին մեսսիանիզմը, որը արդարություն ու խաղաղություն էր խոստանում, բայց դրանք կառուցում էր այսօրվա անարդարության, կոտորածի, միլիոնավոր կորուստների վրա, իր՝ Մյուրիզիեի կորստի, նրա սիրեցյալի դիակի վրա, ով իր արյամք (միակ բանը, որ հաշվի էր առնվում) սրբազործել էր աստծո թագավորության ծիծաղելի գալուստը— այն մարդկանց անձեւ աստծո, ովքեր զրկվել էին նրանից, արեմուտքի մարդկանց աստծո, ովքեր կորցրել էին աստծուն և ինչ գնով էլ ուղում է լինի ձգտում էին ստեղծել նրան,— համընդհանուր Դեմոկրատիայի աստծո...»

Օ, ինչքան կեղծ են հնչում այդ խոսքերը քո քնքուշ և թախծալի շուրթերին։ Քո տենդագին ժպիտը կարծես վերը լինի...»

Լիդիան, ինչպես դրոշ, բարձրացնում էր իր հավատը, ի ցույց էր դնում այն։ Նա զգում էր, որ Աննետան արդեն կորցրել է այդ հավատը (ասենք, նա երբեք ունեցե՞լ էր արդյոք հավատ), զգում էր, որ Աննետան հիասթափվել է բոլոր այդ գաղափարներից, հրաժարվել է կրթերից. որոնք այն օրերին հուզում էին ամեն տեսակի հայրենիքներին։ Եթե իրեն, Աննետային դա դեռ այնքան էլ պարզ չէր, ապա դա նրան հասկանալ օգնեց ընդվզող բնագդը, որը միմյանցից հեռացնում էր երկու կանանց, երկուսին էլ ասելով։

«Ավաղ! Այս աշխարհում մենք այլևս չենք հանդիպի...»

Բայց ո՞ւր փախչես այս աշխարհում։ Ի՞նչ արին այս աշխարհի հետ...»

1916 թվի ամսուն այս վերջին օրերին անտանելի հեղձուկ էր Փարիզի մթնոլորտը — ամբողջ աշխարհի մթնոլորտը։ Հողը կարծես լայնորեն բացված երախ լիներ, որ

զոհեր էր պահանջում։ Նրա կատաղի շնչից դիակի հոտ էր գալիս— մարդկության գիակի։ Սոմմայի և Վերդենի հո- շոտված մսի լեռները չէին կարողանում հագեցնել այդ երախի ագահությունը։ Ացտեկների ամբողջ ժողովուրդներ զոհաբերելու ժամանակներից սկսած դեռ դեպի երկինք չէին բարձրացել նման հեկատոմբերի հոտեր։ Եվս երկու հարեան երկրներ ուրախ մտան մահվան շուրջապարի մեջ։ Երկու տարվա ընթացքում դա արդեն երեսուներկուերորդ անգամն էր, ինչ պատերազմ էր Հայտարարվում։ Պարողները դո- փում ու թոշկոտում էին։ Մամուլը, պարողների շուրջը պըպ- գած, մատներով շրխկացնում էր, ոսկորներով խփում էր կաթսաներին, հարայ-հրոց էր բարձրացնում։ Գերմանիայում այդ մամուլը երգում էր սուրբ Ֆրանցիսկի նոր սաղմոսը, սաղմոսը՝ ի պատիվ մեր քրոջ— Ատելության։

«Մեզ պարզեված էր Հավատ, Հօլյու և Ատելության։ Բոյց Ատելությունը երեմից ամենամեծն է...»:

Ֆրանսիայում գիտությունը, նախանձելով «իննսուներե- րին»<sup>1</sup>, ցանկացավ ներկայացնել իր սեփական ցուցակը և խայտառակության հուշարձան հրապարակեց։ «Գերմանա- ցիները և գիտությունը»։ Այդ փաստաթղթում մտքի ամենա- նշանավոր ներկայացուցիչները, բացառությամբ երկու անունի, գերմանացիներին ոչ միայն հեռացրին եվրոպա- կան ընտանիքից, այլև, ենելով նրանց ուղեղի, նրանց ոս- կորների, նրանց կղկղանքների գիտական (իսկական Մար- ֆուրիուս և Պանկրաս<sup>2</sup>) անալիգից, գերմանացիներին անշատեցին մարդկային ցեղից։ Գիտնականության այդ սյու- ներից մեկը ցանկացավ, որ Բեռլինը հավասարեցվի հո- վին, որպեսզի այդ գոռոզ երկրի կենտրոնում փլատակնե- րով ծածկված վրեժի<sup>3</sup> կղզի թողնվի։ Մի գիտնական իրա- վաբան ապացուցում էր ամեն տեսակի միջոցներով պատերազմ վարելու իրավունքը։ Ֆրանսիական լիբերալիս-

<sup>1</sup> Առաջին համաշխարհային պատերազմի սկզբում գերմանական մտա- վորականների կողմից ստորագրված գեկլարացիաւ

<sup>2</sup> Մարֆուրիուս և Պանկրաս— Մոլիերի «Ակամա ամուսնություն» կա- տակերգության պերսոնաժները։

<sup>3</sup> Հիշ—Ռ, Ո. [Հենց այդպես (լատ.)].

տական կաթոլիցիզմի մունետիկներից մեկը, պատվարժան և ազնիվ մի մարդ, ֆրանսիական կաթոլիկներին ողջունեցալն բանի համար, որ նրանք «հանուն Քրիստոսի առանց տառանվելու նրածարվեցին գերմանական կաթոլիկներին ներելուց»: Այդ երգչախմբում մյուս նախերգիշը պահանջում էր, որպեսզի իր ձեռքն հանձնեին կայզերին՝ որպես իրեն հասանելիք ավարի մի մաս— նա պատրաստվում էր կայզերին դնել Կենդանաբանական այգու արջի խանդակը: Ծիծաղելին այստեղ միահյուսվում էր սարսափելիի հետ: Տարտյուֆ և թագավոր Յուբյու<sup>1</sup>: Այդ շուրջպարի գլխավոր երգիշների և պարողների լսությունն ու երկերեսանիությունը հասնում էին հիմալայան կատարներին: Կեղծ-բարեպաշտ մինհստրը պառլամենտի նիստին, հրճվող տիմարների ծավահարության տակ, գորովանքի արցունքներով փառաբանում էր իր կողմից կաշառված մամուլի սրբազան անշահախնդրությունը: Իսկ Ուելսի փշան Լոյդ Ջորջը, Կրոմվելի և Սիրանոյի այդ փոքրիկ, փոքրագույն խառնածինը, մի ձեռքին բռնելով աստվածաշունչը, իսկ մյուսին՝ սուրը (ուրիշի սուրը), բապտիստ եղբայրներին նոր Կեցություն էր քարոզում: Համեմատելով առաջին օրերի արարումը այն բանի հետ, ինչ արել էր պատերազմը— այդտեղ տեր աստվածն ինքն էր— Լոյդ Ջորջը շանթ ու կայծակ էր թափում մեղքի որդիների՝ պացիֆիստների վրա. «Ոչ մի անմարդկայնություն, ոչ մի անգրություն չեն կարող համեմատվել նրանց դաժանության հետ, այսինքն՝ պատերազմը կես հանապարհին դադարեցնելու նրանց ձգտման հետ»: Իսկ այդ ժամանակ Ամերիկան հանգիստ կլորացնում էր իր հաշիվը և Հին Աշխարհը ողողում մահվան գործիքներով: Չէ որ աջ ձեռքը իրավունք շունի իմանալու, թե ինչ է անում ձախը, եվ եթե գրված է «Մի՛ սպանաներ», ապա ոչ մի տեղ չի գրված, որ դու պետք է զբաղվես այդքան հարգալից գործով, ինչպիսին սպանության գործիքների արտադրությունն

<sup>1</sup> Նկատի է առնված Ալֆրեդ Ժարրիֆ (1873—1906) «Թագավոր Յուբյու» գրութեակային կոմեդիան:

է, միայն թե դրանք լավորակ լինեն, միայն թե դրանց համար լավ վճարեն:

Աննետան ականջները խցանելով, արհամարհանքով ու նողկանքով լցված, վազում էր քրոջ մոտ տաքանալու Բայց Սիլվիային քիչ էր հետաքրքրում մերձավորների երջանկությունն ու գժբախտությունը, եթե դա դուրս էր հարազատների նեղ շրջանակից, այն մարդկանց շրջանակից, ում նա սիրում էր, ում համարում էր իր ունեցվածքը: Այդ սիրելի կինը ասում էր.

— Թանկագինս, տրամադրությունդ մի գցիր: Պետք է համբերես, ինչ արած: Ինձանից օրինակ վերցրու ես սպասում եմ: Չէ որ դա, միևնույն է, կվերջանաւ: Ուրեմն, արի շշտապենք: Դեռ ժամանակ է պետք... Իմ ծանոթ տղամարդկանցից մեկը, որ գեղեցիկ էր, երեք նշանաքուղ ուներ, շքանշան (նրան վերջերս սպանեցին), ինձ ասաց. «Մենք դեռ պետք է մի միլիոն գերմանացի ոչնչացնենք»:

Աննետան աշքերը շորս արած նայում էր Սիլվիային: Զլինի՞նա կատակ է անում: Բայց չէ, նա լուրջ է... Օ՛: Ոչ այնքան էլ խոր... Առանց տաքարյունությա՞ն: Նա շարություն չէր զգում նրանց նկատմամբ, ում նախապես արդեն դատապարտել էր... Բայց եթե այդպես պետք է...

— Իսկ դու գիտես,— առարկեց Աննետան,— որ այդ մի միլիոնի դիմաց մերոնցից ամենաքիշը կես միլիոն կգնա...

— Ա՛խ, ինչ արած: Բարեկամու եթե դա պատճառ ունի: Պատճա՞ռ: Այստեղ դժվարություն չեն կրի: Նրանք կարող էին մի տասը պատճառ գտնել...

Աշխարհիկ կրանքը վերսկսվեց: Տես րօում<sup>1</sup>-ը լեփից ցուն էին, և սքանչելի պատվիրատու կանայք նորից թափվեցին Սիլվիայի մոտ: Պատերազմի առաջին տարիների լարվածությունը, սկզբնական շրջանի փորձությունների առնական զսպվածությունը, ատելության նոպաները և վայելքների ծարավը,— մի տեսակ իրար հաջորդող տեսնդը, որ մտրակահրում էր զգացմունքները,— այդ բոլորն անցել էր:

1 Կաֆե-հրուշակեղեն (անգլ.):

գրանց հերթափոխելու եկավ ավելի սարսափելի մի բան։ Մարդկային բնավորությունն սկսեց ընտելանալ։ Նոր հանգամանքներում այդ բնավորությունը երևան բերեց այն հարմարվողականությունը, այն անհավատալի և զաղըելի ծկունությունը, որը հազարամյակներով մարդուն թույլ էր տալիս որդի նման խցկվել ամենանեղ ճեղքերը, որտեղ կյանքը փրկվում էր երկրի երկունքային ցավերի պահերին, այն ժամանակ, երբ փովելու և ճկվելու պակաս ընդունակ-ները, իսկ այդ պատճառով էլ սողալ չկարողացողները, բնաշնչվում էին։ Եթե ամենահակարնական պայմաններում կանոնավոր կենցաղ վերականգնելու արվեստը արժանի է հիացմունքի, ապա այդ ժամանակվա Փարիզը հիանալի էր։

Բայց Աննետան ամենեին հակված չէր երգելու Փարի-քի գովքը։ Նա Փարիզի արտացոլանքը որսում էր իր որդու երեսին, և այդ հայելին նրան սարսափ էր ազդում։ Մարկն արդեն նախկին գրգովածությունը ցույց չէր տալիս, նա այլևս ջղաձգական պոռթկումներ չուներ, չկար նախկին կոպ-տությունը, ծիծաղը, որ նման էր ծամածոռության, — չկար այն ամենը, ինչ անցյալ տարի անհանգստացնում էր նրա մորը։ Նա առհասարակ ոչինչ ցույց չէր տալիս։ Մարկը ամեն ինչի նկատմամբ անտարբեր էր Թվում էր, թե նախ-կինում նրա զունատ գեմքին արտացոլվող տենդը այժմ նեղս էր զնացել, և այդ գեմքը նմանվում էր քնած լճակի։ Պղտոր, բայց առանց որևէ կնճիռի զուրի Անշարժ մակերե-վույթի Խորքը չի երևում։ Ոչ մի անդրադարձում։ Մարկը քնած է։

Այո, Մարկը, թվում էր, քնած է, նա կարծես չէր տես-նում, չէր զգում, չէր լսում այն, ինչ շուրջը տեղի էր ունե-նում։ — այդ ընկնող ծառերի անտառները ոչնչացնող մրրիկը, մահվան շունչը, գարշահոտությունը, դղրդյունը — և մորը, որ տագնապով խոնարհվել էր իր վրա։ Բայց ո՞վ գիտե։ Լճակի յուղոտ չնարակի տակ կյանքը աշխատում է... Դեռ ժամանակը չէ ցերեկվա լույսի տակ ցույց տալ այդ կյանքը։ Իսկ եթե Մարկը նույնիսկ գա թույց էլ տաք, ապա համենայն գեպս ցույց չի տա մոր աղերսական աշխերին։ Միայն Սիլվիայի հետ ունեցած զրույցների ժամանակ

էր, որ Մարկը որոշ անկեղծություն էր ցուցաբերում: Մոռաքրոջ հետ նյա համար հեշտ էր, նա հանգիստ կերպով շաղակրատում էր Սիլվիայի հետ: Ասենք, նախկին մեծամտությունն ու գրգռվածությունը հիմա չկային էլ: Մարկը քաղաքավարի էր: Նա լսում էր առանց առարկությունների: Սպասում էր համբերությամբ: Սպասում էր համբերությամբ, որ մայրը մեկնի:

Աննետան մեկնեց ընկճված ու մոլոր: Հիմա Մարկը նրա համար ավելի օտար էր, քան այն ժամանակ, երբ ընդհարումներ էին լինում: Հակառակորդի հետ գեռ քեզ կարող է որևէ թել միացնել, միայն թե ոչ անտարբեր մարդու հետ: Աննետան Մարկին արդեն պետք չէր: Նրան բավական էին մյուսները, օրինակ, Սիլվիան: Աշքից հեռու եղար, սրտից դուրս ես գալիս: Աննետայի համար որդու սրտում արդեն տեղ չկար:

Ոչ որդու սրտում, ոչ աշխարհում: Ամենուրեք նա հեռու և օտար մարդկանց էր տեսնում: Եվ ոչ մի տեղ չէր տեսնում մարդկանց: որոնց համար նա մտերիմ կարող էր լինել: Սյն ամենը, ինչ շրջապատի մարդկանց ստիպում էր ապրել և ապրել ցանկանալ, հավատալ և հավատալ ցանկանալ, մարտնչել և ձգտել հաղթանակի,— այդ ամենը Աննետայի վրայից ընկել էր, ինչպես փտած հագուստ, ինչպես ծառից ընկնում են անցյալ տարվա տերեները: Եվ, այնուամենայնիվ, ձգտումները մնացել էին նրա մեջ: Նրան անծանոթ էին այն ներասթենիկ վիճակները, երբ էներգիան ինչ-որ տեղ կորչում է, վեճերոտ թաքնվում: Աննետան ոտից գլուխ լցված էր էներգիայով: Նրա վիճակն ընկըճված էր այն բանից, որ չգիտեր որտեղ գործադրեր իր ուժերը: Դեպի ի՞նչը դարձնի այդ գործի ծարավը, պայքարի ծարավը, սիրո ծարավը, ատելության («Սյո, դա էլ կա իմ մեջ...») ծարավը: Սիրել այն, ինչ սիրում են շրջապատի մարդիկ: Ո՞չ Ատել այն, ինչ ատելի՞ է նրանց համար երբեք: Կովե՞լի Բայց հանուն ինչի՞: Նա բոլորվին միայնակ է այդ գոտեմարտում,— ո՞ւմ մոտ, որտեղ հանգրվան կգտնի:

Ահա արդեն մի շաբաթ է, ինչ Աննետան նորից սկսեց աշխատել՝ կոլեզում։ Հոկտեմբերյան մի երեկո, որ անձրեվոտ էր ու ցուրտ, նա տուն էր Վերագառնում։ Հոգնած, խռասուզված իր մտքերի մեջ Մոտենալով տանը, Աննետան փողոցում նկատեց ինչ-որ արտասովոր աշխատվություն։

Նրա տանից ոչ հեռու հարմարեցված էր ժամանակավոր (օհ, ի՞նչ շարագուշակ ժամանակ էր դա) մի հոսպիտալ Վերգենի սպանդանոցը ժայթքում էր իր վիրավորներին։ Նահատակների մարմիններն արդեն թափելու տեղ չկար։ Առաջին անգամ փոքրիկ խուլ քաղաքը ստանում էր իր այդ բեռի բաժինը։ Եվ հենց առաջին անգամ էլ այդտեղ գերմանացիներ ուղարկեցին։

Մինչև պատերազմը այդ քաղաքում կարգին հիվանդանոց չկար նույնիսկ աշխատանքի և անգործության ծեր հաշմանդամների համար (վերջին հաշվով դրանք բոլորն էլ մտնում են խլամի միևնույն կույտի մեջ)։ Նրանց խցկում էին նեղ, տոթ, կիսափտած շենքերը, որտեղ հարյուրամյակներով կուտակվում էին կեղտն ու վարակը։ Ոչ հիվանդները, ոչ բժիշկները դրանից չեին խորշում։ Սովորական բան էր... Թայց ահա, «առաջադիմության» (այսինքն՝ պատերազմի) հետ միասին օգում սկսեցին տարածվել նոր գաղափարներ (կամ ավելի ճիշտ՝ խոսքեր)։ Հիգիենա, անտիսեպտիկա... Որոշեցին, մահն աշխարհ բերելով, այնուամենայնիվ նրան հիգիենիկ պայմանների մեջ դնել։ Նոր հոսպիտալում — նախկին պանսիոնում — կեղտին փայլ տվին, բորբոսի հոտին՝ ֆենոլի հոտ, դասարանները սարքավորեցին Ամբրուալ Պարեի ռեցեպտով և նոր հիմնարկությունը ապահովեցին վաննայով — շատ հազվադեպ բան...»

Դա անշա՞փ լքեղ նորոն էր գերմանացիների համար... Քաղաքն սկսեց աղմուկով լցվել։ Նա ծանր փորձություններ էր տարել Վերջին ամիսների մարտերում այդ կողմերի երիտասարդներից շատերն էին իրենց գլուխները վայր դրել համարյա ոչ մի ընտանիք չկար, որտեղ սուգ չպահեին քրենց հարազատների համար։ Վիշտը ալեկոծել էր քաղաքի յնակրշներին, Արանից սովորական անտարբերու-

թյունը փոխվել էր դաժանության, նույնիսկ հիվանդանոցի անձնակազմը երկպառակտվեց, և նրա Ֆի մասը՝ ուղում էր, հրաժարվել թշնամուն խնամելուց, Զեռքից ձեռք էր անց-նում համապատասխան ոգով գրված պետիցիան, բայց վի-րավորների էշելոնը որոշումը դուրս գալուց ավելի շուտ տեղ հասավ, որի գալու մասին հոսպիտալ հայտնեցին մի-այն այն ժամանակ, երբ էշելոնն արդեն տեղում էր, Ամ-բողջ քաղաքը փողոց թափվեց այդ լուրն ստանալով...

Դժբախտ նախրին արդեն դուրս հրեցին կառամատուցից: Սի քանի րոպեում այդ նախիրը ողողեց մերձկայարանային փողոցը— այդպես հեղեղն է լցվում ջրատար առուն: Սովո-րական ժամանակ դրանք անշառ, սիրալիր, անտարբեր, կրատավուն, ոչ շար մարդիկ էին, Բայց նդանց մեջ անմի-ջապես գլուխ բարձրացրեցին ամենստոր բնազդները: Վի-րավորների թափորի մոտենալու մասին կարելի էր իմա-նալ դեռ հեռվից, տեսնելով, թե ինչպես է մոնչում ամբո-խը, Ահա նրանք, երկու սայլ, որ լցված էր կենդանի բեկորներով. պատգարակների վրա լաթերով ծածկված մար-միններ էին, որոնց գլուխները ետ էին ընկելի Մեկի ձեռքը կախվել էր, եղունգները քերծում էին ճանապարհի փոշին: Առջևից գնում է թեթև վիրավորների, երեսներն ու ձեռք-ները վիրակապված, ոչ մեծ մի խումբ: Առաջին շարքում գերմանական սպայի բարձրահասակ, նիհար կերպարանքն է: Այնուհետև՝ ոչ մեծաթիվ պահակախումբը: Ամբոխը, բռունցքները բարձրացրած, նետվեց առաջ՝ նրանց ճամփան կտրելով— կանայք, ճանկերի նման, կծկել էին իրենց մատները: Սրբազան միասնություն, Հասարակ ժողովրդի հետ վագում էին խանութպանները, բուրժուազիան և նույ-նիսկ— մի քանի քայլ հեռավորության վրա— բարձրաշ-խարհիկ տիկնայք: Դժբախտները մի ակնթարթ կանգ առան: Բայց հետեւի շարքերը հուպ էին տալիս, քշում առաջ: Վի-րավորները, սարսափի արտահայտությունը դեմքներին, մո-տենում էին. նրանք սպասում էին, որ իրենց կոտորեն: Քարեր տեղացին նրանց վրա, Ամբոխը փայտերով ու հո-վանոցներով քատմնել էր, և վեցին սպանության կոչեր, սուլոցներ: Իհարկե, ամենից առաջ հարձակվեցին սպայի

Այսաւ ինչոր մեկը նրան բռունցքով խփեց, ինչոր մեկի ձեռքը պոկեց նրա գլխից սաղավարտը, շպրտեց գետին, Մի կին ճղավոցով նրա երեսին թքեց, Հարվածների տակ սպան սկսեց օրորվել:

Աննետան նետվեց առաջ...

Նա արդեն երեք շարքով կանգնած ամբոխի մեջ էր Նայում էր բոլորովին շվարած: Ոչինչ ոչ մտածում էր, ոչ ցանկանում: Ասենք, նա ժամանակ էլ շուներ հասկանալու, թե ինչ է տեղի ունենում իր մեջ... Գլուխը կուցնելով, այս ու այն կողմ հրելով կատաղած մարդկանց, որոնք իրեն խանգարում էին շարժվել, Աննետան մաքրում էր իր ճանապարհը և խցկվում առաջ: Նրանք հասկացան, ինչ է նշանակում այն կնոջ բռունցքը, որը Ռիվիճար ազգանունն է կրում: Եվ նրա մոնշյունը... Աննետան վազեց գերմանական սպայի մոտ և, ձեռքերը ետ գցելով, շրջվելով՝ դեպի ամբոխը, աղաղակեց.

— Սրիկանե՞ր: Եվ դուք ֆրանսիացինե՞ր եք:

Այդ երկու բացականշությունները մտրակեցին ամբոխին, ինչպես խարազանի երկու հարված:

Առանց շունչ առնելու Աննետան շարունակում էր.

— Եվ դուք մա՞րդ եք: Ամեն մի վիրավոր սրբություն է: Բոլոր նրանք, ովքեր տառապում են, մեր եղբայրներն են:

Նրա ձայնը, նրա ձեռքերը իրենց էին գամել ամբոխի ուշադրությունը: Նա իր շուրջը բոլորին նայեց կատաղի հայցքով, որը կարծես ճակատին հասցրած հարված լիներ: Ամբոխը մոնշալով ետ քաշվեց: Աննետան կուցավ սպայի կասկան վերցնելու Այդ մի ակնթարթը բավական էր՝ նրա կապը շրջապատի մարդկանց հետ խզելու համար: Կատաղությունը, որ համարյա սառել էր, նորից շիկացավ. թվում էր, թե հիմա ուր որ է ամբոխը կկպչի Աննետայի կոկորդից... Այդ ժամանակ գթության բրոջ կոստյումով մի երիտասարդ կին մոտեցավ նրան և ցածր, բայց հաստատուն ձայնով ասաց.

— Այս կինը ասում է այն, ինչ պատշաճ է ամեն մի կարգին մարդու Վիրավոր թշնամիները գտնվում են Ֆրան-

սիայի պաշտպանության տակ։ Հարգանքի բացակայությունը նրանց նկատմամբ — դա հարգանքի բացակայություն է ֆրանսիալի նկատմամբ։

Այդ կնողը բոլորը ճանաշում էին: Նա պատկանում էր այդ կողմերում ամենաազգեցիկ արիստոկրատական ընտանիքներից մեկին: Ամուսինը նրա, որ սպա էր, վերջերս էր զոհվել Վերդենի մոտ: Կնոջ միջամտելը որոշեց գործի ելքը: Նրան մոտեցան ևս երկու տիկին, նույնպես գթասըրտության քույրեր: Տեղական բուրժուաներից մի երկու-երեսարդ շտապեցին ամբոխին հանգստության կոչ անել: Նույն այն կինը, որ քիչ առաջ թքում էր գերիների երեսին, սկսեց բարձրաձայն ողբալ վիրավոր զինվորներից մեկի վրա: Քրթմնջացող ամբոխը ետ քաշվեց և բաց թողեց ամբողջ էջելոնը՝ երիտասարդ այրու զինավորությամբ և Աննետայի, որը բռնել էր հազիվ ոտքերի վրա կանգնող սպայի արմունկից:

Մինչև հոսպիտալ հասան բարեհաջող իսկ այնտեղ մարդկանց մեջ արդեն խոսեց պրոֆեսիոնալ պարտքը և մարդկայնությունը: Բայց իրարանցման հետևանքով, որը սկսվեց վիրավորների ժամանելու առաջին ժամերին և ավելի ուժեղացավ սանիտարների պակասության պատճառով (տատանվողները մեկը մյուսի հետևից ետ էին գարձել գիշեր-վա ընթացքում), տեղում մնացածները աշխատանքով ծանրաբեռնվեցին, իսկ Աննետան, որին ոչ ոք ուշադրություն չէր դարձնում, հոսպիտալում մնաց մինչև կեսգիշեր: Հենց նոր կատաղությամբ բռնված ֆուրիայի օգնությամբ, այն խիզախ անձնավորության որը շատ բարեհոգի շաղակրատ դուրս եկավ, ամաշեց իր մոլեգին վարքագծից և զանում էր հարթել այդ, Աննետան հանեց վիրավորների շորերը և լողացրեց նրանց: Այդ դժբախտներից մեկը անհույս էր, վիրահատելն արդեն միտք շուներ, և Աննետան նրա հետ անցկացրեց վերջին ժամերը:

Դա մի թուխ պատանի էր, թուլակազմ ու զդային, կիսա-  
սեմիտական, կիսալատինական տիպի, որ բնորոշ է Հռե-  
նոսի ափի համար։ Վերը արսափելի էր թացված որո-

Ալայն... «*Jam foetebat*<sup>1</sup>. վերքի մեջ արդեն որդեր էին զեռում: Նրա ամբողջ մարմինը ցնցվում էր, նա ատամները սեզմում էր, բայց ժամանակ առ ժամանակ տնքում էր երկար ու ձիգ: Աշքերը նրա մերթ փակվում էին, մերթ նորից բացվում, փնտրելով որևէ առարկա, որևէ էակ, որևէ կենդանի մի բան, հենակետ, որից նա կարող էր կառչել անդունդի եզրին: Այդ աշքերը հանդիպեցին Աննետայի աշքերին և գամվեցին նրանց... Գամվեցին կարեկցությամբ այրվող այդ աշքերին... Օ, տառապանքների մեջ ի՞նչ անսպասելի լուս: Շնչահեղձ լինող հուսը վեր բարձրացավ հատակից: Վիրավորը կանչեց.

### —Hilfet<sup>2</sup>.

Աննետան խոնարհվեց՝ ու ձեռքը տարավ փոքր-ինչ վեր բարձրացած զլիսի տակ: Նա վիրավորի ականջին գերմաներեն քնքուշ բառեր շշնջաց: Նրա շոր այրվող մաշկին այդ խոսքերն ընկան, ինչպես անձրևի կաթիլներ: Վիրավորը բռնեց Աննետայի մյուս ձեռքը և մատները մխրճեց նրա մեջ, Աննետայի մարմնում արձագանքեց մեռնողի յուրաքանչյուր ցնցումը: Նա համբերություն էր լցնում վիրավորի մեջ: Քաջարի պատանին շունչը պահում էր, աշխատելով ճնշել ճիշը: Նա շարունակում էր սեղմել իրեն անդունդի վրա պահող ձեռքը, նա ավելի ու ավելի խորն էր սուզվում այդ անդունդի մեջ, և Աննետայի աշքերը ավելի պայծառ էին շողջողում քնքշությամբ: Նա ասում էր.

### —Söhnchen! Knäbelein! Mein armer Heber Kleine<sup>3</sup>...

Վիրավորի մարմինը վերջին անգամ ցնցվեց: Պատանին բերանը բացեց, որ նրան կանչի: Աննետան համբուրեց նրան: Եվ ձեռքը, որը սեղմում էր վիրավորի ցնցվող մատները, ետ չքաշեց մինչև շտեսավ, որ նրա տառապանքը վերջացավ:

Աննետան գնաց: Գիշերվա ժամը երեքն էր: Սառը մառախուղ: Հանգած երկինք: Անմարդ փողոցներ: Զշերմացրած սենյակ: Աննետան մինչև լուս շպառկեց: Աշխար-

<sup>1</sup> Արդեն գարշահոտում էր (լատ.):

<sup>2</sup> Օգնեցեք (գերմ.)

<sup>3</sup> Որդյանկան Տղաւու: Իմ սիրելի, խեղճ մանկիկ (գերմ.):

Հի ամբողջ սարսափը հիմա կենտրոնացած էր նրա մեջ։ Սիրտը լի էր վշտով, Եվ այնուամենայնիվ, Աննետան հեշտ էր շնչում։ Նա նորից իր տեղը գտավ մարդկության ողբերգության մեջ։

Այն ամենը, ինչ խեղդում էր Աննետային, անցավ։ Նա ծանր բեռք ուսի շարժումով ցած գցեց, Եվ նոր միայն, տեսնելով այդ բեռք իր ոտքերի մոտ, հասկացավ, թե ինչն էր իրեն խեղդում...

Աննետան խարում էր Խարում էր ինքն իրեն, Թաքնվում էր սեփական հայացքից։ Չէր համարձակվում նայել հրեշտակոր գաղափարների երեսին, որոնք ճնշում էին իրեն։ Անկամորեն համաձայնվում էր, որ պատերազմը անխուսափելի է և պետք է պաշտպանել հայրենիքը, Երկշուրորեն հաշտվում էր պատերազմի՝ որպես բնության երեսութիւ արդարացման հետ։ Եվ հանկարծ այդ վայրի բնության գեմ ոտքի ելավ նրա սեփական բնությունը, մերժված ու շղթայված, նվիրված ու չհագեցած բնությունը, որը վրեժ է լուծում իր համար և ուզում է դուրս պրծնել դեպի ազատություն։ Աննետայի կուրծքը, որ սեղմված էր դաժան մամլակներով, շղթատում է դրանք, շնչում է, Եվ Աննետան կոչ է անում իր իրավունքին, իր օրենքին, իր խնդությանը—ինչպես և իր տառապանքին, բայց սեփական տառապանքին, մայրությանը։

Համապարփակ մայրությանը, նա գրեց մի ուրիշ մոր, սեռնող երեխայի մորը, երեխայի, որի աշքերը ինքը փակեց։ Այդ մորը Աննետան հաղորդեց որդու վերջին համբույրը։

Իսկ այնուհետև վերադարձավ դեպի իր դպրոցական գասագրերն ու տետրերը։ Եվ, առանց հանգստանալու, բայց թարմ ուժերով ու սրտի խաղաղությամբ, սկսեց իր աշխատանքային օրը։

Աննետայի արարքը շատ խոսակցությունների առիթ տվեց։ Տուն չկար, որ այդ մասին շխոսեին, եթե այդ արարքը շարժանանար տիկին դը Մարեյի բարձրաձայն հավանությանը, ապա դա բոլորը կդատապարտեին, Բայց տիկնոց պաշտպանության ազդեցության տակ որոշ մարդիկ իրենց զայրուցից փոխեցին ողորմածության։ Շատերը վըրդովված էին, եվ բոլորը թաքցրեցին իրենց զայրուցից Թողնույնիսկ ճշմարտությունն այդ կնոջ կողմը լիներ, այնուամենայնիվ, դժվար է տանել, երբ օտար կինը ձեզ պատվի դասեր է տալիս— այն էլ ի՞նչ տոնով։

Բայց և այնպես բոլոր վեճերը դադարեցին հենց որ լուր տարածվեց (փոքրիկ քաղաքում ամեն ինչ մի երկու-երեք ժամում իմացվում է), թե տիկին դը Մարեյը հաջորդ օրը եկավ Աննետայի մոտ և, նրան տանը շգտնելով, երկտողով հրավիրեց իր տուն։ Աննետան պաշտպանության տակ էր գտնվում։ Տեղաբնիկները կատաղությունը խլացրին իրենց մեջ մինչև առաջին գեղքը։ Կոլեզի դիրեկտորը, իր մոտ կանչելով տիկին Ռիվիերին, գոհացավ համեստ հորդորով։ Իրոք, ոչ ոք չի կասկածում Աննետայի հայրենասիրությանը, բայց նա թող խոսաշիր այդ արտահայտել եxtre տարօս<sup>1</sup>, Մարդ պետք է իր պարտքը կատարի պատշաճ ժամանակ և պատշաճ ձևով։ Նե զու ուրմանք... Աննետան հասցրեց բերանը բացել՝ դիրեկտորին շշպոկու համար, երբ վեր-

<sup>1</sup> Պատերից գուրս, այսինքն՝ հրաժարակավ (լատ.)։

<sup>2</sup> Կապը մք խախտիր (լատ.)։

զինս խոնարհվեց և սիրալիր ժեստով կանգնեցրեց Աննետային. «Սա նկատողություն չէ. սա միայն խորհուրդ է...»: Բայց Աննետան գիտեր, որ պետի խորհուրդը՝ դա առաջին ազդանշանն է:

Տվյալ րոպեին Աննետային մնում էր միայն նորից կապը զցել վզին և վերադառնալ իր բույնը: Այն, ինչ նա պարտավոր էր անել, արված էր: Վաղվա օրը նրան կհուշի վաղվա պարտքը: Բայց այսօրվա օրը նրան ազատեց պարտքի երկու թելադրանքի միջև ընտրություն կատարելու անհրաժեշտությունից: Երբ Աննետան նորից հայտնվեց հոսպիտալում, պարզվեց, որ դուռը նրա առաջ փակ է: Հրաման էր դուրս եկել, որ կողմնակի մարդկանց հիվանդասենյակներ թույլ շտան, այսինքն՝ նրանց, ովքեր ընդգրկված չէին տեղական երկու կազմակերպություններում: Կարմիր Խաչում և Ֆրանսիական կանանց կազմակերպությունում (որոնք ի միջի այլոց շան ու կատվի նման իրար թշնամի էին): Հետագայում Աննետան իմացավ, որ այդ նոր հրամանը ուղղված էր իր դեմ:

Թեև Աննետան մարդկանց ծառայելու իր ծարավով փակ դռան առաջ հայտնվեց, բայց նրա առջև նույն րոպեին բացվեց մի ուրիշ դուռ, որի շեմից այն կողմ նա հնարավորություն գտավ հագեցնել իր նոր պահանջը— մայրության պահանջը: Եվ ոչ ոք չէր կարող նախատեսել այն վտանգավոր ուղիները, դեպի որը Աննետային հրեցին վերակենդանացած խղճի կողմից նրա վրա դրված պարտականությունները:

Աննետայի տիկին դը Մարեյի հետ առաջին իսկ տեսակցության ժամանակ երիտասարդ այրին հավաստեց նրան իր խոր հարգանքը— շփոխելով, ընդ որում, իր զուսպ, մի տեսակ սառնավուն տոնը,— և ասաց, թե իր հարազատներից մեկը, որ ծանր վիրավորված է և տանը բուժվում է, ցանկություն է հայտնել հանդիպել տիկին Ռիվիերի հետ: Աննետան նույն րոպեին ընդունեց այդ հրավերը:

Ժերմեն Շավաննը ազգակցական կապի մեջ էր տիկին դը Մարեյի՝ ծննդյամբ Սեյժիի հետ: Ժերմենի քույրը դարձել

Էր Սեյժիի եղբայրներից մեկի կինը, Երկու ընտանիքն էլ սերտ կապեր էին պահպանում, որոնք հիմնված էին գործարարական շահերի և փոխադարձ համակրանքի վրա։ Երկու ընտանիքն էլ շատ վաղուց արմատ էին գցել միևնույն վայրում։ Նրանց հողերը միմյանց կից էին։ Իսկ հայացքները տարբերվում էին ավելի շուտ ձեռվ, քան թե բովանդակությամբ։ Շավանները հետևում էին բավական անորոշ երանգի հանրապետական հայացքներին։ Նրանց կարմիր գույնը—որն ամենասկզբում էլ միանգամայն շափավոր գունազանություններ ուներ— աստիճանաբար լրիվ գունաթափվել էր։ Մնացել էր վարդագույն երանգը, և եթե դա դեռ չէր փոխվել սպիտակի, ապա համենայն դեպս հաճելիորեն ստվերակում էր այն։ Հարստությունը, որ ձեռք էր բերված ազնվորեն և հաստատուն էր. քիչ չէր նպաստել այն բանին, որ այդ երկու ընտանիքների տիրույթների ավելի շուտ սահմանազատող քան բաժանող միջնակները համարյա ջնջվել էին։ (Բոլոր ժամանակներում և ուզածդ տեղը սեփականությունը միշտ սեփականության է ձգտում)։ Սերը դեպի այն հողը, որը նրանք իրենք էին կառավարում, — նրանց էր պատկանում մոտ երկու տասնյակ ֆերմա, որոնք ամենուրեք իրենց համար կեր էին փնտրում, ինչպես թխսի ճտերը, — իր վայրին կապված լինելը և կարգ ու կանոնի պաշտամունքը, որը կիսով շափ, եթե ոչ ամբողջովին, փոխարինում է կրոնին (իհարկե, մենք նկատի ունենք Հոռմի կրոնը, որը Արևմուտքում կարգ ու կանոնի հզոր ուժ է հանդիսանում), — բոլոր այդ բնորոշ գծերը Շավանների մոտ ընդհանուր էին դե Մարեյների, դե Տեղեների, դե Սեյժիների և մանրակալվածք ազնվականների հետ։ Իսկ տարբերությունը մնում էր ճիշտ այնքան, որքան դա անհրաժեշտ էր լուրաքանչյուրի ինքնասիրությունը շոյելու համար։ Հենց դրա մեջ էլ նրանք տեսնում էին հարեանի նկատմամբ իրենց գերազանցությունը։ Թուլությունը հատուկ է բոլոր մարդկանց... Դե Սեյժիները և Շավանները շափականց լավ էին գաստիարակված, որպեսզի դրսեորեն իրենց գերազանցության գիտակցությունը։ Այդ գիտակցու-

թյունը պետք է պահպանել իր մեջ և թաքուն բավականություն ստանալ դրանից:

Այն, որ Աննետա Թիվիերին թույլատրված էր մտնել այդ շրջանակը, կարող էր միանգամայն հասկանալի զարմանք առաջացնել: Ոչ թե իր՝ Աննետայի մեջ— նա սոցիալական անջրպետներ չէր նկատում, Այլ գավառական փոքրիկ քաղաքում: Ճիշտ է, Շավանների և դե Սեյժինների ընտանիքներից նրան հրավիրեցին այդ ընտանիքների միայն երկու անդամները, որոնք հանգամանքների բերումով իրենց տանը անվիճելի իրավունքներ ունեին. նրանցից մեկը Լուիզա դը Մարեյն էր, մյուսը՝ Ժերմեն Շավաննը: Նրանք երկուսն էլ վերադրով վճարել էին իրենց անվան և հայրենիքի պարտքը: Եվ երկուսն էլ իրենց միշավայրում բացառություն էին: Աննետան շատ շուտ դրանում համոզվեց:

Շավանների տունը, որ հնամենի մի գորշ շենք էր, գըտնը վում էր ծուռումուռ փողոցի վրա, տաճարի ստորոտում: Դա պարուրված էր լոռիթյամբ, որը միայն խախտվում էր զանգերի տիսուր զողանջով ու սերմնագուավների ճիշերով: Ողորկ կաղնուց և պլավացրած մետաղով պատված նեղ զարպասներից ներս մտնելով,— ֆասադի փոշոտ ֆոնի վրա միայն այդ մետաղապատված մասն էր, որ սառը փայլով շողշողում էր,— գլխավոր շենքին մոտենալու համար պիետք է անցնել սալարկած բակը: Սենյակների լուսամուտները նայում էին շորս գորշ պատերով շրջափակված այդ բակին, որտեղ ոչ պարտեզ կար, ոչ խոտի մի ցողուն: Կարելի է կարծել, որ գավառական բուրժուաները, գյուղական ազատության մեջ երկար մնալուց հետո քաղաք վերադառնալով, ջանում են այնպես փակվել, որ բնությունը իրենց մոտ թափանցելու մուտք չգտնի: Սովորաբար Շավանները այդտեղ էին գալիս միայն ձմռան ամիսներին, բայց իրադարձությունները, պատերազմը, բոլոր հասարակական ձեռնարկումներում մասնակցություն ունենալու պարտականությունը, որդու հիվանդությունը նրանց հարկադրում էին քաղաքում ապրել քանի դեռ ապագան ավելի պարզորդ ուրվապատկեր լի ընդունել:

Այդ ժամանակ ընտանիքը կազմված էր գրեթե միայն

կանանցից։ Հայրը մահացել էր թոլոր առողջ տղամարդիկ՝ սրգիներն ու փեսաները, գտնվում էին ճակատում։ Տանը միայն յոթ տարեկան տղան էր, երիտասարդ տիկին Շավանն դը Սեյժիի որդին։ Քիթը ապակուն սեղմած, ձանձրույթից տանջվելով, նա հետևում էր, թե մուտքի դուռը չի բացվի արդյոք, ներս չի մտնի արդյոք որևէ հազվագեպ հաճախորդ, կամ ննջում էր զանգերի զողանցի կամ սերմնագուշների ճիշերի տակ։ Նրա աշքին դրոշներ, խրամատներ, գերեզմաններ էին երևում... նա առաջինը հանդիպեց Աննետային, երբ վերջինս տուն մտավ... Եվ հետագայում, այստեղ գալով, նա ամեն անգամ հանդիպում էր երեխային՝ ագահ, ձանձրացող աշքերով։ Կամացուկ դիպչելով Աննետային, երեխան անհետանում էր։

Կիսախավարը պարուրում էր երկրորդ հարկի բարձր առագաստով և խոր ալկովով սենյակը։ Մի երիտասարդ, որ նստած էր միակ լուսամուտի մոտ, որտեղից ներս էր թափանցում նոյեմբերյան գորշ օրվա լույսը, բազկաթոռից վեր կացավ, որպեսզի բարեկի տիկին դը Մարեյին և հյուրին, որին նա ներկայացրեց երիտասարդին։ Բայց շնայած ներս մըտնելիս անմիջապես այն զգացումն էր առաջանում, թե մահն այդտեղ իր ոստայնն է հյուսում, կիսախավարը շէր ստվերում վիրավորի դեմքը։ Դա միջին ֆրանսիայում հաճախ հանդիպող այն դեմքերից մեկն էր, որոնք կարծես լուսից հյուսված լինեին։ Ճիշտ դիմագծերով հաճելի դեմք, արծվային քիթ, գեղեցիկ ուրվագծված բերան, կապույտ աշքեր և բաց խարտյաշ մորուք, երիտասարդը ժպտաց Աննետային, իսկ հարսին հայացքով սիրալիր շնորհակալություն հայտնեց։ Մի քանի ոչինչ շնշանակող ֆրազներ փոխանակեցին առողջության ու եղանակի մասին, լանցնելով բարձրաշխարհիկ զգուշավոր խոսակցության շրջանակներ։ Բայց մի քանի քոպեից հետո տիկին դը Մարեյը աննկատ գուրս եկավ։

Այդ ժամանակ Ժերմեն Շավաննը, իր խորաթափանց հայացքով արագ սահելով Աննետայի դեմքի վրայով և ուսումնասիրելով այդ դեմքը, նրան մեկնեց ձեռքը և ասաց։

— Միրելի լուիզան ինձ պատմել է ձեր հերոսական

արարքի մասին։ Դուք, կնշանակի, այն մարդկանցից չեք, ովքեր ճակատամարտից հետո շարունակում են խփել պարտված թշնամուն։ Եվ հաղթվածին խնայելու թուլություն ունեք։ Ես համարձակվում եմ հուսալու, որ դուք այդ թուլությունը կտարածեք նաև այն պարտվածի վրա, որն հիմա ձեր առջևում է։

— Դուք ձե՞զ նկատի ունեք, — Հարցրեց Աննետան։

— Այու Ծանր վերք է, Բոլոր հույսերի խորտակում։ Փառասիրությունը մխիթարելու բան կա։

— Դուք կապաքինվեք։

— Ոչ! Պատրանքները ուրիշներին թողեք, — թեկուզ ինձ։ Դրա համար մենք բոլորս վարպետներ ենք։ Դուք ինձ պետք եք ուրիշ բանի համար։ Վնասվածքը, որի նկատմամբ ես ձեզ խնդրում եմ ներողամիտ լինեք, հասցրած է ոչ թե իմ մարմնին, այլ հոգուն։ Հաղթված լինելը դեռ կես դժուախտություն է, եթե հավատում ես հաղթողին։

— Ի՞նչ հաղթող։

— Ճակատագրին, որը դատապարտել է մեզ... Ավելի ճիշտ կլինի ասել ճակատագրին, որի միջոցով մենք ինքներս մեզ դատապարտել ենք...»

— Դուք ուզում եք ասել հայրենի՞քը։

— Դա ընդամենը նրա կերպարանքներից մեկն է, Այսօրվա դիմակը։

— Ես նույնպես հաղթված եմ և նույնպես չեմ հավատում հաղթողին։ Բայց չեմ հանձնվում։ Վերջին խոսքը՝ դեռ չի ասված։

— Դուք կին եք։ Դուք խաղացող եք։ Կինը նույնիսկ տարվելիս հավատը չի կորցնում, որ վերջին հաշվով տանելու է։

— Ոչ, ես դրան չեմ հավատում։ Բայց տանեմ թե տարվեմ, քանի դեռ կյանքի խաղում թեկուզ մի ֆունտ միս էլ մնա դրողչեք, ես դա կդնեմ։

Ժերմենը ժպտալով նայեց Աննետային։

— Դուք մեր վայրերից չեք։

— Ես ֆրանսիացի եմ։ Էլ որտեղի՞ց կարող եմ լինել։

— Բո՞ր դավադից։

- Բուրգունդացի եմ:
- Զեր արյան մեջ գինի կա:
- Մեր գինու մեջ արյուն է:
- Է՛ս, ինչ կա որ: Ժամանակ առ ժամանակ ես ուրախությամբ ծարավս կհագեցնեմ մի զավաթ այդպիսի գինով: ‘Իուք չե՞ք կարող արդյոք մի ուրիշ անգամ,— երբ ձեր մեջ եռանդի առատություն զգաք և մի քիչ համբերություն ունենաք,— ինձ մի քառորդ ժամ տրամադրել զրուցի համար:

Աննետան խոսք տվեց և սկսեց լինել Ժերմենի մոտ: Նրանց միջև մտերմություն սկսվեց:

Նրանք զրուցում էին ամեն ինչի մասին, բացի պատերազմից: Հենց առաջին հարցից հետո վիրավորը ձեռքի շարժումով ընդհատեց Աննետային: Մուտքը արգելված է: Ճանապարհ՝ փակ...

— Ոչ, եկեք պատերազմի մասին շխոսենք: Միևնույն է, դուք չեք հասկանա... Ես չեմ ասում, միայն դուք... Դուք բոլորդ, որ գտնվում եք այստեղ... Այստեղ... Այնտեղ.... Երկու աշխարհ է այստեղն ու այնտեղը... Երկու տարրեր լեզու....

— Ես չե՞մ կարող արդյոք սովորել այդ նոր լեզուն,— հարցրեց Աննետան:

— Ոչ: Նույնիսկ դուք, շնայած ձեր համակրանքի ամբողջ ավյունին: Սերը չի կարող լրացնել փորձի բացակայությունը: Մարմնի գրքում գրվածը հնարավոր չէ թարգմանել:

— Իսկ ինչո՞ւ չփորձել: Ես այնպե՞ս եմ փափագում հասկանալ: Չէ որ դա պարապ հետաքրքրություն չէ... Ես կուգենայի օգնել: Կուգենայի հնազանդորեն մոտենալ այն ամենին, ինչ դուք հնազանդորեն տարել եք:

— Շնորհակալ եմ: Օգնեք մեզ մոռանալ այդ— և հենց գա էլ ամենալավ օգնությունը կլինի: Նույնիսկ «այնտեղի» ընկերների հետ մենք պայմանավորվում ենք հիշատակել այն, ինչ եղել է «այնտեղ»: Պատերազմի մասին պատմվածքները— գրքերում, լրագրերում— մեզ զգվեցնում են, Պատերազմը գրականություն չէ:

— Զէ որ կյանքը նույնպես:

— Ճիշտ է: Բայց մարդը երգելու պահանջ ունի: Իսկ կյանքը վարիացիաներով հարուստ թեմա է: Ուրեմն, եկեք երգենք:

Ժերմենը հանկարծ լոեց. Նրա շունչը կտրվում էր: Աննետան նրա գլուխը բռնեց: Շունչ առնելով, Ժերմենը ներողություն խնդրեց, հայտնեց իր շնորհակալությունը: Նրա նիհարած դեմքին նորից ժապիտ հայտնվեց: Ճակատին փայլում էր քրտինքի կաթիլը: Նրանք լուր սպասում էին: Եվ քնքշորեն նայում էին միմյանց...

Ժերմեն Շավաննը մոտ երեսուն տարեկան էր: Նա մնացել էր ուղղամիա, լիբերալ, բայց ամբողջովին մտավոր (ընդ որում առողջ և ամուր) նախապաշարմունքներով ներծծված գավառական բուրժուազիայի շրջապատում: Աշխատանքի և դեպի հողն ունեցած սիրո հետ միասին հիշյալ նախապաշարմունքները կենտրոնական գավառներում այդ խավերին տալիս են ամուր հենարան: (Եթե նրանք այդ նախապաշարմունքները չունենային, նրանց կկլաներ շափազանց անխոռվ և անտխուր այդ կյանքը): Ժերմենը լավ գիտեր դրանց առանձնահատկությունները — և վատ, և լավ: Նա ինքն էլ էր նույն խմորից: Բայց անհայտ հացթուխը այդ խմորի մեջ այլ խաշ էր դրել:

Երիտասարդ հարուստ բուրժուան, որի ապագան, թվում էր, նախորոշված էր դեռ իր ծննդյան օրից, որը կենսախինդ էր ու անհոգ և արածում էր իր կալվածքների հյութեղ մարդագետիններում, մեկնեց Փարիզ և մտավ արևելագիտության ու դիվանագիտության դպրոց: Նրան հրապուրում էր ոչ այնքան հյուպատոսի կարիերան: Որքան ճանապարհորդությունների հեռանկարը, Սակայն իր հայրենիքը նա սիրում էր, ինչպես համեղակեր. սիրում էր երկինքը և օղը, խոսվածքը և սեղանը, բարի հողը և սիրելի մարդկանց... Իսկ երազում էր միայն մի բան — հեռանալ: Սպասելով հեռավոր երկրներ նշանակվելուն, նա ծայրեծայր շրջեց եվրոպան: Մի բան, որ իր հայրենակիցների՝ մեծ տնակյացների կարծիքով տարօրինակ հակում էր: Բայց ի՞նչ օգուտ

Ֆաշակի և գույների մասին վիճելուց (հատկապես հարուստ մարդկանց հետ), Պատերազմը խափանեց ճանապարհորդության պլանը Իսկ հիմա էլ — հիվանդությունը: Ժերմենը գաղերից թունավորվել էր. նրա օրգանիզմը աստիճանաբար քայլայվում էր: Հիմա նրան մի բան էր մնում — ճանապարհորդություն իր սենյակի շուրջը (ասենք, դա էլ չկար: Արդեն մի քանի օր էր, ինչ նա անկողնուց չէր ելնում), ճանապարհորդություն իր ներսում: Ոչ պակաս հեռավոր, ոչ պակաս խորհրդավոր... Անծանոթ երկիր... Ժերմենը բարեխղճորեն ուսումնասիրում էր այդ երկիրը... Բայց որտեղից էր նրա մեջ այդպիսի կոշում, փախչելու այդպիսի ցանկություն...

Ժերմենը դա բացատրեց Աննետային նույն կատակող, հեղնական տոնով, ինչպիսի տոնով սովորաբար արտահայտում էր իր մտքերը:

— Ես ապրում էի գյուղում, Եվ սկսեցի տարվել որսորդությամբ — ոչ այնքան ի սեր որսորդության, որքան հողի և կենդանի էակների, կենդանինեղի և բույսերի հետ չփայլու համար: Դեպի կենդանիներն ունեցած իմ ամբողջ սիրով հանդերձ, ես սպանում էի նրանց: Բայց կենդանիներին սպանելը ինձ չէր խանգարում, որ նրանց սիրեմ: Զեռքիս բռնած դեռ չսառած կաքավը, սեղմելով սպիտակահետույք ճագարի փորիկը, որպեսզի դուրս մղեմ մեջից նրա նախաճաշը, ես զգում էի: որ, թերես, ես նրանց ուզեիի մոտ եմ կանգնած, քան ինձ — մարդուն: Բայց դա դեռ չի նշանակում խղճահարվել: Դիպուկ կրակոցը միշտ էլ ուրախացնում է: Եվ կարծում եմ, որ եթե մենք մեր տեղերը փոխենք, նրանք չեին վրիպի: Բայց ես աշխատում էի ճանաշել նրանց և ինձ: Իսկ դրանից հետո ուտում էի նրանց... Ինչո՞ւ կնճոռտեցիք ձեր քիթը: Որպեսզի ավելի ուժեղ ներս քաշեք նրանց հոտը: Կաքավը կաղամբի և խոզի մի կտոր ոսկերանգ ճարպի հետ աստվածային ուտելիք է: Այդպիսի կերակուրից դուք էլ չէիք հրաժարվի... Բայց աստվածները, պետք է խոստովանել, միանդամայն տարօրինակ կենդանիներ են:

— Սարսափելի:

— Եկեք նրանց շղատապարտենք! Ուտենք! Զէ որ մեզ  
էլ են ուտելու: (Հիմա իմ հերթն է): Եվ եկեք ճանաշենք...  
Աստվածներին: Նրանք շատ հեռու են: Նրանց, ովքեր ձեռք-  
ներիս տակ են: Կենգանիներին և մարդկանց... Իմ առա-  
ջին հայտնագործությունն այն է, որ մարդիկ և կենդանի-  
ները, հազարամյակներով ապրելով կողք-կողքի, չեն զա-  
նացել միմյանց ճանաշել... Այդ, բուրդ, միս— մենք լավ  
գիտենք դրանք ինչ են... Բայց թէ ինչ են նրանք մտա-  
ծում, ինչ են զգում, ինչ են իրենցից ներկայացնում—  
մարդկանց դա չի հետաքրքրում: Նրանք հետաքրքրվո՞ղ  
չեն: Չեն սիրում, որ իրենց հանգիստը խանգարեն: Չցան-  
կանալով անհանգստացնել իրենց միտքը, նրանք հնարա-  
վոր չեն համարում այդ մտքի ներկայությունը կենդանինե-  
րի մեջ... Բայց ահա, բացելով աշքերս, ես պարմանելով  
համոզվում եմ, որ մարդիկ միմյանց նույնպես ավելի լավ  
չեն ճանաշում: Ինչքան էլ սերտ նրանք կապված են իրար,  
յուրաքանչյուրը լցված է իրենով և հոգ չի տանում մյուսի  
մասին: Իմ հարևան, եթե քո կյանքի ոիթմը համապատա-  
խանում է իմին,— հիանալի է, դու իմ մերձավորն ես:  
Եթե այդ ոիթմը չի համապատասխանում իմին, դու օտար  
ես: Իսկ եթե ընդհարվում է իմ ոիթմի հետ, դու թշնամի ես:  
Առաջինին ես մեծահոգորեն վերագրում եմ իմ սեփական  
միտքը: Երկրորդը իրավունք ունի միայն երկրորդ կարգի  
մտքի: Ինչ վերաբերում է երրորդին, ապա, ինչպես երգվում է  
«Մալբրուկում», — «Երրորդը ոչինչ լրերեց» և ոչ մի իրա-  
վունք չունի. Ես միանգամայն ժխտում եմ նրա, ինչպես և կեն-  
դանիների, մտածելու կարողությունը: (Մի՞թե բոշերը մարդ  
են): Ինչեւ, ինչ կարգ էլ ես վերագրեմ «մյուսին»— առա-  
ջին, երկրորդ թե երրորդ, բոլոր երեք դեպքերում էլ նա ինձ  
համար անծանոթ է, և ես նույնիսկ փորձ էլ շեմ անում ճա-  
նաշել նրան: Ես միայն ինձ եմ տեսնում, ինձ եմ լսում և  
ինձ հետ եմ խոսում: Ես գորտ եմ. կըո-ո... Երբ ես կրքի  
ազդեցության տակ կամ սեփական վեհության գիտակցու-  
թյունից փքվում եմ, գորտը եզ է դառնում, և ես հորջորջ-  
վում եմ Ազգ, Հայրենիք, Բանականություն կամ Աստված: Բայց  
այդ վիճակը վտանգավոր է: Ավելի լավ է վերադառ-

նանք մեր ջրափոսը... Ավաղի Ես երբեք ջրափռութ հանգիստ կուպալու ունակություն չեմ ունեցել, պաշտպանվելով իմ ամուր փակված անջրանցիկ թիկնոցով,— իմ մաշկով! Այն ակնթարթից, ինչ ինձ հպվեց հետաքրքրության ժեք (թե համակրանքի), ես ցանկացա ուսումնասիրել մարդկանց (շեմ ասում հասկանալ, ո՞վ իրավունք ունի ձպարծենալ դրանով), բայց գոնե շոշափել նրանց, զգալ նրանց հոգու կենդանի ջերմությունը, ինչպես որ մատնեցիս տակ զգում էի կաքավի տաքուկ և քնքուշ մարմինը: Եվ ես զգացի այդ ջերմությունը: Ես վայելեցի այն: Սիրելով նրանց: Սպանելով նրանց: Զէ որ ես նաև սպանում էի: — Դուք սպանո՞ւմ էիք, — ասաց Աննետան, ընկրկելով:

Այդպես Ժերմենը պատմեց իր մասին, գալլական հեգնանքով մարմնավորելով իր մտքի ողբերգական էությունը: Թվում էր, թե այդ միտքը ոչ հույս է ճանաշում, ոչ գութիւն նման էր ստվերների աշխարհին: Բայց երկրի վրա շողջողում էր ողջերի ուրախ արևը: Այդ կոնտրաստից աշխարհը նրա աշքին երևում էր էլ ավելի մոայլ: Նա տեսնում էր արարման առաջին մեղքը, բայց չէր ենթադրում: Թե դա կարելի է քավել: Աննետայի կրթության ընդունում էր: Նա հավատում էր բարուն և շարին, նա բուռն կերպով դրանք իր սրտից փոխադրում էր կյանքի աստղային տարածությունների էկրանին: Եվ Աննետան մեծ ճակատամարտում տեղ գրավեց: Եթե նա հաղթանակի չէր սպասում և հաշթանակը չէր համարում իր նպատակը, ապա այդ նպատակը տեսնում էր պայքարի մեջ: Այն, ինչ Աննետան շարիք էր համարում, նրա համար շարիք էր, թշնամի էր: Իսկ թշնամու հետ նա հաշտության չէր գնում:

Բայց մարտնչելը հեշտ է, երբ ամբողջ շարիքը տեղափորում ես թշնամու կողմը, իսկ ամբողջ բարիքը՝ քո կողմը: Ժերմենի կապույտ աշքերը, որոնք քնքշորեն նայում էին կարծես ուղիղ Աննետայի հոգու մեջ, այդ ամբողջական և

կրքուտ հոգու մեջ, իրենց առջև տեսնում էին ուրիշ մարդարադաշտությունը՝ կրիշնան կովում է կրիշնայի դեմ, և բոլորովին հայտնի չէ, թե ինչով է պահպան ճակատամարտը — կյանքո՞վ թե մահով, համընդհանուր կործանումով։ Ժերմենը տեսնում էր փոխադարձ անըմբռնողությունը, նա այդ տեսնում էր ամբողջ աշխարհում, տեսնում էր դարերում։ Եվ ի դժբախտություն իր, նա չէր կարողանում հաղորդակից դառնալ դրան։ Նա վտանգավոր շնորհք ուներ ընդունելու ոչ միայն իր միտքը, այլև ուրիշների միտքը, քանզի ինքը այդ միտքն էլ էր հասկանում։ Նրան ավելի շատ դուր էր գալիս թափանցել այդ մտքի մեջ, քան փոփոխել այն։

Ժերմենը միշտ չէր այդպես եղել, նա կյանք մտավ իր ամբողջական «ես»-ով, որը նույնպես ձգտում էր ոչ թե հասկանալ, այլ վերցնել ժերմենի աշքերը բացվեցին, երբ նրա վրա թափվեցին ճակատագրի հարվածները։ Նա հանգիստ Աննետային պատմեց դրանցից մեկի մասին։ (Աննետայի հետ նա խոսում էր առանց քաշվելու, ինչպես խելացի ընկերոջ հետ, որը կյանքը ճանաշում է և, ըստ երեվույթին, անցել է նույնպիսի փորձությունների միջով)։

Նա սիրում էր կին և սիրում էր բռնակալի նման։ Ժերմենն ուզում էր նրան սիրել իր սրտի օրենքներով և ոչ թե կնոջ սրտի։ Այն, փնչ նա իր համար լավ էր համարում, նրա կարծիքով լավ էր նաև կնոջ համար։ Միմյանց սիրելով, միթե նրանք միասնական մի էակ չէին, Աննետան սիրել էր, բայց հոգնել էր այդ սիրուց։ Մի անգամ վերադառնալով իր սենյակը, ժերմենը վանդակը դատարկ գտավ։ Նրա ընկերուհին գնացել էր։ Հրաժեշտի մի քանի տող նրան բացատրում էին պատճառը։ Դաժան փորձություն էր, բայց դա իզուր շանցավ։ Հիմա ժերմենը հասկացավ։ մարդիկ ուզում են, որ դուք նրանց մեջ ոչ թե ձեզ սիրեք, այլ իրենց...»

— Զափազանցված պահանջներ են, ճիշտ չէ։ Բայց գրանք պետք է ընդունել... Եվ այդ ժամանակից ի վեր ես շանք էի թափում, ինչքան կարող էի...»

Ժերմենն իր շահածների մասին պատմում էր սովորական կատակող տոնով։

— Ընդունել ամեն բան նրանցից, ում սիրում ես,— ասաց Աննետան։ — գծվար չէ, եթե ծախսերը մենակ ես քաշում։ Չայց եթե վճարում են նրանք կամ նրանց հարևանները, մի՞թե կարելի է դրա հետ հաշտվել։

— Դուք պատերազմի մասին եք խոսում։

— Պատերազմ, խաղաղություն, մի՞թե միևնույն բանը չէ։ Թափուտ անտառ, որտեղ ուժեղները լափում են թույրին, քանի դեռ ավելի ուժեղները իրենց հերթին շեն կերի նրանց։

— Միայն թույլեր կան, դուք ինքներդ այդ ասացիք։ Այլրդին հաշվով բոլորը կեր են դառնալու

— Ես նրանց հետ եմ, ում ուտում են։

— Է։ Դուք ապրում եք, և հիանալի առամներ ունեք։

— Ես կուզեի միայն շրթունքներ ունենալ, որպեսզի բոլոր կենդանի էակներին համբուրեի։ Բայց քանի որ Անկոչելին իմ բիրանն է դրել այդ դանակները։ Թող որ դրանք միայն մի գեր ունենան. պաշտպանեն իմ որդիներին։

— Եվ ահա դուք արդեն պատերազմի մարմնացումն եք։

— Օ, ոչ, ամենկին, հենց պատերազմից էլ ես նրանց պաշտպանում եմ։

— Նրանք բոլորն էլ ձեզ նման են... Այսպես ասենք. տասից ինը։ Եվ տասներորդը, առանց մնացած իննի, անզոր է լինելու։

— Այո, պատերազմ հանուն խաղաղության... Ախ, ի՞նչ եմ ասում... Հո դուք չե՞ք հավատում այդ մոայլ դիմակահանդեսին։

— Չեմ հավատում։ Ոչ, Բայց նրանք հավատում են, ես հարգում եմ նրանց հավատը։

— Նրանց հավա՞տը։ Դիմակ, որի տակ թաքնվում են շարության, նախանձի, հպարտության, ագահության, ավագակության, վավաշոտության բնազդները...։

— Մի՛ շարունակեք։

— Ցուցակը դեռ սպառված չէ։

— Իսկ դուք ի՞նչ գիտեք այդ բոլոր ապրանքների մասին։

— Գիտեմ դրանց բոլոր տեսակները։ Դրանցից ես ունեմ։ Եթև ամբողջ կողով։

Ժերմենը լոեց։ Գիտակի հայացքով նա նայեց իր անկողնու մոտ նստած կնոջը, որը խոսում էր խաղաղության մասին և բորբոքում կրակը։ Հետո Ժերմենը ասաց (ոչ բռնրովին այն, ինչ մտածում էր)։

— Զեր մեջ ցեղ կատ եվ այն ամենը, ինչ որ այդ ցեղը պետք է ունենա... Բայց դուք գիտեք, արդյոք, տիկին Հուղիթ, եթե դուք փղշտացուն վերագրում եք ձեր առաջինությունների մի մասը... Կանգ մի առեք կես հանապարհին, ոճակե նրան նույնպիսի շռայլությամբ նաև մյուսներով՝ ավելի լավերով...։

— Ի՞նչ եք ուզում ասել։

— Այս, իհարկե, — ձեր սիրով, հավատով, անկեղծությամբ... Դուք ժիտում եք այդ բոլոր մարդկանց, դուք նրանց ժիտում եք համատարած կերպով, որպես շարագործների և ստախոսների։ Դա հեշտ է ասել։ Եթե դա այդպես լիներ, կյանքը անշափ պարզ կլիներ, իսկ նրանք ացդպիսի ուժ չեն զավթի։ Ուշադրությամբ նայեք նրանց մոտիկից։

— Ես չեմ ուզում նրանց տեսնել։

— Ինչո՞ւ։

— Որովհետեւ չեմ ուզում։

— Որովհետեւ դուք տեսել եք

— Այս, տեսել եմ։

— Բայց տեսել եք անաշառ աշքերով... Ես ձեզ հասկանում եմ. ճշմարտություն տեսնելը կապանքում է մարդու ձեռքերը, երբ նա ուզում է գործնել... Բայց գործե՞լ արդյոք, թե՞ շուրջել... Ամենից առաջ պետք է տեսնել։ Ես զիջում եմ ձեզ իմ ակնոցը։ Նայեք, իսկ հետո — ապրեք ինչպես գիտեք...։

Աննետան տեսնում էր կամա թե ակամա։ Ժերմենը ամպագողող խոսքեր էր ասում մարդկության մասին։ Այդ ոճը նրան խորթ էր, և Մարդը, մարդը ընդհանրապես նրա աշքում մի քոռ կոպեկ էլ շարժեր։ Ժերմենին հետաքրքրում

էր միայն անցողականը, լինի դա կենդանի էակ թե ակընթարթ: Անանցողականը, շմեռնողը, նրա կարծիքով, չի էլ ապրում, անանցողականը մեռած է:

Ժերմենը Աննետայի հետ խոսում էր իր հայրենի քաղաքի, հարազատ վայրերի մասին: Մանկության տարիներից սկսած նա իր թղթապանակներում հավաքում էր հին ֆրանսիական ոճի մատիտով արված էսքիզների կույտեր: պորտրեներ, ճեպանկարներ, որտեղ նկարիչը նորից ու նորից է անդրադառնում՝ մինչև որ հոգին նրանց միջից դուրս նայի: Քաղաքային, գյուղական բնակիչներ, որոնք այնքան լավ ծանոթ են իրեն... Այս, նա ճանաչում էր այդ բոլորին մեկ առ մեկ, թարս ու շիտակ կողմերից: Ընտրություն անելու համար շատ բան է եղել ժերմենը այդ հավաքածուից մի քանի պորտրեներ հանեց. մարդկանց տիպեր, կարծես թե Աննետային ծանոթ, որոնք նրան համբերությունից հանում էին իրենց սահմանափակությամբ և էգոիզմով: Ահա այդպիսիներն էին — թե կանայք, թե տղամարդիկ — որ գերիների գալու առաջին օրը իրենց կատաղած գայլերի նման բղահեցին: Նրանք յուրովի բարի են, նրանք ունեն իրենց տնային առաքինությունները: Այդ անձարպիկ հոգիները իրենց անթափանցելի զրահի տակ անընդունակ չեին ինքնազնաբերման քայլի դիմելու համար: Եվ այդ ոսկորով լցված պարկերից յուրաքանչյուրը — ո՞վ կհավատա, որ նրանց համար էր աստված մեռնում — տանում էր իր խաչը: Աննետան դա լավ գիտեր: Բայց նա տանում էր իր խաչը և, ինչպես և նրանք, հակվում էր դեպի այն միտքը, թե հենց միայն իր խաչն է, որ իսկականն է: Աննետան մի կողմում դահճճների էր տեսնում, մյուս կողմում՝ զսիների ժերմենը նրան ստիպեց յուրաքանչյուրի մեջ տեսնել և զոհին և դահճճին: Այդ անհավատ գայլը բացեց Աննետայի առաջ մի ամրող ժողովրդի Գողգոթա ելնելու արտասովոր պատկերը, բոլորը խաչ են տանում, և բոլորը անհծներ ու քարեր են նետում դեպի խաչի վրայի մարդը...»

— Բայց չէ որ դա սարսափելի է, — ասում էր Աննետան: — Մի՞թե նրանք խելքի չեն գա: Քարերով իոառ խփե-

լու փոխարեն թող նրանք համախմբվեն և միասին հարաձակվեն...

- Ո՞ւ վրատ
- Մեծ դահճի:
- Ի՞նչ է այդ դահճի անունը:
- Թնություն:
- Չգլուխեմ, դա ինչ է նշանակում...  
Ժերմենը ռւսերը թոթվեց.

— Բնությունը...— նորից հարցրեց նա.— Այդ գեպքում ավելի լավ է Աստված։ Աստծուց գեռ կարելի է ինչ-որ խելամիտ բան սպասել... (Համենայն դեպս այդպիսի հույս գուրգուրելը հաճելի է): Բայց ընությունը— դա ի՞նչ է։ Ո՞վ է այդ բնությանը տեսելի Որտե՞ղ է նրա գլուխը։ Որտե՞ղ է սիրտը։ Որտե՞ղ են նրա աշքերը։

— Ահա թե որտեղ են։ Դրանք իմ աշքերն են։ Իմ մարմինը։ Իմ սիրտը։ Դա ես եմ և իմ մերձավորը։

— Զեր մերձավո՞րը։ Վե՞րջ տվեք... Ապա մի ուշադիր նայեք նրան... Ոչ, մի գնացեք։ Սպասեցեք...

Ներս մտավ հյուրը։ Զինվորական կապույտ շինելով, գեր, կարմրերես մի երիտասարդ։ Նրա գեմքը նման էր թուրժի տաճարի շքամուտքում գտնվող հաստաթուշ հրեշտակի տիկնիկացին միամիտ գեմքին։ Դա ժերմենի ընկերն էր, կից կանտոնի գլխավոր քաղաքից ոչ հեռու ապրող մի հարուստ կալվածատիրոջ որդի։ Նա արձակուրդ էր եկել և ոտքով անցել էր հինգ մղոն՝ ժերմենին այցելության գալու համար։ Երիտասարդը հիվանդի հետ համբուրվեց, քաղաքավարությամբ գլուխ տվեց Աննետային։ Եվ սկսեց ըլլըլալ։ Նրա առողջությունն ու կենսախնդությունը ուղղակի եղրերից ցայտում էր։ Նա պատմում էր ընդհանուր ծանոթների մասին, հիշատակելով նրանց ազգանունները, որոնք հնչում էին ուրախ ու բարեհոգի, ինչպես կատակերգության մեջ ծառաների անունները։ «Այստեղի» ընկերները։ Նրանցից ոմանք արդեն զոհվել էին։ Ոմանք գեռ կենդանի էին։ Տեղական կենդանի խոսվածքը՝ քթի մեջ, նրա պատմածներին զավեշտական երանգ էր տալիս։ Հյուրն աշխատում էր հարթել իր չափազանց անպարկեցտ խոսակցությունը.

Աննետայի պատճառով (կանանց հանդեպ ունեցած հարգանքից), նա հետևում էր իրեն։ Հրուցելով Աննետայի հետ, Ֆախոսում էր նրաճաշակ սիրալիր տոնով, քաղցր-մեջքը և հնառն։ Բայց դրա փոխարեն, մանրամասնորեն ու հաշակով պատմելով իր հարազատների մասին—մոր, քրոջ մասին, որին պաշտում էր, նա նորից դառնում էր անկեղծ, Միխոսքով, նա սիրտը բաց, հնազանդ, քնքուշ, և եթ երեխայի տպավորություն էր թողնում։

Երբ հյուրը գնաց, ժերմենն Աննետային հարցրեց.

— Ի՞նչ կասեք դուք նրա մասին։ Յուղի նման փափուկ է, ճիշտ է։ Ուզենաս հացին կրսես։

— Նրա մեջ խարեւություն չկա։— պատասխանեց Աննետան։— Անարատ, երեսը շքաշած կաթ է։ Նրանից ձեր արոտավայրերի հյութեղ խոտի հոտն է գալիս։

— Դուք ի՞նչ կասեիք, եթե տեսնեիք այդ թմրլիկ հրեշտակին, հիանալի տղային, հրաշալի որդուն, եղրորը և ընկերոջը (եթե նրան առաջարկեին առանց խոստովանանքի հաղորդություն ընդունել, նա կհամաձայնվեր առանց այլ-կայլության։ Նա երբեք չի ստում, սրտաբաց տղա է), դուք ի՞նչ կասեիք, եթե նրան տեսնեիք այնպես, ինչպես ես նրան տեսել եմ խրամատներում, սվինամարտի ժամանակ, երբ նա գործում էր, ինչպես մսագործն իր դանակով, և դեռ կատակում էր։

Աննետայից դուրս պրծավ զզվանքի մի շարժում։

— Մի հուզվեք։ Դուք ոչինչ չեք տեսնի, ես ձեզ խնայում եմ, ես ծածկեցի փակոցափեղկերը։ Ամեն ինչ կողպած է։ Փողոցում ականակիր մութ է։ Իսկ սենյակում մենք երկուսով ենք միայն։

Աննետան դեռ շվարած ասաց.

— Եվ այդ մարդը կարող է ծիծաղել։ Նա հանգիստ է։

— Նա արդեն ոչինչ չի էլ հիշում։

— Զի՞ կարող պատահել։

— Ես դրա նման ուրիշներին էլ եմ տեսել. իմ ցերեկային աշխատանքներից հետո— իսկ այդ աշխատանքները անհնար է նկարագրել— նրանք գիշերը երեխաների նման քնում էին։ Հանգիստ խղճով, եվ ի նկատի ունեցեք, որ մի

ժամ հետո նրանք պատրաստ կլինեին թշնամում գրկել, որի էտկորդը կտրել էին թարության նոպան նրանց ժոտ նույն-քան արագ է անցնում, որքան լարության նոպան Համա-հաւանեցնել այդ հակասությունները դժվար կլիներ, մանա-վանդ որ նբանք ժամանակ էլ չունեն: Պետք է ուժերը պահ-պանել իսկական ռոպեի համար, ապրել այնքանով, ինչ-քանով ապրում ես, պատահական թոցրած պատառներով, բախտաբերի և առանց կապի... այդպես չինում է արտա-ռովոր գլուխկոտրուկի ժամանակի...

— Դժբախտոնն՝ ը:

— Մի՛ խղճացեք նրանց: Նրանք լավ են ապրում:

— Ես նրանց մեջ ինձ եմ խղճում:

— Դա նույն հին էգոհղմն է: Զեր «Եսը» ձեզ թողեք, իսկ նրանց՝ իրենց սեփականը:

— Ես չեմ հավատում, որ հենց դա էլ նրանց իսկա-կան բնությունն է...

— Homo additus naturae...<sup>1</sup> Բնությունը, բայց հա-սարակության կողմից վերանայված և ուղղված հրատարա-կությունը: Ըստ երեսութին պատերազմը բնածին բնագդի սովորույթով սրբագործված բնական դրսերումն է: Եվ — ո՞վ զիտի — գուցե դա մարդու մեջ գտնվող կործա-նարար ուժերի համար ելք է, լիցքաթափում, որ նրան թեթե-վություն է բերում:

— Զեզ նույնպես:

— Իմ մասին խոսելու կարիք չկա: Ես ցուցակներից չնշված եմ:

— Ո՞չ: Հենց ձեր մասին է, որ ես ուզում եմ լսել:

— Դեռ ժամանակը չէ: Սպասեք Ժերմեն Շավաննի հերթը կգա... Եվ հետո Ժերմենին ճանաշելու համար պետք է նրան նայել իր աշխերով:

— Ես կուզեի միջուկը նայել:

— Համբերե՞ք: Չէ որ ես համբերատար էի... Պատկե-րացրեք, ինչքա՞ն համբերություն է պետք թակարդում բռնվածին, որպեսզի շխաբնվի նրան, ով իրեն բռնել է:

1 Մարդ գումարած բնություն (լատ.):

— Այդ գեպըում գուք ինչպես կարող էիք մտնել այդ  
կովի մեջ:

— Ես կարող էի ասել. «Ինձ ընտրություն շխողին...»: Բայց եթե թողնեին էլ, նույնը կլիներ. ես թակարդը կընտրեի: Չեմ ուզում պարծենալ, այն, ինչ ես մտածում եմ այսօր, այն ժամանակ չէի մտածում: Իմ բնավորության մեջ մի տիտուր առանձնահատկություն կա. ես ամբողջովին պատված եմ ծակոտիներով, որոնց միջոցով իմ մեջ դըրսից լցվում են այլոց հոգիները, և այդ պատճառով ես շատ հաճախ մոռանում եմ սեփականը: Չէ՞ որ ես ինձ ֆրանսիացի եմ զգում, մի կյանքով եմ ապրում մյուս ֆրանսիացիների հետ: Մենք հետաքրքրությամբ ենք նայում մեկս մյուսին, լսում ենք, թե ինչպես են մյուսները քարձրածայն խորհում, մտածում ենք երկուսով, քսան հազար ուրիշների հետ միասին, և վերջ ի վերջո մի տեսակ ոեզոնանս ենք դառնում ուզածգ արձագանքի համար: Ոչ դուք, և ոչ էլ որևէ մեկը չի կարող նույնիսկ պատկերացնել առաջին օրերի հրաշալի վերելքը... Դնացողների երգը... Մենք շենք այդ երգը ստեղծել: Նա ինքն է մեզ ստեղծել: Այդ գոռզոռան հրեշտակը սավառնում էր մեր գլխավերեռում, ինչպես Ռյուդի<sup>1</sup> հրեշտակն է սավառնում էտուալ հրապարակի վրա: Բայց նա հազար անգամ ավելի գեղեցիկ էր: Եվ մենք պատրաստ էինք մեր կաշին տալ, միայն թե հըպվեինք նրան: Նա ստվերում էր մեզ իր թևերով: Մենք չէինք գնում, սավառնում էինք, մենք ճախրում էինք աշխարհի վրա, արշավի մեկնելով հանուն ամբողջ աշխարհի ազատության: Դա հարթեցնում էր, ինչպես սիրո մեջ է լինում գրկախառնությունից առաջ... Ի՞նչ գրկել: Սոսկալի խարեռություն... Ամեն ինչ խարեռություն է: Եվ սերը նույնպես: Մերը մեզ զոհ է դարձնում: Նրանց զոհը, ովքեր գալու են, ապագայի զոհը: Իսկ ի՞նչ է նշանակում այդ հարթեցնող հավատը դեպի պատերազմը: Որտե՞ղ է նրա նպատակը: Ո՞ւմ, ինչի՞ համար է մեզ զոհարերում: Երբ հարթածությունն անցել է, և մենք տալիս ենք մեզ այդ հարցը, զոհաբերությունն արդեն կատարված է: Մարմինը արդեն ներս է քաշված

Նկատի ունի ֆրանսիական քանդակագործ Ռյուդի (1784—1855) հարթաքանդակը:

մեքենայի մեջ։ Մնում է միայն հոգին, Տանջված հոգին։ Իսկ ի՞նչ կարելի է անել հոգին առանց մարմնի, Հոգին, որը մարմնին հակառակ է գնում։ Քրքրե՞լ նրան։ Առանց այն էլ դահճճներ շատ կան։ Մնում է միայն նայել, իմանալ, ենթարկվել։ Դու ոստյուն արեցիր։ Դու թույլ տվիր հիմարություն։ Մեկ, երկու... Դե գնաւ Մինչև վերջը։ Կյանքը ետզարձի տոմսեր չի տալիս։ Եթե դու մեկնում ես, ուրեմն վերադարձ չկա... Բայց ես չուզեցի մենակ վերադառնալ, եթե նույնիսկ կարողանայի։ Մենք գնում էինք միասին, միասին էլ մեռնում էինք... Ես գիտեմ, որ դա անմտություն է, որ դա մահ է՝ հանուն ոշնչի։ Բայց մենակ փրկվել— ոչ։ Այդպես չի կարելի։ Ես նախրից եմ, Ես նախիր եմ։

— Զեր հետեւում նույնպես նախրիր է։

— Պանուրգի ոչխարներ<sup>1</sup>։

— Արդյոք ե՞րբ կգտնվի ձեր միջև գոնե մեկը, որ հրաժարվի ցատկել։

— Նա մեր մարգագետիններից չի լինի։

— Ո՞վ գիտի։

— Գուցե ձերից լինի, Աննետաւ Զեր գառը։

— Իմ որդին... Օ տե՛ր աստված... ինձ մի հիշեցրեք նրա մասին։

— Տեսնո՞ւմ եք, Դուք շէիք համարձակվի նրան այդպիսի խորհուրդ տալ։

— Թող շդիպչի նրան— և ինձ— պատերազմը։

— Ամե՞ն։ Բայց պատարազը կատարում ենք ոչ մենք։ Մէր գործն այդտեղ աննշան է։ Արյունալի արարողությունը տեղի է ունենում։ Եվ մենք բռնվում ենք։

— Թող բռնվածը ես լինեմ, բայց ոչ նա։

— Դուք կսովորեք Ֆրանսիայի, Գերմանիայի, Հավիտենական մարդկության բարի մայրերի խոնարհամտությունը։ Նրանք հնագանդվում են, խոնարհված ուրիշ, Վշտաբեկ մոր ոտքերի առաջ...։

— Երբե՞ք իմ ունեցածը— իմ մանկիկն է, Ես նրանքաց չեմ թողնի։

1 Նկատի է ունեցել Ռաբեկի «Գարգանտյուա» և Պանտագրյուելք գրքի էպիզոդը։

- Հակառակ բոլորի:
- Հակառակ բոլորի:
- Եվ հակառակ նրա՞ն:

Աննետան գլուխը կախեց, նրա շունչն սկսեց կտրվել: Ժերմենը նրա զգայուն թելերին կպավէ Թորքոքեց Աննետանի տագնապները, սարսափները, գաղտնի կասկածները, սրոնց մասին նա չէր համարձակվում խոստովանել իրեն, սրոնք ոչ մի բանով ոչ ոքի չէր մատնում: Աննետան ժերմենին երբեք չէր պատմել իր որդու մասին: Ժերմենը մի-սյն գիտեր, որ այդ որդին գոյություն ունի: Սակայն նրա լուսությունը պերճախոս էր: Ժերմենը ձեացրեց, որ չի հասկանում այդ լուսությունը:

— Ես ճանաշում եմ մեր երիտասարդությանը: Տասնութթվի հավաքն է... իսկ ի՞նչ է լինելու քսան թվին: Նրանք պատրանքներով իրենց շեն կաշկանդում, ինչպես այդ անում էին ավագները, այդ սենյակային բույսերը: Հիասթափություններից նրանք ապահովագրված են: Պատերազմը նրանց համար գործ է: Նրանց ինչին է պետք այնպիսի անհեթեթություն, ինչպիսին իրավունքն է, արդարությունը, ազատությունը և այլ կարգի անմտությունները: Նպատակը շահելն է: Ամեն մեկը իր համար է: Իր «ես»-ի համար—ամբողջովին, ինչպես որ կա: Գիշակեր «եսի»:

Life for struggle, struggle for life. Կնոջ հոտ, փառքի հոտ, արյան հոտ: Եվ արհամարհանք ամեն ինչի նկատմամբ: Արթնացած վագրի երազանք:

- Դուք դե եք,— ասաց Աննետան:
- Դժբախտ դե,— ասաց Ժերմենը: — Ես սեղանի մոտից հեռանում եմ քաղցած:
- Դուք ափսոսո՞ւմ եք դրա համար:
- Ո՞չ! Ես պատկանում եմ այն սերնդին, որն իր դարն ապրել է: Ես չեմ տրտնջում: Պետք է հասկանալ: Հասկանալ ամեն ինչ:
- Դա դժվա՞ր բան է: Ամեն ինչ հասկանալ— նշանակում է հրաժարվել գործելուց: Իմ սիրտը գործել է ուզումք ես կին եմ: Էլ ի՞նչ է ինձ մնում:

— Ներողամտություն:

— Իա ինձ համար քի՞չ է: Ես ուզում եմ օգնություն ցույց տալ, փրկել:

— Իսկ ո՞ւմ: Եթե նրանք չեն ուզում, որ իրենց փրկեն:

— Թող շուգեն: Ես ուզում եմ: Ինձ շատ լավ հայտնի է, որ ես ոչինչ եմ, որ ես ոչ մի բանի չեմ հասնի: Բայց ես ուզում եմ ամեն ինչ: Պետք է ուզել եթե նույնիսկ բոլոր աստվածները, և բոլոր սատանաները, և բոլոր սատանաներից վատթարագույնը՝ մարդը, եթե ամբողջ աշխարհը ասի: «Ոչ» — ես կասեմ «Այո»:

— Մարտինա<sup>1</sup>, որին դուք է գալիս ծե՛ծ ուտել...

— Դրան այնքան էլ մի հավատաք: Ես փոխարենը վերադարձնում եմ:

— Ինչքան էլ ուզում է դուք ճգնեք, ճակատագրի կարծր ժայռից չեք կարող նույնիսկ փոշու մի հատիկ շարժել տեղից:

— Գուցեկ շշարժեմ... Բայց այդպես ինձ համար ավելի հեշտ է:

— Ես արդեն ձեզ ասացի. դուք թելոնան<sup>2</sup> եք: Զեր Աննա անունը հնարովի է:

— Այդպես կոշում էին այն մարդու տատիկին, ով մահին հաղթեց:

— Եվ մեռավ:

— Բայց երրորդ օրը հարություն առավ:

Աննետան շփոթվեց ու կմկմաց:

— Դուք դրան հավատո՞ւմ եք.

— Ես չէի հավատում — առաջ...

— Իսկ հիմա<sup>3</sup>:

— Չգիտեմ... Այդ միտքը հանկարծ ինձ խոցեց:

Ժերմենն ուշադիր զննում էր տարօրինակ կնոջը, որին անսպասելի և խորհրդավոր հյուրեր էին այցելության գալիս: Նստելով մահճակալի մոտ գտնվող ցածրիկ աթոռին,

<sup>1</sup> Մարտինա — Մոլիերի «Ակամա բժիշկ» կատակերգության պերսոնաժը:

<sup>2</sup> Թելոնա — սլատերազմի աստվածուհին:

նա խոնարհված շլխով կպավ վերմակին, մի տեսակ փըռ-  
վելով վրան։ Ժերմէնը զգուշորեն ձեռքը դրեց Աննետայի  
ոսկեզօծ մազերի սաղավարտին։ Աննետան զլուխը բարձ-  
րացրեց։ Նրա հայացքում զարմանք կար, բայց և հանգըս-  
տություն։ Ժերմէնը կիսաձայն հարցրեց։

— Ուրեմն, հավատո՞ւմ եք։

— Ինչի՞ն։

Աննետայի զարմանքը անկեղծ էր։ Նա չգիտեր ինչ պա-  
տասխանել։

— Ես հավատում եմ, որ պետք է զործեմ, օգնություն  
ցույց տամ, սիրեմ։

— Լավ, — ասաց Ժերմէնը։ — Հենց դրա համար էլ ես  
ձեզ կանչել եմ։ Ես չէի ուզում ժամանակից շուտ ձեզ հետ  
այդ մասին խոսել։ Ուզում էի տեսնել ձեզ, նայել ձեր խոր-  
քը։ Եվ նայեցի։ Բավական է խոսել նրա մասին, ինչ ես չեմ։  
Հեղնանքի համար խնդրում եմ ներեք, դա իմ պաշտպանա-  
կան ծածկույթն է։ Ես բացում եմ դուռը։ Քույր Աննա,  
մտեք։

— Եթե բոցը փոթորկվում է, սպառնալով մի ամբողջ  
թաղամասի, և մարդիկ անզոր են բոլորը փրկել, կրակին  
են զիջում նրա ավարը զարձածի մի մասը, թողնում են  
այն, ինչ դատապարտված է կորստյան, զարդում են կա-  
մուրջները և թաքնվում են քարե աշտարակում, որտեղ  
թաքրած են ամենաթանկ բաները։ Փրկում են իրենց կյան-  
քը, հենց կյանքը, և սպասում են, մինչեւ որ կրակը ոչնշայ-  
նի տունը, թողնելով միայն մոխիրը… Ես պաշտպանեցի  
իմ տունը, բայց կրակը նրան էլ է հասնում։ Աննա, օգնու-  
թյա՞ն հասիր։

Ժերմէնը չէր կարողանում միանգամից գեն նետել ծաղ-  
րական տոնը, բայց նրա ձայնի մեջ հուզմունք էր զգաց-  
վում։ Աննետան սեղմեց նրա ձեռքը։

— Ահա իմ ձեռքերը։ Ի՞նչ պետք է փրկել։ Այս ձեռքերը  
չեն վախենա կրակից։

— Իմ խնդրությունը։ Իմ հավատը, իմ «եսը»։ Նրան,  
ում ես սիրում եմ։

- Այն կնո՞ջը...
- ...իմ բարեկամին;
- Որտե՞ղ է նա: Նա ինչո՞ւ այստեղ չէ:
- Նա գերի է:
- Գերմանիայո՞ւմ:
- Ֆրանսիայում:
- Նա «թշնամի՞» է:
- Այդպես է ստացվում: Իմ եղբայրը, իմ բարեկամը, իմ լավագույն բարեկամը: Ինձանից վերցրին նրան և ասացին. «Մոռացիր, սպանիր, Դա թշնամի է»:
- Եվ դուք կովո՞ւմ էիք:
- Երբեք ես չեմ կովել նրա դեմ: Երբ ես գնում էի գեպի սահմանը, գիտեի, որ նա սահմանի այն կողմը լէ: Ճակատ մեկնելուց առաջ ես գրկեցի նրան— այստեղ: Ֆրանսիայում: Նա մնաց այստեղ:
- Նրան բանտարկե՞լ են:
- Նա արևմուտքում է, ուազմական գերիների ճամբարում: Ամբո՞ղջ երեք տարի: Այդքան ժոտիկ և այդքան հեռու ես լուրեր չեմ ստանում, նրա մասին ոչինչ չգիտեմ: Կենդանի՞ է արդյոք նա: Իսկ ես, ես ժեռնում եմ...
- Ինչպե՞ս: Մի՞թե հնարավոր չէ տեղեկություններ իմանալ:
- Մի՞թե ես կարող եմ նրա մասին այստեղ հարցնել:
- Զերոնք ձեզ սիրում են: Միթե նրանք կկարողանային որևէ բան ձեզ մերժել:
- Ոչ, ես նրանց հետ այդ մասին խոսել չեմ կարող:
- Չեմ հասկանում:
- Հետո կհասկանաք... Հիմա ես ձեզ գտաւ: Ինձ խընդություն է պարզեած ձեզ հետ խոսել նրա մասին: Նրա մասին խոսել մի մարդու հետ, որը կարող է նրան սիրել,— դա համարյա նույնն է, թե նրա հետ խոսել: Դուք կսիրե՞ք նրան:
- Ես նրան սիրում եմ ձեր մեջ: Ցույց տվեք նրան: Պատմեցե՞ք նրա մասին...

— Նրա անունը Ֆրանց է, իսկ իմը Ժերմեն... Ժերմենը քրանսիացի է, իսկ Ֆրանցը՝ գերմանացի... Մենք ծանոթացել ենք պատերազմից մոտ երկու տարի առաջ: Ֆրանցն արդեն մի քանի տարի է, ինչ բնակություն է հաստատել Փարիզում: Զբաղվում էր գեղանկարչությամբ, Մենք իրար ժոտիկ էինք ապրում. մեր սենյակների լուսամուտները նայում էին միևնույն այգուն: Երկար ամիսներ մենք համարյա իրար կողքի էինք ապրում, ոչ մի անգամ խոսակցության շրոնվելով միմյանց հետ: Մի անգամ երեկոյան, ժտքերի մեջ խորասուզված, մենք խաշմերուկում իրար գեմդուրս եկանքի: Բայց դա միտքս եկավ ավելի ուշ... Փարիզի կյանքի մրրիկում, որ պտույտ է տալիս տղամարդկանց ու կանանց, ինչպես տերեւներ, կարող է պատահել, որ մարդիկ հանդիպեն ու շփվեն միմյանց հետ իրար իսկական նկատելուց շատ առաջ: Բայց բավական է որևէ պատահական խթան— և հանկարծ հիշում ես. մենք արդեն տեսել էինք իրար... Մի անգամ նրան ինձ մոտ բերեց մեր ընդհանուր ծանոթներից մեկը: Եվ ես ճանաչեցի նրան...»

Այն ժամանակ նրա քսաներեքն արդեն անց էր, բայց նա միանգամայն պատանյակ էր թվում: Նրա վրա դեռ պահպանվում էր այն կնոջ՝ մոր դրոշմը, որին նա կորցրել էր դեռ երեխա ժամանակ: Նույրք գծագրված դեմք ուներ— հուզված, անհանգիստ, որ բաց էր հույսերի և կասկածանքների առաջ: Լույսն ու ստվերները սահում են նրա վրայով առանց անցումների: Անհոգ դյուրահավատությանը անմիջապես հետեւում են հիասթափությունը և ընկըճվածությունը: Մերթ նա բացսիրտ է, մերթ՝ ամփոփված է իր մեջ, թշնամական, անդրդվելի: Բայց ես էի միայն դա նկատում և աշխատում էի բացատրել ինձ: Ֆրանցի ընկերներից ոչ ոք չէր հետաքրքրվում դրանով: Մարդիկ սիրում են կամ չեն սիրում, բայց նրանք ժամանակ շունեն զննելու նրանց, ում սիրում են: Ասենք, ես նույնպես երկար ժամանակ ուշադրություն շէի դարձնում դրան: Բայց կյանքը ստիպեց ինձ թանկ վճարել այդ բանի համար (ես ձեզ արդեն պատմել եմ): Եվ ես իմացա իմ դառը փորձով, որ երբեք բլետք չէ մերձավորին սիրել սեփական անձի նման,— սիրիր այդ մերձավորի մեջ նրան, ում նա իրենից ներկաւ

յացնում է, ինչ նա ուզում է լինել, ում գու պետք է հայունագործես...

Ոչ, իմ և այդ պատանի օտարերկրացու միջև նմանություն չկար... Եվ հենց դրա համար էլ... ես նրա կարիքն ունեի: Իսկ նա՝ իմ կարիքը...

Իր մանկությունը և սովորելու տարիները նա անց էր կացրել այնպիսի մի միջավայրում, որը գաժանորեն ճնշել էր նրան. ազնվականների, զինվորականների, կղերականների միջավայրում՝ նրանց նեղ բարոյական կանոններով և մեկուսացած կաստայի աննորմալություններով: Նրա կանացի բնավորության համար այդ միջավայրը շափազանց կոպիտ էր: Անշափ թույլ, անշափ միայնակ՝ հակահարված տալու համար, նա կամա թե ակամա ենթարկվեց այդ բարքերին և աշխարհայացքին: Բայց ամբողջ կյանքում նրա մոտ դրանից վերք մնաց, ինչպես բռնաբարված աղջկա մոտ: Նա մեկընդմիշտ մնաց ամաշկոտ, կասկածամիտ, անվստահ, կամազուրկ, կյանքին վատ հարմարված, անմարդամոտ, սիրելու անհագ պահանջով, սիրված լինելու և տրվելու ցանկությամբ, հիասթափության հավիտենական ցավով: Զեր այդ խառնվածքի մարդիկ կարծես հենց նրա համար էլ ստեղծված են, որպեսզի ուրիշները նրանց շարաշահեն: Նրանք շափազանց հեշտ ցույց են տալիս իրենց ամենախոցելի տեղը: Մարդիկ շեն կարողանում դիմանալ այդպիսի մարդուն դանակի ծայրով խոցելու գայթակղությանը, որպեսզի նրանից ցավի ճիշ կորզեն: Ավելի լավ է բոլոր վիճակները չգինվել, քան զինվել կիսով շափ...

Հոր մահից հետո Ֆրանցը մեկնեց արտասահման: Նա բնակություն հաստատեց Փարիզում և փորձեց մոռանալ իր ծանկության գեղ երազը: Բայց տանջալից անցյալը, ինչպես շագրենի կաշին, կծկվում է ժամանակից: Եվ ավելի ու ավելի սուր ցավ է պատճառում: Սակայն Փարիզը կախարդեց պատանուն, հագեցրեց նրա պլաստիկ գեղեցկության ծարավը: Զեր որ պլաստիկ գեղեցկությունը այդ քաղաքի տարերքն է, այստեղ դա շնչում ես մաքուր տեսքով: Նույնիսկ ամորալիզմն այստեղ զգացվում է որպես նոր կախարդանք: Բայց Ֆրանցը անշափ սովոր էր ապրել ներ-

քին կյանքով և չեր կարող չզգալ, թե որքան ցածր են գնահատում այդ կյանքը շրջապատի մարդիկ։ Ֆրանցը տառապում էր նրանց ծաղրուժանակից, չորությունից։ Նա իր հավատալիքներն ուներ։ Դրանց մեջ որդնածություն էր առաջացել, նա ընդունակ չեր միայնակ պաշտպանվել անհավատությունից, վայելքների ձգողական ուժից։ Իսկ բարեկամները դրանց մեջ վտանգավոր ոչինչ չեին տեսնում, նրանց բավականություն էր պատճառում այդ բարբարոսին խելք սովորեցնելը։ Ասենք, ինչը կարող է վտանգավոր լինել այնպիսի մարդկանց համար, ովքեր ոչ ոքի և ոչինչ լուրջ չեն ընդունում, քանի որ իրենց էլ ոչ ոք և ոչինչ լուրջ չի ընդունում։ Բայց Ֆրանցը, ինչքան էլ կովում էր դրա դեմ, ամեն ինչին վերաբերվում էր լուրջ... Նա գնում էր դեպի հատակ, ատելով սեփական անպաշտպանությունը։

Հենց այդ ժամանակ էլ ես հանդիպեցի նրան։ Մեզ ծանոթացնող ընկերները, որոնք հաճելի մարդիկ էին, բայց աւմենեին ոչ զգայուն, սիրում էին Ֆրանցին, իսկ այդ կարգի մարդիկ դա բավական են համարում՝ առանց ձևականությունների վերաբերմունքի համար։ Նրանց զվարճացնում էին այն խոստովանությունները, որոնք նրանք գուրս էին կորզում Ֆրանցից և բարեհոգաբար հաղորդում էին ուրիշներին։ Դա ավար էր նրանց ամբողջ խմբակի համար։ Բարձր հասարակության մեջ նրանք Ֆրանցին ցույց էին տալիս, որպես հաճելի և զվարճալի հազվագյուտ էակ։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ նրա «Հովանավորները» (այդպիսիներ էին նրանք իրենց համարում) շարաշահում էին Ֆրանցի սիրալիբությունն ու ամաշկոտությունը։ Տիկինը նրան հանձնարարություններ էր տալիս, ինչպես փոքրիկ ծառայի, կամ իր հետ քարշ էր տալիս մեծ խանութները, որպեսզի հետք խորհրդակցի կամ իր գնումները քարձի վրան։ Տանտերը նրան կարգում էր իր գրական վարժությունները և նրա վրա գնում խմբագրությունները զնալու տհաճ պարտականությունը։ Ֆրանցը մի ծառա էր, որին կարելի էր բարձել ինչքան ուզես։ Բայց դրա փոխարեն նրան ողորկում էին, վարժեցնում, բազմաթիվ խորհուրդներ տալիս, որոնք նա չէր խնդրում, գողանում էին նրա

մտքերը, դուրս էին կորզում ողջախոհորեն թաքնված՝ գգաց-  
մունքները և դրանք ի ցուց էին զնում բոլորին. ծիծաղելի,  
մերկացրած— իր իսկ օգտի համար: Դրանցից գանգատվելը  
աև ապերախտություն կլիներ:

Ասենք նա չէր էլ գանգատվում, բայց, փառք աստծո,  
իր բախտից, նա ապերախտ էր... Դա ինձ համար պարզվեց  
իսկույն կեթե Թոնազբոսիկ ժպիտի մեջ, որը նա տանջան-  
քով պատկերում էր իր դեմքին ի պատասխան նրան ներ-  
կայացնող ընկերների էնքնասիրություն շոյող ու հեգնան-  
քով ասված խոսքերին, ես նկատեցի ցավ, տհաճություն:  
Ժոալլ ընկճվածություն: Այդ զգալու համար ինձ բացատ-  
ռություններ պետք չեղան: Մի հայացքով ես ընդգրկեցի  
նրա և նրա «Հովանավորողի» միջև ընկած տարածությունը:  
Եվ նրբ «Հովանավորող» սկսեց խոսել, ես, առանց պա-  
տասխանելու, գիմեցի նրան, ով լուսում էր, գիմեցի կարեկ-  
ցությամբ ու հարգանքով, որոնք ես կզգայի Տավրիդայի  
բարբարուների ձեռքն ընկած պատանի Օրեստի նկատմամբ:  
Ափսոս, որ դուք լեք տեսել, թե որքան պայծառ լուսավոր-  
վեցին նրա աշքերը իմ հենց առաջին խոսքերից: Նա ճա-  
նաշեց իր Հայրենիքի լեզուն, Հայրենիքի, որն ավելի եր-  
կար կապրի, քան բոլոր Տրոյաները,— Բարեկամության  
լեզուն... Եվ Հարգանքը, որը ժարդու հոգին պետք է ցուցա-  
քերի նույնպիսի մարդկային հոգու հանդեպ, բայց որը բաց  
է թողնվում այնքան ժլատ շափով, արտասվելու աստիճան  
նրան հուզեց: Ես ցուց շտվեցի, թե այդ արցունքները  
նկատում եմ: և շարունակում էի խոսել, որպեսզի նրան իր  
հուզմունքին տիրապետելու ժամանակ տամ: Ֆրանցը կոա-  
հեց իմ դիտավորությունը, և, հենց որ նա հաղթահարեց  
իրեն, մեր միջև, զարմացած Ֆուանտի<sup>1</sup> աշքի առաջ, խելա-  
միտ ու քնքուշ զրուց սկսվեց: Մենք խոսում էինք ամեն  
ահսակի դատարկ բաներ՝ մասին: Բայց ամեն ինչ արտա-  
հայտում էր ձայնը: Հայացքը հարցնում էր.

«Մի՞թե այդ դու ես»:

Զայնը պատասխանում էր.

1 Ֆուանտ— տրոյացիներից մեկը («Խլիական», երգ XVI, 311):

ՎաԱյդ ես եմ, եղբայր իմուս

Վերադառնալով տուի, Թրանջը խսկույն և եթ ինձ ջերմ նամակ գրեց: Հաջորդ օրը մենք տեսնքեցինք առանք կողմ-նակի մարդու... Այս ես չէի կարող նույնիսկ պատկերաց-նել, թե ինչ արձագանք կառաջացնի այդ քաղցած սրտում նրան ցույց տրված համակրանքի պոռթկումը: Ավելի քիչ ես կարող էի պատկերացնել, թե ինչ տեղ կարող է գրա-վել իմ կյանքում այդ եկվորը: Ես, ինչպես բոլորը, մի եր-կու-երեք բարեկամ ունեի: Ես նրանցից շատ բան չէի ուզում, ինքս էլ նրանց շատ բան չէի տալիս: Մենք ան-կեղծ ուրախությամբ հանդիպում էինք, միմյանց ծառայությաններ էինք ցուց տալիս, բայց լուս կերպով պահպա-նում էինք սահմանները, որոնց անցնելը անգառություն կլիներ: Երիտասարդությունը իր եսասիրությամբ դրանք քնական է համարում: Ուրիշներից մարդ այնպիսի սպասում-ներ չունի, ինչպիսի սպասումներ ուրիշները քեզանից չեն ակնկալում: Ֆրանսիացին կյանքը և մարդկանց իր սեփա-կան շափանիշներով է շափում: Եվ շափից ավելի ոչինչ: Մարդ պետք է կարողանա ժամանակին զատել իրեն...

Բայց պատանի Օրեստը, որի կասկանքները ես արձա-կեցի, չէ՞ր զսպում իրեն: Նա երբեք չէր շափում իր զգաց-մունքները այն շափով, որը պահանջում էր կյանքը: Նա ինձ մի բարեկամություն տվեց, որը պատշաճ կլիներ ար-դեն անհետացած մարդկանց ցեղին: Եվ ես պետք է աճեի, որպեսզի արժանի դառնայի այդ բարեկամությանը: Դա ինձ այնքան էլ շնաջողվեց, բայց ես արի այն ամենը, ինչ իմ ուժերը ներում էին, որովհետև այդ ուզում էր ֆրանցը: Զէ որ նա ինձ տալիս էր բոլորը: Եվ պահանջում էր բո-լորը... Եվ, տեր իմ աստված, ես կարծում եմ, որ— շատ էր այդ թե քիչ,— նա վերցրեց բոլորը...

Այդ երկար պատմությունից հետո— Ժերմենը խոսում էր առանց շտապելու, ավելի շատ իր համար, քան Աննե-տայի, նա երբեմն խոսքը դանդաղեցնում էր, որպեսզի մի անգամ ևս վերապրի որոշ ակնթարթներ,— Ժերմենը լոեց և սուզվեց խոհերի մեջ:

Աննետան, կուպած դեպի նա, աշխատում էր շշարժվել, որպեսզի չխրտնեցնի հիացմունքը։ Աննետայի աշքերը, որոնց մեջ առկայծում էին նրա առջևով անցնող պատկերների ստվերները, շարունակում էին լսել նաև ժերմենի լոելոց հետո։ Ժերմենը նայում էր այդ աշքերի մեջ, թոպեները հոսում էին համր զրույցի ընթացքում։ Աննետան հիանալի հասկանում էր նրան, ժերմենը փոքրինչ քաշվելով, կարծեա թ պատասխան Աննետայի մտքերին, ասաց (թվում էր, թե նա ներողություն է խնդրում)։

— Եի՞թե հետաքրքիր չէ։ Ծննդյան օրից ապրում ես ինքդ քեզ հետ, ճանաշում ես քեզ կամ կարծում ես, թե ճանաշում չեմ... Մարդը արտաքինից շատ պարզ է, տաշված, զուրս է բերված մի կտորից։ Թոլոր մարդիկ կարծես թե նույն ձևն տևեն, կարծես պատրաստ, ավարտված, խանութից են գուրս ռկել... Բայց բավական է շփվես մեկնումեկի հետ— և այնքան տարբեր էակներ կհայտնաբերես նրա պատյանի տակ։ Ո՞ւմ մտքով կանցներ, թե ես իմ մեջ սիրող մոր կամ քրոջ թախծող հոգի կհայտնաբերեմ։ Դուք ձիծաղում եք...»

— Ինքս ինձ վրա եմ ձիծաղում, — ասաց Աննետան, ես նույնպես քիչ այդպիսի թախծոտ հոգիներ չունեմ։

— Այո, ես նրանցից մի բանիսին տեսնում եմ։ Դուք մի ամբողջ փոքրիկ հոտի հովկուճի եք։

— Եվ դեռ լավ է, — ասաց Աննետան, — եթե ես եմ տանում իմ ոչխարներին և ոչ թե նրանք ինձ։

— Թոլորն ուզում են ապրել, — ասաց ժերմենը։ — Թողարածեն իրենց համար։

— Իսկ դաշտային պահա՞կը։

Նրանք ձիծաղեցին։

— Թող գրողի ծոցը գնա մեր հասարակությունը, — ասաց ժերմենը։ — Նա միայն մի բան է հաշվի առնում, օրենքների մողովածուն։

Ժերմենը մի պահ մտածեց և շարունակեց։

— Հա, ուրեմն ես խոսում էի մեր խեղճ բարեկամի մասին։ Երբ մի կենդանի էակ ես տեսնում, որը խեղդվում է, ի՞նչը կարող է ավելի մարդկային լինել, բան նրան ձեռք մեկ-

Նելլ և հենց որ նա բռնի այդ ձեռքը, գրկել ու տանել նրան և հոգալ նրա մասին։ Ֆրանցը մանկության տարիներից իսկական մտերմություն չէր ունեցել, և տառապանքի պարսպի հետեւմ այնքան քնքություն էր կուտակվել։ Երբ նա հանդիպեց ինձ, շլյուզները բացվեցին։ Հեղեղը դուրս խուժեց։ Ես ուզում էի դիմադրել։ Բայց ո՞վ կհրաժարվի ընդունել քեզ հավատացող ազնիվ ու կենդանի սրտի պարզեց։ Դու շնորհակալ ես լինում այդ հավատի համար, որն ինքդ չես ունեցել։ Զանում ես արժանի լինել դրան։ Եվ ահա հանդիպելով այդ մեծ մտերմությանը, ես հասկացա թե ինքս նույնպես ինչքան եմ զգում դրա կարիքը... Եթե դա քեզ տրված չի եղել, ընտելանում ես կիսաքաղց ապրելուն։ Կարիքը իմաստնացնում է, և ոչինչ արդեն կյանքից չես սպասում։ Բայց երբ այդպիսի մտերմություն է ստեղծվում, ձուլելով երկու միտքը մի միասնական ներդաշնակ ամբողջության մեջ, սկսում ես հասկանալ, թե դու ինչպես ես զգացել դրա կարիքը։ Չես ըմբռնում, թե այդ ինչպես ես դու ապրել առանց դրա—առանց այդ բարեկամության.... Բայց այդպիսի հայտնագործության մասին կարելի է պատմել լոկ նրան, ով ինքը նույնպես դա հայտնագործել է։ Մերոնցից ոչ ոք չէր կարող իրեն բացատրել մեր մտերմության պատճառները... Պատճառները, Պատճառներ չկան։ Բարեկամը պետք է այն բանի համար, որ դու կարողանաս ինքդ քեզ հարազատ մնալ։ Միայն երկուսով ես լիակատար էակ կազմում... Եվ ահա շըրջապատղները այդ շեն ներում։ Եթե դու լրիվ մարդ ես կազմում մի ուրիշի հետ, մյուսներն իրենց վիրավորված են զգում։

— Դա ինձ համար խորթ է,— ասաց Աննետան։ — Միրո բացակայության պատճառով, որի կարիքը միշտ զգացել եմ, ես որդեգրում եմ ուրիշների սերը։ Ով սիրում է իր բարեկամին, սիրում է ինձ։

— Այ թե ագահն եք,— ասաց Ժերմենը։

— Ես ուտելու բան չունեմ,— առարկեց Աննետան։

— Հենց այստեղից էլ ագահությունն է։ Երանի չունեցողներին, քանզի ամեն ինչ նրանց կտրվի։

Աննետան հիասթափված գլուխն օրորեց.

— Այդպիս միշտ ասում են հարուստները, Նրանք լքաւ վորին հավատացնում են, որ հենց նրան տրված է ավելի շատ, քան բոլորին:

Ժերմենը դիպավ նրա ձեռքին:

— Դուք այնքան էլ չքավոր չեք: Զեր խրձանոցում շատ բարիքներ կան:

— Ի՞նչ բարիքներ:

— Սեր, որը դուք կարող եք տալ:

— Դա ոչ ոքի պետք չէ:

— Գոնե մի խուրծ նվիրեք ինձ: Ես կարող եմ տնօրինել այն:

— Վերցրեք: Ինչո՞վ ես կարող եմ ձեզ օգնել:

Շավանների ընտանիքը երբեք հավանություն չէր տալիս այդ անբնական բարեկամությանը, որը հիմնված չէր սոցիալական շահերի միաձուլության վրա— հայրենիքի, միջավայրի, կարիերայի— և հանդգնորեն ցույց էր տալիս, որ կարող է առանց դրանց յոլա գնալ: Գավառական հասարակությունը դեռ մինչև պատերազմը համարում էր, որ այդպիսի սերտ մտերմությունը գերմանացու հետ վատ ճաշակի գրսնորում է: Դա, ինչպիս և ժերմենի բնավորության մեջ շատ բան, վերագրում էին օրիգինալություն անելու ձգտումին: Այդ կողմերում բնակիչներն իրենց անհաղթահարելի ծովությամբ և ծաղրելու սովորույթով հակված են սեթենթանքով բացատրել իրենց հայրենակիցների ամեն տեսակի շեղումը շարլոնից, միայն թե նեղություն շպատճառեն իրենց, շշանան հասկանալ: Ինչեւ, մինչև պատերազմը ընդունված էր, ծիծաղելով, հանդուրժողականություն ցուցաբերել դեպի բոլոր անհասկանալի բաները. ո՞ւմ ինչ գործն է: Խսկ 1914 թվականից— մնաս բարո՞վ, սքանչելի անտարբերություն, որ թեթևացնո՞ւմ էիր հասարակության կյանքը: Բոլորն իրենց հրսկիչի իրավունք էին վերապահել ուրիշների վրա, նույնիսկ զգացմունքներն էին ենթարկվում ստուգման: Առանց անձնագրի սիրո վրա արգելք էր սահմանված: Գերմանացու ՀՀտ բացեիքաց ընկերակցելը համարվում էր անթույլատրելի: Ժերմենի փեսայի և քրոջ կարծիքով, սիրային կապը

որևէ ավագակային շայկայի պարագլխի հետ պակաս անքանական կլիներ։ Դրանք շատ հաճելի մարդիկ էին, հարգարժան և սահմանափակ։

Տիկին դը Սեյժին, որ ծննդյամբ Շավանն էր, եղբորից յոթ-ութ տարով մեծ էր նա օժտված էր մտքի այնպիսի վճռականությամբ, որը ֆերմենը չուներ։ Սեյժին կարիք չուներ ընտրություն կատարելու համար նեղություն տալ իրեն. յուրաքանչյուր գեպքի համար նա պահած ուներ պարզ ու ստույգ սահմանագծված մի միտք միայն, որը անմիջապես կարդացվում էր տիկին դը Սեյժինի անսխալ ու ցայտուն, բայց միանգամբից, առանց լրացուցիչ աշխատանքների գծագրված գեմքին. երկար ու բարակ քիթը գնում է կատարելապես ուղիղ, առանց փոքրագույն իսկ շափով ծովելու, իսկ երբ կանգ է առնում, ուրեմն էլ ոչ մի քայլ, նույնիսկ քիթանցքներն է սեղմելու ծակատն ուռուցիկ է, առանց մի կնճիռի։ Մազերը ձգված են, ոչ մի դուրս ցցված փունջ, ականջներն ու քունքերը բաց են։ Հոնքերը բարակ են, կամար, աշքերը՝ սրատես։ Շատ փոքրիկ բերան. նեղիկ դուռ, որը կարծես հենց նրա համար էլ ստեղծված է, որպեսզի փակ մնա։ Զաղիկ կղակ, բայց պրկված մաշկով։ Ոչինչ չի ցնցվում, չի շարժվում այդ դեմքի վրա։ Ոչ մի ակոս դեմքին չկա, բացի ուղիղ կամային գծերից։ Կարծես վերևից ներքն գրված է. «Վիճելն անօգուտ է»։ Ինչեմքե, տիկին դը Սեյժին շատ զուսպ է և քաղաքավարի։ Զեզ չի հաջողվի նրան համբերությունից հանելու Դամարմնացած ինքնավստահություն է։ Պատու Պատի հետ վեճի շեն բռնվում, շրջանցում են։ Պատը կտրում է և շրջափակում. նրա դերն այդ է։ Եվ այն, ինչ նրանով կտրված է, ձեզ համար չէ։ Դա մասնավոր տիրույթ է, մասնավոր սեփականություն։ Յուրաքանչյուրն իր տանն է, իսկ դուք՝ շեմի այն կողմը...

Այդ «իր» տուն հասկացության տակ ենթադրվում էին նախ և առաջ Սեյժի-Շավանները, այնուհետև քաղաքը, հետո գավառը և, վերջապես, ամբողջ Ֆրանսիան։ Պատերազմն այդ բոլորը ձուլեց մի ամբողջության՝ հայրենիքի մեջ։ Բայց տիկին Սեյժին կենտրոնում էր։ Որպես ֆրանսիական կանանց Միության տեղական կազմակերպության նախագահ, նա

իրեն իրավասու էր համարում խոսել բոլոր կանանց անունից: Իսկ Ֆրանսիայում կինը նշանակում է ամբողջ տունը: Տիկին դը Սեյժին ֆեմինիստուհի չէր, ինչպես և ֆրանսուհին ների մեծամասնությունը, — չէ որ փաստական իշխանությունը նրանց ձեռքին էր: Իրավունքները նրանց պետք չէին—դա, նրանց կարծիքով, անթացուա է կաղերի համար: Տիկին դը Սեյժի-Շավաննը համարում էր, որ ինքը պատասխանատու է իր տանը պատկանող բոլոր տղամարդկանց համար: Եվ նրանք իրեն շխայտառակեցին, մեկը թույլ տվեց, որ իրեն սպանեն (պարոն դը Մարեյը), իսկ մյուսը ծանր վերք ստացավ (Սեյժի եղբայրը), իսկ ինչ նրա ամուսնուն է վերաբերում, հրետանային կապիտանին, ապա նա ահա արդեն կես տարի է, ինչ գտնվում է վերգենյան փոթորիկի ստկի: Դա չի նշանակում. թե նա Կոռնելյան ոգու հերոսուհի էր: Նա սիրում էր իր Հորացիուսներին: Նա չէր ծգուում այն բանին, որ նրանք մեռնեն: Նա քայլում էր նրանց հետեւից՝ առանց ուժ խնայելու: Եթէ նրա կամքին թողնեին, Սեյժին կրածաներ նրանց ճակատագիրը: Բայց նրանց տարած վորձությունները Սեյժին չէր խափանի: Ֆրանսիա, հայրենի երկիր, հարազատ քաղաք, Սեյժիներ—նրանք միշտ էլ արդարացի են: Եվ այդ արդարությունը պետք է գործով ապացուցել: Առանց գործի արդարությունը ոչինչ է: Հենց իմ իրավունքն էլ (արդարացի թե անարդարացի) իսկական իրավունքն է: Թող կործանվեն բոլոր Սեյժիներն ու Ֆրանսիան, բայց իմ իրավունքից ես չեմ հրաժարվի... Տիկին դը Սեյժին անցյալի հերոսական դատամոլների ժառանգն էր: Պատերազմը, կյանքը. ժահը— դատավեճ է: Ավելի լավ է ամեն ինչ զոհաբերել այդ դատավեճը շահելու համար. բայց չհաշտվել...

Հասկանալի է, այդ կարգի կնոջ համար շարժե նույնիսկ խոսել հակառակ կողմի իրավունքների մասին... Նա հպարտանում է իր եղբորով. եղբայրը պաշտպանում էր Ֆրանսիան, իսկ նա ինքը եռանդուն կերպով պահպանում է եղբորը մոտեցող մահից: Բայց տիկին դը Սեյժին կգերազաներ թողնել, որ եղբայրը մահանա, քան կբաջալերեր նրա խայտառակ թուլությունը՝ բարեկամությունը գերմանացու հետէ

Եիկին դը Սեյժին գիտի այդ բարեկամության մասին։ Բայց նրա համար ցանկալի չէ գիտենալ։ Եվ ֆերմենը ստորագրում է դրա տակ ։ Նրանց միջև լուր փոխադարձ համաձայնություն կար։ Ով սիրում է, նա չի ուզում վիրավորել իր համար թանկ անունը — ոչ միայն խոսքերով (տիկին դը Սեյժին ինքնատիրապետման մարմնացում է), այլև մտովի (դա ավելի վատ է)։

Միայն տիկին դը Շավանն-մորն է հայտնի, թե որքան է կայուն որդու մտերմությունը, և, նրան սիրելով, մայրը դա շտեսնելու է տալիս, բայց բոլորովին առանց հավանության։ Իր լուրությամբ նա ցուց է տալիս, որ խոստովանություններ չի ուզում, ասենք, Ժերմենը չի էլ ձղտում դրանց։ Տիկին դը Շավաննը երկար կյանք է ապրել և միշտ առաջնորդվել է զգուշավորության խելամիտ օրենքով։ Մի վիճիր իշխող հայացքների, սովորույթների, նախապաշարմունքների հետ։ Գուցե նրա սիրտն ազատ է, կամ եղել է, կամ կարող էր լինել ազատ։ Բայց նա այնքան վաղուց է խլացնում այդ սրտի ձայնը։ Գործունյա կյանքից հետո, որտեղ սիրտը մեծ ազատություն չուներ, բարոյական հոգնածությունը տրամադրում է հանգստության, հեռացնում է այն ամենից, ինչ կարող է պղտորել այդ անդորրը։ Սիրտը չի կորցրել իր խոր քննքշությունը, բայց ավելի բարձրածայն է հայտարարում իր մասին հանգստության տիրական պահանջը։ Եվ նա սեղմում է իր հասունացած հիվանդ որդու ձեռքը, ցուց տալով, որ ինքը գիտի նրա մտքերը և խնդրում է այդ մասին շիուսել։

Աննետան առաջինն է, ում առաջ Ժերմենը կարող է իր սիրտը բացել, պատմել Ֆրանցի հետ իր բարեկամության մասին, իր հուզմունքների մասին, այն մասին, ինչը նրան հետաքրքրում է ավելի, քան մաբերի ելքը։ Աննետան զարմացած հարցնում է։

— Իսկ տիկին դը Մարե՞յր։

(Աննետային դուր է գալիս այդ երիտասարդ կինը, որն այդքան խորն է և ինքնամփոփի, դուր է գալիս նրա տխուր ժպիտը)։

Ժերմենը թույլ, անհույս թափ է տալիս ձեռքը,

— Նրան որ մոտենալ անգամ հնարավոր չէ:

Նա բարի է: Անաղարտ է: Ժերմենը կապված է իր երիշասարդ ազգականուհու հետ առաքինի զգացմունքով, որը բանավոր արտահայտություն չի փնտրում: Բայց նրանց բաժանում է մի ամբողջ աշխարհ...

— Ապա ուշադիր նայեք նրան,— ասում է Ժերմենը:

— Ես նայում եմ,— պատասխանում է Աննետան: — Նա ինձ հիշեցնում է Մարտյուրեի հեղ աստվածամորը Ժերմենը ժպտում է:

— Կորավիզ այն նուրբ թոշնակի՞ն, որ մանկանց փառաքշում է իր փոքր-ինչ կկոցած կարճատես աշքերի մեղմ հայացքով, որ շոյում է մանկան ոտիկը: Այո, տիկին դը Մարեյը նույն ուռուցիկ ճակատն ունի, նրբակերտ քիթը, երկարավուն կզակը, աղջկական աշքերի խելացի ժպիտը, բարակ շրթունքները: Բայց նա ամբողջովին պարուրված է թախիծով: Որտե՞ղ է մանուկը: Նա փնտրում է մանկանը: Սպասում է նրան: Բայց մանկիկը երկնքում է, և նրա ամբողջ սերը նույնպես այնտեղ է, ի՞նչ է մնում մեզ՝ երկրային արարածներիս համար: Տիկին դը Մարեյը համբերատար է, չի տրտնջում, հավատարիմ է իր երկրային պարտականություններին: Բայց հակառակ իր կամքին ցույց է տալիս (նրա համար ցավալի կլիներ մեր տրամադրությունը զցել), որ տիրության սույն հովիտը նրա համար գեթ անցում է: Այո, և մենք նրա համար անցորդներ ենք:

— Հետո ի՞նչ: Չէ որ նա այդ անցորդներին իր ժպիտի ողորմածությունն է տալիս:

— Նա տալիս է այդ ողորմածությունը: Եվ ես գիտեմ լրաարժեքը: Բայց թող նա ձեզ մոլորության մեջ չգցի: Աննետա, այդ ժպիտը նշանակում է. «Հաշտվեցեք»:

— Դա իմաստություն է:

— Բայց ոչ ձեր:

— Ես իմաստուն չեմ:

— Այդ ժպիտն ասում է. «Ընդունեք բոլորը, ուզած ճակատագիրը՝ մահը, անջատումը նրանց հետ, ում սիրում եք»:

Ատելությունը նրա համար խորթ է, բայց նա հավատում է, որ, եթե պատերազմը գոյություն ունի, կնշանակի դա աստ-  
ֆուց է, և պաշտում է այն: Նա թույլ չի տա (դրանում գուք  
ինքներդ կհամոզվեք), որ վայրագությամբ, ուխտադրժու-  
թյամբ, պարտվածի նկատմամբ բռնություն գործադրելով  
արատավորեն պատերազմը նրա մեջ իսկական ազնվություն  
կա, բայց ազնվություն այդ բառի վաղեմի հասկացությամբ:  
Այն, ինչ եղել է, պետք է լինի: Եվ միշտ լինելու է: Քանի որ  
այն ամենը, ինչ եղել է. «Հարություն» թե «բարություն»,  
տպնվացրել է ժամանակը: Սրբագործել է ցեղը: Սրբագործել  
է աստված: Նա մատն իսկ չի շարժի՝ այդ փոփոխելու հա-  
մար: Նա պատիվը հասկանում է որպես հաշտություն:

- Ես չեմ հաշտվի: Եվ չեմ մատածում ցեղի մասին: Ես  
Ժխտում եմ կամ ընդունում:
- Զեռնամուխ եղեք իմ գործին: Այդ գործը անհուսա-  
լի է:
- Ես սիրում եմ անհուսալի գործերը:
- Կնշանակի պարտվողական եք:
- Ամենեին: Շահել հակառակ ճակատագրի — դա այն-  
պես է զերմացնում:
- Իսկ եթե տանուլ տաք:
- Նորից կսկսեմ:
- Բայց ես, Աննետա, շտապում եմ, ես չեմ կարող սպա-  
սել, որ դուք նորից սկսեք: Իմ առջե, ինչպես ձեր, կյան-  
քի անսահմանափակ ժամկետներ չկան:
- Ո՞վ կարող է դա խմանալ:
- Ոչի ինքնախաբեռություն չեմ ուզում: Ես երկրի վրա եմ  
ապրում: Բայց երկար չեմ մնա այդտեղ: Ինձ հարկավոր է  
իմն ստանալ այսօր կամ երբեք:
- Ինչ արած, եկեք բոլորն այսօրվա վրա դնենք: Եվ  
դրողները ես կլինեմ: Ցույց տվեք խաղը:

Աննետան իրեն կապանքեց անդույշ պարտավորությամբ:  
Այդ կինը, որ ձգտում էր գործունեության, շբավարարվելով  
միայն մտքերով ու մտադրություններով, պատերազմի սկզբ-  
քում իր համար գործ չէր գտնում — և, վերջապես, դա հայտ-

նաբերեց այստեղ: Նրանից պահանջում էին, որպեսզի նա իրեն ամբողջովին նվիրի ամենասրբազն ու անշահախընդիր սիրո գործին— տարբեր ազգերի երկու երիտասարդների միջև բարեկամության գործին: Իր մեջ եռացող ուժերը Աննետան նրանց տվեց իր սովորական կրքոտությամբ, որը սահմանակցում էր, չթաքցնենք դա, խենթության հետ: Նա այդ հասկանում էր, բանականությունը ասում էր նրան:

«Դու դրա համար կվճարե՞ս»:

«Կվճարեմ հետո: Հիմա ես գնում եմ...»:

«Միջոցներդ շեն ների...»:

«Հետո կտեսնենք»...

Խենթություն է: Բայց ի՞նչ կարող ես անել: Աննետան տրվելու պահանջ էր զգում: Նա ոչինչ չէր պահանջում, պարզ չէր սպասում: Երջանիկ լինելու համար նրան բավական էր երջանկություն տալ— և ոիսկի դիմել... Ոիսկի՝ դիմել... Աննետան խաղացող էր... (Ժերմենը դա հիանալի հասկացավ): Ուրիշ ժամանակ նա խանդավառությամբ կյանքը ոիսկի կենթարկեր:

Եվ ճիշտն ասենք. Ժերմենն այդ զգալով, սկսեց դա շարաշահել: Նա արդեն չէր խնայում Աննետային: Նա մոռացավ այն վտանգները, որոնց ինքը ևնթարկում էր Աննետային: Հիվանդներն անդութ են:

Աննետան սկսեց գործել: Նրան հաջողվեց գտնել պատանի-ուազմագերու հետքը: Նա գտնվում էր Անժերի մոտ տեղավորված համակենտրոնացման ճամբարում: Աննետան նրան նամակ ուղարկեց ուազմական գերիների գործերի գծով Միջազգային բյուրոյի միջոցով, որի վարչությունը գտնվում էր Ժնևում: Եվ երկու բարեկամների միջև նրանց կյանքն իրար կապող մի թել ձգվեց: Աննետան ուղարկում և ստանում էր նրանց նամակները իր անունով: Նա գալիս էր Ժերմենի մոտ, որպեսզի գաղտնի կերպով վերցնի կամ հանձնի այդ նամակները:

Հայացքը սահեցնելով Ֆրանցի առաջին նամակի առաջին տողերի վրայով, նա այլևս չէր կարողանում կտրվել դրանցից. այդ սիրո ճիշը երկու գրկող ձեռքերի նման փաթաթվեց

նրա շուրջը: Այդ ձեռքերից դուրս պլրծնելու համար նրա ուժեղը չբավարարեցին. Աննետան նամակը կարդաց մինչև վերը: Եվ կարդալ-վերջացնելուց հետո նստել էր, նամակը ծնկներին դրած, շունչը կտրվելով, ինչպես հանկարծակի փոթորիկից: Քիչ զանգեր շպահանջվեցին, որպեսզի նա Շավաններից թաքցնի այն փայլը, որն ինքն արձակում էր: Թայց, մնալով ժերմենի հետ երես առ երես, Աննետան ամբողջովին շողջողաց այնպիսի անկեղծ խնդությամբ, որ ժերմենը իսկույն ևեթ ամեն ինչ հասկացավ: Եվ, պարզելով ձեռքը, անհամբերությունից ընդհատվող ձայնով հբանայողաբար ասաց.

### — Տվե՞ք:

Մինչ ժերմենը կարդում էր, Աննետան կանգնել էր քիչ հեռու: Սենյակում լուսիցուն էր: Աննետան, ոչինչ շտեսնելով, կանգնել ու նայում էր լուսամուտից բակին, որտեղ արև շեր թափանցում: Նա ականջ էր դնում թղթի խշխշոցին ու ընդհատուն շնչառությանը: Հանկարծ ամեն ինչ դադարեց: Պարսպի հետեւում փողոցով դանդաղ անցնում էր եղներ լծած մի սայլ: Թվում էր, թե սայլը գլորվում է անշարժ, — կենտրոնական ֆրանսիայի հարթավայրերի անշարժության մարմնացում: Կարծես ժամանակը կանգ էր առել: Առջեւում սլանում էր սայլապանի ճիշը՝ թռչնային ճիշը: Դանդաղ հանգչում էր անիվների աղմուկը: Ցնցված հին պատերը հիմա անշարժ էին: Եվ ահա արդեն նորից զգացվում է ժամանակի թոհլքը: Ժերմենի ձայնը կանչեց նրան:

### — Աննետա՞:

Աննետան շրջվեց, մոտեցավ նրան: Ժերմենը պառկած էր լուսամուտի դիմաց, երեսով դնպի պատը: Անկունու վրա ընկած էր բացած նամակը:

— Կարդացեք, — ասաց ժերմենը:

Աննետան խոստովանեց.

— Ինձ ներեցեք: Ես արդեն կարդացել եմ:

Ժերմենը, առանց նայելու, ձեռքը մեկնեց նրան:

— Դա ձեր իրավունքն է: Նամակը ձեզ է պատկանում: Եթե դուք չկինեիք... — Եվ, ոչ մի բառով շմատնելով իր հուզ-

Մունքը, նա բոնեց Աննետայի շրջազգեստի ծայրը և համբուրեց:

Այդ ժամանակից սկսած Աննետան նրա խնդրանքով ընթերցում էր բարեկամների նամակները: Աննետայի միջով էր անցնում քնքշության այդ հեղեղը: Նա հեղեղի մեջ ավելացնում էր իր հոգու գույներն ու բոցը: Երկու բարեկամներից յուրաքանչյուրը սիրում էր միայն իր համար: Աննետան սիրում էր իր համար և նրանց համար: Ինչպես ծառը, որի վրա եկել-իշել են երկու թռչուն: Աննետան լսում էր սաղարթների մեջ զրնգացող զերմ բարեկամության երգը: Ծյուղերը կենդանություն էին ստանում, լվացվելով թարմ օդի շիթերով և երիտասարդացած երկնքի լույսով: Հասակը, պատերազմը — ամեն ինչ ջնջվել էր հիշողությունից:

Զարմանալի և հրաշալի՝ դուետ: Երբ Աննետան փակում էր աշքերը, զանալով ավելի լավ լսել, նրան թվում էր, թե ձայներից մեկը պատկանում է երիտասարդ մի աղջկա, իսկ մյուսը՝ մայրացած կնոջ: Կինը ձեռքերը տարածում էր: Երիտասարդ աղջիկը նետվում էր նրա գիրկը:

Ֆրանցի առաջին երգը ազատության ինքնամոռաց երգ էր: Վերջապես ապաստարան: Երեք տարի նա խեղդվում էր մի կույտի մեջ հավաքված մարմինների և հոգիների նողեկալի մոտիկությունից: Ոչ ոք այնպես չէր տառապում այդ արիստոկրատական նողկանքից, ինչպես նա... Երբեք մարդ լպետք է առանձնանա ինքն իր հետ: Դա ամենավատ միայնությունն է... Ինքո քեզ կորցնո՞ւմ ես... Նա օտար էր անշափի հարուստ սրտերի աղբյուրի պես բխող մարդկայնաթյանը, սրտեր, որոնք շրջապատողների վրա են թափում իրենց այդ գերառատությունը... Թող նույնիսկ կորուստներ լինեն... «Եմեք ուզածի շափի, նախիրներ, ըլմփացրեք զրափոսերի միջով... Եթե ոչ դուք, ապա հողն ամեն ինչ իր մեջ կառնի...»: Ֆրանցը վահինում էր կյանքի իր տեսնելը ցույց տալ ուրիշի աշքերին, որոնք անդոր են ըմբռնելու այդ: Մյուս կողմից նա չուներ նաև ուժերի այն հիանալի լիակատարությունը, որ հատուկ է միայնակ մեծ արքեստագետներին, որոնց համար իրենց ներկայությունը բավական է, նրանք իրենք մի աշխարհ են: Նա մի թուզա-

Վազմ պատանի էր, իր քսանյոթ տարեկան հասակում մնացած աղջիկ-պատանի, որին լափում էր ուրիշի քնքուշ և ուժեղ հոգու մեջ իր ընկճված սրտի աղբյուրը թափելու պահանջը: Սովակը շափաղանց սակավաջուր է, նա կկորչի ճանապարհին, եթե միայն իրեն քշող-տանող սիրո գետի ջնանդիպի: Նա տրվում է էգոիզմից: Քանի որ վերցված լինելը — դա վերցնել է: Իր հոսանքով հարստացնել այն հոգին, որը քեզ համար հովտում հուն կիորի... Ֆրանցը վերստին դուավ այդ հոգին: Նա երջանիկ էր:

Բայց ոչ երկար ժամանակով... Մի քանի օրում այդ առաջին բերկրությունը սպառվեց, և անհամբեր սիրտը միայն մի քան էր զգում. բարեկամը հեռու է: Ֆրանցը գոռում էր կարոտից ու շբավարարված ծարավից: Նրա նամակներում ստույգ մանրամասնություններ չկային, նամակները քիչ էին նկարագրում, դրանք կանչում էին: Մանավանդ որ ճամբարի կյանքի մասին ամեն մի մանրամասնություն ցենզուրան դուրս կշպրտեր: Բայց բոլոր տեսակի բռնություններից երիտասարդ ռազմագերուն ամենից քիչ ճնշում էր ցենզուրան: Նա շափաղանց շատ էր կլանված իր «ես»-ով, որպեսզի մտածեր ուրիշների մասին: Նա իր մասին պատմում էր միամիտ, սրտաշարժ, անսահման վստահությամբ: Նրա մեջ նկատելի էր պոռթկուն դյուրագգացությունը, ծույլ ու խղճալի, որն հաճախ հատուկ է ավստրիացիներին և հասնում է սեթևեթանքի ու նվնիոցի: Նրա այդ գծերը քավվում էին երիտասարդության հմացքով: Ֆրանցի երգը տիպիկ *Lied*<sup>1</sup> էր, անվերջանալի ունդո, ներծծված էլեգիական քնքությամբ: Սոխակը երգում էր մինչև ուժասպառություն: Բայց նա լսում էր իրեն: Նրա սրտից արյուն էր ծորում: Նա ողբում էր այդ սիրտը նույնիսկ ուրիշին իրենից ավելի շատ սիրելով, նա այդ ուշիցի մեջ իրեն էր սիրում — կենդանի արձագանք, սլառաւախան, որը կլանում և շարունակում է նրա դյուրաբեկ երկը:

Ժերմենի երգը հնչում էր ավելի առնական: ՄԵՐԸ հոսում էր շընդհատվող հոսքով: Մաքուր գիծը զարդարված

1 Երգ (գերմ.): — Նկատի է առնված գերմ. ժողովրդ. երգը

շէր դայլայլներով, վոկալիզներով, ժերմենը զսպված էր: Նա քիչ էր խոսում իր մասին, նա իր ինքնազգացողության մասին լոռում էր կամ համարյա լոռում: Հոգում էր իր բարեկամի մասին և վախենում էր տագնապել նրան: Բայց նրա նամակները խայտաբղետում էին ֆրանցի առողջությանը վերաբերող հարցերով: այն հարցերով, թե ինչ ուժիմով է նա տպրում, ինչ հարաբերությունների մեջ է պետերի և ընկերների հետ: Նա մխիթարում էր, խորհուրդներ տալիս, հանգստացնում, նա անխոնջորեն կրկնում էր իր մեղմ, համբերատար և համառ խրատները այդ մեծ երեխային, որը նրան ականջի ծայրով էր միայն լսում: Այդ մանրախնդիր համառությունը կարող էր ծիծաղելի թվական բայց այդ ծաղրասերին չէր հետաքրքրում, իր վրա կծիծաղեին թե չէ: Եվ եթե Աննետան ծիծաղում էր նրա նամակների վրա, ապա լոկ այն պատճառով, որ այդ տղամարդու մեջ այնպիսի զգացմունքներ էր գտնում, որոնցով ապրում էր նա ինքը, մայրական սիրտը, որն իրեն զսպել զգիտե պաշտպանելու իր անհանգիստ ձգտումներում: Աննետան այդ երկու տղամարդկանց մեջ հայտնագործեց այն հավիտենապես կանացին, որ ապրում է յուրաքանչյուր մարդու մեջ: Տղամարդու մեջ դա խեղղված է դաստիարակության ամբողջ սիստեմով, և ժերմենի համար ամոթ կլիներ այդ խոստովանելու Աննետային հուզում էր նրա այդ զգացումը, Աննետան հասկանում էր ժերմենի մաքրությունը:

Երկդիմության ոչ մի նշույլ: Բյուրեղի պարզություն: Կիրք, որ նույնքան բնական է և անխուսափելի, ինչպես ձգողականության օրենքը: Երկու հոգի, երկու աշխարհ, որոնց շրջանածիրները միահյուսվել են արևի շուրջը, ինչպես թելերն են միահյուսվում ցանց գործողի ձեռքերում: Երկու միայնակություն, որոնք իրար են խառնվում, որպեսզի միասնական մի ոիթմ գտնեն և շնչեն միասին: Միայնակությունը նրա, ում համար ոչինչ հասկանալի չէ մարդկային նախրում, ով մոլորվել է կապիկներով ու վազրերով լիցուն անտառում, ով օգնության է կանչում: Միայնակությունը նրա, ով ամեն ինչ հասկանում է, հասկանում է անշափ շատ. նա ոչինչ չի ափսոսում, ոչնչով կաշկանդված չէ,

Ա այն, որ նրա կյանքը հարկավոր է թեկուզե լոկ մի մարդու, դաւ նրա կարծիքով, կփոխհատուցի այդ կյանքը Փրկելով ուրիշին, նա փրկվում է ինքը:

Բայց ինչո՞ւ նրանք ապաստան չեն փնտրում այն էակի գրեում, ում բնությունը մեզ է տվել, որպեսզի նրա վրա թափենք մեր ցանկությունների և վշտերի այրող ալիքը կամ դրանք միախառնենք նրա ցանկությունների և վշտերի հետ: Կնո՞ց գրեում... Դա նրանց գաղտնիքն է: Աննետան այդ գաղտնիքը հասկացավ. միայն մասսամբ: Ֆրանցի մոտ դա տեղի է ունենում ամաշկոտությունից, երկշոտությունից: Ժերմենի մոտ, գուցե դա վաղաժամ հիասթափություն է, թաքնված վիրավորանք (այդ զգացումը, ըստ երեւյթին հազվագյուտ չէ նրա ընկերների մոտ, խրամատներում): Երկուսն էլ հզոր բնագդ ունեն, ճիշտ թե կեղծ, բայց նախազգուշացնող, որ կինը ուրիշ է, օտար աշխարհ է: Ժերմենը դեպի Աննետան մտերմություն և հարգանք է զգում, նա հավատ է ընծայում Աննետային: Բայց Աննետան իր համար պատրանքներ չի ստեղծում այդ մասին. Ժերմենը նրան հավատ է ընծայում, որովհետեւ նա միակ մարդն է: Ռիփ օգնությանը կարող է դիմել: Նա համոզված է իրեն սգնելու Աննետայի անկեղծ ցանկությանը, բայց նա համոզված չէ, որ Աննետան հասկանում է իրեն: Աննետան կոահում է, որ երբեմն Ժերմենի խոսքերն իր համար չեն. որ այդ խոսքերը Աննետայի գլխի վրայով գնում են դեպի անտեսանելի բարեկամը: Եվ, չարդալով նրանց նամակները, Աննետան շափում է իր և Ժերմենի միջև տեղի ունեցող զրույցների ներդաշնակ կառուցվածքի տարբերությունը. կառուցվածք, որը տարբեր եղանակների բնքշորեն իրաբ միահյուսվող կոնտրապունկո է հանդիսանում: և բարեկամության բաղցրալուր դուետ, որտեղ յուրաքանչյուր նոտան իր համահնչունությամբ եղբայրական ակորդ է ստեղծում: Աննետան լի խանդում: Դա նրա համար թեթևություն է: Կինում են ժամեր, երբ մարդ հիանալի համերգ լսելով ավելի մեծ հաճույք է ստանում, քան երբ մասնակցում է այդ համերգին:

Եվ, այնուամենայնիվ, Աննետան մասնակցում է հա-

Մերգին, ինքն այդ շիմանալով. չէ որ երկու ձայներն էլ նրա մեջ են միակցվում: Աննետան շութակի հոգին է:

Շավանների ընտանիքը չէր ցանկանում իմանալ մըտքերի այդ գաղտնի փոխանակության մասին: Դրանք անցնում էին թաքուն և աննկատելի, բանբերի միջոցով, որը հայտնվում և անհետանում էր:

Զանձրացող յոթնամյա տղան, որ դիտում ու երազում էր, իր սուր աշքերով հետեւց և տեսավ նամակների հանձնումը: Նա ոչ ոքի այդ մասին ոչ մի խոսք չասաց: Երեխան ապրում էր իր առանձնահատուկ կյանքով, որը մեծահասակներից թաքցնում էր: Նա առանց հասկանալու, ամեն բան, ինչ տեսնում էր, գարսում էր իր հոգում, կառուցելով դրանց վրա հետաքրքիր պատմություններ: Նրան թվում էր, թե Աննետան ու Ժերմենը գաղտնի սիրում են իրար: Այդ մըտքից նրա սրտում մի տեսակ տարօրինակ ցավ էր մնում, ոսկեհեր կինը, որն այդ տունը լույս էր բերում, ձգում էր նրան: Տղան նրան ատում էր, տղան մոլեգին սիրում էր նրան:

Ինքնահավան տիկին դը Մեյժի-Շավաննը աշքերը փախցնում էր: Նա ոչինչ նկատել չէր ուզում:

Տիկին դը Մարեյը իսկապես ոչինչ լզիտեր: Այդ աղնիվ հոգին չէր կարող նույնիսկ կասկածի ենթարկել այն, ինչն ինքը հարկադրված կլիներ դատապարտել որպես պարտքի խախտում: Նա Ժերմենին անշափ բարձր էր դասում և չէր կասկածում, որ Ժերմենը, ինչպես և նա ինքը, միշտ պատրաստ է հրաժարվել սրտի կյանքից ի հաճույս հայրենիքի արտակարգ պահանջների: Մինչդեռ Ժերմենի բոլոր հարազատներից տիկին դը Մարեյը ամենացնդունակն էր հասկանալու բարեկամության քաղցր և տիրական կապերը: Բայց մի՞թե Ժերմենը կհանդգներ նրա հետ խոսել այդ բարեկամության վերաբերյալ ի՞ր իրավունքի մասին,— նրա հետ, որը կորցրել էր իր համար թանկ ամեն ինչ, և հանգիստ, անտրտունջ իր աստծուն էր բերում սեփական թախիծը և ինքնազոհությունը:

Տիկին դը Շավանն-մայրը միայն ինքը գիտեր Ժերմենի

գաղտնիքը։ Նրանից թաքնվելը անհնարին էր։ Նա տեսնում էր, որ որդին նամակներ է գրում ու կարդում։ Տիկին դը Շավաննը զարձել էր այդ նամակների լուռ պահապանը։ Նա ոչ արդարացնելու և ոչ էլ դատապարտելու ուժ չուներ։ Մայրը պարզ գիտակցում էր, որ հիվանդությունը քայլայում է հասունացած որդուն։ Նա արդեն չէր դատապարտում։ Թող որդին գոնե այդ միակ ուրախությունն ունենա։ Նա վախենում էր, որ գաղտնիքը կրացվի, որ Ժերմենին և ընտանիքի միջև երկպառակություն կառաջանա և երկու կողմերն էլ իր սիրտն են տրորելու Զէ որ նա գիտեր, որ ճշմարտությունը ընտանիքի կողմն է, որ անարդարացին որդին է։ Բայց մյուս կողմից, նրա որդին դա նրա որդին է։ Կա օրենք։ Եվ կա մի բան, որ օրենքից բարձր է։

Տիկին դը Սեյժի-Շավաննը, իր ամբողջ անդրդվելիությամբ հանդերձ, նույնպես գիտեր, շխոստովանելով այդ իրեն, որ կան հատուկ իրավունքներ, որոնք հակասում են սպորական իրավունքներին։ Նա Ժերմենի քույրն էր։ Ժերմենի գեմքի յուրաքանչյուր գծիկում նա մահ էր տեսնում։ Եվ համրանում էր այդ մահի առաջ, որի ոտնաձայները մոտենում էին։ Քույրը չէր կարող շնկատել, որ իրենից գաղտնիք են պահում։ Բայց նա միշտ ներ էր ձեռնարկում, որպեսզի գաղտնիքը գաղտնիք մնա։ Մտնելով հիվանդի սենյակը, նա աշխատում էր իր այցի մասին բարձրածայն նախազգուշացնել։ Թող ժամանակին հավաքեն այն, ինչը պետք չէ, որ ինքը տեսնի։

Իր գժգոհությունը նա փոխադրեց Աննետայի վրա, որն սկսել էր հաճախակի լինել Ժերմենի մոտ։ Նա Աննետայի նկատմամբ ցուցաբերում էր անշափ խիստ սառնություն։ Ոչ մի րոպե շփոխելով իր զսպված քաղաքավարի տոնը։ Դա քավական էր— երկու կանայք էլ հիանալի հասկանում էին, թե ինչ են ռւզում ասել, երբ ոչինչ չեն ասում։ Այդ օտարություն համարում էին կասկածելի ձեռնարկի պատասխանատուն, որի մեջ նա ընդամենը գործիք էր։ Եվ Աննետան, ընդունելով այդ պատասխանատվությունը, հոնքն էլ շշարգեց։ Նա գալիս էր բացարձակապես Ժերմենի սիրույն։ Մնացյալ բոլորը նրան չեր հետաքրքրում։

Բայց երբ համոզվեց երկու քարեկամներին օգնելու իր անգորության մեջ, դա արդեն ցավ պատճառեց նրան:

Ժերմենը հանկարծ դադարեց ֆրանցից նամակներ ստանալ: Նամակագրությունը մի քանի օրով արգելված էր ճամբարում եղած համաճարակի կապակցությամբ ու նաև պատժական նպատակներով: Ժերմենը, ինչպես անջուր անապատի ճամփորդ, սկսեց ավելի տանջալից ծարավ զգալ այն բանից հետո, երբ վերստին գտնված աղբյուրը հանկարծ ցամաքեց: Նրա հոգին այրվում էր. Աննետային նա դիմավորում էր պահանջկոտ և անբարյացակամ հայցքով: Նա վրդովված էր Աննետալից այն պատճառով, որ վերջինս խարել էր նրա սպասումները: Այդ հուզմունքները առաջ մղեցին նրա հիվանդությունը, իսկ հիվանդությունն էլ իր հերթին հուզմունքներն էր բորբոքում: Կարծեցյալ բեկումից հետո, երբ օրգանիզմի քայլայումը ոնց որ թե կանգ առավ, հիվանդությունն իր մասին հայտարարեց նոր ուժով, ախտահարելով ներքին օրգանները: Խարուսիկ հանգստի ընդամենը մի քանի օր— և հանկարծ խիստ րոնկում: Հայտնի չէր, որտեղից է սպասվում նոր քայլայումներ, որոնք ամեն տեսակի ձևեր էին ընդունում: Զին հասցնում մի տեղ պրոցեսը կանգնեցնել, երբ այն սկսում էր մի ուրիշ տեղ: Բոցերը լափուժ էին տան ուղղակի սիրար: Սկսում են հանգնել կրակի դուրս եկող լեզուները, իսկ օջախին են հասնում միայն այն ժամանակ, երբ ամբողջ տունը փլվում է: Բոլորի համար պարզ էր: որ հիվանդությանը հաղթելն արդեն հնարավոր չէ:

Ժերմենը դա գիտեր ավելի լավ, քան որևէ մեկը: Նա ամբողջ ուժով պայքար էր տանում թաքնված հիվանդության դեմ և իրեն հաղթված էր զգում: Այդ անպտուղ ճակատամարտից նրա բնավորությունը փշացավ, Հիվանդը, որի բոլոր մտքերը կենտրոնացած են իր վրա, որը մշտապես հարկադրված է պաշտպանվել, այլևս չի մտածում շրջապատի մասին: Էգոիզմը նրա միակ գենքն է: Նա այլևս ոչնչի մասին չի մտածում, բացի իրենից, իր հիվանդությունից: Իր ցանկություններից: Գիշերները, երբ ժերմենը իւր խարույկի վրա թուլացած հետևում էր, թե ինչպես է բո-

ցը մոտենում իրեն, նրան հուսահատ մի ցանկություն էր տանջում, մի անգամ ևս, մինչև այրվելը, տեսնվել իր բարեկամի հետ:

Նրա մայրը մի կերպ Աննետային թույլ էր տալիս մըտնել հիվանդի սենյակը — չէ որ գա պահանջում էր ժերմենը, միայն թե հիմա զրուցն այլես չէր ստացվում, ժամանակն անցնում էր լոռության մեջ: Աննետան դեռ ներս շմտած, ժերմենը նրա կողմն էր ուղղում իր ազահ հայացքը, բայց ժերմենի աշքերը շուտով հանգում էին, արտահայտելով միայն հիասթափություն, և նրա բոլոր ուժերը կենտրոնանում էին իրեն տանջող տառապանքների վրա: Աննետան փորձում էր հիվանդին սփոփել, բայց առանց հաջողության, ժերմենը ամեն ինչի նկատմամբ անտարբեր էր: Աննետան շփոթվում ու լուսում էր նախադասության կեսին: Բայց երբ նա, գիտակցելով իր անգորությունը, ուզում էր հեռանալ, ժերմենը դառը հանդիմանությամբ ձեռքի շարժումով կանգնեցնում էր նրան: Եվ այդ կշտամբանքին Աննետան շփոթեր ինչպես պատասխանել: Նա ինքն էլ էր իրեն կշտամբում: Ի՞նչ պետք էր ժերմենի մեջ հույս արթնացնել, որն ինքը իրականացնելու համար անզոր էր:

Մի անգամ նրանք սենյակում մենակ մնացին. մայրը ճանապարհ էր դնում բժշկին, որը ջանում էր մի անգամ էլ խարել հիվանդին: ժերմենը բռնեց Աննետայի ձեռքը և պսաց.

— Ես կործանվեցի:

Աննետան փորձեց առարկել: Ժերմենը կրկնեց.

— Կործանվեցի: Ես գիտեմ: Ուզում եմ, ուզում եմ տեսնվել նրա հետ:

Աննետան անհույս թափ տվեց ձեռքը: Ժերմենը նրան խոսելու ժամանակ շտվեց:

— Ես ուզում եմ, — խստորեն ասաց նա:

— Ի՞նչ օգուտ ուզելուց, — ասաց Աննետան:

— Եվ այդ դո՞ւք եք ասում: Դո՞ւք:

Աննետան անօգնական գլուխը կախեց: Ժերմենը խստորեն և շարությամբ շարունակեց.

— Իսկ ձեր բոլոր հավաստիացումնե՞րը: Պարզապես կանացի շաղակրատա՞նք էր: Դուք ստո՞ւմ էիք:

Աննետան չէր արդարանում:

— Իմ խեղճ բարեկամ, ասացեք ի՞նչ անել — ես ամեն ինչ կանեմ: Բայց ի՞նչ ի՞նչ միջոցներով:

— Գտեք դրանք, Դուք չեք թողնի ես մեռնեմ մինչև նրան հանդիպելու:

— Դուք չեք մեռնի:

— Ես մեռնում եմ: Եվ մահը չէ, որ ինձ զայրացնում է: Այդտեղ մարդն անզոր է: Դա օրենք է... Բայց մարդկային հիմարությունը — ո՞չ, ես այն չեմ ընդունի... Նա այստեղ է, շատ մոտիկ, նա, իմ միակ բարեկամը, և ինձ վիճակված չէ նրան տեսնել դիպչել նրա ձեռքին, վերջին անգամ գրկել նրան... Դա արգեն հրեշավոր բան կլիներ:

Աննետան լուր էր: Նա մտովի տեսնում էր խրամատներում հազարավոր դժբախտների, որոնցից կաթիլ առ կաթիլ կյանքը հեռանում է: Նրանք մեկնում են իրենց ձեռքերը դեպի հեռավոր տունը, որտեղ միայնակ անկողնու մեջ, կարոտով ու հուսաբեկ, անքուն շուռումուռ են գալիս իրենց սիրելիները... Ժերմենը կարդում էր Աննետայի հոգին: Նա ասաց.

— Ուրիշները թող հնազանդվեն: Ես՝ ոչ: Ես միայն մի կյանք ունեմ, իսկ հիմա մնացել է մի կարճ ակնթարթ: Ես չեմ կարող սպասել: Ես ուզում եմ այն, ինչ օրենքով ինձ է պատկանում:

Աննետան, որի սիրտը ճմլվում էր, շարունակում էր լոել և միայն ջանում էր մեղմացնել նրա ցավը ձեռքի փաղաքշական հպումով: Ժերմենը զայրացած հրեց նրան և մեջքով լրջվեց նրա կողմը: Աննետան դուրս գնաց:

Բայց հաջորդ օրը Աննետան, ելք փնտրելու զղային գիշերից հետո վերադառնալով, հիվանդին գտավ կատարյալ անշարժ վիճակում: Ժերմենը նրան մռայլ ու հանգիստ ասաց (այդ հանգիստ տոնը նրան տանջում էր ավելի, քան երեկվա զայրույթը):

— Ներեցեք ինձ: Ես խելագաւրվել եմ: Խոսում էի ար-

գարության մասին, իմ իրավունքի մասին։ Արդարությունը դատարկ ձայն է, և ես ոչ մի իրավունք չունեմ։ Վա՞յ նրանց, ովքեր ընկնում են։ Նրանց ոչինչ չի մնում, բացի երեսները հողի մեջ թաղելուց և բերանները հող լցնելուց, որպեսզի իրենց ճիշտ լսվի։ Որդը իրեն տրորող տոքի տակ դալարդալար է գալիս։ Հիմարություն։ Ես լուս եմ և զենքս ցած դում։

Աննետան ձեռքը դնելով նրա քրտնած հակատին, ասաց.

— Ո՞ւ Պետք է կովել։ Դեռ ոչինչ բաց չի թողնված։ Ես հենց նոր հանդիպեցի բժշկին։ Նա ձեր մորը խորհուրդ է տալիս ձեզ տեղավորել շվեյցարական որևէ առողջարանում։ Այստեղ օդը շափազանց թուլացնող է, տաք, խոնավ, այստեղ կարելի է հալումաշ լինել, և բարոյական մթնոլորտն էլ պակաս չի ճնշում։ Ինչ ուզում ես արա, պատերազմը իր թույնով թունավորում է։ Այնտեղ լեռնային քամի է, կատարներից մոռացություն է տարածվում, այնտեղ դուք իհարկե, կկազդուրվեք ինձ բժիշկն այդպես ասաց։

— Սուտ է Այո, նա ինձ էլ է այդ ասելու Գիտի, որ ես անհույս եմ։ Եվ ինձ ուղարկում է, որ այստեղից հեռու սատկեմ։ Որպեսզի գլուխն ազատի ինձնից... Բայց ես ասում եմ։ «Ո՞չ»։ Ես այստեղ կմեռնեմ։

Աննետան փորձում էր նրան համոզել, Բայց նա իրենն էր պնդում։

— Ո՞ւ

Եվ ատամները սեղմում էր, հրաժարվում էր խոսել։ Համառորեն ամփոփվելով իր գաղագության մեջ։

Աննետան կունալով մահճակալի վրա, տիսուր ժպտալով հարցրեց.

— Նրա պատճառո՞վ

— Այո։ Ֆրանսիայից դուրս ես նրանից ավելի հեռու կլինեմ։

— Ինչ իմանաս, — ասաց Աննետան։

— Ի՞նչը

Աննետան ավելի ցած կուցավ.

— Եսկ էթէ դա, ընդհակառակը։ Ճեզ մոտեցնի՛ նրան։

Ժերմենն այնպես բռնեց նրա ձեռքը, որ Աննետան շտկվել չկարողացավ:

— Դա ի՞նչ է նշանակում:

Աննետան ուզում էր ձեռքն ազատել, բայց Ժերմենը բաց չէր թողնում, նրանց երեսները համարյա իրար էին կպշում:

— Պետք է գնալ Շվեյցարիա: Բարեկամս, համաձայն-վեք:

— Ասացեք: Ի՞նչ եք ակնարկում:

— Զեռքս ցավում էս ինձ բաց թողեք:

— Ո՞չ: Սկզբից բացատրեք:

Խոնարհվելով բարձին, անհարմար դիրքով, ափերով հենված հիվանդի մարմնին, որպեսզի լընկնի, Աննետան կամաց և արագ ասաց.

— Լոե՞ք.... Ես դեռ համողված լեմ... Դա միայն հնարավորություն է... Գուցե, ես այդ զուր եմ ձեզ ասում... Բայց ես ուզում եմ փորձել: Ես պատրաստ եմ ամեն ինչ ոխովի ենթարկել...

Ժերմենը սեղմում էր նրա ձեռքերը.

— Ասացե՞ք. ասացե՞ք:

— Ես այս գիշեր մտածում էի, մտածում... Եվ մտնելով այստեղ, երբ լսեցի Շվեյցարիա նախատեսվող ուղևորության մասին... իսկ եթե կազմակերպել նրա փախուստը:

Ժերմենը ամուր գրկեց Աննետային: Աննետան ընկավ մահճակալին, դեմքով կպշելով Ժերմենի դեմքին: Ժերմենը մոլեգին սկսեց համբուրել նրա աշքերը, քիթը, պարանոցը, որտեղ պատահեր: Ալղահար Աննետան մի քանի վայրկյան նույնիսկ ի վիճակի չէր շարժվել: Մահճակալից սահելով, նա ծնկների վրա ընկավ հատակին և վերջապես տեղից կանգնեց: Ժերմենը նույնիսկ չէր գիտակցում, թե ինչ է անում: Անկողնուց վեր բարձրանալով, անկանոն դուրս պրծած սավանների միջև, Ժերմենը գոռում էր.

— Դուք նրան կօգնեք փախչե՞լ: Դուք նրան կբերեք Շվեյցարիա:

— Լոե՞ք:

Ժերմենը սսկվեց: Երկուսն էլ, ցնցված, շունչ առանց երբ Աննետային վերադարձավ շարժվելու և խոսելու գարողությունը. նա Ժերմենին պառկելու նշան արեց, Ժերմենը ենթարկվեց: Աննետան կարգի բնորեց ճմրթված սավաններն ու բարձր: Ժերմենը պառկել էր անշարժ, ինչպես հնազանդ երեխա: Վերջացնելով դրանք՝ Աննետան նստեց մահճակալին, ոտքերի կողմը, և երկուսն էլ, առանց մտածելու, թե ինչ կատարվեց (արժե՞ր խոսել այդ մասին), սկսեցին կամացուկ քննարկել հենց նոր ծնված մտահղացումը:

Աննետան մեկնեց Փարիզ: Նա գնաց իր հին բարեկամի՝ Մարսել Ֆրանկի մոտ, որը հիմա փայլուն զինվորական համազգեստ էր կրում: Գեղեցիկ արվեստների մինիստրության այդ բարձրաստիճան պաշտոնյան վերջերս էր վերադաբել Հռոմից, ուր նա գնացել էր ինչոր խորհրդավոր հանձնարարությամբ, որը, առանց վտանգների ենթարկելու, նրան փառք էր խոստանում: Հիմա նա աշխատում էր ինչոր հարմար կոմիտեում, որը թիկունքում զբաղված էր երկրի գեղարվեստական հարստությունների փրկությամբ: Ֆրանկը ծառայում էր — բայց առանց շափն անցնող ջերմեռանդության — պատերազմին, որը հիմարությունը նրան մարդկության նորմալ շափանիշ էր թվում: Աննետայի խնդրանքի նկատմամբ նա հետաքրքրություն ցուցաբերեց, բայց շափակորության սահմաններում:

Մարսելը նրան ընդունեց անմիջապես, գաղտնի հասկանալու ժպիտով, որը պահպանվել էր նախկին ժամանականերից: Մարսելը հիանալի ճաղատություն էր ձեռք բերել, բայց այդ ճաղատությունը միայն ընդգծում էր նրա պճնամուլային արտաքինը: Նա երիտասարդի գեմք ուներ, աշխուց հայացք, սքանչելի ատամներ: Նա հիանալի էր զգում իրեն բաց երկնագույն զինվորական համազգեստով, որը ձեռնոցի նման պինդ գրկում էր նրան:

Նրանք մենակ էին: Ողջույններ փոխանակելուց հետո Աննետան սկսեց շարադրել մի փոքր հեռվից, իր խընդ-

րանքը, նա նայում է Մարսելի ատամներին, նրա ծիծառ դուք բերանին, Մարսելը լսում էր բարեհաճորեն և ցրված, հայացքը սահեցնելով Աննետայի ամբողջ կազմվածքի վրայով՝ վերեկից մինչև ներքև։ Աննետան կանգ առավ.

— Բայց դուք ինձ չեք լսում։

— Իհարկե, ոչ, — ասաց Մարսելը, — Մի՞թե դա կարեոր է, երբ մարդ, վերջապես ձեզ տեսնում է։ Ներեցեք ինձ։ Այնուամենայնիվ, ես ձեզ լսում եմ, ես լավ եմ հասկանում, որ եթե դուք եկել եք, ապա պատճառն այն չէ որ ծարավի եք իմ անձը տեսնելու Դուք ինձ ասելու ինչ-որ խընդրանք ունեք, և ես երջանիկ կլինեմ եթե կարողանամ այդ խնդրանքը կատարել, եվ քանի որ դա նախապես հայտնի է, ես նայում եմ ձեզ, ավանսով ձեզանից վարձ եմ վեցնում։

— Այդքան էլ ուշադիր մի՛ նայեք։ Ես արդեն պառավ եմ։

— «Օ, միջօրե, ամառվա արքա...»։

— Ավելի ճիշտ կլիներ ասել՝ աշնան։

— Ի՞նչը կարող է աշնանային սաղարթների գամմայից ավելի հարուստ լինել։

— Բայց ծաղիկներն ավելի շատ են դուր գալիս։

— Ես սիրում եմ և ծաղիկները, և պտուղները։

— Այո, այո, դուք ամեն ինչ սիրում եք... ինձ լսելո՞ւ եք թե չէ։

— Ասացե՞ք։ Աշքերով եմ լսելու։

— Դուք կուհեցիք, որ ես ներկայացել եմ որպես խընդրող։ Մենք մի ամբողջ դար իրար շենք տեսել, և ես կամաշեի միանգամից խնդրանքով գալ ձեզ մոտ։ Բայց ես խնդրում եմ ոչ ինձ համար։

— Ուրեմն դա ներելի չէ։

— Թող այդպես լինի, — պատասխանեց Աննետան։ Երբ գործը վերաբերում է մի անձի, որով ես հետաքրքրու վում եմ, ես պատրաստ եմ խմելու ամոթի բաժակը։

— Անձը, որով դուք հետաքրքրվում եք, դա համարյա դուք եք։

— Գուցե, Հայտնի չէ, որտեղ է սկսվում «ես»-ը և որտեղ է վերջանում այն:

— Կոմունիզմ, տարածված սեփական «ես»-ի վրա: Կնշանակի, այն, ինչ պատկանում է ձեզ, պատկանում է նաև ինձ: Կիսե՞նք: Ասացեք ձեր պատմությունը:

Աննետան նրան պատմեց պատանի-ռազմագերու մասին: Մարսելին նրա ազգանունը հայտնի էր: Նրան ցուցահանդեսում նույնիսկ հանդիպել էին այդ տղայի երկու թե երեք «գործերը», որոնք Մարսելի մոտ բավական աղոտ հիշողություն էին թողել: Բայց նկարիչը, ով էլ ուզում է լինի, այդ արդեն նրա գերատեսչության գծով է: Նրա համար հաճելի էր փայլել Աննետայի առաջ ոչ միայն իր ազդեցությամբ, այլև մտքի լայնությամբ: Մարսելը Աննետայի անունով ռազմական գերիների ճամբարը մտնելու անցագիր ստացավ՝ Ֆրանցի հետ տեսակցելու համար:

Աննետան օգտվեց զատկի արձակուրդների առիթից և եղավ ճամբարում: Արձակուրդային օրերը որդուն նվիրելու փոխարեն ինչպես որ վերջինս սպասում էր, Աննետան մեկնեց Անժեր: Հարկավոր էր սկզբում ուսումնասիրել իրադրությունը և ամենից առաջ Ֆրանցին. չէ որ իր պլաններում նա պետք է ելնի այն բանից, թե իրենից ինչ է ներկայացնում ինքը Ֆրանցը:

Աննետան այնքան վաղուց էր տեսել Ֆրանցին բարեկամի սիրո միջով, որ հուզմունքով էր մտածում նրան հանդիպելու մասին: Ժերմենի մտքերը կիսելով, Աննետան ներծծել էր նրա զգացմունքները ևս: Նա եկել էր այդ զգացմունքներով վարակված: Նրա աշքերն արդեն ազատ չէին — Աննետան նայում էր ժերմենի աշքերով: Կնոջ մտքի մեղմությունն ու հարմարվողությունը մի հատկություն է, որ նա խոստովանում է: Հատկություն, որը նա ձգտում է հաղթահարել և միևնույն ժամանակ փայփայում է, գիտենալով, թե դա որքան է վտանգավոր և որքան՝ քաղցր բավական է կամքի սեղմիչը թուլանա, և նա զիջում է, տրվում իրեն ցած քաշող ուժին...

Տեղավորվելով գնացքի կուպեում, որը նրան Անժեր էր

տանում. Աննետան ջանում էր հանդարտացնել սրտի բարախյունը, ժերմենի անհամբեր սրտի բարախյունը:

Ֆրանցի համար կյանքը գերության մեջ այնքան էլ տանջալից չէր: Նրա ճամբարը օգտվում էր որոշ արտոնություններից: Գերիներից շատերը աշխատում էին քաղաքում, նրանցից պահանջվում էր այն, որ առավոտ և իրիկուն կանոնավոր կերպով ներկայանան անվանական-չին: Նրանց հետեւմ էին մակերեսայնորեն, գերիներին վտանգավոր չէին համարում, իսկ փախուստը, եթե նրանց գլուխն այդպիսի միտք գար, սահմանից շատ հեռու լինելու պատճառով թվում էր անհնարի Եվ իսկապես էլ, ոչ ոքի մոքով փախուստ չէր էլ անցնում: Իրենց մեծամասնությամբ դրանք ազնիվ մարդիկ էին, որոնք բնակություն էին հաս-տատել Ֆրանսիայում մինչև 1914 թիվը: Թեև նրանք կարուտում էին Գերմանիայում մնացած իրենց հարազատներին, բայց ամենենին չէին ուզում նրանց հետ կիսել վտանգ-ները և մասնակցել մարտերին: Պետք է ասել, որ տեղա-կան մանր բուրժուաները, այդ առատ և քնկոտ արևմտյան հողերի որդիները, հիանալի կերպով հասկանում էին նրանց: Եվ նրանց այդ մասին ասում էին ուղղակի բացեիրաց:

Ֆրանցին նշանակեցին ներկարարական աշխատանքի: Նա պարետի կնոջ համար ծառայություններ էր կատարում: Սպիտակ էր ներկում տիկնոջ հյուրասենյակի միջնապա-տերը և թարմացնում էր Ամուրի հետ խաղացող հովվուհի-ների գունաթափ վարդագույն հետույքները, նկարներ, որոնք առաստաղին ցաք ու ցրիվ նկարել էր Բուշեի նախկին աշա-կերտներից մեկը: Այդ աշխատանքը նրա համար տհաճ չէր լինի, եթե պարետի կինը չնեղեր նրան, ինչպես ծառայի, համարելով այդ իր անբաժանելի առավելություններից մե-կը՝ ստորագրյալ «բոշի» նկատմամբ: Հպարտ և երկշոտ պա-տանին, որ օժտված էր սուր արիստոկրատական դյուրա-գդացությամբ, տառապում էր այդպիսի վիրավորանքներից, որոնք իր ընկերներին ամենենին չէին էլ վիրավորի: Գուցե հենց այդ պատճառով էր, որ սիրելի տիկինը գնալով ավե-լի էր համի ընկնում: Էգի մեջ, նույնիսկ ամենակոպիտ:

ԵՐԲ բորբոքվում են դաժան բնագդները, միշտ բավական նրբություն է լինում, որպեսզի հասկանա իր զոհի զգացմունքները:

Յ Ֆրանցը աշխատանքը վերջացնելուց հետո փողոց դուրս եկավ այնպիսի վիճակում, կարծես կաշին քերթել էին: Նրան հարկավոր էր հաճույք ստանալ մի լավ կում օդից ու ծխամորճից, մի լավ «օֆ» աներ և ծխի հետ արտաշնչեր իր բուլոր հոգսերը մեղմ աղջամուղջում (երկինքն այդ երեկո քնքուշ էր և զերմ, ինչպես ծիրանի թշիկը), իսկ նա քարշ էր գալիս ընկճված ու հուսաբեկ: Այդ ժամանակ էր, որ Աննետան մոտեցավ նրան:

Ֆրանցը կտրուկ թեքվեց մի կողմ: Կանանցից նա վայրենու նման վախենում էր, թեև ձգտում էր նրանց: Աննետան նրան ձայն տվեց: Կանգ չառնելով, տագնապահար ու զղային, նա աշքի պոշով Աննետայի վրա մի այնպիսի մոայլ հայացք գցեց ու կիտեց հոնքերը, կարծես սա ոտքնագություն էր անում նրա անաղարտության դեմ: Աննետան ժպիտով նայում էր պատանի Հովսեփին, որ պաշտպանում էր իր հագուստը: Նա ասաց.

— Ինձ ուղարկել է Ժերմենը:

Ֆրանցը, իրեն կորցրած, կանգ առավ:

— Ժերմեն Շավաննը...— շշնչաց նա:

Ֆրանցը Աննետայի աշքերում պատասխան էր փընտրում: Աննետան կոպերի շարժումով հաստատեց.

«Այո»:

Ֆրանցը ճանկեց նրա ձեռքը և քարշ տվեց իր հետեւից: Նա քայլում էր առջևից և ինչպես անհամբեր երեխաքարշ էր տալիս Աննետային: Շվարած Աննետան ձեռքն ազատելու փորձ չէր անում, թեև վախենում էր, չլինի թե իրենց տեսնեն: Սակայն ուշ ժամ էր, ուշ ոք նրանց շհանդիպից, բացի փոքրիկ գեղջկուհուց, որը նրանց տեսնելով, քրքջաց: Ֆրանցը մի խուլ փողոցով դուրս եկավ դաշտ: Մրգերի այգու շուրջը ձգվում էր կիսաքանդ մի պատ: Պատը խորքում, որն անցորդների աշքից պաշտպանված էր մի ելուստով, նրանք նստեցին կողք-կողքի, ծնկներով կպած

իրար Խոնարհվելով դեպի Աննետան և բաց շթողնելով նրա ձեռքը, Ֆրանցը աղերսական ձայնով հարցրեց.

— Ժերմե՞նը...

Աղջամուղի աղոտ լուսի մեջ Աննետան տեսնում էր իրեն խոցող աշքերը, պահանջկոտ մուրացիկի աշքերը: Նրանք այնպես էին շտապեցնում, որ Աննետային խանգարում էին խոսք սկսել: Աննետան նայում էր այդ փոփոխական աշքերին. նրանք մերթ անվստահորեն խույս էին տալիս Աննետայից, մերթ բուռն կերպով տրվում էին և հանկարծ խավարում, կարծես սուզված աղոտ նիրճի մեջ: Ֆրանցը բաց շագանակադույն մազեր ուներ, կլոր ճակատ, նուրբ գծագրված քիթ, փոքր-ինչ ուռուցիկ շրթունքներ և դեմքի մանկական արտահայտություն. ուրախության և ցավի մշտական և անորոշ սպասում: Երեխա: Ֆրանցին դնելով այն կերպարի կողքին, որին նկարագրում էր Ժերմենը, Աննետան չէր կարողանում հասկանալ, թե ինչով այդ պատանին կարող էր նրան այդպիսի զգացմունք ներշնչել...

Ֆրանցն անհամբերությամբ սեղմում էր Աննետայի մատները, հիշեցնելով, որ ինքը պատասխանի է սպասում: Աննետան սկսեց խոսել հեռավոր բարեկամի մասին, բայց Ֆրանցն անվերջ հարցերով նրան ընդհատում էր, իսկ երբ Աննետան սկսեց պատմել Ժերմենի հիվանդության մասին, նա ստիպված եղավ ինքն ընդհատել իր պատմությունը. նա տեսավ, որ Ֆրանցը հուզված է, և աշխատեց հանգստացնել նրան,— թաքցնել տագնապը բացակայի մասին, խնայելով նրան, ով այստեղ էր...

Ճամբարից լսվեց շեփորի ձայնը, և այդ ժամանակ երկաւսով էլ հիշեցին, որ այդ փողը մի անգամ արդեն փողհարել էր: Ստիպված եղան բաժանվել իրարից: Աննետան առանց դժվարության Ֆրանցին համոզեց վերադառնալ, խոստանալով նրան վաղը երկարատև հանդիպում: Նրանք աշդեն ուզում էին բաժանվել, երբ Ֆրանցը հանկարծ տեսավ Աննետայի ձեռքերը, որոնք դեռ շարունակում էր ամուռ բռնելի ծվ նայեց այդ ձեռքերին: Նայեց իր ձեռքերին:

— Այդ ձեռքերը կպել են նրան...— ասաց Ֆրանցը:

Եվ, դեմքը հպելով Աննետայի ափերին, սկսեց իր մեջ առնել նրանց բուրմունքը:

Աննետան շատ շուտ հասկացավ, որ Ֆրանցն ընդունակ չէ գործողությունների պլան կազմել և կատարել այն: Ոչ թե այն պատճառով, որ նա արիություն շուներ. Ֆրանցը պատրաստ էր խաղաթղթի վրա դնել ամեն ինչ: Ավելի շուտ պետք է զգուշանալ, չինի թե հանկարծ նա, առանց երկար ու բարակ մտածելու, որևէ վտանգավոր վճիռ կայացնի: Հազիվ էր Աննետան ակնարկ արել փախուստի հնարավորության մասին, երբ Ֆրանցը միանգամից այնպես խանդավառվեց, այնպիսի խելացնորություն դրսեռեց, որ Աննետան իսկույն ձայնը կտրեց և որոշեց մտածածը իր մեջ թաքցնել. չէ որ բավական է մի շմտածված քայլ— և գործը կարող է տապալվել: Պետք է ամեն ինչ նախապատրաստել առանց նրա գիտության, իսկ նրա առաջ բացվել միայն այն ժամանակ, երբ վրա հասնի գործելու պահը: Աննետան դեռ այդտեղ էլ էր կասկածում, թե նա ընդունակ է արդյոք ինքնուրույն գործելու: Կարիք կլինի նրան տանել ձեռքից բռնած, քայլ առ քայլ: Հազողության հույսը, որ առանց այն էլ երերուն էր, այդպիսի պայմաններում համարյա հավասարվում էր զրոյի: Սակայն Աննետայի մտքով չէր էլ անցնում նահանջել, նա հավատարիմ էր իր խոստումին, համակված էր այդ կրքով: այդ զարմանալի բարեկամությամբ, կրկնակի հոսանքով, որը զարնը-վում էր նրան, ինչպես երկու գետերի միացման վայրում գտնվող կղզյակին: Կղզյակն անշարժ է, բայց հորձանուտում հենց նա է թվում շարժական: Զգացմունքների այդ ամբողջ փոթորիկում Աննետան կարծես կողմնակի անձ լիներ, բայց դրանից գլխապտույտ էր զգում:

Երկու բարեկամներն էլ, թվում էր, հարթել են և կորցրել իրականության ամեն մի զգացում: Նրանց միացնում էին ասպետության կապերը, ստեղծված կրքու հոգու կողմից որպես զենք աշխարհի դեմ, որը նրանց ժխտում է, ինչպես յուրատեսակ խոռվություն ընդդեմ կեղեգման յուրատեսակ ձեի: Այդ ասպետությունը հասնում էր մինչև հերոսություն՝

ավագի և ավելի ուժեղի՝ Ժերմենի մոտ, որը մարտում իրենով ծածկում էր ավելի թույլին և մահվան շեմին իր երիտասարդ ընկերոջն էր փոխանցում կյանքի նկատմամբ դեռ իր մեջ մնացած ամբողջ սերը: Կրտսերի մոտ, որը փակված էր իր համար թշնամական աշխարհում, բարեկամությունը փոխվում էր մի տեսակ միստիկական պաշտամունքի այն բարեկամ-հովանավորի նկատմամբ, որը տարածության վրա նրան պատկերվում էր որպես գրեթե գերբնական էակ, ինչպես սրբերը տաճարներում: Պատերազմ էր պետք, որպեսզի այդպես լայնանային զգացմունքների բնական սահմանները և դրանց արտասովոր վեհություն տրվեր: Սովորական ժամանակ դրանք կպահպանվեին միջին բարձրության վրա, ամենօրյա կյանքի շրջանակներում: Վտանգն ու տենդագին լարվածությունը այդ զգացմունքները բարձրացրին դեպի այն գագաթները, ուր կարելի է համբառնալ սոսկ աղոթքի թևերի վրա: Ամբողջական հոգիների համար, որոնք կիսով չափ հրաժարվել են կյանքից, բարեկամությունը, ինչպես և աղոթքը, աստվածությունը տանող ուղիներից մեկն է: Երեք բարեկամներից ոչ մեկը — ոչ Ժերմենը, ոչ Ֆրանցը, ոչ Աննետան — աստծուն չէին հավատում: Եվ նրանցից ոչ մեկը չէր տեսել, որ աստված, ինչպես Յուպիտերը իր կերպափոխություններում, իրենց մեջ բարեկամության ձև ընդունի: Նրանք լցված էին այդ աստծով: Նրանք այրվում էին անհամբերությունից՝ իրենց նրան զոհաբերելու համար:

Բոլոր երեքից ամենատարօրինակ վիճակում Աննետան էր: Նա ոչ մեկի, ոչ մյուսի նկատմամբ առայժմ ոչ մի բան չէր զգում, որ նման լիներ սիրո: Նրա անձնական տառապանքները չէին անցնում եղբայրական կարեցանքի սահմանները, մի հակում, որ իսկական կինն ունենում է դեպի ամեն մի թշվառ էակ, եթե այդ էակը տառապում է, եթե այդ էակը զգում է իր կարիքը: Հատկապես, եթե այդ էակը տղամարդ է, քանի որ նրա լախջախված հզորությունը ավելի շատ է հուզում և ձգում դեպի իրեն: Բայց որովհետեւ Ժերմենն ու Ֆրանցը չէին կարող հանդիպել միմյանց հետ և գործել, ապա Աննետան նրանց հետ միասին ապրում էր

այն զգացումները, որոնք նրանք փոխանակում էին Աննետայի միջոցով։ Նրանք միմյանց սիրում էին Աննետայի՝ իրենց հավատարմատարի մեջ, իսկ գործելը թողնում էին միայն նրան։

Վտանգավո՞ր գործ է։ Խելագարությո՞ւն չի արդյոք ձեռնամուխ լինել դրան։ Այո, դա խելագարություն է, մտածում էր Աննետան մենակ մնալով, և ուզում էր գործի դնել արգելակները։ Բայց մեքենան արդեն շարժվում էր, և անիվի ամեն մի պտույտի հետ Աննետան թաղվում էր ավելի ու ավելի խորը։

Հայտնվելով գնացքում, որը նրան նորից Փարիզ էր տանում, Աննետան սարսափից ցնցվեց։ Նա հանկարծ տեսավբոլոր անհաղթահարելի խոշընդուներն ու վտանգները։ Աննետան եղանակ չէր գտնում լուր պայմանը կատարելու համար, որը նա կնքել էր երկու բարեկամների հետ։ Նա ինքն իրեն մրցյուն էր թվում, որը ճգնում է ծղոտը դուրս քաշել վիթխարի քարի զանգվածի տակից։ Եթե նույնիսկ այդ մըրցյունը ծղոտն ազատելու հնարքը գտնի էլ, չի՞ ճգմի արդյոք նրան իր ավարի հետ նրա վրա կախված քարե զանգվածը։ Բայց նման վտանգը չի կանգնեցնում մրցյունին։ Իսկ Աննետայի համար այդ վտանգը, թերևս մի ավելորդ շարժից էր։ Նրա հոգու այն մասնիկի համար, որը կոպիտ սպառնալիք տանել չի կարող։ Բայց նրա մյուս «ես»-ի վրա, ավելի թույլի, լինում էին րոպեներ, երբ սարսափն ազդում էր։

«Աստված իմ, այս ինչի՞ մեջ ես խճճվեցի։ Զի՞ կարելի արդյոք հրաժարվել, նահանջել, փախչել։ Ո՞վ է ինձ հրում դեպի այդ գործը»։

«Ես ինքս»։

Աննետան միայնակ կանգնած էր մի վիթխարի զանգվածի առաջ, որը Պետություն էր կոչվում։ Նա նայում էր հայրենիքի ահեղ դեմքին։ Նա հայտնվեց զայրացած մեծ Աստվածուհիների կրնկի տակ։ Բայց եթե նրանք կարող էին Աննետային ոչնչացնել, ապա չէին կարող հնազանդեցնել։ Աննետան արդեն կորցրել էր իր հավատը նրանց նկատ-

մամբ։ Հենց որ նա նորից գտավ սկզբնական և սրբազն զգացմունքները, որոնք տրորված էին անմարդկային հըսկաների կողմից, — սերը և բարեկամությունը, — բոլոր մնացածը նրա համար խավարեց։ Այդ մնացածը ուժն է։ Իսկ ուժի դեմ հոգին է։

Խելագարություն։ Թող այդպես լինի։ Բայց, կնշանակիւ խելագարությունը նույնպես հոգի է։ Շնորհիվ այդ խելագարության ես ապրում եմ, ես անդունդի վրայով առաջ եմ գնում, ինչպես առաքյալն էր քայլում ալիքների վրայով։

Աննետան տեղ հասավ զատկի երեքշաբթի օրը։ Փարիզում նա կարող է մնալ իր արձակուրդի վերջին հինգ օրը։ Դա անտարբեր Մարկի մեջ դառը հիասթափություն առաջացրեց։ Ընդամենը կես տարի առաջ կարելի էր կարծել, թև նրան զոհ է պետք, — պետք է տառասլանք պատճառել։ (Միանգամայն մարդկային թուլություն։ Սիրող սիրող հենց դրա համար էլ ստեղծված է, որ շարաշահեն իրեն...):

Բայց Մարկն արդեն կորցրել էր սիրտ շարաշահելու ցանկությունը։ Ասենք, Աննետան հիմա այդ թույլ էլ չէր տա, Դրությունը փոխվել էր։ Վերջին կես տարվա ընթացքում Մարկը հիմնավորապես քամհարել էր իր մտերմությունները — և սիրային, և բարեկամական։ Ալելի շատ դարման էր մնացել, քան հատիկ։ Նա մոռայլ, տարօրինակության շափ սուր հայացք ուներ, անգութ այն մարդու նկատմամբ, ում վրա կանգ էր առնում, — իր նկատմամբ թե ուրիշների, միթե միևնույն չէ։ Դա նրա մոռ աշքերը չէին, փոքր-ինչ կարճատես, ջերմ, շողշողուն։ Եվ ոչ էլ նրա մորաքրոջ աշքերը, որոնք անդադրում ճնճղուկ էին հիշեցնում, որն իսկույն կտցում է այն, ինչ ծիծաղելի է, որի համար ամեն ինչ անխտիր պետք է գալիս ծիծաղի և ուտելու համար։ Մարկը ավելի անպահանջկոտ էր, ամբողջ գտածը նա կտրտում էր մասերի։ Այդ վիրահատությունից հետո նրա պատահական ընկերներից հազվադեպ էր որևէ արժեքավոր և լիակշիռ բան մնում։ Մարկը համառօրեն հասնում էր մինչև բուն միջուկը և այնտեղ որդ էր գտնում։ Պատարկություն կամ կեղտ։ Եվ այդ ամբողջ դարմանի մեջ

գիմացավ մեն-միայն մի հատիկ. նրա մոր սիրությունը ինչքան  
էլ նա հմտանում էր, այդ հատիկը մնում էր անձեռնմխե-  
լի: Նա զեռ շգիտեր, թե ինչ կա այդ հատիկի ներսում:  
Բայց այն, որ դա մնում էր ամբողջական, առանց փշաց-  
ման որևէ հետքի, հարգանք էր ներշնչում նրան և գաղտնի  
ցանկություն՝ այնտեղ թափանցելու... Մարկը շատ էր սի-  
րում Սիլվիային, բայց այդ զգացմունքի մեջ փաղաքա-  
կան արհամարհանքի խորհուրդ կար: Ինչեւ, Սիլվիան նրան  
հատուցում էր նույն ձեռվակ: Մարկը կարող էր Սիլվիայի վրա  
հույս դնել, ինչպես հանցակցի վրա: և դրա համար երախ-  
տապարտ էր նրան. եթե արդարությունը խախտում էին  
Մարկի համար, նա չէր առարկում (պայմանով, որ չխար-  
նըվի դրանում). Հիմարների նկատմամբ նա դաժան էր):  
Բայց Մարկը տարբեր ձեռվակ էր վերաբերվում Սիլվիային և  
Աննետային: Աննետայի հոգին նվաճելու համար արժեր  
չանք թափել: Չէ որ վերջին կես տարին Մարկի համար  
որոշ բաներ էլ պարզվեցին. մայրը իրեն սիրում է, բայց  
ինքն իշխանություն շունի մոր վրա: Մայրական սերը ուժեղ  
և հուսալի բնաղդ է, սակայն Մարկը ավելին է ուզում, ոչ  
միայն սիրել այլև ճանաչել և լինել ճանաշված, տիրանալ  
ամենամեծ գաղտնիքներին, ամենալավին, ոչ թե մորը, այլ  
մարդուն: Մայրը մայր էլ մնում է. նա անանուն թուխս է:  
Բայց յուրաքանչյուր մարդու մեջ իր թաքնված էությունն է,  
անկրկնելի էությունը, որն իր առանձնահատուկ բուրմունքն  
է արձակում: Մարկն զգաց այդ բուրմունքը: Նա ուզում էր  
կճեպի միջով անցնել մինչև բուրումնավետ միջուկը. «Շու  
որ կաս, դու, որ գոյություն ունես լոկ մի անգամ: Ես  
ուղում եմ քեզանից դուրս կորզել քո գաղտնիքը...»:

Ինչո՞ւ. Որպեսզի կշտանալով գե՞ն շպրտես, Պատանի-  
ների հոգիները, հոգիները այդ փոքրիկ կրծողների, ծարավի  
են տիրանալու, բայց ոչինչ պահել շգիտեն: Լավ է, եթե  
գանձը, որին նրանք աշք են գրել, պաշտպանված է նրանց  
ատամներից:

Աննետայի մոտ այդ գանձը հուսալի պահպանության  
տակ էր: Թող որ նրա սքանչելի շուրթերի ժպիտում իրեն  
ամբողջովին տալու պատրաստակամություն կարդացվեր,

Բայց ինքը շուներ այն արկղիկի բանալին, որտեղ պահապահնվում էր նրա էռլիյան գաղտնիքը և չէր կարող այդ գաղտնիքը նվիրաբերել։ Ի բարեթախտություն իր։ Այդ գանձը շուալլելու ինչքա՞ն դեպքեր են եղել։ Այդ անձեռնմխելի ապաստարանը Մարկին ձգում էր դեպի իրեն։ Փոքրիկ նորմանդացին ուզում էր ուժով ներխուժել սրբավայրը։

Նա հույս էր դրել զատկի արձակուրդների վրա։ Բայց մայրը չէր գալիս, և Մարկը զայրույթից կրծում էր եղունգները, Երբ, վերջապես, Աննետան հայտնվեց, մի շաբաթից ավելի զուր ժամանակ էր անցել Հարկավոր էր որքան կարիկի է շուտ վերականգնել մտերմությունը, որը քանի՛քանի անգամ մայրը առաջարկել էր նրան և որից Մարկն ամեն կերպ հրաժարվում էր։ Նա սպասում էր, որ մայրը կրկին, ինչպես մյուս արձակուրդների ժամանակ, որդուն դրա համար հարմար առիթ կտա, և եթե Մարկին կարգին խնդրեն, նա այս անգամ կրարեհաճի արձագանքել…

Բայց այս անգամ Աննետայի գլուխը ուրիշ մտքերով էր զբաղված։ Մայրը մտերմանալու համար առաջին քայլը չէր անում։ Մարկն իր գաղտնիքնե՞րն ունի։ Հիանալի՛ է։ Թող պահպանի դրանք։ Աննետան էլ իր գաղտնիքներն ուներ և պահպանում էր։

Մարկին ոշինչ չէր մնում, քան հետեւ այդ «օտար» կնոջը, ամենամոտիկ և այնքան հեռու —իր մորը։ Թե՞ փորձել դրսից նայել նրան, փակոցափեղկերի արանքից։ Դեռ վերջերս այդպես նայել ուզում էր ինքը Աննետան, իսկ Մարկը ծածկվում էր նրանից։ Դերերի ստորացուցի՛չ փոխանակում։ Աննետան ամենեին չէր ցանկապատվում… «նայի՛ր, եթե ուզում ես...»։

Նա Մարկի վրա ուշադրություն չէր դարձնում։ Եվ դա ամենից վիրավորականն էր։ Կամա թե ակամա Մարկը կուտից այդ անգիտակցորեն իրեն հասցրած վիրավորանքը։ Հետաքրքրությունն ու ձգողական ուժը գերակշռում էին ինքնասիրությանը։

Այդ կնոջ մեջ Մարկին այժմ ապշեցնում էին հանգըստությունը և հավասարակշռությունը, որոնք Աննետան կարողացավ պահպանել հողմի կամքով պտույտ եկող հոգի-  
212

Ների փոշոտ մրրիկի մեջ Տունը Նմանվում էր զախշախված նավի: Զարդոտված մեքենաներ, ուժասպառ անձնակազմ, հոգիներում— տայֆուն, Դոների վրա նորից դաշված էր— կարմիր և սև— մահվան նշանը: Ապոլլինան Աննետայի մեկնելուց մի քանի օր անց ինքնասպան էր եղել, բայց Աննետան այդ մասին իմացավ նոր միայն. Սիլվիան դիտավորյալ լուսմ էր: Նոյեմբերի վերջին Սենայում գտել էին այդ խելացնոր կնոջ մարմինը: Ոչ ոք չգիտեր Ալեքսիսն ինչ է եղել. նա սուզվել էր մոռացության անդունդը... Բերնարդենների երկու որդիները սուզվել էին մի ուրիշ անդունդ, որն արիություն էր կոչվում,— նման այն էպիկական խանդակներին, ուր Անդալուզիայում գցում են ցուկերի հողոտած ձիերի մսեղիքը: Նրանք մնացին Սոմմայի կավոտ հատակին, որն այնքան երկար հունցում էին սեփական և թշնամական հրետանու դժոխային մատները. ոչինչ մակերես շրարձրացավ: Դժբախտությունը պտուտահողմի նման թափվեց Բերնարդենների ընտանիքի գլխին: Մի քանի վայրկյան— և նրանց տոհմը ոչնչացված է: Թարմ վերքը գեռայրվում էր— չէ որ այն ժամանակից ընդամենը մի երկու շաբաթ էր անցել: Բերնարդեն-Հայրը վիրավոր ցուլի էր նման, նրա աշքերը լցվել էին արյունով, նրա ցասումն ու հավատը միմյանց հետ դաժան կռվի էին բռնվել: Բոպեներ էին լինում, երբ նա մարտի մեջ էր մտնում աստծո հետ: Բայց աստված ավելի հզոր էր, և ճզմված մարդը, գլուխը կախած, հանձնվեց:

Իր գալու հաջորդ օրը, գիշերը, Աննետան իր նոսրացած նախրի հետ հայտնվեց տան մառանում, որտեղ նրանց իրար գլխի էր հավաքել օդային տագնապը: Այստեղ առաջին շրջանի սիրալիրության և աշխուժության հետքն էլ չկար, երբ մարդիկ իրար էին սեղմվում, ձգտելով միաձուլել իրենց հավատն ու հույսերը և դրանով էլ ավելի ամրապնդել դրանք: Ծիշտ է, բոլորն էլ փութաշանորեն պահպանում էին արտաքին պատշաճությունն ու փոխադարձ կարեկցանքի առերևույթությունը, բայց զգացվում էր, որ ամեն մի ընտանիք, իսկ ընտանիքում ամեն մի առանձին մարդ, ամփոփվում է իր շորացած բջիջում: Բոլորն էլ

Հոգնած էին և գրգռված Զայրույթի, տառապանքի երանգաները պողիկում էին ամենաանմեղ ու սիրալիքը խոսքեր փոխանակելիս: Այդ խեղճ մարդիկ, համարյա բոլորն էլ վիշտավորանքներ, հիասթափություններ, կորուստներ, դառնություններ ունեին իրենց հաշվում... Բայց ո՞ւմ ներկայացնել այդ հաշիվը: Որտեղ է թաքնվում Պարտապանը... Նրան շգտնելով, ամեն մեկը իր վիշտը մերձավորի վրա էր թափում:

1917 թվականի այն ապրիլին ամբողջ Ֆրանսիայով մեկ իմորումներ էին հասունանում: Պայթեց ուստական հեղափոխությունը: Հյուսիսային ճառագայթներից արյունով ներկվեցին երկնքի եզրերը: Հեղափոխության մասին առաջին լուրերը Փարիզ հասան երեք շաբաթ առաջ, իսկ անցած շաբաթ, ծաղկազարդի կիրակի օրը, այդ Հեղափոխությունը միանգում փոթորկալից ողջունեց Փարիզի ժողովուրդը: Բայց այդ ժողովուրդը առաջնորդներ չուներ, ոչ ոք չէր ղեկավարում նրան: Գործողությունների փոքրագույն իսկ միանություն չկար. բազմաթիվ հակասական արձագանքներ, բազմաթիվ մենակ գործողներ, որոնք տառապում էին, բայց շգիտեին ինչպես միավորվեն, նրանց զախշախելը ոչ մի դժվարություն չէր ներկայացնի: Հեղափոխության ոգին փոշիանում էր, դրսեորում գտնելով զայրույթի առանձին բոնկումների մեջ: Ապրիլյան այդ շաբաթներին դրանք կսմաց-կամաց քայլայում էին բանակը: Այդ գնդերը, այդ բունտարարները իրենք էլ շգիտեին ինչ են ուզում, ինչպես և տան դժբախտ բնակիչները, և նրանց դահճճներին դաձեռնտու էր: Բայց բոլորն էլ մի բան լավ գիտեին. նրանք տառապում են— և փնտրում էին, թե ումից հանեն իրենց վրեժը:

Կատաղությունն զգացվում էր բնակիշների նույնիսկ ժեստերում, ձայնի մեջ (ավելի, քան խոսքերում), երբ նրանք «մինչև վերջը» նստում էին մառանում: Նրանց մտքով չէր էլ անցնում, որ մի տեղ հավաքեն իրենց իրերը, և յուրաքանչյուրը իր բեռը կարծես ուրիշինի հետ էր համեմատում, կարծես հարկաններին կշտամբում էր, որ ամենածանր բանը իրեն է քամին ընկել: Բերնարդենն ու Ժիրյորը կորում

Վին իրենց կորսորի ծանրությունը, իրարից խուսափելով՝ նրանք չէին խոսում, միայն սառը գլուխ էին տալիս միմյանց։ Վիշտը իր սահմաններն ուներ։ Նրանք այդ սահմաններից չէին անցնում։

Աննետան իր ջերմ կարեկցանքը արտահայտեց Ուրսուլա և Ժյուստինա Բերնարդեններին։ Երկշոտ աղջիկներին, որոնք երբեք ոչ մի խոսք չէին փոխանակել նրա հետ, զարմացրեց այդ բուռն համակրանքը։ Նրանք հուզմունքից կարմըրեցին, բայց ամաշկոտությունն ու անվստահությունը վերցրին իրենցը, և, հեռանալով Աննետայից, նրանք թաքնվեցին իրենց սգո շղարշի հետեր. քաշվեցին իրենց խեցումեց։ Աննետան չէր համառում։ Եթե ուրիշները նրա կարիքն զգում էին, նա պատրաստ էր ձեռք մեկնել նրանց, բայց ինքը ուրիշների կարիքը չէր զգում։ Աննետան ցանկությունն շուներ իր անձը կամ իր իդեաները ուրիշներին պարտադրելու։

Նրա շուրջը, մառանում, խոսակցություն էր գնում, որում սառը ֆանատիզմ էր զգացվում։ Կլապինն շարադրում էր նոր ֆիլմի բովանդակությունը. «Ելեք, մեռելներ», որտեղ մերկացվում էին գերմանացիների հանցագործությունները։ Մակագրություններից մեկը հոշակում էր։

«Ով էլ ուզում է լինի քո թշնամին— եղբայրդ, ազգականդ, բարեկամդ,— սպանի՞ր նրան։ Իմացիր, որ, եթե դու սպանեցիր գերմանացուն, մարդկության պատուհասը մեկ կպակասի»։

Տիկին Բերնարդենը բարի ժպիտը երեսին պատմում էր հարեանուհիներից մեկին «Հիշեցե՞ք» լիգայի հիմնադրման ժամանակաշինությունը և մեկը նույնական էր առմատավորել ատելությունը գեպի թշնամին։ Աննետան լուսում էր։ Մարկը հետեւում էր նրա գեմքի արտահայտությանը։ Աննետան հոնքն էլ շշարժեց։ Նա ոչ մի խոսք չէր ասում նաև այն ժամանակ, երբ Սիլվիան ըստ իր սովորության, թաղամասի սկանդալային խրոնիկայի հնատ մեկը նդմեց, նրան էր մատուցում որեւէ շովինիստական զառանցանք։ Աննետան լուսում էր ժպտալով. բայց չէր պատասխանում և խոսքը փոխում էր ուրիշ բանի վրա։ Նա ոչ ոքի հետ չէր

կիսում այն, ինչ տեղի էր ունենում իր մեջ։ Նույնիսկ Ապոլօնինայի գաժան մահվան լուրը, որ թվում էր, Աննետայի մեջ շէր կարող ակամա դող շառացացնել, նրա աշքերում անդրադարձավ միայն կարեկցանքի շողով։

Մարկը, որին այդ ողբերգությունը շատ խորը ցնցեց, զշայնացած էր մոր զսպվածության վրա և աշխատում էր իր արարքով այդ զգացնել տալ Աննետային։ Նա հոգված և բացեիրաց սկսեց պատմել այն ամենի մասին, ինչ տեսել և լսել էր։ Աննետան մի շարժումով ընդհատեց նրան։ Խոսակցության մեջ նա մտնում էր միայն այն ժամանակ, երբ ինքն այդ ուզում էր։ Նրան վեճի մեջ քաշելու բոլոր ջանքերը ունչի շէին հանգեցնում։ Այնուամենայնիվ նա իր որոշակի հայացքներն ուներ։ — Մարկը դրանում ամենենին շէր կասկածում։ Նրա հանգիստ ասած մի երկու-երեք խոսքը բավական էր։ Մարկը հասկացավ, թե մոր համար որքան խորթ է հնչում այն ամենը, ինչ ուրիշներին խանդավառում է, — պատերազմը, հայրենիքը։ Մարկը կուզեր այդ մասին որքան կարելի է շատ իմանալ... Ինչո՞ւ մայրը չի արտահայտվում։

Ռուսական Հեղափոխությունը ցնցեց Մարկին։ Նա ապրիլի մեկի միտինգում էր, եկավ հետաքրքրությունից, բայց նրան համակեց ամբոխի տրամադրությունը։ Նա ծափահարեց Սևերինին<sup>1</sup> և սովեց ժուոյին<sup>2</sup>։ Մարկը տեսնում էր ռուսների, որոնք լաց էին լինում, լսելով իրենց հեղափոխության հիմնը, ու թեև նա արհամարհում էր արցունքները, բայց գտավ, որ այս անգամ գրանք զուրկ շեն խիզախ վեհությունից։ Բայց ինչպես գլուխ հանել այն բոլորից, ինչ նա լսում էր, Ռուսների հետ խոսակցության մեջ մտնելու փորձերը վերջացան նրանով, որ Մարկն իրեն զայրացած, վրդովված, շփոթված զգաց։ այդ երկրաշափական ուղղամտությունը, այդ ազգային փառամոլությունը, որ գուրս է

<sup>1</sup> Սևերին (1855—?) — Ռուսականացումի Կարողինա Ռեմիի կեղծանունը, որը բժողովրդի Ֆիլա սոցիալիստական թերթի խմբագիրն էր։

<sup>2</sup> Ժուոյ Լեոն (1899—1954) — սոցիալիստական հնտերնացիոնալի զեկավարներից Վեկու

ցցվում կարմիր թասակների տակից, այդ վիրավորող հեղանական վերաբերմունքը գեղի Ֆրանսիան ու ֆրանսիացիները...

«Օ ո՞չ! Ինձ հերիք է»:

Մարկը, որ հաճույքով էր ծիծաղում իր հայրենակիցների վրա, շէր սիրում, երբ դրանով զբաղվում էին ուրիշները, և նա ինքը ծաղրանքի առարկա էր դառնում: Իսկ այդ վիրավորական մտերմավարությունը, այդ աննրբանկատությունը... Մարկը հոգով արիստոկրատ էր. նրան ամեննեին շէր հրապուրում «Հրեա-ասիացիների» նախրին խառնը-վելը (այդպիս էր անվանում նրանց այդ ավանակը): Առաջին հափշտակվածությունից հետո նա սկսում է ընկրկելու նրան փոթորկում են հակասական զգացմունքները,— դրանց մեջ, թերեւ, կան նաև միանգամայն բնականները, կան նաև որոշակիորեն կեղծ զգացումներ, բայց Մարկը դրանց մասին չի մտածում. ի՞նչ արած, այդպիսին են նրա զգացումները, այդպիսին է նա ինքը: Լինի հայրենիքի դիկտատուրան թե պրոլետարիատի դիկտատուրան— նա և այս-տեղ և այնտեղ միայն բռնակալություն է տեսնում. կարելի՞ է արդյոք երկու տեսակ խելահեղությունների միջև ընտրություն՝ կատարել, ընտրություն անել երկու ծայրահեղ վճիռների միջև: Եվ նրա սրտում դեռ չկա այն մարդկայնությունը, այն շռայլությունը, երբ մարդ ժողովրդի օգտին վճիռ է կայացնում— նույնիսկ ի վնաս իրեն: Ընտրություն անելու համար նրան ամենից առաջ հարկավոր է պատկերացում կազմել: Եվ, իհարկե, ոչ թե Պիտանն ու նրա ընկերները այդ գործում կօգնեն իրեն: Պիտանն, ինքնըստինքյան հասկանալի է, առանց որևէ տատանման տեղ բըռնից նոր լաստի վրա, բայց նրա փաստարկները այնքան մշուշապատ են, որ դրանք ավելի շատ պատանի Ռիվերին վանում են, քան թե ձգում. դա ինչ-որ միստիկական խանդավառություն է աղետից և կործանումից առաջ, ցընծացող պեսիմիզմ է, հափշտակվածություն է զոհով...

«Է՞հ, գրողի ծոցը այդ զոհը: Իրեն զոհում է, առանց որևէ բան հաշվի առնելու միայն նա, ով կորցնելու ոչինչ չունի: Իսկ ես պետք է մեծ արժեքներ պահպանեմ. իմ եսը,

իմ ապագան, իմ ավարը... Երբ ես տիրապետեմ այդ բուլորին, ինչ ինձ հասնում է, երբ ես բոլորը կտեսնեմ և կհաղթահարեմ, այն ժամանակ... Զոհաբերել իրեն օրը ցերեկով... Այո, կարող է պատահել... Բայց խավարո՞ւմ, կապա՞ծ աշքերով... Ծնորհակալություն, բարեկամու Խլուրդների զոհը ինձ համար չէ! «Պրոլետարիատի թագավորություն... Լուսատո՞ւն գտար...»:

Արդյոք ունի<sup>6</sup> Աննետան լույսի ուրիշ աղբյուր Մարկը իղուր է փորձում նրան տեսնել առանց դիմակի: Աննետային գրգռելու համար Մարկը Նրա ներկայությամբ հրեշտակոր հիմարություններ է ասում... Աննետան լսելու է տալիս, և քարն ընկնում է դատարկության մեջ: Իսկ Մարկն ամաշում է իր ասածներից: Կնշանակի այդ կինը ոչ մի բանի մասին չի<sup>7</sup> խորհում... Մտածելը Մարկի համար միշտ էլ եղել է եղնջատենդի նոպայի, մաշկի գրգռվածության նման մի բան: Թեթեսություն ես զգում: Երբ քորում ես, երբ ուրիշներին ես քսվում: Մտածողությունը Նրա համար միշտ էլ հավասարագոր է եղել գրոհի: Մտածել— կնշանակի իր մտքով խփել ուրիշին, հարձակվել Նրա վրա: Թող այդ միտքը մտնի Նրա մեջ— միենույն է թե ինչպես. Նրա համաձայնությամբ թե ուժով... Իսկ Աննետան. թվում էր, անտարբեր է այն ամենի նկատմամբ, թե ինչ և ինչպես են մտածում ուրիշները...

Ոչ, նա ամենեին էլ անտարբեր չէ: Բայց բնազգով հասկանում է, որ մտքերը ծիկերի նման մի բան են: Թող հանգիստ կերպով ուժ հավաքեն: Եթե դրանք աճեն ժամանուկից շուտ, հենց ցրտերը կոչնչացնեն դրանց: Նրա լուրացը— այդ հոգիների մեջ— դեռ ձմեռ է թագավորում: Թեռ ժամանակը չէ, որ քնից արթնանան դրանք: Այդ քունչի խլացնում է տառապանքները, կասկածների քավը: Վաղաժամ արթնացումը կործանարար կլինի այդպիսէ հոգիների համար:

Աննետան լսում է, թե ինչպես է մի հարէ վերևում իր դոան շեմին բղավում բանվոր Պերրեն: Նա տարված է ընկերոց հետ սկսած իր վեճով: Նա մի բանի օրով՝ արձակուրդ է ստացել և տուն է եկել տանջված, չարացած: Այս

ամենը, ինչ նա տեսել էր ճակատում, բոլորը, ինչին ականատես եղավ թիկունքում, — կյանքերի վատնում, արժեքների ոչնչացում, պատրանքների խորտակում, քայքայված ընտանեկան օջախ, նրա աղջիկը, որ պոռնիկ էր դարձել, կանայք, որոնք քեֆեր են սարքում մահվան ֆարրիկաներում վաստակած փողերով և իսկույն քամուն են տալիս այդ փողերը, — այդ բոլորը նրան կատաղությամբ ու զայրութով է լցնում ընկերների և պետերի դեմ, ամբողջ աշխարհի դեմ։ Բայց նա մի տեսակ կատաղի համառությամբ շարունակ նույն բանն է կրկնում. «Մինչև վերջ»։ Ի պատասխան իր անարխիստ-ընկերոջ փաստարկների, ընկերոջ, որը ծիծաղում է նրա վրա և ջանում է փոխել նրա համոզմունքները, Պերրեն բղավում է.

— Լոի՛ր։ Թե չէ ես քեզ սանգուղքից ցած կցեմ... Ի՞նչ ես ուզում ինձանից։ Իմ վիշտն ինձ համար քի՞չ է։ Ի՞նչ օգուտ, եթե դու, դանդալոշ, նույնիսկ ինձ ապացուցես, որ մեզ բոլորիս դաքի են քաշել, որ հայրենիքը, ինչպես և մնացած բոլորը գարշելի կեղծիք է, որ մեզ զուր էին կոտորում։ Բա ես ինչի՞ հավատամ։ Ես հեղափոխությանն արդեն չեմ հավատում։ Չեմ հավատում ես հեղափոխությանը։ Ես մարդկությանը չեմ հավատում (դա ավելի մեծ հիմարություն է և ավելի մեծ տափակություն, քան մնացած բոլորը)։ Բայց եթե ինձանից հայրենիքն էլ խլեն, էլ ձեռու ես ինչի՞ գցեմ, ասա։ Միայն մի բան է մնում. գընդակը ճակատիս խփեմ։

Աննետան հասկանում է Պերրեին։ Մարկը նրան չէր հասկանա.

«Է, գնդակը ճակատին է ուզում խփել, թող խփի...»։

Պատանեկությունը թույլերի տառապանքի նկատմամբ կարեկցանքի զգացում շունի, թույլեր, որոնք հարկադրված են լինում ապրելու համար խորամանկել կյանքի հետ։ Մարկը չի խորամանկում։ Բայց պատանեկությունը ծարավի է ապրել հակառակ ամեն ինչի, և ահա նա մեկտեղ իր ընկերների հետ— անարխիստների, դադախտների<sup>1</sup>— գոյու-

1 Դադախտ— գրական հոսանք, որն առաջացավ նվրոպայում առաջին համաշխարհային պատերազմից հետո,

թյուն ունեցող ամեն ինչը անսանձ ու անզուսպ ծաղրելով վրեժ է լուծում, ասենք, ինքն էլ է ժիծաղելին հասցնում մինչև զառանցանքի, մինչև անհեթեթության վերջին սահմանները: Բայց վրեժ է լուծում մտքի սարսափելի անզորության համար, նախապատվությունը տալով նրա անհեթեթությանը...

Բայց ահա թե Մարկի համար ինչն է ամենից քիչ հասկանալի. նրա մայրը, որն ազատ է (նա պատրաստ է դրա համար երգվել) իրեն շրջապատող ամեն ինչից, նույնիսկ ամենափոքր պահանջ լի զգում ոչ հարձակվելու և ոչ էլ պաշտպանվելու: Աննետան ոչինչ չի քննադատում: Նա դատավեճ չի սկսում ուրիշի մտքերի հետ: Նա ունի իր սեփական մտքերը, բանականությունը, տունը և պահպանում է դրանք: Նա իր համար հիմք է կառուցել... ինչի՞ վրա:

Աննետան կին է: Նրա հոգին ապրում է մի կրքոտ մըտքով: Աննետան մտադիր էլ չէ այդ միտքը տարածել ամբողջ աշխարհի վրա: Նրա տեսադաշտը լցված է մի գործով, դժվար, ստույգ կերպով սահմանագծված: Նա չի զբաղվում ողբերգական առեղծվածի լուծումով, որի վրա գլուխ է ջարդում աշխարհը: Այդ առեղծվածը և այդ ողբերգությունը նրա համար մարմնավորված են նպատակի մեջ, նպատակ, որը դրված է նրա առաջ, որը նա ինքն է դրել իր առաջ. փրկել իրեն համակած զգացումը— բարեկամությունը.. Ոչ, դա այն չէ.., փրկել երկու բարեկամներին, որոնց ճակատագրի հետ միահյուսվել էր իր ճակատագիրը: Աննետան այդ ճակատագիրը չի խառնում ուրիշ մարդկանց ճակատագրերի հետ: Նա ունի ճակատագրի կողմից իրեն տրված բախտաբաժինը և դրանով բավարարվում է: Նա ամբողջությամբ տրվում է այդ բախտաբաժնին: Իրեն ուղղված կանչին պատասխանելու համար նա սրատրաստ է անցնելու մարդկանց կողմից հարգված ամեն ինչի վրայով, պատրաստ է խախտել ամեն մի մարդկային օրենք. նրա մեջ խոսում է բարձրագույն օրենքը... Եթե յուրաքանչյուրն իր բնագավառում գործեր նույն ձևով, դա մարդկության մեծագույն Հեղափոխությունը կլիներ:

Աննետան Փարիզից մեկնեց, ոչ ոքի իրազեկ շդարձնելով իր գաղտնիքներին,— որդուն ավելի քիչ, քան որևէ մեկին։ Չէ որ Մարկը, շնայած մոր հետ մտերմանալու իր ցանկությանը՝ բատ իր ինքնապաշտպանության սովորույթի, միշտ աշխատում էր վիրավորել այն զգացմունքները, որոնք ենթադրում էր Աննետայի մեջ։ Նա ընդգծված կերպով և վիրավորական ձևով ծաղր ու ծանակի էր ենթարկում այն պացիֆիզմը, որը մորն էր վերագրում։

Աննետան Մարկի հետ վիճելու ոչ մի ցանկություն չուներ, Պատերազմ, խաղաղություն— դրանով չէր նա զբաղված։ Դա շափազանց հեռու էր։ Նա իր ձեռքում պահում էր երկու մարդու, որոնք իրենց հույսը նրա վրա էին դրել և որոնց նա պետք է միացներ։ Դրանք գաղափարներ չէին։ Դա կյանք է—նրանց և իր կյանքը։ Այսո, խաղաթղթի վրա է դրված նաև իր կյանքը։ Խելացնո՞ր խաղ, եթե խելքին լսել— այսո՛, Բայց սիրտն իր խելքն ունի։ Եվ սիրտը ասաց իր խոսքը։

Լինելով Փարիզում, Աննետան այնտեղ որսաց ընդամենը մի բառ, որը օգտակար էր իր գործի համար։ Մարկը պատահականորեն խոսակցություն բացեց նրա հետ ուսւ հեղափոխականների մասին, որոնք Ֆրանսիայում էին ապրում, այն մասին, որ դաշնակիցները հրաժարվում են նրանց անձնագիր տալ զրկելով նրանց հայրենիք վերադառնալու և պայքարում տեղ գրավելու հնարավորությունից։ Եվ այնուամենայնիվ, նրանք մեկնում են։ Ասում են նաև, որ Ծվեյցարիայում ապրող պատերազմի ֆրանսիական հակառակորդները տարբեր զարտուղի ճանապարհներով գաղտնի կապեր են պահպանում Ֆրանսիայում գտնվող իրենց ընկերների հետ։ Երկաթյա լարափակոցների ցանցում, որոնք սեղմում ու խեղդում են ֆրանսիական միտքը, որոշ օղակներ տեղի են տվել, և նրանց միջով դեռ կաթիլ առ կաթիլ կյանք է անցնում։ Նամակներն ու թերթերը գնում ու գալիք են սահմանի այդ մկանցքերով։ Պիտանի ձեռքում կենտրոնացել էին այդ վտանգավոր խաղի թելերը, խաղ, որը ոշնչով չի սպառնում միայն կյանքի տերերին։ Հէ որ այդ պատճառներով չէ, որ կարելի է ծակել բետոնված ականջ-

ներն ու մեծ մողեսի— զինված ազգի— հաստ զրահը: Դրանք լոկ ջերմացնում են այն մարդկանց պատրանքները, ովքեր քարշ տալով շղթաները, գեռ շարունակում են հավատացնել իրենց, որ իրենք ազատ են, Աննետան հիշեց Պիտանի ազգանունը: Պետք է նրա հետ խոսելու թայց նա Մարկին չէ, որ կիսնդրի կազմակերպել այդ հանդիպումը:

Աննետան վերադարձավ գավառ, իր աշխատանքին: Սկսվեցին տեսական և գաղտնի խորհրդակցությունները ժերմենի հետ: Աննետան նրան կենդանի լուր բերեց իր բարեկամից: բերեց նրա անտեսանելի ներկայությունը: Նրանք միասին ուսումնասիրում էին համարձակ պլանը: Աննետան իր կասկածները չի բաժանում ժերմենի հետ: Առայժմ նա դեռ ունալ ոչինչ չի տեսնում: Թայց թօղ ժերմենը անհայտության մեջ մնա: Տվյալ պահին կարեռը նրա մեջ դեպի կյանքն ունեցած կամքի առաջ մղելն է, մեկնելու համար նրանից համաձայնություն դուրս կորզելը: որքան էլ ուզում է քիչ խոստումնալից լինի կլիմայի փոփոխությունը, դա նրա վերջին շանսն է, և դա պետք է օգտագործել: Ժերմենը ձգձգում է, նա կուզեր մեկնել միայն վճռական քայլի նախօրեին, երբ հաջողությունը ապահովված լինի: Առայժմ նրանց պլանը դեռ պարզ չէ: Հարկավոր է կրքի ամրող էգոիզմը: Հնկատելու համար մահացու այն վտանգը, որին ժերմենը ենթաշկում էր Աննետային ու իր բարեկամին: Իսկ եթե ժերմենը անգամ տեսնում էր այդ վտանգը, ապա տեսնում էր ոչ կենդանի մարդու աշքերով: Չէ որ նա արդեն կիսով շափ մեռած էր: Ի սեր ժերմենի հանգստության Աննետան աշխատում է ստեղծել կասկածելի ձեռնարկում իրականացնելու նախապատրաստության պատրանք: Մարսել Ֆրանկի միջոցով նա երիտասարդ ավստրիացու համար ձեռք է բերում որոշ արտոնություններ: Ֆրանցին հիվանդության պատճառով թույլ են տալիս ապրել ճամբարից դուրս: Նրան նույնիսկ թույլ են տալիս բնակություն հաստատել քաղաքում, որտեղ հսկողությունն սինքան էլ խիստ չէ, իրքե թե այնպիսի պարապմունքների նպատակով, որոնք հետաքրքրություն են ներկայացնում ֆրանսիական արվեստի համար: Որոշ ուազմական գերիների

արտոնություններ էին տալիս պատերազմի ժամանակ, և դա այնքան էլ հազվադեպ բացառություն չէր: Որևէ բեռլինյան պրիվատ-դոցենտ իր համար ապրում է ազատության մեջ, առանց մի հսկողության, Կենտրոնական Ֆրանսիայի քաղաքներից որևէ մեկում: Իսկ վաթսուն ներկալված գերմանացիներ, որոնք պատերազմից առաջ աշխի ընկնող դիրքեր են գրավել, ապրում են Կարնակի բազական լավ պանսիոնում՝ իրենց կանանց կամ սիրուհիների հետ, և հարյուր հեկտար տարածության վրա օգտվում են լիակատար ազատությունից: Պատերազմի առաջին տարիներից հետո, երբ դեպի թշնամին ունեցած կատաղությունը բթացել էր. որոշ տեղերում ընտելացել էին ուազմական գերիներին. նրանք կամաց-կամաց մտան գավառային կյանքի նորմալ հունի մեջ, լուս փոխադարձ համաձայնությամբ հաստատվում է նոր կարգ ու կանոն, և գերիների վրա սահմանված հսկողությունն արդեն դրեթե չի զգացվում: Ֆրանցի համար այդպիսի վիճակը շատ ձեռնտու էր: Ժերմենը համարում է, որ դա դեպի ազատություն տանող ճանապարհի վրա արդեն առաջին փուլենիշներն են:

Բժշկի, ընտանիքի, Աննետայի համառ պահանջներով Ժերմենը մեկնելու համաձայնություն է տալիս: Աննետան նրան համոզում է, որ հետաձգել այլևս չի կարելի: Որ անհրաժեշտ է տեղափոխվել Շվեյցարիա. չէ որ Ֆրանցի փախուստից հետո Ժերմենը նրան պետք է պատսպարի: Ժերմենն Աննետային լսում է թերահավատությամբ:

— Աննետա, միայն ինձ սուստ մի ասեք: Ավելի լավ է թողեք ես այստեղ մեռնեմ: Աններելի կլիներ մեռնողի աշքերին թող փշել, հեռացնել նրան այստեղից, թմրեցնել անիրականանալի հույսերով:

— Ո՞վ կարող է պատասխանել հաջողության համար,— ասում է Աննետան: — Բայց ձեզ համար ես դիմում եմ ամեն քայլի: Դուք հավատո՞ւմ եք ինձ:

Ժերմենը հավատում է:

Գնալու նախօրեին Ժերմենը հասկացավ, որ Աննետան իրեն կործանման վտանգի է ենթարկում իր համար: Նա քիչ մնաց ասեր.

«Աննետան, ես ձեզ ազատում եմ... ես ետ եմ կանգնում...»:

Բայց կիրքը հաղթում է... Ո՞ւ նա ետ չի՛ կանգնի: Քանի դեռ հույսի գեթ մի նշուլ կա...

Աննետայից բաժանվելիս ժերմենը միայն մի բառ է ասում.

— Ներեցեք...

Բայց չի բացատրում ինչի համար:

Թող Աննետան կործանվի՛ նրա համար: Չէ՞ որ ևս մի երկու ժամ — և օրը վերջնականապես կխավարի...

Ժերմենը մեկնեց օգոստոսի սկզբին մոր և տիկին գը Մարեյի ուղևեցությամբ:

Աննետան մենակ մնաց իր հանդուգն ծրագրի հետ, որը նա պարտավորվել էր իրականացնել:

Ժամանակը գաղտնի պլանների համար ամենից աննըսպասավորն էր: Վտանգը սաստկացավ: Ճիշտ է, 1917 թվի առաջին ամիսներին ֆրանսիական կառավարությունը հարկադրված էր սանձերն արձակել: Բայց դրան հաջորդեցին խիստ միջոցառումներ, մատնագրերի ալիք: Իշխանությունները վախճառություններին ընկրկելով հեղափոխական գործադուլների և գարնանային խռովությունների առաջ, դրանք ճնշելուց հետո վրեժ են լուծում իրենց սարսափի և վախճառության համար: Սկսվում է պայքարի շրջանը «պարտվողականների» կարծեցյալ դավադրությունների դեմ — բոլոր դաշնակից երկրներում կիրառվող պրովոկացիաների շրջանը: Զրպարտության վիթխարի ֆարբեկան իր գարշահոտ ծխով ծածկում է Եվրոպայի և Ամերիկայի երկինքները: Դա ուզմական արդյունաբերության պակաս կարևոր բնագավառ չէ: «Դավադրություն թշնամու հետ» — ահա պարարատաստի կե՛ղծ տրաֆարետ, ուզածք նողկալը ժատնության արդարացում: «Մըքազան Ֆիանություն բավաճանության դեմ» — այդպես էր կոչվում յեպտեմբերին Ֆիմնված Կորլիգան: Նա խայտառակ կերպով փոխադարձ ատելության, կասկածների բացիներ էր տարածում: Ամեն յեկը զինվում

Դ իր Գարեւանի քեմ պայքարելու համար, Մարդիկ վախե-  
նում են իրնց սեփական ստվերից:

Ամբողջ ամառը Աննետան հողէ շոշափում, ոչ մի քայլ  
շշարժվելով առաջ: Ամեն ինչ նրա մոտ ձախողվում է: Մի  
անգամ էլ գնալ Ֆրանցի մոտ— կնշանակէ ուշադրություն  
գրավելի իսկ նամակներն ընթերցում են: Ուրեմն, ինչպե՞ս  
նրա հետ պայմանավորվել փախուստի պլանի մասին, եվ  
ինչպիսի՞ պլանի: Ամբողջ Ֆրանսիայի միջով ստքով գնա-  
լու մասին շարժի էլ մտածել. նա հենց վազը կձերբակալ-  
վի: Պետք է շարժվել արագ, պիտք է խորամանկություն  
բանեցնելի ծանապարհին Ֆրանցը պետք է նստի ուղիղ հա-  
ղորդակցության գնացքներից մեկը, որտեղ տեղի կունե-  
նա նրա հանդիպումն Աննետայի հետ,— Աննետան նրան  
կրտեկցի մինչև սահմանը: Բայց Շվեյցարիա գնացող  
գնացքները ստուգվում են մեկնելիս և ժամանելիս: Իսկ ո՞վ  
գուրս կրերի Ֆրանցին այն փոքրիկ քաղաքից, որտեղ նա  
ներկալված է, և կհասցնի մինչև այն գնացքը, որը նրան  
ազատություն է խոստանում: Ո՞վ է լինելու նրա ուղեցու-  
ցորդը սահմանն անցնելիս: Այդ բոլորն իրականացնելոր մի  
մարդու ուժերից վեր է: Իսկ չէ՞ որ Աննետան մեկը շու-  
նի, որի առաջ կարողանա սիրտը բացել...

Նրան այդ վիճակից գուրս է բերում պատահականու-  
թյունը: Դպրոցական արձակուրդներին նա վերադառնում է  
Փարիզ: Աննետան իր բնակարանում է և ձեռքին բռնել է  
շինական Ծենապակու ճաքած սկուտեղը, ոչ մեծաթիվ իրե-  
րից մեկը, որը նրան հիշատակ էր մնացել հին բուլոնյան  
տան նրագեղ կահ-կարասիներից, այն տան, որտեղ եր-  
կու քույրերը անցկացրին իրենց բարեկամության մեղրա-  
միսը: Բարեբախտաբար հենց հիմա Սիլվիան Աննետայի  
մոտ է: Գեղեցիկ սկուտեղը, նրա վրա նկարված ալպիա-  
կան տեսարանը, հորիզոնի և լեռնագագաթների խոր ու  
կապույտ երանգները— այդ բոլորը նրանց հիշողության  
մեջ վերակենդանացնում են անցյալի պատկերները: Սիլ-  
վիան քրոջը տալիս է մի հիանալի վարպետի հացի, որը  
կարող է սկուտեղը վերանորոգել: Ազգանունը ծանօթ է.  
Պիտան:

Անհետան շրոշեց գտնել Նրան։ Նրան տանը գտնելը հնչալ է։ Սիլվիան քրոջը նախազգուշացրեց, որ Պիտանը մշտապէս բացակայում է, և կրպակը ավելի հաճախ փակ է լինում, քան թաց։ Թայց Աննետան իրեն տված հասցեով գնաց քաղաքի տրվարձանը։ Նրա բախտը բերեց. Պիտանը տանն էր։

Նրան շատ զարմացրեց իր մոտ եկած հյուրը։ Առիթը նրան առանձնապես ճշմարտանման չի թվում, բայց և այնպես նրա կոպիտ ձեռքերի մեջ հենց որ ճենապակու բեկոր է հայտնվում, այդ ձեռքերը քնքորեն, համարյա երկյուղածությամբ են հպվում կրակից ծնված այդ գյուրաբեկ ծաղկի թափված թերթիկներին... Բայց ով է վերանորոգման համար այդպիսի հեռու ճանապարհորդության գնում։ Ներս թողնելով Աննետային, Պիտանը ոչ շտապողականություն է ցուցաբերում, ոչ զարմանք։ Նա քաղաքավարությամբ նրան տեցնում է Աննետային և, կանգնելով նրա առաջ ( կանգնած Պիտանը նստած Աննետայից ընդամենը մի քիչ է բոյզ), լսում է եկած հյուրին, նրա վրա հառելով իր մեղմ, թավշյա աշքերը։ Այդ մարդը, որի կյանքում ըստ երկույթին, կինը տեղ չի ունեցել, երբեք չի քաշվում կանանց հետ խոսելիս։ Նա առանց գժվարության նրանց հետ պարզ և բնական տոն է գտնում։ Այն մանկականը, բնաղդականը, որը բնորոշ է կանանցից ամեն մեկին, նույնիսկ ամենափշացածին, մոտեցնում է Պիտանին նրանց հետ։ Այդ բարեհոգի մարդը անմիջապես կուահում է նրանց բոլոր խորամանկությունները, ցանկությունները, որքան էլ ուզում է վարպետորեն նրանք այդ խորամանկությունները ծածկեն, և ոչ մի բանի վրա չի զարմանում։ Պիտանը նրանց չի դատապարտում և չի հակառակում նրանց, եթե անգամ նրանք խարում են իրեն, եթե «հա» են ասում «չէ»-ի փոխարեն։ Պիտանը, բարյացակամորեն գլուխը տմբացնելով, լսում է նրանց, թեև նրա լուրջ հայացքը ցույց է տալիս, որ ինքը «չէ» է լսում, բայց նայելով նրա բարեհոգի ժպիտին, կանանց մտքով չի էլ անցնում զայրանալ։ Նրանք Պիտանի մեջ ընկերոց են տեսնում, — Պիտանին ծուղակ շեոգցի և ոչ էլ հանցակից կարող ես դարձնել, — սրտակից և

ներտղամիտ ընկերոջ, որը նրանց այնպես է ընդունում, ինչպես որ կան և հարգում է:

Ուղղակեցվածք ընդունած պուդելի նման նայող Պիտանի աշքերի և Աննետայի անվարագույր լուսամուտների պես աշքերի միջև շատ արագ վստահություն է ստեղծվում: Իսկ Աննետայի կողմից արտասանված Մարկի անունը վերջնականապես հալեցրեց լուսիյան սառուցը: Պիտանի դեղին դեմքը շողղողում է: Նա ժպտում է մորուքի տակ:

— Դուք տիկին Ռիվիե՞րն եք:

Այն ամենը, ինչ Պիտանը լսել էր նրա մասին և ինչ ինքը կուահեց, նրան հարգանք է ներշնչում Մարկի մոր նըկատմամբ, և Պիտանը ջանում է այդ հավաստել:

— Դուք ինձ ճանաշո՞ւմ եք, — հարցնում է Աննետան:

— Զեր տղային եմ ճանաշում:

— Նա ինձ նման չէ:

— Իհարկե, ոչ: Նա այնպիսին է, ինչպես բոլոր տղաները: Ամբողջ ուժերով ճգնում է ձեզ շնմանվել: Հենց դրանով էլ ես ձեզ ճանաշում եմ:

— Ես նրան նեղություն եմ տալիս: Նա ինձանից փախչում է:

— Նրա հետեւից մի ընկեր: Կյանքը ոնց որ կածան լինի: Հանգույցներ ունի: Դուք պետք է միայն սպասեք: Որքան ավելի հեռու է նա ձեզանից գնում, այնքան ավելի շատ է մոտենում ձեզ:

Պիտանը պայծառացավ: Աննետան ծիծաղում է, Գտնվեց այն օղակը, որն անմիջապես կապեց նրանց. Մարկն էր նրանք բարեկամներ են: Խոսելով Մարկի մասին, Պիտանը հարցնում է Աննետային.

— Ինչո՞վ կարող եմ ձեզ ծառայել, տիկին Ռիվիեր:

Դուք Մարկի առիթո՞վ եք եկել:

Աննետան թեթևակի կարմրեց, ամաշելով այն բանից, որ Պիտանը չհավատաց նրա հնարած պատճառին:

— Ոչ, Մարկն այստեղ գործ չունի: Բայց դուք կուահեցիք: Ես ձեզ մոտ եմ եկել խորհրդի: Ներեցեք, որ ես զարարուի ճանապարհներով գնացի, փոխանակ ուղղակի ասելու:

— Օ, ես իսկույն հասկողացաւ Ներողություն մի խնդրեք: Նրանց «Սրբազնէ Հիարանությամբ» նրանք հասել են այն բանին, որ Ֆիմա բոլորը իրար կասկածում են: Ճիշտ իսութեք: Եւ մնացեք: Զգուշացե՞ք նրանցից, ովքեր են լուսում են...ու նրբ դուք եկաք (անկեղծության դիմաց անկեղծություն), ես էլ որոշեցի լեզուս հնձ քաշած պահել:

— Չէ որ ես լեզուս ինձ քաշած չեմ պահում, — ասաք Աննետան, — արեք ինձ, ընչ ուզում եք:

Պիտանին բնորոշ չէ ինքնագոհությունը: Նա բարեհոգաբար ասում է:

— Ինձ մոա դուք կարող եք չքաշվել: Ասացեք, աիկին Ռիվիեր: Ես ու դուք այնպիսի կերտվածքի մարդիկ չենք որ իրար հետ տափկնոցի խաղանք:

Աննետան պարզ սրտով առանց որևէ բան թաքցնելու, բայորը պատմում է նրան: Պիտանը, լսելով, թեթևակի ցնցում է, բայց ի ընդհատում նրան: Նա թույլ է ուախս, որ Աննետան վերջացնի Այնուհետև հազարով, նրան է դիմում:

— Իսկ դուք կիտե՞ք: Միկին Ռիվիեր, թե ինչ դործ եք բոնում:

— Դա կարևոր չէ, — հանգիստ ասում է Աննետան:

Պիտանը նորից է հազում: Նա մտովի հարցնում է իրեն, թե ինչն է այս կնոջը դրդում խաղաթղթի վրա դնել իր կյանքը, իր պատիվը: Պիտանը սիրտ չի անում այդ մասին Աննետային հարցնել: Աննետան գլխի է ընկնում:

— Դուք ուզում եք պարոն Պիտան, ինձ ինչ-որ հա՞րց աւալ:

— Ներեցեք, տիկին Ռիվիեր: Բայց եթե ձեզ հետաքըրքը ըստում է այդ ռազմագերու ճակատագիրը, ապա ավելի լավ չէ՞ր լինի նրա համար մնալ անվտանգության մեջ, քան թե ոխոկի դիմել:

— Բանը ոչ նրա և ոչ էլ իմ անվտանգությունը չէ:

Պիտանն, առանց այս ու այն կողմն ընկնելու, հարցնում է:

— Կնշանակի դուք այն մյուսի՞ն եք սիրում:

Աննետայի այտերը նորիք հն ներկվում կարմրով։ (Ի՞շլ-  
քա՞ն երիտասարդ է դեռ նրա արլունը):

— Ու սերե այստեղ գործ չունի։ Պիտան, հավատաց-  
նում եմ ձեզ, Զէ՞որ որ ես արդեն պառաված եմ։ Դա իմ հա-  
սակի բանը չէ։ Այդպիսի բան իմ մտքում էլ չկա։ Ես մտա-  
ծում եմ միայն նրանց բարեկամության մասին — ոչ թե  
իմ... ես ի՞նչ եմ նրանց համար — նրանց փոխադարձ բա-  
րեկամության մասին։

— Եվ հանուն դրա՞...

Պիտանը խոսքը չի վերջացնում։ Աննետան հարցնում է.

— Մի՞թե շարժի հանուն գրա իրեն զոհաբերելի

Պիտանը հայացքով ընդգրկում է նրան։ Աննետան, կար-  
ծես իրեն արգարացնելու համար, ասում է.

— Նրանցից մեկը մահանում է... Եվ, կնշանակի, —  
ճիշտ չէ, Պիտան, — այստեղ վիճելու բան չկա։

Պիտանը չի վիճում։ Նա հասկացավ։ Այդ մեծահոգի  
ծբագրի խելացնորությունը այնպիսի բնույթի է, որ նրան  
համոզում է։ Պիտանը նայում է Աննետային, և այդ հա-  
յացքի մեջ խոր հարգանք կա։

— Դուք ինքներդ դա չեք հաղթահարի, — ասում է Պի-  
տանը որոշ ժամանակ խորհելուց հետո։

— Եթե պետք է, կաշխատեմ, — պատասխանում է Ան-  
նետան։

Պիտանը շարունակում է խորհել։ Հետո կունում է, եր-  
կու մատով հատակից փոշի է հավաքում և մոտեցնում ճա-  
կատին։

— Այդ ի՞նչ եք անում, — հարցնում է Աննետան։

— Տրվում եմ ձեր գումարտակը... Գիտեք ինչ, տիկին  
Ռիվիեր (նա վերցնում է տարուրետը, նստում է Աննետայի  
կողքին և անցնում է շնորհիկ), դուք Փիզիկական հնարավո-  
րություն չունեք այդ բոլորը միանգամից անելու համար,  
որ միաժամանակ և այնտեղ հասցնեք և այստեղ։ Զեզ օգնու-  
թյուն է պետք... Էլ չխոսենք այն մասին, որ գուք ուրիշ  
պարտականություններ էլ ունեք. ձեր որդին։ Այդտեղ չի  
կարելի ոկսկի դիմել, եթե ուրիշ ելք կա։ Բոնվել — կնշա-  
նակի, նրա անվան վրա, նրա ապագայի վրա ստվեր գցել։

Նա դրա համար ձեզ շնորհակալություն չի հայտնի իսկ ես վտանգի և մ էնթարկում միայն ինձը ինձ նման անսում ու անընտանիք մարդու ժամանակներում մտածել էլ չարժի: Թույլ տվեք ուրեմն ես անեմ— չէ որ ես բոլոր ժակուծուկերը զիտեմ— զլո՞վս բերեմ դա ձեզ համար: Իմ պատասխանատվությամբ, Անենք, ինչ կարող ենք:

— Բայց, Պիտան, — հուզված սկսեց խոսել Աննետան, — դուք նույնիսկ չեք ճանաշում նրանց, ում համար ոփսկի եք զիմում:

— Ես զիտեմ, ինչ բան է բարեկամությունը, — ասաց Պիտանը: — Այդ երկուսը բարեկամներ են: Չեզ հետ միասին այդ բարեկամների թիվը դառնում է երեք: Իսկ ինձ հետ՝ չորս: Բարեկամությունը մագնիս է, Պետք է երկաթից ամուր լինես, որ դրա առաջ անդրդվելի մնաս:

— Այժմյան աշխարհում այնքան էլ զժվար չէ դրա առաջ անդրդվելի մնալը, — նկատեց Աննետան:

— Բոլորին հայտնի է, — ասաց Պիտանը, — որ այժմյան աշխարհը հսկաների աշխարհ է: Բայց մենք, տիկին Ռիվիեր: Ես և դուք այդքան բարձր չենք ունանում: Մենք հասարակ մարդիկ ենք:

Նրանք ձեռնամուխ եղան փախուստի պլանի մշակմանը: Պիտանն, առանց երկար մտածելու, առյուծի բաժինն իր վրա վերցրեց: Պայմանավորվեցին, որ նա պետք է հարաբերության մեջ մտնի գերու հետ: Եվ երբ ժամանակը գա, կդառնա նրա ուղեցույցը և նրան ժնկի գնացքում կհանձնի Աննետայի ձեռքը: Իր բարեկամների միջոցով նա կկարգավորի սահմանի անցումը: Բայց ամենից առաջ պետք է ուսումնասիրել իրագրությունը: Առանց շտապեցու Մոտակա շաբաթներին Պիտանը որևէ առիթով կմեկնի գործի վայրը և տեղեկություններ կհավաքի: Նա կհանդիպի Ֆրանցի հետ և զգուշորեն կտեղադրի առաջին փուլենիշները: Պիտանը զգուշության կոչ էր անում, բայց ինքը տաքացավ: Այդ ձեռնարկման վիթխարի վտանգը նրան ամենեին շփոթի չէր մատնում, թեև անհաջողաթյան դեպքում նրան կդատեին լրտեսության և պետական դավաճանության համար: Իհարկե, նա հասկանում էր, ոփսկի է զիմում, բայց

ամեննեին կա հաշվի չէր առնում։ (Ո՞վ դիտի գուցեե, հուգու խորքում այդ ոխսկը նույնիսկ Գրապուրում էր Նրան... Մենք արդեն տեսանք, որ Պիտանն ուզում էր ռկերված չի նել...): Նրան տրամադրում էր այդ ծրագրի ֆանտաստիկ գժվարությունը։ Պիտանն ամբողջովին բռնկվել էր։ Նա գլուխը կուացրեց, աչքերը փայլատակում էին, քթանցքները լայնացել էին, բայց հանկարծ բեղի տակ ծիծաղեց և տաաց։

— Տիկին Ռիվիեր, ինձ ներեցեք։ Մենք երկուսս էլ խելագարներ ենք։ Այսպիսի մի ժամանակ, երբ ամեն չնշ հոգու մոխիր է դառնում, և քաղաքները և մարդիկ, ևս հրապուրվում եմ շարդված ճենապակու նորոգումով, իսկ դուք շանում եք կպցնել բարեկամության բեկորները... Դե հիմա ասեք, դա ծիծաղելի՞ չէ արդյոք։ Էհ, ինչ կա որ, եկեք միասին ծիծաղենք։ Քավոր Կոլան<sup>1</sup> ասել է. «Որքան ավելի խելագար են մարդիկ, այնքան ավելի իմաստուն են»... Ի՞նչ իմանաս։ Մեկ էլ տեսար մի օր պարզվեց, որ իմաստունը հենց մենք ենք, որ կանք...»

Հաջորդ օրն արդեն Պիտանը ձեռնամուխ եղավ նախապատրաստական աշխատանքներին։ Բայց համբերություն պահանջող Պիտանի արհեստը նրան սովորեցրել էր շափել իր շարժումները։ Նա շարժվում էր անշտապ քայլով։ Անցավ ամբողջ ամառը Երբ Աննետան Փարիզից վերադարձ իր դպրոցը, դեռ ստույգ կերպով շէր կարելի որոշել փախուստի ժամկետը։ Դաշվագիրները իրար հետ կապված էին ամուր թելերով։ Աննետան մեկնեց իր փոքրիկ քաղաքը, իսկ Պիտանը հենց այդ նույն օրը ուղարկուվեց դեպի զվեյցարական սահմանը։ որպեսզի նախապատրաստի ծրագրի երկրորդ մասի իրականացումը։

Ժերմենը, որ գտնվում էր Շատո դ'Էկսի մոտ տեղավորված առողջարանում, իհարկե, այլևս համբերել շէր կարողանում։ Նամակներում նա չէր կարող լրիվ անկեղծ լինել։ Եվ այնուամենայնիվ տագնապն ու հուզմունքը նրանց մեջ պայթում էին շափագանց ակնհայտ։ Աննետան նրան գրում էր.

1. Պալանք Շալա Քրունյոն վրակակ Քերոսը

«Դուք ուզում եք ամեն ինչ խափանե՞լ»:

Ժերմենը քսան անդամ Աննետային հիշեցնում էր նրա խոստումի մասին.

«Երդվեցեք: Դուք երդվել եք...»:

«Ես երդվել եմ: Այու Դու ամուր բռնկլ ես ինձ: Դու, մեռնող, քո հետեւից մեղ քաշում ես... Դու թանկ չես գնահատում մեր կյանքը... Խեղճ տղաւ ես քեզ հասկանում եմ... Ես խույս չեմ տալիս...»:

Աննետան գպրոցում արդեն երրորդ տարին էր. ինչ դաս էր տալիս: Բայց նրա գրությունը փռխվել էր: Շավանների տունը դատարկվել էր: Աննետան ըրկվել էր ոչ միայն բարեկամների շրջապատից, որոնք նրան դուր էին եկել: Նրանց ներկայությունը Աննետային պաշտպանում էր առանց նրա գիտության: Այն, որ նրան թույլատրված էր մտնել Շավանների շրջապատը, գուցե, ավելի բորբոքեց չոռքրիկ քաղաքի նախանձագոր շարակամությունը: Սակայն այդ շարակամությունը չէր կարող դրսեռքվել: Իսկ հիմա, երբ Աննետային պաշտպանող վահանը անհետացավ, նրան խնայելու անհրաժեշտություն չկար: Հայտնի գարձավ, որ Ժերմենի բույրը՝ տիկին դը Սեյժի-Շավաննը, որ ամբողջ ընտանիքից միակն էր մնացել քաղաքում, շնորհ չէր բերում Աննետայի մոտ. տիկին դը Սեյժի-Շավաննի եղբոր մեկնելուց հետո նրանք գաղաքեցին հանդիպումներ ունենալուց: Հիմա ազատություն կարելի էր տալ ժամանակավորապես սսկված շարախոսությանը: Արդեն երկու տարի բամբասակը կանայք մրցյունների նման հատիկ առ հատիկ հավաքում էին համբերասար և շար գիտումները: Նրանցից յուրաքանչյուրը հասարակական շտեմարան էր բերում իր լուման. դրանք դարսում էին ընդհանուր կույտի վրա: Համադրում էին Աննետայի բոլոր ովկյալները. անձնական կասկածելի կյանքը, առեղծվածային մայրությունը, հայրենասիրական զգացմունքների անհասկանալի սառնությունը և ընդգծված ներողամտությունը դեպի թշնամին: Հետքը շգտնելով, այնուամենայնիվ բամբասում էին նրա անցյալ տարվա ուղևորությունների և ինչոր լորհրդավոր գործերի մասին: Աննետան ստիպված եղավ Պիտանին հանձնել օպերացիաների ամբողջ ակտիվ մասը, քանի որ նրա յուշ

քաքանչյուր քայլին հետեւում էին։ Աննետան ոշինչ լէր նկանում, միայն զգում էր, որ շրջապատն իրեն վերաբերվում է ավելի ու ավելի սառը։ Դա ամենաին նրանց չէր խանգարում Աննետային դիմավորել քաղցրումեղքը ժպիտներով։ Նրանց ժոմոված չուրթերից դուրս էին թուզում քաղցրածոր քաղաքավարի խոսքեր։

Բայց միշտ գտնվում են բարեկամներ, որոնք պատրաստ են մեզ հաղորդելու մեր մասին տարածվող բամբասանքները։ Տհաճ նորություն պատմելը մի մարդու, որը դեռ ոշինչ չգիտի— բացառիկ հաճույք է։ Չէ որ նրան բարություն են ցանկանում։ Հաճելին զուգակցվում է օգտակարի հետ, կատարված պարտքի զգացման հետ։

Եվ այդ պարտքը բացաբար իր վրա վերցրեց Տրոտտեն։ Տրոտտեն (այրի Տրոտտան կամ ավելի ճիշտ, Տորտրան) այն լվացարարուհին է, որը հարձակվեց գերմանացի սպայի վրա և հանկարծ, ապշած Աննետայի եռանդուն միջամտությունից, հոսպիտալում աղմկոտ ապաշավանք երեան բերեց։ Տրոտտեն մոտ բառասուն տարեկան էր։ Նա մի բարեհոգի, տաքարյուն։ Կոնծել սիրող կին էր։ Այն անմոռանալի օրից հետո Տրոտտեն սկսել էր ներողամիտ ոստիկանների քթի տակ մարտական պացիֆիզմ դրսեորել։ Աննետայի նկատմամբ նա բուռն համակրանք էր արտահայտում, առանց որի Աննետան հիանալի յոլա կգնար։ Բայց նրանք ապրում էին դուռ դուռ դիմաց։ Տրոտտեն ուներ պատվիրատուների իր շրջանակը։ և Աննետան հարկադրված էր հանդուրժել լվացարարուհուն ու նրա լվացքի թակը։

Աննետան շատ բան շտեսնելու էր տալիս ի սեր նրա պառավ սկեսրոջ, որը լվացարարուհու մոտ էր ապրում։ Այդ երկու կնոջ միջև նմանության փոքրագույն նշույլ անգամ շկար։ Տրոտտեն, որ ճղճղան ու անճոռնի, լայնոսկր ու մոեղ մի կին էր, ջարդող գործիքի նմանվող բուրգունդական երկար քթով, նիհար, մեղմ, թույլ մայրիկ Գիլմետտի լրիվ հակապատկերն էր։ Պառավի յոթանասունն արգեն անց էր։ Նա երկրորդ անգամ ամուսնացել էր Արրասի մոտերքից՝ մի գյուղացու հետ։ Պատերազմի ժամանակ մայրիկ Գիլ-

Մետոք կրակի սարսափելիք մկրտություն էք ստացելը  
Նրա համեստ ունեցվածքը, նրա տունը— ամբողջովին  
ոչնչացել էր. ծերունի ամուսինը վշտից հալումաշ էր եղել  
Բայց մայրիկ Գիլմետտը այդ գժբախտությանը ընտելացել  
էր Երկու շաբաթ նա մեն մենակ ապրել էր թշնամական  
զինվորների միջև, ոռոմքերի տակ, որոնցով այդ վայրը  
լցնում էին նրա հայրենակիցները, նա ոչ մի թշնամանք  
չէր ցուցաբերում ոչ նրանց նկատմար, ովքեր ոչնչացրել էին  
իր ունեցվածքը, ոչ նրանց նկատմամբ, ովքեր իր գլխին էին  
բերել այդ գժբախտությունը։ Մայրիկ Գիլմետտը խղճում  
էր կենվորներին՝ թշնամական զինվորներին, որոնք իր  
հետ միասին բաժանում էին այդ վտանգը, և նրանց զար-  
մացնում էր սեփական արժանապատվության իր զգա-  
ցումով։ Համոզվելով, որ ոչ մի ճիգով ինքը չի կարող կան-  
խել ճակատագրի հարվածները և որ նրա ամբողջ կյանքը,  
նրա աշխատասիրությունը, նրա խնայողությունը բոլորը  
գուր են եղել, մայրիկ Գիլմետտը զինվորներին ցույց տվեց,  
այն զաղտնարանը, որտեղ իրեն հաջողվեց թաքցնել ուտե-  
լիքի մնացորդները, իր աղքատիկ գանձը։ Նա զինվորներին  
ասաց.

— Իմ խեղճ երեխաներ, ահա՛, վերցրեք։ Օգտվեք, բա-  
նի գեռ դուք կենդանի եք, իսկ ես արդեն շատ եմ պառա-  
վել։ Ինձ գա արդեն պետք չէ։

Աննետան դա իմացավ մի վիրավոր գերմանացուց, որ  
պառկած էր հոսպիտալում։ Այդ վիրավորը առողջանում էր,  
և նրան թույլատրված էր փոքրիկ զբոսանքներ կատարել  
քաղաքում։ Նա պառավ Գիլմետտի Արրասի մոտ գտնվող  
կենվորներից էր և հիմա շատ ուրախացել էր պառավին  
հանդիպելու համար, որը հարգանք ու զարմանք էր առա-  
ջացնում նրա մեջ և նա ասում էր.

— Թող ձեր թերթերը դուրս տան ֆրանսիայի անունից  
ինչ ուզում են, եվ ձեր խրտվիլակները— Բարրեսը, Պուան-  
կարեն... իսկական ֆրանսիան ես նրանցից լավ եմ ճա-  
նաշում։

Աննետան հաճույքով էր զրուցում Գիլմետտի հետ, որ-  
քանով որ դա թույլ էր տալիս սարսափելի շատախտա-

**Ցրոտտեն:** Պառավին, որն օժտված էր բնածին տակտով և համեստությամբ, հարսի շաղակրատանքն ավելի շատ հանույթ չէր պատճառում, քան Աննետային: Բայց նա լուս էր, իրեն թույլ տալով միայն խորամանկորեն քմծիծազելով, որը այդ պառաված գեմքին երիտասարդական հմայք էր տալիս: Գիլմետտը իրեն իրավունք չէր վերապահում որևէ պահանջ ներկայացնել: Ամեն թոշուն իր ձեռվ է երգում:

Այն, որ Աննետան այցելության է գնում Տրոտտեին և Գիլմետտին, իսկույն և եթ հայտնի դարձավ ամբողջ քաղաքին և ասեկուսեների առիթ տվեց: Այդ երկու կանանցից մեկը վատ համարում ուներ, մյուսը կասկածելի էր համարվում այն պատճառով, որ, երեք տարի օկուպացված վայրում ապրելով, այդտեղից գնացած գերմանացիների նկատմաբ թշնամանք չուներ: Բացի գրանից, հայտնի էր նաև, որ երբեմն Գիլմետտի մոտ է եկել մի գերմանական ռազմագերի և որ Աննետան մի երկու-երեք անգամ խոսակցության է բռնվել այդ գերու հետ: Դա նույնպես հաշվի էր առնված: Բայց Աննետան, որի առաջ Տրոտտեն բացել էր բամբասանքների իր ամբողջ պաշարը, որոշեց, որ մի բամբասանք ավել կամ պակաս— ոչ մի նշանակություն չունի:

Մոտենում էր ննջեցյալների Հիշտակման օրը: Սրբազն օրը: Ֆրանսիայում դա իսկական պաշտամունք է: Մնացած բոլորը սոսկ շերտավորումներ են, որոնք գոյացել են հետագայում. գրանք ժամանակի ընթացքում հողմացրիվ կլինեն: Բայց այդ միակ պաշտամունքին, որ կապված է հողի ընդերքի հետ, հազորդակից են լինում բոլորը, ովքեր դուրս են եկել այնտեղից և գնալու են այնտեղ, բոլոր դավանանքների մարդիկ և բոլոր անհավատացյալները: Աննետան այդ պաշտամունքին ավելի օտար չէր, քան տիկին դը Սեյժի-Շավաննը կամ Տրոտտեն: Եվ այդ օրը նա մեքենաբար միացակ մարդկանց հոսանքին, որոնք ամբողջ ընտանիքներով ճամփա էին ընկել դեպի գերեզմանատուն:

Գրեթե գերեզմանատան դռների մոտ Աննետան նկատեց կաղին տվող Գիլմետտին և նրան թևանցուկ արեց: Նրանք միտսին ներս մտան: Բոլոր գերեզմանները զարդարված էին

ծաղիկներով, ծառուղիները մաքրված էին; Բայց գերեզմանատան եղրին, կիսաքանդ պատի մոտ, տատասկափշերի միջև, փորփրած հողի մի կույտ կար, լերկ, առանց որևէ պսակի և այդ կույտի վրա՝ փայտե խաչեր։ Թշվառների հանգչելու տեղը Դրանք հոսպիտալից բերված մեռած թշշնամիներ էին։ Որպես քրիստոնյաների նրանց ներս թողին Հովսափաթի հովիտը բայց մնացյալ բոլորից մի կողմ դրին, կանխելով ահեղ դատաստանի վճիռը, որը «գառներին ջոկելու է այժերից»։

Պառավ Գիլմետտը նախապես իր համար դրախտում տեղ չի պատվիրել։ Նա Աննետային ասաց.

— Այստեղ թաղված է իմ տանն ապրող տղաներից մեկը։ Կարձլիկ, շեկ-շեկ, ակնոցավոր։ Շատ հարգալից տղա էր, երբ ես ճաշ էի պատրաստում, նա ինձ համար զրհորից ջուր էր բերում։ Պատահած պատմում էր իր հոր մասին, հարսնացուի մասին։ Գնամ հետը մի քիչ խոսեմ։

Աննետան ուղեկցեց նրան։ Պառավը չէր կարող խաչերի վրա գրված անունները կարդալ։ Աննետան նրան օգնեց։ Վերջապես գտան նրան, ում փնտրում էին։ Գիլմետտն ասաց.

— Ահա՝ թե որտեղ ես, խեղճ տղա։ Վատ բախտ քեզ բաժին ընկավ… բայց թե էստեղ լինես թե էնտեղ— բոլորի վերջն էլ մեկ է… Տեսնո՞ւմ ես, քո պառավը քեզ չի մոռնացել… Ճիշտ է, նա չի ֆահմել քեզ համար ծաղիկներ բերի… Բայց դրա փոխարեն ես մի քիչ կաղոթեմ քեզ համար։

Աննետան թողեց գերեզմանաթմբի վրա շոքած պառավին։ Նրան զարմացրեց այդ գերեզմանների սառը լերկությունը— թվում էր, թե այդտեղ թաղված են աղքատ աղքականներ, որոնց ընտանիքը դիտավորյալ մոռացության է տվել մեռյալների այս տոնին։ Աննետան գնաց դեպի ելքը, գերեզմանատան պահակից գնեց մի խուրձ ծաղիկներ և, առանց մտածելու, որ իր անսպասելի բուռն ցանկությունը կարող է մարտահրավեր թվալ, վերադարձավ լերկ հողի տակ թաղված լրյալ ննջեցյալների մոտ և ծաղիկները շաղ տվեց նրանց հողաթմբերի վրա։ Պառավը հաղիկ լսելի ձայ-

Նով արտասանում էր աղոթքի վերջին խոսքերը: Երբ նա վերջացրեց, Աննետան նորից թևանցուկ արեց նրան, և միասին շարժվեցին դեպի ելքը: Միայն այդտեղ նրանց աշխին ընկավ, որ, այդ անիծյալ հողամասի եզրին կանգ. նած, նրանց հետեւում է մարդկանց մի խումբ: Աղքատիկ հազնված կանայք՝ իրենց երեխաների հետ, մանր բուրժուաներ, մատնացույց անելով նրանց, զրգոված աղմկում էին: Փոքր-ինչ հեռու կանգնած էին երկու-երեք տիկնայք, որոնք լուր հետեւում էին տեղի ունեցող տեսարանին, Գիլ-մետտն ու իր ուղեկցուջին, կամա թե ակամա անցնելով այդ կենդանի ցանկապատի երկարությամբ, զգացին, որ ցան-կապատն առանց փշերի չէ: Բամբասասերներից մեկը բա-ցականչեց.

— Մեր ծաղիկները բերե՛լ այս լեշերին:

Աննետայի արյունը եռաց: Բայց նա իրեն զսպեց և, գլուխը հպարտորեն վեր պահած, լուր շարունակեց իր ճամ-փան: Նրան չհամարձակվեցին ձեռք տալ: Իսկ Գիլմետտին Հաշվի շառան: Նրա գլխին հայհոյանքներ թափեցին.

— Քավթառ սրիկա: Մախվե՛լ է:

— Պարզ բա՛ն է,— ասաց նույն սանամերը: — Ո՞վ չգի-սի, որ նա բոշերի հետ առետուր անելով հարստություն է դիզել:

Պառավը կամացուկ ծիծաղում էր... Լա՛վ հարստություն է դիզել: Չէ՞ որ նա ունեցած-շունեցածը կորցրել է... Աննե-տան ավելի պակաս խոհեմ էր: Նա Գիլմետտին պաշտ-պանության տակ առավ— գրոհելով ըստ սրվորության: Ասաց, որ նողկալի բան է մահվան առաջ ազատություն տալ շա-րությանը, որ հողի տակ բոլորը հավասար են, ոչ մի տար-քերություն չկա այստեղ կամ այնտեղ հանգչողների միջև: Ի պատասխան նրա վրա առարկություններ թափվեցին: Աննետան, կորցնելով իրեն տիրապետեցու կարողությունը, հայտարարեց, որ ինքը գերմանացի հանգուցյալներին հար-գում է ոչ պակաս, քան նրանց, ովքեր ընկել են հանուն Ֆրանսիայի. բոլորն էլ դատապարտված են հավասար, բո-լորն էլ զոհեր են...

Նա այնքան բաներ ասաց, որ տեղական երեք գույնի

երեք թերթերն էլ կարմիրից մինչև սպիտակը հենց հաջորդ համարում թունոտ հոդվածներով հարգանք մատուցեցին նրան։ Այդ հոդվածներում շարադրված էին ուսուցչուհու վրդովեցուցիչ ճառերը, ուսուցչուհի, որին համարացնն է ուղարկել, և որը պետական ծառայության մեջ է Կառավարությանը առաջարկվում էր հատուցնել նրան ըստ արժանիվույն։

Հանգույցի լուծումը վրա հասավ շատ շուտ։ Աննետային կանչեցին կոլեզի դիրեկտորի մոտ։ Նրան կարճ և խիստ հարցաքննության ենթարկեցին։ Նա նույնիսկ չէր փորձում արդարանալ։ Աննետային ազատեցին։ Նա առանց առարկությունների սկսեց պատրաստվել մեկնելու Հոգննել էր։

Բացի այդ, մոտեցել էր գործելու ժամանակը։ Նրան պետք էր ազատություն։

Պիտանը պատրաստ էր։ Նա հանգամանորեն կշռադատեց իր պլանը։ Տեղում ստուգեց բոլոր մանրամասնությունները։ Որոշեց անձամբ գնալ Ֆրանցի հետեւից և նրան գնացք նստեցնել իսկ Աննետան նրան կուղեկցի մինչև ֆրանսիական ժաքսատուն հասնելու վերջին կայարանը։ Այնտեղ թոշնակին վերցնելու համար կհայտնվի Պիտանի քարեկամբ— նա շրջանցիկ կերպով Ֆրանցին կհասցնի սահմանին։ Ուղիղ սահմանի վրա մի հյուրանոց կար, որը տարօրինակ և երջանիկ պատահականությամբ գտնվում էր երկու պետությունների տերիտորիայում։ մի գուոր բացվում էր Ֆրանսիայի վրա, մյուսը՝ Շվեյցարիայի Այգուղ սահմանն անցնելը շատ հեշտ էր։ Պլանի ամենավտանգավոր մասը Պիտանը վերցրեց իր վրա։ Աննետային խնայում էին։ Բայց նրա դերը նույնպես կապված էր վտանգի հետ։ Նա Փարիզում պետք է Շվեյցարիա գնալու համար երկու տոմս վերցներ։ այդ տոմսերն ստանալու համար նու պետք է տոմսարկղ ներկայացներ դրոշմակնիքով երկու անձնագիր, որոնց վրա նշվում էին ժամանման վայրը և մեկնելու ստույգ ժամկետը։ Պիտանը հանձն առավ մի անձնագիր ճարել, որտեղ ցույց տրված պետք է լինեին այնպիսի նշաններ, որոնք համընկնեին Ֆրանցի նշանների։

Քետու Բայց Աննետան ինչ-որ պատճառներով անձնագիրը լցուացավ, Ժամանակը թուզում էր: Մոտենում էր ժամկետը: Աննետան որոշեց երկու անձնագիր պահանջել — մեկը իր անունով, մյուսը՝ որդու Դա անխոհեմ քայլ էր: Հասակն ուրիշ էր, արտաքինն՝ ուրիշ: Բայց այլևս չէր կարելի սպասել: Համարձակությունը քաղաքներ է նվաճում: Աննետան, ի միջի այլոց, հույս ուներ, որ անձնագիրը ներկայացնելու կլինի միայն տոմսեր գնելու ժամանակ:

Անձնագիրը նա առանց դժվարության ստացավ Փարիզում՝ Մարսել Ֆրանկի միջոցով այն ժամանակ, երբ շատ ուրիշները, որոնք ավելի մեծ իրավունք ունեին այդպիսի ուղևորության, շաբաթներ էին կորցնում քաշքշուկի մեջ և վերջում էլ մերժում էին ստանում: Լավ կանոններ են: Նրանք հարվածում են հենց այն մարդկանց, ովքեր ոչ մի մեղք չունեն: Ի արդարացում Աննետայի պետք է ասել, որ նա նույնիսկ չէր էլ հասկանում, թե իր բախտը ոնց բերեցի եթե որևէ բան էր ուզում, ապա ուղում էր այնպիսի մեծ ցանկությամբ, որ հաջողությանը չէր կասկածում, և նրա հավատը հաղորդվում էր նրանց, ումից կախված էր այդ խնդրանքի կատարումը: Որպես խնդրանքի պատճառ նա նշել էր որդու առողջության թուլությունը, որին նա ուզում է Շվեյցարիա տանել: Մարսելը շխորացավ մանրամասնությունների մեջ և սկսեց այդ հոգսերով զբաղվել:

Աննետան գավառական քաղաքից հեռացավ Պիտանի նշանակած ժամկետի նախօրեին: Նա բոլոր միջոցները ձեռք ոռուվ, որպեսզի իր մեկնումը գավառից և Փարիզից անմիջականորեն հետեւին մեկը մյուսին: Միջանկյալ ժամանակամիջոցում նա ոչ մի տեղ չէր ուշանում և ապրում էր, ինչպես թոշունը սաղարթներում, նա խուսափեց հսկողությունից և գտվառում և Փարիզում, քանի որ իր մերձավորներից ոչ բքի չէր հայտնել Փարիզով անցնելու մասին: Սիլվիային միայն հայտնի էր, որ քրոջն ազատել են և ինչ ուղառճառով, բայց հայտնի չէր նրա վերադարձի օրը: Աննետան որոշել էր Փարիզում կանգ առնել ուղիղ այնքան ժամանակ, որքան դա անհրաժեշտ էր էքսպեդիցիան նպախտապատրաստելու համար: Միայն գործի հաջող ավարտից

Հետո նա հարազատներին իր մասին լուր կտա: (Իսկ անհաջողության դեպքում նրանք այդ մասին կիմանան շատ շուտ):

Եվ այդպես, նա, առանց որևէ մեկին տեղեկացնելու, ժամանեց նոյեմբերի իննի երեկոյան, երբ արդեն մութն ընկել էր: Աննետան իջևանեց փոքրիկ մի հյուրանոցում, որը գտնվում էր Փարիզ—Լիոն—Միջերկրական ծով երկաթուղարյին կայարանի մոտերքը: Եվ նորից նրան փրկեց երջանիկ պատահականությունը: Շվեյցարական սահմանը ամբողջ ժամանակ փակ էր: Դա փակել էին հոկտեմբերի վերջին իտալական ճակատում տեղի ունեցած աղետից հետո: Դեռ նոյեմբերի իննին ոչ ոքի ներս չէին թողնում Շվեյցարիա, եվ ահա տասին սահմանը նորից բացվեց—ասում էին ընդամենը մեկ օրով: Հենց դա էլ Պիտանի նշանակած օրն էր: Տենդագին կերպով գրգոված Աննետան առավոտն ու ցերեկային ժամերը վատնեց անձնագրերն ու վիզաները ստանալու, ամեն կարգի ձևականություններ կատարելու, մերթ ոստիկանական վարչությունում անվերջանալի հերթերում, մերթ արտաքին գործերի մինխստրությունում սպասելու վրա: Այնուհետև նա կայարանում երկաթուղարյին տոմսեր գնեց: Այդ բոլորը վերջացնելուց հետո (ամպամած օրը թեքվում էր երեկոյան կողմը, անձրև էր մաղում), Աննետան, նախատեսելով դժվարին գիշերը, վերադարձավ հյուրանոց հանգստանալու: Բայց համարում դժոխային ցուրտ էր: Հիմա, երբ գործերը վերջացած էին, Աննետան սկսեց հուզվել: Հոգնածությունից զարդված, նա ակամայից սկսեց մտածել հնարավոր ձախողման մասին: Անմիջապես շե՞ն տարածի արդյոք ֆրանցի փախուստի ծանուցագիրը: Արդյոք ֆրանցը շի՞ ուշանա գնացքից, իսկ իրեն բա՞ց կթողնեն երկու տոմսով: Է՞ս, բավական է: Հետո կտեսնենք... Ամեն ինչ լավ է իր ժամանակին: Հիմա մտածելն արգելվում է... Աննետան հիշեց, որ մթերքների պաշար չի տեսել: Ֆրանցը տեղ կհասնի ուժասպառ եղած: Աննետան մի քանի րոպեով գուրս գնաց:

Ժամը շորսն անց էր: Ցերեկվա լույսը հանգում էր: Թվում էր, թե քաղաքի վրա սավառնում է ինչ-որ մեկի

յառնավ ու թուլլ շունչը: Առանց ընդհատվելու մաղում էր մանրակաթիլ անձրկը, միապաղաղ ու թափանցիչ: Որ կարծես քամփում էր ոչ միայն անտեսանելի երկնքից, այլև նույնիսկ պատերից ու սալարկից: Փարիզը պարուրված էր մշուշով, ինչպես վերմակի մեջ փաթաթված մարդը: Չորս քայլի վրա ոչինչ չէր երևում: Անձրկի վարագույրի հետեւից հանկարծ առանձնանում էին անցորդների կերպարանքները, մեկը մյուսին կպշելով, նրանք նորից սուզվում էին մառախուզի ամպերի մեջ: Նրանց համար, ովքեր չեն ուզում նկատվել: Դա ոչ միայն թաքստոց է, այլև ծուղակ...

Եվ հանկարծ մառախուզի պատը ճեղքվեց, նրա արանքից երևաց մի երիտասարդ, զարմացած դեմք, ճիշ լսվեց, և ինչքան էլ Աննետայի սիրտը շուտ ճանաչեց այդ դեմքը, ինչոր մեկի ձեռքը էլ ավելի արագ բռնեց նրա արմունկից: Աննետայի առաջ կանգնած էր Մարկը:

— Մամա... Դո՞ւ ես...

Աննետան զարմանքից քարացել էր... Այս հանդիպումը նա երբեք չէր կարող նախազգալ... Մարկը նայում էր Աննետային ուրախ և հետաքրքիր: Եվ, մտնելով Աննետայի հովանոցի տակ, համբուրեց նրան, նրանց շուրթերն ու այտերը անձրկից թաց էին: Աննետան դժվարությամբ սթափվեց: Մարկը հարցրեց.

— Դու, ուրեմն, վերադարձա՞ր: Տո՞ւն ես գնում: Աննետան պատասխանեց.

— Ոչ: Ես այստեղից անցնում էի: Մարկը զարմացավ.

— Ինչպես թե... Բայց դու այստե՞ղ ես գիշերելու:

— Ոչ, ես երեկոյան կմեկնեմ...

Մարկն արդեն ոշինչ չէր հասկանում:

— Ո՞նց թե... Երեկոյան կմեկնե՞ս... Ո՞ւր, ինչո՞ւ, ինչքա՞ն ժամանակով... Դու ե՞րբ ես եկել... Այստեղով անցնո՞ւմ էիր: Եվ նույնիսկ ինձ չե՞ս տեղեկացրել:

Աննետան զգաստացավ:

— Ներիր ինձ, տղաս: Ես ինքս դա վերցին բոպեին միայն իմացա:

Մարկը կրկին մոր վրա հարցեր տեղաց, համառ ու վրդովված:

— Ես քեզ կբացատրեմ հետո: Փողոցում, անձրևի տակ՝ ինչպես խոսենք այստեղ:

— Ուրեմն, արի տուն գնանք: Չէ որ մինչև երեկո դեռ ժամանակ կա:

— Ոչ, ես արդեն պետք է կայարան գնամ:

Մարկը մոայլված նրան էր նայում:

— Որ այդպես է, ես քեզ կուղեկցեմ կայարան:

Աննետան դեռ պետք է վերադառնար հյուրանոց, նա չէր ուզում որդին իմանա, թե ինքը որտեղ է իշկանել: Նա չէր կարող որդուն իրազեկ դարձնել իր ծրագրերին: Հազար սիատճառով: Նրան չի կարելի այս գործին խառնել: Մարկը ի՞նչ կարող է մտածել: Աննետան վստահ չէր նրա վրա, նրա բնավորության կայունությանը: Նա համարում էր, որ Մարկը ընդունակ չէ համակվել իր գաղափարներով, որ նա թշնամաբար է վերաբերվում այդ գաղափարներին: Ոչ, Աննետան նրան ոշինչ ասել չի կարող: Խաղաթղթի վրա է ուրիշի կյանքը... Բայց շասել — կնշանակի նրա մեջ հաստատել կասկածը: Այդ կասկածներն առանց այն էլ արդեն սկսել են շարժվել: Ի՞նչ է Մարկը մտածում նրա խորհրդավոր ուղևորության մասին: Աննետան կարմրեց:

— Տուն գնա, տղաս, — ասաց Աննետան: — Տեսնո՞ւմ ես անձրեն ինչպես է դալիս: Կթրջվես:

Մարկն ուսերը թոթվեց.

— Դու հո առանց ուղեբոփի չե՞ս եկել: Որտե՞ղ ես թռղել ճամպրուկներդ: Ես վազելով գնամ բերեմ:

— Ինձ ոչ ոք պետք չէ:

Մարկը վիրավորվեց, բայց այնպես ցույց տվեց, որ իբր չի լսում նրա խոսքերը: Նա ուղում էր իմանալ, թե մայրն ո՞ւր է գնում:

— Դու տոմսն արդեն վերցրե՞լ ես:

Աննետան շպատասխանեց: Մարկը գնում էր նրա հետեւից: Աննետան զգում էր, որ որդին հետեւում է իրեն: Բարենպաստ առիթ էր փնտրում, որպեսզի որդուց բաժանվի, բայց ոշինչ հնարել չէր կարողանում: Խաշմերուկում Աննե-

տան կանգ առավ և իրեն ստիպէց վասնել հրամայական տոնով.

— Արի այստեղ բաժանվենք!

Մարկը համառությամբ ասաց:

— Ոչ, կառամատուցում:

Աննետան շոր-շոր պատասխանեց:

— Ես քեզ խնդրում եմ, թո՛ղ ինձ:

Մարկը շարունակում էր նրա կողքից քայլել: Աննետան բռնկվեց: Նա բռնեց Մարկի ուսից.

— Բավակա՞ն է: Ես քեզ արգելում եմ իմ հետեւից դալ:

Մարկը կանգ առավ, ընդունելով մոր խոսքերը, որպես ապտակ: Աննետան գիտակցում էր, որ այդ վիրավորանքը տղան չի ների: Բայց նա սկսել էր: Եվ հիմա պետք է գնար մինչև վերջը, եթե դա որդուն հեռացնելու միակ միջոցն է: Վիրավորված Մարկը ինքն էլ սկսեց խոսել վիրավորական տոնով.

— Դու ի՞նչ ես մտադիր անելու: Ինձ չե՞ս վստահում:

— Ոչ:

Մարկը շրջվեց ու գնաց:

Աննետան կանչեց նրա հետեւից:

— Մարկ, համբուրիր ինձ:

Խոցված Մարկը շրջվեց: Նա ձեռքերը խրեց գրպանը, զայրադին վեր քաշեց ուսերը— և գնաց: Մառախուղը ծածկեց նրան:

Աննետան ազատվելով րոպեական թմրությունից, նետվեց գեպի որդին:

— Մա՞րկ... Տե՛ր իմ աստված...

Մարկը անհետացավ:

Աննետան վագում էր մառախուղի մեջ, դիպչելով անցորդներին: Նա ուզում էր Մարկին ասել:

«Ների՛ր... Ես քեզ կրացատրեմ... Սպասիր...»:

Զափազանչ ո՞ւշ է: Մարկն արդեն հեռու էր: Խավարը, մառախուղը կլանեցին նրան: Մի քանի րոպեից հետո Աննետան վերադարձավ: Պետք էր հոգ տանել մյուսի մասին: Մյուսն սպասել չէր կարող:

Աննետայի վրա խուժած հոգսերը շեղեցին Մարկին վերաբերող նրա մտքերը, Կառամատուցը տանող ժուտքի մոտ նա պետք է երկու տոմսերի վրա էլ ծակոտանիշ դնել տար, Բայց հսկիչները մտնել թույլ էին տալիս մեկական տոմսերով, Ոչ մի երաշխիք չկար, որ նրանք կհամաձայնեն դրոշմակել նաև երկրորդ տոմսը, Պատահականությունը երրորդ անգամ փրկեց Աննետային, Հենց նոր էր անցել մի ամբողջ ընտանիք, Հայրը, մայրը, երեք երեխա, Մեկը հոր գրկին էր, մյուսին մայրն էր տանում, երրորդը, որ մոտ տասներկու տարեկան մի աղջիկ էր, փոքր-ինչ ետք էր ընկել, Աննետան, ժամանակ բռնեց նրա ձեռքը և պաշտոնյային մեկնեց երկու տոմս, — պաշտոնյան ցրվածության սկատճառով նենգափոխությունը շնկատեց, Աննետան անցավ, փաղաքշորեն զրուցելով փոքրիկ աղջկա հետ, իսկ հետո նրան տարավ ծնողների մոտ:

Ուղևորները ամբոխվել էին վագոններում, Կուպեները լեփ-լեցուն էին, Աննետան կանգնած էր միջանցքում, Ահազին ժամանակ անցավ մինչև զնացքը, վերջապես, շարժվեց ու սլացավ գիշերվա մեջ, Զգուշանալով թշնամական ավիացիայից, լույսերը հանգցրին, նախազգուշացված էր, որ հնարավոր է օդային հարձակում, Գնացքը կանգ առավ խավարում, Անձրել անընդհատ թակում էր վագոնների կտուրներն ու լուսամուտի ապակիները, իսկ զնացքը գեռ կանգնած էր, Թվում էր, թե նրանք կորած ու մոռացված են դաշտերի մեջ, Խոնավ էր ու ցուրտ, Աննետան ոտքի վրա կանգնած քննեց, — կծկված պատի և հարեւանների միջև, որոնք երկու կողմից սեղմում էին նրան, Ծնկներն ու կոճահողերը ցավից տնքում էին, Աննետան հոգնածությունից մեռնում էր, Նա ինչ-որ երազ էր տեսնում, զնացքի ցընցումներից վեր էր թոշում ու նորից սուզվում երազների մեջ:

Երազում նա Մարկին ու Ֆրանցին էր տեսնում, Աննետան սենյակում էր — իր սենյակում, գավառում, Ֆրանցը եկել էր նրա հետեկից, Նրանք պատրաստվում են միասին մեկնել, իրերն են դասավորում, Ամեն ինչ արդեն պատրաստ է... Հանկարծ գուոք կրնկի վրա բացվեց... Մարկը... Ֆրան-

թը թաքնվում է կից սենյակում։ Բայց Մարկը Կրան տեսնում է։ Նա ժպտում է շար ժպիտով, ինչպիսին երբեմն հայտնվում է նրա երեսին։ Մարկի դեմքն անթափանցելի է։ Նա պատրաստակամություն է հայտնում ուղեցել Աննետային։ Բայց Աննետան գիտի, որ նա ուզում է գերուն մատնել։ Մարկը շարժվեց դեպի դռւոր, որի հետևում թաքնըվեց ֆրանցը։ Աննետան կանգնում է շեմի մոտ։ Մարկն ասում է։

— Բա՞ց թող, մամա։ Ես ուզում եմ տեսնվել սիրելի Ֆրանցի հետ։ Մենք պետք է զրուցենք։

Աննետան բղավում է նրա վրա.

— Ես զիտեմ, դու ինչ ես ուզում։ Բայց դու ներս չե՞ս մտնի։

Նրանք կանգնած են դեմ առ դեմ և մարտահրավերով նայում են իրար։ Սարսափը համակում է Աննետային։ Մարկի ծաղրական հայացքում դաժան մի կայծ է բռնկվում։ Նա, մի կողմ հրելով մուտքը փակող մորը, ասում է։

— Դու սպասի՞ր... Ես հիմա կրոնեմ նրան, քո սիրեկանին...

Սարսափը, վրդովմունքը Աննետայի մեջ կատաղության պայմանուն են առաջացնում։ Նրա ձեռքին շգիտես որտեղից հայտնված խոհանոցային դանակ կա. ևս մի վայրկյան— և այդ դանակը կմխրճվի...

Ճղաձգորեն լարելով ուժերը՝ հանցագործության անդունդից դուրս պրծնելու համար, Աննետան արթնանում է և տեսնում, որ ինքը կանգնած է վագոնում, մթության մեջ։ Նա շնչում է ծանր։ Սարսափ և ամոթ...։ Նրա շունչը կտրվում է։ Որդու հասցրած, որդուն հասցրած վիրավորանքը, ամոթալի կասկածը, որ երկուսին էլ արատավորում էր (Մարկ, Աննետա— չէ որ դա մի ամբողջություն է), սպանության քամին— այդ ամենը սառուց դարձրեց նրա դողացող մարմինը։ Աննետան իրեն ասում է։

«Դա կարո՞ղ է արդյոք պատահել։ Կարո՞ղ է արդյոք լինել, որ այդ միտքը առկայծել է ինձ մոտ, թեկուզ մի ակընթարթ, որ դա եղել է իմ մեջ...»

Աննետան իրեն մեղավոր էր համարում իր որդու առաջ

կրկնակի հանցագործության մեջ. Մարկի նողկալի կասկածանքի և որդու դեմ կատարած իր մահափորձի մեջ... Եվ Աննետան չէր կարողանում ուղեղից դուրս մղել մի ժիտք.

«Եթե գործն այդպիսի ընթացք ստանար, ես նրան կըսպանեի՞...»:

Աննետան մտածեց, որ երազում ինքը, երեխ, խռուել է, և հարեանները լսել են,— զա սթափեցրեց նրան, Նա ատամները սեղմեց և ճնշեց Հեկեկանքը, որից նրա կործքը բարձրանում էր, Եվ նորից ականջին հասավ խառվարի մեջ սլացող գնացքի աղմուկը... Ո՞չ, Ո՞չ ոք չի թափանցել նրա տենդագին տեսիլքների գաղտնիքի մեջ։ Ամեն մեկն իր տեսիլքներն ուներ։ Եվ փրկարար խավարում նա սրբում էր այրող արցունքները։ Երկու հարեանների միջև սեղի ունեցող խռոակցությունը նրան վերադարձրեց իրականությանը։

Նրանց ասելով, գնացքը փոխել էր իր երթուղին, փոխանակ Բաւրբոննե գնալու, թերզել էր ձախ։ Աննետան ցնդվեց։ Նա և Ֆրանցը իրար չեն տեսնի... Դեմքը կցը նելով ապակուն, նա նայում էր, առանց որևէ բան տեսնելու։ Իր առջեռում վաղող թանձր ստվերներին, և տեղանքը չէր ճանաշում։ Բայց հենց առաջին կանդառին Աննետան ուրախությունից սկսեց դողալ։ Նույն այն կայարանն է...

Աննետան նայեց շորս կողմը... Երկու գյուղացի։ Զինվորներ։ Բայց նա, ում ինքն սպասում էր, գնացք չի նստել։ Աննետան արգեն չէր կասկածում, որ ամեն ինչ կորած է։ Տաղնապը լափում էր նրան, նա փորձեց անցնել միջանցքներով։ Բայց հատակին թափված մարմինների վրայով առաջ գնալը դժվար էր։ Գնացքը նորից շարժվեց և նորից կանգ առավ ինչ-որ տեղ կայարանների միջև։ այստեղ նորոգում էին ճանապարհը, նորից լույսերը հանգցրին։ Գլուխը կոացրած։ Աննետան խարխափելով առաջ էր անցնում մարդկացին քարացած հոսանքով, բայց դեմ առավ ինչ-որ խառնակուտակի... Գնացքը ցնցվեց, լույսերը վառվեցին։ Աննետան լապտերի սպիտակավուն լույսի տակ տեսավ նրան, ում փնտրում էր... Դեմ առ դեմ... Ցնծությունից նրանց աշքերը պայծառ շողջողացին, շրթունքները հան-

պիպեցին իրար... Թառերով դա չես պատմիւ Երբ միտքը աւժասպառ է, խոսում է մարմինը... Կորած եղբայրը նորից գտնում է իր քրոջը...

Ֆրանցին թվաց. Թե ինքը անհույս Մոլորվել է ինչ-որ խորքերում: Չիմանալով ուր գնալ, երբ իշնել, ինչպես գործել, նա բոլորովին խելքը թոցրել էր Աննետան նրան հրեշտակ թվաց, որին երկինքը ցած էր առաքել: Ֆրանցը նրան, զրկում էր երեխայի նման: Իսկ Աննետան, երջանկացած ևեղմվեց նրան, ինչպես թուխսը ճուտին: Մոտենալով իրար, նրանք շշուկով, կես-խոսք, պատմում էին իրենց արկածները, Խորամանկ Պիտանը որոշեց շրջանցել կայարանը, այդ մկան թակարդը, և նրան դաշտերով տարավ-հանեց հողաթմբի մոտ, որտեղ գնացքները ճանապարհային աշխատանքների պատճառով կանգ էին առնում, և այնտեղ, ականակիր մթում, Ֆրանցը գնացք նստեց...

Մի ժամ հետո նրանք պետք է գնացքը փոխեին: Տոմսերն ստուգեցին: Ամենամեծ վտանգն արդեն անցած էր: Մնում էր սահմանից անցնելու վտանգավոր ցատկը: Բայց հիմա նրանք համարձակ էին: Ֆրանցն արդեն հաջողությանը չեր կասկածում: Նա մի ծայրահեղությունից նետվում էր մյուսը: Եվ Ֆրանցի տղայական ցնծությունը հաղորդվում էր նրա ուղեկցուհուն: Աննետան այլևս չէր մտածում իր հոգնածության, հոգսերի, վատ երազների մասին, իր սիրելի տղացի և այն մասին, որ իր մազերի մեջ սպիտակ թելեր են հայտնվել: Հուզված, ծիծաղկոտ, զրուցասեր, նրանք հիշեցնում էին երկու դպրոցականների: որոնք վայելում են հաջող խաղացած կատակի հաճույքը: Նրանք պատկերում էին քրոջ ու եղբօր: Ֆրանցը նույնիսկ զվարճանում էր, զրուցելով Աննետայի հետ իրենց կարծեցյալ ժամացույցների առևտրի մասին Եվելյարական Յուրայի փոքրիկ քաղաքում, իրենց հարեանների մասին, որոնք սաստիկ ծիծաղելի և անհեթեթ ազգականներ ունեին: Եթե ուղեկորներից մեկնումեկը իմանար ճշմարտությունը, նա սրանց խելագար կհամարեր— այնքան ուրախ էին ծիծաղում: Բայց նրանց ներվերը շափազանց լարված էին: Դեռ ժամանակ կլինի մորմորվելու...

Հերշապեալ նբանք ընեցին: Եվ հանկարծ Ֆրանցի զլու-

իսը կպավ հարեանուշու գեմքին, իսկ նրա մազերին կպավ քնած Աննետալի այլը... թալց արդ երազ տեսնելու ժամանակ, չրագ, որ մետաքսի նման փափուկ էր, փափուկ էր ինչպես բարձը, որին կպել էր Աննետան, պարտքը նրան արթնացրեց.

«Արթնացի՛ր, թախում են...»:

(Աննետան դիմադրում էր...):

«Արթնացի՛ր, թախում են...»:

«Ո՞վ»:

«Նա, ում գու սիրում ես...»:

(Աննետան տեսավ Մարկին, բայց նա որդուն կոշում էր տարրեր անուններով):

«... նրան հետապնդում են: Վե՛ր կաց, թա՛ց արա...»:

Աննետան պրկեց բոլոր ուժերը, բայց այստեղ նրան նորից հաղթեց բունը — Աննետալին թվաց: Թե նա ընկավ իր մահճակալի վրա, — և հանկարծ ամբողչ համարձակությամբ ցատկեց հատակին: Նրա աշքերը բացվեցին: Արդեն լուսացել էր: Գնացքը կանգ առավ: Այստեղ ֆրանցը պետք է իջներ:

Աննետան իսկույն նրան արթնացրեց: Գնացքից նա ֆրանցի հետ միհասին իջավ: Հետո գնացին, ինչպես պայմանավորված էր, պանդոկի: Նրանց սեղանին մոտեցավ մի հասակն առած, ալեխառն մազերով գյուղացի: Նա հանգիստ մարդ էր, անշտապ և խոսքերի և շարժումների մեջ: Գյուղացին հարցրեց, ինչպես է ապրում Պիտանը: Երեքով էլ սկ սուրճ խմեցին: Եվ հիմա ամեն ինչ արդեն այնպես էր թվում, կարծես գյուղից երկու տղամարդ էին եկել այստեղ, որպեսզի հանդիպեն գնացքով անցնող Աննետալի հետ: Տղամարդիկ հրաժեշտ տվին նրան և մոտեցան վաճառասեղանին: Գյուղացին այստեղ ըստ երկույթին, յուրային էր: Նա հանդիստ, իր երգեցիկ խոսելաձեռով մի երկու-երեք խոսք փոխանակեց բուժետապանի հետ: Այնուհետև առանց շտապելու, զուրս եկավ կողքի գոնից: Ֆրանցը տանում էր գարեջրի արկղը, որը գյուղացին էր գնել: Աննետան վերադարձավ վագոն, Գնացքը շարժվեց:

Կուպեի լուսամուտից Աննետան տեսնում էր գորշ երկնքի  
տակ, լեռների պատերով գոտեռված ձյունածածկ ու շող-  
շողուն դաշտերի միջև ձգվող մի սպիտակ ճանապարհ, և  
այդ ճանապարհով հետզհետե հեռանում էր պետություն-  
ների կորդոնում — բանտերի կորդոնում — ճեղք փնտրող մի  
սայլ, որը բարեկամին տանում էր իր մեռնող բարեկամի  
մոտ:

## Մասն չորրորդ

‘Ժնկյան լճի ափերին տարածված մեծ, լուսավոր ցուրտ, արևով ողողված քաղաքի բոլոր կողմերից փշում էր ձմեռային քամին:

Աննետան մտավ կայարանին մոտ գտնվող հյուրանոցը և գիշերվա համար երկու տեղ պատվիրեց: Նա հազիվ էր ստքերի վրա կանգնում, բայց դեռ հանգստանալու ժամանակ չէր: Մինչեւ նա շիմանա, որ ֆրանցը փրկված է, տագնապն ու հուզմունքը նրան թույլ չեն տա հանգստանալ, թեև ֆրանցը ոչ մի կերպ երեկուից շուտ գալ էր կարող, բայց Աննետան համարյա կեսօրից սկսած նրան սպասում էր մերձկայարանային այգում որտեղ նրանք պայմանավորվել էին հանդիպել: Ուժասպառված ընկնելով նստարանին և նույն վայրկյանին ցատկելով տեղից, նառուղիներով այս ու այն կողմ նետվելով, հոգնած ու ջարդված, սառը քամուց դռղալով, Աննետան իր պոստը թողնում էր միայն այն պատճառով, որ վախենում էր ուշադրություն գրավել և թափառում էր հենց այդտեղ մոտակայքում: Թըն անցավ, վրա հասավ երեկոն. Աննետան վերադարձավ հյուրանոցի իր համարը: Պատուհանից նա տեսնում էր միայն այգու անկյունը և դարբասը: Տեսողությունը լարելով, նա էլեկտրական լույսը տակ զննում էր լուրաքանչյուր անցորդի սիլուետը: Փամբ տասի մոտերքը նա նորից դուրս եկավ. Սառուղիներում, սայլի նման գոգուալով սլանում էր ցուրտ սառցային քամին: Թվում էր, աստղերը երկնքում առկային են ֆրանցի շնչառությունից, և Աննետային թվում էր, թե այդ լույսերը հիմա ուր որ է կհանգչեն:

ժամը տասն անց կես, վերջապես, Ֆրանցը հայտնը՝ վից— ալո, դա նրա անվատահ քայլվածքն է, նրա շտապ՝ կոտ քայլքը: Նա նման է մոլորված շափահաս երեխայի, որը շրթունքները կծում է, որ լաց լինի: Ֆրանցն անցավ Աննետայի կողքով, առանց նրան տեսնելու: Երբ Աննետան ձայն տվեց նրան, Ֆրանցը ուրախությունից աղաղակեց: Աննետան նշան արեց նրան, որ ձայնը կտրի: Աննետան ցնծում էր: Ֆրանցը ոտից գլուխ ցեխոտված էր,— թվում էր, թե այդ ցեխները նա հավաքել է իր անցած բոլոր ճանապարհներից: Ծառուկու ոլորանին Աննետան սկսեց ձեռքով մաքրել նրան. Ֆրանցն այնպես շպետք է անի, որ իր տեսքով ուշադրություն գրավի: Ֆրանցը ոչ առարկում էր, ոչ էլ ներողություն խնդրում, նա ամբողջովին տրվել էր այն բերկրալից զիտակցությանը, որ ինքն այլևս մենակ չէ, որ նա կարող է հիմա ամեն ինչ պատմել Աննետային, Աննետան նրան խնդրում էր սպասել, մինչև տեղ հասնեն— այնտեղ արդեն կտրելի է խոսել ուղածի շափու: Ամբողջ օրն ու երեկոն ցրտում լինելով, Աննետան մրսել էր բայց այնքան էր երջանիկ, որ այդ մասին չէր էլ մտածում: Կայարանից հորդում էր ուղևորների ալիքը: Ֆրանցը աննկատելիորեն մտավ հյուրանոց: Աննետան նրան գրանցել էր որպես իր եղբոր:

Նրանց համարները կից էին: Աննետան Ֆրանցին կերակրեց: Ֆրանցն ուտում էր ագահորեն— և խոսում էր, խոսում, չհոգնելով պատմել փախուստի բոլոր մանրամասները: Աննետան նրա կողմը խոնարհված, անընդհատ Ֆրանցի առաջը կարկանդակ էր հրում, որպեսդի նա այդքան բարձր շխոսի: Աննետան նստել էր, քունը շառած, հարբուխից արցունքութված աշքերով, գլուխը ծանր, քիթը մտքրելով ու փաշտալով: Ֆրանցը ոչինչ չէր նկատում: Նա ոչ մի կերպ չէր կարողանում ուտելուց ու խռանելուց կշտանալ: Ու թեև Աննետան շատ հոգնած էր, բայց չէր ուզում, որ Ֆրանցը դադարի խոսելուց: Պատին հասցրած թրխկոցը նրանց հիշեցրեց, որ ուրիշ մարդիկ նույնպես գոյություն ունեն: Այդ ժամանակ Ֆրանցը լոեց: Եվ հանկարծ հոգնածությունը հաղթեց նրան. կատարյալ ուժասպառ նա ընկապէ

անկողնու վրա և քննց Բայց տենդորեն գրգռված Աննետան մի կողքից մյուսն էր շրջվում, ականչ դնելով հարևան սենյակից եկող ձայներին Դուռը բաց էր: Աննետան բավականություն էր ստանում իր երիտասարդ ուղեկցի խաղաղ շնչառությունից, հրճվելով այն մտքից, որ ինքը փրկել է նրան: Աննետայի կոկորդը ցավում էր: կուրծքը բռնվել էր: Նա բերանը վերմակով փակում էր, որպեսզի ֆրանցը լլսի, թե ինքն ինչպես է հազում:

Առավոտյան նա շուտ վեր կացավ, մաքրեց ֆրանցի շորերը և դուրս եկավ հեռախոսով զանգելու ժերմենի մորը.

— Գալիս ենք...

Վերադառնալով, նա տեսավ, որ ֆրանցը դեռ չի արթնացել: Աննետան չէր ուզում նրան արթնացնել: Կանգնել, նայում էր ֆրանցին: Հետո նայեց հայելուն— տեսավ հարբուժից կարմրած, հողմահարված իր դեմքը, ուռած աշքերն ու քիթը,— և վշտացավ: Բայց այդ ստվերն ընկավ ու անցավ: Ուսերը թոթվելով, Աննետան ծիծաղեց:

Գնացքը Շատո դ'Էկս մեկնում էր առավոտյան: Աննետան արթնացրեց քնով ընկած ֆրանցին: Ֆրանցը բոլորովին չզարմացավ՝ Աննետային իր կողքին տեսնելով: Նա՝ ֆրանցը, որ վայրենու նման կանանցից ամաշում էր: Աննետան նրա համար արդեն կին չէր: Նա ապրում էր ֆրանցին ծառայելու համար: Աննետան հոգ է տանում նրա համար— ինչ կա որ, դա բնական է: Ֆրանցն իր վստահությունը նվիրում էր հեշտ և նույնպիսի հեշտությամբ էլ կարող էր ետ վերցնել: Երբ Աննետան նրան ասաց, որ հենց այսօր երեկոյան նա իր բարեկամի մոտ կլինի, ֆրանցի շարժուն դեմքի վրա ստվեր իջավ. չէ որ նա արդեն մոտ էր նպատակին, որքա՞ն է սարսափելի... Բայց հանկարծ ֆրանցը անհամբերությունից դողաց և սկսեց Աննետայի աշքերի առաջ հագնվել: Աննետայի վրա կարելի է ուշադրություն շդարձնել:

Նրանք հյուրանոցից գնացին: Ֆրանցը բոլոր տեսակի հոգսերը թողեց Աննետային. վճարելը, տոմսեր գնելը, գնացք վնատելը, տեղերի ընտրությունը, ֆրանցը նույնիսկ իրերը տանելուն չօգնեց: Բայց կանդ առավ, որպեսզի Աննետայի

Համար մի փունջ մանիշակ գնի: Ֆրանցը կատարելապես զուրկ էր գործնական հոտառովթյունից և դիմադրողականությունից: Կառամատույցում նրան պտույտի մեջ առավուղկորների ալիքը օթե Աննետան ետ չնայեր, նշան չաներ երան, որ գոտեպնդվի, լսպասեր նրան, Ֆրանցը ամբոխի մեջ կկորչեր: Ֆրանցի նման մարդիկ շեն կարողանում կենտրոնանալ այն բանի վրա, ինչ անում են տվյալ րոպեին: Նա ամբողջովին սպասվելիք տեսակցության զգացմունքների էշխանության տակ էր:

Աննետան ապարդյուն կերպով փորձում էր շեղել նրա ուշադրությունը: Ճանապարհին Ֆրանցը ոշինչ չէր տեսնում և վատ էր լսում: Աննետան հիմա ժամանակ ուներ նրան գննելու Ֆրանցն ապրում էր միայն մի բանով: Սպասում ու զգեստությամբ, խնդությամբ ու սարսափով: Նրա առցեռում Աննետան չէր, այլ ժերմենը: Անիվի ամեն մի պտույտը նրան ավելի էր մոտեցնում ժերմենին: Աննետան տեսնում էր, որ նրա շրթունքները շնչում են: — Ֆրանցը խոսում էր իր բարեկամի հետ, որը նրան ընդառաջ էր գալիս:

Երբ նրանք գնացըից Շատո գ'էկսում իջան, Աննետան նրան ասաց: Որ բայլը դանդաղեցնի: Իսկ ինքն արագարագ առաջ ընկնելով, գնաց Շավանների ամառանոցը — հարկավոր էր ժերմենին նախապատրաստել:

Հիվանդը Ֆրանցին սպասելով, հազնվել էր ինչպես պետք է և պատշգամբում պառկել էր բազկաթոռի մեջ: Նրա կողքին նստած էր մալրու ժերմենն ուզում էր տեղից բարձրանալ, բայց նրա ոտքերը ծալվում էին: Աննետայի հիվանդից բաժանվելուց հետո անցած չորս ամսվա մեջ ժերմենն անճանաչելիորեն փոխվել էր: Աննետան օարսափեց հիվանդության քայլայող ուժից, և ինչքան էլ սրագ տիրապետեց իրեն, այնուամենայնիվ առաջին հայացը նրան ամեն ինչ ասաց:

Երբ Աննետան ներս մտավ, ժերմենը փորձեց նրան ընդառաջ գնալ, բայց զգաց, որ դա հնարավոր չէ, և հնագանդվեց: Աննետան սկսեց նրա հետ խոսել: Ժերմենը նայում էր Աննետային, ինչպես նայում են շիրմային, որը ծածկում է մեկին, ում բաղձում են տեսնել: Նա նոթերը կիտեց,

որով արտահայտում էր խոշոնդոտը վերացնելու իր ցանկությունը։ Այդ ժամանակ Աննետան մի կողմ քաշվեց և, շրջելով դեպի կիսաբաց դուռը, կանչեց նրան, ում փնտրում էին Ժերմենի աշքերը։ Ֆրանցը, օրորվելով, ներս մտավ, նա կանգ առավ տեսավ, նետվեց... Բարեկամները հանդիպեցին...»

Մի քանի ամիս շարունակ նրանք իրենց երեակայության մեջ մշտապես տեսնում էին հանդիպման րոպեն և վերապրում այդ... Եվ այնուամենայնիվ դա տեղի չունեցավ այնպես, ինչպես որ պատկերացնում էին իրենք...»

Նրանք իրար ձեռք ըբռնեցին։ Զգրկախառնվեցին։ Զարտաբերեցին ոչ մեկը այն խոսքերից, որոնք ընդամենք մի րոպե առաջ պատրաստ էին դուրս թռչել նրանց լեղվի ծայրից... Ժերմենի վրա զցած առաջին իսկ հայացքից Ֆրանցը, ողկորությունը կաշկանդած, բազկաթոռի կողքին շրմիած հատակին և երեսը թաղեց վերմակի մեջ։ Նա սարսափից քար կտրեց, տեսնելով իր բարեկամին, որին թողել էր փթթած ուժերով։ Իսկ հիմա չէր ճանաչում։ Եվ Ժերմենը, որսալով սարսափի այդ կայծակը, հանկարծ պարզորոշությամբ իրեն զննեց այդ կայծակի լույսի տակ։ Բարեկամների միշն կանգնած էր մահը, որը բաժանում էր նրանց...»

Ժերմենը, մահու շափ գունատ, քարացած, զգում էր, թե ինչպես է իր ոտքերին սեղմվում բարեկամի գլուխը. նա շոյում էր Ֆրանցի մազերը, աշխատելով նրան պաշտպանել շարտահայտված սոսկումից։ Բայց այդ սոսկումը վարակեց նաև Ժերմենին։ Նրանք երկուսն էլ հասկացան, որ իրենք արդեն կանգնած են տարբեր ափերում, պատկանում են տարբեր ժամանակների։ Հասակների միշն եղած փոքրիկ տարբերությունը աճեց ու ծավալվեց մինչև անսահմանություն։ Մեկը պատկանում էր մեռյալների սերնդին, մյուսը՝ ապրողների։ Ժերմենն առանց վրդովմունքի, բայց ներքնապես պաղելով, հաշտվեց անխուսափելիության հետ։ Նա, պվագը, արդեն կիսով շափ այնտեղ գնացած, պետք է սփոփե նրան, ով դեռ այստեղ է մնում... Տե՛ր աստվածք ինչքա՞ն էին նրանք հեռու մեկը մյուսից...»

Ֆրանցն սկսեց հեկեկալ Ժերմենը դիմեց երկու կանանց, որոնք հեռացան, նկատելով նրա արած անհամբե-

բություն արտահայտող ժեստը և հիմա, պատշգամբը տառ  
նող մուտքի մոտ, աշխատում էին ստվերում մնալ.

— Դուք շե՞ք տեսնում, որ նա իրեն վատ է զգում...  
Դուրս տարեք նրան:

Աննետան Ֆրանցին տարավ հեռավոր անկյունը: Նատեց-  
րեց նրան, սփոփանքի խոսքեր շշնչաց, մայրաբար կըշ-  
տամբեց: Ֆրանցն արցունքները սրբեց, նա մի տեսակ  
ամոթ զգաց և հանդարտվեց:

Հնկնելով բարձին, ուժասպառ Ժերմենը անկենդան հա-  
յացքով զննում էր մոռայլ լեռների շարագուշակ դեմքը. նա  
չէր լսում, թե մայրն իրեն ինչ է ասում:

Այդ առաջին ցնցումից հետո բարեկամներն իրենց հա-  
վաքեցին, նոր հանդամանքներին ընտելանալով, միտքը  
նորից սկսեց կառուցել: Եվ սիրտը մի կերպ սկսեց բուժել  
վիրավոր պատրանքը, որը նրան պետք էր ապրելու և մեռ-  
նելու համար:

Երկու բարեկամներից նա, ով ավելի շատ էր լսում  
բնադրին և, կնշանակի, ավելի վարպետորեն էր իրեն խա-  
բում,— Ֆրանցը,— ավելի շուտ մոռացավ այն, ինչը չէր  
ուզում հիշել: Երեկոյան, մենակ մնալով իր սենյակում  
(նրան տեղավորեցին հարեւն փոքրիկ տանը), Ֆրանցը  
Ժերմենին խանդավառ մի նամակ գրեց. նա խաբում էր  
իրեն և փորձում էր խաբել նրան, ուրիշ իմաստ տալով այն  
հուզմունքին, որը հորդեց իր միջից առաջին հանդիպման  
պահին: Եվ նոր տեսակցության ժամանակ նրան համարյա  
հաջողվեց Ժերմենի մեջ տեսնել այն կերպարը, որը նա  
առաջ պատկերում էր իր համար: Վերադարձավ մտերմու-  
թյունը, իսկ դրա հետ նաև անբռնազբոսիկությունը: Ֆրան-  
ցի մուտ նույնիսկ սկսեց դերակշռել երիտասարդ անհոգու-  
թյան երանգը: Բայց եթե նա մոռացել էր, ապա Ժերմենը  
չէր մոռանում: Նա չէր կարող մոռանալ անցյալը թեկուզ  
այն պատճառով, որ առջելում նրա համար ապագա շկար: Այն,  
ինչ հասկանալի է— հասկանալի է, ո՛չ մի զիջում:  
Նրա մեջ այրող հիշողություն էր մնացել այն մասին, որ  
իրեն տեսնելու առաջին ակնթարթին Ֆրանցի դեմքին

դրոշմվեց սարսափի մի արտահայտություն։ Ժերմենն այց սարսափը դեռ հիմա էլ երբեմն որսում էր ֆրանցիք մեզ—ինչպես կայծակի վայեկնական բռնկում։ Թունգ զրուցի ժամանակ ֆրանցիք աշխուզ դեմքի վրայով ֆի ստվեց էր սահում, նա մի փոքր ինձուտում էր քիթա կամ հոնքը, թարավական էր, ժերմենի առւր և զգոն հայացքը մարմնի թաղանթի միջով թափանցում էր մինչև հոգու խորքը, ֆրանցն զգում էր մահը և աշխատում էր նրանից հեռանալ։ Հետո նա իրեն հավաքում էր, ջափազանց ուշ էր, նա լէր կարողանում հաղթահարել իր նողկանքը գերեզմանի առաջ։

Ժերմենը դառնությամբ Աննետային ասում էր.

— Նա առողջ է, նա իրավացի է։

Սակայն պատրանքը աստիճանաբար ծածկեց իր սարդուստայնի բոլոր անցքերը։ Ֆրանցին հաջողվում էր հիվանդի երեսին շնկատել մահվան դիմակը ծեփող մատների հետքերը։ Նա նույնիսկ մոռացել էր անխուսափելիորեն մուտեցող ժամի մասին։ Ժերմենն, ի միջի այլոց բարեկամի ներկայությամբ աշխուժանում էր։ Նրա շրթունքները թվում էին ավելի կարմիր, կարծես նա թաքուն ներկել էր դրանք։ Մի անգամ կատակելով, Աննետան այդ մասին ասաց նրան։ Ժերմենը պատպախանեց։

— Դուք կատակո՞ւմ եք, Բայց ճիշտ եք կուահել, Ես պառակ կոկետուհի եմ... Խեղճ տղա։ Ես վախենում եմ նրան սարսափեցնել...»

Բայց երբ սկսում էին ցավերի նոպաները, որոնք ժերմենը չէր կարողանում հաղթահարել, նա սովորաբար Աննետային խնդրում էր ֆրանցին զբոսանքի տանել, որպեսզի նա շտեսնի։

Սկզբում ենթադրվում էր, որ Աննետան Շատո գ'էկսում կմնա մեկ-երկու օր։ Նա մտադրված էր բարեկամին տալ բարեկամի ձեռքը և հենց հաջորդ օրը վերադառնալ Փարիզ։ Բայց տեսնելով, թե ինչ ծանր վիճակում է գտնվում ժերմենը, նա որոշեց գնալը հետաձգել։ Աննետան չէր կարող խափարի թագավորության սեմին ժերմենին լքել։ Թեև ժերմենը նրան ոչինչ չէր խնդրել (նրա համար նողկալի էր մտածել, որ ինքը բեռ է դարձել), բայց Աննետայի ներ-

կայության կարոտալը ծարավը ժերմենի մոտ տնկախ նրա կամքից երեսում էր: Ժերմենը հիմա վախենում էր Ֆրանցի հետ մենակ մնալ: Աննետան զգում էր, թե ինքը ինչքան է այետք այդ նրկու բարեկամներին: Եվ հետագեց իր մեկնումը, չնայելով այն պարտականություններին, որոնք նրան Փարիզ էին կանչում: Դոնե մի քիչ թեթեացնել այն ճամփորդի տառապանքները, որը բաժանվում էր մեր Հին Մայրցամաքից. դա Աննետայի համար մի պարտք էր, որն ավելի կարևոր էր, քան մնացած բոլորը:

Ծանր բեռի տակ էր մտել Աննետան: Նա դարձել էր երկու բարեկամների հավատարմատարը: Նա միակ մարդն էր որի հետ նրանք կարող էին բաժանել իրենց ամենազաղտնի մտադրությունները. շէ որ նրանք արդեն շհամարձակվեցին դրանք բացել մեկը մյուսին: Հատկապես անհամեստ էր Ֆրանցը: Այն րոպեից, ինչ սկսեց անվերապահորեն հավատալ Աննետային, իրեն ամբողջովին վստահում էր նրան: Ֆրանցը նրան ասում էր այն բոլորը, ինչի մասին ընդունված է լուել:

Աննետան այդ կապակցությամբ շէր մոլորվում: Նա գիտեր, որ Ֆրանցն ու Ժերմենը անկեղծ են իր հետ ու թե այն պատճառով, որ նա Աննետան է, այլ այն, որ նա այստեղ, ձեռի տակ գտնվող անանուն կին է, իսկ նրանց հարկավոր է բարյացակամ և հուսալի ունկնդիր, որից իրենք շէին ամաշի: Դա գեռ ամենենին էլ շէր ապացուցում, որ նրանք կապված են Աննետայի հետ: Նրանք լցված էին միայն մեկը մյուսով և իրենցով: Բայց, իմանալով այդ, Աննետան այնուամենայնիվ իր մեջ էր առնում այդ տարօրինակ բարեկամության տիրական շունչը: Նրանց սիրութեաննելի ճառագայթները միմյանց հասնելու ճանապարհին անցնում էին Աննետայի հոգու միջով:

Ֆրանցը Աննետային ասում էր (նրանք զբոսնում էին միասին):

— Ես նրան սիրում եմ: Ես սիրում եմ միայն նրան: Նրա հետ այդ մասին ես խոսել շեմ կարող— նա այնպես խիստ է նայում ինձ: Ինձ թույլ շի տալիս այդու Սենտիմենտալություն տանել շի կարողանում, ինչպես ինքն է արտա-

հայտվում... Բայց դա ինչ սենտիմենտալություն է: Չէ որ նա ինքն էլ այդ գիտի: Նա լավ գիտի, ես ինչ եմ մտածում, բայց նրան դուք չի գալիս այդպիսի բաներ լսելը: Նրա կարծիքով դա առողջ բան չէ: Չգիտեմ, թե դա ինչ է: առողջ է, անառողջ է: Բայց ես գիտեմ: որ նրան սիրում եմ և գիտեմ, որ դա լավ է— դա չի կարող վատ լինել: Ես սիրում եմ միայն նրան և ուրիշ ոչ ոքի... Ես կանանց շեմ սիրում— և երբեք էլ չեմ սիրել նրանց... Այո, ինձ համար հաճելի է նայել նրանց, եթե նրանք լավն են,— հաճելի է նայել նրանց, ինչպես վարպետորեն պատրաստված իրերի: Բայց նրանց մեջ ինչ-որ բան միշտ վանում է ինձ: Չգում է և վանում: Դա բոլորովին ուրիշ ցեղ է: Եվ ինձ ամենեին շեր զարմացնի, եթե նրանք որոշ միջատների նման լափեին իրենց որձին՝ նրանց ուժասպառելուց հետո: Ես չեմ սիրում նրանց կպցել... Դուք ծիծաղում եք: Ինչ ասացի՞ ես... Ա՛՝ Ներեցեք, մոռացել էի... (Աննետային թևանցուկ էր արել): Դուք, դուք կին շեք:

— Իսկ ի՞նչ եմ:

— Դուք— դուք եք!

(«Դու ուզում ես ասել,— մտածում էր Աննետան,— որ ես— զւ եմ, որ ես քեզ եմ պատկանում, որ ես հաշիվ չեմ... Թող այդպես լինի, իմ սիրելի էգոխոտ...»):

Ֆրանցը մտածում էր.

— Բայց շատ հետաքրքիր է: Այն ժամանակից, ինչ մենք ժանոթ ննք: Երբեք իմ մտքով չի անցել, որ դուք կին եք:

— Կասկածելի հաճոյախոսություն է: Բայց, ձեր բոլոր ասածներից հետո, այնուամենայնիվ, շնորհակալ եմ ձեզ:

— Դուք չե՞ք զայրանում ինձ վրա:

— Ti voglio bene!, — ծիծաղելով պատասխանեց Աննետան:

— Այդ ինչ ասացի՞ք... Ես չհասկացաւ:

— Կվելի լավ: Պետք էր լսել:

— Կրկնեցեք! ..

<sup>1</sup> Ես քեզ սիրում եմ (իտ.):

— Կարիք չկա:

— Ի՞նչ տարօրինակն եք: Մարդ ձեզանից գլուխ չի հանում: Պետք է, որ մարդ ձեզանից խրտներ, իսկ ես երբեք ձեզանից շեմ խրտնում: Ինձ թվում է, որ ամեն ինչ, ինչպես որ կա, կարող եմ ձեզ պատմել:

— Դա նրանից է, որ ես ձեր բոլոր ասածները կարող եմ լսել:

— Ախր դուք իսկական տղա եք:

— Նույն ցեղի, ինչպես և դո՞ւք: Ուրեմն, բարեկամներ ենք:

— Դա ամենալավ բանն է: Միակ բանը, որով և կյանքը լավ է: Եվ հազվադեպ է այդ բանը: Ես միայն մի բարեկամ ունեմ: Իսկ եթե ես բարեկամիս սիրում եմ, ուրեմն սիրում եմ ամբողջությամբ: Եվ կուզեի նրան ամբողջովին ունենալ: Մի՞թե հասկանալի չէ: Բայց բարի եղիր լոել այդ մասին: Նույնիսկ Ժերմենը — նա էլ չի ուզում այդ մասին լսել: Մեր աշխարհում սիրել թույլատրվում է միայն կիսով շափու:

Աննետան իրենից անկախ կրծքին սեղմեց Ֆրանցի ձեռքը:

— Դուք ինձ հասկանո՞ւմ եք, — հարցրեց Ֆրանցը:

— Ես հասկանում եմ բոլոր ցնդածներին, — ասաց Աննետան, — չէ՞ որ ես էլ եմ այդ նույն ցեղից:

Պատշգամբում պառկած, գլուխը ետ գցած և նայելով երկնքի պաղ կապույտին, Ժերմենն Աննետային ասում էր.

— Նա ի՞նչ պիտի անի առանց ինձ: Ֆրանցը ինձ անշափ սիրում է: Նա կին է... Ոչ այնպիսին, ինչպիսին դուք եք, — կյանքի դաժան դպրոցը ձեզ գրեթե տղամարդ է դարձրել: Իսկ նա լողում է, ուր որ տանի նրա հեղհեղուկ և վատ ղեկավարվող սիրտը: Ֆանտազյորի սիրտը... Ո՞ւր կտանի սիրտը այդ թույլ կամքով և ուժեղ կրքերով մարդուն: Ես շեմ պատմի ձեզ, թե ինչ վտանգներից եմ փրկել նրան: Նա իսկի գլխի էլ չի ընկնում դրանք — չէ՞ որ նա նույնիսկ ընդունակ չէ դրանք տեսնել և ծանրութեթև անել: Նա անբարոյական և մաքուր մարդ է: Մեր բարոյական

արժեքների մեջ նա ուրիշ բովանդակություն է դնում, քան  
մենք: Ես հաճախ էի փակուղու առաջ կանգնում: Ինձ հար-  
կավոր էր դաժան լինել, բայց, տեսնելով իմ առաջ այդ  
ազնիվ, զարմանքով լի թախծոտ աշքերը, ես հարցնում էի  
ինձ: գուցե, ե՞ս է որ սխալվում եմ: Դա ինչ է, Բնության  
այլասեռում, թե՞ ընդհակառակն, ամենախսկական Բնու-  
թյունն է, որը չի ցանկանում իմանալ մեր նեղ ճշմարտու-  
թյունները... Բայց քանի որ վերջին հաշվով այդ ճշմարտու-  
թյունները դեկավարում են այն աշխարհը, որն արարված  
է մեր բանականությամբ, և քանի որ մենք հարկադրված  
ենք կամա թե ակամա ապրել այդ աշխարհում, Ֆրանցը  
նույնպես պետք է սովորի գոնե դրանք ընդունել, եթե ար-  
դեն չի կարողանում հասկանալ: Դրանք հասկանալ նա չի  
կարող ես այդպես էլ շկարողացա նրան բացատրել, ես  
հրաժարվեցի— նա ի հաճույս իմ ձեւցնելու է, և դա կվեր-  
ջանա նրանով, որ ինքը կդադարի անկեղծ լինելուց: Ավելի  
լավ է մոլորության մեջ ընկնել, քան կեղծավորել: Դա  
ավելի մաքուր է... Բայց իմաստ չունի բռնանալ նրա մտքի  
վրա— սրտով նա կենթարկվի ուզածդ կարգուկանոնին, ինչ-  
քան էլ դա ուզում է նրա համար ծանր լինի, եթե, իհարկե,  
այդ կարգապահությունը թելադրված է սիրո կողմից... Այդ  
հենարանն անհուսալի է: Եթե նա անհետանա, ամեն ինչ  
անմիջապես կփլվի— և հայտնի չէ, թե որ կողմը կխփի  
նրա ալիքը: Երբ ես շինեմ, ի՞նչ է նրան սպասում: Նրան  
պետք է սովորեցնել, որ առանց ինձ յոլա գնա...»

Ժերմենը լոեց և շարունակում էր նայել երկնքի կարծր,  
համարյա բարացած մուգ կապույտին. այդ կապույտը  
թվում էր նույնքան խիտ ու հագեցած, որքան նրա մտքե-  
րը: Իսկ հետո նորից սկսեց խոսել, սկսեց խոսել դառը  
ժպտալով, բայց նույն այն հաստատում, սառը զուսպ տո-  
նով, որ թվում էր ինքն իր հետ է խոսում (նա ոչ մի ան-  
գամ շնայեց Աննետային). կարծես մոռացել էր նրա ներ-  
կայությունը).

— Ես հիանալի գիտեմ. ոչինչ, կսովորի: Առանց ինձ էլ  
կապրի... Թեզ անփոխարինելի ես կարծում... Բայց չէ՞ որ  
չի ծնվել այն մարդը, առանց որի հնարավոր չէ յոլա գնալ:

Երբ նա ինձ կորցնի. Իմտածի, թե ամեն ինչ կորած է: Բայց կորածն արդեն գոյություն չունի: Իսկ կենդանի մարդը գոյություն ունի: Հնարավոր չէ միենույն ժամանակ լինել և լինել: Եվ ընտրությունը շատ արագ եւ կատարում Ապրողը գոհ է, որ նեղող հանգույցը՝ որը նրան կապում է մեռածի հետ, կամաց-կամաց բացվում է: Իսկ հիմ այդ հանգույցը համառում է, ուրեմն դանակով կորածեն— այնպես, թեթևակի, կողքից: Նա, ապրողը, ոչինչ չի տեսել: Մեռածը ընկավ: Իսկ կենդանի մնացածը ապրելու է: Այս ֆրանցը կապրի:

Աննետան ձեռքը դրեց այն մարդու ձեռքի վրա, որը Ժիտեց բոլոր պատրանքները.

— Այնտեղ, որտեղ ապրելու է ֆրանցը, կապրի և ձեր միտքը:

Ժերմենը ազատեց իր ձեռքը.

— Մոռացությունը կգա, եթե նա ուշանում է, նրան ընդառաջ են գնում: Բայց ֆրանցը խորամանկել լգիտի: Նա իրեն այդ նեղությունը չի էլ տա:

Աննետան պատրաստվում էր առարկել: Ժերմենը ասաց.

— Ես այդ գիտեմ:

Բայց Աննետան պարզ տեսնում էր, որ իմանալով հանգերձ, նա չի հավատում: Եվ Աննետայի համար դժվար չէր նրան հակառակն ապացուցել: Հեզնական քմծիծաղով պատասխանելով Աննետայի հավաստիացումներին, Ժերմենը հաճույքով էր դրանք լսում: Պայծառ միտքն ընդհարվում էր պատրանք ստեղծելու ժարավի հետ, պատրանք, որն ապրում է ամեն մարդու մեջ: Այդ ժարավին տեղի տալը (նա այդ գիտակցում էր) պարտություն կլիներ: Բայց նա ուրախ էր պարտության համար: Վերջ ի վերջո ինչպես հնարավոր համարել, որ սպանող ճշմարտությունը ավելի ճշշմարտացի է, քան հույսը:

Ժերմենը զիջում արեց Աննետային.

— Նրա սիրտը չի մոռանա... Գուցե... Ոչ, միանգամից չէ: Ժամանակի ընթացքում: Բայց ո՞վ է ուղղություն տալու այդ սրտին, որին զեկավարող է պետք: Կորստի վշտից նրա մոլորությունն ավելի կուժեղանա, կան մարդիկ, որոնց

վիշտը սովորեցնում է: Բայց կան և այնպիսիները, որոնց այդ վիշտը կործանում է: Նրանք հնագանդորեն տրվում են վշտին կամ փախչում են նրանից ուր պատահի: Ես վախենում եմ Ֆրանցի համար: Ո՞վ է սիրում նրան, ո՞վ կարող է նրան իր խորհուրդներով ուղղություն տալ: Աննետա, մի լքեք նրան, նա ձեզ հավատում է: Նրա զեկավարողը դարձեք, Դուք պետք է ներողամիտ լինեք, Դուք անսպասելի բաների կհանդիպեք, Նրա մեջ այնպիսի գծեր կտեսնեք, որ, թերևս, ձեզ շփոթի մատնի: Բայց չէ որ դա ամեն մարդու մեջ է լինում:

— Դա իմ մեջ էլ կա: Իմ խեղճ բարեկամ, — ասաց Աննետան, — կնոջն այնքան էլ հեշտ չէ շփոթի մատնել: Ես խոսում եմ անկեղծ կնոջ, շատ տառապած կնոջ մասին, ինչպիսին ես եմ:

Ժերմենը անվստահորեն նայեց Աննետային:

— Կինը նույնիսկ եթե հարյուր կյանք էլ ապրի, միւնույն է, ոչինչ չի սովորի:

— Ուրեմն, անուղղելի՞՝ չ:

— Աշխարհի արարման օրից նույնն է, ինչ որ կար:

— Դուք էլ հեռու չեք գնացել քարայրի մարդուց: Ժերմենը քմծիծաղեց:

— Ինչ կա որ: Դուք իրավացի եք: Մենք ձեզանից ավելին շարժենք: Մենք նույն թիսսի ճուտերից ենք: Մեզ ուժեղ ենք համարում մահվան և կյանքի առաջ, բայց մահն էլ, կյանքն էլ միշտ մեզ հանկարծակիի են բերում: Մենք ոչ մի բան չսովորեցինք: Հիմա դա իմ վեցն էլ շէ — շէ որ ես դպրոցից գնում եմ: Բայց դուք, Աննետա, մնում եք, և ձեր ձեռքերին դեռ մի անգամ չէ, որ քանոնով կիսիեն: Զգույշ եղեք: Դեռ մի անգամ չէ, որ կյանքի փորձը, որով դուք այդքան պարծենում եք, ձեզ վրա կծիծաղի... Բայց կույրերի թագավորության մեջ միաշբանին էլ պետք կգա: Ես ձեզ եմ վստահում իմ պատանուն: Նույնիսկ մի աշքով...

— Բայց և այնպես ես երկուսն ունեմ, ընդ որում վատ աշքեր չեն: — Եիծաղելով ասաց Աննետան:

— Այդ աշքերն ստեղծված են, ոչ թե նրա Պամար, որ նայեն, այլ նրա համար, որպեսզի այդ աշքերին նայեն...

Բայց եթե գուք չեք տեսնում այն, ինչ ձեզ է վերաբերում, աշխատեք տեսնել նրա համար: Ուրիշի համար միշտ ավելի հեշտ է խելամիտ լինել: Ղեկավարե՞ք նրան: Նրան սիրեք...

— Միայն թե անշափ շատ մի՛ սիրեք, — ավելացրեց Ժերմենը:

Աննետան ուսերը թոթվեց:

Աննետան ավելի մոտ էր Ժերմենին, քան Ֆրանցին: Ժերմենի հետ նրանք մի խառնվածքի մարդիկ էին: Աննետան նրան ավելի լավ էր հասկանում: Նրանց կենսափորձը աճել էր միենույն հողում. նրանց մտքերը հասունացել էին միենույն երկնքի տակ: Եվ ամեն ինչ թափանցիկության շափ պարզ էր այն զգացմունքներում, որոնք Աննետան նկատել էր Ժերմենի մեջ կամ ինքն էր տածում դեպի նա: Նրա բարեկամությունը, նրա շարսափները, տոկունությունը կործությունների մեջ, դատողությունները կյանքի վերաբերյալ, հանգիստ վերաբերմունքը դեպի տառապանքն ու մահը, հեռացող կյանքի ափսոսանքը, ինքնամփոփությունը — Ժերմենի մեջ ամեն ինչ Աննետային հասկանալի էր. եթե Աննետան տղամարդ լիներ, նա, միենույն ճակատագրի դեպքում կմտածեր, կապրեր, ինչպես Ժերմենը... Համենայն դեպս այդպես նրան թվում էր. չէ որ Ժերմենի մեջ ոչինչ Աննետայի համար անսպասելի չէր: (Բայց կարո՞ղ էր նա արդյոք նույնը ասել իր ժամկին...): Ուրիշ պայմաններում նրանցից ամուսինների իդեալական զույգ կստացվեր, կապված միմյանց հետ փոխադարձ խոր հարգանքով, մտերմությամբ: Վստահությամբ: Նրանք ազնվորեն միմյանց կտային իրենց գոների բոլոր բանալիները, բացառությամբ մի փոքրիկ բանալու, որի մասին չգիտես ինչու չի հիշատակվել: Բայց եթե գտնեն այն մոռացված գուռն ու բացեն, կպարզվի, որ երկուսն օտար են մնացել միմյանց համար... Բարեբախտաբար, համարյա երբեք առիթ չի ներկայանում բացել այդ դուռը: Եվ անկեղծ, լավ բարեկամության ժամանակ փոքրիկ բանալին մնում է լօգտագործված: Ժերմենի և Աննետայի բարեկամությունը ոչ պահանջկու էր, ոչ

Հետաքրքրվող։ Ամեն մեկը մյուսին տալիս էր այն, ինչ  
իրենից սպասում էին։

Բայց ոչ ոք չգիտեր. ինչ կարելի է սպասել ֆրանցից։  
Դա խորթություն էր ստեղծում, Եվ դա ձգում էր։ Ինչքան  
էլ ուզում ես նրան ուսումնասիրիք, միևնույն է շես ճա-  
նաշի։ Նա ինքն էլ իրեն չգիտեր։ Տեսքից նա միանգամայն  
երեխա էր, միանգամայն հասարակ մարդ, — հենց ալղափի-  
սին էլ կար։ Բայց ովք փորձում էր թափանցել նրա հոգու  
մեջ, իսկույն կորցնում էր ճանապարհը և կուրորեն դոփում  
էր անծանոթ տեղում։ Աննետան բոլոր հնարավոր բանա-  
լիներով փորձում էր բացել այդ հոգու դուռը, բայց բանա-  
լիները՝ կողպեքներին հարմար չէին։ Բացառությամբ մեկի.  
այն փոքրիկ բանալու, որից Ժերմենը չէր օգտվում, «հայտ-  
նի չէ ինչի» բանալուց (ինչպես ասում էին մեծ թագավորի  
ժամանակները, երբ աշխատում էին չափից ավելի ուշա-  
դիր չնայել այդ «հայտնի չէ ինչին»)։ Աննետան նույնպես  
ցանկություն չուներ նայելու հոգու խուլ անկյունները։  
Բայց այդ խաղաղ անկյուններից, որոնք կողմնակի աշքը  
չի նկատում, Աննետայի մոտ էր հասնում խորհրդավոր մի  
բուրմունք, հասնում էր մեղվի փեթակի բզզոցը, որը մի-  
այն նա ինքն էր զանազանում, որին ականջ էր դնում, կար-  
պի բերելով իր հոգեոր անտեսությունը։ Եվ այն, որ նա  
լուսում էր թևերի կախարդող ու սպառնացող այդ խշխշոցը,  
նրանց մի տեսակ հանցակից էր դարձնում։ Դա մի առան-  
ձին ազգակցական կապ էր երկու՝ միմյանց օտար մարդ-  
կանց միջև։ (Երբ խոսք է բացվում ցեղի մասին, հեռավոր  
կապերը երբեմն լինում են ավելի ամուր, քան մոտիկները։  
Ճայրի բարակ ճյուղերն ավելի ամուր են լինում, քան  
ներքեի հաստ ճյուղերը, թեև առաջինները բնից ավելի հե-  
ռու են գտնվում)։

Դա Աննետային իշխանություն էր տալիս ֆրանցի  
նկատմամբ, և նրանց միջև կապ ստեղծվեց։ Առանց խոսքե-  
րի։ Այդպես կուըր միջատներն են կիսախավարում իրար  
կպշում իրենց բեղիկներով։ Կա էակների մի ամբողջ ցեղ,  
որն ապրում է այդ ստորգետնյա կյանքով։ Բայց շերեկա-  
յին պարզ լույսի տակ նման էակների ունակությունները

Թուլանում են: Նորից այդ սևակությունները կիրառելու առիթ գտնելով, նրանք բավականություն են դդում, առաջըց ցանկություն ունենալու այդ մասին բացատրություններ տալ: Նման էակները երախտապարտ են նրանց, ովքեր իրենց հնարավորություն են տալիս դրսերելու այդ ունակությունները:

Ցերեկային լույսի տակ զրուցելով հազարավոր բաների մասին և համարյա միշտ ճիշտ չհասկանալով միշտանց, Սննետան ու Ֆրանցը ականջ էին դնում հովտում աղմկող ջրի ձայնին: Եվ մեկը մյուսի հետ շփվում էր հոգու: Թագնը-ված եղբերով:

Քայքայումը գնալով արագանում էր: Թվում էր շենքի ձակատը փուլ է գալիս: Դա միայն կույրը կարող էր չնկատել: Ոչ մի կարմրաներկով հնարավոր չէր թարմացնել այդ հալված գեմքը: Եվ ժերմենն այդ ներկից հրաժարվեց: Ֆրանցն աշխատում էր նրան շնայել...

Նա ներս էր մտնում... Նրա հետ ներս էր մտնում կյանքի և գաշտերի շունչը: Ֆրանցը բերում էր ձնծաղիկներ, կավիճով ու ածուխով արած իր վերջին սրվանկարները, սառու օդ: որով ներծծվում էր նրա հագուստը, և առողջ ձեռքեր, որոնք փախչում էին մեռնողի տենդային ձեռքերի խոնավ հպումից Նա աշխուժորեն շաղակրատում էր: և երիտասարդ կյանքի այդ հոսանքը զալվանացնում էր ժերմենին: Երկու բարեկամներն էին իրենց զրուցներում հիվանդությանը չէին զինցում: Ֆրանցը բավարարվում էր երկու երեք շտապողական հարցերով, որոնցից ժերմենը շոր և անտարբեր խույս էր տալիս, նրանք զրուցում էին արվեստի և հավիտենական, վերացական հարցերի մասին— խոսում էին այն բանի մասին, ինչը երբեք գոյեւթյուն չէր ունեցել... (Աննետան լուսն էր, լսում, զարձնում գաղափարներով բռնված տղամարդկանց խելագարության վրա): Եվ կամ էլ Ֆրանցը, որը երկուսի շափ խոսելով, պատճում էր գերության մեջ եղած իր կյանքի մասին: համբարում անցկացրած տարիների, դառնությունների մասին, որոնք տարածության վրա սիրելի են դարձել, այսօրվա հանդիպումների, սեփական ծրագրերի մասին և այն մասին, թե նա ինչ է նա-

խածեռնելու, երբ պատերազմը վերջանա (այդ ընթացքում էլ ով կվերջանա...): Ֆրանցի ցրված հայացքը սահելով Ժերմենի դեմքի վրայով, փախչում էր նրա ներս ընկած, հիվանդության կողմից կրծված թշերից, որոնք կարծես կըպ-թըրած լինեին այտոսկրների ելուստներին... Նա, այդ վեճե-րուտ հայացքը, փախչում էր, անհարմար փութկոտությամբ փնտրելով մի ուրիշ կետ, որտեղ կանգ առնելը հաճելի կլի-ներ... Իսկ Ժերմենը ստրուկի պես ժպտում էր և Ֆրանցին օգնում վերադառնալ ապրողների երկիրը: Նա գրեթե միշտ առաջինն էր ասում.

— Խոսեցինք ինչքան պետք էր — և բավական է: Հիմա, Աննետա, երեխային զբոսանքի տարեք: Չի կարելի այս-պիսի հիանալի օրը ձեռքից բաց թողնել...

Եվ, երբ Աննետան մոտենում էր, որ հրաժեշտ տա, ավե-լացնում էր.

— Երեկոյան մի րոպեով ինձ մոտ անցեք մենակ: Դուք ինձ պետք եք...

Աննետան դուրս էր գնում Ֆրանցի հետ: Ֆրանցը շտա-պում էր նկատել.

— Նա այսօր շատ ավելի լավ է, ճիշտ չէ...

Ֆրանցը պատասխանի շէր սպասում: Նա առաջ էր գնում մեծ-մեծ քայլերով, կուրծքը դուրս գցած, մազերը ծածանվում էին: Թոքերի ամբողջ ուժով նա ներս էր քա-շում մաքուր, նեխումից շթունավորված օդը: Աննետայի ուժեղ ոտքերը, նույնպես իր կամքից անկախ, ուրախանում էին շարժման համար. թվում էր առողջ կենդանին իրեն փոխ-հատուցում և մարմնի ընկճվածության համար. մարմին, որը հիվանդության մթնոլորտում թմրել էր հիվանդի սնարի մոտ, թայց Ֆրանցը համարյա միշտ առջեռում էր, նա ինչ-որ մանկական խելահեղության մեջ էր ընկնում, վազում էր և, բռնելով եղանիների ձյունից խավապատված ճյուղերը, բարձրանում էր գահավանդակների վրա: Երբեմն նրանք իրենց հետ գահակներ էին վերցնում և այդ թեերը ոտքե-րին ալանում էին ճերմակ դաշտերով: Երբ թարմ օդից հար-բռնէ էին, եթք արյան հոսանքը լվանում-տանում էր մըտ-քերի բոլոր հետքերը, նրանք նստում էին ժայռի ելուստին,

արեկի տակ. և հայացքով ընդգրկում էին հովիտը: Ֆրանցը, ծիծաղելով, Աննետային թվարկում էր բոլոր նոտաներն ու ակրդները, որոնք կազմում էին արեկի մայրը Ժտնելու ժամանակ երկնքում տարածվող սիրամարգի պոչի ներդաշնակությունը: Ոչ մի բոպե լուսով, Ֆրանցը խոշոր շտրիխներով նկարում էր, ամբողջ էջեր ծածկում գծերով, ուրվանկարներով, ծառերի և զագաթների կոնտուրներով, որոնք նման էին սուր քթերով և ամուր սեղմած շրթունքներով պառկած մարդկանց գեմքերի, — նկարում էր առանց որևէ բանի մասին մտածելու և անընդհատ շաղակրատելով: Եվ Աննետան նայում էր, թե ինչպես են խոսում նրա մատները, լսում էր նրա լեզվից թուած հիմարությունները: Աննետան պատասխանում էր առանց մտածելու: Եվ լուր մտածում հուսահատության մեջ ընկածի մասին, որին լքել էին... շանկարծ Աննետայի հայացքը գամզեց Ֆրանցի մատներին: այդ մատները մեքենայաբար գլուխ էին նկարում, որին Աննետան ճանաչեց — մեռյալի գլուխ... Աննետան լուր էր: Ֆրանցը դնդնում էր: Արեգ ծածկվեց ամպով: Եվ լուրթյունը կարծես սև անցք լիներ սպիտակ գործվածքի վրա: Ֆրանցը սսկվեց, նայեց մատներին, նրա շունչը կտըրվեց, կարծես գալարապուլտ վեր բարձրացող օձ տեսած լիներ... Նրա ձեռքերը սեղմվեցին, թափով պոկեցին թերթը և, ճմրթեցին այն: Ալբոմը, որը նա շպրտեց, գլորվեց ցած: Ֆրանցը ընդուն տեղից վեր կացավ — և նորից ձյունածածկ դաշտերով սկսեց կատաղի թոփքը: Նրա հետևից, առանց որևէ խոսք ասելու, սլացավ Աննետան...

Երեկոյան ընթրիքից հետո, երբ Աննետան էկավ, ինչպես խոստացել էր, Ժերմենի մոտ՝ վերջինս նրան շատ սառն ընդունեց: Ժերմենը տանջալից օր էր ապրել: Նա իր մեջ ոխ էր պահել նրանց նկատմամբ, ովքեր հաճույք էին ստացել այդ օրը: Ժերմենը կշտամբեց Աննետային ուշացման համար և մոռայլ հարցրեց, թե նրանք լավ ուրախացա՞ն արդյոք: Նշեց, որ Աննետան հիանալի տեսք ունի, որ նրա այտերին կարմրություն է խաղում, — ըստ երեսույթին մաշկի

տակ առողջ արյուն է; Թվում էր, թե Ժերմենն Աննետային դատապարտում է գրա համար:

Աննետան ոչինչ շպատասխանեց: Նա հասկանո՞ւմ էր — Բարեկամս, ներեցեք ինձ, — հնազանդորեն ներողություն խնդրեց Աննետան:

Ժերմենն ամաշեց: Նա Աննետային հարցրեց, բայց արդեն հանգիստ, թե ինչ նորություն կա: Աննետան նրան սկսեց նորություններ պատմել: Իսկ նորություններն ուրախ չեն: Պատերազմը շորս տարվա ընթացքում ոչ միայն չէր ուժասպառվել, այլ ուժեր էր հավաքել: Ֆրանսիայի վրա կախվել էր գարնանն սպասվող կործանարար հարձակման վտանգը: Նրանք խոսում էին ողբերգական ապագայի մասին: Ժերմենն իր հոգեվարքը տարածում էր ամբողջ աշխարհի վրա: Նրան թվում էր, թե մարդկության էվոլյուցիան ընդամենը եղել է ժամանակավոր հաջողություն, հզոր ցընցման և հանգամանքների բացառիկ զուգադիպության հետեւանք, հանկարծական «Վարիացիա», հանճարեղ ու խելահեղ (հասկացություններ, որ համարյա համարժեք են), և որ այդ էվոլյուցիան հաստատուն չէ: Հանճարի բոլոր հաջողությունները, մարդու բոլոր նվաճումները — նրա Պյուռոսյան հաղթանակների լոկ արյունոտ դափնիներն են: Իսկ այժմ այդ հերոսապատումը մոտենում է իր ավարտին: Վեր ելնող կորագիծը ընդհատվում է, և Տիտանը թվալգլոր գնում է դեպի անդունդ, իրեն գերազանցելու ճիգերից ուժասպառված: Միանգամայն ինչպես Ռոլֆը, Մաննհայմի շունը, որը սովորեց մարդու նման մտածել, և երկու տարի հետո, արյուն միզելով, կրկին գահավիթեց խավարի անձեւ անդունդը: Զէ որ միայն մարդը չէ, որ ճամփա է ընկնում հանուն հիանալի արկածների: Ամբողջ բնությունն է այդպիսի փորձեր արել: Ամենուրեք սկսում էր կենդանի էակի հսկայաքայլ վերելքը, կենդանի էակի, որը ձգտում էր դուրս պըրծնել փոսից, որտեղ նրան հսկում են մութ ուժերը: Այդ էակը ամբողջովին հուսահատ սողում է դեպի վեր, արյան հետք թողնելով պատի ամեն մի ելուստի վրա: Բայց վաղ թէ ուշ վրա կհասնի այն ակնթարթը, երբ նա ուժասպառվելով, կգլորվի դեպի ցած, դեպի մղձավանշի գիրկը —

« ապակյա աշքերով հրեշի գիրկը... Մղջավանջը երկու շեմերին է, այնտեղ որտեղ քունն սկսվում է, այնտեղ, որտեղ այն վերջանում է... »

— Ո՞վ գիտե, — ասում էր Աննետան: — Գուցե, երբ մենք գահավիժում ենք անդունդը, կյանքի աղմկոտ քունը շին վերջանում:

— Իսկ նա դեռ չի՞ ձանձրացրել ձեզ:

— Գիշերը երկար է և նորից քնում եմ: Ես սպասում եմ օրվա բացվելուն:

— Իսկ եթե օրը շբացվի՞:

— Ես միևնույն է այդ մասին եմ երազելու:

Ժերմենը վիճելու համար շափաղանց հեռու էր ամեն տեսակի հավատից: Եվ նա ավելի էր ամրանում իր անհավատության և՝ ֆատալիզմի մեջ, դիտելով ամբողջ աշխարհում տեղի ունեցածը սեփական քայլքայման լույսի տակ: Նա ոչինչ չէր ժխտում, նա ոչ «դեմ» էր, ոչ «թեր»: Խելագարության բոլոր տեսակները, որոնք ոգեշնչել են մարդկային մասսաներին, կրոնը, հայրենիքը բոլոր մարդուրը, որտեղ մարդիկ ոչնչացնում են իրենք իրենց — այդ ամենում լսվում է ճակատագրի համաշափ քայլքը: Ամեն մի Գոյ ավարտվում է սեփական ոչնչացմամբ: Եվ մարդկային ճիգերի նպատակը Ոչինչ է:

Աննետան ասաց նրան:

— Բարեկամս, մի՛ նայեք այս ծփանքին, այս գլխապտույտ հորձանուտին, ժողովուրդների ողկույզներին: որոնք կառում են ելուստներից, բարձրանում են լեռան վրա և ցած են ընկնում: Նայեք ձեր մեջ: «Ես»-ը մի ամբողջ աշխարհ է ի հմ «Ես»-ում ես լսում իմ հավիտենական «այս»-ն:

— Իմ «Ես»-ը, — ասաց Ժերմենը, — դադաղ է: Ես նրա մէջ որդեր եմ տեսնում:

— Դուք թույլ եք տալիս, որ ձեր միջից կյանքը ծորացիսարհի մեջ: Վերադարձեք այդ կյանքը աշխարհից ձեր մեջ: Զեռքերով հավաքեք այն ձեր կրծքի վրա:

— Շուտով ես «հավաքելու եմ» իմ վերմակը...

— Բայց դուք ոչ միայն այստեղ եք, այս անկողնու

մեջ։ Դեւք ամեն տեղ եք, այն ամենի մեջ եք, ինչն ապրաւք է։ Այս պարզկա գիշերը, որն իր սև թևով հազարավոր քնած էակներ է ծածկում, — չէ որ այդ գիշերը նաև ձեր մեջ է, նա ձեզ է պատկանում։ Ձեր աղքատության մեջ դուք տիրապետում եք այն մարդկանց հարստությանը, ում սիրում եք, դուք տիրապետում եք ֆրանցի երիտասարդությանը, նրա ապագային։ Իսկ ես — ես ոչինչ չունեմ, եվ ես ամեն ինչ ունեմ։

— Դուք ունեք ձեր հրաշալի արյունը, նա ձեզ տաքացնում է։

— ԱՇԽ, եթե ես կարողանայի այդ արյունը ձեզ տալ։

Աննետան այդ ասաց այնքան կրքոտ, որ նրա ամբողջ մարմնում, ինչպես մինչև եզրերը լցված բաժակ, փոթորկվեց այդ արյունը, որի մասին այդպիսի նախանձով խոսում էր մեռնողը։ Աստված իմ, ինչպես Աննետան կուզեր Ժերմենի մեջ լցնել այդ արյունը...

Ժերմենին դա հուզեց։ Նա ուզում էր պատասխանել, բայց շնչահեղձության նոպան խանգարեց նրան։ Ժերմենը քիչ մնաց մեռնի։ Աննետան ամբողջ գիշերը մնաց նրա կողքին։ Նա բարձի վրա պահում էր Ժերմենի գլուխը։ Աննետայի ներկայությունը Ժերմենին ուժ տվեց՝ տառապանքներին դիմանալու համար։ Չէ որ Ժերմենը Աննետայից ոչ թաքնելու բան ուներ և ոչ էլ նրա առաջ հայտնագործելու որևէ բան։ Անօգուտ էր Աննետային ցույց տալ իր տառապանքները։ Աննետան դա զգում էր իր մատների տակ։ Փոքր-ինչ շունչ առնելու ժամանակ ցնցող քմծիծաղը շարժեց Ժերմենի շուրջերը։ Նա ասաց.

— Այնուամենայնիվ մեռնելը ծանր բան է։

Աննետան սրբեց նրա ճակատի քրտինքը։

— Այո, հարազատու, Բարեբախտաբար ես էլ եմ մեռնելու թե չէ մարդու համար դժվար կլիներ իրեն ներել ապրելը։ Երբ ուրիշները մեռնում են։

Եկոավոտյան նա Աննետային ասաց, որ գնաւ Այդ ժամերի ընթացքում, երբ Ժերմենը չէր կարողանում խոսել, նա հնարավորություն ուներ մտածելու Աննետայի մասին, նրա բարության մասին, այն մասին, որ Աննետան իրեն

Ավիրաբերել էր ամբողջովին, առանց մնացորդի, այն մտախն, թե ինքը՝ Ժերմենը, ինչպես էր շարաշահում այդի Ժերմենը Աննետայից խնդրում էր ներել իրեն.

Աննետան ասաց.

— Դուք չեք կարող պատկերացնել, թե ինչքան է հաւելի, երբ բարեկամը շարաշահում է մեզ... Իսկ երբ սիրելիները հրաժարվում են մեր օգնությունից— դա մեզ սպանում է...

Աննետան նկատի ուներ որդուն: Բայց մինչև այդ նառ մի անգամ Ժերմենի հետ այդ մասին չէր խոսել: Ժերմենը նույնպես ոչ մի անգամ նրա նկատմամբ հետաքըրքրություն չէր ցուցաբերել: Միայն վերջին օրերն էին, որ նա, կամաց-կամաց ազատվելով իր ցավերից ու դրանց հետ միասին նաև կյանքից, վերջապես ցանկություն ունեցավ իմանալ այն ցավը, որն իր մեջ կրում էր նրա ընկերութին:

Հիմա Աննետան գրեթե ամեն գիշեր նրա հիվանդապահուհին էր: Եկավ նրա քույրը, որին հեռագրով կանչեցին, բայց Ժերմենը ոչ ոքի տեսնել չէր ուզում, բացի Աննետայից: Նա նորից շարաշահում էր Աննետային, բայց իր հանգստության համար, կրկնում էր իրեն, որ դա երկար չի տես: Եվ մանավանդ, որ Աննետան երջանիկ էր դրանով... Այո, մեծահոգի սիրտը— Ժերմենն այդ գիտեր-ստեղծված է ուրիշի բեռը տանելու համար, և Ժերմենը տագնապալից զգացումով մտածում էր այն տառապանքների մասին, որոնց Աննետան ընդառաջ է գնում:

Ժերմենն սկսեց ավելի ու ավելի քիչ խոսել իր մասին: Սանավանդ որ խոսելն առանց այն էլ դժվար էր իր համար: Նա Աննետային չէր ստիպում խոսել: Ժերմենն ուզում էր իմանալ նրա թաքցրած կյանքը: Եվ այժմ, երբ Ժերմենը քեռնում էր, Աննետան արդեն այդ կյանքը չէր թաքցնում նրանից: Աննետան նրան ամեն ինչ պատմեց առանց գունազարդումների, շանալով շմատնել իր հուզմունքը: Կարծես դա պատմություն լիներ մի ուրիշ կնոջ մասին: Ժերմենը մինչեւ չերջը լսեց նրան, առանց որևէ խոսք ասելու Աննետան նրան չէր նայում, ժերմենը հայում էր Աննետա-

յի շրթունքներին և գրանցով կարդում այն, ինչ նա չէր ասել; Եվ այդ շասածը հասկանում էր շատ ավելի լավ, քան ինքն Աննետան: Այդ կյանքը լցնում էր ժերմենին այն շափով, ինչ շափով գատարկվում էր նրա սեփականը: Եվ վերջ ի վերջո լցրեց... Այնպես լցրեց, որ, մեռնելիս, ժերմենը սիրեց նրան առաջին անգամ: Սիրեց ամբողջությամբ և հոգու նվիրական խորքում ամուսնացավ նրա հետ: Աննետան այդ շիմացավ... Աննետան ժերմենի նկատմամբ միայն քրոջ զգացմունքներ ուներ, և սերը իր թեով չըպեց նրան: Մահը մարդու մեջ բուռն կարեկցանք է առաջացնում: Բայց սերը բնազդորեն երես է գաբձնում մահից: Ժերմենն այդ գիտեր և ոչինչ չէր պահանջում... Նա հաղթահարեց իրեն:

Ժերմենի զգացմունքներում տեղի ունեցած այդ փոփոխությունը գեպի այն անձնավորությունը, որը, ինքն իսկ շիմանալով, դարձավ նրա կինը, արտահայտվեց միայն նրանով, որ ժերմենը իրեն իրավունք վերապահեց առաջին և վերջին անգամ խորհուրդ տալ Աննետային: Որը չգիտեր ինչպես կազմակերպել իր ընտանեկան կյանքը, ինչպես վարվել որդու հետ: Ժերմենը իր տղամարդկային հոտառությամբ Մարկին շատ ավելի լավ հասկացավ, քան Աննետան, թեև երբեք Մարկին չէր տեսել: Նա իր համար պարզ մոր և որդու միջև ստեղծված թյուրիմացության պատճառը: Ժերմենն արդեն ժամանակ չուներ, որպեսզի նրանց օգներ՝ այդ թյուրիմացությունը հաղթահարելու համար, բայց նա շատ մեծ ճիգեր գործադրեց, որպեսզի նրանց երկուսին էլ ճիշտ հանապարհի վրա կանգնեցնի: Ժերմենն ասաց:

— Աննետա, շատ լավ է, որ ես գնում եմ: Օս իմ հոգեկան խառնվածքով պատկանում էի այն ժարդկանց տեսակին, որոնք տեղ չեն ունենալու կյանքի ապագա հասարակարգում: Այն մարդկանց տեսակին, որոնք կորցրել են բոլոր պատրանքները, անկախ նրանից գրանք ապագային են վերաբերում թե անցյալին: Ես ամեն ինչ հասկացաւ: Նույնի լիմ հավատում: Ինձ շափականց շատ էր ոքրված հասկանալու կարողություն— բայց ի՞նչ մեջ սպանել:

գործելու ունակությունը։ Իսկ գործել անհրաժեշտ չտ է, մասնից  
կացեք Զեր ունեցած սրտի բնազդը ավելի հուսալի է,  
քան իմ հավիտենական «թերերն» ու «դեմերը»։ Բայց  
բնազդը դեռ ամեն ինչ չէ, Զեզ համար սահմաններ են զրո-  
ված։ Դուք կին եք, Բայց դուք ստեղծել եք տղամարդու։  
Դուք սրդի ունեք Նա դեմ է առել այդ սահմաններին, ինչ-  
պես ծնվելու ժամանակ դեմ էր առնում ձեր արգանդի պա-  
տուերին, նրանից դուրս գալու լիք վնտշելով։ Դեռ շատ ան-  
դամ նա ձեզ վերք կհասցնի։ Երգեք, ինչպես Ժաննա  
կ'Ալբրեն<sup>1</sup>, նրա ազատության հիմնը։ Փառաբանեք այն  
խոսուշը՝ որի միջով նա դուրս կգա ձեր միջից։ Ինձանից  
հաղորդեք նրան, որ ինձ նման ամեն ինչ հասկանալ, ձեզ  
նման ամեն ինչ սիրել բավական չէ... Թող նա ընտրու-  
թյուն կատարի... Լավ բան է արդարացն լինելու Բայց իս-  
կական արդարությունը նրանում չէ, որ նստեն կշեռքի առաջ  
և հետեւն, թե ինչպես են տատանվում կշեռքի նժարները։  
Պետք է դատել և դատավճիռը ի կատար ածել։ Համար-  
ձակ... Բավական է տրվել երազանքներին։ Թող դա՛ արթ-  
նացման ժամը... Մնա՞ս բարյավ, Քուն...

Արդեն գմվար էր հասկանալ, նա ինքն իր հիմ է խոսութ-  
թե՞ Աննետայի։

Վերջին անգամ երկար նայելով Աննետային, Ժերմանը  
մեջքով դարձավ դեպի լույսը— բաժանվեց ապրողներից—  
և խորասուզվելով լուսից մեջ, հայացքը ուեռեց պա-  
տին։ Նա այլևս բերանը շրացեց մինչև վերջին շունչը փշե-  
լը, երբ ժարմինը դադարեց արդեն ջղածիկ կծկումներից։

Աննետան ժամանակ շուներ մտածելու սեփական տա-  
ռապանքների մասին։ Ֆրանցի վիշտը ամբողջովին համա-  
կել էր նրան։ Այդ վիշտը անսահման էր։ Հարկավոր էր  
կայ տրվել այդ վշտին, կամ փախչել նրանից, եկ Աննե-  
տան տրվեց։

Այդ վշտի անգուստ դրսեռումը առաջին ժամերին ճըն-  
չում էր ներկա գտնվողներին։ Ֆրանցը իրեն չէր կարողանում

<sup>1</sup> Հանես Ք'Ալբրե— Կավաբրայի թագուհին։ Հենրիկ IV-ի ժամանք  
(1528—1572)։

տիրապետել, ինչպես դա վայել կլիներ բարեկիրթ մարք գուն, որը կրիլ է այդ կորուստը: Դա երեխայի կամ սիրեցյալի հուսահատություն էր: Նա շեր ուզում հեռանալ իր բարեկամի գիտակից: Նրա սերը, նրա վիշտը արտահայտվում էին բարձրածայն: Ժերմենի ընտանիքը դրանից զայրացած էր: Այդ շափաղանցություններին վերջ տալու համար և, որ զլխավորն է, որպեսզի սնունդ լտրվի շարախոսություններին, այետք է Ֆրանցին այցտեղից տանել: Եվ դա հանձնարեցին Աննետային: Դիակը վագոն դնելուց առաջ՝ ժերմենին հայրենիքում թաղելու համար, նրան փոխադրեցին տեղական փոքրիկ եկեղեցին և հենց այդտեղ էլ կատարեցին հուղարկավորության արարողությունը:

Հավանները մեկնեցին— և կենդանի մնացածները և հանգուցյալը՝ նրանցից ամենակենդանին, նրանց տոհմի հանգած լուսատուն: Ակամայից մարդ հիշեց հին ժամանակները, երբ հուղարկավորելիս գիտառքի և զինանշանների հետեւից շրջված ջահ էին տանում: Աննետային հրաժեշտ տվին կարճ ու ծանրաբարու Տիկին դը Սեյժի-Շավաննը, ժերմենի բույրը, իրեն ստիպեց Աննետային սրտագին շնորհակալություն հայտնել նրա վեհանձն հոգատարությունների համար: Ճնշելով իր մեջ թաքցրած անբարյացակամությունը, նա շանքեր գործադրեց և նույնիսկ համբուրեց Աննետային: Դրանով, թվում էր նրան, ինքը լրիվ վճարեց իր պարտքը: Միայն տիկին դը Շավանն-մայրն էր, որ արցունքներով ողողեց Աննետայի այտերը և կոչեց նրան: ԱԱզիկս...— բայց թաքուն: Նա կարող էր Աննետային սիրել: Ինչքան էլ խորթ, ինչքան էլ վայրի թվային նրան Աննետայի մտքերը, նա կարող էր ընտելանալ դրանց Ուրիշի մտքերի նկատմամբ նա անտարբեր էր, եթե Ժիայի գրանք կրոնին շէին վերաբերում: Բայց տիկին դը Շավաննը թույլ էր... Հանգստությունը նրա համար առաջին հերթին էր: Ոչ մի այնպիսի բան չպետք է առել: Որչ կարող է երկպառակտել ընտանիքը... Նրանք միմյանց ասացին: Քանություննաւ Բայց և նա, և Աննետան գիտեին, որ այդ տեսությունը չէ պինելու:

Քանի դեռ շարունակվում էր հուղարկավորության արարողությունը և դիակը տանում էին կայարան, Աննետան Ֆրանցի հետ էր: Աննետան մտովի հետեւում էր թափորին, քայլում էր սաղցակալած ճանապարհով, տեսնում էր նրա եզրերի գնարբուները, որոնք ծաղկել էին փետրվարյան մթին երկնքի տակ: Լուսությունը խախտում էր շատ հեռու, շատ դանդաղ, տարածությունից խլացած թաղման երաժշտությունը: Եվ Աննետան աշխատում էր զբաղեցնել Ֆրանցին, որպեսզի նա այդ ձայնը չլսի: Նրա ուշադրությունը խոսակցությամբ շեղելով, Աննետան հանկարծ լունց շարժվող գնացքի սուլոցը... Սիրտը ծակեց... Ժերմենը ճանապարհ ընկավ... Եվ Աննետային թվաց, թե իր մեռած բարեկամը մեռավ երկրորդ անգամ:

Նա ստիպված էր հոգալ կենդանի մնացածի մասին: Նա, այն մյուսը, արդեն մեր կարիքը չի դգում: Մինչև Հիմա Աննետան իր կարեկցանքի ամբողջ ուժը նրան էր դարձնում: Հիմա նրան կարեկցելու կարիքն արդեն չկա: Եվ կարեկցությունը հոսում է դեպի կենդանի մնացածը: Չէ որ նընչեցյալը Ֆրանցին իրեն էր վստահել.

«Ես նրան կտակում եմ քեզ: Փոխարինիր ինձ: Նա քոնն է»:

Ֆրանցին կարելի էր կարեկցել ինչքան ուզես: Նա նման չէր Ժերմենին, որն ամբողջովին կծկվում էր, երբ իրեն խղճում էին, մերժում էր կարեկցանքը: Ֆրանցն ինքն էր կարեկցություն պահանջում: Նա ամենենին չէր ամաշում իր թուլությունը ցույց տալուց: Աննետան ըրահամար նրան շնորհակալ էր: Ֆրանցին բնական էր թըզում, որ ինքը օգնությունը ցույց է տալիս: Դա մի ուրախություն էր: Որից Աննետան ետ էր վարժվել: Նրա որդին ուժերմենը ժլատորեն էին բաց թողնում նրան այդ ուրախությունը... Չէ որ նրանք այն հպարտներից են, որոնք սեղմում են իրենց ատամները, միայն թե շմատնեն իրենց զգացմունքները, ամաշում են իրենց սրտից, թաքցնում են, ինչպես խայտառակություն, քնքշության այն ծարավը, որը նրանք մոր կաթի հետ իրենց ներսն են քաշել... Ֆրանցը

չեր թաքցնում այդ ծարավը, նա միաժառական պահանջում էր իր կումը, որպես ինչ-որ պարտագիր մի բան։ Նա նման էր նորածին մանուկի, որը կույրի նման շրթունքներով ու թաթիկներով խթկում է մոր կուրծքը...

«Թող այդպես լինի, մանկիկս, Խմի՛ր ինձ, Ահա ես իմ պտուկը քո բերանն եմ գնում»...

Բայց այդ կնայալը, որը Տայրական կաթի համը շղիտեր (նա մորից զրկվել էր ծնվելուց անմիջապես հետո), չեր մտածում այն կնոչ մասին որի կուրծքն ինքը ծծում էր։ Նա սիրում էր միայն կուրծքը և իրում էր ոչ թե կնոցը— նա սիրում էր միայն կուրծքը։ Նրան հարկավոր էր մեղմացնել իր հուսահատ ծարավը։

Աննետան դա զիտեր, նա Ֆրանցի համար ընդամենը նրա վշտի գայակն էր— ոչ ավելին։ Աննետան օրոր էր ասում և քննչնում այդ վշտին։ Եվ նա Ֆրանցին սիրում էր միայն մայրական սիրով, որն օրբատօրե ուժեղանում էր այն շափով, ինչ շափով աճում էր Ֆրանցի սպահանջը նրա նկատմամբ։ Ասենք, մայրական սերը ընդգրկում է սիրո բոլոր տիսակները։ Թող որ Աննետան դրանց բոլորի անունները չդիտի, բայց չկա այդ տեսակներից մեկնումեկը, որին Աննետան թարուն չշերմացներ։

Ֆրանցը Աննետայից սշինչ չէր թաքցնում։ Աննետայի առաջ նրա սիրութ լրիվ բաց էր։ Մոռանալով ամեն մի տմոթ։ Ֆրանցը բնական էր համարում, որ Աննետան ամբողջովին իր վրու վերդնի նրա անձի հոգսը, նրա վիշտը, նրա կորուստը, տագնապը, ինչպեսն նրա մարմնի, առողջության սննդի կացարանի, զգեստի հոգսերը։ Կերակրող և գայակ, մտերմունի և ծառա, — բոլոր գործերի մեջ ճարտար վարպետունի, — ուրիշ ոշինչ Աննետայից Ֆրանցին պետք չէր, և նա Ֆրանցի համար հենց այդպիսին էլ կար։ Թկում էր, թե Ֆրանցը Աննետայից հոգատարություն և ծառայություն է պատառ։ որոնք Աննետան պարտավոր է ցուց տալ նրան ըստ իր ծառայության պարտքի։ Աննետան, ինչպես և Ֆրանցը, դա բնական էր համարում։ Ֆրանցը նրան իր լնորհակալությունը հայտնում էր անփութուն, միայն բաղաքավարության կոմար։ Եվ իլլ չուտ կն-

նետան ինքն էր լուս կերպով Ֆրանցին շնորհակալություն հայտնում, որ նա զգացել է իր կարիքը:

Ֆրանցի էգոիզմը հիացմունք էր պատճառում Աննետացին: Էգոիզմը երբեմն լինեւմ է սքանչելի, և կանանց դա է կինը փայփայում այն մարդուն, ով նրան սիրում է իր համար, չի կարելի նրան շնորհապարտ լինել: Բայց ինչպես է կինը փայփայում այն մարդուն, ով նրան սիրում է իր հաճույքի համար: Այդ մարդը մտածում է Ֆիայն իր մասին. ինքը շտրվելով, նա ձեզ վերցնում և կու է տալիս— դուք քրա ճաշակով էիք...

«Ինչքա՞ն բարի է նա»,— ասում է ոստրեն:

Ֆրանցը շատ սիրալիր լափում էր Աննետային,— և ընդուում կատարյալ միամիտ հոգով: Նա սիրալիր էր, քնքուշ, հմայիչ: Ֆրանցը թույլ էր տալիս, որ իրեն խղճան ու խնամեն: Նա բարեհաճում էր արտահայտել իր ցանկությունները, որոնք Աննետան շտապում էր կատարել եթե միայն զլիի չէր ընկել ու կատարել ավելի շուտ: Աննետան սանդուղջով իջնում ու բարձրանում էր օրական մի տասն անգամ, որպեսզի Ֆրանցի համար նարինջ, լրագիր, որևէ պետք եկած բան գնի կամ կայարան հասցնի ինչ-որ շտապ նամակ: Եթե Աննետան կարճ բացակայությունից հետո վերադառնալով տեսնում էր, որ Ֆրանցը համբերությունը կորցրել է և կշտամբում է իրեն ուշացման համար, դա իր համար ամենաշուայլ պարզեն էր համարում: Եթե Ֆրանցը մթնշաղին պատշգամբում նստում էր Աննետայի կողքին տիսուր, ընկճված, և այնպես էր սեղմվում նրան, որ կարծես ուզում էր ոտքերի մոտ տաքանալ, և հանկարծ սկսում էր լաց լինել, Աննետան, գործը մի կողմ թողնելով, հասուն երեխայի գլուխը դնում էր իր ուսին... իսկ մի կուշտ լաց լինելուց հետո (ինչքան լավ է, որ այդ մարդը, առանց ամաշելու, թույլ է տալիս իր արցունքները սրբեն) Ֆրանցն սկսում էր խոսել: Նա սիրտը թեթևացնում էր, պատմում էր Աննետային իր գաղտնի տառապանքները: սկսած մանկության տարիներից— դրանց մասին նա չէր համարձակվել բոլորը պատմել նույնիսկ ժերմենին— և վերջացրած այն վերքով, որից գիշեր ու ցերեկ արյուն էր ծորում.

Հիմա նա իրեն մեղադրում էր այն բանի համար, որ ինքը քիչ էր լինում իր բարեկամի հետ նրա հիվանդության ժամանակ, որ բավականաշափ չէր սիրում նրան և չէր կարողանում դա թաքցնել... Աննետան այնքան ուշադիր էր լուսում... Ֆրանցն իրեն թեթևացած էր զգում, երբ կանացի քնքուշ այտը հպիում էր իր գլխին, թեթևացած էր զգում Աննետայի ձայնի փաղաքող հնչյուններից, կարեկցանքի քաղցրանուշ խոսքերից, որոնցով Աննետան զգուշութեն ցողում էր Ֆրանցի տրտունջները: Եվ Ֆրանցն այնպիսի խոստովանություններ էր անում, որոնք երբեք դեռ չէր համարձակվել բարձրածայն արտահայտել: Աննետան չէր զարմանում: Նա ընդունում էր առանց վրդովունքի, կարծես ինքն այդ բոլորն արդեն ապրել էր, Ֆրանցի ոշնչով շգունագարդված այդ պատմությունը՝ իր հոգեկան կյանքի մասին, նրա բոլոր խոստովանությունները, որոնք երբեմն անպարկելու էին, մեղանշումները բարոյականության դեմ, որոնք Աննետային գուցե վանեին, եթե նա դրանց մասին գրքերում կարդար: Աննետան Ֆրանցին լսում էր, ինչպես խոստովանանքի ժամանակ, որի զաղտնիքը սուրբ է: Նա, ով լսում է, մաքրված է աստվածային սիրով— գլառատությամբ. ոչ ապականել, ոչ զայրացնել նրան այդ խոստովանությունները չեն կարող: Նա մասնակցում է մարդկային բնագործության թուլություններին: Թուլությունն այն մարդու, ով խոստովանում է,— նրա թուլությունն է: Կարեկցելով նրան, լոռզը մեղքը վերցնում է իր վրա: Եվ այժմ, լվանալով նրա ոտքերը իր ձեռքերով, լսողը սիրում է նրան ավելի ուժեղ:

Առաջին երկու շաբաթից հետո, երբ Ֆրանցն ամբողջովին համակված էր վշտով, երբ նա մերթ ընկնում էր կատարյալ անտարբերության մեջ, մերթ տրվում հանկարծակիորեն հորդող հուսահատությանը, որը, թվում էր բըռնում է նրա կոկորդը և խեղդում (գիշերները երեսը թաղելով բարձի մեջ, նա խեղդվում էր հեկեկոցներից, և Աննետան հաճախ էր վազում գալիս հարեւան սենյակից նրան միսիթարելու), Ֆրանցն սկսեց խաղաղվել... Սկզբում հայտնըվեցին հիվանդագին ուժասպառությունը և լուս արցոնք-

Ները — ինչպես երկինքը ձմռան և գարնան միջև ընկած դարձակետի ժամանակ, անշարժ և հոգնած, մշուշապատ արեով և անաղմուկ անձրեներով... Այնուհետև ամաչկոտ արթնացումը և ուժերի վերականգնումը. հիվանդն ամաշում է առողջանալ և կուզենար աշքերից թաքցնել կյանք վերադառնալու հանդուգն խնդությունը. կիսաձայն, ժամեր տևող երկար զրույցները, երբ սիրտը ձգտում է որևէ մեկի վրա թափել թարմացած կյանքի ալիքը, բայց դա խոստովանում է լոկ շշուկով, միայն հավատարիմ ընկերոջը...

Հետո սկսեցին երկուսի զրուանքները — Ֆրանցը հենվելով Աննետայի ձեռքին դանդաղ քարշ էր գալիս այդ տաքուկ գորշ օրերին, երբ անկենդան տերեների տակից չոր թփուտների շուրջը, իրենց գլուխներն են հանում առաջին մանիշակները, և լեռներում երկշոտորեն արդեն գաղտագողի մոտենում է գարունը, մինչդեռ մրսած հովիտը դեռ ննջում է մառախուղների և աղջամուղջի թանձր կապույտում: Երկուսն էլ մտածում էին բարեկամի մասին, Այդ քարեկամը նրանց հետ էր նա կարծես սպասում էր, թե երբ նրանք կհանդիպեն, որպեսզի ինքը լինի նրանցից յուրաքանչյուրի հետ: Ամեն մեկը նրան զգում էր մյուսի մեջ: Բայց երբ նրանցից ամեն մեկը մնում էր մեն-մենակ՝ ինքն իր հետ, Ժերմենը քաշվում էր հեռու. նրա անտեսանելի ներկայությունը զգացվում էր, ինչպես հեռավոր ստվերը: Ֆրանցը այդ զրուանքների ժամանակ ավելի մոտ էր սեղմվում Աննետային, որպեսզի նորից գտնի Ժերմենին: Նա կպչում էր այն կնոջ ձեռքից, որը, գնացածի ձեռքը կորցնելու սարսափից մնացել էր երկրի երեսին: Հիմա նա զերմությամբ ու փաղաքշանքով շոայլ էր, իսկ նրա ազնիվ բնավորության բնածին հմայքը դրանց առանձնահատուկ հրապույր էր տալիւ: Ֆրանցը բարձր էր գնահատում Աննետային և զանում էր այդ ցույց տալ նրան: Աննետային դա հուզում էր, սակայն նա չէր մոլորվում: Աննետան ֆրանսուհի էր և կարողանում էր մարդկանց ճանաչել, եթե անգամ նրանց կողմնապահությամբ էր վերաբերվում: Բայց ֆրանսուհին էին է, իսկ կինը ամենից քիչ է հասկանում (որովհետև չկուզում հասկանալ) ինքն իրեն:

Պարտքը նրան կանչում էր ծարիզ, որդու մոտ, Աննետան նրան միանգամայն աշքաթող էր արել նրա բոլոր ուժերը կլանել էին Ժերմենի տեսական հոգեվարքը և Ֆրանցի պահանջկում վիշտը, երեք երկար ամիս Աննետան ամբողջովին զբաղված էր նրանցով, նրանցից հրաժարվելը անմարդկային բան կլիներ (դրանով, համենայն դեպս, Աննետան հանգստացնում էր իր խիզը). Բայց պարտքը հիմա արդեն չէր պահում նրան այստեղ, նա կանչում էր Աննետային այնուեղ, հակառակ ափը... Որդին նայում էր նրան կշտամբանքով... Աննետան նրեք չէր դադարում նրա մասին մտածելուց, եթե նրա օրը լի էր ուրիշ հոգսերով, ապա չկար մի դիշեր, որ Աննետան չմտածի նրա հասին և շտանցի իրեն, Աննետային տանջում էր Մարկին սպառնացող բաղմաթիվ վտանգների միտքը: Ավելիացիայի հարձակումից հետո— Հունվարի երեսունին— Աննետան քիչ էր մնացել նրա մոտ գնա: Նրանք համարյա իրար ոչինչ չէին զրում, իսկ հազվադեպ նամակներում ժլատանում էին քընքություն ցուցաբերել: Դա բացատրվում էր և ժամանակ չունենալով և ինչ-որ կաշկանդվածությամբ, որը ժազում էր զաղտնի անհարմարությունից, որգուց հետու գտնվելով. Աննետան զգում էր մեղքը նրա առաջ, բայց նա չէր ուզում այդ իրեն խոստովաներ— իր հարկադրվածությունը նա վերագրում էր այն բանին, որ Մարկը մեղավոր է իր առաջ: Իսկ որդին նրան չէր ներում վերջին հանդիպումը, անվստահության վիրավորական խոսքերը, զրոնք Մարկի համար որպես ավտակ հնչեցին: Գիշերները, մի անգամ եւ վերհիշելով ամբողջ տեսարանի մանրամասնությունները՝ Մարկը կատաղությամբ կրծում էր բարձր: Բայց ինքնը այինքան հասկանալի է, նա ավելի շուտ կհամտածանել ինունել քան այդ ցույց տալ թեկուզ ակնարկով Մորը դրած նամակներում, սառը գոռոզ, չոր, Մարկը ճգնում էր մորը ցույց տալ, որ նա իրեն բոլորվին չի հետաքրքրում: Եվ, որ ամենավատն էր, Աննետան, համակված ալելի կարեոր հոգսերով: թվում էր դրան ուշադրություն չի դարձնում: Որպես որդու նամակների պատասխան, նա խղբզում էր մի քանի հապշտապ, ոչինչ շասող

խոսքերի իսկ դրան ավելանում էր նաև փոստի անկարգությունները։ Աննետայի նոր տարվա շնորհավորանքը ճանապարհին մնաց մոտ երկու շաբաթ։ Իսկ ժերմենի ցավերի խիստ նոպան, որն ամբողջ օր ու գիշեր կլանում էր Աննետայի մեջ եղած բոլոր ուժերն ու զգացմունքները, զընչել էր Աննետայի հիշողությունից որդու ծննդյան օրը։ Եվ Մարկը ինչքան էլ ուզում է պարծենար իր արհամարհանքով դեպի հորթային քնքշությունները, քիչ էր մնում լաց լինի։ Նա շատ շուտ հաղթահարեց աշքերը լցված արցունքները, բայց դրանք այրում էին նրան, և նա ինքը շէր կարողանա ասել, թե արդյոք իր մեջ խոսողը հիասթափությունն ու վիրավորա՞նքն է, թե մի ուրիշ զգացում, որը Մարկին թույլ չի տալիս խոստովանել հենց այդ վիրավորանքը։ Աննետայից այդ ամենը մնաց թաքնված։ Երբ նա նկատեց իր սխալ քայլը, ցավ զգաց, բայց նա անհրաժեշտ չհամարեց այդ մասին խոստովանել որդուն... Չէ որ Մարկը (ևս մի ապացուց, որ նա անտարբեր է դեպի մայրը), ըստ երեսութին, առանձնապես շէր վշտանում դրա համար... Կ՝ իս, եթե նա մարդամոտ լիներ ու քնքուշ, ինչպես Ֆրանցը... Չնայած տարիքային տարբերությանը, Աննետան հաճախ էր նրանց համեմատում միմյանց հետո նա ուզում էր Ֆրանցին իր որդին համարել։ Դրանով նա արդարացնում էր այն մտերմությունը, որին էնքը տվել էր իր բոլոր ուժերը, նույնիսկ այն բաժինը, որը պետք է Մարկին պատկաներ։ Բայց այդ արդարացումը հնարովի էր։ Աննետան խարդախում էր խաղի մեջ։ Ենթարկվելով փրկարար բնազդին, որը դժբախտաբար ուշացած էր, Աննետան իրեն հանդիմանում էր այն բանի համար, որ շափազանց շատ է մտածել վշտի մասին, որը նրան կպատճառի անջատումը։ Սակայն կանացի սրտի դեղ գիտե ինչպես իր համար սողանցք գտնել։ Այդ դեղ Աննետայի ականջին շշնչում էր, որ, մնալով, նա կղղա, թե ինչո՞ւ շմեկնեց, իսկ մեկնելով, կզղա, թե ինչո՞ւ չմնաց։ Բայց բանի որ Աննետան չի մնում, ապա նա ազատություն կտա իր գաղտնի զգացումին։ Դու ճնշում ես քո մեջ այն ցանկությունը, որը չես ուզում խոստովանել, որպեսզի հետո առանց ամաշելու վերցնես ուզածդու

Ֆրանցի համար այդպիսի բարդություններ չկային: Երբ Աննետան խոսք բացեց մեկնելու մասին, Ֆրանցը փշերը ցցեց: Նա լսել անգամ չէր ուզում, որ Աննետան ինչ-որ ուրիշ պարտականություններ էլ ունի: Ֆրանցն իրեն վիրավորված զգաց: Աննետայի ներկայությունը նրա համար գարձել էր սովորական և անհրաժեշտ մի բան: Ֆրանցը քիչ էր մնացել խելքը թոցնի այն մտքից, թե կարող է դրկվել Աննետայից: Աննետան ամենեին էլ չզայրանալով այդ պահանջներից, որոնք ելնում էին ուղղակի Ֆրանցի սրտից, հոգու խորքում նույնիսկ շոյված Ֆրանցի տիրական խառնվածքից, դիմագրում էր ոչ այնքան համառորեն: Աննետան մի օրից մյուսն էր հետաձգում վերջնական որոշումը: Ֆրանցը նենգարար նրանից թաքցնում էր լրագրերը, և Աննետան մոռանում էր դրանք պահանջել նրանից: Մարտի ութին և տասնմեկին Փարիզը նորից ենթարկվեց օդային կործանարար հարձակումների. Ֆրանցը իմանալով դրանց մասին, որոշեց Աննետային ոչինչ շասել: Նա հավատացնում էր Աննետային, որ տեղեկություններ լինելը բացատրվում է նրանով, որ ֆրանս-շվեյցարական սահմանը մարտի առաջին կեսին փակել են: Բայց Աննետայի կողմից աններելի էր, որ նա ուրիշ բացատրություններ չէր փնտրում: Եվ դրա համար նա պատճեց: Մարտի քսաներկուսին նրան ամպրոպի նման շանթահարեցին երկու հաղորդագրություն: Թերթերում նա կարդաց Կուրտիլում տեղի ունեցած պայթյունի և Փարիզի վրա կատարած գերմանական ավիացիայի օդային հարձակման մասին: Իսկ Սիլվիայի նամակից, որը տասն օր ճանապարհին էր եղել, իմացավ Պիտանի ձերբակալության մասին:

Աննետան ցնցված էր: Նա բոլորովին չէր կասկածում, որ Պիտանը պատասխանատվության է ենթարկվում իր պատճառով, Ֆրանցի փախուստի համար: Այն ժամանակ այդպիսի գործում մասնակցություն ունենալը կարող էր մեկնաբանվել որպես պետական դավաճանություն: Ի՞նչ էր կատարվել վերջին տասն օրվա ընթացքում,— այն ժամանակից: Ինչ նամակն ուղարկվել էր: Դաժան դիկտատուրայի այդ օրերին, դաժան հատկապես այն պատճառ

ոռվ, որ թշնամին շատ մոտ էր, դատարանը պատժում էր շտապ. նա առանձնապես հաշվի չէր առնում օրենքները, որոնք դարձել էին միայն վրիժառության միջոց... Աննետան արդեն մի քանի ամիս էր, ինչ հետաքրքրություն չէր ցուցաբերում դեպի քաղաքականությունը: Հանուն այդ երկու մարդկանց նա աշխարհի երեսին ամեն ինչ մոռացել էր: Հիմա դա նրան թվում էր հանցագործություն...

Աննետան սկսեց տեսնդագին պատրաստվել մեկնելու. Նրա համար պարզ էր, որ, մեկնելով Փարիզ, նա ինքն էլ է զնում ընդառաջ այն վտանգին, որն սպառնում էր Պիտանին: Բայց Աննետան սարսափում էր ոչ այնքան այդ վտանգից, որքան այն մտքից, որ ինքը դավաճանել է Պիտանին, որը կարող է մտածել, թե ինքը Աննետան խույս է տալիս պատասխանատվության իր բաժնից: Հիմա արդեն ո՞չ մի հապաղում, Գերմանացիները հարձակվում են և օրեցօր կարող են կտրել Փարիզ տանող ճանապարհը, եթե նրա որդու, նրա հարազատների վրա սպառնալիք է կախվել, ապա իր տեղը նրանց կողքին է:

Ֆրանցը զուր էր բողոքում: Նրա անձին վերաբերող հոգսերը հիմա նահանջում էին հետին պլան, Հիմա նա կարող էր ապրել և իր վիշտը տանել մենակ: Կորստի տրտմությունը ավելի հանգիստ ձևեր ընդունեց. այդ աստիճանում տրտմությունը արդեն օգնում է վերաստեղծել կյանքի ներդաշնակություն և նույնիսկ նրա մեջ է մտնում որպես բաղադրիչ մաս: Նա այլևս չի սպառնում կործանել, այլ կյանքին բովանդակություն է տալիս, սնում է նրան, նույնիսկ ընկեր է դառնում, որն օգնում է տանել միայնակությունը:

Աննետան, ի միջի այլոց, բարեկամին չէր թողնում ճակատագրի քմահաճույքին: Նա գիտակցում էր, որ բարեկամության լիակատարությունից (որ Ֆրանցը մի քանի շարունակ վայելել էր) նույնպիսի լիակատար միայնակության անցնելը կարող է այդ անհանգիստ, անկայուն հոգուն վտանգավոր ազդեցությունների զոհ դարձնել: Նա սկսեց Ֆրանցի համար ծանոթներ փնտրել — տակուվ մարդկանց: Արոնք, առանց ձանձրացնելու, կարող էին գո-

նե մի քիչ տանել նրա հոգսը և այս հեռվից տեղյակ պահել իրեն նրա առողջության մասին:

Իրենց տան կողքին ապրում էին երկու կին: Մայր ու աղջիկ: Երկու բալթիական գերմանուհի: Նրանք առանձնացած կյանք էին վարում: Մայրը, որ բարձրահասակ, գեր, արխոտոկրատական կեցվածքով՝ մի կին էր, միշտ սգաղղեստ էր կրում: Աղջիկը, որ քսանվեց տարեկան օրիորդ էր, անկողնուց համարյա վեր շեր կենում: Նա խիտ, նուրբ, ձգած և հյուսած բաց ոսկեգույն մազեր ուներ Այդ ամեննեին ոչ գեղեցիկ, հիվանդագին տեսքով աղջիկը, որը մոր նման նույնպես բարձրահասակ էր ու լավ կազմվածք ուներ, տառապում էր ոսկրային տուբերկուլոզ, որից, երկու-երեք տարվա խիստ ոեժիմից ու բուժումից հետո, հիմա ապաքինվում էր: Նա թեթևակի կաղում էր: Մայր ու աղջիկ ճաշից հետո ոչ տեսական զբոսանքներ էին կատարում. նրանք հեռու չեին գնում: Աննետան և Ֆրանցը, վերադառնալով իրենց արշավանքից, նրանց հանդիպում էին տան մոտերքը: Եվ տուն էին գնում միասին: Կազ աղջիկը հենվում էր ձեռնափայտին և ինքնասիրությունից, իսկ, գուցեկ, անտարբերությունից, չէր ջանում թաքցնել իր թերությունը: Նրանք մի երկու-երեք աննշանակալից նախադասություններ էին փոխանակում: Իրար հարցուփորձ շեր անում՝ միմյանցից որևէ գաղտնիք իմանալու համար, բայց հարեվանաբար իրար որոշ ծառայություններ էին ցույց տալիս, միմյանց գրքեր էին տալիս-առնում:

Աննետան դիմեց տիկին ֆոն Վինտերգրյունին, խնդրելով նրան, թեկուզկ հեռվից հետեւել իր երիտասարդ բարեկամին, աշխատելով շեղել նրա մտքերը այն վշտից, որի մասին Աննետան նրան պատմեց: Նա ոչ մի խոսք այդ մասին շասաց Ֆրանցին, որը առանձնապես տրամադիր շեր այդ երկու կանանց հետ հանդիպելու: Եթե Աննետան առաջարկեր նրան ծանոթություն պահպանել հարեանուհիների հետ, Ֆրանցը փշերը կցցեր. նա զայրացած էր Աննետայի վրա՝ նրա մեկնելու որոշման համար և թույլ շեր տա, որ նա իրեն փոխարինող փնտրի և փաթաթի այդ փոխարինողին իր վզին:

Մինչև վերջին րոպեն Ֆրանցը հույս ուներ, որ Աննետան կմնա: Ամբողջ օրն անցավ շղային լոռության և համառ հորդորների մեջ:

— Էնիսեն, դու չե՞ս գնա... Ասա, չես գնա, ճի՞շտ է... Ես քեզ խնդրում եմ... Ես այնպես եմ ուզում...

— Սիրելիս,— ասում էր Աննետան, — իսկ իմո՞նք ինչ անեն:

— Թող սպասեն... «Երաշտահավը ձեռքում ունենալն ավելի լավ է, քան կոռնկը՝ երկնքում»... Եվ այդ երաշտահավը ես եմ:

Զարժեր նույնիսկ Ֆրանցին համոզելու փորձ անել: Նա նման էր երեխայի, որը մի գլուխ կրկնում է. «Ծարտվ եմ» և չի ցանկանում ոչ մի խրատ լսել:

Համոզվելով, որ Աննետան չի փոխի իր որոշումը, Ֆրանցը փակվեց իր սենյակում: Հարցերին չէր պատասխանում: Նա թողել էր, որ Աննետան ինքը իրերը կապի, հավաքի, շարչարվի մինչև ուժասպառ լինելը: Աննետան արդեն մտածում էր, որ, ըստ երեւյթին, ստիպված կլինի գնալ, առանց Ֆրանցին հրաժեշտ տալու: Բայց ամենավերջին րոպեին, երբ նա Ֆրանցի մոտ մտավ ճանապարհորդական կոստյումով (նա նոթերը կիտած նստած էր անկյունում) և կուացավ, որպեսզի Ֆրանցի ճակատը համբուրի, Ֆրանցը գլուխն այնպես հանկարծակի բարձրացրեց, որ կպավ Աննետայի շրթունքին և շրթունքն արնեց: Աննետան այդ զգաց, երբ բավական ժամանակ էր անցել: Ֆրանցն, իհարկե, ոչինչ չնկատեց, նա համբուրում էր Աննետայի ձեռքերը և աղեկտուր կրկնում:

— Էնիսեն, Էնիսեն... Վերադարձիր շուտով...

Ֆրանցի գլուխը շոյելով, Աննետան իստանում էր.

— Այո... Այո, ես կվերադառնամ...

Վերջապես նա վեր կացավ, վերցրեց Աննետայի իրերը և դուրս գնաց նրա հետ: Խոսում էր մենակ Աննետան: Կայարանի ճանապարհին Աննետան, որպեսզի Ֆրանցի մտքերը ցրի, նրան ամեն տեսակի տնտեսական խորհուրդներ էր տալիս: Ֆրանցը միայն նրա ձայնն էր լսում, նա Աննետային օգնեց վագոն բարձրանալ, ինքը նույնպես

ներս գնաց նրա հիտեկից և նստեց Աննետայի կողքին։ Աննետան վախենում էր, որ հանկարծ ֆրանցը չի հասցնի ժամանակին դուրս գալ և կմեկնի իր հետ։ Բայց գնացքի շարժվելուց հինգ րոպե առաջ նա հանկարծ տեղից վեր կացավ և առանց հրաժեշտ տալու գնաց. վախենում էր հուզմունքից իրեն շտիրապետի։ Աննետան, կուպացած, նայում էր լուսամուտից, թե նա ինչպես է մեծ-մեծ քայլերով հեռանում։ Նա դարանում էր ֆրանցի վերջին հայացքը, Բայց ֆրանցը շշրջվեց։ Եվ ահա անհետացավ։ Աննետան մենակ մնաց գրեթե դատարկ, անշարժ, խաղաղ գնացքում։ Նրա շրթունքն այրվում էր։ Նա լիզեց շրթունքի վրայի արյունը...

Սահմանին Աննետայի վրա իշխողը դարձավ ներկան—սլատերազմի արյունաներկ խավարը և վտանգավոր պարտքը, որին նա ընդառաջ էր գնում։ Ոստիկանությունը չի ստացել արդյոք նրա նշանների նկարագրությունը։ Նրան չե՞ն ձերբակալի արդյոք անմիջապես, հենց որ ոտքը դնի ֆրանսիական հողը։ Սիլվիայի զգուշավոր նամակում ոչ մի մանրամասնություն չկար, բայց, կարդալով այդ նամակի տողամիջում, կարելի էր հասկանալ, որ վտանգը մեծ է։ Այնուամենայնիվ անձնագրերի ստուգումը հարթ անցավ. Աննետային թույլ տվին սահմանն անցնել։

Վերջապես, նա Փարիզում է։ Ոչ ոք նրան չի սպասում։ Նա մի քանի օրով առաջ էր ընկել այն նամակից, որով մտերիմներին հաղորդում էր իր գալու մասին։ Իսկ նրա տաշնապալի միտքը ամբողջ գիշերը վազում էր գնացքի առջևից։ Դա ծաղկազարդի կիրակի օրն էր։ Ճանապարհին իմանալով, որ Փարիզը զնդակոծել են կարծես Ժյուլ Վեռնի ֆանտազիայով ստեղծված թնդանոթով, Աննետան վախեցավ որդու համար։ Նրանց թաղամասը գտնվում էր ուղղակի գնդակոծման զոնայում։ Գտնվել Փարիզում թշնամական թնդանոթների փողաբերանների տակ՝ դա արդեն նրա համար թեթևություն էր։ Բայց Աննետայի տագնապը հանդարտվեց միայն այն ժամանակ, երբ նա տեսավ, որ տունը վնասված չէ։ Սանդուղքով վակելով վերև, նա դուռը բախեց

Ն լսեց (ի՞նչ երջանկություն) — իր որդու ոտնաձայնը, որը գալիս էր դուռը բացելու

Մարկը զարմանքից քար կտրեց: Մի պահ երկուսն էլ կորցրին իրենց տիրապետելու կարողությունը, և արհեստական սլատից, որը նրանք բարձրացրել էին իրենց միջն, հետք անգամ շմնաց: Նրանք ամուր գրկախառնվեցին: Եվ դգացմունքի ուժը, որը նրանցից յուրաքանչյուրը գրել էր այդ գրկախառնության մեջ, երկուսին էլ ապշեցրեց:

Բայց դա տեսեց լոկ մի կարճ ակնթարթ: Նրանք սովոր չեն զգացմունքների անկեղծ արտահայտման և խիստ շփոթվեցին: Գրկախառնությունից բաց թողնելով միմյանց, նրանք վերադարձան նախկին տոնին:

Նրանց միջն գաղտնիք կար: Աննետան, մտնելով իր սենյակ, Մարկին բացատրեց իր վերադարձը, ինչպես դա անհրաժեշտ էր համարում: Մարկը լսում էր, լսում և մոր շարժումներից ոչ մեկը բաց չէր թողնում: Եյս անգամ դիտարկումներով զբաղվում էր ինքը: Աննետան շփոթված էր, բայց իրեն ստիպում էր խոսել: Նրան համակել էր անհարմարության մի զգացում — վախ, որ որդին կդատապարտի իրեն: Աննետան անբասիր շէր որդու նկատմամբ — և շատ բաներում: Նա իրեն ձևացնում էր դեպի Մարկը ավելի քիչ քնքուշ և ավելի շատ ինքնավստահ, քան իրականում էր: Հետեւելով իրեն, նա ավելի քիչ էր հետեւում որդուն և շէր զգում: Որ նրա առաջ այն Մարկը չէ, որին նա թողել էր երեք ամիս առաջ... Այո, նա, ում մենք ճանաշում ենք: միշտ տարբերվում է նրանից, ում մենք ճանաշում էինք.. Չէ որ մեզ ծանոթ է միայն անհետացած կերպարը: Իսկ ահա այս Մարկը անծանոթ է, և մենք բանալի շունենք նրա սրտի համար...

Իր բանտարկության նախօրեին Պիտանը, նկատելով, որ իրեն հետեւում են, հասցրեց նամակ ուղարկել Սիլվիային: Նա Սիլվիային խնդրում էր հայտնել Աննետային, որ վերջինս չանհանգստանա: ինքը ամեն ինչ վերցնում է իր վրա: Եվ ուրիշ շշինչ Բայց դա էլ բավական էր: Սիլվիան, ոչինչ տույգ լիմանալով, դեռ ամոռանը զգաց, որ տաթօրինակ քանեց են չատարվում: Եվ նրան համակեց անհանգստուա-

թյունը։ Տեսնես ի՞նչ պատմության մեջ է ընկել այդ խելագարը։ Իմանալն անհնար է։ Պիտանի հետ տեսակցություններն արգելված էին։ Քրոջ բացակայության պատճառների մասին Սիլվիան գիտեր լոկ Աննետայի նամակներից։ Նրան հանձնարարված է Ծվեյցարիա տանել մի վիրավերի։ Սիլվիան իր տագնապների մասին ակնարկեց Մարկին։ Մնացածը Մարկն ինքը զլխի ընկավ։ Նրա հիշողության մեջ գուրս լողաց կիոնի կայարանի մոտ դեկտեմբերին անդի ունեցած խորհրդավոր հանդիպումը (Մարկն այդ մասին ոչ ոքի ոչ մի խոսք չասաց)։ Դրա վրա նա մի ամբողջ ոսման կառուցեց։ Իր ենթադրությունների մասին ոչինչ չափելով ժորաքրոջը, Մարկը ջանում էր Սիլվիայի հետ վերականգնել դեպքերի ընթացքը։ Սիլվիան Ֆիայն հիմա էր, որ բացեց Մարկի առաջ այն ամենը, ինչ իրեն հայտնի էր Աննետային կոլեջից հեռացնելու պատճառների մասին, գերեզմանատանը տեղի ունեցած տեսարանի մասին, այն մասին, որ Աննետան հետաքրքրվում էր մի ուղմագերու ճակատագրով։ Մարկը երկար ժամանակ մտածում էր այն մասին, ինչ նրան հաղորդում էր Սիլվիան։ Ել նրա մոր կերպարը հիմա պատկերվում էր իրեն նոր լույսի տակ։ Մարկը վերանայեց իր հայացքները։ Պացիֆիզմն, այդ, ինչպես Մարկն էր արհամարհանքով դա անվանում, անալի սնունդը, որը պիտանի է կանանց և թույլ զղեր ունեցող մարդկանց համար, սկսեց ձգել Մարկին դեպի իրեն, երբ պարզվեց, որ դա վտանգավոր է, որ դա հրապուրում է։ Մարկը մտքում արկած էր ստեղծում, որի մեջ ամեն ինչ կար— և հերոսություն և սեր,— մի ամբողջ սիրավեպ։ Նա այրող խանդ զգաց, բայց այդ սիրավեպում կար նաև ինչ-որ անհանգիստ ձգողական ուժ։ Հիմա մոր անվստահությունը, որն այնպես խոցեց Մարկին, դառնում էր հասկանալի։ Եվ ի լրումն այդ ամենի Մարկը հարկադրված եղավ խոստովանել, որ ինչքան էլ նա այն ժամանակ ըմբռատանում էր և կատաղում, բայց այդ անվստահությունը հենց ինքն էր իր վարքագծով արթնացրել մոր մեջ։ Ծանր է... Բայց խոսքը հիմա այդ մասին չէ։ Նրա մոր վրա վտանգ է կախվել Եվ, տեսնելով Աննետային, նա ոչ մի

ակնքարից չկասկածեց, որ ժայրը գիտակցորեն ընդառաջ է գնում վտանգին։ Այդ միտքը Մարկի միջից գուրք մղեց Ժյուս բոլոր մտքերը Նա աշքերը չէր հեռացնում Աննետայից։ Եվ մտքում աղաշում էր մորը վստահել որդուն։ պատմել նրան բոլորը, ինչը վտանգ էր սպառնում Աննետային։ Բայց Մարկը համոզված էր, որ մայրը ոչինչ չի ասի Նա տանջվում էր դրանքց և հիանում էր Աննետայով։ Հիանում էր նրա հպարտությամբ, նրա հանգարտությամբ, նրա լուսությամբ, Մարկը հայտնագործեց մորը։ Վերջապես Եվ հիմա Մարկը գողում էր նրան կորցնելու սարսափից։ Հէ որ Աննետային վտանգ էր սպառնում։

Աննետան ոչինչ շնկատեց։ Նա մտածում էր միայն իր պարտքի հասին և շտապում էր։ Դեռ բրոջը շտեսած, մի կերպ ուժ առած ու հանգստացած, նա հագնվեց ու գնաց։ Մարկը մի տեսակ քաշվելով մոթմոթաց, որ ինքը պատրաստ է մորն ուղեկցելու։ Աննետան շարժումով հասկացրեց, որ հրաժարվում է, և Մարկը շհամառեց։ Հին վերքը դեռ ցավում էր, և նա վախենում էր իր նկատմամբ նոր վիրավորանք հարուցել։

Աննետան եկավ Մարսել Ֆրանկի մոտ։ Նա կարեոր պատուտակ էր դարձել «ջարդիչ» մեքենայի մեխանիզմում։ Նա թափանցել էր պրեմիեր-մինիստրի անձնական քարտուղարությունը։

Փամանակ շկորցնելով ավելորդ բաների վրա, Աննետան նրան հաղորդեց ամբողջ պատմությունը։ Մարսելն ընկավ իր մեծության բարձունքից։ Նրա առաջին զգացումը ամենենին բարի զգացում չէր։ Աննետան առաջին անգամ տեսավ Ֆրանկին առանց նրա ծաղրական ժպիտի, առանց այդ կոսմետիկական պաճուճանքի, որը նրա համար երկրորդ բնափորություն էր գարձել։ Նույնիսկ այնպիսի բուպէ եղավ, երբ նա քիչ էր մնում մի կողմ շպրտի ամեն տեսակի քաղաքավարություն։ Աննետայի պատմության մեջ նա տեսավ մի բան։ այդ խելագար կնոջ ողորմածությամբ ինքն ընկել էր նեղ դրության մեջ։ Ֆրանկն ամենենին ուրախ չէր այն բանի համար, որ այդ նեղ դրության մեջ իր հետ

քեկնելու է նաև Աննետան։ Նա Աննետայի վրա գալրանում էր այս պատճառով, որ իրեն վտանգավոր պատմության մեջ է բաշելո թայց, բռնելով Աննետայի հեգնական հայացքը։ որը կարդում էր իր խոսակցի մտքերը, հետեւելով նրա գեմքի խաղին, ֆրանկը նորից մտավ բարձրաշխարհիկ մարդու գերի մեջ և շնորհած իր սովորական անկաշկանդ տեսքը։ Նա մտածեց այդ կնոջ արիության մասին, որը եկել էր, որպեսզի վտանգի դեմ կանգնի երես առ երես, ու ամաշեց իր վախկոտությունից եկ Մարսելը— նախկին Մարսելը— հարցրեց նրան։

— Թայց աւացնք, ի սեր աստծո, Աննետա, այդ ի՞նչ դե է ձեզ մոլորեցրել։ Չէ՞ որ դուք հանգիստ նստել էիք Նվեյցարիայում, ոչ ոք ձեր մասին չէր էլ մտածում... Ո՞ր սատանան ձեզ դրդեց վերադառնաւ, որպեսզի ընկնեք գայլի երախը։

Աննետան համբերությամբ բացատրեց, որ ուզում է Պիտանին ազատել, զբաղեցնելով նրա տեղը, և կամ թե չէ իր վրա վերցնել մեղքի հասանելիք բաժինը։

Մարսելը ձեռքերը կարկառեց դեպի երկինք։

— Դուք այդ չե՞ք անի։

— Ես ձեզ խնդրում եմ, ինձ ասեք նրա գործը վարող քննիչի ազգանունը. ես նրան դիմում եմ տալու։

— Ես դա ձեզ թույլ չեմ տա։

— Եսկ դուք թույլ կտա՞ք, որ ես թողնեմ իմ փոխարեն դատին ոչ մի մեղք շունեցող լարդուն։

— Ինչպե՞ս թե մեղք շունեցող։ Չէ որ նա պրոֆեսիոնալ է, նրա միջոցով են տարվում գաղտնի նամակագրությունները, կազմակերպվում վախուսատները. նա հի՞ն ոեցիդիվիստ է։ Էհ, ասենք թե դուք ձեզ մատնեցիք, թայց չէ որ դրանով նրան չեք փրկի։ Մանավանդ, նա ձեր անունը չի էլ տվել։

— Չի տվել շնորհիվ իր ազնվության։ Ես չեմ հասկանում, թե ինչու պետք է նրան զիշեմ ազնվության մեջ։

— Դուք որդի ունեք։

— Բանն էլ հենց այդ է։ Ես չեմ ուզում, որ նա վախկոտ լինի։

— Դուք բոլորովին ցնդել եք:

— Այո, բոլորովին... իսկ հիմա, բարեկամո, ասացեք այն ազգանունը, որն ինձ պետք է: Եվ հանգիստ եղեք: Զեր անունը չի արտաքերվելու:

Ֆրանկը մտածում էր.

«Հեքիաթներ պատմիր: Դատարանը գործի հետքերով կամաց-կամաց ինձ էլ կհասնի»:

Բայց Մարսելի ինքնասիրությունը վիրավորված էր: Նա առարկեց:

— Խոսքը իմ մասին չէ: Իմ անհանգստությունը ձեզ համար է: Դուք չգիտեք «պատրոնին»: (Նա նկատի ուներ «Պատերազմ անող Մարդուն»): Մի մահվան դատավճիռ ավելի կամ պակաս— նրա համար միևնույն է: Նա չի նայի, թե դուք կին եք: Աշք վախեցնելու համար նա պատրաստ է ոտնահարել բոլոր հին պայմանականությունները, չի ընդունում ոչ մի ավելորդ ներողամտություն, հարգանքի և նրբակրթության ոչ մի սրբազն ավանդույթ...

— Չեմ առարկում: Հավասարություն է, թող հավասարություն լինի: Նույնիսկ կախաղանի սպառնալիքի տակ:

Մարսելն այլևս չէր համառում: Նա ճանաշում էր Անհնատային:

— Թող այդպես լինի... Բայց Բույլ տղեք ես սկզբից գործին ծանոթանամ:

— Ժամանակ չկա:

— Ժամանակը զուր տեղը չի վատնվելու:

— Ինձ վրա ծանրացած է պարտքը: Ծուցմունք տալու:

— Դուք բավական ամուր եք, որպեսզի այդ ծանրությունը տանեք ևս մի երկու օր: Դուցե զործը կարծելու հնարավորություն գտնվի: Ինչո՞ւ զուր տեղը կործանեք և ձեզ և Պիտանին:

— Իսկ ո՞վ կերաշխավորի ինձ՝ որ գործը հենց այս օրերին չի վերջանաւ: Եվ ես հետին թվով չե՞մ իմանա, որ «հապճեպ» դատավճիռն արդեն կայացված է:

— Ես ծանոթ եմ քննիչի հետ և ձեզ տեղյակ կպահեմ գործի ընթացքի մասին: Ես մտադրություն չունեմ ձեզ խաբելու: Այդպիսի բան չեմ անի... Վերցնենք ամենավատ

դեպքը. պատկերացրեք, որ դատական վճիռը անսպասելիորեն կախցված է առանց իմ գիտության։ Ինչ կա որ, նույն ելքը գարձյալ մնում է ձեզ. հանձնվել արդարադատության ձեռքը։ Մի՞թե կարելի է խանգարել, որ կանայք իցենց չկործանեն։

— Ես դրանից շեմ վախենում, Մարսել, բայց շեմ էլ ձկտում քրան։ Անօգուտ հերոսությանը ես ոչ կարեկցում եմ, ոչ էլ հարգում։

— Փա՛ռք աստծու Վերջապես սթափ բանականության ձայն լսվեց… Օ՛ֆ, իսկ ինչ օգտակար հերոսությանն է վերաբերում… Աննետա, ճշշտն ասեք— շէ որ միևնույն է Ես ձեզ պաշտպանելու եմ, ինչպես որ դա կարողանամ,— ինչո՞ւ եք դուք ինձանից թաքցրել որ նա ձեր սիրած տղամարդն է։

— Ո՞վ։

— Գեղեցիկ պատանին, որին դուք փրկել եք։

— Ի՞նչ անհեթեթություն։

— Բավակա՞ն է։ Մի՞թե դուք հիմա էլ եք այդ թաքցընելու ինչ կա որ, ես հեռու եմ կշտամբելուց։ Եթե դա զվարճացնում է ձեզ, դուք իրավացի եք։

— Բայց ես ձեզ հավատացնում եմ, որ ոչ։

— Դե լավ, բավական է։

Աննետան կարմրեց։

— Ոչ, ոչ, ոչ և ոչ։

Մարսելը ժպտաց։

— Դե լավ, մի զայրացեք։ Ես ձեզ այլևս ոչ մի բանի մասին շեմ հարցնում… Բայց մեր միջև, տիկին Առեղծված, խոստովանեք, որ ձեզ շատ հեշտությամբ կարելի է փակուզրւ առաջ կանգնեցնել։ Խնդրեմ բացատրեք. հանուն ինչի՞ էիք նրան փրկում, եթե չէիք սիրում։

— Հանուն այն բանի…— սկսեց Աննետան բուռն կերպով։

Բայց հենց նույն րոպեին լոեց։ Նա հասկանում էր, որ եթե Մարսելին բացատրի իր իսկական դրդապատճառները, նա ոչ մի բառի չի հավատա. չի հասկանա… էհ, թող այդ-

պես լինի: Թող մտածի այնպես, ինչպես որ ինքն ուղում է:

Մարսելը հաղթականորեն քմծիծաղեց: Նրան չեւ խաբի:

Նա սքանչելի տղա էր... Սերը ամբողջ գործին սուր համ էր տալիս... Այդ Աննետան, այնուամենայնիվ... Այդպիսի ծանոթությունը նրան կարող է շատ խիստ վնաս հասցնել... Բայց, ճիշտն ասած, Մարսելը նրանով հպարտանում էր...

Նա հենց այդ նույն րոպեին ձեռնամուխ եղավ գործին: Տեսնվեց կապիտանի հետ, որը քննությունը վարում էր: Դա սիրալիր, նրբակիրթ մարդ էր, որն առանց որևէ ճիգ գրադադրելու բարձրացել էր այն անմարդկայնության աստիճանին, որը նրանից պահանջում էր իր գերը: Ազգային մոլեուանդությունը ըստ պարտականության և դիլետանտի հատաքրբությունը նրա մեջ միախառնվում էին ու դառնում մի տեսակ գորովալից անտարբերություն: Քննության ենթակաների համար նա հատկապես վտանգավոր էր այն դեպքերում, երբ ինքը նրանցով հետաքրքրվում էր:

Պիտանը նրան հետաքրքրեց: Նա բարյացակամություն զդաց գեսի այդ մարդը: Նրանց միջև տեղի էին ունենում տեսական և քաղաքավարի զրուցներ, որոնցից քննիչը փորձում էր պարանի կանեփաթել ձեռք բերել՝ Պիտանին կախելու համար: Բայց այդ թելը ամուր չէր: քննիչը շատ սիրալիր և ափսոսանքով ընդունում էր այդ: Հին վարդետը նրան թվաց խաղաղ երազող, արտաքինից անշար ու անսկայման շահագիտությունից զերծ: Նա սիրում էր խոսել, ուրախությամբ շարադրում էր իր բարեհոգի ուստոպիաները, ելախտագիտություն էր հայանում: Որ իրեն լսում են, շան զսպված ցնծությամբ կախաղանի էր սպասում, շուն, որը փայլվիլուն աշքերով խեթում է շաքարի կտորին, բայց դուրս կորզել նրանից համախոհների անունները կամ գործի մանրամասնությունների մասին որևէ բան, որի համար նրան գատի էին ենթարկում, ոչ մի հնարավորություն չկար: Իր շաղակրատության կամ միամիտ խորամանկության շնորհիվ նա միշտ ընդհատում էր սկսած պատմու-

թյունը, որպեսզի գատողություններ անի: Հստ ճրմուլթին, նա ոչ մի նշանակություն փաստերին չէր ուղիս, և նրա ամբողջ ուշադրությունը չլանված էր գաղափարներով:

Թննիչը Ֆրանկին ցույց տվեց այն նամակները, որոնք Պիտանը բանտից ուղարկել էր իր պատանի բարեկամին, և այն նամակները, որոնք այդ պատանի բարեկամից էին— նրա անունը Մարկ Ռիվիեր էր: Ֆրանկն առաջին րոպեին անհանգստացավ. միթե այդ գանդալոշը նույնպես փորձանքի մեջ է ընկել: Ռիվիերներից դա սպասելի է... Բայց նա շատ շուտ հանգստացավ, լսելով քննիչին, որն իր մելոդիկ ձայնով նրան այդ նամակներից հատվածներ կարդաց, գրված լիրիկական-վերամբարձ ոճով— մերթ երիտասարդ Շիլերի նման, մերթ՝ Ֆլորերի, Ժան-Ժակի, Ռեմբոյի: Իսկ Պիտանը ստեղծագործում էր ոչ այն է Բեռնարդեն դը Սեն-Պիերի, ոչ այն է Էդգար Կինեի ոճով: Պատանին հըրճվանքով արտահայտում էր իր սերը ծերուկին, զայրութով էր խոսում բռնության մասին, որին ենթարկել էին նրան, և զերմորեն ցանկանում էր բաժանել արդար ու առաքինի մարդու ճակատագիրը, ինչպիսին էլ որ այն լիներ: Սերուկը հայրաբար շանում էր նրան հանգստացնել, նկարագրելով այն անվրդով խնդությունը, հոգեկան անդորրի զգացումը, որն ինքը վայելում է. կարելի էր կարծել, թե բանտը իմաստունի հանգստության վայր է, աշխարհիկ խուց է, որը պետությունը տրամադրել է մտածողին, Քամին բարձր վանդակապատ լուսամուտի միջով նրա բանտասենյակը գցեց Սենայի ափից բերած շագանակենու մի ծաղիկ, և այդ ծաղկի հետ միասին ներս խուժեց նաև գարունը: Պիտանն ընկավ հովվերգական ոճի մեջ, Սաղիկը հոգաւտար ձեռքով դրված էր նամակի թերթիկների միջև որը քննիչը բռնել էր իր ձեռքին: Երկու փարիզեցիները ծաղրական ժպիտներ էին փոխանակում, կարծես ասելով:

«Զէր խանգարի քորոցի ծայրին խրել հենց այդ ծերուկին»:

Բայց ոչ ծերուկը, ոչ խանգավառ տղան գլխավորը շհայտնեցին. պատանին— իր զղումը և տագնապները մոր ճակատագրի համար, ծերուկը՝ այդ տագնապը ցրելու ցան-

Գությունցը Նրանց Ֆիմիանց հասկանում էին կես խռոքից, իսկ փարփեցինքրն այդ ամենի մեջ տեսնում էին միայն «էմիլից<sup>1</sup>» մի նրկխոսություն։

Քննիւը փակեց իր գոսյեն, ֆրանկը հարցրեց.

— Իսկ արդյո՞ւնքը։

— Արդյունքն այն է, որ ամեն ինչ հանգեցվում է փախուստի տարօրինակ գործին։ Ոչ բոլորովին է հասկանալի, թե զրա մեջ ի՞նչ շահագիտություն կար ծեր Անախարսիսի<sup>2</sup> համար։ Անձամբ նա գերուն չի ճանաշել։ Մենք Շվեյցարիայում այդ թոշնակի վրա լրտեսություն էինք սահմանել։ Նրան այնտեղ թեր տակ ջերմացնում էր մի գավառական ֆրանսիացու ընտանիք…

Ֆրանկն ականջները սրեց։

— Շատ հարգելի, անբասիր մարդիկ։ որպին վիրավոր է, մյուս բոլոր տղամարդիկ ճակատում են — ոմանք կենացանի են, ոմանք մեռել են։ Երեք կին են. մայրը, ամուսնացած աղջիկը և հիվանդապահը։ Հիմք կա ենթադրելու, որ գեղեցիկ պատանու և ամուսնացած դստեր միջև սիրավեպ գոյություն ունի։ Սովորական պատմություն է։ Ամուսինը կովում է։ Իսկ թիկունքում բարոյականությունը կազում է։ Մարդ հարկադրված է զարմանալ, որ այդպիսի խիստ հայրենասեր կինը բոլ է ընտրել։ Բայց ձուկ շեղած տեղը, գիտեք… թերեւ այդ մտերմությունը տեղի է ունեցել պատերազմից առաջ։

Ֆրանկը, միանգամայն հանգստացած, տեղից վեր կացավ։

— Գիշերը բոլորը կատուներն էլ գորշ գույն ունեն։

— Դուք հասկանում եք, որ մենք այդպիսի բաներ չենք խրախուսում. բացեիրաց ամուսնու գլխին կոտոշներ տնկել որպես պարգև նրա հայրենասիրական խանդավառության զիմաց։ Դա չի բխում հասարակական փրկության շահերից։

<sup>1</sup> «Էմիլ» — Ժան-Ժակ Ռուսոյի վեպը։

<sup>2</sup> Անախարսիս — արքա Բերտելեմիի «Երիտասարդ Անախարսիսի Քւնապարհորդությունը Հունաստանում» (1779) վեպի հերոսը։

— Իսկ ծերո՞ւկը:

Ծերո՞ւկը: Նրան կարելի է կախաղան հանել, եթե խելք-ներիս փշի, իսկ եթե ոչ, ազատ կարձակենք: «Կողմ» և «թեր» փաստարկները բաժանվում են երկու հավասար մասի: Կշեռքի նժարները հավասարակշռված են: Մեկը կքաշը թե մյուսը, այնքան էլ կարեռը չէ: Խոսքը Պետությանն է պատկանում:

«Պետություն» — այդտեղ Ֆրանկն արդեն իր տանն էր: Նա գնաց «պատրոնի» մոտ: Ֆրանկը նրա հետ վազուցվածանոթ էր: Բայց ո՞վ կարող էր պարծենալ իր ժանոթությամբ նրա հետ: Այդ անտանելի մարդը միշտ անում էր այն բանի հակառակը, ինչ իրենից սպասում էին: Հող, որը սփոված էր փշերով, թակարդներով... Ֆրանկն սկսեց զգուշորեն առաջ շարժվել:

Ամեն ինչ դասավորվեց հաջող: Ցասումնալից վարազը, որը սովորաբար իր վարազիկներին ժանիքի հարվածներ էր պարզեցում, Ֆրանկին դիմավորեց սիրալիր. «Նա քնից լավ կշատցել էր», ուրախ տրամադրություն ուներ... Այդ մոնղոլը (ըստ արտաքին կերպարի) հենց նոր էր վերադարձել ճակատը շրջադաշտուց. ամեն ինչ կարգին էր. մեռնում էին տեղում, ըստ հրամանի, առանց կամակրության: Պաշտպանության գիծը ամրացրին, իսկ գերմանական հորդաների գրոհի առաջը: ըստ երեսութին, մի անգամ էլ առան: Դաժան ծերուկը ուղևորությունից վերադարձ երիտասարդացած: Նա նույնքան քիչ էր անձնաւուր լինում հոգնածությանը, որքան զգացմունքներին: Նա հինց նոր էր ազատվել մի կույտ շտապ գործերից, որոնք նախապես մշակել էին քարտուղարները: Հիմա նա իրեն թույլ էր տվել պալատի նիստից առաջ մի կես ժամ հանգըստանալ: Ծերուկը սիրում էր բամբասանքներ, և նրա անձնական ոստիկանությունը, ուսումնասիրելով տիրոջ ճաշակը, միշտ պատրաստ էր պահում նրա համար սկանդալային պատմությունների մի ամբողջ փունջ, որոնք կազմում էին օրվա հրատապ խնդիրները: Նա իսկույն ևեթ-

զգաց, որ զուսպ և քաղմանշանակ ժպտացող Ֆրանկը նույն-  
պէս դատարկ ձեռքերով չի ներկայացել:

— Ա՛, պարոն Ֆրանժիպանը<sup>1</sup> (նա արտասանում էր.  
Ֆրանկ Զիպան) իր ապրանքով... է՞, տղաս, բացիր կո-  
ղովդ, տեսնենք.

Ֆրանկը շոյված լինելով այդ տնավարի դիմելուց,  
շայց խոցված՝ ծաղրական մականունից, որը շատ սազում  
էր իրեն, աշխատում էր հարմարվել իր պատրոնի կատա-  
կող տոնին: Երկշոտորեն նայելով մարդակերին, նա սկսեց  
արվանկարել Պիտանի պորտրեն, որը և համակրելի էր և ծի-  
ծաղելի: Նա միևնույն է հեռու չէր գնա, քանի որ անհամ-  
բեր ունկնդիրը հեգնական նկատողությամբ ընդհատեց  
նրան.

— Մի խոսքով, ազնիվ հոգի է... իսկ ավելի հետաքրր-  
քիր ոչինչ չկա՞:

Բայց պատմողն այդտեղ սկսեց նույն այդ կանվայով  
արտասովոր նախշեր ասեղնագործել, հաճոյանալով իր  
ունկնդրի ճաշակին: Եվ ահա պարզվեց, որ Պիտանը  
քնքորեն սիրահարված է մի շատ «պատկառելի» տիկնոջ,  
իսկ նա էլ իր հերթին բուռն կերպով սիրում է մի ավստրիա-  
ցու, որին Պիտանն օգնել է փախչել...

Պատրոնին դա հետաքրքրեց:

— Ո՞վ է դա... ո՞վ է դա...— բղավում էր նա, ամուր  
բռնելով Ֆրանկի ձեռքը:— Գրագ կգամ, դա ծանոթ կին  
է... Խ....ի կինն է,

(Խ-ը նրա մինիստրներից մեկն էր):

Նրա փոքրիկ աշքերում փայլատակեց մի շար ու նենգ  
կրակ:

— Ո՞չ Ո՞չ! Ափսո՞ս: Եւ այդ տիկնոջը Սեն-Լազար<sup>2</sup>  
կնստեցնեի հանուն սրբազան միասնության...

Պատրոնը մի քանի ազգանուն ևս տվեց: Եվ Ֆրանկից  
ձեռ չքաշեց այնքան ժամանակ, մինչև որ սա, վերջապէս,  
շտվեց Աննետա Ռիվիերի անունը: Ֆրանկը դա միանդա-

1 Թոմնդ գուխու անուն:

2 Սեն-Լազար— կանացի բանտ Փարիզում.

մից շհամարձակվեց. վտանգը մեծ էր, թայց նահանջելու արդեն ուշ էր, և բացբերանը ստիպված եղավ ամեն ինչ մինչև վերջ պատմել...

Հսելով Աննետա Ռիվիերի անունը, Ֆեռուկը զարմացավ,  
— Ռիվիեր... Ռիվիեր...

Այդ ազգանունը նրան ժանոթ էր, ճարտարապետ Ռիվիեր, իր հաճույքներով ապրելու սիրահար, սրախոս, ազատամիտ, դրեյֆուսական... Նրանք պատկանում էին միենալուն սերնդին, նույն խմորից էին և համախ էին իրար վրա արձակել ուրախ և ցինիկ հեգնանքի նետերը: Նա ճմկթում էր Ռիվիերի դստեր թշիկը, երբ աղջիկը գեռ փոքր էր. Նա կորցրել էր իր տեսադաշտից այդ աղջկան, թայց բարյացակամ էր տրամադրված նրա նկատմամբ— չէ որ այդ աղջիկը փախել էր Ռոժե Բրիսսոյից, «այդ ապուշից»... (Պատրոնը տանել շէր կարողանում Բրիսսոների ընտանիքի հոետորական տաղանդներին: Նա մի լավ հատկություն ուներ, սուր ատելությամբ էր լցված դեպի կեղծավորությունը և դա զգում էր ամենուրեք, երբեմն նույնիսկ ճշշմարտության մեջ): Եվ նա հիացավ, որ Աննետան շրպպացրեց այդ ամբողջ կպչուն ոհմակի քթին և փրկվեց նրանից, հիմար վիճակում թողնելով Ռոժեին, որն իսկույն քիթը կախեց ու շրմիաց ջրափոսի մեջ: Պատրոնը, որ իսկույն որոշում էր բոլոր բամբասանքները, քիչ ջանքեր չթափեց, որ այդ մեկն էլ աարածվի: ամբողջ Փարիզում և կատաղության հասցնի Բրիսսոների ընտանիքը, որն, այնուամենայնիվ, այնպիսի տեսք էր ընդունում, կարծես ոչ մի բանի մասին գաղափար անգամ չունի: Ինչպես թե, դա նրա ամենաբերկրալի՝ հիշողություններից է: Հիմա, ատարածության վրա, նրան թվում էր, թե այդ ծիծաղելի կատակը նրանք սարքել էին Աննետայի հետ միասին, և նա դրա համար երախտապարտ էր այդ «համարձակ օրիորդին» (այդպիսին էր Աննետան պատկերանում նրան), Աննետայի նոր արկածին պատրոնը վերաբերվեց քարեհաճորեն... Այդ Ռիվիերը... Ահա թե ում մեջ է հռառում գալերի արյունը...

— Թայց ասացեք, Ֆրանժիպան, չէ որ նա արդեն առաջին երտասարդության կին չէ: Նա հիմա պետք է լինի...

Մպասեք... , է՞ն, ինչ կա որ Ավելի լավ: Ես սիրում եմ այդպիսիներին, նա գրավշություն ունեցող կին է... օվ ի՞նչ բանից պարզվում է, որ ամբողջ գործը հանգում է բռնելախաղի... Այդտեղ ի՞նչ ընդհանուր բան կա քաղաքականության հետ... Հո այդ բարի ֆրանսուհուն բարշ չե՞նք տալու Ֆուտրիկիե-Տենվիլի<sup>1</sup> մոտ: (Այդպես նա անվանում էր իր գլխավոր գատախազին): Նրա բերնի ջրերն, իջարկե, կվագեն... Ոչ, ոչ: Թող իր ավստրիացու հետ քնի: Հաջորդ պատերազմի ժամանակ արդար գործի համար կովող մի զինվոր ավելի կունենանք... Իսկ ինչ վերաբերում է ծերուկ Պիտանին (սիրում եմ այդ մաքուր ֆրանսիական ազգանունները), «Երեքից ամենաերջանիկին», թող բախտը փորձի... Վերջ տվեք, սիրելիս, այդ ամբողջ հետաքննությունը... քանի որ հանցակազմը բացակայում է, սատանան տանի: Իսկ հիմա եկեք խոսենք լուրջ բաների մասին... Մենք գնում ենք պալատ... Ես ի՞նչ կարող եմ մատուցել այդ ոչխարներին:

Դործը մահուդի տակ դրվեց:

Աննետային փրկեցին, նախապես ցեխ շպրտելով վրան վրան ցեխ շպրտելը զունդիներում համակրանքի դրսեկորումներից մեկն է:

Բայց, ի բարեբախտություն Աննետայի, նա այդ մասին չգիտեր: Նա Ֆրանկից մի երկտող ստացավ, որտեղ ասվում էր, որ ամեն ինչ կարգին է. Աննետան դրանով շհանգստացավ: Ֆրանկին շվատահելով, Աննետան այնուամենայնիվ քննիչին գրեց, խնդրելով նրան, որ իրեն ընդունի: Քննիչն ավելի ուշ, երբ Պիտանին բաց թողեց, նրան ցույց տվեց այդ նամակը:

Վերադառնալով տուն, Աննետան Սիլվիային գտավ իր տանը և բոլորը, ինչ ձեռնարկել էր, պատմեց նրան: Սիլ-

<sup>1</sup> Ֆուտրիկիե-Տենվիլ — 1780 թ. ֆրանսիական բուրժուական հեղափոխության դարաշրջանի հասարակական մեղադրող Ֆուկիե-Տենվիլի անվան անպարկեցած աղավաղումը:

Վվեան հարձակվեց քրոջ վրա։ Անհնայի խնդագարությունը նրան համբերությունից հանեց։ Աննետան լուս լսում էր Եղ Սիլվիան, քանի որ գործն արդեն արված էր և մնում էր միայն հաշտմել դրա հետ, հանկարծ ձայնը կտրեց։ Ընկնելով քրոջ վրա, նա սկսեց Աննետային համբուրել։ Ճիշտն ասած, նա չէր էլ ուզի, որ Աննետան ուրիշ կերպ վարվեր։ Գիտենալով, որ ինքը՝ Սիլվիան, երբեք այդպես չէր վարվի, նա հպարտանում էր ավագ քրոջով ու նրա վարմունքով։ Այդ կամքի ուժը, այդ հանդարտությունը նրան հարգանք էին՝ ներշնչում։

Մարկը պատի հետեւում լսում էր, թեև ոչ ամեն ինչ հասկանալով, զիճող քույրերի խլացած ձայները, բորբոքված Սիլվիայի ճշոցները, որին Աննետան, ըստ երեսութին, ինչոր նշանով հիշեցնում էր որ ցածր խոսի, այնուհետև բուռն համբույրներն ու լուսությունը։ Սիլվիան քիթը մաքրում էր։ Նա, որ արցունքներ թափել շգիտեր, լաց էր լինում...

Ամուր իրար զրկած, քույրերը նայում էին միմյանց աշքերի, իսկ Աննետան, համբուրելով Սիլվիայի աշքերը, կամացուկ նրան պատմեց ամբողջ պատմությունը— Ժերմենի հետ ունեցած մտերմության մասին, Ֆրանցի փախուստի մասին, Ժերմենի մահվան մասին։ Սիլվիայի մտքով հիմա արդեն չէր էլ անցնում հանդիմանել քրոջը՝ նրա խելացնորմեծահոգության համար, նա արդեն քրոջը ընդհանուր շափրվ չէր շափում։ Նա հատուկ իրավունք էր վերապահում Աննետային, միայն ու միայն Աննետային, ապրել և գործել ըստ իր օրենքի, որը բոլոր սովորական օրենքներից վեր է բարձրանում։ Իսկ պատի հետեւում խանդու տղան դաժանորեն տառապում էր, որ այդ գաղտնիքները իրեն չեն հայտնել։ Պաղատելով վստահություն ձեռք բերել— նա իրեն թույլ չի տա։ Նրա հպարտությունը պահանջում է, որ այդ գաղտնիքներով նրանք գան իր ժոտ։

Հաջորդ օրը նա դեռ փոթորկվում էր, երբ հայտնվեց Պիտանը, որը հենց նոր էր դուրս եկել իր Թեքեից<sup>1</sup>։ Աննե-

<sup>1</sup> Թեքե— վայր եգիպտոսում, որտեղ անապատում փրկվում էին առաջին քրիստոնյաները։

շան լսեց դուռը բացող որդու ուրախ բացականչությունը, և վայր քցեց ձեռքին գտնվող աշխատանքը: Մարկը աղմուկով արտահայտեց իր զարմանքը: ցավացնելու շափսեղմելով հյուրի ձեռքը: Պիտանը բեղի տակ ծիծաղում էր իր սովորական հանդարտ, սիրալիր, կաթկոթոցի նմանվող էիծաղով: Ծերուկին տեսնելուն պես Աննետան տեղից վեր կացավ ու համբուրեց նրան: Այդ ժամանակ նա հիշեց որդու ներկայությունը, և դա նրան շփոթեցրեց: Մարկն սմաշեց ավելի շատ. նա սենյակից դուրս ծլկեց, պատճառաբանելով, թե պետք է մուտքի դուռը փակի և մի քանի րոպէ նրանց մենակ թողեց: Աննետան և Պիտանը, հուզվելով, ժպտալով, արագ-արագ մի քանի նախաղասություն փոխանակեցին: Մարկը վերադարձավ: Խոսակցությունը երրորդի ներկայությամբ արդեն տարվում էր ակնարկներով, կես-խոսք: Պիտանին խնդրեցին մնալ նախաճաշելու, բայց նա համբերել չէր կարողանում, ուզում էր Փարիզում վազվել, տեսնել բոլոր ընկերներին: Մարկը գնաց նրա հետո նա ասաց.

— Պիտան, ինձ հայտնի է, ինչ դու գրել ես իմ մորաքրոջը:

— Ա՛, — պատասխանեց ծերուկը:

Եվ ոչ մի խոսք չավելացրեց:

Մարկը թուքը կուլ տվեց:

— Դու մեզ համար քեզ զոհաբերել ես: Դու մեծահոգի ես:

— Այնքան մեծահոգի չեմ: որքան քո մայրն է:

— Նա ի՞նչ ոիսկի է դիմել:

— Ինքը քեզ չի՝ ասել:

— Ոչ:

— Հո դու չե՞ս ուզում, որ ես դա անեմ նրա փոխարին:

— Ոչ:

Մարկին զայրույթը պատեց, բայց Պիտանն իրավացի էր: Նրանք շարունակում էին քայլել ու քայլել: Մարկը մեծ դըժվարությամբ ասաց.

— Ես կուզեի իմանալ գոնե.. Նրան դեռ հիմա՞ էլ է  
վետանգ սպառնում:

— Տվյալ պահին շեմ կարծում: Բայց մեր ժամանակ,  
երբ բոլոր կողմերդ լիքը վախկոտներ են, լիքը գաղաններ,  
այդպիսի կնոջ համար, ինչպիսին նա է, համարձակ, շիտակ,  
միշտ վտանգավոր է:

— Եվ այդ վտանգը կանխել չի՞ կարելի:

— Ինչո՞ւ կանխել: Ընդհակառակը, նրան պետք է օգ-  
նել:

— Բայց ինչպե՞ս:

— ՈՒիսկի դիմել նրա հետ միասին:

Մարկը չկարողացավ Պիտանին ասել.

«ՈՒիսկի դիմել — այու: Բայց դա ինչպե՞ս անել, եթե ես  
պարզապես ոչ մի բան չգիտեմ նրա մասին, եթե նա ինձ  
հաղորդակից չի դարձնում իր գաղտնիքներին»:

Մարկն ավելի է շափազանցում օտարության դառն  
զգացումը: Նա իրեն ասում էր.

«Բոլորից, բոլոր մարդկանցից նա ամենաքիչը ինձ է  
հավատում»:

Պիտանը, առանց պատասխանը լսելու, ճիշտ շմեկնաբա-  
նեց Մարկի լուսությունը: Նա ասաց.

— Տղաս, դու իրավունք ունես հպարտանալու քո մո-  
րով:

Մարկը, զայրացած, բղավեց.

— Դու կարծում ես քո թույլտվությա՞նն էի սպասում:

Նա մեջքով շրջվեց գեպի Պիտանը և գնաց, զայրացած  
թափահարելով ձեռքերը:

Աննետան զգալով, որ իր ուսերից ծանր բեռը գլորվեց,  
նորից հանգիստ, խաղաղ սկսեց ապրել իր տանը: Թվում  
էր, ոչ անվերջանալի պատերազմը, ոչ շրջապատողների  
տագնապը նրան չէին հուզում: Աննետան հաղորդակցվել  
էր նրանց վտանգներին, բայց իրեն պարտավոր չէր հա-  
մարում հաղորդակից լինել նրանց հայացքներին: Նա բա-  
վական գործեր ուներ: Ինչքան էլ որ սուր լիներ Սիլվիայի  
հայացքը, որը քրոջ բացակայության ժամանակ հետեւում էր

Մարկին, բազմաթիվ ժանր-մունք, բայց կարևոր հանգա-  
ժանքներ կային, որոնք միայն մոր աշխն է նկատում ամեն  
ինչի մեջ, ինչ իր երեխային է վերաբերում, նրա առող-  
ջական վիճակին, հագուստին։ Աննետան ստուգում էր Մար-  
կի սպիտակեղենը, շորերը, և խորամանկորեն ժըպ-  
տում էր, թերություններ գտնելով, որոնք վրիպել էին Սիլ-  
վիայի սուր աշքից։ Քիչ աշխատանք նա շթափեց՝ բնակա-  
րանը հավաքելու համար, որտեղ երկու տարի շարունակ  
ցեցն էր իշխել։ Սիլվիան քրոջը միշտ կար անելիս էր  
տեսնում կամ սենյակ հավաքելիս։ Երեկոները նրանք եր-  
կար-երկար զրուցում էին։ Բայց Մարկը որն աշխատում  
էր կից սենյակում, նրանց հետևում էր բաց դռան միջով։  
Նայելով մորն ու մորաքրոջը հավի ճուտիկի աշքով, որը  
կարողանում է կողքանց նայել, Մարկն այդ խոսակցու-  
թյան մեջ ոչ մի հատիկ չէր գտնում, որ կարելի լիներ կըտ-  
ցել։ բոլոր տեսակի անձնականի, մտերմականի մասին  
խոսված։ վերջացված էր։ Հիմա քույրերը խոսում էին ամե-  
նաառօրեական բաներից, հրատապ իրադարձություններից,  
ամեն տեսակ կանացի անհեթեթություններից, քուրզ ու  
փալասից, մթերքների գներից... Համբերությունը կորցնե-  
լով, Մարկը դուռը փակում էր։ Ո՞նց էին կարողանում նրանք  
ամբողջ ժամերով ժամժամել այդ նույն դատարկաւությունները։ Սիլվիան գեռ ոշինչ։ Բայց Աննետան, այդ կինը,  
նրա մայրը— նա, որ հենց նոր էր ուսկի ենթարկել կյան-  
քը և, գուցե, վաղը նորից այդ կյանքը խաղաթղթի վրա  
դնի, նա, ում վտանգավոր գաղտնիքները ինքը աղոտ կեր-  
պով կոահում էր, թեև չէր կարողանում ամբողջովին գլխի  
ընկնել— նա ավելի քիչ հետաքրքրություն չէր ցուցաբե-  
րում այդ դատարկ բաների նկատմամբ— հացի գների,  
յուղ և շաքար շինելու,— քան իր հաղտնի աշխարհի (որն  
ինքը թաքցնում էր որդուց լոկ կիսով չափ), Բանի որ Մար-  
կը իր խանդու հայացքով բռնեց այն կրակը, որը լույս էր  
տալիս կանթեղի ներսում։ Ինքն Աննետան, գուցեկ, դա չէր  
տեսել։ Բայց խոսում էր նա թե լուս, այդ կրակը լուս կեր-  
պով Աննետայի վրա լույս էր գցում...»

Tacet sed loquitur<sup>1</sup>.

Կանթեղն անազմուկ վառպում էր, գերեկվա լույսի ուանցին շեխն նկատում: Բայց բազեի ճուաք աշքը կտրելով անընդհատ նայում էր անձայն լուսարձակին, որն առկայժում էր ալեբաստրի էկրանի հետեւում... Որտեղի՞ց էին գալիս այդ շողերը, եվ ո՞ւմ համար էին փայլվլում...

Մի ուրիշ հոգի, գիշերայինը, նույնպես նկատեց խոտերում փայլող լուսատիկի լույսը և ձգվեց դեպի նա...

Ուրսուկա թեռնարդենը սանդուղքի վրա անակնկալորեն հանդիպելով ցրված Աննետային, երկշոտությամբ կանգնեցրեց նրան և, դիպչելով նրա ձեռքին. շշնջաց.

— Ներեցեք... ինձ չի կարելի արդյոք երբեք ձեզ մոտ գալ զրուցելու

Աննետան խիստ զարմացավ, նա զիտեր, թե ինչքան ամաշկոտ են այդ երկու երիտասարդ աղջիկները, թեռնարդեն քույրերը, և նկատել էր, որ նրանք ամեն կերպ խուսափում են իր հետ հանդիպելուց: Թեև սանդուղքը վատ էր լուսավորված, բայց Աննետան նկատեց հարեանի շփոթահար դեմքի կարմրությունը: Չեռնոց հագած ձեռքը, որ դրված էր Աննետայի արմունկին, դողում էր:

— Թեկուզ հենց հիմա: Եկեք գնանք,— վճռական ասաց Աննետան:

Վախեցած երիտասարդ աղջիկն արդեն ուզում էր նահանջել առաջարկում էր տեսակցությունը հետաձգել մի ուրիշ անգամվա համար: Բայց Աննետան բռնեց նրա ձեռքից և քարշ տվեց, տարավ իր հետեւից:

— Մենք մենակ ենք լինելու Ներս եկեք:

Աննետայի սենյակում Ուրսուկա թեռնարդենը շնչակտուր կանգ առավ, ամաշելուց մի տեսակ կծկված:

— Մենք շատ արագ եկանք: Ներեցեք: Միշտ մոռանում եմ... Վերև բարձրանալիս ես սովորաբար վազում եմ, գրոհով եմ նվաճում սանդուղքը... Նստեցե՛ք... Ոչ, այստեղ, այս անկյունում, լույսի դեմ, այստեղ մեզ համար ավելի

<sup>1</sup> Լոռամ է, բայց խոսում է (լատ.):

բայք կլինի մուշ, առեւ Հանդստացեր Տեսէք ինչպես եք հեռաւ:

Աննետան հայում էր նրան ժպտալով, փորձելով հանգըստացնել աղջկան, որը նստել էր կաշկանդված զիրքով, ամոթի զգացումից քար կտրած նրա կուրծքը ծանրորեն բարձրանում էր շորի պրկված կտորի հետ միասին: Աննետան առաջին անգամ ուշադրի դննեց այդ գեմքը, այդ մարմինը, որոնք ստեղծված էին գյուղական լայնարձակ կյանքի համար, բայց թառամել էին քաղաքում գտնվող տան շորս պատերի միջն անցած բանտարկությունից: Նրա դիմագծերը, կազմվածքը կոպտավուն էին, ծանր, բայց գյուղում, որևէ հողամասով տան մեջ, նրան շատ հեշտ կարելի էր պատկերացնել որպես կենսուրախ ու գործունյա աղջիկ, շրջապատված երիխաներով ու ընտանի կենդանիներով: Այդ հիանալի, երիտասարդ գեմքը հաճելի կլիներ, եթե լիներ առողջ ծիծաղկոտ, մտահոգված, ամուն արեկից սեացած ու ջլու մ քրտինքից խոնավացած ճակատով ու թշիկներով... Բայց ծիծաղի ու արեկի վրա փակ էր դրված: Արլունը երեսին շամաբել էր: Այդ պատճառով էլ առանձնապես աշխի էր ընկնում կճատ քիթը, հաստ շրթունքները, անդյուրաշարժ ու լիսկած, մի տեսակ կուշ եկած մարմինը, որը վախենում էր շարժվել, վախենում էր շունչ քաշել:

Տեսնելով, որ Ուրսուլան չի համարձակվում խոսել, Աննետան, որպեսզի նրան ժամանակ տա հուզմունքն հաղթահարելու, մի երկու բարեկամական հարցեր տվեց: Ուրսուլան պատասխանում էր ոչ տեղին, քաշվում էր, բառեր շէր գտնում: Նրա մտքերը հեռվում էին: Նա ուզում էր զրուցել ինչ-որ ուրիշ բաներից, բայց վախենում էր նույնիսկ մտածել այդ խոսակցության մասին: Ուրսուլան տառապում էր, նա միայն մի ցանկություն ուներ.

«Տէր իմ աստված: ոնց անեմ, որ փախչեմ»:

Նա տեղից վեր կացավ.

— Աղաշում եմ ձեզ... թույլ տվեք զնամտ: Ես շգիտեմ, թե դա հանկարծ որտեղից եկավ իմ գլուխը: Ներեցեք ինձ, ես ձեզ գործից գցում եմ...

Աննետան, բրդալով, բռնեց նրա ձեռքը.

— Այդ ինչեր եք ասում: Հանգստացեք: Պ՞ոք Ֆք ջտառ  
պում... Մի՛թե դուք ինձանից վախենում եք:

— Ոչ, ինձ ներեք, ավելի լավ է ես գնամ... Ես չեմ կազ  
բողանում խոսել... Այսօր չեմ կարող:

— Չեք կարող, մի խոսեք: Ես ձեզ ոչինչ չեմ հարցնում...  
Միայն խնդրում եմ ես մի քանի րոպե մնաք: Չէ՞ որ դուք  
ուզում էք ինձ այցելության գալ: Ահա ես էլ օգտվում եմ  
այդ առիթից: Հո չի կարելի այդպես. դեռ եերս շմտած,  
անմիջապես ուզում եք գնալ: Մենք ինչքա՞ն ժամանակ է  
իրար կողքի ենք ապրում—և ոչ մի խոսք իրար հետ չենք  
փոխանակելու ես այստեղ երկար ժամանակ չեմ մնալու  
նորից մեկնելու եմ: Գոնե թույլ տվեք հանգիստ նայեմ  
ձեզ: Մի ցույց տվեք աւեսնե՞մ ձեր աշքերը: Չէ՞ որ ես էլ  
իմն եմ ձեզ ցույց տալիս: Ի՞նչ սարսափելի բան կա դրանց  
մէջ:

Ուրսուլան, շփոթահար ու իրեն կորցրած, կամաց-կա-  
մաց հանգստանալով, սկսեց անհամբերությամբ ներողու-  
թյուն խնդրել իր ամաշկոտության և անքաղաքավարության  
համար: Նա ասաց, որ ինքը չի մոռացել այն անկեղծ մաս-  
նակցությունը, որ Աննետան ցուցաբերել է իրենց նկատմամբ  
անցյալ տարի, երբ իրենց դժբախտություն էր պատահել,—  
դա նրան հուզել է, նա ուզեցել է այդ մասին Աննետային  
նամակ գրել: Բայց չի համարձակվել իրենց ընտանիքում  
չեն սիրում ուրիշների հետ ժանոթություն հաստատել:

Աննետան քնքշորեն ասում էր.

— Իհարկե... Իհարկե... Ես հասկանում եմ...

Ուրսուլան, քիշ-քիշ համարձականալով, դադարեց կմկմա-  
լուց և, իր վրա ճիգեր գործադրելով, պատմեց, թե ինքն  
ինչպես է շորս տարի տառապել այս պատերազմի, ատե-  
լության, թշնամանքի պատճառով: Ու թեկ ինքը չի ճանա-  
չում Աննետային, բայց, շզիտես ինչու, թվում է, որ իր նոր  
ժանոթի համար նույնպես այդ ամենը խորթ է...

(Աննետան առանց մի խոսք ասելու կամացուկ բռնեց  
նրա ձեռքը):

...Բայց իր շուրջը նա տեղ չի գտնում, որտեղ ինքը  
ազատ կարող է շնչել: Նույնիսկ նրա հարազատները—

Նրանք շատ բարի մարդիկ են — բոլոր իրենց գիտավորությունները կևնարոնացրել են վրիժառության վրա (նա իրեն ուղղեց), — ոչ, դաժան պատժի վրա։ Դժբախտ որդիների մահը նրանց կատաղեցրել է։ «Խաղաղություն» բառը նրանց հանել է Հավասարակշռությունից։ Եվ բոլորից շատ կատադրությամբ լցված է նրա քույրը՝ Ժյուստինան, որի հետ ինքը մանկությունից միևնույն սենյակում է ապրում։ Նրանք միշտ էլ անկեղծ են եղել իրար նկատմամբ։ Ամեն երեկո քնից առաջ նա բարձրածայն աղոթում է։ «Աստված, կույս Մարիամ, սուրբ Միքայել, ջնջեցեք նրանց աշխարհի երեսից...» Դրանից կարելի է խելագարվել իսկ ինքը՝ Ուրսուկան, գեռ պետք է ձևացնի, թե միանում է այդ աղոթքներին, թե չէ իրեն կհանդիմանեն անտարբերության համար գեսի հարազատների դժբախտությունն ու երկու եղայրների մահը։

— Ոչ, ես անտարբեր չեմ... Հենց այն պատճառով, որ ես դժբախտ եմ, ուզում եմ, որ ուրիշները չտառապեն...

Ուրսուկան անկապ էր արտահայտում այդ սրտաշարժմտքերը։ Աննետան, որի համար դրանք նորություն չեին, համաձայնում էր դրանց հետ, արտահայտում էր դրանք ավելի պարզ։ Նրա յուրաքանչյուր խոսքը բեռկրություն էր Ուրսուկայի համար։ Նա լուռ լսում էր։ Եվ վերջապես, դյուրահավատությամբ հարցրեց։

— Դուք քրիստոնյա՞ն եք։

— Ոչ։

Այդ պատասխանը ապշեցրեց Ուրսուկային։

— Այս, տե՛ր աստված... Ուրեմն, դուք ինձ հասկանալ չեք կարող...

— Մանկիկ իմ, մարդկայինը հասկանալու և սիրելու համար կարիք չկա քրիստոնյա լինելու։

— Մարդկայինը.. Դա բավական չի... Մի՞թե շարիքը մարդկային չէ։ Իսկ մարդի՞կ... Ես վախենում եմ նրանցից... Մի նայե՛ք, թե ինչ դաժանություններ, ինչ սարսափելի բաներ են նրանք կատարում... Դրանք քավել կարելի է միայն Քրիստոսի արյամբ։

— Կամ մեր։ Ուզածդ մարդու արյամբ — տղամարդու

լինի դա թե կնոջ, — եթե նա իրեն զոհաբերում է ուրիշների համար:

— Եթե նա այդ անում է հանուն Քրիստոսի:

— Ի՞նչ նշանակություն ունի անունը:

— Բայց եթե դա աստծո անունն է:

— Եսկ աստված ի՞նչ արժեք ունի, եթե նա չի ապրում նրանց մեջ, ովքեր նրենց զոհաբերում են: Եթե այդ ժարգանցից թեկուզն մեկը — ևս ասում եմ. թեկուզն մեկը, — լիներ աստծուց դուրս, ինչքա՞ն նեղ կլինեին այդ աստծո սահմանները: Մարդկային սիրտը ավելի լայն կլիներ:

— Ոչ, ոչինչ աստծուց ավելի լայն լինել չի կարող, նաև բարին նրա մեջ է:

— Ուրեմն Ֆիայն բարիքը բավական է:

— Ո՞վ ինձ ցույց կտա, թե բարին ինչ է, եթե դուք աստծուն խլեք ինձանից:

— Սիրելիս, աշխարհում ես ոչ մի բանի համար չէի ուզի նրան խլել ձեզանից: Թող նա ձեզ լինի, ես նրան հարգում եմ ձեր մեջ: Մի՞թե դուք կարծում եք, թե ես ցանկություն ունեմ տատանելու ձեր հենարանը:

— Այդ դեպքում ինձ ասացեք, որ դո՛ւք էլ եք Հավատում նրան:

— Մանկիկ իմ, ես ինչպես ասեմ հավատում եմ մի բանի, որը չգիտեմ: Չէ՞ որ դուք չեք ուզում, որ ես ձեզ խարեմ:

— Ոչ: Բայց հավատացեք, հավատացեք, աղաշում եմ ձեզ:

Աննետան քեզշանքով ժպտաց.

— Ես գործում եմ, սիրելիս, ես հավատալու կարիք չունեմ:

— Գործել — կնշանակի հավատալ:

— Գուցե, Այդ դեպքում դա իմ հավատալու ձևն է:

— Գործողությունը, որը լուսավորված չէ Քրիստոսի լույսով, միշտ կարող է մոլորություն դառնալ կամ հանցագործություն:

— Եվ դուք կարծում եք: որ Քրիստոսը հավատացյալ-

Հերին հեռու պահեց մոլորություններից և հանցագործություններից: Այս չորս տարիներին:

— Ա՛խ, այդպիսի բան ինձ մի՛ ասեք: Ես գիտեմ, գիտեմ: Այնքա՞ն քիչ են իսկական քրիստոնյաները: Ամենից ախտորը դա է: Ինձ ժանոթ մարդկանց միջև հազիվ թե երկու հոգի գտնես: Դա ինձ վախեցնում է, սպանում է ինձ: Սոսկումն ու վիշտը փոթորկում են ինձ: Սոսկումն այս կյանքի հանդեպ: Սոսկումն այս մարդկանց առաջ: Ես կուզեի քավել դրանց տառապանքները: Ես շեմ կարողանում այլևս մնալ դրանց միջև, ես գործել շգիտեմ, ինչպես դուք տմեն մի գործողություն ինձ սարսափ է ներշնչում: Ես ստեղծված շեմ այս կյանքում ապրելու համար: Ես ուղում եմ գնալ: Ես կհեռանամ, կգնամ կարմելիտուհիների մենաստանը: Հայրս համաձայն է, մայրս լաց է լինում, իսկ քույրս դատապարտում է ինձ, բայց ես այլևս շեմ կարողանում ասլրել մերոնց հետ. Ինձ թվում է, թե նրանք ամեն բոպե տանջո՞ւմ են Հիսուս Քրիստոսին... Տե՛ր իմ աստված, ես այս ինչ եմ ասում: Ինձ մի՛ հավատացեք, տիկին Ռիվիեր... Նրանք ինձ սիրում են, ես էլ եմ սիրում նրանց, ես իրավունք չունեմ նրանց դատապարտելու... Ոշ, մի՛ լսեք ինձ... Ա՛խ, եթե դուք քրիստոնյա լինեիք...

Նա ձեռքերով երեսը ծածկեց:

Աննետան մոր նման սփոփում էր նրան, ձեռքը դրած նրա կոացած ծոծրակին: Նա ասում էր.

— Խե՞ղճ փոքրիկս: Այո, դուք ճիշտ եք:

Ուրսուլան գլուխը բարձրացրեց.

— Դուք ինձ շե՞ք կշտամբում:

— Ոշ:

— Լա՞վ է, որ ես գնում եմ:

— Գուցե, այդպես ձեզ համար ավելի լավ լինի:

— Եվ դուք ինձ շե՞ք մեղադրում, որ ես հեռանում եմ, ձեզ նման գործելու փոխարեն:

— Դա նույնպես գործողություն է: Ամեն մեկն իր ձևով է գործում: Ես նրանցից շեմ, ովքեր շեն համարում, թե աղոթքը գործողություն է: Լավ է, որ որոշ հոգիներում դեռ բլահպանվում է աստվածային հայեցության սրբազան կրա-

կը, որը քացում է ամենայն հավիտենականից մեղ անշառ տող արյան հոսանքի վրա դրված արգելակները: Դուք մեզ համար կաղոթեք, փոքրիկ աղջիկս, մենք ձեզ համար կգործենք եկ, գուցե, սլարդվի, որ մենք ու դուք կույր ու կաթվածահար ենք:

Ուրսուլան խոնարհվեց և երախտագիտությամբ համբուրեց նրա ձեռքը: Աննետան գրկեց նրան, Ուղեկցեց մինչեղուը: Ուրսուլան հառաջելով, ասաց.

— Եխ, ինչո՞ւ, ինչո՞ւ, դուք քրիստոնյա չեք:

Բայց դռան շեմին ավելացրեց.

— Դուք քրիստոնյա եք:

— Չեմ կարծում, — ժպտալով պատասխանեց Աննետան:

Ուրսուլան, նայելով նրան իր շողղողացող աշքերով, արտասանեց.

— Աստված ընտրում է նրան, ում ուզում է: Նա չի հարցնում, թե դուք ի՞նչ եք ուզում:

Աննետան իր մեկնելու ժամանակից ի վեր Ֆրանցից նամակ շնոր ստանում: Դա վշտացնում էր, բայց շնոր զարմացնում Աննետային: Այդպիսին է, ոչինչ անել չես կարող: Հասունացած երեխան նեղացել է: Նեղացել է ի վրիժառություն Աննետայի: լուսաթյունը ֆրանցի հուսալի զենքն էր, այդ զենքը կպատճի Աննետային և, գուցե, ստիպի, որ նա շուտով վերադառնա: Աննետային այդ տակտիկան ծիծաղ էր պատճառում, և (խորամանկության դիմաց խորամանկություն) Աննետան ձեացնում էր, որ դա չի նկատում: Նա ֆրանցին զրում էր շարաթը մեկ անգամ հավասարակշիռ, սրտագին, կենսախինդ ոռնով և իր սլանները շնոր վերակառուցում: Աննետան ֆրանցին տեսնելու ցանկություն ուներ, բայց նա խելազարություն էր համարում նրա մոտ զնալ հիմա, երբ այդքան պարտականություններ նրան պահում էին Փարիզում: Նա որոշել էր սպասել մինչև ամառ, երբ ինքն իր առաջ արդարացուցիչ հիմք կունենա. ուղևորությունը գեպի լեռները օգուտ կբերեր Մարկին, որն անշափ երկար ժամանակ չորս պատերի մեջ փակ էր մնա-

ցել: Թայց նա այդ սպասումից նեղվում էր ավելի, քան  
ինքն այդ կուզեր:

Նրա վերադարձից հետո արդեն շորրորդ շաբաթն էր  
սկսվել, երբ հանկարծ ֆրանցից նամակ ստացվեց... Վեր-  
ջապե՞ս: Աննետան ժառանգով մտավ իր սենյակը ընթեր-  
ցելու ինչքա՞ն հանդիմանություններ, զայրույթի ի՞նչ փո-  
թորիկ է հիմա նա տանելու...

Ոչ, Ֆրանցը նրան ոչ մի բանում չէր կշտամբում: Եվ  
չէր զայրանում նրա վրա: Մարմնացած հանդարտություն,  
սիրալիր վերաբերմունք, բարեկրթություն: Ֆրանցն իրեն  
լավ էր զգում: Եվ Աննետային խորհուրդ էր տալիս մնալ  
Փարիզում...

Քանի գեռ նամակ չկար, Աննետան հանգիստ էր: Ստա-  
ցած նամակը կարդալուց հետո նա սկսեց անհանգստանալի  
ինչո՞ւ — նա ինքն էլ չէր հասկանում: Նա պետք է որ  
ուրախանար. Ֆրանցը անհամբերություն չէր դրսեւրում:  
Բայց հիմա ինքն Աննետան այլևս համբերել չէր կարո-  
ղանում: Նա իրեն զսպել չկարողացավ, որպեսզի հենց  
նույն բոպեին նամակին չպատասխանի: Իհարկե, նա ոչ մի  
խռոք շասաց այն մասին, ինչն իրեն անհանգստացնում էր  
(ասենք ինքը գիտե՞՞ր, թե ինչ է անհանգստացնում իրեն): —  
Աննետան կատակում էր. քանի որ Ֆրանցն այնքան էլ չի  
փափագում տեսնել իրեն, ուրեմն, ինքը մինչև տարվա վեր-  
ջը չի գնա: Նա սպասում էր, որ հետադարձ փոստով զայ-  
րույթով լի նամակ կստանա... Ոչ բողոք, ոչ նամակ չե-  
զավ:

Աննետան հանգիստը կորցրեց: Նա հաշվում էր մինչև  
ամառ մնացած շաբաթները: Աննետան տիկին ֆոն Վինտեր-  
գրյունին նամակ գրեց: պատրվակ բերելով այն, որ ինքն  
ուզում է համոզվել, թե ճի՞շտ է արդյոք գրում Ֆրանցն իր  
առողջության մասին: Տիկին ֆոն Վինտերգրյունը պատաս-  
խանեց, որ սիրելի պարոն ֆոն Լենցը միանգամայն առողջ  
է, որ կյանքից հեռացածների պատճառած վիշտը այդ հա-  
սակում, փառք աստծո, արագ է ցնդում, որ նա սիրալիր է  
և կենսախինդ, ապրում է հիմա նրանց հետ միևնույն տանը

և նրանք ֆրանցին իրենց ընտանիքի անդամ են համարում...

Աննետան հանգստացավ թրանցը համար: Հանգստացավ ավելի շատ, քան ուզում էր: Վատ քնից Աննետան այդ գիշեր, ասենք հաջորդ գիշերները նույնպես: Նա ուսերը թոթվում էր և իրենից վանում էի ժիտք, որը չփառես պատեղից էր հայտնվել: Բայց միտքը, որը շատ կպշուն էր, մի ուսակ անորոշ, մոռացվում էր և մեկ էլ տեսար նորից չը հայտնվում: Սեփական արժանապատվության զգացումը մի ամբողջ շաբաթ հաղթահարում էր: Հետո, մի գեղեցիկ առավոտ արթնանալով: Աննետան անձնատուր եղավ: Նա որոշեց մեկնել: Առանց որևէ պատրվակի և արդարացման: Պետք է...

Հենց այդ օրերին Մարկը լի էր մոր հետ մտերմանալու այրող ցանկությամբ: Առաջին շաբաթները նա բաց թողեց— հույսը դրել էր պատեհ առիթի վրա, որը ոչ մի կերպ չէր ներկայանում: Հիմա Մարկն արդեն մտածում էր, թի ինչպիս խթանի այդ առիթը: Բայց այդպիսի բաները հեշտ է երկուսով անել: Իսկ նա խաղի մեջ մասնակցում էր մենակ: Նրա մայրը այդ խաղի նկատմամբ միանգամայն անտարբեր էր: Մարկը կրնկակոխ հետեւում էր նրան, դարանակալում էր մոր հայացքը, կոահում էր նրա ցանկությունները Մի՞թե նա չի նկատի որդու քնքշությունները, նրա հոգատարությունը: Չէ՞ որ նա առաջ այնքան էլ շոայլ չի եղել գրանց մեջ: Հնարավոր է, որ մայրը նույնիսկ տեսնուք էր գրանք, հնարավոր է, որ նա առանց գիտակցելու նշում էր այդ տպավորությունները, պահպանում էր գրանք ավելի բարեհաջող օրերի համար, երբ նա ժամանակ կունենա... Բայց հիմա Աննետան ժամանակ չուներ: Հոգսը կըրծում էր նրան: Մարկն առանց հաջողության փորձում էր իր կողմը վերադառնել իրենից սահող-գնացող այդ հոգին: Նա կորցնում էր արիությունը: Չի կարելի, որ անվերջ մեկն ընկնի սռաջ պետք է, որ խաղընէերը ձեզ նույնպես ոգնի... Եվ ահա նա, տեղավորվելով որևէ անկյունում, մոռացված, նայում էր այնտեղից մոր կիսադեմին, որը կա-

ըում էր Մարկի կուրտկայի կտրված կոճակները (Աննետան հոգում էր որդու մասին, թեև մտքերն զբաղված էին ուրիշներով): Այս որքան լավ կլիներ, եթե Աննետան մտածեր Մարկի մասին և ուշադրություն շդարձներ նրա իրերին... Մարկը զննում էր հոգսերով մոռայլված մոր դեմքը... Ի՞նչ հոգսերով: Ի՞նչ հիշողություններից է, որ ծալքեր են առաջացել նրա այտերին: Ի՞նչ կերպարանք անցավ նրա աշքերի առջևով: Ուրիշ ժամանակ սրատես Աննետան կը ըներ իրեն հետեւղ այդ անքթիթ հայացքը: Բայց նրա զդացմունքներն արդեն այստեղ շէին: Նա աշխատում էր մի տեսակ կիսաընդարմացած վիճակում: Երբ լոռությունն սկսում էր Աննետային ճնշել, նա Մարկին էր դիմում մի հարցով, որը սովորաբար տալիս են մայրերը, և բացակա տեսքով լսում էր պատասխանը կամ որդուն խորհուրդ էր սալիս զրունել, բաց շթողնել հիանալի եղանակը: Եվ հենց այն ժամանակ, երբ Մարկը պատրաստվում էր խոսելու: Նա տեղից ելնում էր ընկճված: Մարկը ոչ մի բանում չէր կարող մորը կշտամբել: Այո, քնքուշ է— և օտար: Մարկն ուզում էր նրան գրկել, մի լավ ցնցել, կծել այտը կամ ականջի ծայրը, որպեսզի մայրը ցավից ճշար:

«Ես այստեղ եմ: Համբուրի՛ր կամ խփիր ինձ: Սիրիր կամ ատիր: Բայց այստեղ մնա, ինձ հետ: Վերադարձի՛ր...»:

Աննետան շէր վերադառնում:

Մարկը որոշեց իրեն հավաքել: Նա մոր հետ կիսուի մյուս կիրակի օրը, ճաշից հետո:

Եվ հենց այդ կիրակի մայրը անսպասելի կերպով առավոտյան նրան հայտարարեց, որ մեկնում է... Աննետան ճամպրուկն արդեն դասավորում էր: Շփոթահար նա վկայակոչեց Շվեյցարիայից ստացած լուրը. ստիպված է ժամանակից շուտ մեկնել: Նա մանրամասնությունների մեջ շնորհակալ էր Մարկը հարցուփորձ շարեց... նա զարմանքից քար էր կտրել:

Ամբողջ շաբաթը Մարկն սպասում էր այդ օրվան, նա վատ էր քնում. գիշերը, արթնանալով, մտքի մեջ կրկնում էր այն, ինչ մորը ասելու էր: Եվ ահա... նորից անշատում— և ավելի շուտ, քան նա խոսել սկսեց մոր հետ: Ախր

վերջին օրը, իրարանցման ու աճապարանքի ժամանակի: Վարդեն Հնարավոր չէ: Մարկը պետք է ժամանակ ունենա, մի ամբողջ երեկո, որպեսզի իր մտքերը ժողովի որպեսզի զգա, որ մայրն ամբողջովին իր հետ չէ: Մայրն ինչպես էարող է լսել նրան, ցրված հայացքով հետևելով ուղևորման րոպեին մոտեցող ժամացույցի սլաքին...

Մարկն այնքան էր սովորել զսպել իր զգացմունքները, որ իրեն շշմեցնող նորությունն ընդունեց առանց զարմանքի արտաքին նշանների: Նա լուս օգնեց մորն իրերը դասավորել: Միայն վերջին րոպեին զգաց, որ կարող է տիրապետել իր ձայնին: և անկաշկանդ ասաց.

— Բա զու ինձ խոստացել էիր մնալ մինչև դպրոցական արձակուրդները... Դու ինձանից երեք ամիւս գողացար...

(Այդ ցավոտ մտքին նա այնքան հաճախ էր վերադառնում):

Աննետային այդ տոնը խաբեց — նա որդու խոսքերն ընդունեց որպես մտերիմ քաղաքավարության սովորական արտահայտություն: Այժմ, անշատման այս ժամին, համոզված այն բանում, որ մայրը գնալու է, Մարկն ասում է.

«Մնա այստեղ»:

Աննետան պատասխանեց նույն բարեկամական տոնով.

— Ընդհակառակը, ես երեք ամիս նվիրում եմ քեզ:

Այդ անարդարությունը խիստ խոցեց Մարկին: բայց նա ոչինչ շպատասխանեց: Ի՞նչ միտք ուներ առարկել: Զէ՞ որ մայրն ասաց այն, ինչ նա ինքն էլ կմտածեր կես տարի առաջ: Որտեղից Աննետան իմանար, որ Մարկն այլևս այն չէ:

Հետագայում մայրն հիշում էր, թե ի՞նչ լուրջ արտահայտությամբ էր Մարկը նայում իրեն՝ վագոնի լուսամուտի մոտ կանգնած: Սիլվիան նույնպես կայարանում էր, նա անընդհատ բլրլացնում էր, Աննետան պատասխանում էր նրան: Քրոջ հետ խոսելով, նա տեսավ իր անշարժ, համրորդուն, որն աշքը չէր հեռացնում իրենից: Աննետան դեռևս զգում էր իր վրա այդ հայացքը, երբ գնացքը սլա-

ցավ չիշերվա խորքը, և նրկու կերպարանքներ, որոնցից  
ձեռքը թափահարում էր միայն մեկը, լուծվեցին խավա-  
րում:

Մարկը տուն վերադաշտվ ժորաքրոջ հետ: Սիլվիան  
մտածում էր բարձրածայն, առանձնապես շնետելով իր  
բառերին: Նա սովորել էր (նույնիսկ շափից ավելի) քրոջ  
որդուն ընդունել որպես տղամարդու նա ասում էր.

— Բարեկամս, մենք արդեն նրա համար գոյություն  
շունենք: Նա հիմա ինչ-որ մի ուրիշի մասին է մտածում:  
Նա ինչլահեղ սիրտ ունի:

Այդ խոսքերը Մարկին ցավ պատճառեցին: Նա Սիլ-  
վիային կտրուկ ընդհատեց.

— Դա նրա իրավունքն է:

Մարկն արդեն Սիլվիայից լսել էր ուզմագերու պատ-  
մությունը. նրան հայտնի էր, որ Սիլվիան, ինչպես և մյուս-  
ները, ամեն ինչ հանգեցնում է սիրային արկածների: Նա,  
բոլորից միակը, մտածում էր այլ կերպ: Միայն Մարկն էր  
հավատում, որ իր մայրը ենթարկվել է ավելի վեհ ուժի:  
Եղ Սիլվիայի ծաղրական տոնը նրան այնպես վիրավորեց,  
կարծես թե Կեսարի կնոջն էին կասկածել, Բայց վեճերի  
մեջ մտնելու փոխարեն, նա գերադասեց մորն արդարաց-  
նել, ինչ էլ որ նա արած լինի...

«Դա նրա իրավունքն է... «Մենք նրա համար այլևս գո-  
յություն չունենք...»: Իմ մեղքն է... ես կորցրի նրան: «Mea  
cuius»:

Բայց եթե Մարկը զղում էր, ապա լոկ նրա համար,  
որպեսզի իսկույն եեթ բարձրացնի զլուխը և ասի.

— Ես վազ թե ուշ կվերաբարձնեմ կորցրածս, նրա հա-  
մաձայնությամբ դա լինի թե բռնությամբ:

Ճանապարհին Աննետան հանգիստ էր: Նրա մեջ հիմա  
դաստիարակվել էր տանջալից մտքերն իրենից թոթափե-  
լու բնազդական կարողություն. նա դրանք չէր նետում,  
բայց ժամանակավորապես դնում էր մի կողմ:

Միայն կայարանի մոտ էր, որ նա տագնապ զգաց: Խո-  
նարձվելով սլացող գնացքի լուսամուտին, Աննետան նա-

յում էր, թե ինչպես է իրեն մոտենում ծանոթ, խաղալիքի նման կայարանը... Այո, ամեն ինչ նույնն էր, ամեն ինչ այնպես էր, ինչպես տպավորվել էր նրա հիշողության մեջ: Խաղալիքի նման կայարանը կանգնած էր իր տեղում: Բայց նա չկար...

Սահմանից Աննետան Ֆրանցին հեռագիր էր ուղարկել իր գալու մասին: Բայց այն պատերազմական ժամանակները աստված-բանբերը ոտքերին թևերի փոխարեն կապարե ներբաններով ծանր սապոդներ ուներ... Եվ մի՞թե կտրելի էր հույս դնել սիրելի պատանու՝ Ֆրանցի վրա: Աննետան չէր զարմանում: Այնուամենայնիվ նա հիասթափված էր:

Աննետան դուրս եկավ ճանապարհ, որը տանում էր դեպի շալե, Ճանապարհի կեսն անցնելուց հետո նա նկատեց մոտեցող Ֆրանցին: Բերկրանքի զգացումը բռնկվեց և նույն վայրկյանին հանգավ. Ֆրանցը մենակ չէր, նրան ուղեկցում էր օրիորդ Վինտերգոյունը: Ֆրանցը, մի փոքր առաջ ընկնելով նրանից, համբուրեց Աննետայի ձեռքը և նուրբ քաղաքավարությամբ ներողություն խնդրեց ուշանալու համար: Աննետան ուղեց ձեռ առնել նրան, բայց լեզուն կալ ընկավ. Աննետային հետեւում էին ուրիշ աղջկա աշքեր: Նա շրջվեց: Ֆրանցի ուղեկից աղջիկը, հպարտորեն շտկվելով, սպասում էր: Աննետայի աշքերը հանդիպեցին երկնագույն խիստ աշքերի հետ, որոնք նրա դեմքին շփոթվածության հետք էին փնտրում: Երկու կինն էլ լարված ժպտացին, փոխանակելով միմյանց հետ մի քանի նրբակիրթ սիրալիրություններ: Ճանապարհ ընկան երեքով: Բոլորն էլ իրար հետ սիրալիր էին: Շաղակրատում էին դեսից-դենից: Աննետան հետագայում չէր կարողանում հիշել, թե ինչի մասին էին խոսում: Տանը Աննետային մենակ թողեցին՝ բացատրելով դա այն հարմար պատրվակով, որ նա հանգստի կարիք է զգում, իսկ Ֆրանցը քաղաքավարությունից աղջկան տուն ուղեկցեց: Պայմանավորվեցին հավաքվել տիկին Վինտերգոյունի մոտ, որը Աննետային ընթրիքի հրավիրեց:

Աննետան մտնելով իր սենյակը, մնաց հայելու առաջ

կանգնած։ Գլխարկով, ճանապարհորդական վերարկուն հագին, նա նայում էր, առանց իրեն տեսնելու։ Մտածում էր... Ոշ, նա չէր մտածում... Նրանից դուրս պրծավ ներզային մի ծիծաղ, նա փորձում էր իրենից թոթափել հիպ։ Նոսային վիճակը, բայց նույն բոպեին նորից այդ վիճակի մեջ էր ընկնում։ Հայելուց նա պոկվեց սոսկ այն պատճառով, որպեսզի քարանա լուսամուտի մոտ, նայելով լեռներին ու երկնքին, որոնք նա դեռ չէր տեսել։ Գլխարկն ու ձեռնոցները նա այդպես էլ չհանեց։ Հանկարծ նրա վրա մի հոգնածություն ընկավ... Դա նրա մեջ մի դատարկություն փորեց։ Մտածել կարելի կլինի վաղը...

Բայց մտածել ստիպված եղավ երեկոյան, ընթրիքի ժամանակ— մտածել այն մասին, թե ինչպես ուրիշներից թաքցնել իրեն համակած միտքը։ Կնշանակի, ինքն արդեն ամեն ինչ հասկանում էր... Որքա՞ն տանջալից էր այդ սիրալիր շաղակրատանքը։ Աննետային հարցակոխ էին անում ուղևորության, Փարիզի, տրամադրությունների և մոդաների, մթերքների գների և պատերազմի տեղողության մասին։ Խոսում էին, խոսում էին և պարզ երևում էր, որ բոլորն էլ (գուցե բացառությամբ Ֆրանցի) ստում են։ Որքան էլ երկու կանայք ջանում էին միմյանց շնայել, այնուամենայնիվ։ Աննետայի հայացքը անընդհատ խաշաձևվում էր իրեն հետեղ աղջկա անտանելիորեն ծանր հայացքի հետ։ Աննետայի դեմքին ոչ մի ծալք չկար, որը նա չնշեր։ Բայց նա այնքան շգտավ, որքան կուզենար գտնել։ Պայքարի տաքարլունությամբ հրահրված Աննետայի հոգնածությունը անհետացավ։ Նրա նորք մաշկը նորից սկսեց շողողակթարմությամբ, ոսկեգունեց։ Աննետան ժպտում էր, նա վստահություն զգաց իր մեջ, կարծես ուժերով լցվեց, երիտասարդացավ։ Իսկ աղջիկը թվաց ավելի մեծ, քան իրականում էր։ Նրա դիմագծերն ավելի խստացան։ Նրա գոռող վստահությունը խառնվեց ինչ-որ ջղային լարվածության։ Նա աշխատում էր ավելի ցայտուն դարձնել իր առավելությունները։ Բայց չափը անցկացնելով, որանք լրիվ ոչնչացրեց։

Ֆրանցի հետ նա մի տեսակ ընդգծված մտերմավարի

էր պահում իրեն։ Աննետան մի քիչ նոթերը կիտեց։ Դա երիկա ֆոն Վինտերգրյունի համար աննկատելի շմնաց, նա իր հաշվին մի միավոր գրանցեց, Բայց դա նրան քիչ էր։ Եթր սեղանի մոտից վեր էին կենում, նա, իր անձնապաստանության պատճառով սխալ թույլ տվեց։ Երկշուր ու ցրված Ֆրանցին մի կողմ տարագ տիկին Ռիվիերից, որին Ֆրանցն այնպես էր զննում, կարծես հենց նոր էր հայտնաբերել։ Առանձնանալով նրա հետ փոքրիկ, կից հյուրասենյակում, էրիկան Ֆրանցին գերի վերցրեց։ Տիկին ֆոն Վինտերգրյունը աշխատում էր շեղել Աննետայի ուշադրությունը, որի հայացքը հետևում էր էրիկային։ Շինծու ծիծաղով ու թեքվելով դեպի Ֆրանցի ականջը, աղջիկը, թվում էր, հայտնում է նրան ինչ-որ դավադրական գաղտնիքներ և իր խեթող շողշողուն հայացքով սահում էր Աննետայի դեմքի վրայով։ Տիկին ֆոն Վինտերգրյունը շշնջում էր.

— Այս սիրելի երեխաները, Սրանք շեն կարողանում անջատվել մեկը մյուսից։

Նա զգուշությամբ տիկին Ռիվիերին հարցուփորձ արեց Ֆրանցի վերաբերյալ, բայց միևնույն ժամանակ կատարյալ լավատեղյակություն ցուցաբերեց նրա դրամական գործերի և ազգակցական կապերի մասին։

Աննետան անխոռվ ու հանգիստ իր բոլոր շարժումների մեջ, բայց զայրութիւնի փոթորիկը հոգում, տարօրինակության հասնելու շափ պարզ ամեն ինչ տեսնում էր իր շուրջը, կույր լինելով այն բանի հանդեպ, ինչը ալեկոծվում էր հենց իր մեջ։ Նա հանգիստ տեղից վեր կացավ։ Շարունակելով խոսակցությունը, սկսեց նայել դաշնամուրին դրված լուսանկարները։ Մեքենայաբար բացեց գործիքի կափարիչը, որ նայի մակնիշին։ Մեքենայաբար փորձեց, մատներով սահեց ստեղների վրայով։ Եվ հանկարծ հարվածեց դրանց... եղ ոչ միայն դրանց։ Այդ երեքից ամեն մեկն ընդունեց այդ հարվածը ուղղակի իր կրծքին։ Օտար կինը շպրտեց նրանց երեսին։

«Ես այստեղ եմ»...

Քամու տիրական պոռթելում... Երեք հզոր ակորդ։ Արթնացած կրքի երեք ճիշ... Հետո լուսություն, տրտունջ... Ամա-

ի երկինքը խոյացող լեռների գագաթներից տրտումցն այդ, ինչպես ամպերի շղթա, հոսում է դանդաղ ու հանգչող, ինչպես արպէջու: Կախարդական ցանցը սուզվում է, բռնելով հոգիները...

Աննետան ինքն ընկնելով այդ ցանցի մեջ, լսում էր, խոնարհված զրնգացող անդունդի վրա, թե ինչպես են պատահական ակորդները միահյուսվում ու գառնում «Lamentatio»— «Մանֆրեդի» ուվերտյուրայի սկիզբը:

Ֆրանցը նետվեց գեղի Աննետան, էությամբ երաժիշտ, ինչպես բոլոր գերմանացիները, նա չդիմացավ մոգական կողին: Նա հուզված նայում էր ոգիներին կանչող Ցիրցեային...

Աննետան արդեն երկար տարիներ շէր նվազել երիտասարդ ժամանակ նա լավ երաժշտու՞ի էր: Բայց հարկադրված եղավ վաճառել իր հին դաշնամուրը: Հոգսերով լի տարիները, ծանր աշխատանքը նրան ազատ ժամանակ քիչ էին թողնում նվազելու համար: Իսկ պատերազմի ժամանակ նրա մեջ նույնիսկ զզվանք էր առաջացել գեղի երաժշտությունը: Նրան թվում էր, թե համընդհանուր աղետի ժամանակ նվազելը մեղք է: Երբ նա պատահաբար բացում էր դաշնամուրը, այնպես թաքուն էր նվազում, կարծես հանցագործություն կատարելիս լիներ: Բայց ձայների իշխանությունը, քանի որ բանականությունը դատապարտում էր նրան: դառնում էր ավելի ուժեղ: Այդպիսի բոպեներին երաժշտությունը, կարծես, տապալում էր Աննետային և, ինչպես սիրեցյալ կնոջ, որն այրվող շրթունքներով անշարժացած է, սեղմում էր նրան իր գրկում: Աննետան զգում էր, թե ինչպես է իրեն տանող հեղեղը եռում, և միայն գիտակցության ծայրով հետեւում էր ետ փախչող ափերին ու վտանգավոր հորձանուաներին: Մարմինը դառնում էր կապանքված, կաշկանդվում էր: Իսկ կամքի ամբողջ ուժը կենտրոնանում էր հայացքի մեջ...

Այդ անհանգիստ, այդ խիստ հայացքը կտրվեց ստեղներից, որոնցից հորդում էր ձայների ալիքը, և դանդաղ նա-

<sup>1</sup> Տրտում (իտ.):

յից բոլոր երեքի դեմքեղին հուզված հնագանդվաճ ֆրանշի. Երիկայի արին զայրույթի, ու առսափը լափում չին, և զարմացած մոր որք լուծում էր փնտրում... Աննետալի հայացքը ժիսրճվում էր նրանց մեջ, իսկ հոգու գեղ գեռ շարունակում էր խոսել նրա ձեռքերով...

Պրելյուդիայի այդ տեղում, որտեղ էլեգիական «Lamento»-ն դառնում է տենդագին պոռթկում, որտեղ արագանուն է ոլիմը, հասունանում կիրքը և ահազանգը աղդարարում է ահնդ տարերքի ներխուժումը. Հենց նույն այն րոպեին, երբ փլիքում է ամբարտակը. Աննետան ընդհատեց նվազը, նրա մատները ֆրազի կիսում հանկարծ քարացան ստեղների վրա: Վրա հասած լոռության մեջ ակորդների ոգիները դեռ քարշ էին տալիս չարդված բեներ... Բայց թեներն ընկան, կախվեցին... Վերջին թրիուացող արձագանքներ.. Աննետան տեղից վեր կացավ: Նա իրեն՝ ծիծաղելի թվաց...

Ֆրանցը շերմ ու շփոթահար նրան խնդրում էր շարունակել: Տիկին ֆոն Վինտերգրյունը առանց որևէ խանդավառության իրեն ստիպեց քաղաքավարի պաշտպանել այդ խնդրանքը: Երիկան լուս էր, նրա բերանը թվում էր կատաղած, շրթունքները սեղմված էին: Աննետան նայեց նրանց, հետո, սառը ժպտալով, ասաց.

— Գնամ իմ սենյակը: Հոգնել եմ:

Աննետան հայացքով կանգ առավ Ֆրանցի վրա, որը հնագանդ երեխայի տեսք ուներ.

— Ուղեկցեք ինձ:

Գնալիս նա աղջկա աշքերում թախծալի սարսափի, ատելույուն տեսավ...

Նրանք գնում էին կողք-կողքի, պաղ աստղերի տակ: Լուս էին: Տարածության անդունդը, որ փովել էր նրանց շուրջը, թվում էր ծայների անդունդի շարունակությունն է: Գիշերային էրեք<sup>1</sup> և հրե ձկներ... Նրանք միմյանց ոչ մի խոսք չասացին մինչև սենյակի շեմը... Խավար... Նրանք այդ խավարի մի մասնիկն էին... Ֆրանցը մոթմոթաց.

<sup>1</sup> Գիշերային էրեք — հին հունական դիցաբանության մեջ մեռածների օթևանն է:

— Բարի գիշեր...

Հանկարծ նրա առջև մի ստվեր նետվեց — և խոտաղավ նրա շուրջը, նրանց շրթունքները միաձուլվեցին...

Աննետան անհետացավ: Ֆրանցը մենակ մնաց փակված դռան առաջ, նա սուզվեց խավարի մեջ...

Գլխում առանց որևէ մտքի նա բարձրացավ իր սենյակիր: Ոչ, ոչ: Պետք չէ մտածել: Պեռ չի կարելի...

Ցուրտ էր, Մութի Հոգնածությունը ճնշում էր, ինչպես զիրեզմանաքար: Թանձր խավարը ողողել էր գիտակցությունը. Աննետային թվում էր, թե ինքը սուզվում է հավթալմի թանձր ալիքների մեջ... Ծանր ձեռքերով նա զգայնորեն պոկեց զցեց վրայից շորը և չվերցրեց, Գլուխը զնելով բարձին և լույսն անցատելով, նա սկ երկնքում տեսավ Կառավարին, և նրա ուղեղում փայլատակեց կայծակը. դա արդեն եղել էր, դա անցյալ է... Կարծես բար պոկվեց... Աննետան ընկավ...

Բայց հենց այդ ակնթարթին (ակնթա՞րթ էր արդյոք միայն) կծկված սիրտը ծառու արեց գիտակցությանը: Աննետան տհասավ, որ նստած է անկողնու վրա, ձեռքերը կըրծքին սեղմած...

— Ոչ! Դա անհնար է... — ճշում էր նա:

Ի՞նչն է անհնար... Նա սպասում էր, մինչեւ սրտի խփոցը անցնի: Բայց այդ խփոցն անցնում էր և նորից սկըսվում: Եվ մինչ նա սպասում էր, Կառավարը շրջվելով, հոքիզոնից գլորվեց: Միայն հետեւ անիվն էր, որ դեռ մնում էր ըլրի կատարին... Աննետայի սեղմված մատները կուրծքը ճանկուտում էին, նա շարունակում էր կամացուկ տրնքալ:

— Ոչ, դա անհնար է...

Ի՞նչն է անհնար... Աննետան գիտեր ի՞նչը...

«Կնշանակի ես ինձ խարե՞լ եմ: Սուղա՞կ եմ ընկել...՝ Նորից... Կնշանակի ես սիրե՞լ եմ նրան»...

Ուրեմն, ահս թէ ինչ էր ծածկվում մայրական սիրով, որով նա իրեն խարում էր: Ուրեմն, նրանք կուահեցին — Մարսել Ֆրանկը, Միլվիան, բոլոր ալք անբարոյական փա-

թիգեցիները, որոնք իրենց ծաղրասեր խելքով նախազգահցին նրա նվիրվածության անմաքուր պատճառը...

«Թայց չէ որ ես իսկապես էլ մոռանում էի ինձ, ես տըրավում էի ամբողջովին, պարզե շապասելով, ես ինձ անշահախնդիր էի համարում... Իսկ շահախնդրությունը գողի նման սողոսկեց իմ տունը: Ես նրա մեղսակիցն էի, ես ձեացնում էի, թե քնած եմ, իսկ ինքս լսում էի կրքի գողեգող մոտեցող քայլերը: Ինձ հավատացնում էի. «Ես նրան սիրում եմ հանուն այն մյուսի...»— իսկ սիրում էի իմ հաճույքի համար: Ես ուզում եմ նրան վերցնել: Ուզո՞ւմ եմ... Մի՞թե ծիծաղելի չէ: «Ես» ո՞վ եմ: Ո՞վ է «ուզում»... Ես, իմ ճերմակած մազերը, մարմինը, որ ծածկված է ճանապարհի փոշով, ես, իմ աննշան փորձով ու տառապանքներով, ես, որ բաժանված եմ նրանից քսան տարվա տարածությամբ: Այդ երեխայի աշքով դա, ըստ երեսութին, անշափելի է... Ամոթ է և ցավալի...»:

Աննետան ճշմված էր սեփական նվաստացման զգացուածով:

Թայց հետո հանկարծ վրդովված զլուխը ետ գցեց.

«Ինչո՞ւ... Մի՞թե ես այդ ցանկանում էի: Մի՞թե ես այդ փնտրում էի... Ես ինչո՞ւ եմ պարտված: Ինչո՞ւ եմ ես ամբողջովին բոցավառվում: Որտեղի՞ց է սիրո այդ ծարավը: Այդ քաղցած կիրքը: Ինչո՞ւ է ինձ շծերացող սիրտ տըրաված այս ծերացող մարմնի մեջ...»:

Աննետան ձեռքերով սեղմում էր կուրծքը: Ինչպե՞ս հասնել բնությանը— այդ սարդին, որը քեզ պահում է: Եթե նա այդ մարմնում է— Աննետան կխոշտանգի սեփական մարմինը: Թայց մի՞թե ուռկանով օվկիանոսը կրոնես:

Աննետան զայրացավ.

«Ես սիրում եմ... Այո, սիրում եմ... Ես գեռ արժեմ, որ՝ ինձ սիրեն... Թավական է հիշել այդ աղջկա խանդը, սարսափիը... Ես նրան բռնել եմ— և պահում եմ: Եթե ես ուզենամ, նա իմը կլինի: Ես ուզում եմ: Ես սիրում եմ: Դա իմ իրավունքն է,

Թրավո՞ւնքը: Նրան հանկարծ զարմացրեց այդ ժիծառղելի բառը: Իսկապէս որ դա հնարանք է, որ հորինել

մարդը, երբ հասարակություն էր ստեղծում։ Ազուտամբած ստրուկի կարմիր գրոշը անվերջանալի պատերազմում, որը դեռ Պրովմենթեսի ժամանակներից միշտ պարտությամբ էր վերջանում։ Կամ թե չէ կեղծավորությունն ավելի ուժեղի, որը ոչնչացնում է ավելի թուլլին։ Հիմնահատակ կործանում է նրան, քանի դեռ ինքը չի կործանվել։ Բնության համար իրավունք գոյություն չունի։ Այդ անտարեր ուժը սնվում է միլիոնավոր կենդանի էակներով։ Աննետան նրա գոհն էր— միլիոնավորներից մեկը։ Նա կարող էր իր պարտությունը ուրիշների հաշվին հետաձգել մի օրով, մի ժամով։ Բայց այդ պարտությունը անխուսափելի է։ Եվ արժի՞ արդյոք դա հետաձգել ուրիշ զոհերի տառապանքների գնով...

Աննետան բղավեց.

«Իսկ ինչո՞ւ շարժի... Տիրելու մեկ օրը, մեկ ժամը, նույնիսկ մեկ ակնթարթը— մի՞թե դա ոչինչ է։ Հավիտևնականությունը բռվանդակվում է մի ակնթարթում։ ինչպես տիեզերքը մի էակի մեջ... իսկ ուրիշ զոհի, քո ախոյանի, որից դու վրեժ ես լուծում, տառապանքները— մի՞թե դա ոչինչ է, մի՞թե ոչինչ է։ Այդ սահող-գնացող երջանկությունը, որն առեանգում է գողը, — ոչինչ է։ Քո հերթին դա առեանգելը, նրան տառապանք պատճառելը, ոչնչացնելը— դա ոչի՞նչ է։

Խոպոտ կոփնչով գիշատիւ թոշուների մի բազմություն ամպի պես իջավ նրա վրա։ Այրող հպարտությունը, խանգի և վրեժի շար բերկրությունը... թևերի շփշփոցը, աղազակները խլացրին Աննետային... Որտեղի՞ց նրանք լույս ընկան...

«Այդ բոլորն իմ մեջ է»...

Դրանից նա և հպարտություն և սարսափ զգաց, — այշ-վածք զգաց, ինչպես հալած արճիճից, գրեթե գիտակցությունը կորցնելու լափ տառապանքի վայելք զգաց, զգաց տանջալից բավարարությունն նա ոչինչ չէր անում՝ այդ զդացումներն իրենից թոթափելու համար։ Ասենք չէր էլ կարողի նա անշարժ էր, ինչպես գիշատիչ ու ագահ թըռչունների գրոհի տակ գտնվող ննջեցյալը, որի աճյունը դաշտում կրանք իրար բերնից թոցնում են։ Նրանք երկու

երամ էին, թշնամի և հարազատ, տիրելու Նարավ և Քաղցած ինքնազոհաբերում, Քանի որ ինքնազոհաբերումը նույնպես, ինչպես և նրա մրցակիցը, օժտված էր զիշատիչ մագիլներով և անկշտում կտուցով: Եվ բարին և շարը (իսկ ո՞րն է նրանցից բարին եվ ո՞րն է շարը) կրում էին իրենց վրա վայրագ անմարդկայնության խարանը:

Զեռքերը խաշած, մերկ, փոված, սպասում էր նա— ազուազների երամի տակ ընկած վերջին շունչը փշով կենդանին...

Սպասելով, նա նայում էր: Ոչ մի բան— ոչ վախ, ոչ կիրք— չէր պղտորում նրա տեսողությունը: Նա իրեն տեսնում էր մերկ: Եվ հասկացավ, որ իրեն հիմարի տեղ է դրել հենց առաջին րոպեից: Աննետան գիտեր, որ սիրում է նրան, նա միշտ էլ դա իմացել է: Բայց երբվանից... Այն պահից, երբ Ժերմենը նախազգուշացրեց նրան, «Մի սիրեք նրան շափից ավելի՞ու: Դրանից շատ առաջ՝ Փախուստի ժամանակից: Դրանից շատ առաջ... իսկ ի՞նչ է նշանակում այդ զարմանքը, այդ առաքինի զարմանքը, որը նա հենց նոր ձեացրեց, հայտնաբերելով դա իր մեջ, այդ վաղուց փայփայելի սերը...»

«Կեղծավոր... ինչպե՞ս ես ստում...»:

Աննետան արհամարհանքով ծիծաղեց: Ինչքան էլ նա ուզում է տառապեր, պայծառ միտքն ու հեզնանքը ներկայացնում էին իրենց իրավունքները: Դիալոգը վարում էին երկուսը, զգացմունքը, որը խորամանկում է, և զաժան, ծաղրասեր դատավորը— նա, որ անխնաս մերկացնում է և պարզ տեսնում:

Բայց այն բանից, որ դու քո կիրքը տեսնում ես, նա չի մեռնում թեկուզ մի ժամ ավելի շուտ— միայն դառնություն է ավելանում:

Գիշերն անցավ: Հույսը խրտնեցրեց վայրի թռչուններին: Բայց նրանք չորս կողմը նստել էին ծառերի վրա: Նրանք սպառնում էին միմյանց: Նրամներից ոչ մեկը չերհանձնվում: Եռորաքանչյուրը ծվծվոցով ներկայացնում էր իր իրավունքները: Աննետան, ուժասպառ, չնացած, վեր-

կացավ։ Նա ոչ մի բանի մասին չէր մտածում։ Ականջներում աղմուկ էր։ Նա նստել և սպասում էր...

Մինչև որ Ֆրանցը հայտնվեց։ Աննետան լուսամտուից նյան տեսավ ճանապարհին։ Նա գիտեր, որ Ֆրանցը կվայի

Ֆրանցը մոտեցավ դունը։ Նայեց դունը։ Անվատահորեն դոփեց տեղում։ Գնաց... Մոտ մի երեսուն քայլ արեց, կանգ առավ, վերագրածավ։ Վարագույրի միջով Աննետան տեսավ նրա հուզված գեմքը, տենդագին անձստահությունը, խուճապը։ Դուն մոտ նա քայլերը դանդաղեցրեց և քիչ մնաց ոտքը առաջ զցեր՝ ներս մտնելու համար, Բայց ներս շմտավ։ Նա աշքերը բարձրացրեց դեպի Աննետայի լուսամուտը— Աննետան թափով ետ քաշվեց։ Աննետան արդեն ոչինչ չէր լսում, բացի երկու սրտերի գղրդալի բարախյունից։ Բայց նրա սիրտը հանդարտվում էր. մի քանի դանդաղ ծանր հարվածներ— և շնչառությունն սկսեց համաշխափ դառնալ։ Նա Ֆրանցին տեսավ իր իշեցրած կոպերի տակից, Ֆրանցը շփոթված էր, լեցուն բուռն ցանկություններով, թույլ եվ Աննետան նրա նկատմամբ երախտապարտություն զգաց— կարեկցանք— արհամարհանք...

Մի քանի ըռուկ անց, երբ նա սիրտ արեց նորից նայել ճանապարհին, Ֆրանցն այլևս չկար։ Բայց Աննետան չէր կասկածում, որ Ֆրանցը գիրք է գրավել ոլորանին և հետեւմ է դունը, սպասելով, մինչև Աննետան դուրս գա...

Եվ այդ ժամանակ երկնքում տարածվեց ծանր թռիչքի մի աղմուկ, թուղունները սուրացին անցան, Ավագակային երամը, որ լցվել էր Աննետայի հոգին, լքեց այն։ Եվ հոգին մնաց դատարկ, ինչպես տունը, որից հանել, տարել են կահույքը, Դուռը կրնկի վրա բաց էր։ Եվ այնտեղից ներև խուժեցին զգացմունքներ ու կերպարներ ներս մտավ ցավը, զղածգությունից ծամածոված էրիկա ֆոն Վինտերգրյունի գեմքը։ Ֆրանցի կույր ցանկությունը, Աննետան հիմա գիտէր, թէ որքան մեծ է իր իշխանությունը այդ թույլ երեխանքը վրա։ Եվ օգտագործում էր այդ իշխանությունը։ Իր դեմ։

Ի՞ դեմ, բայց ոչ հանուն նրանց Աննետան սառչ և սթափ զննում էր այդ զույգին։ Ճգտելով ոնաշառ վճիռ կայացնել նրանց համար։ Բայց դաժան չ այն դատարանը, որը խորի է բարությանը և ձգտում է միայն արդարության։ Աննետան

առանց ներողամտության դատում էր էրիկային և Ֆրանցին նա մի կողմ էր շպրտում (կամ մտածում էր, թե շպրտում է) իր անձնական շահը և միայն ծանրութեթև էր անում երգանկության հնարավորությունները այն մյուս երկուսի համար... Բայց շատ ճեղքեր կան, որոնց միջով այդ անձնական շահը, ինչքան էլ ուզում է վանես այն, վերադառնում է: Աննետան էրիկային գեղեցիկ չէր համարում: Ասենք, բարություն նույնպես նրա մեջ չէր տեսնում: Իսկ ինչ նրա սոռողությանն է վերաբերում, Աննետան ամենաանուրախ կանխագուշակություններն էր անում:

Նա մտովի հանում էր էրիկայի շորերը: Դա այն կինը չէր, որին նա կուգենար Ֆրանցին տալ... (Կուգենա՞ր, ինչպիսի՞ ծաղր...): Բայց Ֆրանցի նկատմամբ էլ նա ներողամիտ չէր: Նա Ֆրանցին մաղով անցկացրեց: Ինչքա՞ն մնացուկներ կային: Աննետան բարձր կարծիքի չէր Ֆրանցի բնավորության մասին: Խստորեն դատապարտեց նրան փոփոխամտության համար: Ի՞նչ կարելի է սպասել ապագայում այդպիսի միությունից... Բայց մի՞թե միայն բանականությունն էր, որ խոսում էր նրա մեջ:

Օրն անցնում էր: Աննետան ամբողջ առավոտն իր սենյառ կում էր: Նա ոչինչ շորոշեց: Կորոշի, երբ ժամանակը գտնավակա՞ն է մտածել: Թող դատարկություն լինի: Լողություն...

Օրվա կեսին նա վեր կացավ ու գուրս գնաց: Եվ շարուալուց ուղիղ դեպի էրիկա ֆոն Վինտերգրյունը:

Աննետան նրան հյուրասենյակում մենակ գտավ: Էրիկայի սիրտը թռավ, բայց նա այդ ցույց շտվեց: Ինչպե՞ս էր կծկվել սիրտը... Խնամքով հագնված, կարծես ուղղակի այդ հյուրին էր սպասում, բաց ոսկեգույն, սղալած, առանց որևէ խոպոպի մազերի գլխարկը գլխին, մազեր, որոնք չէին ծածկում համառ, ուռուցիկ ճակատը, էրիկան իր ամբողջ տեսքով նենգություն և ինքնամփոփություն արտահայտելով, առանց շտապելու տեղից վեր կացավ և, կարճ պատասխանելով Աննետայի ողջույնին, սառը ժպիտով ցույց տվեց նրան աթոռը: Էրիկան կատարելապես սպառազին:

ված էր: Բայց Աննետայի փորձված աշքը հոգու խորքը թափանցել զիտեր: Էրիկայի հետ մի քանի սովորական բարձրաշխարհիկ հաճոյախոսություններ փոխանակելով, նա հայացքով ընդգրկեց նրա նիհար, ցնցվող կուրծքը: Բերքանի ձախ անկյունում սեղմված էր, ինչպես աշք ծակող ծաղիկ, չար ժամկետ: Էրիկան չէր կարողանում հաղթահարել գունաթափ շուրթերի գողը, ներվային և խճճված խոսակցությունը, շիոթմունքը, վիրավորանքը, վախը, վիշտը: Աննետան դանդաղ, զիտակցաբար, առանց փոքրագույն խսկ զզչման զգացումի, ըմբոշխնում էր դրանք. նրա համար արդեն պարզ էր դրամայի հանգուցալուծումը... Բայց այդ հանգուցալուծումը կախված էր միայն իրենից, իսկ ինքը չէր շտապում... Նրանք խոսում էին մողաների, նոր պարերի, տեղանքի առանձնահատկությունների և եղանակի մասին, և Աննետան լեզվի ծայրով թեթևակի թրջում էր շրթունքները...

Աննետան լոեց, նա երկար ժամանակ չէր խոսում: Էրիկան ուշադիր և լարված սպասում էր — այդ լուսթյան մեջ նրա աշքին ինչ-որ խարդավանք էր երկում: Աննետան վայելեց սպասումի վերջին վայրկյանների սուր համը: Ժամանակից շուտ նախազգալով, թե ինչ ազդեցություն կունենան իր խոսքերը, և, ըմբոշխնելով դրանք կարեկցական ծաղրով, նա ասաց.

— Ես մեկնում եմ վաղն առավոտյան:

Արյունը խփեց էրիկա Վինտերգրյունի երեսին: Նույնիսկ ճակատը կարմրատակեց, իսկ ականջների ծայրերը ալ կտրեցին, ինչպես արյան կաթիլներ: Նա արդեն իրեն չէր տիրապետում և չէր կարողանում թաքցնել իր բուռն հուզմունքը:

Եվ Աննետան, այստեղ գալուց հետո առաջին անգամ, ժպտաց: Էրիկան աշքի պոշով հետեւելով նրան նույն կասկածով ու երկշուտությամբ, գեռ շարունակելով վախենալ որևէ նենգ քայլից, հասկացավ, որ այդ ժպիտի մեջ թըշնամանք չկա, Աննետան էրիկային զննում էր ոչ առանց ծաղրի, բայց խղճալով, նա մտածում էր.

«Ինչպե՞ս է սիրում նրան»:

Շփոթահար էրիկան թեքել էր գլուխը — և հանկարծ թեքած գլուխն իջեցրեց Աննետայի ուսին, Աննետան ձեռքը դրեց նրա քնքուշ պարանոցին, նուրբ մազերին և, փաղաքորեն ծիծաղելով, շոյեց դրանք: Նրա առաջ կանգնած էր միայն անպաշտպան երեխա: Անվստահությունն անհետ կորավ, էրիկան Աննետայի վրա բարձրացրեց իր հնագանդ, երախտապարտ, բերկրալի հայացքը: Եվ Աննետան մտովի նրան մաղթեց.

«Երջանիկ եղիր»:

Նրանցից ամեն մեկը մինչև խորքը տեսնում էր մյուսի հոգին: Եվ երկուսն էլ արդեն չեին ամաշում այն բանից, որ իրենք ճանաչված են մինչև վերջ, բանի որ երկուսն էլ շատ բան պետք է բավեին միմյանց առջև:

Այդ ժամանակ Աննետան հարցրեց.

— Դուք ե՞րբ եք ամուսնանալու: Այլևս պետք չէ ձղձըդիւ:

Եվ նա սկսեց խոսել ֆրանցի մասին: Աննետան դատողություններ էր անում նրա մասին սիրով, բայց անաշառել նախազգուշացնում էր էրիկային նրան սպասող վաանգներից: Ինչ դրան է վերաբերում, էրիկան մոլորությունից հեռու էր, նա նույնպես սուր աշք ուներ: Նրանք իրար ձեռքեր բռնեցին և սկսեցին խոսել անկեղծ, առանց որևէ բան թաքցնելու: Էրիկան չէր թաքցնում այն, ինչ տեսնում էր իր փեսացուի մեջ և ինչ վախեցնում էր նրան, բայց նա հաստատ վճիռ էր կայացրել՝ վերցնել և պահպանել իր համար այդ հմայիչ և դյուրափոփոխ հոգին, որին ձգտում էր այդքան ագահորեն: Նա նախապես ընդունում էր բոլոր գաղտնի ճակատամարտերը, անքուն գիշերները, անհանգիստ օրերը — հատուցումը այն երջանկության, որը նա ստիպված է լինելու նորից ու նորից նվաճել, առանց որևէ վստահության, թե դա կարող է հաստատուն լինել:

Սեղմելով էրիկայի ներվային ձեռքը, Աննետան ըգգում էր այն ցասումնալից հուանդը, որը սիրահարված աղջիկը մի րոպե առաջ պատրաստվում էր ուղղել նրա դիմ, ձգտելով, ինչ գնով էլ ուկում է լինի, պահպանել իր սահողանցնող երջանկությունը — ամբողջ կյանքի երջանկու-

թյունը, որի վրա այդ կյանքից վերք ստացածը, այդ հիգանդը այլևս հույս չէր դնում, Աննետան մտածում էր.

«Դա արդարացի է»,

Նա իրեն ասում էր.

«Այդ ձեռքը ի վիճակի է բռնել ու տանել նրան, ում ես՝ վստահում և թողնում եմ իրեն»:

Էրիկան, մի տեսակ դեռ բաշվելով, իր կանաչավուն-կապույտ, ինչպես սառույցը, զրեթե անթերթերունք, գունատ հոնքերով աշքերի հայացքը թաքուն գցում էր Աննետայի այտերին, բերանին, վզին, կրծքին ու ձեռքերին եվ մտածում էր.

«Լավի՞կն է... Ես ի՞նչ եմ նրա համեմատությամբ...»:

Եվ հիվանդության տարիների ընթացքում հասունացած բնագղով զգաց, որ այդ կնոջ համար հրաժարվելը դժվար է եղել և որ դա, թերևս, նույնիսկ անարդարացի է:

Բայց այդ միտքը միայն առկայծեց:

«Արդարացի է թե չէ— դա իմն է, այդ երջանկությունը...»:

Աննետան տեղից վեր կացավ: Նա ասաց.

— Ինձ մոտ ուղարկեք Ֆրանցին: Ես նրա հետ կխոսեմ:

Էրիկան ոչ անմիջապես համարձակվեց այդ անել: Նրան նորից հաղթահարեցին կասկածները: Նա վախեցած նայեց իր մրցակցին, որն ակնապիշտ իրեն էր նայում: Նա տեսնում էր, որ Աննետան պահանջում է լիակատար վստահություն: Պետք էր վստահել— կամ խզել: Նա վստահեց: Եվ հնագանդորեն ասաց.

— Ես նրան ձեզ մոտ կուղարկեմ:

Վերջին անգամ երկու կանայք իրար նայեցին, ինչպես քույրեր: Եվ դռան շեմին խաղաղության համբույր փոխանակեցին:

Մի ժամ անց Ֆրանցը եկավ:

Այն, որ էրիկան նրան ուղարկեց Աննետայի մոտ, շզարմացքեց Ֆրանցին: Նա սովոր չէր խորհել ուրիշների զգացմունքների մասին: Նրան ամբողջովին կլանում կըն իր սե-

փական զգացմունքները, իսկ այդ զգացմունքները փոփոշական էին, եթե Ֆրանցը նույնիսկ փորձեր նայել այդ երկու կանանց հոգու խորքը, ապա միանգամայն բնական կհամարեր, որ իրեն սիրում են թե՛ մեկը, թե՛ մյուսը։ Դա նրա վրա ոչ մի պարտավորություն չէր դնում։ Այդպես էր նա մտածում — և միանգամայն անկեղծ Ֆրանցն անկեղծ էր ուզածդ րոպեին։ Սարսափելի անկեղծություն մի ժարդու, որի մոտ այդ րոպեները մեկը մյուսի հետեւից անհետ ցնդում են... Բայց նա դրանից չի տառապում։

Հիմա Ֆրանցին զրադեցնում էր լոկ վերջին հայտնագործությունը։ Կախարդուհու ձեռքերը ստեղների վրա և գրկախառնությունը տան դռան մոտ, երկնքի տակ... Նա եկավ գրգռված, տաքացած, վստահ իր հաղթանակին։ Նա ցոպաբերեց և երկշուտություն և միամիտ սնափառություն։ Բայց Աննետայի սառնությունը իսկույն եեթ նրան շփոթեցրեց։

Աննետան նրան շնոտեցրեց, ընդունեց կանգնած։ Հապճեպորեն իրեն նայելով հայելու ժեշ, անփութորեն ժագերը հարդարեց և ասաց։

— Գնա՞նք։

Նրանք լեռն էին բարձրանում ճանապարհով, որտեղ արդեն մի անգամ չէր, ինչ զբոսնել էին, երկուսն էր գերազանց քայլողներ էին և առաջ էին գնում լայնաքայլ։ Աննետան լուր էր, Ֆրանցն սկզբում ոնց որ թե սսկվել էր, բայց շուտով նորից իրեն տիրապետեց։ Նրա հոգում թեթեվություն էր և խնդություն։ Նա հիանում էր սրտի նոր խաղալիքներով — այդ երկու կանանցով (նրանց սիրո մեջ Ֆրանցն համոզված էր)։ Թե ինչպես հաշտեցնել միմյանց հետ այդ երկու սերը — զա արդեն տասներորդական գործ է, որը ամենակին չէր հետաքրքրում նրան։ Ֆրանցն այնքան քիշ էր գիտակցում իր էգոիզմը և այնքան էր լցված իրենով, որ ամենակին շձգտելով Աննետայի մեջ խանդ առաջացնել, սկսեց մեկ առ մեկ ցույց տալ էրիկայի սքանչելի հատկությունները և միամտորեն հիանալ այն երջանիկ պատահականությամբ, որը նրան այս կողմերէ բերեց, ուր նա գտել էր երջանկությունը։

Աննետայի սիրտը ճմլվեց, նրա շուրթերից քիչ մնաց  
դուրս թռչեր.

«Այդ երջանիկ պատահականության համար մի ուրիշը  
իր կյանքը վճարեց»:

Բայց Աննետան բոլորովին չէր ուզում տանջել նրան  
հիշողություններով։ Նա միայն ասաց.

— Ժերմենը կուրախանար!

Բայց դա էլ էր շափից ավելի։ Ֆրանցը վշտացավ։ Նրա  
համար ավելի հաճելի կլիներ այդ բոպեին շմտածել ժեր-  
մենի մասին։ Բայց քանի որ նա հիշել էր բարեկամին,  
անկեղծ թախիծի ստվերը սահեց նրա գեմքի վրայով։ Եվ  
անհետացավ։ Նրա միտքը, որ այնքան վարպետորեն օգ-  
նում էր խուսափել ամեն բանից, ինչը կարող էր խանգա-  
րել նրա հանգստությունը, բռնեց Աննետայի վերջին խոս-  
քը։ Ֆրանցն ասաց.

— Այս, եթե կարելի լիներ այդ երջանկությունը կիսել  
նրա հետ։

Եվ թախիծը և խնդությունը կեղծ չէին։ Բայց հազիվ էին  
արտասանվել այդ բառերը, երբ արդեն միայն խնդությունը  
մնաց։ Եվ բարեկամի անունը շարտասանվեց։

Աննետան հիշեց ննջեցյալի սթափ խոսքերը.

«Եթե մոռացումն ուշանում է, նրան ընդառաջ են  
գնում»։

Ֆրանցը նորից սկսեց խոսել, ինչպես սիբահարված բա-  
նաստեղծ։ Սիրահարված ո՞ւմ։ Նա ասում էր մի կնոջը  
մյուսի մասին։ Բայց Աննետայի ներկայությունը նրան  
ոգևորում էր ավելի շատ, քան այն կնոջ կերպարը, որի  
մասին ինքը խոսում էր։ Ֆրանցն աշքերն Աննետայից շէր  
հեռացնում, այդ աշքերը շոյում էին Աննետային, Ֆրանցը  
խմում էր Աննետային շրջապատող օդը։ Եվ հանկարծ  
կանգ էր առնում, ապշած այն տեսարանից, որն իրեն էր  
գամում նկարչի ազահ հայացքը։ Նա հիանում էր գծե-  
րով, երանգներով, ներդաշնակ զուգակցումներով։ Բայց  
Աննետան կանգ չէր առնում։ Նա գնում էր առաջ, գոռող,  
մտացրիվ, առանց գլուխու շրջելու, նոթերը կիտած։ Նրա  
մեջ սկսեց եռալ գրգռվածությունն ու արհամարհանքը դե-

սլի դերասանների այդ հոգիները, այնքան փոփոխական, որ յուրաքանչյուր ակնթարթը չըանց մոտ գուրս է մղում նախորդին. կյանքն ու ժահն անցնում են նրանցով, ինչպես մաղի միջով...

Աննետան սկսեց զիրթ դաբալանջով բարձրանալ դեպի ժայռոտ հարթակը — դեպի նեղ ու երկար թամբիկը: Բարձրոցավ առանց շունչ առնելու: Այնտեղ, այդ բարձունքում երկինքը լուսավոր էր և կոշտ, ինչպես երիկա Վինտերգրյունի բիրերը: Լեռնակատարները մաքրող գարնանային քամին. Բարձ և ուժեղ, հոսում էր լանջերն ի վար, զետին թեքելով խոտերի բարձր ցողունները: Այդ քամին այրում էր Աննետայի և նրա ուղեկցի գլմբերը նրանք նըստեցին փոքրիկ ձորակում՝ մի խումբ ծռմոված, ցածրիկ ծառերի ու աշշտպանության տակ: Արոտավայրերը զահագանդակներով վազում էին դեպի հարթավայրերը, որտեղ սլանում էր մի գետ: Վերեռում մետաղի նման սպիտակ երկնքի շրջանակն էր, երիզված սև, իրար վրա դիզված թուփակերի ծոպերով, որոնք զարնվում էին լեռների կատարներին, ինչպես ժայռերը ծեծող ալիքներ:

Աննետան նստեց խոտի՝ վայրի դաղձի վրա, որն աճել էր խոզանում և զերմանում էր մայր մտնող արևի վերջին շողերով: Հյուսիսային քամու բուռն պոռթկումներից — և զայրույթից, որը բորբոքվում էր նրա հոգում, — Աննետայի սլաները կարմրատակել էին, Նստելով ֆրանցի կողքին, Աննետան նայում էր ոչ թե նրան, այլ դեպի առաջ, գլուխը բարձր պահած և արհամարհական ժպիտը երեսին: Նա ոտից գլուխ ուժ և հպարտություն էր ճառագայթում: Ֆրանցը աշքերը շորս արած նրան էր նայում — և զերջ տվեց շաղակրատանքին: Այդ լուսիցունը այրում էր Աննետային իր արհամարհական հեռվից նա զգում էր իր մարմնի վրայով սահող հայացքի հուրը: Աննետան շարունակում էր ժըպատակ, Բայց կրքի վերջին պոռթկումը խուժեց նրա վրա, ինչպես մրրիկը այն ծառերի կատարների վրա, որոնք իրենց թևերը տարածել էին Աննետայի գլխին: Աննետան մտքում ասաց այդ աշքերին, որոնց ինքը տեսնում էր, առանց նայեալու նրանց:

«Վերջապես դու հայտնագործում ես ինձ...»:

Եվ ձայն տվեց բացակա մրցակցին, որն այնտեղ, ներքեռում, իր ոտքերի տակ, սպասում էր, ձայն տվեց նրան, ում հիվանդ ոտքերը շեխն կարող հաղթահարել գիրթ սարալանչը.

«Բավական է ես միայն ուզեմ... և նա ի՞մը կլինի: Փորձիր խլել նրան...»:

Բայց նա չուզեց:

Մալրամուտի հրդեհի հետ միասին նրա աշքի առջևով անցավ արյան ալիքը: Եվ համր խելացնորությունը հանգավ ինչպես արել լեռների հետեւում: Նա ուսերը թոթվեց, ելավ հասակով մեկ և, կանգնելով սարահարթին, քամու գեմդիմացը, շրջվեց դեպի ֆրանցը, որ նրա հետեւից շան նման զնում էր: Պատանու աշքերը ազահորեն սպասում էին Աննետայի հայացքին, աղերսում էին նրան: Բայց, հանդիպելով այդ հայացքին, ֆրանցը նրա մեջ միայն սառնություն տեսավ, օտարություն: Աննետան նկատեց, որ ֆրանցը հիամբափած է, ժպտաց նրան և, թափ տալով իրեն, նայեց պատանուն մայրական հանգիստ, բարի արտահայտությամբ:

— Ֆրանց, դու շար չես:— ասաց նա,— բայց դու կարող ես շատ շարիք պատճառել... Դու այդ գիտե՞ս: Ժամանակն է, որ արդեն իմանաս, բարեկամու Ասհնք, միայն դու չես: Ես էլ պակասը չեմ... Մենք բոլորս էլ շարություն ենք ծնում, ինչպես խնձորենքն՝ խնձոր: Բայց մեր այդ ծառի պտուղը մենք պետք է ուտենք: Ուրիշներին պատենք դրանից...

Ֆրանցը, իրեն կորցնելով, փորձեց խուսափել այդ խոսքերի իմաստից և հայացքից, որը ծայրեծայր խոցել էր նրան: Բայց հայացքը համառորեն շաղափում էր, իսկ խոսքերը միրճվում էին: Ուժեղ ձեռքի համար հեշտ էր կնիք դնել ֆրանցի ճկուն խառնվածքի վրա: Արդյո՞ք երկար ժամանակով: Աննետան այդ տեսակետից շեր խաբվում: Բայց հիմա ֆրանցը նրա ձեռքին էր, և Աննետան նրա հոգին կտղապարում էր դաժան և քնքշորեն: Նրան բավա-

կանություն էր պատճառում իր մատների տակ զգալ այդ փափուկ, թրթուն, կենդանի կավը:

— էրիկան սիրում է քեզ, — ասաց Աննետան, — դու էլ ես սիրում նրան: Դա լավ է: Բայց զգուշացիր: Դու օժտված ես վտանգավոր կարողությամբ՝ տանջելու նրանց, ում սիրում ես, — օ, հոգեկան կատարյալ միամտությամբ... Հենց դա էլ վարպետության գագաթն է... Պետք է այդ սովորությունը թողնել: Դու գիտես, թե ես ինչքան եմ կապված քեզ, շատ եմ կապված... Ես ստել շգիտեմ: Եվ ինչի՞ համար ստել: Զէ՞ որ դու ինքդ էլ գիտես այն, ինչ ես քեզ ասում եմ... Ես քեզ հետ կապված եմ, ինչպես որդուս հետ, իսկ, գուցե և ավելի սերտ... Եվ քեզ երջանկություն եմ ցանկանում: Բայց տեսնել, թե դու ինչպես ես սիրո հետ խաղում և թեթևամտությամբ վերքեր հասցնում այն աղջկան, որը քեզ այնքան նվիրված է... Ոչ, ես կգերադասեի քեզ ամբողջ կյանքում դժբախտ տեսնել: Նա քեզ նվեր է բերում ավելի շատ, քան դու կարող ես նրան տալ: Բերում է այն ամենը, ինչին նա տիրապետում է: Իրեն ամբողջովին: Իսկ դու կարող ես նրան տալ միայն քո մի մասը: Դուք տղամարդիկ, ձեզ վերցնում եք ամենալավը, առյուծի բաժինը, — վերցնում եք ձեր ուղեղի, վանդակի մեջ գտնվող այդ հրեշի, այդ մարդակերի համար, ձեր երազանքների, մտքերի, արվեստի, պատվասիրության, ձեր գործերի համար: Ես ձեզ շեմ կշտամբում և ձեր տեղը ես էլ այդպես կվարվեի... Բայց այն մասնիկը, որը դուք մեզ նվեր եք բերում: — Թող մաքուր լինի: Թող լինի հաստատուն: Նվիրելուց անմիջապես հետո ետ մի խլեք: Խաղի մեջ խարդախություն մի՛ արեք: Զեղանից քիչ բան են պահանջում: Բայց այդ քշին ուզում են տիրապետել: Ի վիճակի՞ ես դու արդյոք նրան այդ քիչը տալու: Հարցրու քո մարմնին: Հարցրու սրտիդ: Էրիկան քո ցանկալի՞ն է: Նա քո սիրելի՞ն է: Ուրեմն, վերցրու նրան: Բայց և վերցված եղիր Պարգև պարգևի դիմաց: Սովորիր վերցնել և պահպանել ընդմիշտ, ամպե հոգի, մարմնացած քամի...

Ֆրանցն անշարժ կանգնած էր, գլուխը կախ, կոպիտ խոսքերի կարկուտի տակ, աշքերի կրակի տակ, որոնց մեջ

Հիմա կայծկլտում էր ծիծաղը Վերջապես Աննետան բաց թողեց իր որսին։ Նա անկեղծորեն ծիծաղեց և ասաց։

— Գնանք տուն։

Նրանք անխոս սկսեցին լեռից ցած իջնել։ Աննետան քայլում էր առջևից։ Ֆրանցը աշքերը մեխել էր նրա թուխ, փոքր-ինչ ոսկերանգ ծոծրակին։ Ֆրանցը կուզեր, որ այդ վայրէջքը երբնք շվերջանա։

Երբ հեռվում նշմարվեցին առաջին տները, Աննետան կանգ առավ։ Շբջվելով դեպի Ֆրանցը, նա ձեռքերը պարզեց տղային։ Ինչպես ճամբարում առաջին հանդիպման ժամանակ, Ֆրանցը խոնարհվեց և սկսեց նրա ձեռքերը ծածկել համբույրներով։ Աննետան ձեռքերն ազատեց, դրեց Ֆրանցի ուսերին, նայեց նրա աշքերի մեջ և ասաց։

— Մնաս բարո՞վ, մանկիկ իմ։

Նա իր սենյակը վերադարձավ մենակ և որոշեց շսպասել մինչև վաղն առավոտը, ինչպես խոստացել էր։ Աննետան մեկնեց գիշերը։

Հաջորդ օրը էրիկան ու Ֆրանցը եկան նրա մոտ հրաժեշտ տալու։ Բայց սենյակն արդեն դատարկ էր։ Նրանք վշտացան... Եվ թեթևություն գգացին։

## Մասն իինգերորդ

Աննետան շհասավ մինչև Փարիզ, Նա ճանապարհին իջավ մի խուլ կայարանում, որտեղ ոչ ոք նրանով չէր հետաքրքրվում: Նրա հոգին լցված էր տագնապով: Աննետան պետք է ամեն ինչ հանրագումարի բերեր: Գտներ կորած ուղղությունը:

Հանկարծ նրան ճնշեց վերջին ամիսների հոգնածությունը, այդ անընդմեջ լարվածությունը, այդ վերջին հարվածը, որը նրա մեջ արթնացրեց անխուսափելիորեն վրա հասնող ծերության այրող գիտակցությունը և սիրո շհագեցված պահանջը, պահանջը ամբողջական սիրո, որը նա երբեք չէր ունեցել: Անորոշ և ամայացնող թախիծ: Տրվել ամբողջովին, առանց մնացորդի— և ինչի՞ համար: Այժմ, ամեն ինչ տալուց և ամեն ինչից հրաժարվելուց հետո: Նա իրեն սոսկումի աստիճան ազատ զգաց: Թելերը կտրտված են, թայց ինչի՞ց բռնել, եթե նրանք ձեզ չեն պահում: Երբ բռնելու տեղ չկա... Եվ որ ամենավատն է, նա իրեն կորցրեց. նա արդեն իրեն չէր հավատում, չէր հավատում մարդկության հանդեպ ունեցած իր հավատին... Աղետներից վատթարագույնը: Դաշտ ավելի վատ է, քան կորցնել հավատը մարդկության նկատմամբ... Կորցնելով հավատը, անվեհեր հոգին իր համար ստեղծում է ուրիշը, այդ հոգին նորից է կառուցում իր բույնը: Թայց երբ հոգին ի՞նքը դավաճանեց... Փլվեց, ինչպես ավագ... Իր բոցաշունչ աղնվությամբ անհաշտ Աննետան իրեն մահապատժի էր ենթարկում կեղծիքի համար: Նրա լեզվին «մարդկություն» բառն էր, իսկ ագահ սիրտը, այդ սարդը դարանակալում էր որսին, սըփ-

ոելով իր ոստայնը՝ Պարզվեց, որ մարդկությունը նրա համար մարդն է։ Տղամարդը... Առաջին պատահածը, սիրալիրը, աննշանը... Դե ասացեք, ծիծաղելի՞ չէ դա։ Ինչքան ուժեր են վատնված հավատի պոռթկումների և ինքնահրաժարման համար, ինչպես էր նա սիսկի ենթարկում իրեն և ուրիշներին— և այդ ամենը այն բանի համար, որ ծուղակի մեջ ընկնի։ Անձնազոհաբերման մի ամբողջ խանդավառություն հանուն այդ խայծի, հանուն այդ տղայի (նրա կամ ուրիշի) Պատահականությունը նրան է ընտրել որպես զործիք)։ և ահա անձնազոհաբերությունն արդեն զուգածդպարպարված է, ինչպես կուռք, իսկ ցանկությունը հաճույքի լիակատարության համար զգեստավորված է իդեալիզմի ցնցոտիներով և կոչված է սրբազն անունով, մարդկայնության կեղծ անունով...

Աննետան կատաղությամբ սեղմում էր ատամները։ Նա իր վրա սուտ մեղադրանք էր բարդում... Կուշ գալով, կղակը հենելով բռունցքներին, արմունկները ծալած, նա խմում էր ստորացման ու պարտության գավաթից...

Աննետան առանձնացավ դաշտերի մեջ կորած փոքրիկ քաղաքում։ Նա նույնիսկ շգիտեր, թե ի՞նչ է այդ քաղաքի անունը։ Նա գնացքից իջավ գիշերը, բախտաբերի, և իջևանեց հենց առաջին հյուրանոցում։ Մեծ, իսկական բեռնյան հյուրանոցներից մեկում՝ լայն տանիքով, որը կախվում է փոքրիկ, քառակուսիներ հիշեցնող ու ծաղկող խորդենիներ դրված լուսամուտների վրա։

Այդ կարմիր շիրմայի հետեւ, լայն ծածկի ստվերում, խուճապահար հոգին կամաց-կամաց հանգստացավ և մտավ իր հունի մեջ։ Բայց ավելի ուշ Աննետան դեռ շատ ու շատ կզարնվի ափերին ու կշարդվի։ Զո՞ւր ես քեզ ասում։

«Բավական է։ Ես զենքս ցած եմ դնում, և այլնս շեմ չկաշտպանվում։ Պարտված եմ։ Հաշտվեցի... Մի՞թե դա քեզ համար բավական չէ...»։

Ոչ, նրա համար բավական չէ։ Բնությունն անսպասելի զրոհով հիշեցնում է, որ պայմանագիրը ուժի մեջ է մըտնում նրա ստորագրելուց հետո միայն։ Աննետան հետագայում դեռ երկար ժամանակ ստիպված էր պայքարել

եռակի տառապանքի գեմ, որը նրան պատճառում էին անմիտ կիրքը, հավիտենական ստրկությունը, թուած-դնացած էրիտասարդությունը,— ցնորական հուրը, ողորմելի խարուցկը, կյանքի սառած մոխիրը: Առավոտները նա արթնանում էր հոգնած, համր, զիշերային փոթորիկներից հետո ուժասպառված... Եվ նա միակը չէ— ինչքա՞ն կան մեր շուրջն այդպիսիները—հանգիստ դեմքեր, որ ցերեկը թվում են մի տեսակ անկիրք ու սառը— դիմակներ հագած, որոնք թաքցնում են նրանց հոգու մեջ զիշերը տեղի ունեցող պայքարի հետքերը:

Վերջապես ամեն ինչ կշռադատված է և հաշվված: Աննետան իրեն ճանաչեց սնանկացած: Ամեն ինչ հանրագումարի բերեց: Ատելությամբ ծվատվող մարդկությանը, որն արդեն հոգեվարքի տնքոցներ էր արձակում, Աննետան հակադրում էր իր ազատ, միայնակ կնոջ հոգին, որը չի ենթարկվում ատելությանը, չի ենթարկվում մահվանը, փառաբանում է կյանքը, ցանկանալով ընտրություն կատարել թշնամի-եղբայրների միջև, լայնորեն բացում է մայրական զիրքը իր բոլոր որդիների համար... Դա մեծ հպարտություն էր: Աննետան գերազնահատեց իրեն: Նա ազատ չէր: Միայնակությունը նրա ուժերից վեր էր: Նա մայր չէր, որն իր երեխաների համար մոռանում է իրեն: Սեփական երեխային, իր մսից ու արյունից որդուն նա մոռացել էր: Աննետան հավիտենական ստրկուհի էր, խորամանկ ստրկուհի, որը թաքնվում է և ագահորեն, ինչպես շունը, ձգտում է բավարարել իր ցանկությունը: Լա՝ զ անշահախնդրություն է: Աննետայի ամբողջ իդեալիզմը միայն խայծ էր, որով նրան գայթակղում էր բնությունը, որպեսզի մտրակով քշի շնանոց: Աննետան դեռ չէր հասել այն աստիճանին, որ թոթափի շնապանից իր կախվածությունը...

«Ի՞նչ կա որ, թող այգպես լինի: Պետք է հնազանդություն սովորել... Ես ուզում էի... Ես ի վիճակի չէի... Բայց ցանկանալն արդեն ինչ-որ մի բան է... Ես չէի կարող... Գուցե երբեմէ մի ուրիշը, ինձանից ավելի լավը, ավելի ուժեղը կկարողանա...»:

Պարտություն կրելով և հնագանդվելով — մինչև նոր խռովությունը, Աննետան որոշեց վերադառնալ Փարիզ:

Կուպեում նա մենակ էր երկու ֆրանսիացի տղամարդու հետ. մեկը երիտասարդ լեյտենանտ, դեմքից վիրավորված, աշքերին սև վիրակապ և գլուխը բինտով փաթաթած, իսկ մյուսը՝ նրան ուղեկցող սանիտարը: Դա մի ծանրաշարժ, շատ առողջ մարդ էր, անտարբեր գեղի տառապանքները, որոնցից կշտացել էր (նա շափազանց շատ էր այդպիսի բաներ տեսել): Հիվանդին մի կերպ տեղավորելով կուպեի անկյունում, սանիտարը դադարեց նրա վրա ուշադրություն դարձնելուց: Նա իսկույն ևեթ անցավ ուտելու գործին. մի քանի կտոր խոզապուխտ հուպ տվեց, վրան շշից կում-կում պինի խմելով, և հետո հանեց հսկայական կոշիկները, ամբողջ հասակով մեկ փոքրեց հիվանդի դիմացի նստարանին և խոմփացրեց: Վիրավորը նստել էր նույն կողմը, որտեղ և Աննետան: Նա տեսավ, թե ինչպես վիրավորը մի քանի անհաստատ շարժումներ արեց, դժվարությամբ տեղից բարձրացավ և սկսեց պրատել գիրավերեր կախված ցանցի մեջ, բայց շգտնելով այն, ինչ փնտրում էր, նորից նստեց ու հառաշեց: Աննետան հարցրեց.

— Գուք ինչ-որ բա՞ն եք փնտրում: Ես ձեզ օգնել չեմ կարող:

Վիրավորը շնորհակալություն հայտնեց: Նա ուզում էր գեղափոշին գտնել. քներակի ցլնգացող ցավը տանջում էր նրան: Աննետան դեղափոշին լուծեց ջրում և տվեց վիրավորին: Երկուսն էլ չէին կարողանում քնել: Եվ անիվների գոգոցի տակ նրանք խոսակցության բռնվեցին: Գնացքը նրանց անընդհատ ցնցում էր: Տեղավորվելով հիվանդի կողքին, Աննետան նրան պահպանում էր ցնցումներից: Աննետան նրա դողացող ժնկներին աղեալ գցեց: Նրա կարեկցանքի ջերմությունը հարություն տվեց հիվանդին: Եվ վիրավորը, ինչպես դա լինում է բոլոր լրյաւ մարդկանց հետ, եթք նրանց վրա կարեկցաբար կին է խոնարհվում, չհապաղեց երեխայի նման գեղումներ անել նրա առաջ: Նա Աննետային հաղորդեց այն, ինչ չէր խոստովանի տղա-

մարդու, ասենք Աննետային նույնպես, թերևս, շասեր  
եթե կարողանար նրան տեսնել:

Գնդակը ծակել անցել էր նրա քունքերի միջով։ Երկու  
գիշեր ու ցերեկ նա կուրացած ընկած էր մնացել կովի  
դաշտում։ Քիշ-քիշ տեսողությունը վերականգնվել էր։ Իսկ  
հետո կրկին սկսել էր թուլանալ ու հանգավ մեկընդմիշտ։  
Տեսողության հետ միասին նա կորցրեց ամեն ինչ։ Նա  
նկարիչ էր։ Լույսը նրա հարստությունն էր, նրա հացը։  
Մանավանդ որ հայտնի չէր, ուղեղին վնաս հասել է թե  
չէ։ Ցավերը նրան տանջում էին...

Եվ դա դեռ վատթարագույնը չէր... Տանջվում էր հոգին։  
Հոգին լալիս էր առանց արցունքների, լալիս էր իրեն հա-  
մուկած խավարում, հոգին ողողվել էր արյուն քրտինքով...  
Այդ հոգում ոչինչ չէր մնացել։ Այդ հոգուց վերցրել էին  
ամեն ինչ։ Նա պատերազմ գնաց առանց ատելության զգա-  
ցումի, հանուն դեպի մերձավորներն ունեցած սիրո, հա-  
նուն սիրո դեպի մարդիկ, դեպի աշխարհը, դեպի սրբազն  
գաղափարները։ Նա գնաց պատերազմին սպանելու Նա գնաց  
այդ պատերազմից մարդկությանն ազատելու։ Նույնիսկ թշնա-  
միներին։ Նա իր երազանքներում այդ բոլորին ազատություն  
էր բերում։ Նա տոմեն ինչ տվեց... Եվ կորցրեց ամեն ինչ...  
Աշխարհը նրա վրա ծիծաղեց։ Նա շափազանց ուշ հասկա-  
ցավ անսահման սուտը, ստոր շահամոլությունը նրանց,  
ում համար քաղաքականությունը խաղ էր, իսկ ինքն ըն-  
գամենը շախմատի տախտակի վրայի զինվոր։ Նա արդեն  
ոչ մի բանի չէր հավատում։ Նրան խաբել էին։ Եվ նա, տա-  
պալված, պառկել էր, նույնիսկ ըմբոստանալու պահանջ  
շգգալով... Որքան կարելի է շուտ հեռանալ, գլորվել ան-  
գունդը, լինել։ և նույնիսկ չհիշել, որ դու եղել ես։ Սուզվել  
խորխորատի հատակը, որտեղ քեզ կգրկի հավիտենական  
մոռացությունը։

Նա խոսում էր համաշափ, հողնած, խուլ ձայնով, և  
այդ ձայնը Աննետային լցնում էր եղբայրական կարեկ-  
ցանքով... Ախ, ինչքան շատ ընդհանուր բան կար նրանց  
ճակատագրերում, որոնք այնքան տարբեր էին թվում։ Այդ  
մարդը պատերազմում միայն սեր էր տեսել ինչպես Աննե-  
տան միայն ատելություն էր տեսնում — և երկուսն էլ զո-

Հարերված են, ո՞ւմ, ինչի՞ն: Նման գոհերի ողբերգակա՞ն անմտություն... Եվ այնուամենայնիվ, և այնուամենայնիվ... Վշտի այդ առատության մեջ (այդպիսի աղետի առաջ Աննետան հազիվ էր հանդինում իրեն դա խոստովանել) ողբերգական խնդություն կա... Ոչ, յենք զո՞ւր չենք խոշտանգութանգված, տրորված, ճղմկած, ինչպես խաղողի ողկույզները: Իսկ եթե նույնիսկ գուր էլ է, ապա մի՞թե քիչ բան է գինի լինելը: Այդ Աւժը, որը իսմում է մեղ,— ի՞նչ կարող էր լինել նա առանց մեզ: Ի՞նչ սարսափեցնող մեծություն...

Խոնարհելով կույրի վրա, Աննետան այրող շշնչոցով ասաց.

— Այո, Հնարավոր է: Լինել անձնազոհ, կնշանակի խարված լինել... Էհ, ինչ կա որ, ավելի լավ է խարված լինել: Ինձ էլ խարեցին: Բայց ես պատրաստ եմ ամեն ինչ նորից սկսել: Իսկ դո՞ւք:

Այդ բառերը ապշեցրին վիրավորին.

— Ե՞ս էլ:

Նրանց ձեռքերը սեղմվեցին իրար:

— Համենայն գեպս ես և դուք խարեւությունից օգուտ շննք կորդել: Լինել խարված, դա էլ իր գեղեցկությունն ունի:

Դնացքը կանգ առավ: Դիմոն: Սանիտարը, արթնանալով, գնաց բուֆետ կոկորդը թրջելու: Աննետան նկատեց, որ վիրավորը աշխատում է վիրակապը ետ տանել:

— Այդ ի՞նչ եք անում: Զեռք մի տվեք:

— Ոչ, թողեք:

— Ի՞նչ եք ուզում անել:

— Ուզում եմ ձեզ տեսնել, քանի դեռ գիշերը վրա չի հասել ինձ համար:

Նա վիրակապը բարձրացրեց: Եվ տնքաց.

— Ուշ է... Ես ձեզ չեմ տեսնում:

Նա երեսը ձեռքերով ծածկեց: Աննետան ասաց.

— Խե՞ղճ իմ տղաւ: Դուք ինձ ավելի պարզ եք տեսնում, քան աշքերով: Ինձ աշքեր պետք չէին, որպեսզի ձեզ ճանաշեմ: Բոնեք իմ ձեռքերը: Մենք հոգով միմյանց կրզգանք:

Վիրավորը կառէից Աննետայի ձեռքերից, կարծես վախե-  
նում էր մոլորվելի նա ասաց.

— Ելի խոսեց, Խոսե՛ք ինձ հետ; Խոսե՛ք;

Աննետայի ձայնը վիրավորի մեռած աշքերի համար կար-  
ծես պատի վրայի սիլուետ լիներ, Վիրավորն ագահությանը  
լսում էր այդ ձայնը, մինչ Աննետան համառոտ նախադա-  
սություններով շարադրում էր նրա առաջ քառասուն տար-  
վա հույսերի, ցանկությունների, հրաժարումների, պարտու-  
թյունների, վերսկսված ճակատամարտերի պատմությունը։  
Աննետայի դեմքին տաղավորված ունալ կյանքի և երազանքի  
(ամեն ինչ երազանք է) քառասուն տարվա պատմությու-  
նը։

«Այո, դրանք, ըստ երկույթին, կերտել են այդ գեմքը, —  
մտածում էր նա։ — Հոգին իր նշանն է դնում...»։

Հիմա նա իր առջևում տեսնում էր իր նկարներից լա-  
վագույնը։ Բայց ուրիշ ոչ դա չի տեսնի։

Աննետան լոեց։ Նրանք այլևս չխոսեցին մինչև գիշեր-  
վա վերջը։ Տեղ հասնելուց քիչ առաջ Աննետան ագատեց  
իր ձեռքը, որը մինչև հիմա բռնել էր հիվանդը, և ասաց.

— Ես միայն քո դժբախտության ընկերն եմ։ Բայց ես  
օրհնում եմ քո խեղճ աշքերը, օրհնում եմ քո մարմինը և  
միտքը, քո զոհը և բարությունը... Իսկ դու ինձ օրհնիր  
երբ հայրը լքում է իր երեխաներին, երեխաներին ոչինչ չե-  
մնում անելու քան հայր դառնալ միմյանց համար։

ՀՀ

Մարկն առավոտյան հեռագիր ստացավ, որ մայրը գա-  
լիս է, նա այնպես հուզվեց, որ նույնիսկ սկսեց դողալ երենց  
անշատման օրից ի վեր Աննետան նրան միայն մի քա-  
յիկ էր գրել Շվեյցարիայից։ Իսկ Մարկը նրան գրում էր  
ամեն օր։ Բայց Աննետան այդ նամակներից ոչ մեկը չկար-  
դաց։ Դրանք ընկած մնացել էին շվեյցարական մի փոքրիկ  
քաղաքի փոստում, «ցպահանջ» նամակների բաժնում, քա-  
ղաք, որտեղ Աննետան ընդամենը մի օր մնաց։ Ցրվածու-  
թյան հետեանքով նա մոռացել էր հասցե թողնել, որպես-  
զի նամակներն իրեն ուղարկեին։ Այդ լուրջունից, որը որ-

դին համարում էր դիտավորլալ. Մարկը մի սառը շռնչ գցաց:

Նա ապրում էր մոր ամայացած բնակարանում: Ինչքան էլ Սիլվիան կանչեց նրան, Մարկն հրաժարվեց նորից նրա մոտ փոխաղրվել: Նա իրեն բավական հասունացած էր համարում և գտնում էր, որ ինքը կարող է մենակ ապրել: Ապրել բացակայի հետ միասին: Այդ բացական նրա շուրջը ամեն ինչի մեջ էր. Մարկը զուր էր փորձում մի միասնական կերպարի մեջ հավաքել իրերի, կահույքի, գրերի, անկողնու վրայի նրա անտեսանելի հետքերը: Որդու հանդեպ Աննետայի գրսեորած անտարբերությունը Մարկին տանցում էր: Բայց Մարկը չէր զայրանում մոր վրա: Կյանքում առաջին անգամ էր, որ նա չէր զայրանում ուրիշի վրա անարդարության համար, որի զոհն ինքն էր: Մարկը հանդիմանում էր միայն իրեն: Նա իրեն ասում էր, որ մայրն իր գանձն էր, որին ինքը սեփական մեղքով կորցրեց: Եվ նրա հոգին սկսում էր սառել: Այդ երեխան մոտենում էր մոր մահճակալին և գլուխը գնում էր բարձին, որպեսզի ավելի լավ մտածի նրա մասին: Եվ որքան շատ էր Մարկը մտածում մոր մասին: այնքան ավելի պարզ էր հասկանում տարբերությունը մոր և մյուս կանանց միջև, որոնց ինքը սիրել էր:

Նա փորձում էր որոշ ընկերների հետ վերականգնել կապը: Մտերմանալ Պիտանի հետ: Նա ուզեց զննել նրան մինչև հատակը... Ախ, ինչքա՞ն դատարկ էր այդ հատակը: Հավատը, հերոսությունը, պուգելին արժանի հավատարմությունը — ամեն ինչ զուրկ էր անհատական երանգից: Ամեն ինչ լոկ ստվեր էր: արտացոլանք: Նրան անկեղծ զրույցի մեջ քաշելու, դեռ մինչև վերջը շհասունացած մտքի մեջ խորամուխ լինելու հենց առաջին փորձից կարելի էր համոզվել, որ նա, ինչպես հետեւ ոտքերի վրա կանգնած պիոքրիկ շունը, կախարդված է հնգեղ խոսքերով: Ուզում եք այդ շանը տեղում սպանեք, նա լոտոյիր տակառիկների նմանվող աշքերը չի հեռացնի իրեն գայթակղող առարկայից... (Կարիք էլ չկա ասելու թե Մարկն անարդարացի է: Նու անարդարացի էր էռթամբ, ինչպես բոլոր նրանք, ում

Համար սիրելը՝ գերազասել է։ Արդարության մասին նա ամենից քիչ էր մտածում), Մարկն ամենաաննշան համակրանք անգամ չէր զգում խոսքերի ստրուկների նկատմամբ։ Այդ փոքրիկ Դիոգենեսը փնտրում էր մի մարդու, որը մարդ լիներ, որը իր կյանքի յուրաքանչյուր ակնթարթին իրեն հարազատ մնար և ոչ թե կրկներ, ինչպես արձագանք, մի ուրիշին։ Իսկ կանանց մասին շարժի էլ խոսելու Դրանք հավիտենապես serve-padrone-են<sup>1</sup>։

Նրանք անընդհատ ուզում են տղամարդկանց խճճել քեզ հետ կեղծիքի կպչուն սարդոստայնի մեջ, կեղծիք, որից օգտվում է Ցեղը, այդ անկշտում որովայնով անաշք հրեշը...

Եվ ահա Մարկը տեսնում էր միայն մեկին (կամ, գուցե, նրան այդպես թվո՞ւմ էր), որն այն ժամանակից ի վեր, ինչ ինքը հիշում էր նրան, թպրտում էր այդ սարդոստայնի մեջ, պատառոտում էր այն, ուզում էր դուրս պրծնել և, նորից բռնված, վերսկսում էր պայքարը... դա նրա մայրն էր... Իր հետ ունեցած համր գրուցի այդ օրերին, զրուց, որ տեղի էր ունենում ամայաբած բնակարանի շորս պատերի ներսում, որտեղից մայրը, նրան թվում էր, գնացել է մեկընդմիշտ, Մարկը, ամբողջովին այրվելով, հիշողությունների գետով հետագարձ ճամփորդություն էր կատարում գեպի անցյալը և շանում էր վերակենանացնել այդ կնոշ վերջին տարիների միայնակ կյանքի պատկերը։ այդ կյանքը լցնող անհայտ խընդություններով, վշտերով, կրքերով և ճակատամարտերով։ Չէ՞ որ հիմա Մարկը բավական լավ ճանաչեց այդ հոգին, և նրա համար պարզ էր, որ այդ հոգին երրեք դատարկ չի մնացել։ Մարկն այդ հոգուն դատապարտել էր միայնակության շրջափակման՝ իր ներքին աշխարհի մեջ,— նա հիմա ի՞նչ իրավունքներ ունի այդ աշխարհի նկատմամբ։ Այդ հոգին սովոր էր միայնակ մարտնչել։ Հաղթանակ տանել կամ պարտություն կրել և միայնակ քայլել իր ճանապարհով։ Ո՞ւր էր նրան տանում այդ ճանապարհը, որը հետ այսու անցնելու է իրենից հեռու ընկած ինչ-որ տեղով։ Մարկըն այնքան շատ էր այդ մասին մտածում, այնքան շատ էր մտածում այդ հոգու մասին, որ դադարեց իր մասին

<sup>1</sup> Տիրուհի-ծառաներ (իտ.)

մտածելուց եվ միայն մի բան էր ուզում. թեթևացնել մոր համար այդ ուղին, ինչպիսին էլ ուզում է այն լիներ...

Ահա թե ինչ էր կատարվում Մարկի հոգում, երբ հանկարծ հեռագիր եկավ: Ինչպես մեկն այն պայթյուններից, որոնցով նշանավորվում էին պաշարված քաղաքի օրերը: Չը վստահելով իրեն, նա նորից ու նորից էր կարգում հեռագիրը: Վերադարձը, որի վրա նա այլես հույս չէր դնում, նրա մեջ վեհերոտ մի խնդություն էր հարուցում: Ի՞նչն էր Աննետային այս կողմերը բերում: Մարկը սիրու չէր անում մտածել, որ մայրը գալիս է ի սեր որդու Ապրած հիամթափությունները Մարկին դարձրել էին համեստ: Նա սնահավատորեն ենթադրում էր, որ ցանկալին ստանալու ամենահուսալի միջոցը այն շապասելն է:

Աննետան որդուն կայարանում չգտավ: Գնացքն ուզ ծամով ուշացել էր. նա կիոնյան կայարան հասավ օրվա կեսին: Մարկը եկավ ու գնաց, հոգնած անվերջանալի սպասումից: Բայց նա հանգիստ նստել չէր կարողանում: Երբ, վերջապես, Աննետան տուն եկավ, նա Մարկին զգտավ աւանը. Մարկը հենց նոր էր կրկին գնացել կայարան: Աննետան բարձրացավ իր բնակարանը և սկսեց սպասել նրան: Նա հուզվել էր, տեսնելով, որ Մարկը ծաղիկներ է դրել իր սենյակը: Աննետան նստեց, գլուխը հենելով բազկաթոռի թիկնակին: Հոգնածությունից ջարդված, նա ականջ էր դնում փողոցի և տան աղմուկին: Եվ մոռացության մեջ ընկավ... Նիրհի միջով նրա ականջին հասան ինչ-որ մեկի ոտնաձայները, ինչ-որ մեկը վազելով բարձրանում էր սանդուղքն ի վեր, ներս մտավ Մարկը: Նրա կրծքից դուրս պրծավ ուրախության ճիշը: Աննետան ժպտալով մտածում էր.

«Ուրեմն, նա ինձ սիրում է»:

Նա ճիզ գործադրեց, որպեսզի տեղից վեր կենա: Բայց ոտքերն իրեն շենթարկվեցին: Նա ձեռքերը պարզեց դեպի Մարկը: Մարկը նետվեց մոր կողմը:

— Ախ, ես այնպե՞ս էի քեզ սպասում: Ինչպե՞ս տեղ հասար:

Աննետան չէր պատասխանում: Նա փաղաքշանքով շո-

յում էր որդու այտերը, մազերը։ Հայացք զցելով մոր վրա, Մարկը նրա հյուծված դեմքին հոգնության և ցավի արտահայտություն տեսավ և բնազդով հասկացավ մոր վիճակը։ Հարցերը, դիտողությունները, որոնք պատրաստ էին զուրս թռչել շուրթերից, տեղնուատեղք սառեցին, քարացան։ Գրկելով մորը, Մարկը նրան աթոռից վեր բարձրացրեց... (ինչքան է ուժեղացել! իսկ ինքը, ինքն ինչքան է թուլացած)։ Աննետան ոտքի կանգնեց և, հենվելով որդու վրա, մի քանի քայլ արեց դեպի լուսամուտը։ Աղջամուղջի գեղին լույսի տակ Աննետայի դեմքը թվում էր առանձնապես գումատ Մարկն ասաց.

— Դու պետք է հենց հիմա պառկես...

Աննետան սկսեց առարկել, բայց նրա գլուխը պտտվում էր, և նա թույլ տվեց, որ Մարկն իրեն մոտեցնի, գրիթե գրկած հասցնի անկողին։ Մարկը պառկեցրեց նրան, հանեց կոշիկները, օգնեց շորի կոճակներն արձակել։ Նա այլևս չէր հակառակվում. լավ էր հանձնվել մեկի խնամքին, ով ուզում էր օգնել, ով սիրում էր նրան...

Ով սիրում էր նրան... Կնշանակի, Մարկը սիրում է նրան... Որքան հոգնեցուցիլ է մտածել... Աննետան դա հետաձգեց վաղվանու իսկ Մարկը, գուցե, ուրախացավ, որ պատճառ կա բացատրությունները հետաձգելու համար։ Բայց մի աննահանջ հարց նրան տանջում էր, պտտվում լեզվի ծայրին։ Մարկը դեռ չէր հասցրել այդ արտահայտել երբ մայրը, պառկելով, ներողություն խնդրեց իր հոգնածության համար։

— Ամոթ է այսպես անձնատուր լինել գրգանքի... Ներիր ինձ, տղաս... Մինչդեռ ինչքան ամուր էի ես... Բայց հիմա ոտքի վրա կանգնել չեմ կարողանում։ Մի քանի գիշեր շարունակ չեմ քնել... Նստիր այստեղի Պատմիր։ Ինչ էիր անում այսօր, այդ ինչպես իրար չենք նկատել...

Մարկն սկսեց ընդհատուն պատմել իր ետ ու առաջ վազվակելու մասին։ Աննետան չէր հետեւում այդ պատմության թելին։ Նա նույնիսկ դադարեց խոսքերն հասկանալուց, բայց որդու ձախնը օրոր էր ասում Աննետային։ Նրա աշքերը փակվում էին։ Մարկը լոեց, վեր կացավ տեղից,

Նայեց մորը, դժկամորեն հեռացավ։ Չարտահայտված հարցը գեռ այրում էր նրան, նա վերադարձավ և անվճռական խոնարհվեց քնածի վրա։ Աննետան աշքերը բացեց։ Մի տեսակ անվարժ ուղղելով բարձը, Մարկը հանկարծ վրա ավեց։

— Այս անգամ դու կմնա՞ս ինձ մոտ։

Աննետան չհասկացավ և զարմանքով նայեց որդուն։ Մարկը կրկնեց, ջանալով խոսել անբոնազբոսիկ։

— Դու կմնա՞ս։

Աննետան ժպտաց։

— Կմնամ…

Եվ քնեց… /

Մարկը թեթեացած շունչ քաշելով, գնաց։

Իր սենյակի դուռը Մարկը թողեց կիսաթաց։ Նա լսում էր մոր համաշափի շնչառությունը։ Մարկն իրեն ասում էր. «Նա այստեղ է... ինձ հետ է... Ես ժամանակ ունեմ...»։

Հենց այդ նույն գիշերը տեղի ունեցավ թշնամու ավիացիայի հարձակումը Փարիզի վրա։ Շահկները ոռոնացին։ Եվ տանն սկսվեց սովորական իրարանցումը, բնակիչները բարձրանում և իշնում էին սանդուղքով։ Մարկը տեղից թռավ և մոտեցավ մորը։ Աննետան այնքան ամուր էր քնած, որ նա չհամարձակվեց արթնացնել նրան։ Մարկը մտածում էր.

«Ընումբերն ընկնում են, թող ընկնեն։ Մենք միասին ենք»։

Այն գիշերները, երբ ինքը մենակ էր քնակարանում, նա օդային տագնապների ժամանակ սարսափում էր, ինչքան էլ ուզում է քաջ ձևանար։ Իսկ հիմա (ինչո՞ւ) նա գրեթե հաճույք էր զգում։

Անհանգստանալով նրա համար, Միլվիան առավոտյան Մարկին այցելովթյան եկավ։ Իմանալով, որ Աննետան եկել է, նա Մարկին խոզի ճուտ անվանեց (Մարկը խանդությամբ Միլվիայից թաքցրել էր հեռագիրը, որպեսզի մայրը գալու առաջին օրն ամբողջովովթյամբ իրեն պատկանի)։

Քայլ Աննետան դեռ քնած էր, իսկ Մարկը վիշտապի

նման ոչ ոքի թույլ չէր տալիս մտնել մոր սենյակը, վեճի աղմուկն Աննետային արթնացրեց, և Սիլվիան ներս մտավ, նա քրոջ հետ խոսելու շատ բան ուներ, բայց Սիլվիան նույնպես անմիջապես նկատեց, որ անձրեն ու մրրիկը ալեկոծել են Գետը<sup>1</sup>, և, ինչպես միշտ հոգատար այն մարդկանց նկատմամբ, ում սիրում էր, Սիլվիան սկսեց խոսել միան այն մասին, ինչը կարող էր զվարճություն պատճառել Աննետային. Կյանքի փորձը Սիլվիային սովորեցրել էր, որ ալեկոծված հոգու համար լավագույն դեղամիջոցն այդ հոգուն ձեռք շտալն է, որպեսզի նրա հատակը աստիճանաբար ծածկվի ավաղով։ Նա ծիծաղում էր Աննետայի վրա, որ քնով է ընկել և շի լսել ոմբակոծությունը, և փնթինթում էր Մարկի, այդ իշուկի վրա, որ նա Աննետայի մեկնելուց հետո համառորեն հրաժարվում էր թողնել մոր քնակարանը և տեղափոխվել Սիլվիայի մոտ, Սիլվիան կատակով ակնարկում էր, որ ինքը նրան կասկածում է գիշերային զբոսանքների ազատություն ունենալու ցանկության մեջ։ Բայց Մարկը զղայնացավ, նա ասաց որ ինքը խոսք է տվել խելացի պահել իրեն և թույլ շի տա. որ իր ասածներին չհավատան... եթե Մարկն ուզենար ի հեճուկս Սիլվիայի զվարճություններ փնտրել, ապա նա երեխա չէ և չէր ամաշի այդ ասել Սիլվիայի երեսին։ Հետո Մարկը զըղցաց, որ այդպիսի բաներ է խոսում մոր ներկայությամբ, և, ամոթից կարմրելով. թաքնվեց իր սենյակում։ Երբ գուրս եկավ այնտեղից, Սիլվիան հպարտությամբ ասաց Աննետային.

— Ինչ իր ասածի տղա չ, ը՞՛, ինչքա՞ն նման է մեզ, Աննետան մտածում էր.

«Մի՞թե նա ինձ նման է»։

Աննետան ջանում էր նորից մտնել տնային կյանքի հունի մեջ, բայց հոգեկան քարդվածության զգացումը երկար չէր անցնում։ Նա շատ շուտ հոգնում էր, Մարկն աշխատում էր մոր վրայից վերցնել նրա հոգսերի մի մասը։ Նա ձեացնում էր, թե ոչինչ չի նկատում, բայց միշտ հայտ-

1 Սիլվիեր ֆրանսերեն նշանակում է գետ։

նըվում էր մոր կողքին, երբ պետք էր լինում նրան ազատել որևէ հոգնեցուցիչ աշխատանքից — կահույքի տեղը փոխելուց կամ վարագույրները կախելու համար աստիճանների վրա բարձրանալուց։ Այդ հոգատարությունը նրա մեջ նոր գիծ էր — նոր և Մարկի և մոր համար։ Ինչպես բոլոր արդարասեր մարդիկ, Մարկը վախենում էր, որ հանկարծ Աննետան այդ հոգատարության մեջ տեսնի այն չափազանցված ջերմ եռանդը, որից ընտանեկան կեղծավորության հոտ է փլում, և այդ ժամանակ նա ջանում էր անտարբեր տեսք ընդունել։ Աննետան հուզված և մի տեսակ քաշվելով, սկսում էր նրան շնորհակալություն հայտնել, բայց շփոթվելով, ավարտում էր շատ ավելի սառը, քան այդ ուզում էր։ Երկուսն էլ որոշ ժամանակ սպասում էին, ուշադիր, սիրալիր, առանց երկար խոսելու, աշքի տակով մեկը մյուսին հետեւելով... թե ո՞վ կսկսի խոսել։ Նրանցից ամեն մեկը վախենում էր խոսակցություն սկսել, վախենում էր նոր հիասթափությունից։ Մարկը մորից ոշինչ չէր հարցնում նրա ուզեւորության և անսպասելի վերադարձի մասին։ Եվ եթե մայրը երբեմն, ինքն էլ այդ շնկատելով, մտածմունքների մեջ էր ընկնում, Մարկը ողջախոհաբար շրջվում էր, վախենալով, որ անզգուշաբար կարող է տեսնել, թե ինչ է կատարվում մոր հոգու մեջ։ Նա նույնիսկ հեռանում էր իր սենյակը, որպեսզի նեղություն շտա Աննետային։ Իսկ երբ Աննետան հարցուփորձ էր անում որդուն։ թե նա ինչ էր անում իր բացակայության ժամանակ, դա Մարկին մի տեսակ ցավ էր պատճառում — Աննետան այնպիսի հարցեր էր տալիս, որոնց Մարկն իր նամակներում վազուց արդեն պատասխանել էր։ Մի՞թե մայրն իրեն այնքան քիչ է սիրում, որ այդ նամակներն ընդամենը հենց այնպես անփութորեն աշքի է անցկացրել։

Եթե Սիլվիայի պատահական նկատողությունը լիներ, Աննետան այդպես էլ չէր իմանա այդ նամակների գոյության մասին։ Սիլվիան երբեմն այցելության էր գալիս «երիտասարդ զույգին», ինչպես նա էր արտահայտվում։ Տեսնելով, որ Աննետան ու Մարկը միմյանց մեջ նախկինում իրենց համար անհայտ զգացմունքներ են չհայտ-

նագործում», նա իբեն խոսք տվեց չխառնվել և ամբողջ շպին նրանց թողնել այդ հայտնագործությունների դժվարությունն ու խնդրությունը: Բայց նրանք անշափ երկար էին ձգձգում, և Սիլվիան որոշեց բոթիլ նրանց: Մի անգամ, Մարկի բացակայության ժամանակ, Աննետայի հետ զրուցելիս, Սիլվիան նրանց «սիրահարներ» կոչեց: Աննետայի առարկությանը Սիլվիան, ծիծաղելով, պատասխանեց.

— Ես քո մասին չեմ ասում, որ շորսիրտ ես: Դու դո՞ս ես լինում, երբ քեզ համար հալումաշ են լինում, դա քո դերն է:

— Այդ էր պակաս, այդպես չլինեթ,— նետեց Աննետան: Բայց Սիլվիան զիտեր խոսքն ուր է տանում:

— Դրա փոխարեն պատանի երկրպագուդ, որը քո բացակայության ժամանակ ամեն օր քեզ նամակ էր գրում...

Աննետան արդեն չէր լսում շարունակությունը: Մարկը նրան ամեն օր նամաշ՝ էր գրում: Նա շմտածեց հասցն թողնել, որպեսզի նամակներն իրեն ուղարկեն, և այդ նամակներն ընկած են այնտեղ... Այո, Սիլվիան իրավացի է, Աննետան դաժան սիրտ ունի... Նա անմիջապես ետ պահանջեց ուրիշ վայրում մնացած այդ նամակները: Բայց չէր ուզում, որ Մարկը դա իմանա: Միայն թե նամակներով կտպոցը նրան չհանձնվի: Աննետան հետեւամ էր փոստատարին, բայց երկար ժամանակ այդ նամակները չէին գալիս: Այնուամենայնիվ Աննետային հաջողվեց դրանք գրանապանից աննկատելի կերպով իր ձեռքը գցել, հենց Մարկի քթի տակ, որին ինքը կանխեց: Աննետան սպասում էր Մարկը տնից գնա, որպեսզի ընթերցի դրանք:

Դրանք ութ հատ էին: Մի ամբողջ գա՞նձ... Հենց առաջին բառերից Աննետայի աշքերը արցունքով մշուշվեցին: Նա ուզում էր կարդալ բոլորը, կարդալ մի շնչով, բայց չէր կարողանում: Նա փորձեց դրանք ընտրել ըստ ամսաթվերի, որպեսզի հետո դանդաղ, մեկը ժյուսի հետեւից ընթերցի: Բայց դա նրա ուժերից վեր էր: Աննետան դրանք կուլ էր տալիս ինչպես պատահեր: Դուրս քաշելով պատահած նամակը, Աննետան կարգում էր մի շնչով, թոշելով տողերի վրայից, կանգ առնելով, ագահորեն վերադառնալով առանձ-

Նապես քնքուշ բառերին։ Իր առաջին քաղցը հագեցնելուց հետո միայն նա կարողացավ մի անգամ ևս ընթերցել հերթականությամբ, մի անգամ ևս ըմբոշխնել դրանք, ինչպես պետքն է։ Աննետային հեղեղած սիրուց, համակած ամոթի զգացումից արյունը հորդեց դեպի նրա այտերը։ Ինչքա՞ն է մեծ նրա հանցանքը որդու առաջ...»

Չի կարելի ասել, թե Մարկը զեղումների մեջ այդքան շոայլ էր։ Նա ատում էր սենտիմենտալությունը (մանավանդ որ ինքն իրեն կասկածում էր այդ մեղքի մեջ) և իր նամակներում խուսափում էր քնքուշ խոսքերից, որոնք պատրաստ էին գուրս թռչել նրա շուրթերից։ Բայց մայրը, որ գիտեր այդ շուրթերի ամենաաննշան ծալքը, հուզվում էր ավելի ուժեղ, զգալով այն սանձը, որը որդին իր վրա էր դրել։ Առաջին նամակում Մարկը գրել էր.

«Մամա, դու ինձ չես սիրում...»

(Աննետայի սիրտը ճմբվեց):

... Ես ինքս էլ ինձ չեմ սիրում։ Ես ոչինչ չեմ արել այն բանի համար, որ ինձ սիրեն։ Եվ, կնշանակի, դա արդարացի է։ Բայց չէ որ ես քո որդին եմ։ Եվ ես քեզ ավելի մոտ եմ, քան ուրիշ որեւէ մեկը։ Ես ի վիճակի շեի քեզ այդ մասին ասել։ Ուրեմն, ինձ թույլ տուր գրել։ Ինձ պետք է մի բարեկամ, ես այդպիսին շունեմ։ Ես պետք է մտածեմ, որ դու իմ բարեկամն ես, եթե անգամ գա այգպես չէ։ Մի՛ պատասխանիր ինձ։ Ես չեմ ուզում, որ դու քեզ իմ բարեկամը կոչես, ելնելով քո բարությունից, խղճահարությունից։ Ես ատուժ եմ բարությունը։ Ստորացում չեմ ուզում։ Չեմ ուզում ինաբեռություն։ Եվ ես քեզ սիրում եմ ոչ թե նրա համար։ Որ դու բարի ես։ Ես չգիտեմ, դու բարի ես, թե ոչ ես քեզ տիրում եմ քո ճշմարտացիության համար...։ Մի՛ պատասխանածիր ինձ։ Ինչ էլ ուզում է դու իմ մասին մտածես։ Ես չեմ կարող չգրել քեզ։ Թող իմ մայրը իմ բարեկամը լինի, ես իմ բարեկամին եմ գրում, ես չեմ գրում մորս։ Ես պետք է որ մեկնում եկին վստահեմ։ Ինձ անշաբի շատ բարենց են ենշում...։ Ես լափազանց միայնակ եմ։ Քափից դուրս առնարապի՛կ։ Յգնի՛ր ինձ։ Ես գիտեմ, որ դու ուրիշներին ռպնում ես։ Դու կարող ես ինձ էլ օգնել։ Դրա

Համար բավական է լսել ինձ մինչև վերջը ես պատասխան շեմ ուզում... Ես պետք է շատ բան ասեմ քեզ, ես արդեն այնպիսին չեմ, ինչպիսին որ կայի, Վերջին տարվա ընթացքում ես շատ շատ եմ փոխվել... Երբ ես զրիշը ձեռք տուա, ուզեցի քեզ պատմել այն ամենը, ինչ ես արել եմ այս տարի, ուզեցի պատմել իմ մեջ տեղի ունեցած փոփոխության մասին։ Բայց հիմա համարձակությունս չի ներում, այնքան ամոթալի բան է եղել։ Ես սարսափում եմ. ի՞նչ կլինի, եթե դու ինձանից է՛լ ավելի՛ հեռանաս։ Դու առանց այն էլ արդեն բավական հեռո՞ւ ես։ Եվ այնուամենայնիվ, ես ստիպված կլինեմ մի օր բացել քո առաջ ամեն ինչ։ Եթե անդամ դու առես ինչ դրա համար, ես ավելի շատ ինձ կատեի, եթե շասեի աշդ։ Ես ասելու եմ։ Հետու Մյուս անգամ։ Այսօրվա համար այսքանը բավական է։ Այսօր ես արգեն բավական շատ բան տվի քեզ, Համբուրում եմ քեզ, իմ ընկերութիւն։

Տիրական սիրո այդ տոնը համակեց, հուզեց, նվաճեց Աննետային, Հաջորդ նամակները ներծծված էին նույն կըրքութությամբ։ Մարկը չէր համարձակվում պատմել այն։ մասին, ինչը ամենից շատ էր հուզում նրան։ Յուրաքանչյուր նամակում նա ասում էր.

«Գուցե այս անգամ... Ոչ, դեռ չեմ կարող։ Ոչ մի կերպ չեմ կարող։ Չէ որ պետք է մոռանալ, որ դու կին ես, Բարեկամս... Ուզո՞ւմ ես դու արդյոք լինել այդպիսին, Կարո՞ղ ես արդյոք... Ախր դու այնուամենայնիվ կին ես, իսկ կանանց ես չեմ հավատում։ Եվ առանձնապես չեմ չէ հարգում նրանց։ Ների՞ր ինձ։ Դու—ուրիշ ես։ Վերջի՞ն ժամանակներից սկսած։ Մինչեւ անցած տարի ես քեզ համարում էի նույնպիսին, ինչպես ն բոլորին։ Ես կապված չէ քեզ (առանց այդ ցույց տալու), բայց վստահություն լունեի։ Հիմա պատկերը փոխվել է։ Քիչ բան չեմ եւ տեսել իմացել և, ըստ երեսութիւն, կուահել այդ ժամանակի ընթացքում։ Քո մեջ, իմ մեջ, ուրիշներէ մեջ... Տեսնում ես, շատ բան ինձ համար պարզ գարձավ..., նույնիսկ լափից ավելի... Եվ ի միջի այլոց, շատ այլանդակ բաներ, այնպիսի բաներ պարզ դարձան, որոնցիք մարդ քակ է զգում։

Բայց ես որոշեցի: ոք ավելի լավ է դրանք իմանալ, եթե գտ ճշմարտություն է: Այո, աշխարհն անհրապույր է: Կանանց ես չեմ հարգում: Տղամարդկանց ատում եմ: Ատում և նաև ինձ: Բայց քեզ— քեզ ես հարգում եմ: Ես սովորեցի քեզ հասկանալ: Ես քո մասին որոշ բաներ իմացա: Որոնք դու ինձ չէիր ասել (այնքա՞ն էլ շատ բան դու ինձ չե՞ս ասել), բայց որոնք ինձ պատմել է Սիլվիան: Իմ ականջին հասել է նաև ուրիշ բան, որի մասին Սիլվիան չի ասել, որը նա նույնիսկ չի էլ ենթադրում: Սիլվիան հիանալի կին է, բայց նման բաները նա հասկանալ չի կարող... Իսկ ես հասկանում եմ դրանք... (Այդպես ինձ թվում է... Ոչ, ես համոզված եմ): Եվ դրանից շատ բան հենց իմ մեջ ինձ համար պարզ է դարձել ինչը ես առաջ չէի հասկանում... Ախ, ինչ անկապ է այս բոլորը, բոլորը, ինչ ես գրում եմ քեզ...

(Զայրույթից նրա ծայրը մտել էր թղթի մեջ և ծակել այն):

... Ինչքա՞ն գժվար է իր մասին պատմելը և հեռվից և երես առ երես: Լեզուն կաշկանդվում է: Ինձ թվում է, թե ավելի հեշտ կլիներ բացատրվել, եթե դու այստեղ լինեիր, իմ առաջ... Բայց ո՞չ Չգիտեմ... Քո աշքերը, երբ դու նայում ես ինձ, փաղաքշորեն-հովանավորական են, կամ ծաղրական (թե մեկը, թե մյուսը ինձ կատաղության են հասցնում), և կամ էլ բացակա են, հեռու... Քո հայացքն անցնում է իմ կողքով... Բայց նայիր ուղղակի հոգուս մեջ, հոգուս ամենախորքը, նայիր ինձ, ինչպես որդուն քո, ինչպես բարեկամի, ինչպես տղամարդու...):

Աննետան տեսնում էր այդ հայացքը, որն անքթիթ իրեն էր նայում, պահանջկոտ և խիստ: Եվ երկշոտաբար կախցրեց աշքերը... Նրա որդին տղամարդ է... Աննետան դեռ չէր պատկերացնում այդ: Մայրը միշտ իր որդու մեջ երեխայի է տեսնում: Պատանու այդ ծուռումուռ, անվըստահ, զայրագին նամակներում Աննետան հրամայական ձայնի երանգ էր լսում: Եվ խոնարհվեց, ինչպես հնում խո-

Նարհվում էր ամուսնուց զրկված և ավագ քրդու խնամաւ կալության տակ մտած մայրը:

Բայց իսկույն եեթ նորից շտկվեց...

«Իմ որդին, Մարդը, որին ես ստեղծել եմ: Իմ արարածը: Մենք հավասար ենք»:

Աննետան կարդում ու կարդում էր աղջամուղջում, չնըս կատելով, որ աղջամուղջը թանձրանում է... Մարկը ներս մտավ: Աննետան շտապեց նամակները հավաքել սեղանից, և դրանք թափվեցին հատակին: Ոչ, պետք չէ, որ նա մորը տեսնի ընթերցելիս: Աննետան չէր կարող որդուն խոստովանել, որ մինչև հիմա այդ նամակները չի կարդացել:

Մարկը զարմացավ, մորը խավարում գտնելով, և ուզեց լույսը վառել: Աննետան շթողեց: Մայր ու որդի մոտեցան լուսամուտին և սկսեցին զրուցել: Նրանք նայում էին փողոց. խանութներում սկսել էին վառել լույսերը, որոնց շուրջը փուլկոտ սահում էին ստվերները: Երկուսն էլ շփոթահար վիճակում էին: Աննետան աշխատում էր գլուխ հանել խճճված զգացմունքների նոր հեղեղից: Մարկը զգաստացել էր, նա վիրավորվում էր, որ մայրը ոչ մի անգամ ակնարկություն շարեց այն ամենի վերաբերյալ, ինչի մասին ինքը սիրուը բացեց նրա առաջ: Զրուցում էին սառը, բռնագրոսիկ: Հաճախ լռում էին: Մարկը պատմում էր այն մասին, ինչ իմացել էր մի օր առաջ—ճակատից եկած վերջին լուրերի, մարտերի և կորուստների մասին... Ոչ մի հետաքրքիր բան չկար: Աննետան չէր լսում...

Եվ հանկարծ նա լուռ կերպով Մարկին սեղմեց իրեն: Մարկը կանգնած էր անշարժ, զարմանքից համրացած:

Աննետան ասաց.

— Լույսը վառի՞ր:

Մարկը լույսի անջատիչը պտտեց: Եվ տեսավ հատակին թափթփված նամակները: Աննետան ինքը դրանք ցույց տվեց նրան: Եվ բոլորը խոստովանեց, բոլորը, ինչ ուզում էր թաքցնել որդուց: Նրանից ներողություն խնդրեցաւ եվ ասաց.

## — Բարեկամս...

Բայց հիմա նա արդեն այն տղամարդը չէր, որի նախակներում գուրք էին ժայթքում զայրույթի և հպարտության ձայներանգները։ Դա փոքրիկ մի տղա էր, և նա ծըլկեց իր սենյակը, որպեսզի հաղթահարի հուզմունքը։

Աննետան նրա հետեւից շգնաց նա ինքն էլ չէր կարողանում իր հուզմունքը զսպել։ Աննետան կանգնել էր նույն այն տեղում, որտեղ Մարկը թողեց նրան, և լուռ էր։

Սիլվիայի հայտնվելը թուղացրեց նրանց կաշկանդող լարվածությունը։ Ծաշեցին երեքով, և Սիլվիան, որ միշտ այնքան զգայուն էր, շհասկացավ, թե ինչ է կատարվում նրանց հետ։ Նրանց մեջ ինչ-որ լուսթյուն կար, հեռվություն։

Բայց հենց որ Սիլվիան գնաց, նրանք նստեցին սեղանի մոտ և մի քանի ժամ շարունակ, իրար ձեռք բռնած, սկսեցին կամացուկ զրուցել։ Եվ շարունակում էին խոսքեր փոխանակել սենյակից սենյակ նույնիսկ այն բանից հետո էլ, երբ որոշեցին, վերջապես անջատվել։ Սակայն գիշերվակեսին Մարկը տեղից վեր կացավ և բորիկ մոտեցավ Աննետայի մահճակալին։ Նա նստեց մոր գլխատեղի մոտ դրված ցածրիկ աթոռին։ Նրանք արդեն չէին խոսում։ Բայց բաղձում էին միասին լինել, իրար շատ մոտիկ։

Վրա հասած լուսթյան մեջ ճախրում էր տան տանջանքար ոգին։ Թոցերով պարուրված այդ տան թախիծներն ու կրքերը... Մի հարկ ներքենում թեռնարդենների ընտանիքը, որին գլխատել էր որդիների կորուստը, de profundis clamavi<sup>1</sup> հավիտենական լուսթյանը... Երկու հարկ ներքենում ողբում է ֆիրյորը, որն իր միակ որդու մահից հետո որբացել է, ցամաքել իր հայրենասիրական կոապաշտության մեջ, որից նա հուսահատորեն կառչում է... Մի հարկ վերենում, որտեղ ապրում են երիտասարդ ամուսիններ Շարդոննեները, հետապնդող, խայտառակ և շարտահայտված գաղտնիքը կարծէս շիկացած երկաթով այրում է մարմինն ու հոգին. Եր-

<sup>1</sup> Խորքից (անդունդից) աղերսում է (լատ.) : — Կաթոլիկների հագեհանգստյան աղոթքի սկզբնական խոսքերը,

կու աիրող մարդկանց, որոնք, հավիտենապես իրար չին միացած, այդ գաղտնիքը հուր-հավիտյան դարձրեց օտարեւուր... Նույնիսկ Աննետալի քնակարանում, Ֆիջանցքի Վյուէ կողմում, գատարկ, երկլոտաբար փակված սենյակում, դեռ պահպանվում է ինքնասպան եղած արյունապիղծ կնոջ այրող շունչը... Տունը կարծես ծուխ արձակող, կիսով չափ այրված զահ լինի: Կենդանի մնացածներից ոչ ոք աշքը և փակում այս խուզ կեսպիշերային ժամին: Տենդը, ցավը, հետապնդող մտքերը կրծում են նրանց...

Միայն նրանք են, մայր ու որդի, որ լողում են հեղեղիթավալվող ալիքների հատարին, այդ բոցկլտացող հոգիների վերևում: Նրանց փոխանակած մի քանի խոսքերը ցույց են տալիս, որ երկուսն էլ մտածեցին այդ մասին: Նրանք չեն ուզում բարձրածայն արտահայտել իրենց միտքը, բայց իրար ձեռք բռնեցին. կարծես սարսափելով, թե իրար կկորցնեն, նրանք իրար հետ փրկվում են բոցերից, ինչպես Թորգոյում<sup>1</sup> տեղի ունեցած հրդեհի ժամանակ...

Աննետան, որի մեջ արթնացավ մայրական տագնապը: Իր փոքրիկ էնեխն ասաց.

— Եսկ հիմա քնիր: Տղաս, դա խելամիտ չէ: Դու կհիվանդանաս,

Բայց Մարկը համառորեն գլուխը թափ տվեց.

— Դու հաճախ ես հերթապահել իմ անկողնու մոտ. Հիմա իմ հերթն է:

Լույսը բացվեց: Մարկը նստած քնեց, գլուխը վերմակին խոնարհած: Աննետան վեր կայավ և նրան պառկեցրեց իր անկողնում: Նա շարթնացավ: Եվ մինչև օրը բացվելը, Աննետան մնաց բազկաթոռին նստած:

Զրուցելով ամբողջ երեկոն և համարյա թե ամբողջ գիշերը, նրանք զրեթե ոչինչ շասացին միմյանց: բացի ամենակարևորից. որ նրանք նորից գտան իրար և հիմա կքայլեն ձեռք ձեռքի տվածի թայց մանրամասը խոստու-

1 Հրդեհ Հռոմում, Թորգոյ Նուովոյի շրջանում, 847 թվին, որը պատկերված է Խաֆայելի որմնանկարներում:

վաեանքն այն մասին, ինչը լցնում էր նրանց միտքն ու սիրտը, նրանք թողին ապագային և շարունակում էին հետաձգել մյուս օրերին նույնպես. Աննետան միայն աստիճանաբար էր իմանում, թե վերջին տարվա ընթացքում ինչպես էին փոխվում նրա որդու հայացքները պատերազմի և հասարակության վերաբերյալ Եվ Աննետան հուզմունքով բառերի արանքում կարդաց (Մարկն անհարմար էր զգում դրանք մոր երեսին ասել, իսկ մոր համար անհարմար էր դրանք լսել), թե Մարկն ինչպես հայտնագործեց և ճանաշեց մոր հոգին և ինչպես սկսեց նրան աստվածացնել:

Բայց այն տանջալից խոստովանությունները, որոնք քարի նման ծանրացած էին Մարկի սրտին, նա դեռ չէր համարձակվում անել, Աննետան չէր ջանում որդուն անկեղծության կոչել, Բայց նա հասկացավ, որ այդ մտքերը անվերջ հետապնդելու են Մարկին, քանի դեռ նա չի ազատվել դրանցից, և ինչպես փորձառու մանկաբարձուհի, օգնության հասավ այդ անհանգիստ հոգուն:

Մի անգամ աղջամուղջին— վստահելի խոստովանությունների ժամ, ժամ, երբ գրեթե մեկը մյուսին չի տեսնում,— Աննետան, կանգնած որդու կողքին, նրա հետեւ, արտասանեց.

— Քո հոգու վրա մի բան կա ծանրացած: Տուր ինձ, ես կտանեմ այդ:

— Կուզեի, բայց չեմ կարող,— լարված ձայնով պատասխանեց Մարկը:

Աննետան նրան ձգեց դեպի իրեն: Ճեռքով ծածկեց նրա աշքերը և ասաց:

— Հիմա դու մենակ ես, ինքո քեզ հետո:

Եվ Մարկն սկսեց խոսել, դժվարությամբ, գրեթե շշուկով: Պատմեց վերջին տարիներին իր գլուխը եկած բոլոր բաները, թե լավը, թե վատը նա որոշեց խոսել հանգիստ և վճռական, այնպես, կարծես դա ուրիշի մասին է: Մակայն լինում էին դժվարին բռապեներ, երբ պատմությունն ընդհատվում էր, և Մարկը չէր իմանում, թե իր մեջ արիություն կգտնի՝ արդյոք նորից շարունակելու համար: Աննե-

տան լոռում էր։ Նա իր մատների տակ զգում էր նրա բոր-  
բոքված կոսկերը, զգում էր, թե նա ինչպես է ամաշում։  
Զեռքի թեթևակի սեղմումով Աննետան, թվում էր, ասում է։

«Պատմի՞ր Ամոթը ես ինձ վրա եմ վերցնում»։

Աննետան չէր զարմանում իր լսածներից։ Նա գիտեր  
բոլորը, ինչ որդին խոստովանում էր, բոլորը, ինչ նա շըր-  
ջանցում էր լուսթյամբ։ Այդպիսին էր աշխարհը — աշխարհ,  
ուր նա նետել էր իր որդուն և ուր ինքն էր եղել նետված  
անհայտ մի ուժով... Աննետան խղճում էր որդուն, խղճում  
էր իրեն... Բայց ի՞նչ արած, Գլուխդ բարձր պահիր, Կյան-  
քըն այդպես է։ Ընդունենք այն...»

Երբ Մարկը վերջացրեց, սարսափ զգաց. մայրն ի՞նչ  
կասի, Աննետան կոացավ և համբուրեց որդու կախ գցած  
գլուխը։ Մարկն ասաց.

— Դու կարո՞ղ ես արդյոք մոռանալ։  
— Ոչ։  
— Ուրեմն, դու ինձ ատո՞ւմ ես։  
— Դու ես եմ։  
— Բայց ես ինձ ատում եմ։  
— Իսկ դու կարծում ես ես ինձ չե՞մ ատում։  
— Ոչ։ Միայն թե ոչ դու։  
— Ես մարդ եմ, կնշանակի ես ունեմ և հպարտանալու  
բաներ և ամաշելու...»

— Ո՞չ, դու ոչ։  
— Միրելիս, իմ կյանքը եղել է ոչ անբասիր։ Ես մո-  
լորզել եմ, ես հիմա էլ եմ մոլորզում... Զէ՞՞ որ կարեռը  
միայն արարքները չեն։ Մեզ նման մարդկանց համար ներ-  
քին գատաստանը ոչ թե ինչ-որ ոստիկանական իշխանու-  
թյուն է, որը պատժում է միայն գործողությունների հա-  
մար։ Այն, ինչ մենք ուզում էինք, փափազում էինք, ինչ  
մտովի գորգուրում էինք, ավելի պակաս ստորացուցիչ չէ,  
քան այն, ինչ մենք կատարում էինք։ Եվ ինչքա՞ն է դա  
սարսափելի — այն, ինչ մենք տարել ենք մեր մտքերում։

— Դու նույնպե՞ս... Ասենք, ես դա գիտեի։  
— Դու գիտեի՞ր։

— Այո, և ինձ թվում է, որ դրա համար էլ... հենց դրա համար էլ ես քեզ սիրում եմ: Ես չէի սիրի մի մարդու, որն իր զգացմունքներով, մտքերով, կամքով շծգտեր դեպի այդ արգելված աշխարհը:

Աննետան, որ կանգնած էր որդու հետեւ, անձայն գըր-կեց նրան: Մարկը, փոքր-ինչ լոելով, հառաջեց ու ասաց.

— Հիմա ես հասկանում եմ, թե խոստովանանքն ինչ է: Իմ ուսերից կարծես մի լեռ ընկավ:

— Այո, լավ է, երբ կարելի է արտահայտվել, և ինչ-որ մեկը քեզ լսում է մինչև վերջ, է՛ս, իսկ ես ո՞ւմ առաջ խոստովանեմ: Ինձ թույլատրված չէ խոսել...

— Պետք էլ չէ...

Դիշերային լոռվթյան մեջ Մարկն արտասանեց.

Դու եկար ինձ մոտ, դու բռնեցիր ինձ:

— Զեռքդ եմ համբուրում:

Ես ամբողջ սիրով, գողով բռնված:

— Զեռքդ եմ համբուրում:

Աննետան սկսեց դողալ... Անցյալի այդ ձայնը...

— Աստված իմ: Որտեղից դու իմացար:

Մարկը շպատասխանեց: Նա շարունակեց.

— Դու եկար, որ ինձ կործանեռ, Սեր...

Աննետան ձեռքով փակեց Մարկի բերանը.

— Լոի՛ր:

Նա շփոթվեց... Բայց այդ բոլորը այնքա՞ն հեռու էր...

— Մի՞թե դա ես եմ... Ոչ, դա ինչ-որ մի ուրիշն է... Ես այդ ուրիշն էի... Բայց նա արդեն մեռել է:

— «Ես համբուրում եմ ձեռքերը նրա», — ասաց Մարկը:

— Այդ որտեղից ես դու իմացել:

Մարկը լոռում էր:

— Երբվանից է դա քեզ հայտնի:

— Այն ժամանակվանից երբ նա այդ ասել է: Ես բերանացի եմ արել:

— Դու այդ բերանացի՝ գիտես: Եվ բոլոր այդ տարինե-

րին քո մե՞ջ ես կրել... Ապրելով իմ կողքի՞ն, Դա արդեն  
դավաճանություն է:

— Ների՞ր:

— Դու տարօրինակ տղա ես:

— Իսկ դու, կարծում ես, տարօրինա՞կ կին չեն:

— Դու ի՞նչ գիտես կանանց մասին, Դու նրանց չես ճա-  
նաշում:

Մարկը խորը խոցված, սկսեց առարկել: Աննետան  
ժամաց.

— Ա՞յս դու գարշելի աքլոր: Աքլորիկ: Մի լոպպազանա  
քո գիտությամբ: Աղքատիկ գիտությամբ... Քո բոլոր երեա-  
կայական գիտելիքները քեզ միայն խանգարում են կա-  
նանց հասկանալ: Տղամարդը կնոջ մեջ միայն իր համար  
հաճույք է տեսնում: Իսկ որպեսզի կնոջը մարդ ճանաչի  
մինչեւ վերջ, նա պետք է նախ և առաջ իրեն մոռանա: Իսկ  
դրա համար դու դեռ չես հասունացել... Այն, ինչ դու տես-  
նում ես իմ մեջ, բարեկամս, կարելի է տեսնել հազարավոր  
կանանց մեջ: Ես բացառություն չեմ: Այն կանայք, ովքեր  
կարողանան նայել իմ հոգու խորքը, նրանք այնտեղ իրենց  
սեփական կերպարը կտեսնեն: Բայց նրանք փակում են  
իրենց տան ծածկոցափեղկերը, իսկ տղամարդիկ, որոնք  
նրանց կողքին են ապրում, չեն էլ հետաքրքրվում, թե ինչ  
է կատարվում այդ ծածկոցափեղկերի հետեւմ: Դու, խո-  
րամանկ, տեսել ես, դու ճեղքից ներս ես նայել, և քո  
արած հայտնագործությունը քեզ տարօրինակ է թվացել:  
Տարօրինակը լոկ այն է, որ դու կարողացել ես այդ անել:  
Բայց այն ինչ դու տեսել ես, — հենց դա էլ ինքը կինն է,  
բարեկամս:

— Կնշանակի, «դա» բարդ բան է:

— Դու ինք էլ պարզ չես: Մի մարդու մեջ բազմաբ. Հ  
էակներ կան:

— Բայց նրանք բոլորը միասնական մի ամբողջություն  
են կազմում:

— Ոչ բոլորի մոտ:

— Քեզ մոտ: Ինձ մոտ: Եվ ահա այդ միասնական էա-

կին ես սիրում եմ քո մեջ և ուզում եմ, որ դու էլ իմ մեջ  
սիրես:

- Տեսնենք! Ես ոչինչ չեմ խոստանում:
- Դու ուզում ես ինձ ձեռ առնելի թայց ես քեզ ար-  
գեն կստիպեմ:
- Քեզ հայտնի է, որ ես բռնակալության շեմ ենթարկ-  
վում:

— Թայց դու հոգուդ խորքում դա սիրում ես:  
— Եթե սիրում եմ իրեն բռնակալին:  
— Դու նրան կսիրես:

Հիմա Մարկն զգաց իր ուժը: Թող մայրը ձեացնի, թե  
դեռ շարունակում է որդու մեջ երեխայի տեսնել, Աննե-  
տային հիմա չի հաջողվի նրան խարել: Մարկը նրա վրա  
հաստատեց իր իշխանությունը: Աննետան իրենց համա-  
սեղ կյանքում տան զեկավարությունը որդուն հանձնեց:  
Եվ նրան ենթարկվելով, թաքուն ուրախություն էր զգում:

Մարկն իրեն պահեց, ինչպես բոլոր տղամարդիկ: Դեռ  
չէր հասցրել իշխանությունը նվաճել, երբ արդեն շարաշ-  
հում էր այս:

Մարկը հենց նոր ներս մտավ: Աննետան նստած կար  
էր անում: Նա համբուրեց մորը: Մարկը մի տեսակ մտա-  
հոգ տեսք ուներ: Նա նայեց մորը, հեռացավ, պրատեց  
զրքերի պահարանը, սկսեց լուսամուտից դուրս նայել: Հետո  
նստեց սեղանի մոտ՝ մոր կողքին, բացեց ու թերթեց գիրքը,  
զբաղվեց իբրև թե ընթերցանությամբ — և հանկարծ ձեռքը  
մէկնելով դրեց մոր ձեռքին և արագ ասաց.

— Ես ուզում եմ քեզ հարցնել...

Մարկը դեռ վազուց էր ուզում մորն ասել այդ, բայց  
չէր համարձակվում, եվ այդ պատճառով էլ այս անգամ  
ասաց մի շնչով ու շատ արագ: Նրա ներս գալու րոպեից  
Աննետան զգում էր, որ Մարկի շուրթերին մի հարց է այր-  
վում, և նրան սարուափը համակեց: Աննետան ջանոսմ էր  
գլուխն աշատել գրանից: Նա տեղից վճր կացավ, կարծես  
ինչոր բան փնտրելու համար, և անհօգորեն ասաց.

— Էհ, ինչ կա որ, հարցրու, տղաս...»

Բայց Մարկը ձեռքի վճռական շարժումով մորը թույլ շտվեց շարժվել: Աննետան կամա թե ակամա ստիպված եղավ նստել: Մարկը մոր ձեռքը բաց շէր թողնում. Նա աշքերը կախել էր, աշխատում էր իրեն վստահ տեսք տալ: Եվ, հստակ արտահայտելով բառերը, ասաց.

— Մամա, մի բան կա, որի մասին ես ու դու մինչև հիմա չենք խոսել... Մնացած բոլորը քոնն է, և ես իրավունք չունեմ հարցուփորձ անել՝ որևէ բան իմանալու համար... Բայց ինչ այդ մեկին է վերաբերվում, ես իրավունք ունեմ, դա ինձ է պատկանում... Պատմի՛ ինձ իմ մասին...

### Մարկը խիստ հուզված էր:

Նա վաղուց իր տառապում իր ապօրինի ծնունդից: Բարձրախավ հասարակության մեջ այդ հողի վրա Մարկը տհաճություններ էր ունեցել, որոնք խոցել էին նրա ինքնասիրությունը: Բայց հպարտությունից նա շէր խոստովանում այդ:

Լիցեյում հենց առաջին ամիսներից նրան վիճակված էր վիրավորական նկատողություններ լսել, թեև նա, ի միշի այլոց, պարտքի տակ շէր մնում: Այդ վիրավորանքները շատ խոր շէին: Փարիզի դպրոցականներն ավելի կարևոր գործեր ունեն, քան ծնողներին քննադատելն է, հատկապիս պատերազմի ժամանակ: որը հիմնահատակ շրջել է քոլոր բարոյական և հասարակական հիմքերը: Սովորաբար տղաները պնդում էին, պարծենալով դեպի կանայք ունեցած իրենց ցինիկ արհամարհանքով, որ նրանք պիտանի են միայն սիրային հաճույքների համար, և շէին մեղադրում նրանց շափազանց ազատ վարքագծի համար. վախենում էին հետամնաց երեալ: Մարկը միայն ստիպված էր լինում լսել պատանի անամոթների միամտորեն կոպիտ ճամարտակությունները, որոնք, գուցե, նույնիսկ ուզում էին բավականություն պատճառել նրան: Բայց Մարկը դա ընդունում էր բոլորովին այլ կերպ: Ամեն մի ակնարկությունից, որը կարող էր թեկուզ հեռավոր կերպով վերաբերվել նրա մորը, Մարկը դողում էր: Աննետայի պատվին նա վերաբերվում էր շատ ավելի խանդոտաբար, քան ինքը Ան-

նետանու Եվ այդպիսի ակնարկությունների համար նա միշտ պատրաստի կայծակնային պատասխան ուներ. նա գործի էր գնում բռունցքները:

Ավելի ուշ, երկու շաբաթով գավառ գալով մոր մոտ, նա նկատում էր բամբասասեր կանանց հայացքները, որոնք լեզվագորությամբ էին զբաղվում, հետեւ լով նրանց երկուսին, և մի քանի բուրժուական տիկնանց ընդգծված արհամարհանքը, որոնք հանդիպելիս ձեացնում էին, թե չեն նկատում նրանց. Մարկը ոչինչ չէր ասել մորը այդ տպավորությունների մասին. Բայց դրանք ավելի սաստկացրին գավառի նկատմամբ նրա թշնամանքը և հաստատուն դարձրին այլևս գավառ շգալու նրա վճիռը:

Բայց այդ բոլորը դատարկ բաներ են: Կարելի է ուշադրություն շգարձնել այն մարդկանց կարծիքին, որոնց շես հարգում: Նրանք քեզ համար գոյություն ունեն ոչ ավելի, քան քո կոշիկներին նստած փոշին: Բավական է խոզանակը տանել ու բերել դրանց վրայով, թքելով կաշվի վրա, որպեսզի կոշիկները հիանալի փայլեն... Բայց նրանք, ում բարձր ես գնահատո՞ւմ: Նրանք, որոնց ագահությամբ ձըգաւում է սի՞րտդ...

Մարկը տասնութ տարվա մեջ էր: Ահա արդեն մի քանի ամիս էր, ինչ նրա ճանապարհին էր ընկել սիրո ոսկե ըստվերը: Այդ պատանի հոգու մեջ, ամբողջական ու փոթորկալից, մի քնքուշ զգացում էր սողոսկելու նրան թվում էր, թե ինքը սիրահարվել է իր լիցեյական ընկերներից մեկի քրոջը: Նա այդ աղջկան տեսնում էր փողոցում եղբոր հետ կամ մենակ: Նրանք երկուսն էլ ծանոթանալու առիթ էին մինտրում. երկուսն էլ ձգտում էին իրար: Մարկը մի անգամ եղավ իր ընկերոջ մոտ: Բայց նա այլևս ոչ մի անգամ հրավերք շստացավ: Վիրավորանքը, թերևս, այդքան սուր լիներ, եթե ընկերոջ թեթևամիտ հավաստիացումները չլինեին, որ իրեն կհրավիրեն: Ընկերոջ շփոթվելը, Մարկի հետ հանդիպելուց խուսափելու նրա անճարպիկ ճիգերը ընդգծում էին այդ դիտավորյալ մոռացկոտության վիրավորական լինելը: Ընտանիքն անհրաժեշտ էր համարում աւրածության վրա պահել անցանկալի հյուրին: Այդ այ-

բող վիրավորանքը Մարկին սովորեցրեց որսալ — իսկ զուցեն նաև հորինել — արհամարհանքի ուրիշ նշաններ, որոնց վրա առաջ նա ուշադրություն չէր դարձնում: Մարկը նկատեց, որ իրեն չեն կանչում բուրժուական այդ միջավայրը, որտեղ իր ընկերներն էին լինում: Նա երբեք այդ միջավայրն ընկնելու լուրջ ձգտում չէր ունեցել: Բայց հիմա նրան թվում էր, թե դուռը շրխկալով փակվեց ուղղակի իր քթի առաջ: Դա նրա համար ապտակ էր: Եվ նրա հոգում զղաձգության նման բողոք բարձրացավ այդ հասարակության դեմ:

Ու թեև նա ամբողջ կրքով կանգնեց մոր կողմը՝ ընդդեմ հասարակության, նրա մեջ համր վիրավորանք էր հասրւանանում այն կնոջ զեմ, ով դարձել էր նրա նկատմամբ եղած այդ ստորացումների պատճառը: Մարկի խոցված միտքը անընդհատ գլուխ էր կոտրում այն հարցի վրա, թե ով է իր հայրը: Ինչո՞ւ են իրենից խլել նրան: Նա գիտեր, որ այդ հարցերը մորը ցավ կպատճառեն: Բայց չէ որ գա ցավ էր պատճառում նաև իրեն: Թող ամեն մարդ իր բաժինն ստանա: Նա ուզում էր իմանալ:

Աննետան կանխատեսում էր, թե Մարկն իրեն ինչ հարց է տալու, բայց և շարունակում էր հուսալ, որ նա այդ չի արտահայտի: Իհարկե, նա պարտավոր էր որդուն տեղյակ պահել անցյալի այդ գաղտնիքի մասին: Աննետան իրեն խոսք էր տվել ամեն ինչ որդուն պատմել ավելի շուտ, քան որդին այդ կպահանջի: Բայց հետաձգում էր, վախենում էր... Եվ ահա որդին իրեն կանխեց...

— Սիրելիս,— ասաց շփոթված Աննետան,— նա քեզ չի ճանաշում: Դու հասկանո՞ւմ ես... (ես ինչ-որ առիթով մի անգամ քեզ արդեն ասել եմ: որ հասարակության աշխատ ես անբասիր չեմ)... Ես նրանից բաժանվել եմ դեռ մինչև քո ծնվելը...

— Դա միենույն է,— ասաց Մարկը:— Ես ուզում եմ իմանալ, նա ով է: Չէ որ ես ունեմ այդ իրավունքը...

Նրա իրավո՞ւնքը: Նա նույնպես: Մի՞թե Մարկն այդ իրավունքը կգործադրի մոր դեմ... Աննետան ասաց:

— Այդ իրավունքը դու ունես:

— Նա դեռ կենդանի՞ է:

— Այո:

— Ինչպե՞ս է նրա ազգանունը: Ո՞վ է նա, Որտե՞ղ է:

— Այո, ես քեզ բոլորը կասեմ: Բայց սպասիր...

Աննետան ընկճված էր: Մարկը նրան խղճաց: Բայց նա ուզում էր իմանալ: Եվ զսպվածորեն ասաց.

— Մամա, դա այնքան էլ շտապ չէ: Կարելի է հետո ասել:

Աննետան տեսնում էր, որ որդին հազիվ է զսպում իր անհամբերությունը: Եվ չուզեց վերցնել այն, ինչ նա գցել էր ողորմածաբար: Ուժերն հավաքելով, Աննետան ասաց.

— Ոչ, հենց հիմա: Չէ որ դու անհամբեր ուզում ես իմանալ: Իսկ ես էլ ուզում եմ որքան կարելի է շուտ այդ բոլորը հայտնել քեզ: Ինչպես դու ասացիր, այդ գաղտնիքը քեզ է պատկանում: Ես դա պահպանում էի: Ես դեռ վազւց էի պարտավոր հաշիվ տալ քեզ: Եվ դու ինձ հիշեցրիր իմ պարտքը:

Մարկն սկսեց արդարանալ:

— Լոփիր,— ասաց Աննետան: — Հիմա իմ խոսելու հերթն է:

Բայց երբ Աննետան սկսեց խոսել, Մարկը գրեթե ուզում էր, որ նա լոխ:

— Լույսը վառիր,— հրամայեց Աննետան: — Եվ դուռը փակիր, թող ոչ ոք մեզ շխանգարի:

Հենց որ Աննետան սկսեց խոսել, իսկապես էլ ինչ-որ մեկը դուռը ծեծեց: Երկի Սիլվիան էր: Բայց դուռը շբացեցին:

Առանց հոգմունքի արտաքին նշանների, կանգ առնելով միայն ամենակարևոր հանգամանքների վրա, Աննետան պատմեց իր անցյալի մասին, պատմեց, թե ինքն ինչ-պես հարսնացու դառավ, ինչպես խափանվեց նրա ամուսնությունը: Նա խոսում էր հպարտ զսպվածությամբ, չշոշափելով այն մանրամասնությունները, որոնք պատկանում էին միմիայն իրեն, բայց և շթաքցնելով ոչ մի բան, ինչի մասին ինքը պարտավոր էր և ուզում էր ասել: Պատմելու

ժամանակ Աննետան շանում էր հեռացնել իրենից սևոռուն  
այն միտքը, թե տղան ինչ է մտածում:

Բայց Մարկը ոչ մի բանով իրեն լմատնեցւ կում էր  
սառնությամբ: Թվում էր նրանք երկուսն էլ, մայրը և որ-  
դին, ոչ մի առնչություն չունեն այն հեռավոր իրադարձու-  
թյունների հետ, որոնց ստվերները անցնում են նրանց  
առջևով, ինչպես էկրանի վրա: Բայց միայն աստված գիտե,  
թե ինչ տագնապով էր Աննետան շանում կարեկցության  
կայծ նկատել Մարկի հայացքում (այդ հարուցելու համար  
չգնալով ոչ մի զիջման): Մարկը մինչեւ այդ պատմության  
վերջը մնաց անթափանցելի: Աննետան տեսդադին սպա-  
սում էր որդու դատավճռին, բայց Մարկը միայն մի դիտո-  
ղություն արեց.

— Դու շհիշատակեցիր նրա ազգանունը:

(Աննետան ամբողջ ժամանակ նրան անունով էր կո-  
չում):

Աննետան ասաց.

— Ռոժե Բրիսսոտ:

(Որդու սառնությունը փոխանցվեց նաև մորը):

Բայց Մարկի մոտ ուշագրություն գտնվեց միայն ազ-  
գանվան համար, որը մայրն արտասանեց: Այդ ազգանու-  
նը Մարկին լավ հայտնի էր: Նրա շուրթերից դուրս թռավ.

— Դեպուտատ-սոցիալիստը:

Այդ բացականշության մեջ ոչ միայն զարմանք էր զգաց-  
վում, այլև վատ թաքցրած— նույնիսկ ամենեին շթաքցրած—  
ուրախություն:

Բրիսսոն պառլամենտական ճոռոմախոսների շրջանում  
մեծ հողակի էր հասել: Նա երիտասարդությանը կախար-  
դում էր: Այդ հմայքների ցոլքերը Աննետան տեսավ որդու  
հայացքում: Նա սարսափից դողաց: Բայց, լինելով շա-  
փազանց հպարտ, որպեսզի թույլ տա այդ նկատեն, շա-  
փազանց ազնիվ, որպեսզի նսեմացնի հակառակորդի առա-  
վելությունները, նա ասաց.

— Այո, դա նշանավոր անուն է: Դու կարմրելու բան  
չունես:

Աննետան չէր հասցրել արտաքերել այդ խոսքերը, երբ  
որդու շուրջիկ կարդաց.

«Իսկ դու ինչո՞ւ ես ինձանից խլել այդ անունը»:

Բայց Մարկը ոչինչ շասաց: Նա տեղից վեր կացավ և  
սկսեց սենյակում այս ու այն կողմ քայլել, առանց որևէ  
խոսք ասելու: Աննետան հայացքով հետևում էր նրան: Կարդում էր նրա մտքերը: Եվ նույնիսկ կորցրել էր  
պաշտպանվելու ցանկությունը: Դա ինչի՞ է պետք, եթե  
որդին չի պաշտպանում նրան... Աննետան շարժվեց ուղիղ  
վտանգին ընդառաջ, ոչ թե նրա համար, որ հաղթահարի  
այդ վտանգը, այլ նրա համար, որպեսզի ներս թողնի այն:  
Նա հարցրեց.

— Դու ուզո՞ւմ ես նրա հետ ծանոթանալ:

— Այո:

— Ինչ արած.... Ես դեռ բոլորը չէ, որ ասացի քեզ, նա  
գիտե, որ դու գոյություն ունես: Որ դու իր տղան ես: Եվ,  
իհարկե, պատրաստ է քեզ ընդունել, որպես իր որդու:

Մարկը զայրագին ճշաց.

— Եվ դու այդ ինձ շե՞ս ասել:

Աննետան, անշափ գունատված, աշքերը փակեց: Հետո  
նորից բացեց և, նայելով ուղղակի որդու աշքերին, ասաց:

— Ես սպասում էի, որ դու տղամարդ դառնաս: Եվ հի-  
մա տեսնում եմ, որ արդեն դարձել ես:

Մարկը շհասկացավ այդ խոսքերի հպարտ դառնությունը:  
Հարցրեց.

— Նա որտե՞ղ է ապրում:

— Ես չգիտեմ, բայց դու հեշտ կգտնես նրա հասցեն: Մարկը շարունակում էր լայն քայլերով շափել սենյա-  
կը: Նա արդեն չէր մտածում մոր մասին: Մարկը մտա-  
ծում էր միայն իր մասին: Նա իրեն կողոպտված էր հա-  
մարում:

Եվ անողորմ նետեց:

— Վաղը ևնթ կգնամ նրա մոտ:

Որտեղի՞ց է պատանիների մեջ այդ դաժանությունը...  
Իր սենյակում, ինքն իր հետ առանձնացած, Մարկը հա-

կացավ, որ դաժան էր, բայց նա հաճույք էր ստանում գրա։ Նից նա գիտեր, որ խոցեց մի էակի, որն իրեն սիրում է և որին սիրում է ինքը, և խիղճը տանջում էր նրան։ Բայց զղման սրությունը է՛լ ավելի էր ուժեղացնում վայելքը։ Մարկը վրեժ էր լուծում։ Ինչի՞ համար Այն բանի, որ Աննետան նրան շարի՞ք էր պատճառել։ Կամ այն պատճառով, որ սիրո՞ւմ էր Մարկին։ Եթե Աննետան ավելի քիչ սիրեր որդուն, որդին ավելի քիչ վրեժ կլուծեր նրանից։ Մարկը բնավ վրեժխնդիր չէր լինի, եթե մորը ամենենին չսիրեր։ Բայց Աննետան Մարկի առաջ անգեն էր։ Եվ Մարկը դրանից օգտվում էր։ Այդպիսի գեպքերում արդարացումը — և զաղանի բավականությունը — տեսնում ես այն բանում, որ իբրև, ահա, ես կարող եմ, երբ ուզենամ, վերջ տալ այդ խաղին։ Բայց ինչպես հաճախ լինում է, մի անգամ սկսելով այդ խաղը, այլևս չես կարողանում վերջ տալ դրան։

Աննետան տառապում էր... նա անշափ շատ էր սիրում Մարկին։ Այո, անշափ էգոիստորեն... իսկ սերն արդյոք լինո՞ւմ է առանց էգոիզմի։

«Այդ մարդուն ես ստեղծել եմ ինձանից։ Նա ես եմ։ Կարո՞ղ եմ արդյոք ինձ մոռանալ, նրան սիրելով... Մինչդեռ պետք է մոռանալ։ Ես ի վիճակի չեմ։ Ես հիմա էլ չեմ կարող... Եվ ահա՝ պատիժը...»։

Աննետան վաղուց գիտեր, որ այդ օրը կգա։ Եվ դա եկավ։ Աննետան անշափ երկար սպասեց։ Վախենալով որդուն կորցնել, որին խանդոտաբար միայն ինքն էր զավթել։ Եվ կորցրեց նրան։ Ընդամենը մի բոպեն բավական եղավ։ Որպեսզի Մարկը հեռանա նրանից։ Աննետային սարսափը համակեց։ Տիրանալու մի բոպեի և կրքոտ հույսի համար պատանին կարող է մոռանալ մի ամբողջ կյանք, լցված մայրական ինքնուրացմամբ։ Աննետան գեռ առաջ էլ այդ նախազգում, սարսափում էր զրանից։ Բայց իրականությունը նախազգացումից ավելի վատ էր... Մարկի մոտ քնքության ոչ մի խոսք չգտնվեց, չգտնվեց ոչ մի շարժում, որտեղ կարող էր արտացոլվել հարգանք, ուշադրություն։ Մարկը անմիջապես նրան դուրս շպրտեց։ Ի՞նչ էր

Մարկի համար անցյալը։ Նա լցված է միայն վաղվա օրով... Աննետան ջանում էր պատկերացնել իրեն այդ վաղը և դրան հաջորդող գիշերը երբ ամեն ինչ փուլ կզա։ Եվ նախապես իրեն պարտված էր ճանաշում։

Աննետան նույնիսկ պայքարի փորձ չէր անում։ Մարկին սկետք է լրիվ ազատություն տալ ինչպես էլ որ նա որոշի, Աննետան նրա տրամադրության տակ կլինի։ Եթե Մարկին երկար ժամանակ իր իշխանության տակ պահելը Աննետայի ուժերից վեր է, ապա Աննետան նրան կօգնի մինչև վերջին ըռպեն։

Որդուն առավոտյան տեսնելով, Աննետան արդեն շանդրադարձավ այն բանին, ինչը վճռված էր։ Նա պատրաստեց Մարկի համար նրա ամենալավ կոստյումը, ստուգեց, արդյո՞ք ամեն ինչ կարգին է, կարճ ժամանակով գուրս եկավ, որպեսզի նախաճաշ տա։ Նախաճաշի ժամանակ (Աննետան իրեն հարկադրում էր ուտել, որպեսզի տղան շմտածի, թե մայրը իրենից կարեկցանք է սպասում, իսկ Մարկն ուտում էր շտապելով և ագահ, լցված ամենամոտ ժամերի մասին ունեցած մտքերով, որոնց այնքան անհամբերությամբ սպասում էր) Աննետան Մարկին խորհուրդ տվեց Բրիսոոյի մոտ գնալ ոչ թե տուն, այլ նրա փաստաբանական գրասենյակը։ Մոր փաստարկները խելամիտ էին։ Նա խոսում էր հանգիստ։ Մարկը համաձայնեց։ Նա երախտապարտ էր մորը այն բանի համար, որ մայրը, ըստ երեվույթին, ի սեր որդու բռնանում էր իր վրա։ Մարկն այդ բռպեին զգացմունքներին տրվելու մտադրություն շուներ։ Ամենից առաջ պետք է սեփական աշքերով տեսնել և որոշում ընդունել... Իսկ ինչ վերաբերում է այն կնոջը, որը պետք է սպասի և տառապի, ինչ կա որ, թող տառապի... Մի ժամ ավել կամ պակաս— միթե նույն բանը չէ... Մայրը սովոր է։ Հետո՝ Մարկը քնքուշ կլինի։ Այս անպայման, ինչպիսի որոշման էլ ուզում է ինքը հանգի։ Իսկ Աննետան իր կրած տառապանքներից հետո ավելի խորը կվայելի այն երջանկությունը, որը որդին իրեն կվերադարձնի... Հիմա Մարկը անշափ վստահ էր մոր նկատմամբ ունեցած իր

իշխանության վրա։ Մայրը կարող է սպասել... Նա ժամանակ ունի...

Ռոժե Բրիսսոն 1900 թվից փայլուն հաջողություն ու հոչակ էր ձեռք բերել։ Աղմուկ հանած գործերը, հաջողությունները փաստաբանական ասպարեզում, իսկ այնուհետև պառամենտում նրան մղեցին առաջին շարքերը։ Պալատում նա կանգնած էր երկու կուսակցությունների միջև ընկած սահմանագծին— ուղիկալների և սոցիալիստների— զդոն ականջը սրած, թե քամին որ կողմից է փշում, միշտ պատրաստ մի նավուց մյուսը ցատկել։ Նա մի քանի անգամ մինիստր էր եղել. նրան վստահվել էին ամեն տեսակի մինիստրություններ. ժողովրդական լուսավորության, աշխատանքի, արդարադատության և նույնիսկ մի ժամանակ— ծովային գերատեսչության։ Ինչպես և նրա կողեզաները, նա բոլոր մինիստրական բազկաթուուններում իրեն իր տեղում էր զգում։ Ամեն մի նստիքի համար էլ ուզածդ հետույքը լավ է։ Այս գերատեսչությունում է թե այն, մեքենան միննույնն է, ինչպես և նրա ղեկավարման ձևերը։ Պետք է հմտություն, իսկ մնացած բոլորը— նրանք, ում զեկավարում են,— քիչ բան է նշանակում։ Վերջին հաշվով ամենակարենորը ապարատն է։

Գործ ունենալով այդքան բազմազան առարկաների հետ, Բրիսսոն հարստացրել էր իր գաղափարական մտահորիզոնը, կամ, ավելի ճիշտ, իր բառային ինվենտարը, առանց որևէ բան խորը կերպով ուսումնասիրելու. Նա շափազանց զբաղված էր ճառեր արտասանելով և լսելու ժամանակ չէր ունենում։ Բայց խոսում էր հիանալի։ Ասենք, մի բնագավառում նրա գիտելիքները նշանակալից շափով լայնացան. ընտրական նախրի մշակման ու օգտագործման բնագավառում։ Այդ գործում երրորդ հանրապետության պետական գործիշներից ոմանք վարպետներ էին համարվում։ Նրանք ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել էին այն գործիքի ստեղնաշարը, որը նրանց վիճակված էր նվազել, — մասսաներին, — և գիտեին յուրաքանչյուր առանձին ստեղի զաղտնիքը— իրենց ընտրողների թուլությունները, կրքերը,

Թարօրինակությունները թայք ոչ ոք գրա մեջ շէր հասել այնպիսի վիրտուոզային կատարելության, ինչպես հարգածեծար թրիստոն, ոյ ոք այնքան տոնական ու գունեղ շէր հնցեցնում դեմոկրատիայի, այդ բարձրածայն գաղափարախոսության հիանալի ակորդները, գաղափարախոսություն, որը քողարկում, հարուցում և բորբոքում է ժողովրդի առաջինություններն ու նրա թաքնված արատները։ Դա պառզամենտի մեծ դաշնակահարն էր։ Նրա կուսակցությունը—ավելի ստուգ, նրա կուսակցությունները (չէ՞ որ նա սեթեվեթում էր մի քանիսի հետ)՝ անընդհատ օգտվում էր նրա տաղանդից, ստիպելով նրան համերգներ տալ պալատում, այսինքն՝ այնտեղ փայլուն ճառեր արտասանել։ Այդ երաժշտական համարները նշվում էին սպիտակ մեծ աֆիշների վրա (որոնք պալատի միաձայն սրոշումով բաց էին թողնվում ընտրողների հաշվին), թշումանցնում էին ամբողջ Ֆրանսիան։ Նա երբեք խույս շէր տալիս։ Միշտ կատարելապես զինված էր։ Միևնույն առարկություն շվերցնրդ տոնով էր խոսում ուզածդ թեմայի շուրջը—իհարկե, եռանդուն և իրազեկ քարտուզաբների օգնությամբ (նրա տրամադրության տակ այգպիսիների մի ամբողջ զոկատ կար), Բրիսոսոյի նվիրվածությունն իր կուսակցությանը—կուսակցություններին—և փառքին կարող էր համեմատվել միայն նրա թոքերի հզորության հետ։ Այդ թոքերն անխոնջ էին։

Այդ հիանալի եռանդը և ձայնի ոչ ողակաս հիանալի ուժը համշխարհային պատերազմի ժամանակ պետք եկան Հանրապետությանը։ Հանրապետությունը գրանք մորիլիղացրեց։ Ռոժե Բրիսոյի վրա դրված էր աշխարհին և ֆրանսիական ժողովրդին հասարակ ճշմարտություններ ցույց տալու միսիան։ Ճշմարտություններ, հանուն որանց նրանք պարտավոր են մեռնել։ Եվ այդ միսիայով նրան ուղարկում էին հեռավոր ուղևորությունների։ Պատերազմի առաջին օրերին նա ձեմի համար հագել էր պահեստի հեծելազորային մայորի համազգեստ։ Նա նույնիսկ այդ կոշումով որոշ ժամանակ գործուզված էր գլխավոր հրամանատարի ուղմակայանը, որը հիմնովին հաստատվել էր Կեմպիենի

ամրոցում։ Բայց Բրիսսոյին ակնարկով հասկացրին, որ նա հայրենիքին ավելի մեծ հաջողությամբ կարող է ծառայել ամերիկյան խրամատներում, և նա իր անխոնջ կոկորդը այնտեղ էր ճղում։ Ի միջի այլոց ասենք, որ իր բազմաթիվ ուղևորությունների ժամանակ— ծովով և ցամաքով, կոնգոն կամ Նյու-Յորք, Թուրքիա կամ Ռուսաստան, համարյա բոլոր շեղոք և դաշնակից երկրները գնալու ճանապարհին— նա երբեմն լուրջ վտանգների էր ենթարկվում։ Բրիսսուսն քաջություն ունեցող մարդ էր։ Նա նույնպիսի եռանդով կկովեր Արգոններում կամ Ֆլանդրիայում։ Բայց նա հասկանում էր, որ տաղանդը նրա վրա ուրիշ պարտականություններ է դնում։ Որպեսզի պահպանի այդ տաղանդը ազգի համար, նա թույլ էր տալիս վտանգից պաշտպանել իր անձը։ Բայց դրա փոխարեն, հայրենիքին լեզվով ծառայելիս, նա շոայլորեն մսխում էր իր ուժերը։ Որտեղ ասես որ չին որոտացել նրա ձայնի դղրդոցները։ Նրան լսում էին կոնդոնում, Բորդոյում, Չիկագոյում, Փնկում, Հոռմում և նույնիսկ, մինչև հեղափոխությունը, Սանկտ-Պետերբուրգում, Ֆրանսիայի բոլոր քաղաքներում— ճակատում և թիկունքում, հոգեհանգիստների ժամանակ և հորելյանական տոնակատարություններին։ Արտասահմանում նա հայտնի էր որպես ֆրանսիական պերճախոսության մարմնացում։ Նա պատկանում էր մինիստրների մեծ կաքինետին, որի գլուխը կանգնած էր Կլեմանսոն։ Նրանք իրար հանդուրժել չէին կարողանում։ Բրիսսոն տանել չէր կարողանում այն անամոթությունն ու հատկապես անսկզբունքայնությունը, որոնցով հոչակված էր մոնղոլական կերպարանքով այդ մարդը։ Իսկ Կլեմանսոն ծաղրուծանակի էր ենթարկում այդ «բարձրախոսին»։

«Լեզուդ քեզ քաշիր, Բարերար-մանկիկ...»։

Բայց ամեն տեսակի թշնամանքը լոեց, երբ սկսվեց ներխուժումը, Եվ երեկվա ախոյանները, միացնելով իրենց զիտելիքները և իրար մեջ բաժանելով կարկանդակը, շողշողուն մի համաստեղություն ստեղծեցին— Միլիերան և Բրիան, Բրիսսո և Կլեմանսոն— անշարժ լուսատուի, Ռևանշի գլխավոր առանցքի, քաշքշուկարար Պուանկա-

րեի շուրջը: Օ՛ անմոռանալի, սրբազան միասնության այնքա՞ն արագ հեռացած ժամանակներ, երբ բոլոր կուսակցությունների քաղաքական առաջնորդները և նույնիսկ անկուսակցականները, էյմոնի որդիների նման բոլորը միասին բարձրացան այդ ժերացած մարտական և բեռնատար ձիու՝ Ֆրանսիայի գավակին: լցված մի վճռականությամբ՝ այդ գավակին մնալ այնքան ժամանակ, մինչև որ նա հաղթի կամ ոտքերը փորի:

Բրիստոյի կարիերան ոչ մի բիծ շուներ, եթե շհաշվենք այն բժերը, որոնցով նախանձ ախոյանները ջանում էին անվանարկել մեծ հոետորի անցյալը, այսինքն՝ մի քանի ոգեշունչ և, պետք է ասել, շմտածված թոփշքները գեպի միջազգային պացիֆիզմի բարձունքները: Բայց նա, ով մշտապես խոսում է, անխոսափելիորեն հարկադրված է լինում խոսել ամեն ինչի մասին, և չի կարելի պահանջել, որ նրան պատասխանատվության կանչեն ամեն մի արտասանած բառի համար. նրան պատառ-պատառ կանեին, դա ավելի վատ կլիներ, քան քառատումը: Բացի դրանից, պացիֆիզմը, ինչպես ինքը բառն է ցույց տալիս, մի դեղ է, որը խաղաղ ժամանակ թույլատրվում է օգտագործել որպես միանգամայն անվնաս միջոց,— այդ գեղը արգելված է համարվում այն րոպեից, երբ շեփորում է պատերազմի շեփորը. չէ՞ որ միայն այդ ժամանակ այդ գեղը կարող է ցույց տալ իր ներգործությունը: Մեծ հոետորի համար, իհարկե, դժվար չէր այդ ապացուցել բոլորին, բացառությամբ նրա անամոթ թշնամիներից,— նրանց ոչ մի բան համոզէլ չէր կարող, նույնիսկ մաքուր կորնելյան պաթուը, որով Բրիստոն մերկացնում էր իր երեկվա զինակիցներին, մոլի պացիֆիստներին, այդ ծափյալ գերմանացիներին, որոնք հանդգնություն էին ունեցել պատերազմի ժամանակ շարունակել իրենց խաղը, որ սպառնում էր վրդովել ուժասպառ ժողովրդին և մեզանից խլել հաղթանակի թանկարժեք պատուղները: Այդպիսին է մեծ մարդկանց ճակատագիրը. նրանց հետապնդում է զրպարտությունը: Բրիստոն բավականաշափ ուժեղ էր, որպեսզի շվշտանա բամբասանքներից: Նա ծիծաղում էր դրանց վրա, ծիծաղում էր այն բարձր

գալլական ծիծաղով, որը նրա երկրպագուները համեմատրւմ էին Դանտոնի ծիծաղի հետ (համեմատությունը տեղին չէ, բազարային ոճը և սանձարձակ տոնը պետք է ասել Թրիսույի ճաշակով չէին): Մանավանդ որ նա հիշաշար մարդ չէր և պատրաստ էր բարերարություն անել իր թշնամիներին: Ամբողջ էությունը նախապես նրանց խարելու մեջ էր:

Այս երկրավոր աշխարհում ոչինչ չի տրվում ձրի: Թրիսոն բաղաքական ասպարեզի հաջողությունների համար հատուցում էր տանը: Ընտանեկան կյանքում նա երջանիկ չէր: Կինը, որի հետ նա ամուսնացել էր, մի հարուստ, սպիտակաղեմ, հաստամարմին, սակավարյուն տիկին,— բտած հավ, լցոնված պատկառելի տոկոսաբեր թղթերով:— բոլորովին պիտանի չէր կյանքի ուղեկից լինելու մի այնպիսի մարդու համար, ինչպիսին Թրիսոն էր: Նա չէր փայլում ոչ խելքով, ոչ հոգեկան հատկություններով: Զուրկ լինելով անհատականությունից և, դժբախտաբար, ստվերում մնալու այն հատկությունից, որը երբեմն փրկում է աննշան անձնավորությանը, այդ կինը իր շնչին գոյությամբ ծածկում էր հորիզոնը: Նա մշտապես տրտնջում էր և ոչընչով չէր ուրախանում, նույնիսկ ամուսնու տաղանդներով և փառքով: Թրիսոյի կինը դժբախտ և, անկասկած, հիվանդագին հակվածություն ուներ նկատելու առավելություններով այնքան հարուստ իր կյանքի միայն մոռյլ կողմերը: Այդ կինը ամեն ինչի վրա փնթփնթում էր: Դա գրեթե կյանքի կոչում էր գարձել նրա համար: Ասենք, նա ոչինչ չէր էլ անում, որպեսզի գոնե որևէ բան փոփոխի այդ աննշան կյանքի մեջ: Թվում էր, թե նրանից է տարածվում ու ամեն ինչ ծածկում կպչուն, գորշ մշուշը կամ հոկտեմբերյան վատեղանակը: Բավական էր մոտենալիր նրան, որպեսզի իսկուն ևեթ հարրուխ ընկնեիր: Պարզ է, որ այդ կլիմայում տոռղջ Ռոժե Թրիսոն իրեն լավ չէր զգում: Նա աշխատում էր հնարավորին շափ կարճացնել այդ պայմաններում մնալու իր ժամկետները և, բարձր փոշտալով, գլուխն ազտում էր փախուստով: Նա մեկնում էր ավելի բարեշնորհ կլիմա որոնելու, և այդ ասպարեզում նրա ունեցած հաջո-

դությունների լուրնը ավելի էին սաստկացնում այդ տանը թագավորող տաղուուկն ու խավարը:

Սակայն այդ շոայլությունները Բրիսսոյին չեին խանգարում անխափան կերպով կատարել տիկնոջ նկատմամբ ունեցած իր պարտականությունները: Մեղքը նրանը չըր, որ ժլատ կինը ընդամենը մի աղջիկ էր պարգևել նրան: Բրիսսոն պաշտում էր այդ աղջկան: Բայց փոքրիկը, որ մի զվարճալի, ծիծաղկոտ, առողջ կաղմվածքով, լիքը թշիկներով, ուրախ աշխիներ ունեցող աղջիկ էր, մահացավ հասարակ վիրահատությունից հետո, ավելի ճիշտ անեստեղիայի հետեանքով. նա շարթնացավ: Նրա տասներեք տարին արդեն լրացել էր: Եվ ամուսինը և կինը վշտից խենթացել էին: Այս անգամ տիկին Բրիսսոն ճակատագրից բողոքելու պատճառներ ուներ: Նա իր վիշտը բերեց զոհասեղանների առաջ, տարավ խոստովանարանները: Նա տարվեց կեղծ բարեպաշտությամբ: Դա վատ էր գուգակցվում Բրիսսոյի քաղաքական կարիերայի հետ. կղերականության մողանդեռ չեր վերադարձել: Նա՝ խեղճ: աստված չուներ կամ աստծո միջնորդներ, որոնք կարող էին սփոփել նրան: Վիշտը նրան սպանել էր, և նա դառնորեն լալիս էր իր փոքրիկ դստեր պորտրեի առաջ, որ դրված էր իր աշխատասեղանի վրա: Պատերազմը մոռացում բերեց նրան: Լարված աշխատանքը նրա համար մի ապաստարան էր, որտեղ նա փըրկվում էր իր մտքերից: Փրկվում էր իր տնից, կնոջից, մահացած փոքրիկից: Նա մոռացություն էր փնտրում — ավաղ — և զվարճանքների մրրիկում վատնում էր իր ուժերի լիառատությունը, որոնք չեր կարողանում ծախսել իր քաղաքական գործունեության մեջ: Շողոքորթները դրանում տեսնում էին ևս մի նմանություն՝ Դանտոնի և նրա խրախնդների հետ: Բայց Բրիսսոն այդ խրախնդանքներում բավարարություն չէր գտնում: Նա բնածին ընտանիք սիրող էր, ինչպես գրեթե բոլոր ֆրանսիացիները: Նա անձնական մտերմությունների կարիք էր զգում, և ոչ մի բան նրա համար չէր կարող դրանց փոխարինել: Փառասիրությունը, հոչակը, վայելքը, որոնց, ըստ երևույթին այնքան սիրահար են ֆրանսիացիները, նրանց համար փաստորեն միայն

Երած<sup>1</sup> է, թրիսսոն անմխիթար կերպով վշտացած էր, որ տղան իր մոտ չէ:

Նա գիտեր, որ Աննետայի տղան իր տղան է, Մինչև դրստեր մահը Թրիսսոն գերադասում էր այդ մտքի վրա կանգ չառնել, Աննետայի մասին ունեցած հիշողությունները հաճլիներից չէին նա աշխատում էր դրանք վանել իրենից, Բայց այդ հիշողությունները, որոնց սնում էր համբ վիրավորանքը, մնում էին, Դա ինքնասիրությանը, իսկ գուցե նաև սիրուն հասցրած շլավացած վերքի սպի էր: Այդ կինն անհետացել էր նրա հորիզոնից, բայց մի երկու-երեք անգամ նա չէր կարողացել իրեն զսպել, որպեսզի զարտուղի ճանապարհներով շիմանա նրա ճակատագրի մասին, թեև Թրիսսոն Աննետային շարիք չէր ցանկանում, բայց նրա համար տհաճ չէր լսել, որ Աննետայի բախտը կյանքում լրերեց: Եթե Աննետան նրան օգնության դիմեր, Թրիսսոն հաճույքով կօգներ, բայց նա շատ լավ գիտեր, որ երբեք այդ գաղտնի բավականությունը չի ստանա:

Ամբողջ տասնհինգ տարում Թրիսսոն ընդամենը մի երկու-երեք անգամ էր Աննետային փողոցում հանդիպել տղայի հետ: Աննետան հանդիպելուց խուսափելու փորձ չէր անում: Բայց Թրիսսոն ձեւցնում էր, թե նրան չի ճանաշում: Նրա մոտ դրանից պղտոր նստվածք էր մնում — մի զգացում, որը Թրիսսոն քննության առնել չէր ուզում... Նրա ի՞նչ պետքն էր այդ կիսամոռացված պատմությունը, այդ կինը, որը նրան էր պատկանում և դարձավ օտար, այդ անհայտ, պատահականորեն նրա կյանքում փայլատակած անձնավորությունը, — Թրիսսոն ի՞նչ գործ ուներ այդ կնոջ հետ: Թրիսսոն, որ ամեն ինչ ուներ... Օ, տե՛ր աստված: Ամեն ինչի տիրապետում ես, կարծում ես, թե դու հարուստ ես և ուժեղ և լես կարողանում հեռանալ քո անցյալից, որի խորքից հանկարծ բարձրանում է թախիծը, ինչ-որ կորած դատարկ բանի այրող ափսոսանքը: Եվ այդ դատարկ բանը դառնում է ամեն ինչ, իսկ ամեն ինչը՝ ոչինչ: Դա

<sup>1</sup> Փոխարինող (գերմ.):

կարծես քերծվածք լինի, կյանքի անոթի աննշմարելի ճեղք, բայց դրա միջով տմեն ինչ գնում է, հոսում...

Բարեբախտաբար անցյալի այդ արձագանքներն իրենց դղացնել էին տալիս ոչ հաճախ և այդպիսի ոչ անկեղծ մարդու համար, ինչպիսին Բրիստոն էր, հեշտ էր իրեն հավատացնել, թե ինքը դրանք չի լսում: Երբ դու քո հետեւում թողնում ես անփառունակ մի ժամ, ապա ամենալավն այն է, որ քեզ ասես, թե դա չի եղել Եվ Բրիստոն վերջնականապես այդ ժամը դուրս կնետեր իր կյանքի խայտաբղեաւ Համայնապատկերից, եթե դրանից մնար միայն այդ կնոջ լուակյաց ստվերը՝ միահյուսված իր սեփական ստվերի հետ: Բայց այդտեղ կար նաև մի ուրիշը, որին հնարավոր չէր դուրս նետել,— տղան:

Այն օրից, ինչ նրա աղջիկը մեռավ, այդ կենցանի տղան հետապնդում էր Բրիստոյին: Նա անընդհատ հանդիպում էր նրան իր մտքի ճանապարհին: Նա դեմքով չէր ճանաչում տղային: Աննետայի հետ երկու թե երեք հանդիպումների ընթացքում նա չէր հասցրել ուշադիր նայել որդուն և շպիտեր, թե որքանով է ճիշտ ակնթարթորեն ընկալած կերպարը: Մի անգամ ավտորուսում նրան թվաց, թե իրենից մի քանի շարք այն կողմ նստած տղան հենց նա է, որին ինքը հանդիպել էր Աննետայի հետ: Տղայի աշքերը, որոնք շատ արագ սահեցին իր զեմքի վրայով, զբաղված էին կողքին նստած գեղեցիկ կնոջ զննումով, և Բրիստոն քնքուշ հայացքով հետեւում էր նրան: Այո, դա պետք է որ իր տղան լինի... Բայց նա կարո՞ղ էր արդյոք դրանում համոզված լինել:

Ինչքա՞ն էր նրան պետք այդ տղան: Հանուն իր և իր տան, հանուն սիրո իր պահանջը հագեցնելու, հանուն, այնքան բնական ու օրինական երջանկության՝ արյունակից հարազատին հանձնել քո անունը, նվաճած փառքը, ունեցվածքը, կյանքի կոչումը: Հանուն այն իբավունքի, որ պատասխանես հետեւյալ հարցին. «Հանուն ինչի»— Քարոնի շարագուշակ հարցին, այն Քարոնի, որը հրաժարվում է մյուս ափն անցկացնել մարդուն առանց որդու, ցեղն առանց ապագայի, նրան, ով կմեռնի և երբեք չի վերածնվի...

Սակայն այդ բոլոր դառնությունները մարդիկ սովորաբար իրենց մեջ են պահում, և ոչ ոք դրանց մասին չէր իմանա, եթե 1915 թվականին Թրիսսոն պատահաբար ուրախ մի երեկութում Հանդիպեր Սիլվիային, շատ հաճելի անձանց— կարգին, բայց զվարճանքների սիրահար տիկնանց հասարակության մեջ, որոնցից ոչ մեկը պրոֆեսիոնալ չէր համարվում այդ խաղում (դա Սիլվիայի այն բավական կարծ, բայց փոթորկալից կյանքի շրջանում էր, երբ նա «զվարճանում» էր): Սիլվիայի ուղեկցի հետ Թրիսսոն ծանոթ էր: Ընթրիքի ժամանակ տղամարդիկ կանանց փոխանակեցին: Թրիսսոն չէր ճանաշի Սիլվիային, բայց վերջինս նրա հիշողությունները թարմացնելու հոգու իր վրա վերցրեց: Այդ հանդիպումն իր՝ Թրիսսոյի համար անսպասելի կերպով հուզեց նրան, թեև նախկինում նա առանձնապես բարձր շէր գնահատի դերձակու՞չի քենու ծանոթությունը, որը Թրիսսոյի համար բոլորովին ձեռնտու շէր: Սիլվիային դա հայտնի էր, բայց արկածը նրան զվարճացնում էր: Նրա զրուցակիցը այնպիսի վիճակում էր գտնը-վում, երբ մարդ այնքան էլ չի տիրապետում իրեն և բերանից թոցնում է այն, ինչի մասին հարկավոր է լոել: Սիլվիան աշխուժացրեց Թրիսսոյին: Թրիսսոն հուզվեց: Նա ագահորեն հարցուիրձ էր անում Աննետայի մասին, Մարկի մասին: Զթաքցնելով վիրավորվածությունը Աննետայից, այն աստիճանի այրող, որ անընդհատ գիշով համաձայնության նշան անող Սիլվիան առանց դժվարության նրա խոսքերում և զայրույթ էր որսում և ափսոսանք, Թրիսսոն կենդանի հետաքրքրություն ցուցաբերեց դեպի երեխան: Թրիսսոն տեղեկացավ նրա առողջության, ուսման մասին, հաջողությունների և գոյության միջոցների մասին: Սիլվիան հպարտանում էր իր քրոջ տղայով, և հիմա նա գույներ շխնայեց Մարկի պորտերի համար: Դա ավելի ուժեղ բորբոքեց Թրիսսոյի մեջ հայրական ջիղը: Նա որպես գաղտնիք Սիլվիային հաղորդեց, որ ինքը շատ ուրախ կլիներ, եթե որդուն միշտ իր կողքին տեսներ, կապեր իր հետ, և ցանկություն հայտնեց ապահովել նրա ապագան:

Հաջորդ օրը Սիլվիան այդ բոլորը պատմեց քրոջը: Ան-

նետան գունատվեց, Նա Սիլվիային պատվիրեց, որ այդ մասին Մարկին ոչինչ շասի: Սիլվիան ամենեին ցանկություն շուներ Մարկին իրազեկ դարձնել այդ գաղտնիքին: Նա Մարկին խանդում էր ոչ պակաս, քան քույրը, և վախենում էր նրան կորցների թայց Սիլվիան իր իսկական զգացմունքների վերաբերյալ չէր մոլորվում: Նա ասաց.

— Ո՞նց չէ, կասեմ նրան: Որ մեզ լրի...

Աննետան ջղայնացավ: Նա չէր հանդուրժում այն միտքը, թե ինքը որդուն խարում է: (Սիլվիան ծիծաղելով և առանց որևէ այլեայլությունների օգտագործեց այդ բառը. «Դրա մեջ ի՞նչ կա: Ամեն մարդ իր համար է մտածում»...), եթե նա ջանում է Մարկին պահել, ապա միայն այն բանի համար, որ նրան փրկի: Նա ուզում էր որդուն պահպանել ամեն բանից, ինչը կարող էր նրա մեջ քայլայիլ այն իդեալը, որին Աննետան ձգտում էր, դաստիարակելով որդուն... Թայց Աննետան հիանալի հասկանում էր, որ պաշտպանում է իրեն նույնպես: Տասնհինգ տարի փայփայել նրան ու դաստիարակել դժվարին պայքարի և տառապանքների գնով, որ ազելի թանկ էին, քան խնդությունը, նրան յարդ դարձնել — և տեսնել, որ նրան խլել է ուրիշը, նա, ով ոչ մի հոգս չի տարել և պտուղներն է միայն վայելում, նա, ով երբեք չի մտածել իր պարտքի մասին, իսկ հիմա իր իրավունքներն է ներկայացնում, արյան իրավունքները... թշնամին: Երբե՛ք,

— Ես անարդարացի՞ եմ... Թող այդպես լինի: Անարդարացի եմ, անարդարացի եմ... Այո, զուցե... Հանուն իմ որդու, հանուն նրա բարօրության...

Նրա բարօրությունը — ահա հենց այդ մասին էլ պատանի Մարկն ուզում էր դատել ինքը, և միայն ինքը: Նա ուրիշներին չէր ներում, որ պատրաստի որոշումներ էին իր զգին փաթթում:

Մարկի սրտում դեռ շարունակում էր այրվել մորից ստացած վիրավորանքը, երբ ինքը սառնությամբ բաժանվեց նրանից՝ հորը փնտրելու տարօրինակ մտադրությամբ: Նա ավելի խիստ էր հուզվում, քան այդ կարող էր թվալ առա-

զին հայացքից։ Ի՞նչ էր սպասում նրան։ Ինչո՞վ կվերջանա նրա համար այդ օրը։ Մարկը այդ տեսակետից ամեններն հանգիստ չէր։ Որքան ավելի էր նա հեռանում տնից, այնքան սաստկանում էր նրա մեջ ետ դառնալու ցանկությունը։ Հիմա նրա մտահղացումը իրեն թվում էր հանդուգն, Բայց նա իրեն ասում էր.

«Պետք է գնամ, եվ եթե հարկ լինի, անամոթության շափ հանդուղն եմ լինելու... թող գրողի ծոցը գնա ամոթը... Ես ուզում եմ նրան տեսնել, Եվ կտեսնեմ»։

Մարկն արդեն հեռու չէր հասցեում նշվող տեղից, երբ հանկարծ նրա հայացքն ընկավ մի աֆիշայի վրա։ Այնտեղ նշված էր մի անուն, նրա անունը, այն մարդու անունը, որին ինքը փնտրում էր։ Դա միտինգի հայտարարություն էր. ճառով հանդեւ կգա Ռոժե Բրիսսոն։

Մարկը քայլեց աֆիշայում նշված հասցեի ուղղությամբ։ Դա մանեժի դահլիճն էր։ Մինչև սկսվելը դեռ մի քանի ժամ կար։ Տուն վերադառնալու փոխարեն, նա գերադասեց նըստել փողոցում, նստարանին։ Մեջքով շրջվելով դեպի անցորդները, նա սուզվեց խոհերի մեջ։ Ինչպես նա կմոտենա այն մարդուն, որի ձայնը հիմա լսելու է։ Ո՞ր պահին ինչի՞ մասին նա կսկսի խոսել։ Ոչ մի առաջարան պետք չէ։ Նա ուղակի կհայտարարի։

«Ես ձեր որդին եմ»։

Իոր Մարկն այդ խոսքերն արտասանեց, սարսափից նրա լեզուն կոկորդում շորացավ։ Եվ— ո՞վ կհավատար— շնայծ հուզմունքին, նա հիշեց պարոն դը Պուրսոնյակին,<sup>1</sup> փոքրապատկեր այդ գալին։ Եվ անզուսպ ծիծաղեց, ձընշված բնագդի խորամանկություն։ որ պարպում էր փընտրում... Հիմա նրան սեեռուն կերպով հետապնդում էր, միահյուսվելով հուզված զգացմունքների հետ, տեղի ունեցածի կոմիկական կողմը։ Նա, շվշացնելով, գնաց մի գավաթ սուրճ խմելու Բայց տերրասի անկյունում նստած, աշքը չէր հեռացնում մանեժի գոնից։ Եվ հենց գուոր բացվեց, նա համարյա թե առաջինը ներս մտավ։

<sup>1</sup> Պարոն դը Պուրսոնյակ — Մոլիերի համանուն կոմեդիայի պերսոնաժը։

Մարկը մոտեցավ սուազին շարքին, բեմի մոտ Բայց այդ տեղերը օւրիշի համար ապահովված էին, նրան այդ աեղերից հանեցին չեկ անգամ, երկու, երեք անգամ — Մարկը հեռանում էր. և կհեռանար էլի այնքան անգամ, որքան դրա կարիքը լիներ, բայց նա համառեն նորից էր վերադառնում, մինչեւ որ, վերջապես, շհաստատվեց իրեն դուր եկած տեղում, Ավելի լավ տեսնելու համար նա կանգնել էր, հենվելով թափածու սյունին. որը գտնվում էր հենց ամբիոնի մոտ, երբ հայտնեց Բրիսսոն: Մարկը, որն հպարտանում էր իր անգայնությամբ, այնքան էր հուզվել, որ թրիսոյին նկատեց միայն այն ժամանակ, երբ վերջինս արդեն ամբիոն բարձրացավ: Մարկը մի տեսակ ցնցվեց, ինչպես դա լինում է այն պահին, երբ հանկարծ տեղի է ունենում երկար սպասված իրադարձությունը. դա ամենաին այնպիսին չէ, ինչպիսին մենք երևակայում էինք, դա բոլորովին նման չէ մեր երազանքին, բայց այդ իրադարձության ռեալ լինելը դա այնքան պարզորոշ է դարձնում, որ ամբողջ երևակայականը փլվում է, պայթելով, ինչպես օձառի պղպջակ: Արդեն հարկ չի լինում ծանր ու թեթև անել. «Այդպիսի՞ն է նա արդյոք... թե, գուցե, այդպիսի՞ն չէ...»: Նա գոյություն ունի, նա քո առցե է, նա նույն մսից ու արյունից է, ինչպես դու, և փոխել նրան այլևս քո ուժերից վեր է, նա այդպիսին էլ կմնա հուր-հավիտյան...

«Նա է... Այդ մարդը... իմ հայրն է...»:

Ինչպիսի՝ հարված... Սկզբում ինչ-որ ձայն քեզ ասուն է. «Ո՛չ», ԲՌՇՆՏ»: Ընտելանալու համար ժամանակ է պետք... Եվ հանկարծ որոշումն ընդունված է: Ինչ վիճելու բան կա: Փաստը փաստ է: Ես ընդունում եմ նրան: Ecce Homo<sup>1</sup>...

«Եվ այդ մարդը ես եմ... Ե՞ս...»:

Մարկը ագահ հետաքրքրությամբ հայացքը սեեուց նրա դեմքին, առանձին-առանձին զննեց նրա յուրաքանչյուր դիմագիծը, աշխատելով նրա մեջ գտնել իրեն...

Այդ բարձրահասակ գեր մարդը, սափրված լայն գեմքով, դեղեցիկ ճակատով, ուղիղ քթով — խոշոր, ագահ քթանցքներով, որոնք պատրաստ էին ներս քաշել վարդի բուրմունքը

1 Այս մարդը (լատ.)

և աղբահոտը—մսեր այտերով ու կզակով, վայելլատհս—պլուխը ետ գցած, իսկ շադ կուրծքն առաջ ցցած,— գերասանի, սպայի, քահանայի և ֆերմեր-ազնվականի խառնուրդ էր...

Նա աջ ու ձախ ձեռքեր է սեղմում, ողջույններ է հղում դահլիճի ծանոթներին, որոնք ընկնում են նրա տեսադաշտը, երբ նա նայում է հասարակությանը, և միենույն ժամանակ լսում է, ըստ երեսույթին՝ նրանց, ովքեր իրեն տու են կանգնած, ժպիտներ է շուայլում, ծիծաղում է, ծիծաղի է պատասխանում ուրախ, բախտաբերի, մերթ բարեհոգորեն, մերթ շղոքորթաբար, մերթ առանց քաշվելու, շափազանց ազատ, յուրաքանչյուրին առանձին և բոլորին միասին... Դահլիճում տիրող աղմուկը, որ կարծես երեխամեծահասակների բազմության աղաղակ լիներ, խանգարում է նրա խոսքերը լսելուն... Զանգերի թափ դողանջ հիշեցնող խուլ թնդյուն... Բրիսսոն իր տարերքում է...

«Ես, Ես... Ահա այս... Այս մսի լեռը! Այդ ծիծաղը, այդ ձեռքսեղմումները...»:

Փոքրիկ, նիհարավուն Մարկը, գունատ և հպարտ, ինչպես արկոլյան թմբկահարը<sup>1</sup>, խստորեն նայում է այդ հաղթանդամ, ուժերի առատությամբ ապշեցնող այդ մարդուն թայց և այնպես նա գեղեցիկ է: Նրա մեջ ինչ-որ հմայք կա, որին Մարկը իրենից անկախ ենթարկվում է: Թայց նա զգույշ է: Հոտոտում է: Զի կարողանում հոտը որոշել: Սպասում է, որ նա խոսի:

Բրիսսոն սկսում է խոսել... Եվ Մարկը գերի է հանձնը-վում:

Ինչպես ամեն մի հմուտ հռետոր, Բրիսսոն ամենեին միանգամից շէ, որ ցույց է տալիս իր արվեստի ամբողջ ուժը: Նա լարում է գործիքը, Եվ խոսում է հանգիստ, հասարակ, sotto voce<sup>2</sup>: Նա գիտե, որ իսկական վիրտուոզի համար փոթորկվող դահլիճը հանդարտեցնելու միջոցներից մեկը piano<sup>3</sup> նվագելն է: Երբեմն արտիստը միանգամից է

1 Նկատի է առնված նաև լեռնյան գորքերի ճակատամարտը Արեւլյան կամրջի վրա Ալպերում:

2 Կիսածայն (իտ.):

3 Կամաց (իտ.):

Հանդես գտլիս իր ՝վարպետության ամբողջ փայլով և սկսում է հզոր ակորդներից, բայց բարձրանալու տեղ նա այլն լունի, և Հանդիսատեսների ուշադրությունը ցրվում է. անընդմեջ փայլը նրանց հոգնեցնում է Բրիսսոն ձեզ մոտենում է որպես հիանալի մարդ, սրտաբաց, ինչպես գուք, ինչպես ես, ինչպես վաղեմի ձեր բարեկամը. գուք ձեռք եք մեկնում նրան, և երբ նա ձեզ տիրացավ, ահա այն ժամանակ... այն ժամանակ գուք կտեսնեք...

Մարկը ոչինչ չէր տեսնում: Նա ըմբռշխնում էր: Սկզբում նա խոսքերը չէր հասկանում: Միայն ձայնն էր լսում, Դա չերմ, սրտագին ձայն էր, որը պատկերացում էր առաջացնում Ֆրանսիայի բուրումնավետ հողի մասին, հարազատ դաշտերի բուրմունքների մասին: Մարկը ճանաչեց բուրգունդական կոշտ «ոռ-ն», որը մայրն այնքան համառ կերպով ուզում էր արմատախիլ անել նրա մեջ, Դա նրանց մեջ ձգված գաղտնի մի թել էր: Տոհմի կնիքը, որ ընկած է մարմնի կառուցվածքի հիմքում, ամենաանջնջելին. լեզուն: Այդ ուամկական ինտոնացիաները, առնական ու քնքուզ, նրան գրկում էին, ինչպես հայրն է գրկում որդուն, նրան իր ծնկին նստեցնելով: Մարկը համակված էր անկեղծ երախտապարտությամբ: Նա իրեն լավ էր զգում: Նա երշանիկ էր: Հաճույքից Մարկը ժապտում էր՝ նրան, ով խոսում է... Եվ Բրիսսոն նկատեց պատանուն, որն իրեն աշքերով լափում էր:

Նա սովորություն ուներ ճառի ժամանակ գահիճում մեկ կամ երկու ունկնդիր գտնելը որոնք նրա պերճախոսության համար հայելու դեր էին կատարում: Նրանց մեջ Բրիսսոն լսում էր իրեն: Նա զնահատում էր իր խոսքերի ներգործությունը, նրանց ոեզոնանսը: Արագ, վայրկենապես ըմբռնելով այդ ցուցմունքները, նա դրանց համապատասխան կառուցում էր իր ճառը, որը սովորաբար հորինում էր հանպատրաստից, բայց նախապես կազմված պլանի, բացառյալ մի քանի մեծ կտորների, մի տեսակ կաղենցիաների, որոնք համերգներում նվազախմբի խուլ զողանց են հիշեցնում... Արկոլյան փոքրիկ թմրկահարի հուզված գեմքը, որը Բրիսսոյից չէր հեռացնում իր շողջողուն, ծիծաղող աշքերը, նրա համար հիանալի հայելի էր:

իրեն այդ հայելու ժեզ տեսնելով, Բրիսսոն ըռնկվեց ոգորությամբ...

Իսկ հայելին հանկարծ խավարեց...

Մարկն սկսեց ուշագրությունը կենտրոնացնել բառերի վրա:

Բրիսսոն հենց ինքն է ցրեց կախարդական հմայքը Հետեւելով հոետորի պերճախոսության թոփչին, պատանին իր սուր աշքով տեսավ, որ նրա թևերը կպցնովի են: Սքանչացած հասարակությունը, որ շունչը պահած լսում էր նրան: Մարկին ստիպեց թափ տալ իրեն ու հաղթահարել սեփական հուզմունքը: Նա իր էությամբ հակված էր պաշտպանվել ամբոխի վարակիչ տրամադրություններից: Նրա համար ցավալի էր, որ ինքը, ինչպես այդ ամբոխը, թույլ տվեց իրեն հրապուրվել հիանալի ձայնով, նա ամբողջովին կծկվեց և այդ բռպեից սկսեց խիստ ստուգման ենթարկել այն, ինչ դուրս էր թռչում հոետորի շուրթերից, և սեփական սրտի բոլոր շարժումները:

Նվաճելով իր լսարանին, Բրիսսոն սկսեց շեփորել «անմահ սկզբունքների» մասին: Նա գովերգում էր Ֆրանսիայի հերոսական միսիան: Պա հավիտենական զնդան էր, որտեղ դարբնում էին աշխարհներ, զոհասեղան, ժողովուրդների սուրբ հաղորդություն: Կատալառնյան դաշտերը, Պուատիեն, Մարնան ու Վերդենը, Պետենը, Բայարը, Մանժենը, Կարլ Մարտելը, Ժոֆֆրը և Օոլեանի Կույսը... Օոլեանի Կույսը, այդ անխոնջը, իր կյանքը տալիս է հանուն մարդկանց փրկության: Այդ կյանքը քսան անգամ զոհաբերելով, նա քսան անգամ վերածնվում է: Ամբողջ աշխարհում մենակ, նա պաշտպանում է աշխարհը, պաշտպանելով իրեն...

Բրիսսոն խոսում էր Ֆրանսիայի դաշնակիցների մասին, որոնք գոտեվորել էին նրան ոսկյա և երկաթյա օղակներով: Նրանց սերը շրջապատում էր Ֆրանսիային, ինչպես պալադիններն էին շրջապատում Կարլոս Մեծին: Բրիսսոն շրջագայել է դաշնակից երկրները: Նա աստղավոր դրոշով եղբայրական հանքապետության բարձր անշահախնդրության մասին de visu<sup>1</sup> կարող էր ասել: ոչինչ շպահանջելով իր

1 որպես ականատես (լատ.):

Համար, այս հանրապետությունը շտապում է օգնության, որպեսզի վճարի իր պարտքը կաֆայետին և վրեժ լուծի խայտառակված Իրավունքի համար... Մեծահոգի Անդ-լիան... Անկաշառ հտալիան... Խաչակրած արշավանքների ժամանակներից մինչև այսօր լտեսնված տեսարան... Բայց եթե խաչակրաց արշավանքների դարաշրջանում պայքարը տարվում էր Քրիստոսի գամբարանի համար, ապա մեր օրերում տեղի ունեցող մեծագույն խաչակրաց արշավանքը ստեղծում է նոր Քրիստոսի կերպար, որը շարդում է ստըր-կացած մարդկությանը հնչող գերեզմանաբարը... Եվ այլն, և այլն...

«Զարհուրելի նողկանքը, որում հանցավոր է և որի համար պատասխան կտա միայն բոշերի հրեշավոր կայսրությունը, երկրի երեսից կընջվի նրա հետ միասին։ Միայն նրանից, այդ ավազակառջից են սկիզբ առնում բոլոր քաղաքական և սոցիալական հանցագործությունները։ Նրա գաղքելի բռնակալներից և անբարոյական մասսայից, նրա յունկերներից, կեղծ սոցիալիստներից, ճորտատերերից, Փիկրոխոլներից<sup>1</sup>, Կրուպպից, Հեգելից, Թիսմարկից, Տրեյշ-կելից, Վիլհելմ Երկրորդից, Վայրի գազանի կատաղությունը, Սարդանապալի զառանցանքը, Նիցշեն, որն իրեն աստված է համարում և հաշում, չորեքթաթ սողալով։ Ժողովուրդների վայնասունը և հրդեհների ծովաքը, Անմեղապարտ Բելգիան և սուրբ Լեհաստանը, Ռեյմսը, Լուվենը, ոև ուրուրները, որոնք թոշում են անպաշտպան քաղաքների վրայով և անպատիծ ոչնչացնում են կանանց ու երեխաներին... Սակայն Ֆրանսիայի սպիտակ թոշունները նետվում են զիշատիչների վրա, ցրիվ են տալիս նրանց երամները, թըռչում են Հոկենսոսի վրայով, մեղապարտ ազգի գլխին թափելով պատիժը... Կգա ազատագրությունը, Եվրոպայի, Ասիայի, Աֆրիկայի ժողովուրդները, թոթափելով շղթաները, տպատ Ֆրանսիայի և ազատ Անգլիայի փրկարար զեկավարության ներքո կխոնարհվեն՝ ազատության աղբյուրից ջուր խմելու Կխորտակվի մայրցամաքի վերջին կայսրությունը։ Հանրապետությունը թափահարում է թերը, Ռյուգի Հրեշ-թիկրոխոլ— ուզմատենչ թագավոր, որը պատկերված է Իտարլեի ռարգանտյուա և Պանտագրյուելը վեպում։

տակ, էտուալ հրապարակի, Հաղթական կամարի վրա ուաշվառնող Հանճար... Հայրենիքի զավակներ, առաջ...

Ես հենց նոր եմ եկել ճակատից: Ինչպիսի՞ հրաշք: Այդ երեխաները ծիծաղում են: Մեռնողները ծիծաղում են: Նրանք ասում են. «Իմ օրը երկար չէր, բայց հարո՞ւստ էր: Այդ օրը զուր շկորավ...»: Նրանց առաջարկում են տեղափոխվել թիկունք: Նրանք բողոքում են «Ո՛չ, ինձ կապեք փշալարերին: Ես կենդանի պատնեշ կլինեմ...»:

Մարկն ամոթից կարմրում էր, նրա հայացքը սառել էր... Մարկը «հասկացավ» նրանց, այդ ցուլերին... Դատարկ խոսքե՞ր. ծեծված գործելածե՞ր, նողկալի կեղծի՞ք... Նա սկսուն, սառն արհամարհանքով նայում էր հոետորին, որը քափ ու քրտինք մտած, պերճախոսության հեղեղներ էր ժայթքում: Եվ Բրիսսոն անգիտակցորեն զգաց, որ այդ ունկնդրի հոգում ողբերգություն է տեղի ունենում: Նա նորից է տեղադրում իր ցանցերը և փորձում բռնել դուրս պրծած որսին: Բրիսսոյին շփոթեցնում է այդ հայացքը, որը դատապարտում է նրան, նա արդեն չի համարձակվում նայել այդ աշքերի մեջ: Բայց շարունակում է աղաղակել.

— Ֆրանսիան... միաբան Ֆրանսիան...

Եվ, չենթարկվելով շփոթությանը, փորձված վարպետի Փմբողջ արվեստով ծավալում է իր արագեցոն: Բայց նա մտահոգված է, նրա ուղեղի ինչ-որ բջիջում դրոշմվել է պատանու կերպարը. դա ծանոթ կերպար է. Բրիսսոն ճշգնում է մտաբերել, թե որտեղ է տեսել նրան, բայց, տարված խոսքի սահուն ընթացքով, չի կարողանում կանգ առնել, որպեսզի գնա հիշողության հետքերով:

Վերջապես հնչում է հզոր ակորդը, որ հարյուր անգամ կրկնել է ծափահարող դահլիճը: Բոլորը տեղներից կանգնում են, գոռում, կանչում են հոետորին, նետվում են դեպի բեմը, որպեսզի սեղմեն մեծ քաղաքացու ձեռքը: Բոլորը հուզմունքից կարմրատակել են, խոսում են, ծիծաղում, իսկ ոմանք էլ արտասվեցին: Բրիսսոն երջանիկ, փափկած, աշքի պոչով նայում է համառ ունկնդրի կողմը.

«Համարե՞ց արդյոք նա իրեն պարտված...»:

Բայց Մարկն արդեն չկա: Նա անհետացամ:

Նա ի վիճակի չէր մինչև վերջը դիմանալ այդ պերճախոսության գարշահոտությանը: Եվ հանկարծ դուրս է գնում: Բայց չի հասցնում ոտք շեմից այն կողմ դնել, երբ պայթում է ծափերի փոթորիկը: Նա շրջվում է, արհամարհանքի ժպիտով մերկացնում ատամները: Նայում է հիացմունքից խելացնոր գահին, հաղթանակողին: Դուրս է գալիս փողոց և, նողկանքով բռնված, թքում է: Նա բարձրածայն մտածում է: Երդման խոսք է տալիս.

— Երդվում եմ, նողկալի ամբոխ, երբե՞ք շարժանանալ քո ծափահարություններին:

Այդ պահին Բրիսսոն, որը բարձր-բարձր քրքչում է դահլիճում և շաղակրատում իր երկրպագուների հետ, ճանկում է, վերջապես, իր հիշողությունների շղթայի միջից այն օղակը, որը կապված էր իրեն հետապնդող կերպարի հետ: Նա ճանաշում է պատանուն, որին հանդիպել էր ավտոբուսում:

Մարկը գնում էր մեծ-մեծ քայլերով: Նա փախչում էր Նա փախչում էր այն տեղից, որտեղ ինքն այդպիսի հիասթափություն ապրեց: Բայց հիասթափությունը կրնկակոխ վազում էր նրա հետեւից... Տե՛ր իմ աստվածությունը ինչպե՞ս փոխվեց աշխարհը առավոտից, երբ նա սկսում էր այս ուղին: Նա իրեն թույլ շէր տալիս հուսալ, բայց ի՞նչ լուսավոր հույս էր թեավզորում նրան այն ժամանակ: Ի՞նչ խնդություն, սրտի ի՞նչ թթիռով էր սպասում այն մարդուն, որի հետ ինքը հանդիպելու է: Նա այդ մարդուն սիրելու, սքանչանալու այնպիսի՝ պահանջ էր տանում: Նրա ձայնի առաջին հնչյունները լսելիս Մարկը պատրաստ էր վագել նրա մոտ, համբույրներով ծածկել նրան... Համբույրներով ծածկե՞լ... թյո՛ւ, ինչպիսի՝ նողկանք... Նա շրթունքներն այնպես սըրբեց, կարծես դրանք կպել էին Բրիսսոյին:

«Նողկալի շատախոս, փարիսեցի, կե՞զծ բարեպաշտ... ստախո՞ս, ստախո՞ս, ստախո՞ս: Հիմարի տեղ է գրել Ֆրանսիային և իրեն... ինչ Ֆրանսիային է վերաբերում, գա իր՝ Ֆրանսիայի գործն է, եթե նա փշոցներ է սիրում, եթե ուզում է, որ իրեն հիմարի տեղ դնեն... Բայց իրե՞ն... Այդտեղ ար-

դեն ներում շկատ Կարելի՞ է արդյոք ավելի ցած ընկնել... ինչքա՞ն է նա զզվելի ինձ համար, ինչքա՞ն եմ ես զզվում ինքս ինձանից... Թայց չէ՞ որ ես նրա սերունդն եմ, որդին եմ այդ կեղծիքի, այդ կեղծիքն իմ մեջ է...»:

Մարկը վագում էր խելագարի նման։ Նա մոտեցավ Սենային։ Հենվեց առափնյակի եզրապատին։ Նա ուզում էր լվանալ, մաքրել, արյունոտվելու աստիճան մաքրել մարմինը, միայն թե քերի հանի այդ գարշահոտ կեղտը։ Նա շէր կարողանում դատողություններ անել, նա անողորմ էր, ինչպես անողորմ կարող է լինել կրքի բռնկման պահին տասնյոթ տարեկան պատանին։ Ոչ մի վայրկյան նրա մըտքով շանցավ, որ այդ մարդը կարող է լինել բարի, կարող է լինել թույլ, ինչպես բոլոր սովորական յարդիկ, որ եթե նա ճանաշէր իր որդուն, հոգին կտար նրան։ Զէ որ բոլոր սովորական յարդկանց նման նա արատների, կեղծիքի, կեղտի կույտի տակ պահպանում է սրբազան մի գաղտնաբան, որտեղ անկեղծ զգացմունքներ են ապրում, մաքուր ճշմարտություն։ Մարկը շէր կարծում, որ այդ հին տառակերների, ճոռոյախոսների, անտիկ ձևով (հին աշխարհի, գալա-հոռմեական խլամի նմանակումով) դատարկաբանների սերունդը մանկությունից սովոր է դատարկախոսության, որ նա այդ սովորութիւնըն է դարձել, ինչպես զոհեն դառնում կոմեդիանտները... Commediante... tragedianте...<sup>1</sup> Այդ սերունդն արդեն ի վիճակի շէ, եթե անգամ ցանկանա, վերագառնալ կյանքի ճշմարտությանը, գտնել այդ ճշմարտությունը՝ նրան խեղդող բառերի հսկայական բեկորի տակ։

Թայց հենց դա էլ Մարկը շէր կարողանում ներել։ Պատանին, որի մեջ եռում է առողջ արյունը, դուրս գալով կյանքի ուղի, գերադասում է նույնիսկ հանցագործությունը, քանի նողկալի անզորությունը և դրա արբանյակ դատարկաբանությունը։ Եթե հանցագործությունն սպանում է, ապա անզորությունը մեռած է ծնված օրից։

«Առողջ արյուն...» իսկ չէ՞ որ նրա մեջ, Մարկի մեջ, այդ ստախոսի արյունն է։

1 Կատակերգու դերասան, ոգբերգու դերասան (իտ.)։

բան չէր մոտեցող վտանգին ընդառաջ գնալը։ Հպարտությունից Մարկը փո՞ք էլ չէր անի խուսափել դրանից։ Բայց չզիտեր, ուժերը կբավարարե՞ն, հավատը հաստատո՞ւն է արդյոք։ Մարկը լսում է, ինչպես է մոնշում, ծիծաղում փոփոխական ամբոխը։ Նրան հիանալի հայտնի է, որ փորձությունը միայն հետաձգված է... Բայց նրա հասակում մի քանի տարի շահելը— մի ամբողջ աշխարհ շահել է։ Նա ըմբռշխում է զինադադարը։ Նա կանխապես ուրախանում է ապագայի համար։ Նա երազում է...»

Սիլվիան տեսնում է, որ նրանք երազանքների մեջ են ընկել։ Նա չի մտածում ոչ անցյալի, ոչ ապագայի մասին։ Ռոպեն այնքա՞ն է սքանչելի, և նա այնքա՞ն լիակատար է վայելում այդ պահը Երեքն էլ վերջացրին վտանգավոր անցումը, թիակները նետված են խաղաղված ծովում ննջող նավակի մեջ։ Սիլվիան երազում է, ի՞նչ հրաշալի երեկո է...»

Բայց վշտով համակված տունը լուռ է, և այդ ողբերգական լուսթյունը ավելի հստակ է ընդգծվում ցնծացող ամբոխի տոնավաճառային աղմուկով։

Երրորդ հարկում պրոֆեսոր Ժիրյորը, քարի պես պինդ, իր վշտի մեջ մոլորված, դրոշներով զարդարում է լուսամուտները։ Ահա և հասավ անողոք նպատակին, իսկ նրա կյանքի անապատում ուրիշ նպատակ չկա։ Նա կարող է ընկնել... Չորրորդ հարկում Բեռնարդենները փակոցակեղեցները ծածկեցին։ Աղջիկները և հայրը եկեղեցում են, եկեղեցու խավար ընթերասեղաններից մեկում։ Իսկ մայրը գամված է անկողնուն։ Նա կամաց կամաց հանգչում է։ Վշտի հնտքերով կրնկակոխ եկավ հիվանդությունը, և Բեռնարդենը, որն այդ րոպեին աղոթում է, չգիտի, որ իր հոգնատանց, դիմադրողականությունը կորցրած մարմինը դարձավ քաղցկեղի զոհը... Առաջին հարկում գինու մառանը լեփլեցուն է, բայց նյուման վաճառասեղանի մոտ չէ։ Տան տերը փակված է հետեւ սենյակում։ Նա մենակ է, խմում է և արցունքները սրբելով թափում գինու մեջ։

Աննետան լսում է... Միաձույլ ակորդի մեջ են լցվում առառապանքը, կործանված կյանքերի պատճառած վիշտը և մրցնանոցի կույր ցնծությունը։ Բոլորը նրա հետ միասին ընկել են Պատրանքի ցանցը։ Խճճված դրա մեջ, նրանք,

մարդու կողքին... Եվ հիմա Մարկի համար հասկանալի գարձավ և թանկ այն խանդոտ կրքոտությունը, որը մայրը ցուցաբերել էր, ձգտելով հորից զերցնել նրան, հասկանալի դարձավ Աննետայի անարդարությունը...

«Անարդա՞ր է: Անարդա՞ր է... «Զեռքդ եմ համբուրում...» թող օրհնյա՞լ լինես»:

Եվ հանկարծ Մարկի երեսին մտրակեց մի հիշողություն, թե ինքն ինչքա՞ն դաժան էր մոր հետ երեկ երեկոյան, այսօր առավոտյան...

Եվ նա վագեց դեպի տուն: Մոր մոտ նա մորն ստիպել էր տառապել: Նա իր մեղքը կքավի: Փառք աստծո, դեռ ժամանակ կա...

Մարկն արդեն վագում էր աստիճաններն ի վեր: Դըռնապանուհին ձայն տվեց նրան.

— Զեր մոր կյանքը մազից էր կախված... Նա ընկել է...

Մարկը մինչև վերջ շլսեց: Սլացավ խելագարի նման աստիճաններով վեր: Դուռը բացեց Սիլվիան: Նրա դեմքը մոայլ է... Մարկը շնչակտուր հարցրեց.

— Մամա՞ն...

Սիլվիան ասաց.

— Բարեհանեցի՞ր, վերջապես, վերադառնալ... Ամբողջ օրը քեզ էինք սպասում.

Մարկը կոպտորեն նրան մի կողմ հրեց ու անցավ:

Նա բայեց մոր սենյակի դուռը: Աննետան պառկած էր գլուխը վիրակապով փաթաթած: Մարկը ոչ այն է թոթովեց, ոչ այն է ինչ-որ բան ճշաց: Աննետան տեսնելով, որ նա հուզված է, արագ ասաց.

— Դատարկ բան է, տղաս... Այս բոլորը իմ հիմարության պատճառով է: Ես ընկա...

Բայց տագնապահար Մարկը, ամբողջովին դողալով՝ շոշափում էր նրան:

Սիլվիան նրան մի կողմ հրեց.

— Նրան հանգիստ թող: Մի հուզիր ավելի շատ:

Եվ Սիլվիան ոչ առանց շարախնդության սկսեց պատմել սեղի ունեցածք: Աննետան, ուշադիր նայելով որդու երեսին, ուղղում էր քրոջը, ջանալով թուլացնել նրա ասածների:

տպավորությունը, փորձում էր կատակել, ամեն ինչում իրեն էր մեղադրում:

(Ահա թե Սիլվիան ի՞նչ շպատմեց նրան.):

Տղայի գնալուց հետո Աննետան լրիվ խելքը թոցրեց: Նա անընդհատ կրկնում էր.

«Նա ինձանից կգնա»:

Աննետան արդեն ոչ մի բանի վրա հույս չէր դնում: Ժամանակ սպանելու համար նա իրեն ստիպեց աշխատել:

«Կգնա թե չի գնա, թթվելու կարիք չկա»:

Եվ Աննետան, ինչքան էլ որ ջարդված էր, իրեն հանձնարարություն տվեց բնակարանը հիմնավորապես հավաքել, մաքրել: Հատակը մոմեց, պղնձեղենը փայլեցրեց և ձեռնամուխ եղավ լուսամուտներին, Փոքրիկ սանդուղքի վրա կանգնած, նա սրբում էր փողոցին նայող բաց լուսամուտի տպակիները, հետո սկսեց ամրացնել վարագույրները... Զգիտես սանդուղքը սայթաքեց թե՝ Աննետան մի քանի վայրկյան գիտակցությունը կորցրեց: Դա ի՞նչ էր— գերհոգնածության ու տագնապի հետեա՞նք թե՝, գուցե, մեկը այն տարօրինակ ուշաթափություններից, որոնք նրա մոտ պատահում էին երբեմն և այնքան շուտ էին անցնում, որ ինքն էլ չէր հասցնում նկատել այդ: Սթափվելով, Յննետան տեսավ, որ պառկած է հատակին, Քիչ էր մնացել փողոց ընկներ, բայց սանդուղքը սահել էր, ընկել կողքի վրա և լուսամուտը փակել, ապակին ջարդելով, Աննետայի ճակատն ու ձեռքը արյունոտվել էին. երբ նա փորձեց վեր կենալ, ոտքի կոճի ցավից հասկացավ, որ աջ ոտքը դուրս է ընկել: Զարդված ապակու ձայնի վրա, որի բեկորները թափվել էին փողոց, վագել եկել էր գոնապանուհին: Նա կանչեց Սիլվիային:

Ինչքան էլ որ Աննետան տառապում էր ջարդվածքից, բայց նա ավելի շատ զայրանում էր անսպասելի խոշոնդոտի պատճառով: Հենց այսօր այդ դժբախտ դեպքը նրա համար անթույլատրելի շոայլություն էր: Նա չէր ուզում այդ օրը օգնության կարիք զգալ և առավել ևս տպավորություն թողնել, իբրև թե նա աղերսում է, որ Մարկը խղճա իրեն. Աննետան դա նողկալի, վիրավորական բան

Էր համարում և իր և Մարկի համար: Նա լարում էր իր քուլոր ուժերը, որպեսզի շպառկի, բայց ցավը տանջում էր, ուժերը դավաճանում էին նրան, նա կամա թե ակամա թույլ տվեց, որ իրեն պառկեցնեն: Դա Աննետայի համար ստորացուցիչ էր: Նա կրկնում էր.

«Ի՞նչ կասի Մարկը, երբ որ գա»:

Տառապած, ուժասպառ Աննետան այնքան էլ իրեն չէր տիրապետում, և Սիլվիան քրոջից դուրս կորզեց նրան տանքող գաղտնիքը: Նա իմացավ, որ Մարկը որոշել է հոր հետ տեսնվել, և համարեց, որ Աննետայի կողմից հիմարություն է եղել ամեն ինչ որդու առաջ բացելը,— նա մոռացել էր, որ ինքն էլ է անուղղակի մասնակցություն ունեցել այդ զործում: Բայց տեղին չէր լինի քրոջը կշտամբանքով նեղել այդպիսի մի ժամանակ, և նրա ամբողջ զայրույթը շրջվեց դեպի Մարկը: Սիլվիան, ինչպես և քույրը, ամեննկին չէր կասկածում, որ Մարկը իրենից կբաժանվի: Նա գիտեր, որ տղան անձնասեր է, փառամոլ և առանց երկար մտածելու, բրիշներին կզոհաբերի իր սեփական հաճույքի համար: Դրանից Սիլվիան պակաս չէր սիրում Մարկին: Նույնիսկ ավելի շատ էր սիրում: Նրա մեջ իրեն էր ճանաշում: Ահա թե ինչու Սիլվիան նրան չէր ներում: Եվ երբեք չի ների, եթե Մարկը հեռանա իրենցից: Եթե... Դա եղած, վերջացած բան է: Եթե նա մինչև հիմա չկա, պարզ է, որ մնացել է Բրիսսոյի մոտ, որ նրա մոտ ճաշում է: Սիլվիան այդ ուշացման համար ոչ մի հարգելի պատճառ, ոչ մի պատահականություն հնարավոր չէր համարում: Սիլվիան ավելի անարդարացի էր, քան Աննետան ու Մարկը միասին վերցրած:

Հիմա, երբ Մարկը եկել էր, Սիլվիայի ամեն մի հայացքում, ամեն մի խոսքի մեջ անբարյացակամությունն կգացվում էր: Մարկը, որ համբերությամբ աշքի չէր ընկնում, ամբողջովին մազերը ցցել էր և թշնամանքին թըշնամանքով էր պատասխանում: Բայց Աննետան որդու առաջ իր հնազանդությամբ մտածում էր միայն այն մասին, որ իրեն ներեն: Կարելի էր կարծել, որ հիվանդացել է, իր մեղքով: Սիլվիայի տոնը նրան ավելի էր տհաճություն պատճառում, քան Մարկին: Աննետան ընդհատեց նրան.

— Թավական է, քավական է... — ասաց Աննետան։  
Թավական է իմ մասին խոսել, Դու կարեռը չէ...

Իսկ ի՞նչն էր կարեռը... Մարկը դա գիտեր: Աննետան նույնպես Ասենք, գիտեր և Սիլվիան, Բայց Սիլվիան սկսել էր համառել — շէր օգնում, իսկ Մարկը շէր ուզում խոսել երա ներկայությամբ։ Աննետան հայացքով աղերսում էր քրոջը։ Սիլվիան ձևացնում էր, թե ոչինչ չի նկատում... Եվ հանկարծ սրբիչը, որ ձեռքին էր, մի կողմ նետեց, լուռ վեր կացավ տեղից ու գնաց։

Մայր ու որդի մնացին երես առ երես Նրանք սպասում էին։ Ինչպես և ինչից սկսել։ Մարկը նայում էր Աննետային։ Մայրը խուսափում էր որդու հայացքից։ Նա վախենում էր, որ իր աշքերը ամեն ինչ կասեն, և այդ շէր ուզում, շէր ուզում ճնշում գործադրել որդու վրա։

Մարկը սենյակում ետ ու առաջ էր քայլում։ Նրա շունչը կտրվում էր, նա շէր կարողանում պատմել օրվա ընթացքում իր գլուխն եկածը։ Մարկը մի անգամ էլ հայացքը զցեց անշարժ պառկած մոր վրա, որը նայում էր լուսամուտին։ Կանգ առավ... Գնաց դեպի մոր կողմը, ծնկի իջավ, այտով սեղմվեց վերմակին։ Համբուրելով Աննետայի ծածկված ոտքերը, նա երկու ձեռքով սեղմեց մոր՝ մարմնի երկարությամբ պարզած ձեռքերը և ասաց։

— Դու ինձ համար հայր ես և մայր։

Աննետան շրջվեց պատի կողմը և արտասվեց։

### Ե Ա Ի Լ Ո Գ

Ք Ե տիրապետության տակ է Մարդկայնության նավը։  
Ուրեմն անցի՞ր Վշտի գետը։  
Խելագար, հիմա քնելու ժամանակ չէ...։

Բացված են բոլոր փականքները, բոլոր շլյուզները։ Անվերջ հոսում են մարդկային ալիքները։ Քսան տարեկաններն արգեն գնացին։ Զորակոչված են տասնինը տարեկանները։ Վաղը կվերցնեն տասնութ տարեկաններին։ Հերթը հասել է Մարկին։

Այդ մասին մտածում էին և մայրը և որդին։ Բայց չէին

**ինսում:** Աննետային վախեցնում էր ոչ միայն պատերազմը, նրան վախեցնում էր Մարկի լուլթյունը: Նա վախենում էր իմանալ, թե Մարկն ինչի մասին է մտածում, իսկ եթե վախենում էր— կնշանակի գիտեր:

Ո՞ւմ հայտներ իր սարսափները, նթե դրանք վերաբերեին միայն իրեն, Աննետան կթաքցներ դրանք Բայց բանը Մարկին էր վերաբերում: Ո՞ւմ հետ խորհրդակցել Սիլվիայի հետ: Նա անմիջապես ըստ իր սովորության բացականշեց.

— Պատերազմը: Պատերազմը կես տարի էլ չի տևի Բոշերն ուժասպառվում են:

Աննետան առարկեց.

— Այդ դու ասում ես ամեն կես տարին մեկ:

— Բայց հիմա դա արդեն ցերեկվա պես պարզ է,— համոզված ասաց Սիլվիան:

— Քո համոզմունքն ինձ համար բավական չէ,— ասաց Աննետան:

— Ինձ համար էլ, բանի որ խաղաթղթի վրա է Մարկի ճակատագիրը,— ասաց Սիլվիան:— Քանի դեռ ուրիշների բախտն էր որոշվում, կարելի էր խարվել. դա այնքան էլ կարեռ չէր: Բայց երբ մեր տղայի հերթն է հասել, սիսալը հանցագործություն է: Դու ճիշտ ես: Ի՞նչ կլինի, եթե պատերազմը երկարի... Մի՞թե այդ տխմարներից բան կհասկանաս: Կարծում ես բանն արդեն վերջանալու վրա է, իսկ նրանք նորից են սկսում: Ահա արդեն յանկիներն էլ շուրջպարի մեջ մտան: Իսկ հետո հանդես կգան Զինաստանն ու պապուսաները է, թող պարեն, ինչքան ուզում են: Բայց մեր Մարկը չի մասնակցելու այդ պարին:

— Ինչպես:

— Զգիտեմ: Բայց նրանք Մարկին չեն վերցնի: Եթե պատերազմը լափում է մեր ամուսիններին, բարեկամներին, սիրեկաններին, դրան դեռ կարելի է համաձայնել. նրանք իրենցը կյանքից վերցրել են: Բայց մեր որդին՝ մերն է, մեզ համար է, նա ինձ մոտ է, ես նրան բռնել եմ և ոչ ոքի չեմ տա...

— Բոլոր մայրերը իրենց որդիներին տալիս են:

- Իսկ ես իմին չեմ տաւ:
- Քոնի՞ն:
- Մերին: Նա մեր երկուսին է պատկանում:
- Ի՞նչ ձեռվ դու նրան կպահես:
- Հազար ձեւ կա:
- Գոնե մեկն ասաւ:
- Մենք բարեկամներ ունենք... Օրինակ քո Ֆիլիպ Ահլարը... Զէ՞ որ նա հիմա զինվորական վիրաբույժ է, բանակի գլխավոր տեսո՞ւն է... Նրա համար ոչինչ շարժի Սարկի համար անվտանգ մի տեղ գտնելը:
- Եվ դու կարծում ես ես նրան կդիմե՞մ այդպիսի հարցով:
- Իսկ ինչո՞ւ չէ: Ամաշո՞ւմ ես: Ի՞նչ հպարտ կին է: Իսկ և չէի ամաշի... Եթե դա անհրաժեշտ լիներ իմ երեխայի փրկության համար, դու կարծում ես ես չէի՞ տրվի հենց առաջին պատահածին:
- Զկա մի այնպիսի հպարտություն, իսկական լինի թե կեղծ,— ասաց Աննետան,—որը ես շտրորեի հանուն իմ որդու... Բայց հանուն իմ որդու, հանուն նրա բարօրության:
- Իսկ դա նրա բարօրությո՞ւնը չէ:
- Նրա բարօրությունը չի կարող լինել այն, որ ես ինձ պատվազրիեմ: Զէ որ իմ եսը նա, է: Նա ինձ այդ չէր ների: Եւ ինքս էլ ինձ չէի ների նրան ստորացնող այդպիսի փորձի համար:
- Դուրս է զալիս, որ փրկելը նշանակում է ստորացնե՞լ նրան:
- Եթե ինձ այդպիսի գնով փրկեին, ես ինձ ստորացված կզգայի:
- Միլվիան ջղայնացավ:**
- Լա՞վ մայր ես... Ես թքել եմ, նա ստորացված է թե չէ, կների ինձ թե չէ: Միայն թե նա փրկվի... Շատ լավ, Եթե դու այդ շես անի, ուրեմն ես կանեմ...
- Առնետան բղավեց.**
- Օս արգելում եմ քեզ:
- Դու ինձ ոչինչ արգելել չես կարող:
- Իսկ դու կարծում ես դա բավակա՞ն է, նրան վտանգից փրկելը:

— իսկ էլ ինչից ես դու վախենում:

Աննետան վախենում էր, որ Մարկն ինքը իր գլխին  
վորձանք կբերի:

Մարկն առանձնանում էր իր գրքերի ու խոհերի հետ:  
Չնայած հոգեկան մտերմությանը, որն հիմա որդուն կա-  
պում էր մոր հետ, Մարկն օրերն անց էր կացնում իր սեն-  
յակում լուռ, իսկ Աննետան հարգում էր նրա միայնու-  
թյունը: Նա սպասում էր, թե Մարկն ինքը երբ կզա իր մոտ:  
Աննետան հասկանում էր, թե ինչ խոր պրոցես է տեղի  
ունենում որդու մեջ: Դա հասունացման և զտման պրոցես  
էր: Ճգնաժամը, որ շարունակվում էր շորս տարի, վերջա-  
նում է:

Մարկը համառ կերպով ձգտում էր ավարտել իր սկսած  
խիստ ինքնագնահատումը. նա ինքն իրեն, ինչպես և ուրիշ-  
ներին, դատում էր անողոք: Որպեսզի խաղաղեցնի իր  
ապստամբած էության այրող պահանջները, նա էությունն  
այդ ենթարկել էր դաժան կարգ ու կանոնի. խիստ կյանք,  
խիստ միտք: Իր հետ տեղի ունեցած վերջին մարտերը  
հեշտերից չէին: Մարկն այդ մարտերից դուրս էր եկել  
շարդկած և սոսկալի ամոթից ու խղճի տառապանքից այր-  
ված, բայց մոխրի տակ ամուր, առողջ, անվնաս միջուկ  
էր մնացել:

Նա ստուգման ենթարկեց բոլոր մտքերը, որոնք ներծրծ-  
վել էին նրա պատանի, ժամանակից շուտ հասունացած  
ուղեղի մեջ. այն, ինչ նա գրքերից էր վերցրել, փիլիսո-  
փաներից, իր սերնդի մտքերի տիրակալներից: Շատ քիչ  
բան էր մնացել: Ինչ-որ ողորմելի փշրանքներ: Մնացածը—  
անմիս ու անարյուն դատարկ խոսքեր էին: Այդ խոսքերից  
ոչ մեկը գործ չէր դառել: Բացի մեկից: Դա, այդ խոսքը,  
ծռւլված է երկաթից, այդ խոսքը մեքենաների դարաշըր-  
ջանի արդյունք է, այդ խոսքը մարդկությանը նույնպես  
դարձրել է անկամ մեքենա, որի ներսում մի դասակարգը,  
կուրորեն, ինչպես մուրճ, տապալում է մյուսին: Ոչ մի  
ազատ գործողություն: Ոչ մի գործողություն, որ բխի  
հոգուց: Ոչ մի ազատ հոգի, որն իր զգացմունքները գոր-

ծրղություն դարձներ, Զկա մի կամք, որ դուրս պրժներ, ինչպես կայծակ, մտքի ամպերի միջից, շարժվող նյութի կուտակումից:

Բայց կրակը վազում է ամպերի տակ, սառած կեղենի տակ, օդում, հողում և ջրում...

Մի անգամ երեկոյան Մարկը ձեռքն առավ Հենդելին (նրա աշխարհայացքի պրիզմայի միջով Մարկը սուրբ գըրքեր էր կարդում): «Խսրայելում» նա կարդաց. Ег Sprach das Wort...»<sup>1</sup>:

Եվ Մարկը լսեց այդ խոսքը:

Տունը կաթիլ առ կաթիլ արնաքամ էր լինում:

Հաճույթի համար տարվող տենդագին վազքը ահա արդեն չորս տարի էր, ինչ պահում էր նյումա՛ Ծավուասա՛յին, գինետան և փայտի պահեստի տիրոջը, որն ապրում էր առաջին հարկում: Եվ նա բարգավաճում էր: Այդ անձնավորությունը երեք շերտ ճարպակալել էր: Վոշնած, քրտնքոտ, գոռգոռան, նա քստքստացնում էր ծոմոված կոշիկներով և, թվում էր, տրաքում է ոսկու և առողջության առատությունից: Հիմա, լեփլեցուն քսակով, նա սպասում էր որդու վերադարձին, որպեսզի Ֆիլոպոմենի նման նստի այն հողում, որն ինքը ձեռք է բերել... Բայց որդին չվերադարձավ: Կլովիսի դիակը կախվել էր ինչ-որ տեղ փշալարից: Այն առավոտ, երբ այդ լուրն ստացվեց, ներքեկց վեր բարձրացավ ու տարածվեց ամբողջ տնով մեկ մի բառաշըուն,— ցովի մի բառաշըուն, որին մորթում է անկարող մսագործը... Ինչի՞ համար էր նա աշխատում, ինչի՞ համար այդքան փող դիզեց... Գիրուկը կաթվածահար գետին տապալվեց... Հետո նա, աշքը ուռած, լեզուն հազիկ պտտելով, նորից հայտնվեց իր պահեստում: Բայց նրա ձայնն այլևս չէր լրավում: Տակառը փլվեց:

Հետո տանն իմացան, որ հեզ կիդիան գրիպի համաճարակի ժամանակ մահացել է Արտուայի հոսպիտալում, որտեղ նա երկու բանակների խաչաձևվող կրակի տակ խնամում էր վիրավորներին: Նա արդեն վաղուց էր սպասում այդ ժամին: Նա կրկին կմիանա իր փեսացուի հետ...

<sup>1</sup> Նա խոսք ասաց (գերմ.):

Ավաղի, Եթե նա հավատա՞ր դրան այնպես, ինչպես փափագում էր հավատալ, թայց դա այնքան էլ հեշտ չէ, ինչպես կարծում են այդ խեղճ մարդիկ. ուզի՞ր—և կհավատաս: Կամքը բացում է հոգու բալոր դռները, բայց կանգ է առնում ամենավերջինի մոտ, իսկ այդ վերջինում էլ գտնը վում է հոգու համար ամբողջ ուժը, որը մի բան արժի... Տե՛ր իմ աստված... Եթե անվերապահորեն հավատա՞լ, որ գոյություն ունի թեկուզե դժոխք, որտեղ դու հավիտենապես սրբվելու ես քո սիրեցյալի հետ միասին... Թայց հավատում էր Լիդիան թե ոչ, հիմա նա ազատվել էր... Թե՞ այդ քիքուշ ծաղիկը, որը վերադարձված է հողին, որպեսզի իրենով սնի ուրիշ ծաղիկներ, որոնց նույնպես մահը կլանելու է, այդպես էլ ազատություն չի գտնելու:

Իսկ դրանից հետո վերադարձավ Կայեի տղան (Հեկտորը), փառքի դաշտում խեղանդամված, առանց ծնոտի (պետությունը մեծահոգաբար նրան մատուցեց ուրիշ ծնոտ, պատենտավորված, երկու, ամենաշատը երեք տարի երաշխիքով՝ խնամքով վերաբերվելու դեպքում): Նրա ձեռքերը դրդում էին, ոտքերը վատ էին ենթարկվում իրեն, ինչպես երեխայի ոտքերը, որ քայլել է սովորում: Թայց նա պարգևատրված էր շքանշանով: Մայրը պարուրում էր նրան իր քնքուշ, կարեկցական հայացքով: Նա այնուամենայնիվ երջանիկ էր և հպարտանում էր իր զավակով: Նա կաղալով հենվում էր պառավի ձեռքին, երբ նրանք դուրս էին գալիս իրենց սովորական զրոսանքին: Ապրում էին դժվարությամբ, բայց համբերություն հավաքելով, կարելի էր մի կերպ ծայրը ծայրին հասցնել: Կայե մայր և որդին համարում են, որ ամեն ինչ դեռ շատ հաջող է դասավորվել:

Ժողեփեն Կլապիեն, թիկունքում դառնալով բարոյականության սլահապան, իր թանկարժեք առողջությունը և նույնիսկ բանականությունը ծախսում էր այդ ազնիվ ծառայության վրա: Բոլոր ուխտադրուժները աշքի են ընկնում չափազանցելու իրենց հակվածությամբ: Կլապիեն այնպես էր պարծենում իր նոր գործունեությամբ և այնպիսի կատաղությամբ էր հետապնդում իր նախկին զինակից-պացիֆիստներին, նրանց հավատն ու հայացքները, որոնք նա

չեմ վերջերս ինքն էր ոգտագործում, որ վերջ ի վերջո իրեն հալածական երևակայեց։ Նա իրեն անմեղորեն վիրավորված էր զգում, երբ նրանք, ում ինքը հետապնդում էր, պատասխանում էին իրեն արհամարհական լոռությամբ և մեջքով էին շրջվում իր կողմբ։ Նա աղաղակում էր, որ ի դեմս նրա անարգվում է հայրենիքը։ Դա մյուսների համար վտանգավոր էր։ Նրա համար նույնպես։ Նա կարող էր հեշտությամբ ընկնել գժանոց։

Իսկ թրոշոնը, տան պահակը, որին, ինչպես էվմենիդներին<sup>1</sup>, ի հակակշիռ իր էության, կոչում էին խաղաղության պահապան, բարգավաճում էր։

Մարկը, անցնելով դռնապանատան կողքով, մորն ասում էր.

— Իմ տպավորությունն այնպիսին է, թե մենք գտնընկում ենք Պեռ լա Շեզում։ Դու տեսնո՞ւմ ես այդ գերեզմանոցային պահակին... Մամա, արի շուտ բարձրանանք մեր սափորասրահը։

— Բարձրանա՞նք, աղավնյակս, — ժպտալով ասում էր Աննետան։

Նրանք այլաբանորեն տիսուր մտքեր էին փոխանակում միմյանց հետ, Աննետան՝ կարեկցանքի երանգով, Մարկը՝ դարշանքի երանգով դեպի Պոլիֆեմի այդ քարայրը, դեպի առունը, քաղաքը, աշխարհը, որտեղ բանտարկյալներից յուրաքանչյուրը համբերությամբ սպասում է կեր դառնալու իր հերթին։

— Իսկ հիմա, — ասաց Մարկը, — իմ հերթն էլ եկավ։ Աննետան կպավ նրա ձեռքից։

— Ո՞չ։ Այդ բանը շասես։

Բայց նա զղում էր, որ Մարկին թույլ չտվեց արտահայտվել մինչև վերջ։ Ի վերջո պետք է իմանալ, թե նա ի՞նչ է որոշել։

Մարկը լուր նայում էր մորը։ Աննետայի ոտքերի մոտ շածրիկ աթոռակի վրա նստած, նրա վեր բարձրացրած

Էվմենիդներ — Հին հույների մոտ վրիժառության աստվածուհիներ։ Նրանց կոչում էին «Էվմենիդներ» (բարեհաճներ), ցանկանալով գթաշարժել նրանց։

ծնկները գրկած, Մարկը երկար ժամանակ մորից չէր հեռ ուցնում վճռականությամբ լեցուն իր հայացքը: Իսկ Աննետան սկեռուն հայացքով նայում էր Մարկին... Աստված իմ, ինչքան է ինքը սերտածել որդու հետ... Բայց Մարկն այլևս դա չի շարաշահի: Աննետան նրա զանձն է:

Մարկը ժպտաց Աննետային և ասաց.

— Տարօրինա՞կ է: Պատերազմից առաջ մենք երկուսս էլ պացիֆիստներ չենք:

— Մոռացիր այդ բառը,— ասաց Աննետան:

— Դու ճիշտ ես Այդ բառը պղծել են: Բոլորը, ում շուրթերից դա չէր իջնում, հիմա հրաժարվել են այդ բառից:

— Եթե նրանք հրաժարվելու անկեղծությունը ունենային: Բայց դավաճանելով դրան, նրանք շարունակում են դիմակ կրել:

— Թող կրեն,— ասաց Մարկը:— Բայց մենք, պատերազմ մերժողներս, առաջ դեմ չենք պատերազմին: Ես հիշում եմ, որ սկզբում ուրախ էի դրա համար: Իսկ դու ընդունեցիր պատերազմը: Այդ ի՞նչը մեզ փոխեց:

— Պատերազմի նողկալիությունը,— ասաց Աննետան:— Պատերազմի կեղծությունը,— ասաց Մարկը:

— Երբ ես տեսա,— շարունակում էր Աննետան,— այդ արհամարհանքը դեպի թույլերը, զինաթափները, գերիները, դեպի մարդկային վիշտը, դեպի սրբազն զգացմունքները, ստոր բնազների վրա տեղի ունեցող այդ խաղը, խղճի նկատմամբ գործադրած բռնությունը, հասարակական կարծիքի առաջ ունեցած վախկոտությունը, այդ ոշխարներին, որոնց գրիմ են անում հերոսների նմանությամբ և որոնք հերոսներ են դառնում հենց այն պատճառով, որ ոշխար են, այդ բարի մարդկանց, որոնց ստիպում են սպանել, այդ անկամ մասսային, որն ինքն իրեն չի հասկանում և թույլ է տալիս, որ մի բուռ խելագարներ դեկավարեն իրենց,— Եռ ամոթից ու ցավից ցնցվեցի:

— Երբ ես տեսա,— ասաց Մարկը:— այդ նողկալի պատերազմը, որը թաքցնում է իր գաղանացին մոռւթը, այդ դարձորյակների նախիրը, այդ գիշատիչներին, որոնք հանգես են գալիս իրավունքի դիմակի տակ և օգտվելով հանգա-

Նանքներից մտնում են ուրիշի գրպանները, այդ դաժան սորկությունը, որը մեզ հիմարացնելու հաջիվներ է անում, պարծենալով բովանդակազրկված «ազատություն» բառով, այդ կեղծ բարեպաշտական հերոսությունը, — և ծիծաղեցի նրանց երեսին:

— Մի՛ գրգռիր նրանց, — ասաց Աննետան: — Նրանք անթիվ, անհամար են:

— Ի՞ա՞րկես: Զկա ավելի սրիկա բռնակալ, բան միաւին հավաքված միլիոնավոր սրիկաներն են:

— Նրանք չգիտեն, թե ինչ են անում:

— Իսկ բանի դեռ չեն իմացել, թող նրանց վիճը շղթաւ դնեն:

— Դու շափազանց դաժան ես, թանկագինս: Նրանց հարկավոր է խղճալ: Չէ որ նրանք առանց այն էլ շղթայակապ են: Նրանք միշտ էլ շղթայված են եղել: Հենց զա էլ դեմոկրատիայի հրեշտավոր կեղծիքն է: Նրանց անընդհատ ասում են և վերջում էլ գլուխները մտցնում, որ նրանք՝ նորին մեծություն ժողովուրդն են, իսկ վարվում են նրանց հետ, ինչպես վարվում են վաճառքի տարվող անասունների հետ:

— Ես չեմ կարող խղճալ նորին մեծություն հիմարությանը:

— Նույնիսկ ամենահիմարը իմ եղբայրն է:

— Եղբայրը դատարկ հնչյուն է: Ես շան եղբայրն եմ, որ աղբակույտն է քրքրում: Բայց ի՞նչ ընդհանուր բան կա նրա և իմ միջև:

— Կլանքը:

— Այո, այն, ինչը մեռնում է: Դա բավական չէ:

— Իսկ դրանից բացի էլ ինչ կա:

— Եվ դու դեռ հարցնո՞ւմ ես, դու, որ ինքդ այդ ունես կա այն, ինչի դեմ ոտնձգություն չի կարող անել ոչ կյանքը, ոչ մահը. Հավիտենության հատիկը:

— Որտե՞ղ է դա, այդ հատիկը: Ավաշը: Ես իմ մեջ ոչինչ հավիտենական չեմ գտնում:

— Բայց այն, ինչ դու անում ես, ինչ դու ներկայացնում ես քեզանից, — դու չէիր անի, դու չէիր ներկայացնի, եթե քո մեջ այդ հատիկը չլիներ:

— Դա արդեն շատ անհասկանալի է ինձ համար, մանկիկ իմ, Ես անում եմ այն, ինչ ինձ հուշում է իմ զգացմունքը, Ես դա անում եմ բարեխղճորեն — և երբեմն իարվում եմ: Բայց խոստովանում եմ, Ես դեռ մինչև հիմա գլուխ չեմ հանում դրանից: Իսկ գուցեկ պետք լէ որ Ես գլուխ հանեմ:

— Իսկ ինձ պետք է: Ես պետք է հասկանամ, թե ուր եմ գնում, որպեսզի գնամ այնտեղ, ուր ուզում եմ:

— Որպեսզի ուզենաս գնալ, ուր ուզում ես...

— Թող այդպես լինի: Ես ուզում եմ տեսնել:

— Եվ ի՞նչ ես տեսնում: Ի՞նչ ես ուզում: Ո՞ւր ես զնում:

Նա չէր պատասխանում:

Աննետան հավաքեց իր ամբողջ արիությունը և ընդհանուր ձայնով հարցրեց.

— Եթե պատերազմը զա քո հետեւից, դու ի՞նչ կասես նրան:

— Ես նրան կասեմ. «Ո՞չ»:

Աննետան սպասում էր այդ հարվածին: Եվ, ստանալով հարվածը, նա ձեռքերը մեկնեց, բայց շափազանց ուշ, և շկարողացավ խանգարել հարվածին:

— Միայն թե ոչ այդ:

— Դու ուզում ես, որ ես պատերազմին ասեմ. «Այո՞»: — Հանգիստ կերպով հարցրեց Մարկը:

— Ո՞չ: Դա էլ չեմ ուզում, — առարկեց Աննետան:

Մարկը հարգանքով ու կարեկցությամբ նայում էր տագնապով համակված մորը (մինչդեռ նա վաղուց պետք է պատրաստ լիներ պատասխանին): Նա սպասում էր, որ մայրը հասկանա իր մտքերը: Բայց տրամաբանական փաստարկների փոխարեն Աննետան կարողանում էր նրան պատասխանել միայն հուզված ու կրքոտ բացականչությունների հեղեղով.

— Ո՞չ: Ո՞չ: Միայն թե ոչինչ մի որոշիր: Դու դեռ չես կարող իմանալ, չես կարող ինքո քեզ համար այդ մասին կարծիք կազմել: Սպասիր: Հանցագործություն կլիներ վտանգի տակ դնել ամբողջ կյանքը այդ մի «ոչ»-ով,

այդ չափազանց շտապողական որոշմամբ, որոշմամբ մի մանկան, որը դեռ չի ապրել:

— Բայց չէ որ դու ապրել ես:

— Ես, ես կին եմ, ես չգիտեմ, ես համոզված չեմ: Ոչ ոք ինձ ուղղություն ցուց չի տվել, ես զեկավարվել եմ միայն իմ բնազդով ու սրտով: Դա բավական չէ:

— Այո, բավական չէ: Իսկ ե՞րբ է բավական լինելու մով կհամարձակվի ասել, նույնիսկ կյանքի վերջում, որ ինքը գիտե, որ ինքն արդեն համոզված է, որ ինքն ամեն ինչ կշռադատել է: Մի՞թե մարդը դատապարտված է հավիտենապես իր գործողությունները հետաձգելու հաջորդ օրվան: Մի օրից մյուսն ես հետաձգում, և ահա գալիս է վերջին օրը — և դու դուդս ես գալիս ստորացված, ամայացած, այլասերված, ինչպես մարդկանց մեծամասնությունը: Իսկ երբ է ինձ իրավունք տրվելու գոյություն ունենալը Աննետան չէր ուզում լսել: (Նա լսում էր շատ լավ):

— Դու իրավունք չունես քեզ ոչնչացնելու:

— Ես չեմ ուզում ոչնչացնել: Ես ուզում եմ կառուցել:

— Ի՞նչ կառուցել: Եվ ո՞ւմ համար:

— Նախ և առաջ ինձ համար: Մաքուր կացարան, որտեղ ես կարող եմ շնչել: Ես չէի կարող կյանքը տանել կեղծիքի կեղտոտ շնաբնում, որտեղ շատերն են ապրում... Ես, թերեւս, խիստ էի, քեզ հետ խոսելիս... Դու ինձ դաժան ես անվանում: Ես դաժան եմ: Բայց ուրիշ կերպ ինչպես օգնես մարդկանց, որոնց խղճում ես: Զէ որ տունը պետք է կառուցել նաև ի սեր նրանց:

— Բայց հո այդ տունը մի օրում չես կառուցի: Կառուցելու համար անհրաժեշտ է, որ մարդ ինքը ամուր կերպով հիմնվի երկրի վրա:

— Պետք է ամուր հիմք ստեղծել: Ամենաբարձր շենքն սկսվում է քարը դնելուց: Eris Petrus<sup>1</sup>. Ես քար եմ:

— Դու Մարկն ես: Դու պատկանում ես ինձ:

— Ես քեզանից եմ: Ես նա եմ, ում դու ստեղծել ես:

— Բայց դու ինձ զոհաբերում ես: Դու իրավունք չունես:

— Մամա, այլուեզ արդեն մեղքը քոնն է: Դու ինձա-

1 «Դու լինելու ես Պետր»: (Պետր — հունարեն քար):

Նից անկեղծություն էիր պահանջում։ Դու ուզում էիր, որ ես իսկական ժարդ լինեմ, լինեմ ազնիվ մարդ։ Ես չգիտեմ, ուժերս կպատե՞ն արդյոք։ Բայց փորձել ուզում եմ... Արի անկեղծ լինեմք։ Ամբողջ շարիքը նրանում է, որ ոչ ոք չի համարձակվում ազնիվ լինել, անցնելով այն սահմանը, որտեղ այդ ազնվությունը վտանգի տակ է դնում սինձնական շահերի ու կրքերը։ Այդտեղ արդեն սողանցք են փնտրում, խորամանկում են իրենք իրենց հետ, ինչպես, ասենք, ձեր պացիֆիստները։ Դու կուզեիր, որ ես արդարամիտ լինեմ, բայց ոչ այն աստիճան, որ վտանգի ենթարկեի իմ ու քո երջանկությունը։ Արդյո՞ք դա լավ է։ Արդյո՞ք ազնիվ է դա։

Աննետան համառորեն ասաց.

— Այո՛,

— Ի՞նչ դա ազնի՞վ բան է։

— Դա լա՞վ է։

Մարկը բռնեց մոր ձեռքերը, որոնք Աննետան ամեն կերպ ուզում էր ազատել։ Բայց Մարկը ամուր բռնել զիտերի

— Նայիր ինձ... Դու այն չես ասում, ինչ մտածում ես... Ես ուզում եմ, որ դու ինձ նայես... Պատասխանիր ինձ։ Ես ճի՞շտ չեմ... Մեզանից ո՞վ է ազնիվ։ Դո՞ւ թե ես։

Աննետան ընկճվեց և ասաց.

— Դո՞ւ

Եվ նույն վայրկյանին ճշաց.

— Դա խելագարություն է, ես չեմ ուզում։

Աննետան վերջապես մտքերը ժողվեց։ Նա փորձեց Մարկի հետ վեճի մեջ մտնել.

— Ազնվությունը նշանակում է ազնիվ լինել ամեն մի մտքի վերաբերյալ, ոչ ոքի և ամենից առաջ իրեն մոլորության մեջ չգցել իր հավատալիքների վերաբերյալ։ Բայց ազնվությունը մեզանից անհնարին բան չի պահանջում։ Ճիշտ առաջնորդվել իր հավատալիքներով, և միայն դրանցով։ Մեր ոգին ազատ է։ Իսկ մարմինը շղթաների մեջ է։ Մենք զողված-կպցրած ենք այս հասարակությանը, որի մեջ ապրում ենք։ Մենք ենթարկվում ենք որոշակի կար-

դերի: Մենք շենք կարող կործանել այդ կարգերը, առանց մեզ կործանելու նույնիսկ անարդար հասարակարգը մենք կարող ենք միայն դատապարտել, թայց հարկադրված ենք ենթարկվել նրան:

— Մամա, դու հրաժարվում ես սեփական կյանքից... Մի՞թե ես չգիտեմ, թե դու ինչպես էիր ապստամբում, ինչպես էիր կովում: Չէ՞ որ դու ընդունակ շես անարդարություն հանգուրժել քո և ուրիշների նկատմամբ: Սիրելի իմ անհնազանդ... Եթե դու անհնազանդ շլինեիր, ես այդպես քեզ չէի սիրի...

— Ոչ, ինձանից օրինակ մի վերցնիր Ախ, ահա և պատիժը... Դա արդարացի չէ... Ես քեզ ասացի, ասենք, դու ինքդ էլ գիտես, որ ես ապրել եմ կուրորեն, որ ինձ առաջնորդել է ներքին զգացողությունը, կանացի կրքերը, անշափ խանդավառ սիրտս, որը ամենաշնչին իսկ հպումից թրթում է գիշերվա մեջ... Տղամարդը, որին ես եմ ստեղծել— շպետք է որպես օրինակ վերցնի՛ կնոջը: Նա կարող է և, կնշանակի, պետք է ազատվի բնության մթին թելադրանքներից: Նա պետք է տեսնի ավելի պարզորդ և ավելի հեռուն:

— Սպասի՛ր: Մենք հիմա դրան էլ կհասնենք: Եվ, երբ Հասնենք, դու, գուցե, ինձ ստիպես ետ դառնալ: Իսկ առաջժըմ ինձ ասա, Հերքո՞ւմ ես դու արդյոք քո սեփական անհնազանգությունը:

— Իմ բունտը միշտ պարտությամբ է վերջանում:

— Թայց յուրաքանչյուր պարտությունը (խոստովանիր) ազատագրություն է եղել:

— Ա՞խ, ես միայն շղթաներ եմ փոխել ու ինձ վերքեր հասցըել, դրանք անթիվ անհամար են, այդ շղթաները: Ես մի շղթան կտրում էի, որպեսզի մյուսով կապանքեմ ինձ: Գուցե, շղթաները պե՞տք են...

— Դու ինքդ քեզ հասկանում ես: Դու մի շղթան կը տրում ես մյուսի հետեկից— մի՞թե ես այդ չգիտեմ:

— Իսկ եթե դա սխա՞լ է: Ես ենթարկվում եմ իմ անհեռատես բնազդին, բայց, գուցե, փշըելով այդ շղթաները, ես դրանով ավելի շա՞տ շարիք եմ պատճառում ինձ և

աւրիշներին նթե կարգը և էքսպում հրաժարման դնո՞վ:

— Մամա, մի փորձիր հայնակցն հանճարեղ էգոխտին, նրան, ով աշխարհում կարգը ավելի բարձր է դասել, քան իր մերձավորի երջանկությունը, իսկ հայեցության անդորրը ավելի բարձր, քան վտանգավոր պայքարը գոյություն ունեցող լարիքի գեմ: Ինչ թույլատրելի է Գյոթեին, մեզ թույլատրելի չէ: Աշխարհի հավիտենական կարգը մեզ չի բավականացնում: Մենք շնչում ենք երկրային մթնոլորտում: Եվ եթե այդ մթնոլորտը թունավորված է անարդարությամբ, մեր պարտքն է ապակիները չարդել, որպեսզի թարմ օդ շնչենք:

— Ապակին կարող է երակը կտրել:

— Թող նույնիսկ ես ճեղքից ցած ընկնեմ, — ինչ կա որ, համենայն դեպս այդ ճեղքը բացված կլինի: Մյուսներն ավելի հեշտ կշնչեն:

— Սիրելիս, չէ որ դու մարդկությանը չես հավատում (դու ինձ հարյուր անգամ այդ ասել ես), ինչո՞ւ դու հիմա վճռեցիր քեզ զոհաբերել նրան: Մի՞թե դու ծաղրի շեիր ենթարկում այդ մարդկության նկատմամբ ունեցած իմ հավատը, — իմ խեղճ հավատը, այնքան անգամ ոտնահարված, որ նա հիմա արդեն այնքան էլ հպարտ չէ, այնքան էլ վստահ չէ իր վրա:

— Ապասի՞ր... ես քեզ չեմ ծաղրել Ինչի էլ որ դու հավատասո, դու ինձ համար ավելի բարձր ես, քան այն, ինչի դու հավատում ես... Թայց դու ճիշտ ես. ես ճամարտակելու սիրահար չեմ «հումանիզմի» և «մարդկության» մասին, ես ոչ մի քանի տեղ չեմ դնում գաղափարների այդ դատաքնիկեղեց, բառային այդ ֆեյերվերկը: Ես տեսնում եմ մարդկանց, մարդկանց մեծ նախիրներ, որոնք թափառում են, հավաքվում իրար գլխի, կպչում են միմյանց, վազում են աջ, ձախ, առաջ, գաղափարների փոշի բարձրացնելով: Կյանքում — նրանց և մեր կյանքում, աշխարհի կյանքում — ես տեսնում եմ տրագիկոմեդիա, որի հանգուցալուծումը դեռ հայտնի չէ. սյուժեն ստեղծվում է աստիճանաբար, այդ սյուժեն հորինում են նրանք, ում կամքով ղեկավար-

վում է գրեհը։ Այդ գրոհին մասնակցում եմ ես նույնպես, ինձ վրամ եռ կրում եմ ալդ գրոհի կնիքը, որովհետև ես քո որդին եմ։ որովհետև ես Մարկ Ռիվիերն եմ, — և ես չեմ կարող այլևս ետ հահանջել։ Դրա դեմ կապստամբեք իմ հպարտությունը Կհաղթի<sup>»</sup> արդյոք թե<sup>»</sup> չի հաղթի այն զուկատը, որին ես պատկանում եմ, ես կովելու եմ մինչև վերջը, առանց հանձնվելու

— Այդ ի՞նչ մարտ է։ Ո՞ր լագերին միանալ։ Նո՞ր Հի՞ն, Ո՞վ գիտե։ Ինչպե՞ս համոզվել։ Գուցե, անցյալը հրամայում է ապագայի՞ն։ Գուցե, ապագան հրամայում է անցյալի՞ն։ Ո՞վ կարող է մեզ լուսավորել… Հաճախ ես իմ հոգեկան միայնության մեջ զգում էի, որ ամբողջովին ներծծվում եմ համոզվածությամբ, և ինձ ասում էի. «տեսնես որտեղից է այդ համոզվածությունը, եթե ոչ այն բանից, որ իմ մեջ ապրում է հաղթանակովը (աստված, որը գալիս է)։ Բայց հետո, երբ տեսնում ես, որ ուրիշ մարդիկ, ամբողջական ժողովուրդներ նույնպես լցված են հավատով, նույն կամ հակառակ, կրքոտ հավատով դեպի հայրենիքը կամ կրոնը, գեպի արվեստը կամ գիտությունը, դեպի կարգուկանոնը կամ ազատությունը, և նույնիսկ դեպի սերը, որտեղ վատնում է իրեն կույր և խելագար կյանքը, այդտեղ արդեն պետք է ունենալ մեծ ինքնավստահություն՝ համառությամբ պնդելու համար. «Միայն իմ հավատն է լավ»։

— Միայն իմ հավատն է իմը։ Ես երկու հավատ շունեմ։  
— Իսկ ես ունեմ բոլոր նրանց հավատները, ում ես սիրում եմ։ Եվ նրանց հանգեպ ունեցած սերը միակ բանն է, որին ես վստահ եմ։

— Շատերից ես դու արդյոք սիրում։ Շատերը կան սիրոյոք, որոնց կարելի է սիրել։

— Միրել կամ խղճալ։ Դա միևնույն բանն  
— Իսկ ես չեմ ուզում, որ ինձ խղճան։ Ես ուրիշ սեր եմ ուզում — այնպիսի սեր, որն ընտրում է, որը գերազասում է։

— Նույնիսկ ես եմ քեզ շափից ավելի գերազասում, դաժան իմ որդի։ Ես ամբողջ աշխարհը կտայի, միայն թե քեզ պահպանեի։

— Դե, ուրեմն, ինձ հետ էլ մնա, եղիր ինչպես ես եմ.

ընտրի՞ր։ Դու սուզվում ես երազանքների մեջ։ Դու անվերք միենույն տեղում ես, ինչպես մակընթացությունն ու տեղատվությունը, որը բարձրանում է և ընկնում, առանց սուազ շարժվելու ինչ էլ ուղում է լինի, պետք է առաջ գնալո Զարդել պատնեշները, քայլել ուղիղ, սեփական ճանապարհով։

— Բայց եթե այդ ճանապարհը փակուղի՝ տանիւ եթե դու այդ ճանապարհին միայնակ լինես Եթե մնացած ամբողջ աշխարհը մյուս կողմում է։

— Ով առաջինն է դուրս եկել, մենակ է գնում։ Բայց եթե նա մենակ է գնում, ապա այն պատճառով, որ իրեն համարում է առաջին հայտնագործողը։ Իր առաջ զցած ամեն մի քայլով այդ միայնակ մարդը ճանապարհ է բացում ամբողջ աշխարհի համար։

— Դա credo— է։ Դրանք համարյա նույնքան են, որքան մարդիկ կան ես մարդկանց ավելի շատ եմ հավատում, քան credo-ին ես կուզեի գրկել նրանց, բոլոր այդ խենթերին, մայրական ամենաներող գրկով։

— Բայց նրանց այդ պետք չէ։ Նրանք երեսները շուռ են տալիս կրծքից։ Նրանք կրծքից արդեն կտրված են։ Մենք ուզում ենք հավատալ, գործել, բանդել, քայլել, մարտնչել, միայն թե առաջ շարժվենք... Թեզ հայտնի է հայրենիքի սահմանումը։ «Անապատում գտնվող ճամբար»... Շարժվենք առաջ, շալակներս առած ձողերն ու վրանի քայլանը։

— Եմ ճամբարն արդեն գտնված է, Դա սրտի օրենքներն է։ Ամեն մի հասարակական պարտք, որը ձեւափոխվում է, հերքելով մեկը մյուսին, քիչ նշանակություն ունի իմ աշքում, քիչ բան արժե սրբազն զգացմունքների համեմատությամբ— սիրո, մայրության զգացմունքների, համեմատությամբ, որոնք անփոփոխ են և հավիտենական։ Ով հարվածում է դրանց, հարվածում է ինձ։ Ես պատրաստ եմ դրանք պաշտպանել ամենուրեք, որտեղ վտանգ է սպառնում։ Բայց դրանից այն կողմ ես չեմ գնում։

— Հիանալի՞ է, իսկ ես գնում եմ։ Երբ հասարակական պարտքը վիրավորում է բնական զգացմունքները, այն

ողետք է փոխարինել ուրիշ՝ ավելի լայն և մարդկային բանով։ Ժամանակը եկել է։ Ամբողջ հասարակությունը նրա բարոյականության հետ միասին, որը հենվում է օրենքների ժողովածուի և կատեխիզիսի վրա, պետք է վերակառուցել— և այդ հասարակությունը կվերակառուցվի։ Այդ եղան է անում ամբողջ իմ էությունը։ բանականությունը, կրքերը— բոլորը բողոքում են Հասարակական դաշինքի զայրացուցիչ կեղծիքի դեմ, դաշինք, որի դարն արգեն անցել է։ Մեծ ուժերը, որոնք հուզում են մարդկային հոգին և օրենքներով դատապարտվում են, դառնում են հիվանդություն և երբեմն հանցագործություն՝ օրենքների անմարդկայնության և սոցիալական սիստեմի հետևանքով։ Հէ որ նրանք բնությանը պարտադրում են շրջանակներ, որոնք մամլակներ են դարձել։ Եվ եթե հազարավոր երիտասարդներ պատերազմն ընդունեցին որպես ազատագրում, եթե առաջին պահին իմ սիրտը նույնպես սաստկորեն սկսեց բաբախել, ապա սոսկ այն պատճառով, որ մենք հույս ունեինք գուրս պրծնել այդ մամլակների միջից։ Հնացած մտածելածների և պայմանականությունների նեղ օղակը, նեղ օղակը անբովանդակ բարեկեցության և մահվան ձանձրույթի, որոնք քաղցրացված են սրտխառնուք առաջացնող իդեալիզմով, այսինքն՝ համատարած սրիկայությամբ և կեղծ բարեպաշտությունով (ձեր մինչպատերազմական պացիֆիզմը, ձեր հումանիզմը), խեղանդամ է դարձրել բնությանը, սպանել է կյանքի բերկրությանը, այդ հզոր, առողջ և սրբազն բնաղդը... Sanctus<sup>1</sup>... Մենք հավատում էինք, որ անիծյալ օղակը կկտրվի... Դժբախտնե՞ր, Դժբախտնե՞ր... Մեզ խոստացան ազատագրում, բայց վրգներիս փաթաթեցին նողկալի պատերազմ, որը մեզ շպըրտաց տառապանքի և զգվելի և անօգուտ մահվան անդունդը... Իսկ օղակը ավելի ձգվեց, և մենք, երիտասարդներս, կաշկանդված, կուցած, նետված ենք նեղ վանդակի մեջ, որտեղ չենք կարող նույնիսկ շտկվել... Պետք է ջարդել, քանդել մահվան այդ սպանիլ կարգ ու կանոնը, որն ավելի վատ է, քան ուզածդ խառնաշփոթությունը, և նրա փո-

1 Սուրբ (Լատ.):

իմարեն ստեղծել ավելի բարձր և ավելի լայն կարգ ու կառնոն, այն մարդկանց չափով, որոնք կգան և արդեն եկել են,— կարգ ու կանոն, որ վայել է մեզ Օ՞ր հնչքան կարելի է շատ օդու լայնացնենք մեր պատկերացումը բարու և շարի մասին։ Դրանք նախկինը չեն, դրանք մեծացել են մեզ հետ միասին...

— Որտե՞ղ ես դու տեսնում այդ մարդկանց ։ Ես կողքիս տեսնում եմ միայն իմ հասունացած մանկանը, ծվ դողում եմ նրա համար հնչո՞ւ ես նրան կյանք տվի մեր այս դաժան ժամանակներում։

— Մի՛ ափսոսա այդ։ Մի՛ խղճա ինձ։ Սա հանկարծակի բարձրացած փոթորիկ է, Կեցցե՛ հողմը։ Եվ դու, որ ստեղծել ես իմ թոքերն ու թները... Հիշո՞ւմ ես արդյոք ռվերջին վիկինգինն, նորվեգական ձկնորսի մասին ժամանակակից սագան, որը մենք միասին կարդացինք։ Հիշո՞ւմ ես, նա փրկվեց մահից, նա փոխանակեց Լոփողենի փոթորիկները քաղաքների անշարժ օդի հետ, բայց երջանկություն այլևս չուներ... Այո՛, ես ուրախ եմ, որ պատկանում եմ իմ սերնդին և ոչ թե քու Քոնն ապրում էր մարդկության ինչ-որ պաղ առաջադիմության մասին ունեցած հիվանդություն երազանքներով։ Բայց դա ֆոն էր, որի վրա շարժվում էին գորշ, աղոտ ստվերներ, — ձեր ներկան։ Արտոնյալ դասակարգը — նույնիսկ նա՛ էլ էր օգտըվում կյանքի բարիքներից ժլատորեն, հազիվհազ։ Անգույն բերկություններ, անգույն վշտեր, տաղտկալի հեգնանք ու բարություն.... Զանձրույթ... Զանձրույթ... Իսկ մենք, որ տնքում էինք ու տառապում ցածում, մեզ մնում էր միայն մի բան — խավարում պտտել անիվը... Իսկ հիմա ունում է փոթորիկը, տունը փլվում է, բայց քամու հետ միասին մեր մառանը նույնպես լույս խուժեց։ Խարխալված շենքը ահա ուր որ է կփլվի, — մենք այդ գիտենք, — բայց ճեղքից մենք տեսնում ենք երկինքը, լողացող ամպերը, բամին եվ, լխարնվելով այն բաներում, ինչ մարդկանց կյանքին, մարդկանց ապագային է վերաբերում, մենք ապրում ենք լիակատար կյանքով անմիտ ու սքանչելի անդունդի եղրին։ Մեր ուսերին մենք բարձրացնում ենք աշ-

խարհը, որը, գուցե, գոյություն ունենա ընդամենը մեկ օր:  
— «Մե՞նք», Ո՞վ է դրանց տեսել — այդ «մենքերին»:  
Որտե՞ղ են նրանք: Ովքե՞ր են:  
— Առաջինը, ով որ սկսի գործելու նրանից կժնվեն  
մյուսները:

— Բայց նա կմեռնի:  
— Այու:  
— Ես չեմ ուզում, որ այդ դու լինես:  
— Չէ որ դու հենց նոր մայրության մասին էիր խոռում, քո ձետման մասին այդ մայրությունը տարածել մարդկային բոլոր որդիների վրա: Ահա և սնունդ քեզ համար: Փոխանցիր ուրիշներին իմ հանդեպ ունեցած քո սերը:  
— Ես պարծենում էի... Բայց ես չեմ կարող... Եվ ո՞վ կտրող է: Դրա համար ոչ մարդկային ուժեր են պետք, ես քո մեջ ուրիշներին եմ սիրում: Ես ուրիշներին քո մեջ եմ սիրում: Ես այդ քեզ էի փնտրում նրանց մեջ, երբ դու խուսափում էիր ինձանից: Իսկ հիմա, երբ ես քեզ հետ եմ, գոհարերե՞մ քեզ: Հիմա ինձ ոչ արգեն պետք չէ: Դու ի՞մ տիեզերքն ես: Բայց տիեզերքը ենթարկվում է ձղողականության օրենքին և նա ունի իր ճակատագիրը: Պետք է այն ընդունել ինձ հետ միասին: Եթե անգամ նա մեզ տանում է դեպի խաչ: Հիշի՛ր Mater dolorosa-ին<sup>1</sup>:

— Նույնիսկ նա շուգեց: Նա հարկադրված էր:  
— Մենք բոլորս ենք հարկադրված: Եվ դու և ես:  
— Ինչն է մեզ հարկադրում:  
— Մեր օրենքը:  
— Ինչո՞ւ ես նրան ընդունում, եթե նա ինձ դեմ է: Ես ընդվզում եմ, ես ետ եմ շպրտում այդ, ինչպես և մյուս օրենքները:

— Դու չես կարող: Դա անազնվություն կլինի:  
— Ինչ արած, պետք է ստեմ:  
— Դու չես կարող: Իսկ ես չեմ ուզում:  
Մարկը նայեց մորը, կմկմաց և ասաց. (Մարկի ձայնը դողաց).  
— Գիտես ինչ, մամա, երկու բան կա, որ ես չեմ ու-

տակ, էտուալ հրապարակի, Հաղթական կամարի վրա սառվառնող Հանճար... Հայրենիքի զավակներ, առաջ...

Ես հենց նոր եմ եկել ճակատից: Ինչպիսի՞ հրաշք: Այդ երեխաները ծիծաղում են, Մեռնողները ծիծաղում են: Նրանք ասում են, «Իմ օրը երկար չէր, բայց հարո՞ւստ էր Այդ օրը զուր չկորավ...»: Նրանց առաջարկում են տեղափոխվել թիկունք: Նրանք բողոքում են «Ո՛չ: ինձ կապեք փշալարերին, Ես կենդանի պատնեշ կլինեմ...»:

Մարկն ամոթից կարմրում էր, նրա հայացքը սառել էր... Մարկը «Հասկացավ» նրանց: այդ ցուկերին... Դատարկ խոսքե՞ր, ծեծված գործելածե՞ր, նողկալի կեղծի՞ք... Նա սկսում, սառն արհամարհանքով նայում էր Հոկտորին, որը քափ ու բրտինք մտած, պերճախոսության հեղիներ էր ժայթքում: Եվ Բրիսսոն անգիտակցորեն զգաց, որ այդ ունկնդրի հոգում ողբերգություն է տեղի ունենում: Նա նորից է տեղադրում իր ցանցերը և փորձում բռնել գուրս պրծած որսին: Բրիսսոյին շփոթեցնում է այդ հայացքը, որը դատապարտում է նրան, նա արդեն չի համարձակվում նայել այդ աշքերի մեջ: Բայց շարունակում է աղաղակել.

— Ֆրանսիան... միաբան Ֆրանսիան...

Եվ, չենթարկվելով շփոթությանը, փորձված վարպետի ամբողջ արվեստով ծավալում է իր արագեցոն: Բայց նա մտահոգված է, նրա ուղեղի ինչ-որ բջիջում դրոշմվել է պատանու կերպարը. դա ծանոթ կերպար է. Բրիսսոն ճըգնում է մտաբերել, թե որտեղ է տեսել նրան, բայց, տարված խոսքի սահուն ընթացքով, չի կարողանում կանգ առնել, որպեսի գնա հիշողության հետքերով:

Կերպարես հնչում է հզոր ակորդը, որ հարյուր անգամ կրկնել է ծափահարող դահլիճը: Բոլորը տեղներից կանգնում են, գոռում, կանչում են հոկտորին, նետվում են դեպի բեմը, որպեսզի սեղմեն մեծ քաղաքացու ձեռքը: Բոլորը հուզմունքից կարմրատակել են, խոսում են, ծիծաղում: իսկ ոմանք էլ արտասվեցին: Բրիսսոն երջանիկ, փափկած, աշքի պոլով նայում է համառ ունկնդրի կողմը.

«Համարե՞ց արդյոք նա իրեն պարտված...»:

Բայց Մարկն արդեն չկա: Նա անհետացավ:

— Աղաշում եմ քեզ! Աղաշում եմ: Զուր տեղը քեզ  
վտանգի մի ենթարկիր: Հանուն ինչի՞: Քեզ հիանալի հայտ-  
նի է, որ մարդկանց չես վերափոխի: Ինչ էլ ուզում է դու  
նրանց համար անես, նրանք միննույն մարդիկն են մնա-  
լու: Միննույն կրքերով, նախապաշարմունքներով, կուրու-  
թյամբ, որը նրանք մերթ բանականություն են կոչում, մերթ՝  
հավատ: Մինչդեռ դա միայն պատն է, խխոնջի խեցին.  
այդ խեցին նրանց պետք է ապրելու համար: Խեցուց նրանք  
չեն բաժանվի: Քո ուժերը չի պատի այդ խեցին զարդել:  
Ինքդ կշարդվես: Քո ճշմարտությունը քո մեջ թող: Թող  
այդ ճշմարտությունը շտեսնեն քո աշքերը, որոնց նա կու-  
րացնում է: Ինչի՞ համար, ինչի՞ համար է այդ: Դա սպա-  
նում է նրանց, ովքեր իրենց մեջ կրում են այդ ճշմար-  
տությունը:

— Ինչի՞ համա՞ր է: Իսկ ինչի՞ համար է քո կյանքը:  
Մի՞թե դու չես ապրել ճշմարտության օրենքով: Ի՞նչն էիր  
հաշվի առնում. քո ճշմարտությունը թե՞ վտանգը. Մի՞թե  
դու ափսոսում ես, որ ճշմարտությունը հաշվի ես առել...  
Պատասխանիր: Պատասխանիր... Ափսոսո՞ւմ ես:

Աննետայի մեջ պայքար էր գնում: Վերջապես պատաս-  
խանեց:

— Ոչ!

Աննետան կարծես մամլակների մեջ լիներ: Նա մտա-  
ծում էր.

«Ես ինքս եմ Մարկին սպանում»:

Որդին քնքշությամբ նայում էր մորը: Նրա երիտասարդ  
դեմքին առկայժեց լուրջ ժպիտը: Մարկն ասաց.

— Մամա, մի տանջվիր... Գուցե ոշինչ էլ լինի, ոշինչ  
շպատահի, և պատերազմն իր ուժերը սպառի ավելի շուտ,  
քան... Դեռ ոշինչ որոշված չէ: Ես դեռ չգիտեմ, թե ինչ եմ  
անելու: Ես ոշինչ չգիտեմ: Միայն գիտեմ, որ երբ ժամա-  
նակը գա, ես ազնիվ եմ լինելու... Համենայն դեպս փորձ  
եմ անելու... Օգնիր ինձ և աղոթիր:

— Ես աղոթում եմ: Բայց ո՞ւմ:

— Իմ ակունքին: Քո հոգուն: Ես մի շիթ եմ, որն սկիզբ  
է առնում այդ հոգուց:

Անցավ միայնակ սպասումի և հուզմունքների մի քանի շաբաթ (նրանք այլևս այդ թեմային չէին անդրադառնում, բայց ամեն մեկը մտածում էր անվերջ միանույնի մասին, թաքուն հետեւում էր մյուսին, և Աննետայի լսողությունը լարած ականջը մի տեսակ որսում էր օդի տատանումները, մոտորի բվկոցը, մոտենում էր սարսափելի ժամը, որը նրանից կիվի որդուն): Եվ ահա մի անգամ առավոտյան քաղաքապետարանի կողմից որոտացին թնդանոթները, և փողոցից մի աղմուկ լսվեց, որ նման էր ծովի ափնակոծության դղրդյունի: Երկու սիրտ շիմանալով ինչ է կատարվում, սկսեցին թրթռալ, ներս վազեց Սիլվիան և, շնչակուր, բղավեց.

— Զինադադա՞ր են կնքել:

Նրանք ջղաձգորեն գրկախառնվեցին:

Բայց հետո Աննետան հանկարծ ետ քաշվեց, մեջքով շրջվեց նրանց կողմը և ձեռքերով երեսը ծածկեց, որպեսզի հուզմունքը թաքցնի:

Մարկն ու Սիլվիան, հարգելով նրա զգացմունքները, ոչ մի շարժում շարին, շփորձեցին այդ ծածկույթը մի կողմ նետել. նրանք լուս սպասում էին, որ Աննետայի հուզմունքը անցնի: Հետո երկուսն էլ, քնքշությամբ լցված, մոտեցան նրան, և Մարկը, գրկելով մորը, դանդաղ մոտեցրեց նրան պատշամբի դոանը, նստեցրեց և ինքն էլ նստեց կողքին: Իսկ Սիլվիան տեղավորվեց հատակին, ոտքերը ծալապատիկ տակը գնելով, ինչպես Բուդդան: Սիլվիան ժպտալով նայում էր նրանց:

Երեքն էլ նստած էին աշխարհի ավերակների վրա:

Աննետան, աշքերը փակած, լսում է փողոցից եկող զանգի դողանջը, գոշյունները և երգերը, և իր այտին զգում է որդու այտը... Նա խորասուզված է մտքերի մեջ... Մըղձավանջը ցրվեց: Նրա որդու գլխին կախված վտանգի մըղձավանջը և մղձավանջը մարդկային տառապանքի, որը կախվել էր նրա սրտի վրա, Պատերազմի հրեշավոր աղետները հետեւում մնացին... Աննետան զեռ լրիվ շհավատաց: Նա երկշոտորեն է վայելում օդի մոռացված համը: Նա շընչում է...

Մարկի ուսերից նույնական կարծես լեռ ընկավ: Ուրախ

բան չէր մոտեցող վտանգին ընդառաջ գնալը։ Հպարտությունից Մարկը փո՞րձ էլ չէր անի խուսափել դրանից։ Թայց շգիտեր, ուժերը կրավարաբե՞ն, հավատը հաստատո՞ւն է արդյոք։ Մարկը լսում է, ինչպես է մոնշում, ծիծաղում փոփոխական ամբոխը։ Նրան հիանալի հայտնի է, որ փորձությունը միայն հետաձգված է... Թայց նրա հասակում միքանի տարի շահելը— մի ամբողջ աշխարհ շահել է։ Նա բմբոշինում է զինադադարը։ Նա կանխապես ուրախանում է ապագայի համար։ Նա երազում է...»

Սիլվիան տեսնում է, որ նրանք երազանքների մեջ են ընկել։ Նա չի մտածում ոչ անցյալի, ոչ ապագայի մասին։ Բոպեն այնքա՞ն է սքանչելի, և նա այնքա՞ն լիակատար է վայելում այդ պահը։ Երեքն էլ վերջացրին վտանգավոր անցումը, թիակները նետված են խաղաղված ծովում ննջող նավակի մեջ։ Սիլվիան երազում է։ Ի՞նչ հրաշալի երեկո է...»

Թայց վշտով համակված տունը լուր է, և այդ ողբերգական լուսթյունը ավելի հստակ է ընդգծվում ցնծացող ամբոխի տոնավաճառային աղմուկով։

Երրորդ հարկում պրոֆեսոր Ժիրլորը, քարի պես պինդ, իր վշտի մեջ մոլորված, դրոշներով զարդարում է լուսամուտները։ Ահա և հասավ անողոք նպատակին, իսկ նրա կյանքի անապատում ուրիշ նպատակ չկա։ Նա կարող է ընկնել... Չորրորդ հարկում թեռնարդենները փակոցավեղկերը ծածկեցին։ Աղջիկները և հայրը եկեղեցում են, եկեղեցու խավար ընթերասեղաններից մեկում։ Իսկ մայրը զամված է անկողնուն։ Նա կամաց-կամաց հանգչում է։ Վշտի հետքերով կրնկակոխ եկավ հիվանդությունը, և թեռնարդենը, որն այդ բոպեին աղոթում է, շգիտի, որ իր հոգնատանց, դիմադրողականությունը կորցրած մարմինը դարձավ քաղցկեղի զոհը... Առաջին հարկում գինու մառանը լեփլեցուն է, բայց նյուման վաճառասեղանի մոտ շէ։ Տան տերը փակված է հետեւ սենյակում։ Նա մենակ է, խմում է և արցունքները սրբելով թափում գինու մեջ։

Աննետան լսում է... Միաձույլ ակորդի մեջ են լցվում տառապանքը, կործանված կյանքերի պատճառած վիշտը և մրջնանցի կույր ցնծությունը։ Բոլորը նրա հետ միասին ընկել են Պատրանքի ցանցը։ Խճճված դրա մեջ, նրանք,

զլուխները կախ, նետվում են մատադորի կարմիր թիկնոցի վրա։ Ոմանց համար դա դրոշ է, սիրո սրբազն ցասում է հայրենիքի հանդեպ։ Ոմանց համար էլ հավատ է ղեպի եղբայրությունը, սերը... իսկ նրա որդին, որը երևակայում է, թե իրեն խարելը դժվար է, նա, որ արհամարհում է «բառերի պատրանքը», մի՞թե պատրանքներով ինքը մյուսներից ավելի չէ կուրացած— նա, որ պատրաստ է զոհաբերել իրեն և մորը հանուն խարուսիկ երազանքի. որ պատրաստ է կանգնել բոլորի ղեմ հանուն ճշշմարտության։ Ճշմարտության այդ ծարավը մի՞թե բոլոր պատրանքներից ամենամեծը չէ... Նրանք բոլորը շմոլագարգում են պատրանքների ծխից։ Բոլորը երազում են...

Եվ Աննետան կարծես մշուշի վեր խոյացող ծիածանագույն ամպի մեջ տեսավ համաշխարհային Երազանքը, ուր ինքը սուզվել էր։ Մի պահ նա գլուխը վեր բարձրացրեց շրից, նա թոթափում է իր վրայից իրեն կաշկանդող նենքու տիրական ուժը... Կարթնանա՞ արդյոք Աննետան... Նրա քնի մեջ է խուժում արթնացման ազդանշանը։ Հոգու մեջ բացվող ճեղքով թափանցում է լուսի շերտը։

Բայց իր այտին Աննետան այտի ջերմություն է զգում, զգում է մարմին իր մարմնից՝ որդուն, որը նրան զերության մեջ է պահում սիրո և վշտի ուժով, ապագա փորձությունների ուժով, նրանց սպասող և միմյանց կապող ճակատագրի ուժով...

«Ես գիտեմ, գիտեմ...»։

Դա Mater dolorosa-ի ճակատագիրն է. .

«Եվ ես շեմ փախչում։ Ահա ես նորից եմ այստեղ...»։

Եվ Աննետայի աշքերը գամվում են Մարկին, որդուն, իր սիրելի երազանքին։ Ողջերի աշքերը նորից են իշխում նրա վրա։ Աննետան ժպտում է— և կրկին սկսում է երազել...

„Warte nur...“<sup>1</sup>

Մենք շուտով կարթնանա՞նք։

<sup>1</sup> Սպասիր մի քիչ (գերմ.)։